


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՀ ԳԱԱ 2024Թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ
ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Երևան 2025

**Հաշվետվությունը պատրաստել է ՀՀ ԳԱԱ գիտակազմակերպական բաժինը՝
ՀՀ ԳԱԱ գիտությունների բաժանմունքների, գիտական
կազմակերպությունների և ստորաբաժանումների ներկայացրած նյութերի
հիման վրա**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ	5
ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	7
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	8
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	31
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ	51
ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	55
Մաթեմատիկայի ինստիտուտ	56
Մեխանիկայի ինստիտուտ	63
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ	69
«Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ	78
ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	80
Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան	81
Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ	87
Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ	94
Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ	102
ԻԿՐԱՆԵՏ Կենտրոն ՄԿ	106
ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	111
Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն	112
Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտ	118
Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն	128
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն	136
Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ	149
Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ	152
Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ	160
Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ	168
ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	173
Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ	174
Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ	186
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն	192
Երկրաբանական գիտությունների ինստիտուտ	207
Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ	214

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	219
Պատմության ինստիտուտ	220
Արևելագիտության ինստիտուտ.....	234
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	240
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն	253
Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ	259
Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ.....	266
Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ	274
Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ	285
Արվեստի ինստիտուտ.....	292
«Հայկական հանրագիտարան» հրատարակչություն	299
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ	299
ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ	304
ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	313
Ընդհանուր ժողովներ	314
Նախագահություն.....	314
Հայաստանի ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանց (ASNET-AM)	315
Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով	316
Միջազգային կապերի և երիտասարդական ծրագրերի վարչություն	317
ԳԱԱ գիտական կազմակերպությունների դրամաշնորհներ	323
«Գիտություն» հրատարակչություն	331
Հիմնարար գիտական գրադարան	332
ԳԱԱ և այլ գիտական կազմակերպությունների, բուհերի համատեղ կենտրոններ, լաբորատորիաներ, ամբիոններ.....	336
Գիտության և կրթության ոլորտում ԳԱԱ գիտական կազմակերպությունների համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ.....	337
Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորում	340
ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ.....	344
ԳԱԱ հիմնարկների արտոնագրային ցուցանիշներ.....	345
ԳԱԱ գիտաշխատողների հրապարակումների ընդհանուր քանակը	346
ԳԱԱ ինստիտուտների և գիտական (գիտակրթական) գիտաօժանդակ կազմակերպությունների անցկացրած հանրապետական և միջազգային գիտաժողովներ, սիմպոզիումներ և գիտական այլ միջոցառումներ	348
ԳԱԱ գիտական կադրերի 2024թ. ատեստավորման արդյունքներ.....	359
Կադրեր.....	359

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Ակադեմիան, որպես հայոց բարձրագույն գիտական օջախ, ավելի քան ութ տասնամյակների ընթացքում անցել է բովանդակալից ուղի, ունեցել է գիտական մեծ նվաճումներ, արժանացել համաշխարհային ճանաչման: Գիտությունների ազգային ակադեմիան, լինելով հանրապետությունում գիտական հետազոտությունները համակարգող մարմին, իրականացնում է միջազգային չափանիշներին համապատասխան հիմնարար և կիրառական հետազոտություններ գիտության գրեթե բոլոր բնագավառներում՝ ֆիզիկա և աստղաֆիզիկա, մաթեմատիկա և մեխանիկա, քիմիա և կենսաբանություն, երկրագիտություն և սեյսմագիտություն, շրջակա միջավայրի պահպանություն և կենսատեխնոլոգիա, համակարգչային տեխնոլոգիա և արհեստական բանականություն, հայագիտություն և հասարակական գիտություններ: Հայկական ակադեմիան իր ուրույն տեղն է ունեցել երկրի պաշտպանունակության ամրապնդման, տնտեսության և առողջապահության համակարգի զարգացման, էներգիայի նոր աղբյուրների հայտնաբերման, գիտության ու կրթության վերաբերյալ հանրության տեղեկացվածության բարձրացման գործում:

Այսօր ԳԱԱ շարունակում է հաջողությամբ զարգացնել գիտության և տեխնիկայի բազմաթիվ ոլորտներ, արդյունավետ համագործակցում է տարբեր երկրների ակադեմիաների, համալսարանների, գիտատեխնոլոգիական ու գիտանորարարական կենտրոնների, պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ: Կնքվել են համագործակցության պայմանագրեր ու հուշագրեր Չինաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության, Բուլղարիայի, Աթենքի ակադեմիաների ու համալսարանների, ՌԴ ԳԱ Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի հետ: Ակադեմիայի կազմակերպությունները հաջողությամբ մասնակցում են մի շարք միջազգային դրամաշնորհային ծրագրերի կատարմանը՝ Horizon 2020 և Horizon Europe, ISTC, ANSEF և այլն:

ԳԱԱ համակարգի գիտական խմբերն ակտիվ մասնակցում են ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած գիտական ծրագրերի մրցույթներին, հաշվետու տարում շահել են 355 տարաբնույթ դրամաշնորհային ծրագրեր: 2024թ. ԳԱԱ համակարգի գիտնականների՝ Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում տպագրված գիտական հոդվածների թիվն ավելի քան 1,4 անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշները: ԳԱԱ բաժանմունքներն իրենց կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպել են 72 միջազգային գիտաժողով, համակարգի գիտնականներն ակտիվ մասնակցություն են ունենում միջազգային գիտաժողովներին: ԳԱԱ նախագահության անմիջական ֆինանսավորմամբ իրականացվել է համակարգի գիտնականների 79 գիտական գործուղում, ընդ որում՝ լիարժեք ֆինանսավորվել են բանավոր զեկուցումներով ներկայացված բոլոր գործուղումների հայտերը: Պաշտպանվել են 1 դոկտորական և 15 թեկնածուական ատենախոսություններ, ընտրվել և վերընտրվել են 7 կազմակերպությունների տնօրեններ:

Սկսել են ակտիվ գործել ԳԱԱ-ում ձևավորված մասնագիտական պրոբլեմային խորհուրդները, կազմակերպվել են մի շարք արդյունավետ քննարկումներ հանրային նշանակության այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են կենսաբազմազանությունը, սննդի անվտանգությունը, տարածաշրջանային սեյսմիկ անվտանգությունը, «Նախիրիտ գործարան» ՓԲԸ-ում կուտակված պայթյունավտանգ թափոնների վնասազերծման, Հայաստանում հողմային էներգետիկայի ու սենսորային տեխնոլոգիաների ներդրման, հանրապետությունում ռադոնի մշտադիտարկման ցանցի ստեղծման, ռազմա-արդյունաբերական համակարգի հետ համագործակցության համակարգման, Երևանի

կանաչապատման, ծառահատման, ծառատնկման հիմնահարցերը: Քննարկումներին մասնակցել են գիտնականներ, արտադրողներ, պետական գերատեսչությունների ու մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: Կառավարության քննարկման փուլում է ԳԱԱ ներկայացրած «Նախակլինիկական և տրանսլյացիոն հետազոտությունների գիտափորձարարական կենտրոնի/կլաստերի ստեղծում» հանրային ներդրումային ծրագիրը:

2024թ. իրականացվել է ԳԱԱ մրցանակի առաջին մրցանակաբաշխությունը: Հիմնարար և կիրառական հետազոտությունների անվանակարգերով մրցանակներ են շնորհվել 6 գիտական խմբերի՝ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների, քիմիայի, կյանքի և երկրի մասին գիտությունների, հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառներում (ֆինանսավորող՝ «Մարտին Սթար» ՍՊԸ): Այս տարի ավելացել է ևս մեկ մրցանակ բժշկության բնագավառի գիտնականների համար (ֆինանսավորող՝ «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ):

Հաշվի առնելով գիտության և տեխնոլոգիաների զարգացման արդի փուլում գիտության հանրամատչելիացման կարևորությունը՝ 2024թ. ԳԱԱ-ում կազմավորվել է գիտության հանրամատչելիացման նոր վարչություն, որը ԿԳՄՍ նախարարության հովանու ներքո կազմակերպել է մի շարք գիտահանրամատչելի գիտաժողովներ, սեմինարներ, ցուցահանդեսներ, հանդիպումներ ՀՀ բուհերի ուսանողների ու դասախոսների, ավագ դասարանների աշակերտների ու ուսուցիչների մասնակցությամբ:

ՀՀ ԳԱԱ ղեկավարությունը, ընդգծելով գիտության կարևորությունը Հայաստանի զարգացման ու առաջընթացի համար, հաշվի առնելով արդեն իսկ կայացած գիտական ավանդույթների պահպանման ու հետագա զարգացման անհրաժեշտությունը և ակադեմիայի առանցքային դերն ու նշանակությունը հանրապետության գիտական և գիտակրթական ընդհանուր համակարգում՝ իր պատրաստակամությունն է հայտնում շարունակել իր առաքելությունն ի փառս երկրի գիտական մտքի առաջընթացի, տնտեսության զարգացման ու պաշտպանունակության ամրապնդման:

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ա.Ս.Սադյան

**ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաթեմատիկա: Հայտնի է, որ հիպերհարթությունը շրջելիության բազմություն չէ Ռադոնի սֆերիկական ձևափոխության (ՌՍՁ) համար, ուստի բնական հարց է առաջանում՝ գտնել լրացուցիչ պայման, որը թույլ կտա, օգտագործելով ՌՍՁ, վերականգնել անհայտ ֆունկցիայի տվյալները: Վերջինս համարժեք է պայմանների գտնմանը, որոնք թույլ կտան վերականգնել կենտ ֆունկցիան տրված հիպերհարթության նկատմամբ: Սահմանվել է նոր ձևափոխություն՝ կշիռով Ω , դիտարկվել է, այսպես կոչված, երկու տվյալներով ՌՍՁ և գտնվել է նրա շրջման բանաձևը, որն այս դեպքում ևս օգտագործում է լոկալ տվյալներ անհայտ ֆունկցիայի վերականգնման համար: Որոշված անհայտ ֆունկցիան ամբողջությամբ վերականգնելու համար բավական է ունենալ որևէ շրջանի վրա այս երկու ձևափոխությունների տվյալները 2D-ում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան):

«Birkhauser, Frontiers of Science» հրատարակչությունում (Շվեյցարիա) հրապարակվել է “Functions of Omega-Bounded Type, Basic Theory” մենագրությունը, որտեղ կառուցված տեսությունները հաստատում են հայկական մաթեմատիկական դպրոցի անվիճելի առաջնայնությունը կոմպլեքս անալիզի մի շատ այժմեական բնագավառում: Կառուցված տեսությունների ակունքները հայկական մաթեմատիկական դպրոցի հին, սկզբնական աղյուսներն են, կա՛մ լիովին նոր են, կա՛մ էլ պարունակում են լուսաբանվող բնագավառի բոլոր հիմնական, ժամանակակից արդյունքները որպես մասնավոր դեպքեր (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Զրբաշյան):

Կապակցված գրաֆների վրա սահմանված անբացահայտ դիսկրետ համակարգի համար ապացուցվել է միակությունը: Տվյալ դիսկրետ համակարգը մոտիվացված է տարածական սեգրեգացիայով ռեակցիա-դիֆուզիոն հավասարումների որոշակի դասից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Առաքելյան):

Դիտարկվել են Ռիմանի ու Լեբեգի ինտեգրալների համադրության հարցերը փաթեթի տիպի ինտեգրալ հավասարումների տեսության մեջ ու կիրառություններում: Ներմուծվել է ըստ Ռիմանի անիսկական ուղղակի ինտեգրելիության գաղափարը: Ստացված արդյունքները հնարավորություն են տալիս ընդլայնել Ռիմանի ինտեգրալի դերն ինտեգրալ հավասարումների տեսությունում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ն.Ենգիբարյան):

Մեխանիկա: Առաջարկվել են մագնիսաառաձգականության ոչ ստացիոնար խնդիրների մաթեմատիկական մոդելավորման նոր մեթոդներ, բացահայտվել է էլեկտրամագնիսական ու մեխանիկական երևույթների փոխազդեցության ֆիզիկական մագնիսապես ակտիվ առաձգական բարակապատ մարմիններում: Ստացվել են նոր արդյունքներ ֆլատերի երևույթի վերաբերյալ (“Magnetoelastic Vibrations and Stability of Magnetically Active Plates and Shells”) (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Միկիլյան):

Առաջարկվել է շփման ուժերի հաշվառումով հարթ հիմքով կոշտ դրոշմի ու առաձգական կիսահարթության հպման խնդրի լուծման նոր մոտեցում: Ի տարբերություն Գալինի հայտնի խնդրի, որտեղ կոնտակտի տիրույթը տրոհվում է հարակցման ու սահքի տեղամասերի՝ այստեղ առաջարկվում է կոնտակտի ամբողջ տիրույթում ընդունել չոր շփման օրենքը, բայց գծայնորեն փոխվող շփման գործակցով: Առաջարկվող մոտեցումը թույլ է տալիս ստանալ խնդրի փակ լուծում, որը քիչ է տարբերվում Գալինի լուծումից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Վ.Հակոբյան):

«Движение деформированного твердого тела» մենագրությունում առաձգականության տեսության սահմաններում շարադրվել է դեֆորմացվող պինդ մարմնի շարժման կինեմատիկան տեսական մեխանիկայի մեթոդների ու շարժումների առանձնացման ասիմպտոտիկ եղանակների կիրառմամբ: Տարբեր կոորդինատական համակարգերում կինեմատիկական մեծությունները ներկայացվել են բացարձակ պինդ մարմնի շարժման կինեմատիկայի շրջանակում՝ ավելացնելով լրացուցիչ անդամներ, որոնք կախված են մարմնի առաձգական հատկություններից: Նման համակարգերի շարժումների բնութագրիչ մեծություններն էապես տարբերվում են բացարձակ պինդ մարմնի կամ մեխանիկական համակարգի շարժման բնութագրիչներից, որոնք չեն պարունակում առաձգական տարրեր (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Ղուկասյան):

Ստեղծվել են խողովակաշար համակարգերում ալիքային ու ակուստիկ պրոցեսների ռեզոնանսային կայունացուցիչներ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Գ.Ավետիսյան):

Ինֆորմատիկա և ավտոմատացման պրոբլեմներ: Ապացուցվել է թեորեմ. D-ն n-գագաթանի 2-կապակցված կողմնորոշված գրաֆ է, որի $n - 1$ գագաթների աստիճանները փոքր չեն $n + k$ թվից, իսկ n -րդ գագաթի աստիճանը փոքր չէ $n - k - 4$ թվից, որտեղ $n \geq 9$, իսկ k -ն ոչ բացասական ամբողջ թիվ է: Այդ դեպքում D-ն համիլտոնյան է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Դարբինյան):

Տարբեր ոլորտներում իրենց հնարավոր կիրառելիության շնորհիվ զգալի ուշադրության են արժանանում անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) երամները: Երամների արդյունավետ համակարգումն ու կառավարումը պահանջում են խիստ մաթեմատիկական մոդելների առաջադրում՝ մշակվող համակարգերի բարդ դինամիկայի իրագործման նպատակով: Հեղինակների կողմից մշակված թեորեմների հիման վրա իրականացվել է երամի քվադր-պատահական դեգերման ընթացքում տեղեկատվության ամբողջական փոխանակման տրամաբանական ու տեխնոլոգիական կառուցումը: Առաջարկվող ռոտոր-երթուղավորիչ մոդելը մեկնաբանում է դիսկրետ ժամանակի դեգերում, որն ուղեկցվում է երամի գրաֆի գագաթների վրա պատահականորեն տեղադրված ռոտորների կոնֆիգուրացիաների դետերմինիստական էվոլյուցիայով: Առաջարկվող օպտիմալ ու վթարակայուն բամբասանքի/լայնասփռման սխեմաները սատարում են երամի կայունությանը ներքին խափանումների ու արտաքին հարձակումների հանդեպ, իսկ գաղտնագրային հաղորդակարգերն ապահովում են երամի տեղեկատվական անվտանգությունը: Առաջարկվող ամպային ցանցի տոպոլոգիան ծառայում է որպես մոդելի գործարկման միջավայր, ներառում է հաղորդակցման տարատեսակ սխեմաներ անօդաչու ԱԹՍ երամի ակնկալվող վարքն ապահովելու համար (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ս.Պողոսյան):

Հետազոտվել է դասական երեք մարմնի խնդիրը՝ կապված մարմինների համակարգի էներգիայի մակերևույթի հետ կոմֆորմալ-էվկլիդյան տարածության մեջ: Մշակվել է մաթեմատիկական ալգորիթմ 6-րդ կարգի կոշտ դիֆերենցիալ հավասարումների համակարգի թվային մոդելավորման համար: Ստացվել է Ֆոկկեր-Պլանկի տիպի հավասարում գեոդեզիական հետագծերի փնջի էվոլյուցիան փուլային տարածության մեջ նկարագրելու համար: Կառուցվել է ցածր չափանի դինամիկ համակարգի էնտրոպիան, գնահատվել է նրա բարդության չափը: Հետազոտվել է դինամիկ համակարգի շարժման փուլերը նկարագրող ժամանակային պարամետրի վարքը, ցույց է տրվել, որ այն անհամասեռ է, անշրջելի և ունի տարածման սլաք (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան):

ԱԹՍ ինքնակազմակերպվող երամում ներկառուցված կոլեկտիվ արհեստական բանականության հնարավորությունների օգտագործմամբ ներկայացվել է տեղանքի մշտադիտարկման ու առաջադրանքների օպտիմիզացման առաջադեմ սիմուլյացիոն հիմնահարթակ: Այն մշակվել է ամպային տեխնոլոգիաների հիման վրա, իրական

Ժամանակում դինամիկ լանդշաֆտային պատկերների տեսաշարերի համատեղ դիտման և ինտուիտիվ QT ինտերֆեյսի միջոցով հարցումների իրականացման հնարավորությամբ ապահովում է օգտագործողների փոխգործուն անխափան համագործակցությունը: Ինտերֆեյսի միջոցով առաջադրվում են երամի առաքելություններ, ինչպիսիք են տարածքի հետախուզումը, տեղեկատվության հավաքագրումը, հաղորդումը, իսկ ռազմական կիրառություններում՝ նաև հակառակորդի դիրքերի գրոհումը: ԱԹՍ նավիգացիոն քարտեզները ստեղծում և հարմարեցնում է երամի քարտեզի կոնֆիգուրատորը: Թռիչքների ճանապարհային գրաֆը կառուցված է ռոտոր-երթուղավորիչի, իսկ տեղեկատվության լրիվ փոխանակման գրաֆը՝ բամբասանքի/լայնասփռման մոդելի հիման վրա: Ապահովվելով նաև տվյալների ու հաղորդակցության անվտանգությունը՝ հիմնահարթակը սատարում է առաջադրանքների դինամիկ վերակազմավորումն անհատական ԱԹՍ-երի նոր առաջադրանքների ու դերերի բաշխման միջոցով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Պողոսյան):

Վելբուլի բաշխումը բազմաթիվ կիրառական խնդիրներում օգտագործվում է որպես մաթեմատիկական մոդել: Հայտնի են ԻԱՊԻ-ում այդ մոդելի օգտագործման բազմաթիվ օրինակներ պատկերների մշակման բնագավառում: Հետազոտությունների արդյունքում ուսումնասիրվել են մի շարք լայնորեն կիրառվող էմպիրիկ բանաձևերի ճշտության բարձրացման հնարավորությունները, մշակվել են նոր էմպիրիկ բանաձևեր (ղեկ.՝ տեխ.գ.դ. Դ.Ասատրյան):

Աստղաֆիզիկա: SDSS շրջահայության միջին լուծունակության սպեկտրների հիման վրա իրականացվել է բլազարների համասեռ դասակարգում ըստ ակտիվության դասերի: Ընդամենը դասակարգվել է 1170 օբյեկտ (552 BZB + 618 BZQ): Իրենց դասերը փոխել է ընդամենը 447 օբյեկտ (293 BZB + 154 BZQ), այսինքն՝ վերանայվել է դասակարգված օբյեկտների 38%-ի դասը:

Պարզվել են 837 M թզուկների ֆիզիկական պարամետրերը, զանգվածները, լուսատվությունները, շառավիղները, ջերմաստիճանները, Արեգակից հեռավորությունները և այլն: Շատերի մոտ հայտնաբերվել են բռնկումներ: Պարզվել է, որ շատերը կազմում են կրկնակի համակարգեր (M թզուկ + M թզուկ, M թզուկ + սպիտակ թզուկ և այլն): Բարձր Գալակտիկական լայնություններում՝ Գալակտիկայի հարթությունից ավելի քան 10 կպս բարձրության վրա, հայտնաբերվել են մոտ 300 նոր M դասի AGB (Asymptotic Giant Branch) և Post-AGB աստղեր, որոնք ունեն շատ խիտ շուրջաստղային թաղանթներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

Ակտիվ գալակտիկաների միջուկների վրա իոնացված նյութի ակրեցիայի դեպքում գործում է Բիրմանի մեխանիզմը, որի շնորհիվ այդ օբյեկտներում գրոյից կարող են առաջանալ մագնիսական դաշտեր: Ուսումնասիրվել է գալակտիկաների միջուկներում գտնվող ակրեցիոն սկավառակներում Բիրմանի մեխանիզմի գործելու արդյունավետությունը: Այդ գործընթացում լիցքավորված մասնիկների շարժման վրա նոր առաջացած մագնիսական դաշտերի փոխազդեցությունը ճշգրիտ հաշվի առնելու համար անհրաժեշտ է լինում լուծել երկրորդ կարգի ինտեգրալ հավասարումներ: Ցույց է տրվել, որ ակրեցիոն սկավառակներում առաջացած դաշտերը բավականին նշանակալից են և կարող են կարևոր դեր խաղալ ակտիվ գալակտիկաներում մագնիսական դաշտերի հետագա էվոլյուցիայի գործում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ. Անդրեասյան):

PV Cep էքսորին կից հոսքում հայտնաբերվել է նոր արտանետվող կուտակում, որը բացակայել է 20 տարվա ժամանակահատվածի մեր պատկերներում: Հետազոտությունները ցույց են տվել, որ այն ձևավորվել է 1976-77թթ. տեղի ունեցած պայթյունից հետո: PV Cep հոսքում 20 տարվա ընթացքում արված պատկերների միջոցով ստացվել են ճշգրիտ

տվյալներ արագությունների ու շարժումների մասին՝ կազմելով հոսքի եռաչափ պատկերը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան):

Իրականացվել է α Crucis համակարգի ուսումնասիրություն: Այս համակարգի շուրջը, որը ներառում է երեք հսկա աստղ, դիտվում է հարվածային ալիք, ինչը նախնական վարկածով ենթադրում էր, որ այն դասվում է, այսպես կոչված, «արագ փախչող» օբյեկտների շարքին: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ α Crucis-ը պատկանում է մի ամբողջ աստղակույտի: Այն չի արտանետվել իր մայր կույտից, այլ շարժվում է կույտի մյուս անդամների հետ միասին, իսկ ալիքի առաջացումը պայմանավորված է միջաստղային նյութի լայնածավալ շարժումներով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ. Հարությունյան):

Ուսումնասիրվել են մասնիկների շարժման տիպորինակ Լորենցի կողի (SLY) ու Հարաբերականության հատուկ տեսության (<<S) հիմունքները: Այդ նպատակով մշակվել է գլոբալ, այսպես կոչված, գլխավոր տարածության՝ «MSP-գերհամաչափության տեսություն» (MSP-SUSY): SLY-ն դուրս է բերվում որպես MSP-SUSY գլոբալ կրկնակի ձևափոխությունների հետևանք: Նման ճանապարհով դուրս են բերվում <<S երկու հիմնարար պոստուլատները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Տեր-Ղազարյան):

Բացահայտվել և ուսումնասիրվել է ֆիզիկական տարբեր պայմանների ու գործոնների ազդեցությունը միջավայրից անդրադարձման ու նրանից անցման արդյունքում առաջացող սպեկտրային գծերի էվոլյուցիայի վրա (միջավայրի անհամասեռությունը, էներգիայի սկզբնական աղբյուրների դիրքը միջավայրում, տուրբուլենտ շարժումների առկայությունը և այլն): Մանրակրկիտ ուսումնասիրվել են միկրո- և մակրոտուրբուլենտ միջավայրերում առաջացող գծային սպեկտրների ժամանակային փոփոխությունների առանձնահատկությունները, դրանք համեմատվել են այն դեպքի հետ, երբ գազադինամիկական հոսքերը բացակայում են (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Նիկողոսյան):

Ուսումնասիրվել են նեյտրոնային աստղի պատյանի հաղորդականության գործակիցները: Ուսումնասիրվել է գերհաղորդիչ քվարկային նյութի մածուցիկությունը նեյտրոնային աստղի կորիզում: Ցույց է տրվել, որ խտության ու ջերմաստիճանի որոշակի միջակայքում խտության տատանումների մարման ժամանակային սանդղակը կարող է ընկնել 10 ms-ից ցածր՝ այդպիսով ազդելով քվարկային աստղերի միաձուլման էվոլյուցիայի վրա: Զուբարևի մեթոդից ստացվել են երկրորդ կարգի հիդրոդինամիկայի նոր հավասարումներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա. Սեդրակյան):

Բլազարների բազմաալիքային էներգիայի սպեկտրալ բաշխվածությունների (ԷՄԲ-ներ) մոդելավորման համար մշակվել է մեքենայական ուսուցման նոր մեթոդ: Կոնվոլյուցիոն նեյրոնային ցանցերը, որոնք ուսուցանվել են լայն պարամետրային տիրույթում սինույացված բլազարների ԷՄԲ-ների վրա, ճշգրտորեն վերարտադրում են այս աղբյուրների ճառագայթման բնութագրերը: Մեթոդը տրամադրում է արդյունավետ գործիք դիտողական տվյալների մոդելավորման ու վերլուծության համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ն.Սահակյան):

Ֆիզիկա: Օգտագործելով ցեզիումի ատոմական գոլորշի պարունակող օպտիկական նանոբջիջը՝ ի հայտ է բերվել Cs ատոմների D_2 գծի գերնուրբ կառուցվածքում մագնիսականորեն հարուցված ($U <$) անցումների ուժեղ մագնիսական դաշտերում (> 5000 Գս) դրսևորվող տարբեր վարք σ^+ շրջանաձև բևեռացված ճառագայթմամբ գրգռված $F_g = 3 \rightarrow F_e = 5$ ($\Delta F = +2$) և σ^- շրջանաձև բևեռացված ճառագայթմամբ գրգռված $F_g = 2 \rightarrow F_e = 4$ ($\Delta F = -2$) խմբերի համար: Մշակված տեսական մոդելը լավ է նկարագրում փորձի արդյունքները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Դ.Սարգսյան):

Մշակվել է խիստ ցրող օբյեկտների օպտիկական թափանցող պատկերագրման տեխնիկա, որը հիմնված է մոդուլացված (իմպուլսային) լազերային ճառագայթման փորձանմուշով անցած բալիստիկ ֆոտոնների տարածականորեն-ընտրողական թվային

գրանցման վրա: Ընտրելով մոդուլացման ռեժիմը՝ հնարավոր է գրանցել «անալոգային» պատկերը կամ պատկերի առանձնահատկությունների ուրվագծերն առանց ծրագրային մշակման անհրաժեշտության: Համակարգի աշխատանքը ստուգվել է մոդելային (թղթերի տրցակ) ու կենսաբանական (մարդու ձեռքի ասի) օբյեկտների վրա: Մոդուլացման պատշաճ ռեժիմով իրականացված ազդանշանի մակարդակի ավտոմատ ղեկավարմամբ հաջողվել է ստանալ պատկերներ, որոնցում հետազոտվող օբյեկտի ներքին կառուցվածքը համասեռ արտահայտված է ծրման ամբողջ տարածքում, նույնիսկ ֆոնային բացթողման մակարդակի էական փոփոխումների պայմաններում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Պապոյան):

Ներկայացվել է հակադարձ սխեմա 1:2 ռեզոնանսով բնութագրվող ոչ գծային քվանտային համակարգերում բնակեցվածության տեղափոխման դինամիկայի ճշգրիտ վերահսկման համար, որը ենթադրում է սկզբնական ու վերջնական վիճակներից դեպի անդառնալի կորուստների ենթակա միջանկյալ մակարդակ անցումները գրգռող երկու ռեզոնանսային լազերային իմպուլսների օգտագործում: Այլ հայտնի տեխնիկաների համեմատ այս մոտեցումն ունի նկատելի հաշվողական առավելություն: Մղման իմպուլսի ձևը տրվում է անալիտիկորեն՝ հնարավորություն տալով մշակելու դեկոհերենսության նվազեցումը վերահսկելու ռազմավարություն: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել քվանտային հաշվարկի ու քվանտային հաղորդակցության ոլորտում առաջադեմ տեխնոլոգիաներ մշակելու համար (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Իշխանյան):

Հետազոտվել են կիսապարաբոլական թիրախից ուլտրառեյատիվիստիկ էլեկտրոնների կոհերենտ դիֆրակցիոն ճառագայթման փնջի բնութագրիչները տերահերցային տիրույթում: Ցույց է տրվել, որ առաջարկվող երկրաչափության դեպքում բացվածքի հարթության վրա դիֆրակցիոն ճառագայթման ինտենսիվության արժեքն առավելագույնն է փնջի առանցքի երկայնքով՝ ի տարբերություն անցումային ճառագայթման, որին բնորոշ է «ձագարած» կառուցվածքը, և փնջի առանցքի երկայնքով ինտենսիվությունը նվազագույնն է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

CANDLE գիտական կենտրոնի AREAL լաբորատորիայի գծային արագացուցչի վրա փորձնականորեն հետազոտվել են 3.6 ՄէՎ էներգիայով էլեկտրոնների թանձրուկի կոհերենտ ճառագայթման սպեկտրալ ու անկյունային բաշխումները՝ հալված քվարցից ու տեֆլոնից պատրաստված, սնամեջ գլանաձև թիրախների առանցքով շարժվելիս, հաճախությունների 10-100ԳՀց տիրույթում: Ցույց է տրվել, որ ստացված արդյունքները հիմնականում համընկնում են տեսական գնահատականների հետ, մասնավորապես սպեկտրալ բաշխման մեջ դիտվող պիկերի դիրքը մեծ ճշտությամբ համընկնում է նույն պարամետրերով անվերջ ալիքատարի մոդաների հետ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Լ.Գրիգորյան):

Ուսումնասիրվել են Ge/Si ուսպնյակաձև քվանտային կետում տեղայնացված զույգ փոխազդող խոռոչային գազի ջերմադինամիկական բնութագրերը: Ցույց է տրվել, որ դիտարկվող համակարգում տեղի է ունենում առաջին կարգի փուլային անցում՝ պայմանավորված քվանտային կետի յուրօրինակ երկրաչափությամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սարգսյան):

Առաջարկվել է ռադիոլոկացիոն հեռահար զննման եղանակ ջրի մակերևույթի ծածանքի ուսումնասիրման համար: Հաստատվել է, որ դա հնարավոր է իրականացնել՝ առանձնացնելով ծածանքի ազդանշանն անդրադարձած ազդանշանի ընդհանուր ֆոնից վելտորական ընդունիչի կիրառմամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան):

Առաջարկվել է Ֆերմայի Վերջին թեորեմի կոմպակտ ապացույց դասական հանրահաշվական մեթոդների կիրառմամբ (Նյուտոնի բինոմի, հանրահաշվական հավասարումների տեսության և այլ) (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Է.Ասմարյան):

Ստացվել են նոր տիպի արևային CsPbBr₃ պերովսկիտային թաղանթներ ապակե տակդիրների վրա 10⁻⁵ Տորր վակուումի պայմաններում, հետազոտվել են դրանց կառուցվածքային ու օպտիկական հատկությունները պրոտոններով ճառագայթման դեպքում: Ցույց է տրվել թաղանթների պիտանելիությունը բարձր էներգիաներով ճառագայթումների պայմաններում (ղեկ.՝ Լ.Մաթևոսյան):

Հետազոտվել են չկարգավորված կիսահաղորդչային բարակ թաղանթներում ու էքսիտոնային հետերոկառուցվածքներում էկրանավորված կոլոնյան փոխազդեցությունը նկարագրող կրկնակի Ֆուրիեի ինտեգրալի առանձնահատկությունները: Մշակվել է այս ինտեգրալը ճշգրիտ հաշվարկելու մեթոդ փոխազդեցության ուժեղ էկրանավորման դեպքում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Լ.Հովակիմյան):

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կենսաբանություն: Հայաստանի ֆլորայի համար հայտնաբերվել է *Malvaceae* ընտանիքի 3 նոր տեսակ՝ *Alcea kurdica* (Schltdl.) Alef., *A. hohenackeri* (Boiss. & A.Huet) Boiss., *A. transcaucasica* Iljin (ղեկ.՝ Կ.գ.դ. Գ.Օգանեզովա):

ERE Տեղական հերբարիումի հավաքածուն հարստացվել է շուրջ 30 ընտանիքի պատկանող ավելի քան 480 նմուշով, որից ERE հերբարիումի համար՝ 2 նոր տեսակով՝ *Lycium ruthenicum* Murrayale (առաջին հավաքը Հայաստանից), *Solanum elaeagnifolium* Cav.: ERE Ընդհանուր հերբարիումը հարստացել է ավելի քան 60 ընտանիքի պատկանող շուրջ 405 նմուշով, այդ թվում՝ 15 նոր ցեղով, 76 նոր տեսակով, 5 ենթատեսակով (ղեկ.՝ Կ.գ.դ. Մ.Հովհաննիսյան):

Բացահայտվել է *Cuscuta* L. ցեղի *Cuscuta*, *Pachystigma* ու *Grammica* ենթացեղերի ներկայացուցիչների պալինոմորֆոլոգիական հատկանիշների զգալի նմանությունը, բացառությամբ *C. compacta* տեսակի: Ծաղկափոշու հատկանիշները կարող են օգտագործվել միայն *Monoginella* ենթացեղը տարբերելու համար, ինչն արտացոլում է նրա որոշակի մեկուսացումն ամբողջ *Cuscuta* ցեղից (ղեկ.՝ Կ.գ.դ. Ա.Հայրապետյան):

Հայաստանի ֆլորայի համար հայտնաբերվել է նոր տեսակ՝ *Ferula huber-morathii* Peşmen (*Apiaceae*): Հայաստանի ֆլորայի սերմերի բանկում (SBAF) պահպանվում են 120 ընտանիք, 636 ցեղ, 1630 տեսակ, մոտ 2900 նմուշ, որոնցից 91-ը՝ կարմիրգրքային տեսակներ են: Միջազգային CARYOPHYLLACEAE CHECKLIST համացանցային կայքում իրականացվել է տաքսոնոմիական ու նոմենկլատուրային տվյալների համալրում Բեռլինի բուսաբանական այգու (Գերմանիա) հետ համագործակցության շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Ներսեսյան):

Rubus L. (*Rosaceae*) ցեղի կարգաբանական հետազոտության արդյունքում հաստատվել է, որ այն Հայաստանի ֆլորայում ներկայացված է 14 տեսակով՝ *R. saxatilis* (ենթացեղ *Cylactis*), *R. idaeus* (ենթացեղ *Idaeobatus*), *R. sanctus*, *R. armeniacus*, *R. peruncinatus*, *R. takhtadjanii*, *R. zangezurus*, *R. caucasicus*, *R. caesius*, *R. ibericus*, (ենթացեղ *Rubus*), ընդ որում, հերբարիումային նյութի ուսումնասիրման արդյունքում *R. ibericus* տեսակը Հայաստանի ֆլորայի համար առաջին անգամ է բերվում: Ուսումնասիրվել է հազվագյուտ տեղական ուշ ծաղկող ու ցրտադիմացկուն հիբրիդային *Prunus* × *dasycarpa* «Շլոր-Ծիրան» սորտը, որի համար առաջին անգամ կիրառվել է Բույսերի նոր սորտերի պաշտպանության միջազգային միության ձեռնարկում (UPOV, 2016, 2021) ներկայացված ֆենոտիպավորման մեթոդը (ղեկ.՝ Կ.գ.դ. Ժ.Հակոբյան):

«Արևիկ» ազգային պարկում հայտնաբերվել է Պլիոցենի դարաշրջանի մեկ նոր տեղավայր: Սիսիանի վաղ պլեյստոցենյան ֆլորայի կազմում բացահայտվել է *Poaceae*

ընտանիքի Bambusoideae ենթաընտանիքի բրածո նոր ցեղ՝ *Pseudosasa*: Սյունիքի մարզում՝ Արծվանիկ գյուղի մերձակայքում, հայտնաբերվել է Հայաստանի համար նոր վտանգավոր ինվազիվ մոլախոտային տեսակ՝ Մորմ փշատանմանը (*Solanum elaeagnifolium* Cav.) (ղեկ.՝ կ.գ.դ. Ի.Գաբրիելյան):

Միջգիտակարգային հետազոտությունների շրջանակում իրականացվել է Երևանի 12 վարչական շրջանների խմելու ծորակի ջրում անվտանգային որոշ ցուցանիշների՝ ռադոնի, որոշ պոտենցիալ տոքսիկ տարրերի (ՊՏՏ) առողջական ռիսկի գնահատում: Ծորակի ջրում լուծված ռադոնից ստացվող տարեկան արդյունարար դոզան գնահատվել է՝ համադրելով ծորակի ջրում լուծված ռադոնի մշտադիտարկման արդյունքներն ու բնակչության ջրի սպառման տվյալները: Արդյունքում բացահայտվել է, որ ռադոնի համեմատաբար բարձր ակտիվությամբ առանձնանում է քաղաքի հյուսիսային ու արևմտյան՝ Դավթաշեն, Աջափնյակ, Արաբկիր, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ջուրը: Գերազանցումներ միջազգային ու ազգային ՍԹԿ-ների նկատմամբ չեն գրանցվել: Գումարային տարեկան արդյունարար դոզան (ընդունում խմելու ջրի հետ, ներշնչում, ռադոնի լուծում արյան մեջ) չի գերազանցել ԱՀԿ 0.1 մՋվ/տարի անհատական ուղենիշային դոզան: Հավանական ռիսկի գնահատման արդյունքում բացահայտվել է, որ վատագույն սցենարի դեպքում (առավելագույն սպառում ու առավելագույն ակտիվություն) հնարավոր է ուղենիշային դոզայի գերազանցում: Խմելու ջրում որոշ ՊՏՏ պիլոտային հետազոտությունները բացահայտել են հնարավոր ռիսկեր՝ հիմնավորելով մշտադիտարկման անհրաժեշտությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Բելյանա, սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

Նկարագրվել են գիտության համար բզեզների (Coleoptera) 5 ու սարդերի (Aranei) 1 նոր տեսակներ, Հայաստանի ֆաունայի 30 նոր տեսակ՝ բզեզների 4, երկթևերի 17, սարդերի 37, տզերի 9: Առաջին անգամ Հայաստանի ու Կովկասի համար հայտնաբերվել է ջրային արջուկների (Tardigrada) 14 տեսակ (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Քալաշյան, կ.գ.թ. Ն.Զարիկյան):

Սյունիքի մարզում պտղատու ծառերի արմատամերձ հողում հայտնաբերվել է Հայաստանի ֆաունայի համար նոր *Longidorus iranicus* էկտոպարազիտ նեմատոդը: Ճագարների մոտ առաջին անգամ Տաշիրում ու Մասիսի տարածաշրջանում հայտնաբերվել են *Trichostrongylus* ցեղի նեմատոդներ, Մասիսում՝ նաև դիկրոցելիաների ձվեր (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Վարդանյան):

Առաջին անգամ Հայաստանում ուսումնասիրվել է արջերի ու քարակզաքիսների մակաբուծաֆաունան, գրանցվել է 11 տեսակի մակաբույծ, որոնցից 5-ը՝ զոոնոզ նշանակության: Ծիածանափայլ իշխանի ու Կուրի բեղաձկան մոտ առաջին անգամ Հայաստանում հայտնաբերվել է *Gyrodactylus* sp. մոնոգենետան (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Շչերբակով):

Ուսումնասիրվել են *Phylloscopus* ցեղի թռչունների 3 տեսակի սեռական բջիջների կարիոտիպերը: Բոլոր տեսակների մոտ հայտնաբերվել են միայն սեռական բջիջներում տեղակայված GRC քրոմոսոմներ: Գորշ արջի մեյոտիկ կարիոտիպում հայտնաբերվել է քառավալենտ քրոմոսոմներով առաջին կարգի սպերմատոցիտ (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Սպանգենբերգ):

Սևանա լճի հատակային մեյոֆաունայում գրանցվել է գիտության համար նոր տեսակ՝ *Nannopus* sp.: Ըստ կատարված հաշվարկների՝ Սևանա լճի ավազանում դարելվերջում կանխատեսվում է օդի միջին ջերմաստիճանի 2,2–5,8°C-ով բարձրացում, ինչն ազդեցություն կունենա լճի ջերմային ու թթվածնային ռեժիմների վրա՝ ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելով վնասակար ջրիմուռային ծաղկումների, ներլճային մի շարք էկոլոգիապես անբարենպաստ գործընթացների համար: Մշակվել է էկոլոգիական համակեցություններում տեսակների հարաբերական առատության բաշխման վերապահված խորշի մոդելի ֆրակտալ ընդհանրացում, որտեղ տեսակային բազմազանություն–մակերես աստիճանային

կախվածության ցուցիչը համընկնում է Կանտորի ընդհանրացված բազմության Հաուսդորֆի չափողականության հետ (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գևորգյան):

Մշակվել և հաստատվել են բիֆիդո- (*Bifidobacterium longum*, *B. bifidum*, *B. adolensis*) ու կաթնաթթվային (*Lactobacillus acidophilus* MDC 9602) բակտերիաների (ԿԹԲ) շտամների հիման վրա «Բիֆինարին» սննդային հավելանյութի արտադրության տեխնիկական պայմանները: Սահմանվել է ԿԹԲ-ների՝ *L. casei*, *L. bulgaricus*, *L. lactis*, *Lacticaseibacillus rhamnosus* և *Lactiplantibacillus plantarum* համատեղ կուլտիվացման հնարավորությունը նոր պրոբիոտիկ կաթնաթթվային պատրաստուկի կոնսորցիումի կազմի մեջ (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Բազիյան):

Bacillus amyloliquefaciens շտամի գենոմային ԴՆԹ-ից պրայմերային զույգի կիրառմամբ իրականացվել է α -ամիլազ գենի ՊՇՌ-ամպլիֆիկացում, որը Գիբսոնի հավաքման մեթոդով կլոնավորվել է pBE-S մաքուրային վեկտորի կազմում: Ստացված pBE-S_amy2156 ռեկոմբինանտ պլազմիդով իրականացվել է *B. subtilis* Rik 1285 տեր-շտամի տրանսֆորմացումը և ստացվել է α -ամիլազի TS5 շտամ-արտադրիչը, որն ապահովում է 1200 միավոր/մլ ծավալային ակտիվությամբ ռեկոմբինանտ ֆերմենտի ելքը: Բնութագրվել են ստացված α -ամիլազային պատրաստուկի ջերմաստիճանային ու pH-օպտիմումները, ջերմակայունությունն ու սուբստրատային յուրահատկությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ամբարձումյան):

Phaffia rhodozyma խմորասնկի վայրի շտամի քիմիական եղանակով մուտագենեզի արդյունքում ստացվել են արժեքավոր կարոտինոիդի՝ աստաքսանտինի 25-28°C ջերմաստիճանում և pH 4,5 աճող շտամ-արտադրիչներ: Օպտիմալացվել են դրա կենսասինթեզի պայմանները, ինչի արդյունքում սինթեզվել է մինչև 10 մգ/գ (չոր կենսազանգվածի վրա վերահաշվարկված) աստաքսանտին (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Բացահայտվել է արտաբջջային պրոտեազների նոր արգելակիչ՝ ((S)-3-([1,1':4',1"-տերֆենիլ]-4-իլ)-ալանինը, որի 2,5 մՄ, կախված միջավայրի սուբստրատից և pH-ից, 70%-ով ընկճում է *Pseudomonas aeruginosa* շտամի արտաբջջային պրոտեոլիտիկ ակտիվությունը, իսկ *Stenotrophomonas maltophilia* շտամի պրոտեոլիտիկ ակտիվությունը՝ 90%-ով՝ անկախ միջավայրի սուբստրատից ու pH-ից: Կիրառված մոտեցումը թույլ է տալիս տարբերակել արտաբջջային բակտերիալ պրոտեազները՝ գնահատելով դրանց ակտիվությունն ու արգելակումը տարբեր պայմաններում (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Շարունակվել են սելեկցիոն եղանակով ընտրված *Brevibacterium flavum* G27 (m-FP-r, 5-FT-r) և *B. flavum* 59C (m-FP-r, 5-FT-r) շտամների հիման վրա L-տրիպտոֆանի հեռանկարային շտամ-արտադրիչների ստացման հետազոտությունները: Գենետիկայի ու սելեկցիայի մեթոդներով ստացվել են 5-մեթիլտրիպտոֆանի նկատմամբ լրացուցիչ կայունությամբ օժտված մուտանտներ: Խորքային ֆերմենտման արդյունքում *B. flavum* G27 շտամի (G8') մուտանտը սինթեզել է 8-10 գ/լ նպատակային ամինաթթու, *B. flavum* 59C շտամի (18'C) մուտանտը՝ 12 գ/լ, որը բնութագրվում է ուղեկցող ամինաթթուների նվազագույն քանակով (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա):

Առաջարկվել է ֆերմենտատիվ հիդրոլիզի մեթոդով սննդային խմորիչի սպիտակուցային հիդրոլիզատի ստացման եղանակ: Ցույց է տրվել, որ հիդրոլիտիկ ճեղքման հետևանքով անջատված արգասիքները ֆերմենտման միջավայրում *Corynebacterium glutamicum* LGS8 շտամի կուլտիվացման ժամանակ ապահովում են L-հիստիդին ամինաթթվի 22 գ/լ ելքը (ղեկ.՝ կ.գ.թ. Ս.Քելեշյան):

Իրականացվել է կարևոր օրգանական թթուների (օքսալաթթու, խնձորաթթու, կիտրոնաթթու, սաթաթթու, կաթնաթթու, գինեթթու, պիրուվատ), սպիրտների (մեթանոլ, իզոպրոպանոլ, 1-պրոպանոլ, իզոբութանոլ, 1-բութանոլ, իզոմաիլ սպիրտ) ու եթերների (էթիլ

ացետատ) քանակական ու որակական նույնականացման ԲԱՀՔ ու ԳՔ մեթոդների մշակում ու վալիդացում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Իրականացվել է վայրի ու գենետիկորեն փոփոխված մոշի սերմերից ստացված բնական կոսմետիկ յուղի ելքերի համեմատական վերլուծություն, ուսումնասիրվել է ճարպաթթվային բաղադրությունը: Ցույց է տրվել, որ գենետիկորեն փոփոխված մոշի սերմերի յուղայնությունը մոտ 3 անգամ գերազանցում է վայրի բույսերի նմուշների յուղայնությանը (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան):

Lactobacillus և *Enterococcus* ցեղերի ԿԹԲ-ների պրոբիոտիկ շտամների համատեղ աճեցման դեպքում ցույց է տրվել մետաբոլիտների սինթեզում անտագոնիզմի բացակայությունը, որակական ու քանակական փոփոխությունը: Բացահայտվել է, որ ամինաթթուների ընդհանուր քանակը, արգինինի սինթեզի խթանումը կամ ճնշումը, լեղաթթուների աղերի հիդրոլազի ակտիվության փոփոխությունը, որոնք հանգեցնում են տաուրինի ու գլիցինի պարունակության փոփոխությանը, կախված են կոնսորցիումներում տարբեր բակտերիաների շտամների համակցություններից (ղեկ.՝ կ.գ.թ. Ֆ.Տխրունի):

Ուսումնասիրվել է մի շարք դեղաբույսերի էքստրակտների ազդեցությունը պրոբիոտիկ ԿԹԲ-ների շտամների աճի վրա: Ցույց է տրվել, որ 0,25% կոնցենտրացիայով պատրինջի էքստրակտը նպաստում է կաթի ֆերմենտմանը, բարելավում է կաթնամթերքի համային ու տեքստուրալ հատկությունները, բարձրացնում է մածուցիկությունը, հակաօքսիդանտային ակտիվությունը, կաթնաթթվային բակտերիաների տիտրը, երկարացնում է պահպանման ժամկետը (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Դանիելյան):

Ուսումնասիրվել են բնական կարոտինոիդ աստաքսանտին սինթեզող *Haematococcus pluvialis* կանաչ միկրոօրգանիզմի մորֆոֆիզիոլոգիական ու կենսաքիմիական հատկությունները: Շտամի աճեցման պայմաններն օպտիմիզացվել են, ապահովվել է 85 մգ պիգմենտի ելք 1 գ չոր միկրոօրգանիզմների կենսազանգվածից:

Սինթետիկ ազոտֆիքսող, ֆոսֆատները լուծող ու ֆոտոսինթեզող ցիանոբակտերիաներ *Arthrospira platensis* և *Nostoc* տեսակների հիման վրա մշակվել և դաշտային պայմաններում փորձարկվել է նոր համալիր կենսապարարտանյութ, որը բարելավել է հումուսով աղքատ հողերի արտադրողականությունը (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

Կաշենի պղնձամոլիբդենային հանքավայրի կույտային տարրալվացման համակարգից մեկուսացվել է երկաթի օքսիդացման բարձր ակտիվությամբ մետաղակայուն բակտերիա, որը նույնականացվել է որպես *Leptospirillum ferrodiazotropum* Ksh-L: Պարզվել է, որ *L. ferrodiazotropum*-ի մեկուսացված կուլտուրան ստուգիչի համեմատ մոտ 4 անգամ ավելի է խթանում խալկոպիրիտից պղնձի ու երկաթի կենսատարրալուծումը, իսկ ծծումբ օքսիդացնող *Acidithiobacillus thiooxidans* մանրէի հետ համակեցությունը թույլ է տալիս 1,7 անգամ բարձրացնել խալկոպիրիտից պղնձի տարրալուծման արդյունավետությունը (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Վարդանյան):

Մշակվել են ճահճային շուծադեղի ու կլորատերև սպունդուլի դեղաբույսերի ջրասպիրտային թուրմերի ստացման լաբորատոր մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս հումքի մացերացիայի միջոցով ապահովել պատրաստի պատրաստուկներում կենսաբանական ակտիվ միացությունների ամենաբարձր պարունակությունը (ղեկ.՝ ք.գ.թ. Գ.Հովսեփյան):

Սինթեզվել է Ni^{II} իոնի հարթ-քառակուսային կոմպլեքսը, որն ուսումնասիրվել է Մաննիխի ռեակցիայով: Ռեակցիայի շրջանակում փորձարկվել են տարբեր ամիններ, անջատվել է 5 նոր α-ամինաթթու ու ենթարկվել մոլեկուլային դոկինգ հետազոտության (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան):

Ակտիվացված էսթերների եղանակի կիրառմամբ ստացվել է ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող 3 դիպեպտիդ՝ 9-Ֆլուորենիլմեթոքսիկարբոնիլ-(S)-վալիլ-(S)-5-մեթիլ-2-թիօքսո-1,3,4-թիադիազոլ-ալանին, N-9-Ֆլուորենիլմեթոքսիկարբոնիլ-(S)-β-[4-ալիլ-3-(2'-քլորֆենիլ)-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանիլ-գլիցին, 9-Ֆլուորենիլմեթոքսիկարբոնիլ-(S)-3-(3-մեթիլ-ինդոլ-1-իլ)-α-ալանիլ-գլիցին: Ստացված պաշտպանված ամինաթթուների ու դիպեպտիդների կառուցվածքը հաստատվել է ՄՄՌ վերլուծությամբ: Ցույց է տրվել, որ դրանք օժտված են պոտենցիալ բարձր հակասնկային, հակամանրէային ակտիվությամբ (դեկ.՝ ք.գ.թ. Տ.Սարգսյան):

Click-համակցման ռեակցիաներով սինթեզվել են ոչ սպիտակուցային ամինաթթուներ, որոնք ներմուծվել են պեպտիդային շղթա՝ կենսաբանորեն ու դեղաբանորեն ակտիվ նոր պեպտիդներ ստանալու նպատակով (դեկ.՝ ք.գ.թ. Ձ.Մարդիյան):

Մաթեմատիկական մոդելավորմամբ հաշվարկված օպտիմալ N₄₃:P₃₅:K₂₂-ով սնուցված յուղատու մորինգայի (*Moringa oleifera* Lam.) բույսերը չոր բուսահումքի քաշով 2.6 անգամ գերազանցել են ստուգիչին (Դավթյանի 1N սննդալուծույթ - N₅₅:P₁₁:K₃₄ ատոմ%), իսկ սպիտակուցի պարունակությամբ՝ 1.3 անգամ: Դաբաղանյութերի (1.6 անգամ), ֆլավոնոիդների (1.1 անգամ) ու վիտամին C-ի (10-30 %-ով) համեմատաբար բարձր կուտակում դիտվել է ստուգիչ տարբերակում: Էքստրակտիվ նյութերի, ֆենոլային թթուների ու կարոտինոիդների պարունակության վրա սննդալուծույթում մակրոտարրերի տարբեր հարաբերակցություններն էական ազդեցություն չեն ունեցել:

Երկու տարեկան հիդրոպոնիկ աշվագանդայի (*Withania somnifera* L.) տերևները (մեկ տարեկանների համեմատ) աչքի են ընկել գումարային ֆլավոնոիդների բարձր պարունակությամբ (1.5 անգամ): Մեկ և երկու տարեկան հիդրոպոնիկ բույսերի տերևներում ֆենոլաթթուների գումարային պարունակությունը համապատասխանաբար 1.3 ու 1.2 անգամ գերազանցել է հողային բույսերին: Երկու տարեկան հիդրոպոնիկ ու հողային բույսերի տերևներում հայտնաբերվել են մի քանի ֆենոլային բաղադրիչներ, որոնք կազմել են հետևյալ նվազող շարքը՝ ռուտին > քլորոգենաթթու > ֆերուլաթթու > կումարաթթու: Հիդրոպոնիկ բույսերը քլորոգենաթթվի, ֆերուլաթթվի ու կումարաթթվի պարունակությամբ 1.3, 1.1 և 1.1 անգամ գերազանցել են հողային բույսերին, մինչդեռ հողային աշվագանդայի տերևներում ռուտինի կենսասինթեզը 1.2 անգամ ավելի ինտենսիվ է ընթացել հիդրոպոնիկ բույսերի համեմատությամբ:

In vitro մշակույթ է ներմուծվել ցանովի զաֆրանը (*Crocus sativus* L.), որի պալարաստիկների ձևավորման ու աճի համար 0.5 ՄՍ-ի սննդամիջավայրում օպտիմալ են եղել ԲԱՊ-2.0 մգ/լ և ՆԲԹ-0.5 մգ/լ խտությունները (դեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Տնկման խտությունը զգալի ազդեցություն է ունեցել սոյայի (*Glycine max* (L.) Merr.) սերմերում մոնոհիպոքսիդ ու բազմաչիպոքսիդ ճարպաթթուների պարունակության վրա: Հիդրոպոնիկ պայմաններում մոնոհիպոքսիդ ճարպաթթուների ամենացածր ու բազմաչիպոքսիդ ճարպաթթուների ամենաբարձր պարունակություն դիտվել է ամենանոսր տնկման դեպքում (30 բույս/մ²): Միաժամանակ այս տարբերակում գրանցվել է ω-6 և ω-3 ճարպաթթուների ամենացածր հարաբերակցություն (10:1) (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Թադևոսյան):

Բժշկական կենսաբանություն: Առնետների մոտ հետազոտվել է ասպարագին, գլուտամին, β-ալանին ու էթանոլամին-O-սուլֆատ պարունակող, ԳԱԿԹ-ի առաջացումը խթանող խառնուրդի (ԳԽԽ) հակաշաքարախտային ազդեցությունը ստրեպտոզոոցինով հարուցված շաքարախտի մոդելում: Ներարկված խառնուրդը ցուցաբերել է նորմալացնող ազդեցություն գլիկեմիկ կարգավիճակի, գլուտամինազի ու գլուտամատ-դեկաբոքսիլազի ակտիվությունների վրա, որը մատնանշում է ԳԽԽ-ի կիրառելիությունը շաքարախտի բուժման դեպքում: Հետազոտվել է պիպերազինի, պիրիդինի, իմիդազոլի ու ավելի քան 100

նոր սինթեզված ածանցյալների ազդեցությունը խոշոր եղջերավոր անասունի թոքերի ադենոզինդեամինազի՝ ԱԴԱ-ի ակտիվության վրա: Որոշ միացություններ ընկճում են ԱԴԱ-ի ակտիվությունը մոտ 40%-ով: D011 182 միացությունն ունի բարձր ընկճող ազդեցություն: Բացի այդ, D011 180, D011 181, D011 182 միացությունները ցուցաբերել են հակաօքսիդանտային ակտիվություն: Ստացած արդյունքների հիման վրա քիմիկոսներին կարող է առաջարկվել սինթեզել առավել ուժեղ ԱԴԱ ակտիվություն ընկճող ու հակաօքսիդանտային հատկություններ ունեցող ածանցյալներ՝ հետազայում բժշկության մեջ կիրառելու նպատակով: Դյուայուիտրենի կոնտրակտուրա (ԴԿ) հիվանդության համար պատասխանատու կենսաքիմիական թիրախները հայտնաբերելու և դրա դեմ դեղամիջոցներ որոնելու նպատակով համեմատվել են ԱԴԱ, ԴՊՊIV ու ԴՊՊII ֆերմենտների ակտիվությունները ԴԿ-ի ու առողջ մարդկանց ապոնկրոզում: ԴԿ նմուշներում ԱԴԱ-ի ակտիվությունը 11 անգամ ավելի բարձր է առողջների համեմատ: ԴԿ նմուշներում ԴՊՊIV ու ԴՊՊII ակտիվությունները զգալի են, մինչդեռ առողջ մարդկանց մոտ դրանք բացակայում են: Այս արդյունքները կարող են նպաստել ԴԿ-ի անհայտ էթիոլոգիայում նշված ֆերմենտների դերի պարզաբանմանը (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Անտոնյան):

Դիտարկվել է շրջակա միջավայրում լայնորեն տարածված, բարձր տոքսիկություն ունեցող ծանր մետաղ կադմիումի ազդեցությունն արյան մակարդման համակարգի վրա և ամինաթթվային խառնուրդի (ԱԽ) ազդեցությունն այդ համակարգի վրա: Կադմիումային թունավորումից ու դրա ֆոնին ԱԽ-ի ներարկումից հետո արյան մակարդման համակարգում տեղի ունեցող փոփոխությունները գնահատվել են պլազմային հեմոստազը բնորոշող ցուցանիշներով: Թունավորման հետևանքով տեղի է ունեցել արյան մակարդելիության զգալի բարձրացում, որը կարգավորվել է ԱԽ-ի ներարկումից հետո: Ստացած արդյունքները հաստատվել են մորֆոլոգիական ուսումնասիրություններով (դեկ.՝ կ.գ.թ. Զ.Պարոնյան):

Ուռուցքների թիրախային ֆոտոդինամիկ թերապիայի միջոցով ոչնչացվել են միայն քաղցկեղի բջիջները, իսկ առողջ բջիջները չեն տուժել: Թերապիայում կիրառելու նպատակով մշակվել է հիալուրոնաթթվի ու կատիոնային պորֆիրինի ոչ կովալենտային կոմպլեքսի ստացման ու մաքրման տեխնոլոգիա, քանի որ քաղցկեղի բջիջների մակերեսին հիալուրոնաթթվի զգալիորեն ավելի շատ ռեցեպտորներ կան, քան առողջ բջիջների մակերեսին: Այլումինիումի օքսիդով ներբեռնված աշտարակի շնորհիվ ստացվել է բավականին մաքուր կոմպլեքս, որը լիովին մաքրվել է չկապված բաղադրիչներից (դեկ.՝ կ.գ.թ. Գ.Գյուլխանյան):

Հայկական պոպուլյացիայի ժամանակակից ու տարածաշրջանի հնագույն ԴՆԹ նմուշների ամբողջական գենոմի առաջին հետազոտությամբ հերքվել է հայերի ծագման Բալկանյան տեսությունը: Հետազոտության արդյունքները բացառել են նաև սասունցիների ասորական ծագումը, ինչպես և ցույց են տվել, որ այս բարձրալեռնային շրջանի բնակչությունը, ի տարբերություն հայերի այլ աշխարհագրական խմբերի, ոչ վաղ անցյալում զգալի կրճատվել է: Հայկական լեռնաշխարհի բնակչության գենետիկական շարունակականության վարկածի ստուգումը պարզել է, որ հայերի գենոֆոնդի վրա նկատելի ազդեցություն են ունեցել Լևանտի նեոլիթյան երկրագործները: Հայկական լեռնաշխարհի արևելյան, արևմտյան ու կենտրոնական շրջանների պոպուլյացիաները գենետիկորեն շատ մոտ են՝ մատնանշելով հայերի աշխարհագրորեն տարբեր խմբերի ընդհանուր ժողովրդագրական պատմությունը (դեկ.՝ կ.գ.թ. Լ.Եպիսկոպոսյան):

Կատարվել է *Macrovipera lebetina obtusa* օձի թույնի հնարավոր նեյրոտոքսիկ հատկությունների ուսումնասիրություն էլեկտրոֆիզիոլոգիական չափումների ու կոնֆոկալ իմունոմանրադիտման միջոցով, ուսումնասիրվել են տվյալ հեմոլիտիկ թույնի ազդեցության առանձնահատկությունները մարդու արյան տարբեր խմբերի վրա: Իրականացվել է

գյուրգայի թույնի դեմ ստացված հակաթույնի զգալի չափաբաժնի լիոֆիլիզացիա, դրա հակաթունային արդյունավետության համեմատական գնահատումը հեղուկ պրեպարատի նկատմամբ (պրոտեոլիտիկ ակտիվության ստուգում, լետալության չեզոքացում, տեղային հեմոռագիայի չեզոքացում) և Հնդկաստանի խոշորագույն հակաթույն արտադրող ընկերության (Premium Serum) NORAF պրոդուկտի նկատմամբ: Լաբորատորիայի էքսպերիմենտալ շիճուկի իմունոգլոբուլինները խտացվել են կապրիլաթթվի միջոցով, կատարվել է դրանց մաքրում ձեռք բերված Sartoflow® Smart Small-Scale Benchtop TFF System տանգենցիալ ֆիլտրացիայի համակարգի միջոցով և իմունոգլոբուլինների տիտրի որոշում էլեկտրոֆորետիկ անալիզատորի միջոցով՝ յուրաքանչյուր արյան հավաքի համար առանձին (դեկ.՝ կ.գ.դ. Ն.Այվազյան): Հաստատվել է պարզ տեսողական-շարժողական ռեակցիաների ժամանակի գնահատման մեթոդի բարձր տեղեկատվությունը մարդու ֆունկցիոնալ վիճակի ուսումնասիրման գործընթացում՝ կախված տարբեր գործոններից (տարիք, մտավոր ծանրաբեռնվածություն): Էպիլեպսիայի տարբեր կենդանական մոդելների վրա իրականացվել է անհատական սպայք-ալիքային համալիրների (ՍԱՀ) հաճախականային առանձնահատկությունների ուսումնասիրություն ու համեմատական վերլուծություն: Բոլոր մոդելներում հայտնաբերվել են արագ եռաֆազ սպայք բաղադրիչի նմանություններ ինչպես ժամանակային, այնպես էլ հաճախականային տիրույթներում: Այդ բաղադրիչի ամպլիտուդային սպեկտրն ունեցել է միակ արտահայտված գագաթ 18-20 Հց հաճախականային տիրույթում: Միաժամանակ ՍԱՀ -ի դանդաղ բաղադրիչը տարբեր մոդելներում էականորեն տարբեր է եղել: Մշակվել և փորձարկվել է նոր ալգորիթմ՝ նոպաները կամ ՍԱՀ արտանետումներն արտեֆակտներից առանձնացնելու համար: Ալգորիթմը փորձարկվել է ԷԷԳ երկարատև գրանցումներով էպիլեպսիայի 4 տարբեր կենդանական մոդելների վրա: Իրականացվել է նոպաների հայտնաբերման ալգորիթմների աշխատանքի գնահատում և երեխաների մոտ աբսենս էպիլեպսիայի ԷԷԳ գրանցումներում դրանց առանձնացում արտեֆակտներից (դեկ՝ կ.գ.թ. Ա.Խաչունց):

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քիմիա: Մշակվել է ֆենիլացետիլենի, ինչպես նաև N- և C- տեղակալված ու չտեղակալված պիրազոլային ածանցյալների ու մոլեկուլային յոդի փոխազդեցության արդյունավետ եղանակ կադմիումի (II) ացետատի առկայությամբ, որի արդյունքում ստացվել են համապատասխան միա-, երկ- և եռյոդաձանցյալներ: Օպտիմալացվել է լուծիչների դերն ու ռեագենտների մոլային հարաբերակցությունը: Պարզվել է, որ ստացված յոդոֆենիլացետիլենի եռակի կապը հեշտությամբ մերկուրացվում է քացախաթթվում սնդիկի (II) ացետատի առկայությամբ, առաջանում է սնդիկօրգանական ինտերմեդիատ, որի դեմերկուրացումը մոլեկուլային յոդով հանգեցնում է դիյոդոֆենիլվինիլացետատի ստացմանը: Յոդոֆենիլացետիլենի օքսիդիչ դեհալոգիմերումը դիլիթիումի տետրաքլորոկուպրատի առկայությամբ իրականացնելիս հաջողվել է ստանալ 1,4-դիֆենիլբուտա-1,3-դիին (դեկ.՝ ք.գ.թ. Հ.Սարգսյան):

Բարձրջերմաստիճանային ինքնատարաձվող սինթեզի (ԲԻՍ) եղանակով առաջին անգամ ստացվել են $(\text{Ti}_{0.4}\text{Ta}_{0.4}\text{V}_{0.4}\text{Nb}_{0.4}\text{Cr}_{0.4})\text{AlC}$ 211 և $(\text{Mo}_{0.25}\text{Ti}_{0.25}\text{V}_{0.25}\text{Cr}_{0.25})_4\text{AlC}_3$ 413 բարձրէնտրոպիական MAX ֆազեր ու դրանց 2D ածանցյալները, որոնք հեռանկարային են էլեկտրաքիմիական ու ագրեսիվ միջավայրերում կիրառության համար: Նյութերի այս դասում առաջին անգամ հայտնաբերվել է հարթությունից դուրս կարգավորվածության (out-of-plane ordering) երևույթ, որը թույլ է տալիս 4e և 4f Վայկոֆֆի դիրքերում մետաղների

փոփոխմամբ նախագծել ցանկալի հատկություններով նոր նյութեր բազմաֆունկցիոնալ կիրառությունների համար (ղեկ.՝ ք.գ.թ. Այդինյան):

Զարգացվել է տեսական պատկերացում և առաջարկվել է ծրագրային գործիք եռամասնիկ քիմիական փոխարկումների թվային մոդելավորման համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան):

Ուսումնասիրվել են ալյումինաբորոսիլիկատային $\text{MeO/MeF}_2\text{-Al}_2\text{O}_3\text{-B}_2\text{O}_3\text{-SiO}_2$, (Me-Mg,Ca,Sr, Ba), բարիումբիսմութերմանատային համակարգերում ապակեգոյացման տիրույթները, ֆազային դիագրամները, ապակիների ուղղորդված բյուրեղացումը: Մշակվել են H_4 - տիրույթում թափանցիկ ապակիներ ֆտորպարունակող սիլիցիումգերմանատային բաղադրությունների հիմքով գիշերային տեսողության սարքերի համար: Սինթեզվել են ջերմակայուն ու թափանցիկ ապակեբյուրեղներ F_2O (15-30)· 10^{-7}cm^{-1} արժեքներով միկրոէլեկտրոնիկայի համար (ղեկ.՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան):

Դժվար սինթեզվող սիլիկատային միացությունների՝ նիկելի, բարիումի սիլիկատների, ցիրկոնի ZrSiO_4 -ի հիմքով միացությունների սինթեզի համար նստեցման փուլում կիրառելով որպես սիլիցիումի երկօքսիդի ելանյութ սերպենտինիտներից $(\text{Mg(Fe)})_6[\text{Si}_4\text{O}_{10}](\text{OH})_8$ ստացված հիդրոսիլիկաժելը, մշակվել և կիրառվել են համակցված քիմիական ու ջերմային պրոցեսներ: Ստացված արդյունքները թույլ են տվել պարզեցնել սինթեզի պայմանները նոր նյութերի ու էներգախնայող տեխնոլոգիաների մշակման համար: Մշակվել են տեղական հումքից կերամիկական ջնարակների բաղադրությունները (ղեկ.՝ ք.գ.դ. Ն.Զուլումյան):

Միկրոալիքային վառարանում (ՄԱՎ) միներալիզատորների առկայությամբ ուսումնասիրվել է բորոգիպսից կապակցանյութի ստացումը: Պարզվել է, որ միկրոալիքային ճառագայթման կիրառումը բարձրացնում է միներալիզատորների արդյունավետությունը՝ բարելավելով ստացվող կապակցանյութի ֆիզիկամեխանիկական հատկությունները: ՄԱՎ-ում կալիումի մալեինատի (0,1%) առկայությամբ ստացված նյութի կապակցման տևողությունը երկարում է 2,5-4 -ից մինչև 7-12 րոպե , իսկ սեղմման ամրությունը մեծանում է գրեթե կրկնակի՝ մինչև 9 ՄՊա (ղեկ.՝ տեխ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Երկրի մասին գիտություններ: Կապուտանի մագնետիտ-ապատիտային հանքավայրի հանքներփակող ապարների ու հանքայնացման Sr-Nd իզոտոպային անալիզներով որոշվել է հանքայնացման աղբյուրը, որտեղ հնարավոր մասնակցություն են ունեցել նաև էվապորիտները: Մոտ 3000 XRF անալիզների տվյալներով ստեղծվել է հանքավայրի եռաչափ տարածական մոդելը: Ստացված նոր տվյալներով Կապուտանի հանքավայրն ունի REE+Y -ի զգալի ռեսուրսներ, ըստ նախնական հաշվարկների մոտ 127 kt, որտեղ գերակշիռ մասը կազմում է LREE-ը (ղեկ.՝ ե.գ.թ. Ս.Հովակիմյան):

Ըստ նոր հետազոտությունների արդյունքների՝ Սևանա լճի պալեոմիջավայրի էվոլյուցիայի պահոցներ հանդիսացող միկրոբիալիթները (սևանիտները) ունեն բարդ, դիագենետիկ փոփոխություններով, բիոգեն ակտիվությամբ բնորոշվող կառուցվածք: Դրանք ձևավորվել են ամենահինը 9060 cal BP, նորը՝ 230 cal BP, որոշ դեպքերում ջրի մակարդակի բնական ֆլուկտուացիաների բնորոշմամբ: Սառը, խորը հորիզոններում ռադիալ ագրեգատային, աբիոգեն բյուրեղներն ունեն 1510 cal BP հասակ: Ռոդոխրոդիտ միներալի (MnCO_3) առկայությունը միայն խորջրյա միկրոբիալիթների մակերեսին մատնանշում է միկրոբիալ ազդեցությունը սառը միջավայրում: Ըստ թթվածնի $\delta^{18}\text{Ocarb}$ (-2,06-ից մինչև 0,77‰) ու ածխածնի $\delta^{13}\text{Ccarb}$ (3,15 և 5,56‰) իզոտոպների արժեքների՝ կարբոնատի կուտակման հիմնական գործընթացը պայմանավորված է ֆոնտոսինթեզով: Դեյտերիումի -17,65-ից -16,51‰ ու թթվածնի իզոտոպների -1,76 և -1,09‰ արժեքները մատնանշում են Սևանա լճում զգալի գոլորշիացման մասին (ղեկ.՝ ե.գ.թ. Լ.Սահակյան):

Հայտնաբերվել են ռադոնի ակտիվության կոնցենտրացիաներ Սևանա լճի հարավ-արևմտյան ու հարավային ափերին գտնվող տասը հորերից/աղբյուրներից նմուշառված ստորերկրյա ու լճի ջրերում: Մասնավորապես բարձր կոնցենտրացիաներ են գրանցվել Արգիճիի գետաբերանում՝ 200 Bq/մ³ (պատճառն ավամերձ գոտում գտնվող ջրածածկ արտեզյան հորն է), Զոլաքարի մոտակայքում՝ 55 Bq/մ³ (հնարավոր պատճառը՝ մոտակա ավամերձ գոտում գտնվող արտեզյան հորն է), Արծվանիստից հյուսիս՝ 50 Bq/մ³: Ռադոնի այս վերջին անոմալիան ակնհայտորեն ցույց է տալիս ստորերկրյա ջրերի ներհոսքը լիճ, քանի որ այս տարածքում ավամերձ գծին մոտ արտեզյան հորեր չկան: Այսպիսով, ռադոնային մոտեցումն ընդունելի է ստորերկրյա ջրերի արտահոսքը դեպի լիճ գնահատելու համար (ղեկ.՝ Ա.Առաքելյան):

Հրաբխային ապարներում գլխավոր էլեմենտների պարունակությունների վերլուծության հիման վրա պարզվել է, որ նրանց մեծ մասն ունի նորմալ ալկալայնություն բազալտներից-ռիոլիտներ շարքով: Դրանք հատկապես կրաալկալային սերիայի են: Խառնուրդ-տարրերի պարունակության հիման վրա դրանք ունեն գլխավորապես սուբդուկցիոն ծագում, մասամբ MORB-նման և հազվադեպ՝ OIB-տիպի: Վուլկանիտների հետ կամ դրանց մեջ հանդիպող նստվածքները հասակագրելիս, մասնավորապես Սևգետի վերին հոսանքի աջ ափին, բացահայտվել են երկու տարբեր համալիրներ: Այստեղ՝ ստորին կավճի ռադիոլարիտներում, որոշվել են ուշ վալանժին-հոտերիվյան ռադիոլարիաներ, իսկ կրաքարերում՝ սենոմանիան-վաղ տուրոնիան ռադիոլարիային տեսակներ: Առաջին անգամ կազմվել և ներկայացվել է Բազումի հորստի ամբողջ տարածքի երկրաբանական քարտեզը, որն էականորեն փոխում է մինչ այդ եղած պատկերացումները (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Ղ.Գալոյան):

Գնահատվել և քարտեզագրվել է Տավրոկովկասյան տարածաշրջանի սեյսմոտեկտոնական դեֆորմացիաների ինտենսիվության դաշտը 2000÷2023թթ. տեղի ունեցած ուժեղ երկրաշարժերի ($M \geq 5.0$) ֆոկալ մեխանիզմների, դրանց սեյսմիկ մոմենտների թենզորային բաղադրիչների վերլուծության հիման վրա: Ցույց է տրվել, որ նշված ժամանակահատվածում առավել ինտենսիվ սեյսմոդեֆորմացիոն պրոցեսներ, արտահայտված Արևելաթուրքական երեք կործանարար երկրաշարժերի տեսքով, տեղի են ունեցել բազմաթիվ սեզմենտներով խզումային խախտումների համակարգ կազմող Արևելաանատոլական խորքային բեկվածքում (ղեկ.՝ Ֆ.-մ.Գ.Թ. Է.Գյոդակյան):

Բացահայտվել են սեյսմիկության տարածաժամանակային առանձնահատկությունները, մասնավորապես դիտարկվել է զույգ (դուպլետ) երկրաշարժերի բնույթն ու ֆիզիկական հիմնավորումը (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Զ.Կարապետյան):

Մշակվել է գիտակիրառական մեթոդական մոտեցում՝ գնահատելու տատանումների հակազդման սպեկտրի [SR] արժեքները սեյսմաակտիվ տարածքի առանձին գոտիների համար: Այն թույլ է տվել գնահատել ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի 1:500000 մասշտաբի հավանականային քարտեզի 3 առանձնացված գոտիներում սպասվող միջին ու 84% հավանականությամբ [SR] արժեքները բազային հաճախությունների համար (ղեկ.՝ Ֆ.-մ.Գ.Թ. Վ.Գրիգորյան):

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմագիտություն: Պատմության ինստիտուտը հրատարակել է «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի I հատորի II գիրքը, որն ընդգրկում է Ք.ա. IX դարի կեսերից մինչև Ք.հ. III դարն ընկած ժամանակաշրջանը: Այն ներառում է Վանի և Հայկազուն-Երվանդունիների թագավորությունների, Արտաշեսյանների գահակալումից

մինչև Տրդատ III Արշակունու թագավորումն ընկած ժամանակաշրջանների պատմությունը, ինչպես նաև տվյալ դարաշրջանների միջազգային հարաբերությունները, սոցիալ-տնտեսական, մշակութային, գաղափարաբանական և այլ հիմնահարցեր: Գիրքը շարադրված է հարուստ աղբյուրագիտական, ինչպես նաև հնագիտական նյութերի ու գիտական գրականության համակողմանի օգտագործմամբ:

ՌԴ Հյուսիս-կովկասյան դաշնային համալսարանի հետ հրատարակված «Армянский вопрос в международных отношениях (1895–1923 гг.)» մենագրությունում ուսումնասիրվել է XIX դարի վերջին - XX դարի սկզբին Հայկական հարցի առաջացման և զարգացման պատմությունը՝ որպես միջազգային խնդիր: Ռուսական, հայկական ու վրացական արխիվների հրապարակված աղբյուրների ու փաստաթղթերի հիման վրա վեր է հանվել եվրոպական տերությունների, Ռուսաստանի, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը, որոնք տնտեսապես, քաղաքական ու հումանիտար առնչություն ունեն ռուսական Կովկասում և Արևմտյան Հայաստանում կոմպակտ բնակվող հայ բնակչության իրավիճակի խնդիրներին: Ռուսական պատմագիտության մեջ առաջին անգամ ներկայացվել է իրադարձությունների բոլոր մասնակիցների մոտեցումների ու իրական քաղաքականության համապարփակ տեսլականը՝ կապված Օսմանյան կայսրության հայկական տարածքների բարենորոգումների խնդրի հետ: Բացի այդ, բացահայտվել են Հայկական հարցի էվոլյուցիայի հիմնական փուլերը՝ կապված Առաջին համաշխարհային պատերազմի, դրան հաջորդած Ռուսաստանում ու Թուրքիայում տեղի ունեցած հեղափոխությունների հետ: Արևելյան հարցի, ըստ այդմ և Հայկական հարցի տրամաբանական ավարտ է հանդես գալիս Լոզանի պայմանագիրը, որը վերջնականապես մերժեց հայ բնակչությանը սեփական պետություն ունենալու հարցում:

Արևելագիտության ինստիտուտի իրականացրած գիտական ծրագրերը ձևավորել են համալիր պատկեր, որտեղ տարածաշրջանի պատմական, մշակութային ու սոցիալական զարգացման մի շարք հարցեր ուսումնասիրության նոր մոտեցումներ են ստացել: Առաջին անգամ դիտարկվել է Հայկական լեռնաշխարհի վաղ շրջանի պատմությունը շրջակա միջավայրի հետ սերտ փոխազդեցության տեսանկյունից: Ուսումնասիրության մեջ վեր է հանվել կլիմայական փոփոխությունների ազդեցությունը տարածաշրջանի հասարակությունների սոցիալական, տնտեսական ու քաղաքական զարգացման վրա՝ ընդգրկելով Վաղ Հոլոցենից մինչև Ուրարտուի անկումը: Կարևոր ձեռքբերում է ուրարտական, նորասորեստանյան, նոր և ուշ բաբելոնյան, ինչպես նաև աքեմենյան շրջանի արքայական արձանագրություններից մինչ օրս հայտնի Ուրարտուի ու Հայկական լեռնաշխարհի այլ երկրների բնակիչների անվանաբանական ու կենսագրական ողջ տեղեկատվության ուսումնասիրությունը, որի մեջ ներառվել է շուրջ 300 անձնանուն: Մենագրությունը հրատարակվել է Օքսֆորդում՝ «Ուրարտուի անվանաբանությունը. պրոսոպոգրաֆիական ուսումնասիրություն» («The Urartian Onomasticon. A prosopographic study»):

Հայագիտական ու արևելագիտական մի շարք հարցերի միջազգայնացման գործընթացում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Քարաշամբի գավաթի պատկերագրության վերլուծությունը խեթական սեպագիր աղբյուրների նյութերի համատեքստում, որտեղ առյուծների ու ընձառյուծների պատկերագրական վերլուծությունը բացահայտում է դրանց սիմվոլիկան ու կապն արքայական իշխանության հետ, ինչպես նաև արտացոլում գավաթի ստեղծողների աշխարհայացքը («Առյուծների և ընձառյուծների պատկերագրության շուրջ Քարաշամբի գավաթի վրա» “On the Iconography of Lions and Leopard on the Goblet of Karashamb” (Scopus Q1)):

Տարածաշրջանային քաղաքական փոխազդեցությունների վերլուծության շրջանակում ուսումնասիրվել են 2020թ. արցախյան պատերազմից առաջ և հետո Թուրքիա-Ադրբեջան

ռազմական համագործակցության ոլորտում կերպափոխումների, երկկողմ համագործակցության որակական փոփոխությունները, ինչպես նաև թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության ազդեցությունն Ադրբեջանի ինքնութենական-գաղափարախոսական դաշտի կերպափոխումների վրա («Դաշինքից դեպի «փափուկ նվաճում»։ թուրք-ադրբեջանական ռազմական դաշինքի անատոմիան 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի պատերազմից առաջ և հետո», “From alliance to ‘soft conquest’: the anatomy of the Turkish-Azerbaijani Military alliance before and after the 2020 Nagorno-Karabakh war” (Scopus Q2)), անվտանգային քաղաքականության համատեքստում՝ Ադրբեջանի արաբական, մերձավորարևելյան ու իսլամական արտաքին քաղաքականության ուսումնասիրությունը ցույց է տրվել Ադրբեջանի քաղաքականությունը՝ օգտագործելու իսլամական համագործակցություն կազմակերպությունն ու իսլամական համերաշխության գաղափարը՝ ի հակադրություն Հայաստանի ազգային շահերին («Ադրբեջանական իսլամական դիվանագիտությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում. Իսլամական համագործակցության կազմակերպության դերը», “Azerbaijani Islamic Diplomacy in the Context of Nagorno-Karabakh Conflict: the Role of Islamic Cooperation Organization (Scopus Q1)):

Տնտեսական և սոցիալական պատմության ուսումնասիրության շրջանակում համակողմանի ուսումնասիրվել է Նադիր շահի՝ Ագուլիսի հայ վաճառականներին տված անտիպ հրովարտակը («Ագուլիսի վաճառականների խնդրանքով հրապարակված Նադիր շահի հրովարտակը», “Nādir Šāh’s Decree Issued at the Request of the Armenian Merchants of Agulis”), Ջիզայի՝ որպես հայ քրիստոնյաներից Արևելյան Այսրկովկասում 17-19-րդ դարերում գանձվող ծանր գլխահարկը, որը ցույց է տալիս, որ այն տարածաշրջանի հայերի ու ուղիների կրոնափոխության հիմնական պատճառներից մեկն էր («Ջիզայի Արևելյան Այսրկովկասում XVII–XIX դարի առաջին կեսին», “Джизья в Восточном Закавказье в XVII - первой половине XIX в.” (Scopus Q1)):

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Հնագույն և հին Հայաստանի հնագիտական սկզբնաղբյուրների պեղումներ և ուսումնասիրություն» ենթաժամանակահատվածի շրջանակում Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակությունների ուսումնասիրության բնագավառում կատարված դաշտային հետազոտությունների, կենսաչափական, հնաչափական լաբորատոր վերլուծությունների արդյունքները տեղ են գտել տարածաշրջանի (հարավարևմտյան Ասիա) և հարավարևելյան Եվրոպայի սահմաններում կատարված հասարակական զարգացումների, միգրացիաների խնդիրները լուսաբանող ուսումնասիրություններում, որոնց զգալի մասը հրատարակվել է ազդեցության բարձր գործակից ունեցող պարբերականներում ու ժողովածուներում (ղեկ.՝ պ.գ.թ. Ա.Բոբոխյան):

Լուրջ ձեռքբերումներ են արձանագրվել մ.թ.ա. III հազ. II կեսի իրողությունների հետազոտման տեսանկյունից: Այս ժամանակաշրջանը բնորոշվում է կարևոր կլիմայական ու էթնոմշակութային փոփոխություններով, որոնք սահմանել են Հայկական լեռնաշխարհի հետագա պատմական զարգացումները: Հայաստանի ու տարածաշրջանի մի շարք հուշարձանների (Կառնուտ, Գեղարոտ, Քարաշամբ, ևն) ուսումնասիրությունն ու արդյունքների հրապարակումը (կոլեկտիվ մենագրություն) Բելգիայում ապահովում է հայկական գիտության միջազգային առաջնայնությունն այս բնագավառում (ղեկ.՝ պ.գ.դ. Ռ.Բադալյան):

Արտաշատ մայրաքաղաքի հայ-գերմանական արշավախմբի պեղումներով ստացված նոր տվյալները լույս են սփռում Հայաստանի անտիկ շրջանի մայրաքաղաքում ընթացած տարաբնույթ սոցիալ-մշակութային գործընթացների վրա՝ բացահայտելով այդ հռչակավոր կենտրոնի՝ Մետաքսի ճանապարհով իրականացվող ընդարձակ առևտրային կապերն ու

Մերձավոր Արևելքում նրա քաղաքական, մշակութային դերակատարության մանրամասները: Արտաշատի 17-րդ բլրի արևելյան լանջին 2024թ. բացվել են մոտ 1000 քմ մակերեսով ութանկյուն եկեղեցու հիմնապատերը: Ըստ ստացված ռադիոածխածնային տվյալների՝ այս կառույցը վերաբերում է IV դարի առաջին կեսին ու, փաստորեն, Հայաստանի հնագիտորեն փաստագրված վաղագույն եկեղեցին է: Այդ հայտնագործությունը էապես լրացնում է Հայաստանում քրիստոնեության տարածման մեխանիզմների մասին մեր պատկերացումները (ղեկ.՝ պ.գ.թ. Մ. Զարդարյան):

Արցախի մշակութային ժառանգության խնդրի միջազգայնացման ոլորտում ևս արձանագրվել են ձեռքբերումներ՝ լրամշակվել է <https://monumentwatch.org/> եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) ակադեմիական հարթակը, որն աշխարհին է ներկայացնում Արցախի մշակութային ժառանգությունը, հետևում դրա արդի վիճակին (ղեկ.՝ պ.գ.դ. Հ. Պետրոսյան), ռուսական ու վրացական արխիվներից ձեռք են բերվել և հետազոտվել Խորհրդային Ադրբեջանի հուշարձանների պաշտոնական ցանկերի տվյալները, ինչը ցույց է տալիս ադրբեջանական իշխանությունների հայտարարությունների կեղծ լինելն իրենց իսկ կազմած ցանկերի համեմատ, Արցախում հայկականության հետքը չհանդուրժող մշակութային քաղաքականության էությունն ու նպատակները (ղեկ.՝ պ.գ.թ. Հ. Խառատյան): Խորքային հետազոտության է ենթարկվել Արցախյան երկրորդ պատերազմի վերաբերյալ ձևավորված հիշողության ոլորտը: Մասնավորապես Հայաստանում ամենուր և հատկապես սահմանամերձ համայնքներում նկատվում են 44-օրյա պատերազմի հիշողության կարևորման ու հուշարձանացման պրակտիկաների տեղային դրսևորումներ՝ պայմանավորված այդ համայնքների անվտանգային խնդիրներով, տեղային ինքնության պատումներով, գործող նշանային ենթակառուցվածքներով ու հիշողության քաղաքականության հուշային դերակատարների օրակարգերով (զոհվածների ծնողներ, բարեկամներ, ընկերներ, բարերարներ և այլք): Ուսումնասիրությունը բացահայտում է այդ ամենի ազդեցությունն արդի հայկական ինքնության կերպափոխման վրա (ղեկ.՝ պ.գ.դ. Մ. Գալստյան):

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3» գիտական թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Ա. Հայրապետյան) շարունակվել են պեղումները Զրաձորի բրոնզ-երկաթե-դարյան ամրոց-բնակավայրի տարածքում: Հիմնական աշխատանքները կենտրոնացվել են ամրոցակիր բլրի գագաթամերձ հատվածում: 11x11 մ չափերի պեղավայրում բացվել է 8.20x8.30 մ չափերով հյուսիս կողմնորոշված շինություն՝ դրված բլրի հիմնաժայռի վրա: Կառույցի մուտքը հարավից է: Պատերից տեղ-տեղ պահպանվել է 1-4 շարք: Տուֆից, երբեմն բազալտից քարերը դրված են մշակված, հարթեցված հիմնաժայռի վրա: Հարավային հատվածում՝ մուտքի մոտ, հիմնաժայռը մշակված է որպես ցոկոլ: Կառույցի վրա կուտակված հողալիցքից գտնվել են վերջինիս պատկանող բեկորներ, ինչպես նաև խաչապատկերով քար, բարավորի քար և այլ իրեր: Պեղված նյութը թույլ է տալիս ենթադրել, որ կառույցը միջնադարում վերաօգտագործվել է: Պեղվող քառանկյուն կառույցն ունի 5.5x5.5 մ չափերի ներսույթ և շինտեխնիկայով մերձենում է Ուրարտուի կրոնապաշտամունքային շինությունների կառուցվածքին: Նմանատիպ քառանկյուն շինություններ հայտնի են Հայաստանի ուրարտական հուշարձաններում (Արին Բերդ, Կարմիր Բլուր, Արգիշթիխինիլի): Դրանք ուրարտական գրավոր աղբյուրներում հայտնի են susi անունով և նվիրված են եղել ուրարտական պանթեոնի գլխավոր աստծուն՝ Խալդին: Պեղավայրում թափված քարերից մաքրվել է նաև կոնաձև բլրի գագաթն օղակող պարսպապատի արևմտյան հատվածը, բացվել է դեպի գագաթ տանող մուտք՝ հեծաններով ու կիսաբլուրաձև հիմքով աշտարակ-

ներով: Ըստ երևույթին, պարիսպը կառուցվել է երկաթի դարում, ապա պարբերաբար ձևափոխությունների ենթարկվել միջնադարում:

Ուսումնասիրվել է Էրեբունիի հիմնադրման առթիվ Արգիշտի Ա-ի թողած արձանագրության մեջ հիշատակվող «լուլուական ցեղեր» եզրույթը: Հատուկ անունների ստուգաբանությամբ պարզվել է, որ Արգիշտին այդ կերպ է կոչում ներկայիս ՀՀ տարածքի Արարատյան դաշտից մինչև Աղստևի հովիտն ընկած շրջանների բնակիչներին, և որ «Լուլու»-ն բարբարոսին բնութագրող արհամարհական ձև է: Իր արձանագրությամբ արքան ցույց է տվել ձկնորսություն-ձկնաբուծության ու ձկնամարդու պաշտամունքի հետամնացությունը Ուրարտուի ավելի զարգացած տնտեսվարման ձևի՝ հողագործության ու մարդակերպ աստվածների պաշտամունքի համեմատ:

Անհատ աշուղների ստեղծագործությունների ոճական, տիպաբանական ու տեղային որոշակի առանձնահատկությունների խորքային և ընդհանրական վերլուծությամբ շարունակվել է հայ աշուղական նշանավոր կենտրոնների գործունեության ու ժառանգության համակողմանի ուսումնասիրությունը: Ալեքսանդրապոլի օրինակով ներկայացվել են հայ աշուղական արվեստում համքարային ավանդույթի կազմավորման պատմական նախադրյալները: Ելնելով ավանդույթների ժառանգականության ու փոխակերպումների համագոյակցության համատեքստից՝ դիտարկվել են դրանց պատմամշակութային հիմքերը միջնադարյան գուսանական արվեստում:

Բանասիրություն: Հր.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում կարևորվել է գիտական այնպիսի խնդիրների արձարծումը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են աշխարհում ու հատկապես մեր տարածաշրջանում առկա իրավիճակին ու երկրի առջև ծառացած մարտահրավերներին: «Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Դ. Վ.Կատվալյան) հետազոտվել է 16-17-րդ դարերի իտալացի հայագետ Ֆրանցիսկո Ռիվոլայի «Բառագիրք հայոց. Dictionarium armeno - latinum» (1621) աշխատության մեջ առկա՝ ազգային ինքնությանն առնչվող բառաշերտը, որը բարբառային ծավալուն բառապաշարի հետ միասին կազմում է հայերեն առաջին տպագիր բառարանի, նաև առաջին բարբառային բառարանի գիտական առավել հետաքրքրական առանձնահատկությունը: Բառարանում առկա է ինչպես Հայաստանին, հայ ժողովրդին, հայերենին, այնպես էլ այլ երկրների, ժողովուրդների, լեզուների վերաբերող ընդարձակ բառաշերտ, որի դասդասումն ու վերլուծությունը, բարբառային տարբերակների քննությունը թույլ է տալիս պատկերացում կազմելու ուշ միջնադարի հայության մի հատվածի աշխարհաճանաչողության վերաբերյալ՝ միաժամանակ լրացնելով ժամանակի աշխարհաքաղաքական իրավիճակի՝ այս կամ այն չափով օբյեկտիվ պատկերը, մի շարք երկրների ու ժողովուրդների անցյալի վերաբերյալ արժանահավատ հիշատակումների պատմությունը: Պարզվել է, որ բառարանում տեղեկություններ կան հայերի հարևան երեք ժողովուրդների՝ պարսիկների, թուրքերի ու վրացիների վերաբերյալ, բացի այդ՝ հիշատակվում են տարածաշրջանի գրեթե բոլոր ժողովուրդները՝ որպես կանոն ազգի, երկրի ու լեզվի անվանումներով, երբեմն՝ այլ տեղեկություններով: Բառարանում Ադրբեջան անվանումը նշվում է իբրև գավառի անուն, հասկանալի է՝ խոսքը Իրանի նահանգներից մեկի մասին է, մանավանդ որ այդ անվանմանն առնչվող ազգ կամ լեզու չի հիշատակվում: Կան նաև անդրադարձներ Եվրոպական, ասիական ու աֆրիկյան երկրներին ու ժողովուրդներին: Ռիվոլայի բառարանում առկա լեզվական փաստերն ու տեղեկություններն արտացոլում են մեր տարածաշրջանի երկրների և ժողովուրդների իրական փոխհարաբերությունները 16-17-րդ դարերում և հանդես են գալիս իբրև հիմնավոր գիտական հակափաստարկ պատմական իրողությունների ներկայիս աղավաղումների:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Գ.Մխիթարյան) դիտարկվել են հայերեն Աստվածաշնչում թեք հոլովածներով ենթակայի կիրառության առանձնահատկությունները: Անցողական բայի հետ սեռական, տրական հոլովներով ենթակայի գործածությունը վկայում է, որ հին հայերենին խորթ չեն եղել էրգատիվ բնույթի կառույցները: Ներկայում ընդհանրապես հաստատված է, որ աշխարհի լեզուների մոտ մեկ քառորդն ունի էրգատիվ կառույցներ, դրանց թվում կան նաև մի շարք հնդեվրոպական լեզուներ (խեթերեն, լուվիերեն, իրանական շատ լեզուներ, հինդի և այլն): Ավելին, մեր տարածաշրջանի բազմաթիվ լեզուներ (դրանց թվում և ուրարտերենը), անկախ ծագումից, ունեցել են էրգատիվ բնույթ: Իսկ էրգատիվ կառուցվածքից դեպի նոմինատիվ և հակառակ տիպի անցումներն արտառոց երևույթներ չեն, այլ՝ ճիշտ հակառակը: Հետազոտությունը փաստում է, որ հին հայերենում նման կառույցները գործառական լայն կիրառություն են ունեցել: Այդ են վկայում ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն գրականության ընձեռած նյութերը, նման կառույցները շատ տարածված են նաև արդի բարբառային հայերենում: Այս ամենը գալիս է ի չիք դարձնելու հայերենի և ուրարտերենի առնվազն սերտ կապերը Ժխտողների այն պնդումը, որ ուրարտերենի էրգատիվ բնույթը բացառում է հայերենի հետ նրա ծագումնաբանական առնչությունների հնարավորությունը: Նյութերը, անշուշտ, հազարամյակների խորքերը ձգվող համադրությունների հնարավորություն են ընձեռում՝ բացահայտելով հնագույն լեզուներին բնորոշ առանձնահատկություններն ու ընդհանրությունները, մշակույթների փոխազդեցությունները, որը կարևոր է հատկապես համաշխարհայնացման արդի փուլում, երբ հաճախ կեղծվում են թե՛ պատմությունը, թե՛ մշակութային արժեքները:

Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտում «Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Հ.Որսկանյան) հրատարակվել է «Խաչատուր Աբովյանի կյանքի և գործունեության տարեգրություն» Ա հատորը, որով հայագիտության մեջ առաջին անգամ հայ մեծ լուսավորիչ, ազգային նոր գրականության ու լեզվի հիմնադիր Խ.Աբովյանի (1809-1848) կենսագրության գիտական ժամանակագրության համակարգված ուսումնասիրության արդյունքում ներկայացվել է նրա նախադրապատյան (1809-1829) ու դրապատյան առաջին շրջանի (1830-1833) կյանքն ու գործունեությունը: Գրքում առանձնահատուկ տեղ է հատկացված Աբովյանի տոհմի պատմությանը, որն ընդգրկում է մինչև Խաչատուրի ծնունդը նրանց գերդաստանի մասին առ այսօր հայտնի բոլոր վավերագրերը: Հատորում բերված տվյալները մանրակրկիտ ուսումնասիրվել ու ճշգրտվել են՝ դառնալով վստահելի հիմք պատմաբանասիրական ու մշակութաբանական նոր ուսումնասիրությունների համար: Աբովյանին առնչվող բազմազան ու բազմաբնույթ աղբյուրներից բացի ընդգրկվել են նաև զուգահեռ տվյալներ, որոնք առնչվում են 19-րդ դարի 1-ին կեսի Եվրոպայի ու Ռուսաստանի պատմությանը, մշակույթին: Սրանով աշխատությունը ստանում է ոչ միայն բանասիրական, այլև լայն առումով մշակութաբանական արժեք: Ժամանակի եվրոպացի մի շարք գիտնականների կյանքի մանրամասները որպես սկզբնաղբյուր կարող են հետաքրքրել օտար ուսումնասիրողներին: Հրատարակվել է «Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ» գիրքը, որում ի մի է բերվել ժամանակի գրաքննադատության կողմից տրված գնահատումների այն համաբնագիրը, որը հետագայում դարձել է Թումանյանի ստեղծագործական աշխարհի բացահայտման ու մեկնաբանման կայուն ուղենիշ: Հավաքվել են Հ.Թումանյանի ստեղծագործությանն ուղեկից գրաքննադատության գրեթե բոլոր արձագանքները՝ հոդվածներ, գրախոսություններ, լրագրային առաջնորդողներ, մենագրություններ, ուսումնասիրվել են Թումանյանի ստեղծագործության վերաբերյալ հնչած կարծիքները՝ նորովի գնահատելով դրանց պատմաճանաչողական արժեքը,

բացահայտվել են գաղափարական հիմունքները, որոնց վրա խարսխվել են Թումանյանի արվեստի գնահատման սկզբունքները, ամբողջացվել են ժամանակի գրաքննադատական մտքի՝ գրական-ստեղծաբանական ընթացքի արժեքների ըմբռնման հայեցակետերը:

Տնտեսագիտություն: Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտում «Կանաչ տնտեսությունը որպես նորարարական գյուղատնտեսության կայուն զարգացման նախապայման» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Մանուչարյան) հիմնավորվել է կայուն զարգացման հիմնական նպատակի՝ երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի, սոցիալական կայունության ու էկոլոգիական հավասարակշռության ապահովումը, որի ներդաշնակությունն ապահովվում է կանաչ տնտեսության հայեցակարգի միջոցով, որին վերջերս մեծ ուշադրություն է դարձվում ամբողջ աշխարհում: Վերլուծվել են կանաչ տնտեսության ձևավորման վիճակն ու առանձնահատկությունները, այն հիմնավորվել է որպես կայուն զարգացման գործոններից մեկը, տնտեսաչափական հիմնավորումներով ներկայացվել է բնական պաշարների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծումը, որը կարող է լուծել հանրապետության ժամանակակից սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք բարդ հիմնախնդիրներ:

«Մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Ե.Հակոբյան) բացահայտվել են տնտեսական կայունության վրա դրամավարկային քաղաքականության ազդեցությունը, դրա արդյունավետությունը տարբեր երկրներում, թվային տեխնոլոգիաների դերը տնտեսության ձևափոխման ու ֆինանսական շուկաների գործում, ուսումնասիրվել է ՀՀ տնտեսական զարգացումը վերջին տարիներին և պարզվել է, որ այն ընթանում է առանց արդյունաբերության ու գյուղատնտեսության «էական դերակատարության», ի հակառակ դրան՝ աճել են ծառայությունների, առևտրի ու շինարարության ոլորտների մասնաբաժինները: Որպես հետևանք՝ տնտեսության նյութական բարիք ստեղծող երկու խոշոր ճյուղերի մասնաբաժինների կրճատումն ու ծառայությունների ոլորտի մասնաբաժնի ավելացումը ՀՆԱ-ում հաճախ զուգորդվում է ճգնաժամերի հանդեպ մեր երկրի դիմադրողականության անկմամբ:

Փիլիսոփայություն, սոցիոլոգիա և իրավագիտություն: Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի «Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ք.գ.թ. Է.Օրդուխանյան) իրականացվել են հետազոտություններ գիտական չորս ուղղություններով (փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք, քաղաքագիտություն): Ինստիտուտի կարևորագույն արդյունքները ներառում են հայ փիլիսոփայության տեսության ու պատմության, իրավունքի պատմատեսական արդի հիմնախնդիրների, Հայաստանի Հանրապետությունում ու հարավկովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող առանցքային, աշխարհաքաղաքական գործընթացների ու քաղաքակրթական հիմնախնդիրների, ինչպես նաև հայ հասարակությունում սոցիալական ու քաղաքական նոր իրողությունների ու մարտահրավերների ուսումնասիրությունը: Առանձնակի կարևորություն ունեն հայ ազգային լուսավորության մոդելի պատմափիլիսոփայական հիմնահարցերի ուսումնասիրությունը՝ սկսած վաղ միջնադարից մինչև ժամանակակից շրջան (փ.գ.դ. Ռ.Միրումյան, փ.գ.թ. Լ.Սարվազյան), հնագույն քաղաքակրթություններում կրոնաիրավական պատկերացումների և իրավունքի սկզբնավորման ու պատմական զարգացման հիմնախնդիրների (հին և միջին դարեր), իրավունքի էության ու արժեքանության խնդիրների (ի.գ.դ. Գ.Սաֆարյան, ի.գ.թ. Լ.Մալխասյան, ի.գ.թ. Ա.Իկլիկյան), Հայաստանի երկրառազմավարության ու քաղաքակրթական ինքնության հիմնահարցերի համապարփակ ուսումնասիրությունները (ք.գ.դ. Լ.Շիրինյան):

Արվեստագիտություն: Արվեստի ինստիտուտում «Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ արվ.դ. Ա.Ասատրյան) շարունակվել են հայ նշանավոր ռեժիսոր Սերգեյ Փարաջանովի կյանքի ու ստեղծագործական գործունեության ուսումնասիրության, նրա թողած ժառանգության արժևորման, հայ ու համաշխարհային կինոարվեստում նրա դերի բացահայտման աշխատանքները: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են Ս.Փարաջանովի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում ու հրատարակվել գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, որը նոր խոսք է ու կարևոր հանգրվան հայ արվեստագիտության և միջազգային փարաջանովագիտության ասպարեզում:

«Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ արվ.դ. Ա.Ասատրյան) շարունակվել են ժամանակակից արվեստի ուսումնասիրման աշխատանքները: Առաջին անգամ իրականացվել է կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի ստեղծագործության համակողմանի ուսումնասիրություն (ղեկ.՝ արվ.դ. Ա.Արևշատյան):

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Շարունակվել են ԳԿՄԿ միջազգայնացման գործընթացները, ընդլայնվել են գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցային կապերը, ներդրվել են միջազգային շարժունության նոր ծրագրեր՝ կնքվել է 10 միջազգային ու արտաքին համագործակցության համաձայնագիր, հուշագիր ու պայմանագիր տարբեր բուհերի, գիտական կազմակերպությունների և այլ կազմակերպությունների հետ:

Առաջին անգամ ԳԿՄԿ ներառվել է HE Higher Education Ranking համալսարանների միջազգային վարկանիշային աղյուսակում՝ 303 մասնակից համալսարանների շարքում զբաղեցնելով 233-րդ տեղը (<https://ranking.heranking.com/2024/isec.am>):

Կարևորելով բուհ-գիտական կազմակերպություն-գործատու կապի հետագա ամրապնդումը, գործատուների անմիջական ներգրավվածությունը կրթական գործընթացներին ու դրա արդյունքում ուսանողի գործնական հմտությունների զարգացումը՝ «Բույսերի բազմազանության և էկոհամակարգերի ուսումնասիրության» ամբիոն է տեղակայվել Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտում: Մշակվել, փաստաթղթավորվել, արտոնագրվել է «Կենսաբազմազանության ուսումնասիրություն և պահպանություն» մագիստրոսական կրթական ծրագիրը, որը չի իրականացվում ՀՀ բուհերից որևէ մեկում, 2024-25 ուստարում կատարվել է ընդունելություն: Ծրագրի համար որպես բազա ծառայելու են ինչպես ԳԿՄԿ լսարանային ու նյութատեխնիկական բազան, այնպես էլ Բուսաբանության ինստիտուտի լսարանային, նյութատեխնիկական բազան՝ ներառյալ նորագույն լաբորատորիաները, բուսաբանական 3 այգիները:

Շարունակվել է «Կաճառ» գիտական պարբերականի, «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի հրատարակումը:

ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

Կազմակերպությունը 2019թ. դատափորձագիտական ոլորտում առաջինը հրատարակում է «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» գիտական պարբերականը, 2024թ. հրատարակվել են պարբերականի 11-րդ ու հոբեյանական 12-րդ համարները:

2024թ. սեպտեմբերի 25-27-ը Երևանում անցկացվել է «Դատափորձագիտական գործունեության դերն ու նշանակությունը իրավական համակարգում, արդի խնդիրները, զարգացման միտումներն ու հեռանկարները» խորագրով միջազգային գիտագործնական գիտաժողովը՝ նվիրված «Փորձաքննությունների ազգային բյուրո»-ի հիմնադրման 20-ամյակին, որին մասնակցել են պաշտոնյաներ ՀՀ պետական գերատեսչություններից, իրավապահ, գիտական և կրթական կառույցների ղեկավարներ, ավելի քան երկու տասնյակ երկրների ներկայացուցիչներ (այդ թվում՝ ԱՄՆ, ՌԴ, Շվեյցարիա, Գերմանիա, Ռումինիա, Մոլդովա, Իսրայել և այլն), հեղինակավոր բժիշկներ, դատավորներ, գիտնականներ, իրավաբաններ, միջազգային իրավապաշտպաններ (շուրջ 300 մասնակից):

Կազմակերպությունը «GTH DNA Consulting Company» (ԱՄՆ) և «Eura DNA, Europe's premier forensic DNA resource» (ԵՄ) առաջատար խորհրդատվական կազմակերպությունների, INTERPOL-ի հետ համատեղ ապրիլին Երևանում անցկացրել է «Advancing Forensic DNA Database Programs in Armenia» միջազգային տարածաշրջանային համաժողովը՝ նվիրված ՀՀ-ում միջազգային առաջադեմ պահանջներին համապատասխան դատափորձագիտական ԴՆԹ տվյալների բազայի ձևավորմանը, տվյալ բնագավառի տեսական ու գործնական արդի հարցերին: ԱՄՆ, ԵՄ, Վրաստանի և այլ երկրների միջազգային ճանաչում ունեցող առաջատար փորձագետները ներկայացրել են տվյալների բազայի ձևավորման միջազգային փորձն ու արդիական մոտեցումները, ՀՀ-ում ԴՆԹ տվյալների բազայի ստեղծման ծրագրերի հեռանկարները, այդ թվում՝ ԴՆԹ տվյալների պահպանման գործընթացի իրավակարգավորումների միջազգային լավագույն փորձը:

Կազմակերպությունը համալրվել է «Agilent Technologies» ֆիրմայի GTA 120 Graphite Tube Atomizer մոդելի ու 55 AA Atomic Absorption Spectrometer մոդելի ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրերով՝ համակցված միկրոալիքային բազմաֆունկցիոնալ հետազոտական կայանով՝ իր համապատասխան լրակազմով ու հետազոտական մեթոդի մշակումով ու ներդրումով, որը հնարավորություն է տալիս իրականացնել սննդային, կենսաբանական, բուսաբանական ծագման և այլ հետազոտելի տարաբնույթ օբյեկտների ատոմային բաղադրակազմի պարզման փորձագիտական հետազոտություններ, ինչպես նաև արագ, ճշգրիտ, անվտանգ ու բարձր արդյունավետությամբ նմուշապատրաստման իրականացում՝ ժամանակակից գիտականորեն հիմնավորված մեթոդների մշակմամբ ու ներդրմամբ:

Շարունակվել են ժամանակակից գիտականորեն հիմնավորված քրոմատո-մասս-սպեկտրիոմետրիկ մեթոդների տեղայնացման ու ներդրման, նմուշապատրաստման օպտիմալ մեթոդների փորձարկման ու կիրառման աշխատանքները: Պետք է արձանագրել, որ Կազմակերպությունը ՀՀ-ում միակ փորձագիտական հաստատությունն է, որտեղ արտադրողից մինչև սպառող ամբողջ շղթայի միաժամանակյա լիարժեք բացահայտմամբ իրականացվում են թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործող) նյութերի հայտնաբերման ինչպես նյութագիտական փորձաքննություններ, այնպես էլ մարդու օրգանիզմի կենսամիջավայրերում՝ մեզի, արյան մեջ, ՀՀ-ում առաջին անգամ՝ մազի, եղունգների, քրտինքի, թքի մեջ ու ներքին օրգաններում թմրանյութերի, հոգեմետ (հոգեներգործող) նյութերի ու դեղամիջոցների որակական ու քանական փորձագիտական հետազոտություններ:

Իրականացվել է 16000-ից ավել փորձագիտական հետազոտություն, ապահովվել է դրանցում գիտականորեն հիմնավորված արդյունքների ստացում:

Կազմակերպությունում առանձին ուղղություններով մշակվել և ներդրվել են հետազոտությունների նոր մեթոդներ ու մեթոդիկաներ, դրանց կիրառմամբ սկսվել են իրականացվել տարբեր հետազոտական աշխատանքներ՝ գիտականորեն հիմնավորված արդյունքների ապահովմամբ: Կարևոր է նշել հատկապես Բելառուսի Հանրապետության

դատափորձագիտական պետական կոմիտեի գիտագործնական կենտրոնի հետ համատեղ մշակված ու հրատարակված էկոլոգիական փորձաքննությունների բնագավառում կիրառվող մեթոդիկան, որը վերաբերում է հաշվարկման ու վերլուծական մեթոդների կիրառմամբ շրջակա միջավայրի կամ դրա առանձին բաղադրիչների վրա մարդածին ազդեցության հանգամանքների պարզմանը:

Ընթացիկ տարում համագործակցության հուշագրեր են ստորագրվել ՌԴ գիտությունների ակադեմիայի Ա.Ֆրումկինի անվ. ֆիզիկաքիմիայի և էլեկտրաքիմիայի ինստիտուտի, ամերիկյան առաջատար «GTH DNA» խորհրդատվական կազմակերպության, Ուկրաինայի արդարադատության նախարարության պրոֆ. Ն.Բոկարիուսի անվ. Խարկովի դատական փորձաքննությունների գիտահետազոտական ինստիտուտի, Ռումինիայի Դատական փորձագետների ասոցիացիայի, «Տիտու Մայորեսկու» համալսարանի, Բելառուսի Հանրապետության ԳԱԱ Բելառուսի մշակույթի, լեզվի և գրականության հետազոտությունների կենտրոնի, Հնդկաստանի Ազգային դատափորձագիտական ինստիտուտի հետ:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ռադոնի սֆերիկական ձևափոխության (ՌՍՁ) շրջումը թերմոակուստիկ տոմոգրաֆիայի մաթեմատիկական հիմքն է: Օգտագործելով համաձայնեցվածության մեթոդը (առաջարկել է Ռ.Արամյանը) 3D-ում՝ հաջողվել է գտնել ՌՍՁ համար սկզբունքորեն նոր շրջման բանաձև, որի առավելությունը գոյություն ունեցող լուծումների նկատմամբ այն է, որ օգտագործում է լոկալ տվյալներ անհայտ ֆունկցիայի վերականգնման համար: Գոյություն ունեցող լուծումների՝ տվյալ կետում արժեքը վերականգնելու համար օգտագործվում են ամբողջ մակերևույթով տեղադրված չափիչների տվյալները: Նաև բանաձևի առավելությունն այն է, որ կարող է վերականգնել ոչ կոմպակտ կրիչով ֆունկցիաներ (կրիչի կոմպակտությունը կարևոր պայման է նախորդ լուծումների համար): Տեսականորեն սա նշանակում է, որ հնարավոր է ստեղծել ձեռքի անվտանգ տոմոգրաֆիական սարք (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան):

Կատարվել են ամպային հավելվածներում ու ենթակառուցվածքներում առկա անսարքությունների հայտնաբերման ու վերացման աշխատանքներ: Այդ նպատակով իրականացվում է միջավայրերի մոնիթորինգ, որի արդյունքում հավաքվում են լոգ-տվյալներ, հավելվածների հետքեր և այլ տվյալներ: Մշակվել է առաջարկող համակարգ (recommender system), որը նախատեսված է համապատասխանեցնելու հաճախորդների հարցումները նախկինում լուծված նմանատիպ խնդիրների վերացման եղանակներին կամ գիտելիքի բազայի հոդվածներին՝ նախատեսված այդ խնդիրների համար: Այս համակարգն օգնում է հաճախորդներին ու աջակցող թիմերին արագ գտնել պրոբլեմների լուծման եղանակները: Օգտագործվել են մեծ լեզվական մոդելներ, որոնք լրացուցիչ համաձայնեցվել են մասնավոր խնդիրների թեմատիկային: Սովորաբար ամպային ենթակառուցվածքներում ծագող խնդիրների բացահայտումն ու լուծումը կարող է տևել օրեր կամ նույնիսկ շաբաթներ, սակայն նպատակային առաջարկություններով այս գործընթացը կարող է կրճատվել մինչև մի քանի ժամ կամ, ավելի պարզ դեպքերում, թույլ տալ ինքնասպասարկման լուծումներ: Մեկ այլ ուսումնասիրության մեջ հետազոտվել է նմուշառման միջոցով հավելվածների բաշխված հետքերի ծավալը նվազեցնելու խնդիրը և դրա ազդեցությանը ամպային հավելվածների խնդիրների լուծման վրա: Առաջարկվող մոտեցումը կենտրոնացվել է կրիտիկական հետքերի հայտնաբերման և հետագա ավելի մանրամասն վերլուծության համար դրանք պահպանելու վրա: Օգտագործելով բացատրելի արհեստական բանականության մեթոդներ՝ առաջարկվել է անսարքությունները հայտնաբերելու եղանակ և դրանց միջոցով ի հայտ բերելու խնդրի էությունը: Լուծվել է ամպային միջավայրերում հավելվածների հայտնաբերման խնդիրը: Մեթոդն օգտագործում է հավելվածների լոգ-տվյալները, որոնք պարունակում են հավելվածները տարբերակելու հարուստ համատեքստային տեղեկատվություն: Խմբավորվել են հավելվածներն ըստ լոգ-տվյալների տեսակների ու դրանց բաշխումների, ինչը հնարավորություն է տվել տարբերակել ոչ միայն հավելվածները, այլև դրանց տեղակայումները՝ առաջարկելով հավելվածների հիերարխիկ ներկայացում ժամանակի ու տոպոլոգիայի առումով: Կիրառվել են կանոնների ուսուցման մեթոդներ՝ սովորելու ու բացատրելու ահազանգերի լուծման օրինաչափությունները: Այս մոտեցումը վավերացվել է պատմականորեն հայտնի խնդիրների ու դրանց լուծման եղանակների

համատեքստում, որոնք նախկինում պահանջում էին մարդկային մեծ ջանքեր (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Պողոսյան):

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կատարված էքսպերիմենտալ հետազոտությունների արդյունքում հաստատվել է, որ հենքի թելիկների վրա ծածկմամբ ապակեթելե քաթանային գործվածքի հիման վրա պատրաստված ապակեպլաստե բարակապատ խողովակների՝ ուղղակի չափումներով ստացված կրողունակության մեծությունն ըստ առանցքային ձգման կարող է էապես (20-25%) գերազանցել խողովակների՝ կոմպոզիտային նյութի ստանդարտ մեթոդներով որոշված ամրության հիման վրա հաշվարկված կրողականության արժեքին (ղեկ.՝ տեխ.գ.դ. Կ.Կարապետյան):

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԹՍ ինքնակազմակերպվող երամում ներկառուցված կոլեկտիվ արհեստական բանականության հնարավորությունների օգտագործմամբ ներկայացվել է տեղանքի մշտադիտարկման ու առաջադրանքների օպտիմիզացման առաջադեմ սիմուլյացիոն հիմնահարթակ: Այն մշակվել է ամպային տեխնոլոգիաների հիման վրա, իրական ժամանակում դինամիկ լանդշաֆտային պատկերների տեսաշարերի համատեղ դիտման ու ինտուիտիվ QT ինտերֆեյսի միջոցով հարցումների իրականացման հնարավորությամբ ապահովում է օգտագործողների փոխգործուն անխափան համագործակցությունը: Ինտերֆեյսի միջոցով առաջադրվում են երամի առաքելություններ, ինչպիսիք են տարածքի հետախուզումը, տեղեկատվության հավաքագրումը, հաղորդումը, իսկ ռազմական կիրառություններում՝ նաև հակառակորդի դիրքերի գրոհումը: ԱԹՍ նավիգացիոն քարտեզները ստեղծվում և հարմարեցվում են երամի քարտեզի կոնֆիգուրատորի կողմից: Թռիչքների ճանապարհային գրաֆը կառուցված է ռոտոր-երթուղավորիչի, իսկ տեղեկատվության լրիվ փոխանակման գրաֆը՝ բամբասանքի/լայնասփռման մոդելի հիման վրա: Ապահովվելով նաև տվյալների ու հաղորդակցության անվտանգությունը՝ հիմնահարթակը սատարում է առաջադրանքների դինամիկ վերակազմավորումն անհատական ԱԹՍ-երի նոր առաջադրանքների ու դերերի բաշխման միջոցով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Պողոսյան):

Վելբուլի բաշխումը բազմաթիվ կիրառական խնդիրներում օգտագործվում է որպես մաթեմատիկական մոդել: Հայտնի են ԻԱՊԻ-ում այդ մոդելի օգտագործման բազմաթիվ օրինակներ պատկերների մշակման բնագավառում: Հետազոտությունների արդյունքում ուսումնասիրվել են մի շարք լայնորեն կիրառվող էմպիրիկ բանաձևերի ճշտության բարձրացման հնարավորությունները, մշակվել են նոր էմպիրիկ բանաձևեր (ղեկ.՝ տեխ.գ.դ. Դ.Ասատրյան):

«ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ

Մշակվել է աշտարակային հովացուցիչ (ստացվել է արտոնագիր), որի ներքին բացվածքներից ներթափանցող օդի հոսքը մեծացնելու նպատակով ներդրվել է նոր մաս: Այն աշտարակային հովացուցիչի ներքևի բացվածքներից վերև նրա շրջագծով տեղակայված կախվածք է, որը հորիզոնի նկատմամբ կարող է ունենալ ուղիղ, թեք,

էքսպոնենցիալ, կատենոիդալ ու կորերի ձև, որը որոշվում է հովացման տրված աստիճանից (ղեկ.Ա. Սիմոնյան):

Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ

Շարունակվել են նոր ծրագրային փաթեթի ու դիտողական նյութի մշակման նոր մեթոդների ստեղծման աշխատանքները: Կատարելագործվել է նաև ավտոմատ կարգով (pipe line) մշակման փաթեթը, որը հնարավորություն է ընձեռում մշակել ամբողջ գիշերվա ընթացքում ստացված գիտական պատկերները՝ օգտագործելով բազմաթիվ լրացուցիչ պատկերներ (bias, flat-field, dark, etc.) (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան):

Հայ-ռուսական համատեղ կայանում 212 դիտողական գիշերների ընթացքում ընդհանուր առմամբ կատարվել է 483,200 չափում, վերականգնվել է 410 ուղեծիր արհեստական արբանյակների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ. Հարությունյան):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել և իրականացվել է դիէլեկտրիկ նյութի ջերմաֆիզիկական բնութագրերի, մասնավորապես բեկման ցուցիչի ջերմաստիճանային գործակցի ($\partial n / \partial T$) չափման օպտիկական ինտերֆերենցիոն մեթոդ: K8 ապակուց փորձանմուշի վրա կատարված չափումներով որոշվել է նյութի $\partial n / \partial T$ -ի նախկինում անհայտ արժեքը 780 նմ ալիքի երկարության տիրույթում՝ 1.06×10^{-6} Կ⁻¹: Մեթոդը սկզբունքորեն թույլ է տալիս որոշել նաև նյութերի բեկման ցուցիչը, ջերմային ընդարձակման գործակիցը, ջերմաօպտիկական գործակիցը (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Պապոյան):

Մշակվել, պատրաստվել և փորձարկվել է էլեկտրական մրրկային դաշտ ստեղծող սարք: Կատարվել են նախնական չափումներ տարբեր կողմնորոշման հեղուկ բյուրեղների վրա մրրկային դաշտի ազդեցության վերաբերյալ (ղեկ.՝ ակ. Ռ.Կոստանյան):

Ուսումնասիրվել են Li կամ Ga խառնուկներով լեգիրացված ZnO թաղանթների դիէլեկտրական հատկություններն ու լիցքակիրների տեղափոխման մեխանիզմները: Արդյունքները մեկնաբանվել են թոփքային հաղորդունակության Մոտտի տեսության շրջանակում: Մշակվել է լողացող փականով դաշտային տրանզիստոր, որի ո-տիպի ալիքատարը պատրաստված է ZnO:Li կիսահաղորդից, իսկ աղբյուրն ու արտահոսքը՝ ZnO:Ga թաղանթներից: Չափվել են տրանզիստորի ստատիկ ու դինամիկ բնութագրերը, ցուցադրվել է փականի լիցքի փոփոխմամբ տրանզիստորի ստատիկ բնութագրերը փոխելու հնարավորությունը: Ստացված արդյունքներն օգտագործվել են մեկ տրանզիստորային հիշողության տարրերի (1T1C) ստեղծման համար: Ապահովվելով բարձր ընթերցման արագություն և «1» ու «0» վիճակների հոսանքների հարաբերություն (մոտ 10^5)՝ առաջարկվող DRAM-ը հեռանկարային է հիշողության կիրառությունների համար (մշակված տեխնոլոգիան արտոնագրվել է) (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Հովսեփյան):

Co₂O₃-C (կոբալտի օքսիդ-ածխածին) նանոկոմպոզիտների հիմքով պատրաստվել են սուպերկոնդենստորների համար էլեկտրոդային համակարգեր: Եռաէլեկտրոդ մեթոդով հետազոտվել են դրանց վոլտ-ամպերային բնութագրերը, գնահատվել է տեսակարար ունակությունը՝ կախված կոբալտի օքսիդի կոնցենտրացիայից ածխածնի մատրիցում: Առավելագույն ստացված արժեքը կազմել է 100Ֆ/գ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մանուկյան):

ՖԻԶԻԿԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐՈՔԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ուսումնասիրվել է իդեալական ու որոշակի շեղումներով 3D թվային մոդելների տոպոգրաֆիկ պատկերներից վերակառուցված տոմոգրաֆիկ (CT) շերտերի տարբերությամբ պայմանավորված պատկերը, ցույց է տրվել, որ այն կարելի է նույնականացնել այդ շեղումների հետ, ինչը կարող է օգտագործվել իրական 3D տպագրված նմուշի անճշտությունների վերլուծության համար՝ համեմատելով CT փորձարարական արդյունքների ու տպագրված նմուշի թվային մոդելի հետ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

Ապակե-կերամիկական տեխնոլոգիայի միջոցով իջեցված ջերմաստիճանում սինթեզվել է $\text{SrO-TiO}_2\text{-B}_2\text{O}_3$ նյութական համակարգում ՖԿՊԻ-ում հայտնաբերված նյութը և ուսումնասիրվել է դրա բյուրեղական կառուցվածքը: Պինդ-ֆազային ռեակցիայի եղանակով սինթեզվել են մեծ դիէլեկտրիկ թափանցելիությամբ նյութեր (>1000) և մինչև 20 ՄՀց տիրույթում դրանցում հետազոտվել են ռեզոնանսային երևույթներ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Հարությունյան):

Մշակվել և նախագծվել է աերոզոլային սպեկտրամետրի լաբորատոր սարք, որով հնարավոր է որոշել օդում առկա մասնիկների չափերն ու կոնցենտրացիան (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Տ.Մուրադյան):

Մշակվել, պատրաստվել և փորձարկվել են նոր տեսակի բարձր լարման (10-50 ԿՎ) օպտրոններ, որոնք աշխատում են գծային ռեժիմում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Աբրահամյան):

Պատրաստվել են ստանդարտ ու խառնուրդային պլաստիկից փորձանմուշների հավաքածուներ, չափվել են նրանց HU (Hounsfield units) արժեքները, արդյունքում առաջարկվել և մշակվել է ոսկրային հյուսվածքի նմանակման մեթոդ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Յու.Չերեպեննիկով):

Մշակվել և ստեղծվել է կարգավորվող բնութագրերով 0,01-1000 Հց հաճախությունների տիրույթի ակուստիկական ալիքների աղբյուր (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Մկրտչյան):

Ակուստաֆիզիկայի մեթոդների կիրառմամբ մշակվել է պերօքսիդների սինթեզի նոր մոտեցում (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Բարսեղյան):

Մշակվել է ԻԿ տիրույթի կարգավորվող բնութագրերով էլետրամագնիսական ալիքների աղբյուր (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Նալբանդյան):

Ագրոֆիզիկական հատկությունների հետազոտությունների արդյունքում մշակվել է բենտոնիտի օգտագործմամբ բարձր ՕԳԳ ապահովող օրգանական խառնուրդի մշակման, ստացման ու օգտագործման տեխնոլոգիա (ղեկ.՝ Գ.Ասատրյան):

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հաստատվել է, որ p-InSb-n-CdTe հետերոանցման մեջ ֆոկուսացված լուսային ճառագայթով գրգռված երկայնական ու լայնական ֆոտոէլեկտրոնների հարաբերությունն էականորեն կախված է CdTe պատուհանային շերտի հատկություններից: Ցույց է տրվել, որ երկայնական ֆոտոերևույթի հիման վրա կարելի է ստեղծել 3-5 մկմ տիրույթի մեծ ֆոտոզգայնությամբ սեկտորային, քառատարր ֆոտոընդունիչներ, որոնք կարող են օգտագործվել մթնոլորտում տեղաշարժվող ջերմային աղբյուրների դիրքը գրանցող սարքերում: Մասնավորապես ստեղծված ֆոտոընդունիչներն օժտված են մեծ, մինչև 750 մՎ/մկմ կոորդինատային ու 1000 Վ/Վտ ֆոտոէլեկտրական զգայնությամբ:

Տեղական բնական ապարի՝ Արագածի պեղիտի հիման վրա սինթեզվել է ապակեկերամիկական նյութ, որը պարունակում է նանոչափային վոլաստոնիտի ու գելենիտի բյուրեղիկներ: Ուսումնասիրվել է ֆտորային խմբից Na_2SiF_6 կատալիզատորի

ազդեցությունն ապակու բյուրեղացման հատկությունների վրա: Յույց է տրվել, որ կատալիզատորի պարունակության նվազումը մեծացնում է ապակիացման ու բյուրեղացման քերմաստիճանները, ինչպես նաև ակտիվացման էներգիան (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Մշակվել և պատրաստվել է մարմնի բիոակտիվ կետերի էլեկտրական խթանիչ, կատարվել են լաբորատոր փորձարկումներ, պարզաբանվել են սարքի տեխնիկական բնութագրերը (ղեկ.՝ ակ. Ա.Ղուլյան):

7,5 ԳՀց և 16 ԳՀց հաճախականային տիրույթների ռադիոմետրերի համար մշակվել և պատրաստվել են ուժեղարարներ, ԳԲՀ մոդուլներ՝ ցածր հաճախականային ելքային ազդանշանով: Պատրաստվել են L-տիրույթի պարուրած անտենաներ, որոնք փորձարկվել են հաճախականային մոդուլացմամբ ռադարի կազմում: Մշակվել և պատրաստվել են 2,4 ԳՀց և 5,8 ԳՀց հաճախականային տիրույթների տարբեր ֆունկցիոնալ բլոկների նախանմուշներ, ուսումնասիրվել է դրանց կիրառման հնարավորությունը ԳԲՀ ազդանշանների միջոցով հեղուկների տաքացման համար (ղեկ.՝ Կ.Դադայան):

Կատարվել են լազերային աբլյացիայի մեթոդով տարբեր նյութերի նանոմասնիկների ստացման և դրանց չափերի որոշման հետազոտություններ: Մասնավորապես ստացվել են գրաֆիտի նանոմասնիկների չափերը՝ կախված գրաֆիտի կարծրությունից: Ուսումնասիրվել է թորած ջրում արծաթի նանոմասնիկների չափերի կախվածությունը տարբեր ալիքի երկարության ու տարբեր տևողության լազերային իմպուլսի դեպքում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Մշակվել է զենիթահրթիռային համակարգի թիրախների հետագծման հանգույցի կազմի մեջ մտնող շրջանաձև բևեռացմամբ պարաբոլային անտենաների էլեկտրական բնութագրերի (ուժեղացման գործակցի, շրջանաձև բևեռացման մակարդակի) չափագրման մեթոդիկա, հեռավոր գոտում կատարվել են անտենաների չափագրման աշխատանքներ: Մշակվել և պատրաստվել է կառավարվող բարձրավոլտ վոլտամպերային բնութագրիչ համակարգ եռաչափ տպագրությամբ պատրաստված դիէլեկտրիկների պարաման բնութագրերի չափման համար: Առաջարկվել է մեթոդիկա կամրջակային չափիչի օգնությամբ հարթ կոնդեսատորում տեղադրված այդպիսի դիէլեկտրիկների թափանցելիության ու կորուստների չափման համար (ղեկ.՝ Ն.Պողոսյան):

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Հայաստանի տարածքում տարբեր երկրաբանական ֆորմացիաների վրա ձևավորված հողերի համար գնահատվել են բնական ^{226}Ra , ^{232}Th և ^{40}K ֆոնային ու տեխնածին ^{137}Cs -ի հիմնագծային ակտիվությունները: Հողերում բնական ռադիոնուկլիդի բաշխման որոշիչ գործոններն են տեղանքի երկրաբանական կազմն ու հողատիպը, իսկ տեխնածին ^{137}Cs -ի ակտիվության վրա մեծապես ազդում է տեղանքի բացարձակ բարձրությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Բեյլաևա):

Շարունակվել են սննդամթերքի սպառման ու քիմիական վտանգների պարունակության տվյալների համադրմամբ ներգործության ու ռիսկի գնահատման, բնութագրման աշխատանքները: Առաջին անգամ ՀՀ-ում գնահատվել են անասնաբուծության մեջ արգելված հակաբիոտիկի՝ քլորամֆենիկոլի սննդակարգային ներգործությունն ու

առողջական ռիսկերը: Բացահայտվել է, որ չափահաս բնակչության կողմից բրոյլեր հավի մսի սպառման դեպքում առկա չէ քլորամֆենիկոլի քրոնիկ ներգործությամբ պայմանավորված հավանական առողջապահական ռիսկ: Առաջին անգամ ուսումնասիրվել են Երևանի չափահաս բնակչության սննդակարգում կալցիումի հիմնական աղբյուրները, գնահատվել կալցիումի օրական ընդունումը: Լաբորատոր հետազոտությամբ պարզվել է, որ կալցիումի համեմատաբար բարձր քանակություն են պարունակում կաթնամթերքը, պիցցան, ձուկը, ձուն: Բացահայտվել է նաև, որ կալցիումի օրական ընդունման մեջ հիմնական մասնաբաժինն ապահովվում է կաթնամթերքի, խմելու ջրի, ալրային հիմքով մթերքների սպառման միջոցով: Հատկանշական է, որ Երևանի չափահաս բնակչության համար կալցիումի օրական ընդունումը 46.6%-ով ցածր է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգով սահմանված օրական չափաբաժնից (1000 մգ/օր): Իրականացվել է Երևանի 12 վարչական շրջանների ծորակի ջրում թունավոր ու պոտենցիալ թունավոր տարրերի ռիսկի պիլոտային գնահատում: Ուսումնասիրված տարրերի (As, Pb, Cd, Ni) հայտնաբերված պարունակությունները չեն գերազանցել սահմանված թույլատրելի մակարդակները, սակայն բացահայտվել է, որ առկա է Երևանի չափահաս բնակչության կողմից ծորակի ջրի սպառման արդյունքում արսենի (As) քրոնիկ ներգործությամբ պայմանավորված հավանական առողջական ռիսկ (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

Լանդշաֆտների էկոլոգիական մոնիթորինգի հեռազննման համակարգի ստեղծման նպատակով շարունակվել են Հայաստանում արբանյակային լուսանկարների հավաքագրման ու մշակման բազմաչափ տեղեկատվական համակարգի (տեղեկատվական խորանարդ) (<http://datacube.sci.am>) ստեղծման աշխատանքներն Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի և Ժնևի համալսարանի (Շվեյցարիա) հետ: Համակարգի շտեմարանը ներառում է Landsat ու Sentinel արբանյակային լուսանկարները և պարբերաբար թարմացվում է: Տարվում են Landsat արբանյակային պատկերների հիման վրա Երևանի օդի ջերմաստիճանի գնահատման ու քարտեզագրման գործիքի (API) մշակման աշխատանքներ (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՊՈԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ՇՄՆ հետ կնքված պայմանագրերի շրջանակում շարունակվել են կենսաոետսությունների գնահատման աշխատանքները: Որոշվել են սիգի ընդհանուր ու արդյունաբերական պաշարները, որսի թույլատրելի քանակը (ղեկ.՝ Կ.գ.դ. Բ.Գաբրիելյան): Խեցգետնաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ (ինչպես նախկինում) որսաբաժնում հանդիպել են հիվանդ առանձնյակներ, որոնց մասնաբաժինը նախորդ տարիների համեմատ աճել է և 2024թ. կազմել է 7,8% (ղեկ.՝ Կ.գ.թ. Է.Ղուկասյան): Գնահատվել է հիմնական որսի օբյեկտ հանդիսացող կենդանատեսակների պոպուլյացիաների վիճակը: ՀՀ ՇՄՆ են տրամադրվել 2024–25թթ. որսաշրջանի որսատեսակների ցանկը, օգտագործման թույլատրելի չափաքանակները, տարածքները, ժամկետները (ղեկ.՝ Կ.գ.թ. Մ.Ղասաբյան): Գնահատվել է ֆիտոպլանկտոնային ու զոոպլանկտոնային համակեցությունների քանակական ու որակական ցուցանիշների տարածաժամանակային ու ուղղահայաց բաշխվածությունը, ինչպես նաև հատակային մակրոանոդնաշարների ու մակրոֆիտների տեսակային կազմն ու տարածվածությունը (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Գևորգյան):

Ստեղծվել է հայկական ջրիմուռների կուլտուրաների հավաքածու, որը բաղկացած է 333 շտամից: Զրիմուռների կուլտուրաների հավաքածուն ներառում է ջրիմուռների 54 ցեղի ներկայացուցիչ: Գրանցվել և հավաքածու են ներմուծվել Հայաստանի համար ջրիմուռների

նոր տեսակներ՝ *Pleurastrum* sp., *Microthamnion* sp. (Սևանա լիճ), *Bacillaria paxillifera* (Արարատյան դաշտի ճահճային տարածքներ) (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ա.Մամյան):

Գրանցվել է նոր մեթոդի գյուտի հայկական արտոնագիր՝ «Բնական ջրերում մանոմետրիկ եղանակով թթվածնի կենսաքիմիական պահանջի (ԹԿՊ) որոշման եղանակ և սարք» (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ս.Սարգսյան):

In silico եղանակով նախագծվել է տոքսոպլազմայի նոր պատվաստանյութի սպիտակուցային կառուցվածքը, որը ներառում է մակաբույծի 3 գեն: Պատրաստվել է հայկական 5 բույսի մզվածք և տոքսոպլազմայի Rh շտամի վրա իրականացվել են MTT թեստեր ու *in vitro* փորձարկումներ՝ որոշելու IC50 ու CC50 ցուցանիշները, գնահատելու դրանց հնարավոր թերապևտիկ ազդեցությունը:

Հ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԱՆՎ. ԿԵՆՍԱՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Արյան պլազման պարունակում է հակամարմիններ տարբեր շաքարների նկատմամբ: Քաղցկեղային բջիջները բնորոշվում են պլազմատիկ թաղանթների արերանտային գլիկոգլիպցմամբ, ուստի այդ հակամարմինները կանխում են քաղցկեղի առաջացումը օրգանիզմում: Դրանց քանակը նվազում է տարիքի հետ: Այդ առումով հեռանկարային է դոնորային պլազմայից նման հակամարմինների անջատումն ու օգտագործումը որպես քաղցկեղի դեմ պրոֆիլակտիկ միջոց: Դոնորային պլազմայից այդպիսի հակամարմիններ անջատելու համար պատրաստվել են երկու տիպի խնամակցային խեժեր. մի դեպքում որպես լիզանո օգտագործվել են կաթից անջատած գլիկոպրոտեինները, մյուս դեպքում՝ մարդու պլազմայից անջատած, նախօրոք դեսիալացված $\alpha 1$ -թթու գլիկոպրոտեինը: Այս սպիտակուցները գլուտարալդեհիդի ու նատրիումի մետապերիոդատի միջոցով կապվել են սեֆարոզային խեժին: Այս խեժերի օգտագործմամբ արյան պլազմայի իմունոգլոբուլինային ֆրակցիայից անջատվել են սպիտակուցներ, որոնց ուսումնասիրությունը հետազոտման փուլում է (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Վ.Գասպարյան):

Ընտրվել են կաթնաթթվային շտամներ՝ *Lactobacillus acidophilus*, *L.rhamnosus*, *L.bulgaricus*, *Streptococcus thermophiles*, *Bifidobacterium bifidum*, որոնք աճեցվել են ՄՌՍ սննդամիջավայրի վրա: Ստացված ֆիլտրատները պարունակում են էկզոմետաբոլիտներ՝ ցածրամոլեկուլային պեպտիդներ՝ բակտերիոցիններ, որոնք HPLC մեթոդով բաժանվել են տարբեր ֆրակցիաների և որոշվել են դրանց հակամանրէային հատկությունները: Ընտրվել են այն ֆրակցիաները, որոնք ցուցաբերել են հակամանրէային հատկություններ *E.coli*, *Staph aureus* և *Candida albicans* պաթոգեն մանրէների նկատմամբ: Նման հակամանրէային հատկություններ ունեցող բակտերիոցինները կարող են առաջարկվել որպես օրգանական կոնսերվանտներ սննդի արդյունաբերության մեջ օգտագործելու համար:

Հետազոտվել են ՕԴԲԿ-ի աշխատակիցների սինթեզած պիրազոլինային ու պիրիմիդինային 25 միացությունների հակամանրէային հատկությունները: Ընտրվել են ախտածին մանրէների նկատմամբ համեմատաբար բարձր հակամանրէային հատկություններ ցուցաբերած միացությունները: Հատկապես լավ արդյունքներ են ստացվել *Candida* ցեղի սնկերի նկատմամբ: Որոշ միացություններ ցուցաբերել են հակամանրէային ակտիվություն *E.coli* և *Staph.aureus* պաթոգեն մանրէների նկատմամբ: Ուսումնասիրվող միացությունները կարող են կիրառվել դեղագործության մեջ՝ հակամանրէային դեղաձևերի արտադրության համար (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ռ. Մադոյան):

«ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Արտադրության մեջ ներդրվել են ազոտ ֆիքսող ու ֆոսֆատներ մոբիլիզացնող բակտերիաների շտամների հիման վրա մշակված «NitroPro» ու «PhosActive+» կենսաբանական պարարտանյութերը: Ստորագրվել է համաձայնագիր նշված կենսաբանական պարարտանյութերի համատեղ արտադրությունը «ԳՐՈՎԵԼ» ՍՊԸ (Հայաստան) ընկերության հետ սկսելու մասին (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Մշակվել և հաստատվել են բիֆիդո- (*Bifidobacterium longum*, *B. bifidum*, *B. adolensis*) և կաթնաթթվային (*Lactobacillus acidophilus* MDC 9602) շտամների հիման վրա «Բիֆինարին» սննդային հավելումների արտադրության տեխնիկական պայմանները (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Բագիյան):

Գ.ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎ. ՀԻՊՐՈՊՈՆԻԿԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առաջին անգամ հիպրոպոնիկ մշակույթ են ներմուծել նոր մշակաբույսեր՝ վայրի ուտելի բույս սինդրիկը (*Polygonatum orientale* Desf.), դեղաբույսեր աղավնիճ կիտրոնայինը (*Aloysia citrodora* Paláu), վիտեքս սրբազանը (*Vitex agnus-castus* L.) (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Թադևոսյան):

Իրականացվել են մորինգայի ու սոյայի ծավալային փորձարկումներ ջրաշիթային հիպրոպոնիկայում, ներկայացվել են «Հիպրոպոնիկ սոյայի աճեցում» և «Հիպրոպոնիկ եղանակով մորինգայի արտադրություն» ներդրման առաջարկներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Թադևոսյան):

Հիպրոպոնիկ մշակույթ է ներմուծվել սիրիական հիբիսկուսի թավշյա տեսակը (*Hibiscus syriacus* L. - White Chiffon), որը կարող է կիրառվել կանաչապատման ժամանակ որպես գեղազարդ ծառաթուփ (ղեկ.՝ գ.գ.թ. Լ.Հովհաննիսյան):

Հիպրոպոնիկ մշակույթ են ներմուծվել սրատերև թխկին ու ելունդավոր կեչին, որոնք լայնորեն կիրառվում են քաղաքները կանաչապատելիս (ղեկ.՝ կ.գ.թ. Խ.Մայրապետյան):

Իրացվել են գիտափորձերի արդյունքում արտադրված շուրջ 520 հատ տարբեր ծառաթփերի (կենսաճառ, սոսի, կատալպա, գիհի, կաղնի, սոֆորա, հուդայաճառ, մետաքսաճառ, սրնգենի) տնկիներ ու բուսահումք մոտ 1 մլն դրամ գումարով (ղեկ.՝ Ա.Ղահրամանյան):

Մշակվել է փշոտ էլեուտերոկոկի հիպրոպոնիկ աճեցման ներդրման գործնական առաջարկ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Վարդանյան):

Մշակվել է բրզաձև թույայի տնկիների հիպրոպոնիկ արտադրության ներդրական առաջարկ (ղեկ.՝ Ա.Հակոբջանյան):

Ակվապոնիկ համակարգը կատարելագործվել է ֆիլտրման ու պասիվ ջերմիջեցման համակարգերով (ղեկ.՝ Ա.Ղահրամանյան):

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել են մոդելներ քիմիական միացությունների ADMET պարամետրերը *in silico* կանխատեսելու համար: Բոլոր մոդելները մշակվել են կարգավորող մարմինների ուղեցույցներին համապատասխան, այդ թվում՝ ICH M7, REACH, ECHA-16-B-09 և OECD 37849783: Մոդելները ստեղծվել են ինչպես դասական, այնպես էլ մեքենայական ուսուցման ալգորիթմների կիրառմամբ և վավերացվել են: Մոդելները կիրառելի են նոր դեղամիջոցների մշակմամբ, շրջակա միջավայրի աղտոտվածության ուսումնասիրությամբ, ագրոքիմիկատների կամ կոսմետիկ միացությունների մշակմամբ զբաղվող հետազոտական խմբերի,

լաբորատորիաների համար: Այս մոդելներն ազատ օգտագործման են և այլընտրանք են թանկարժեք կոմերցիոն ծրագրերին, որոնց սահմանափակ հասանելիությունը խոչընդոտում է գիտահետազոտական աշխատանքների որակը (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Բաբայան):

ԼՕՐԲԵԼՈՒ ԱՆՎ. ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Հիպերիմունոգլոբուլինային պատրաստուկների մշակում մեթիցիլին-կայուն ստաֆիլոկոկային բակտերիաներով հարուցված վարակային հիվանդությունների պասիվ իմունոթերապիայի նպատակով» դրամաշնորհի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Կիրակոսյան) համաձայնագիր է ստորագրվել և համագործակցություն է սկսվել Մոսկվայի Ն.Գամալեյայի անվ. համաճարակաբանության և մանրէաբանության ազգային հետազոտական կենտրոնի հետ: Ձեռք են բերվել ստաֆիլոկոկային անատոքսիններ, որոնցով իրականացվել է ճագարների իմունիզացիան:

«Սրտի աբլյացված հյուսվածքի բացահայտման համար հիպերսպեկտրալ պատկերավորում և քիմիաչափություն» (*«Hyperspectral imaging and chemometrics for revealing ablated heart tissue»*) ծրագրի (ղեկ.՝ Ֆ.Վիլյառուել) աշխատանքներն ուղղված են սրտի հյուսվածքի հիպերսպեկտրալ պատկերներ ստանալու պայմանների ընդհանուր կարգավորմանը: Մասնավորապես գործունեությունը ներառել է խոշոր եղջերավոր անասուններից սրտերի հավաքագրում, սրտի հյուսվածքի համապատասխան մասնահատում ու պատրաստում հիպերսպեկտրալ պատկերման համար: Պատկերների կարգավորումը (լույսի աղբյուր, զտիչներ, հիպերսպեկտրալ տեսախցիկ) օպտիմիզացվել է յուրաքանչյուր նմուշի արդյունքների գնահատումից հետո, ստացված տվյալների վրա գնահատվել են նախնական մշակման մի քանի մեթոդներ:

«Նոր թմրամիջոցների թիրախների և առաջին կարգի քիմիական մոդուլատորների բացահայտում. 3D արհեստական բանականության բազմազան տվյալներից մինչև առաջատարներ» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Ռ.Աբադյան (ԱՄՆ), կ.գ.թ. Զ.Կարաբեկյան) համակարգչային մոդելավորման ու դոքինգի միջոցով վեր են հանվել մի քանի միացություններ, որոնք *in silico* ցուցաբերել են բարձր խնամակցություն PDL-1 սպիտակուցի նկատմամբ: Ստուգվել է այդ միացությունների ազդեցությունը բջիջների մետաբոլիկ ակտիվության վրա, որին հաջորդել է ազդեցության որոշումը PDL-1-ի սինթեզի վրա:

«*Sutherlandia frutescens*-ի ազդեցությունը Պարկինսոնի մոդելի վրա», *ANSEF*: ծրագրի (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Դարբինյան) արդյունքները ցույց են տվել, որ Սուտերլանդիան կարող է ունենալ պաշտպանական ու խթանող ազդեցություն առնետների վարքի վրա, ինչպես նաև դեր խաղալ հիպոկամպի ակտիվության կարգավորման գործընթացում:

«Խոզի աղիքի բնութագրերը, որպես սկաֆոլդ և մարդու մաշկ, համեմատական վերլուծությունը» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Զ.Կարաբեկյան) հետազոտվել են խոզի փոքր աղիքի ենթալորձաթաղանթի ապաբջջացման ցուցանիշները՝ կառուցվածքային առումով ընդունելի հիմք ստանալու նպատակով, որը լիովին զերծ է ապաբջջացման ռեագենտներից և բջիջների համար թունավոր չէ: Արձանագրված արդյունքների գնահատումը կատարվել է հիստոլոգիական վերլուծության, լվացման պրոտոկոլների կատարելագործման ու հարմարեցման միջոցով, MTT թեստի միջոցով իրականացվել է ցիտոտոքսիկության գնահատում:

«Ծայրամասային նյարդերի ռեգեներացիայի մեթոդների մշակում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ Վ.Գրիգորյան) հետազոտվել է ապաբջջայնացված նյարդային հյուսվածքի սքաֆոլդների ու բջջային բաղադրիչների վրա էլեկտրահաղորդիչ նյութերի ազդեցությունը:

«nACHR ռեցեպտորների վրա նիկոտինանման ազդեցություն ունեցող նյութերի վերաբերյալ պահանջվող տեղեկատվության մշակում, վերլուծություն, բազայի համալրում» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Ա.Ոսկանյան) կատարվել է nACHR ռեցեպտորների վրա նիկոտինանման ազդեցություն ունեցող նյութերի բազայի համալրում ու միջդիսցիպլինար վերլուծություն՝ կախվածությունն ու կողմնակի ազդեցությունները նվազագույնի հասցնելու նպատակով:

Պատրաստվել է փորձարարական համակարգ փոքր կենդանիների շարժողական ակտիվության գրանցման երկու մեթոդների արդյունավետության համեմատական գնահատման համար (PSI ֆիրմայի SFCO սենսորների էլեկտրամագնիսական դաշտի էկրանավորման ու էլեկտրամագնիսական դաշտի էներգիայի կլանման մեթոդ) (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ա.Խաչունց):

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎ. ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Եվրամիության EU4 դրամաշնորհային ծրագրի շրջանակում մշակվել և ներկայացվել է ՀՀ հյուսիսային ավազանի գետավազանային կառավարման պլանը 2025-30թթ. համար (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Մինասյան):

Պատրաստվել են տարբեր փաթեթավորմամբ գունավոր ծխատու խառնուրդներ քաղաքացիական ու պաշտպանական նշանակության համար, մշակվել է դրանց փորձնական արտադրության սխեման (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Դավթյան):

ԲԻՍ եղանակով ստացված ԲԷ MAX ֆազերն ու դրանցից ստացված 2D կառուցվածքով ԲԷ MX-ները (20-30 նմ հաստությամբ) ցուցաբերել են օդում օքսիդացման նկատմամբ ավելի բարձր կայունություն՝ համեմատած համապատասխան պարզ ոչ ԲԷ ֆազերի հետ, ինչը պիտանի է դարձնում դրանց էլեկտրաքիմիական ու կատալիտիկ կիրառությունների համար (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Այդինյան):

Ստացվել են կոմպոզիտային կենսահամատեղելի կենսաքայքայվող պոլիմեր – հիդրոքսիապատիտ իմպլանտներ, որոնք չեն ցուցաբերել տոքսիկություն կենդանի քջիջների նկատմամբ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Աղայան):

Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տեղական հումքից մշակվել են արագ ամրացող, բարձր ամրությամբ ալյումինատային ցեմենտի բաղադրություններ ու տեխնոլոգիա, որոնք կարող են կիրառվել տարբեր կլիմայական պայմաններում ու արտակարգ իրավիճակներում շինությունների վերականգնման համար: Պարզվել են նոր բաղադրության կավահողային ցեմենտների ստացման ու դրանց հիդրատացման ընդհանուր օրինաչափությունները՝ կապված կլինկերային ֆազերի C₁₂A₇/CA հարաբերությունից, հալույթների սառեցման արագությունից (ղեկ.՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան):

Մշակվել է լեռնային ապարների հիման վրա խորիումի ալյումինատների ստացման նոր միկրոալիքային (ՄԱ) եղանակ՝ էներգետիկ ծախսերը նվազեցնելու ու հատկությունները բարելավելու նպատակով: Ալյումինի ու խորիումի լուծելի աղերից սինթեզվել են խորիում

այլումինատային նոնաքարեր՝ (YAG) - $2Y_2O_3 \cdot Al_2O_3$; $Y_2O_3 \cdot Al_2O_3$ ու $3Y_2O_3 \cdot 5Al_2O_3$ բաղադրությամբ, կիրառելի բժշկության (վիրաբուժություն, ակնաբուժություն), ռազմարդյունաբերության մեջ, լազերներում, կոսմետոլոգիայում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Վ.Բաղդամյան):

Սինթեզվել է ապակեխեցեղենային նոր կոմպոզիտային նյութ դյուրահալ ապակու և Al_2O_3 լցոնի հիման վրա: Սինթեզված կոմպոզիտային նյութը կիրառելի է ցածր ջերմաստիճանային համատեղ թրծման խեցեղենի տեխնոլոգիայում (LTCC) (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Կոստանյան):

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տետրաէթօքսիսիլանի (TEOS) գլիցերինի ու 1,2-պրոպիլենգլիկոլի անալոգները՝ տետրա(2,3-դիհիդրօքսիպրոպօքսի)սիլանն ու տետրա(2-հիդրօքսիպրոպօքսի)սիլանը, առաջին անգամ օգտագործվել են հիդրօքսիլ խմբեր պարունակող պոլիդիմեթիլսիլօքսանի (PDMS-OH) կարման համար: Ցույց է տրվել, որ այս կարող ագենտներն ունեն մի շարք առավելություններ TEOS-ի նկատմամբ: Այս ճանապարհով ստացված, դիկլոֆենակ պարունակող սիլիկոնային կոմպոզիտային թաղանթները, կարող են կիրառություն գտնել բժշկության մեջ որպես տրանսդերմալ թաղանթներ (պլաստիկներ) (ղեկ.՝ թղթ. անդ. Վ.Թոփուզյան):

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Երկրաջերմային էներգիայի ներուժի գնահատման նպատակով ստեղծված միասնական երկրաբանական, հրաբխագիտական ու երկրաքիմիական տվյալների բազայի, ինչպես նաև շրջակա միջավայրի աղմուկի սեյսմիկ տոմոգրաֆիայի տվյալների հիման վրա ՀՀ տարածքում անջատվել են 5 հեռանկարային տեղամաս՝ հետախուզական հորատման վայրերի ընտրման, խոշորամասշտաբ երկրաբանական ու երկրաֆիզիկական աշխատանքներ իրականացնելու նպատակով (ղեկ.՝ ե.գ.դ. Խ.Մելիքսեթյան):

Մշակվել է ուժեղ երկրաշարժերի առաջացման ու իրականացման պրոցեսների նոր մեխանիկական մոդել, որը թույլ է տալիս երկրաշարժի նախապատրաստման երկարատև փուլում դեֆորմացիայի ենթարկվող պինդ մարմնի մեխանիկայի օրինաչափություններով որոշել Երկրի կեղևում (օջախում) մեխանիկական դեֆորմացիայի ենթարկման հետևանքով կուտակված պոտենցիալ էներգիայի (երկրաշարժի էներգիայի) մեծությունը, երկրաշարժի օջախի տարածական պարամետրերը (այդ թվում՝ նրա ծավալը, կմ³), էպիկենտրոնային գոտում Երկրի մակերևույթում խզվածքին ուղղահայաց ուղղությամբ մեխանիկական լարվածության նվազման աստիճանը, երկրաշարժի պատճառով այսպես կոչված «վերացված լարումների» մեծությունները (Ռեյդի «առաձգական պատասխանի» հիպոթեզը) և երկրաշարժից հետո տեղի ունեցած հետհարվածների տեղաբաշխման տարածքի չափերն ու մակերեսի մեծությունը: Մոդելը նաև հնարավորություն է ստեղծել Երկրի մակերևույթի վրա երկրաշարժի թողած հետևանքների (խզվածքի երկարություն, օջախի խորություն, հարաբերական տեղաշարժի մեծություն) օգտագործմամբ որոշել տվյալ գրունտային հաստվածքի սահքի սահմանային դեֆորմացիայի մեծությունը: Նկատի ունենալով նոր մոդելի հավաստիության բավարար աստիճանը՝ մշակվել է երկրաշարժի ժամանակ գետնի հիմնական կինեմատիկ մեծությունների՝ տեղափոխությունների, արագությունների, արագացումների մեծությունների կանխագուշակման նոր եղանակ՝ կախված

կանխագուշակվող երկրաշարժի մագնիտուդից, տեղանքի երկրաբանական պայմաններից և խզման գծից նրա հեռավորությունից: Ստացված սինթետիկ աքսելերոգրամների հիման վրա կառուցված երկրաշարժի ռեակցիայի սպեկտրները (երկրաշարժադիմացկուն շինարարության նորմերի $\beta(T)$ կորերը), ըստ սեյսմիկ հատկություններով գրունտային բոլոր 4 կարգերի դեպքում, մեծ ճշտությամբ համընկնում են իրական աքսելերոգրամների հիման վրա ստացված սպեկտրների հետ (ղեկ.՝ ալ. Է.Խաչիյան):

Ամբողջացվել և վերլուծվել են ՀՀ տարածքում բնակելի շենքերի, ենթակառուցվածքների սեյսմիկ ռիսկերը, ավերիչ երկրաշարժի ազդեցությունը մարդկանց կյանքի վրա (ղեկ.՝ Ե.գ.թ. Ռ.Հարությունյան):

Կարգաբերված R ծրագրային միջավայրի sen2r գրադարանի միջոցով Քասախի գետավազանի տարածքի համար ձևաձևով մակերևույթն արտահայտող ինդեքսի ռաստերային շերտերը (NDSI) 5 օր պարբերությամբ թարմացվող Sentinel-2 ներբեռնված պատկերներով իրականացվել է սեզոնային ձևաձևկույթի առաջացման ու հալման գործընթացների մոնիթորինգի մեթոդի շարունակական ճշգրտում և Քասախի գետավազանում տարեկան ջրապահովվածության կանխատեսման մեթոդի մշակում (ղեկ.՝ Ն.Տարասյան):

Գնահատվել է կլիմայի փոփոխության ազդեցությունն Ախուրյանի ջրամբարի ջրհավաք ավազանի մակերևույթային հոսքի հնարավոր փոփոխությունների վրա՝ համաձայն կլիմայի փոփոխության մեղմ (SSP1-1.9), միջին ու խիստ (SSP5-8.5) սցենարների: Ըստ դրանց՝ օդի տարեկան միջին ջերմաստիճանն ուսումնասիրվող տարածքում մինչև 2100թ. կբարձրանա 0,97-6,05°C-ով, տեղումների քանակը քիչ կփոփոխվի՝ մինչև 29 մմ, իսկ մակերևույթային ներհոսքը ջրամբար կնվազի մինչև 14.3%-ով (ղեկ.՝ տ.գ.թ. Ա.Առաքելյան):

Ա.ՆԱԶԱՐՈՎԻ ԱՆՎ. ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՓԵՆԵՐԱՅԻՆ ՍԵՅՍՄԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել են ապարատային ու ծրագրային բաղադրիչներ, ժամանակակից տարրերի բազայի վրա պատրաստվել է բարձր կայուն սինուսոիդային ազդանշանի գեներատոր՝ ելքային հաճախականության 0,1-ից մինչև 100 Հց միջակայքով, որը նախատեսված է աշխատելու տատանողական հարթակներում, օգտագործելու որպես հիմնական ազդանշանային աղբյուր (ղեկ.՝ Ս.Շահպարտյան):

Մշակվել և պատրաստվել է 3-շափիղով ապարատային-ծրագրային լոգեր, որը ունի հնարավորություն կատարել գրանցումներ ինչպես ներդրված գրանցիչի, այնպես էլ արտաքին ու լոկալ ցանցի միջոցով: Լոգերի աշխատանքի տեսանելիության համար մշակվել է ԱՀ ծրագրային ապահովում, որը թույլ է տալիս հետևել տվիչների աշխատանքին իրական ժամանակում և գրանցել տվյալներ (ղեկ.՝ Հ.Շահպարտյան):

Ջրամբարների պատվարների մշտադիտարկման համար նախագծվել, պատրաստվել, փորձարկվել է արագության տվիչ, որը հնարավորություն է տալիս մեկ տվիչով զգալ ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղաձիգ ուղղությամբ տատանումները, որոնք կարող են առաջանալ պատվարում ջրի ներհոսքի դեպքում լիցքի տեղաշարժի ժամանակ (ղեկ.՝ Ա.Գասպարյան):

Կապսի ջրամբարի տարածքի երկրաբնապահպանական հիմնախնդիրների ու իրականացված փորձամեթոդական երկրաֆիզիկական հետազոտությունների տվյալների վերլուծության արդյունքում բացահայտվել են ջրամբարի կայունության վրա ազդող բնական ու տեխնածին գործոնները, որոնց տարածական-ժամանակային փոփոխությունների

գնահատման համար (էկոերկրաֆիզիկական մոնիթորինգ) առաջարկվել է էկոերկրաֆիզիկական մեթոդների համալիր (ղեկ.՝ Ռ.Գասպարյան):

Նախագծվել և պատրաստվել են երկու ուղղաձիգ տատանողական հարթակներ, որոնցից մեկը գտնվում է աշխատանքային վիճակում, իսկ մյուս հարթակի վրա կատարվում են փորձարարական աշխատանքներ (ղեկ.՝ Մ.Միրանյան):

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ինստիտուտի հրատարակած աշխատությունները բացի գիտական ու տեսական նշանակությունից, ունեն նաև զգալի կիրառական ու գործնական նշանակություն, որոնք կարող են հիմք հանդիսանալ պատմագիտական նոր հետազոտությունների համար, օգտագործվել այլ թեմաների վերամշակման ժամանակ, կիրառվել «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հարակից երկրների պատմություն» և հարակից այլ դասագրքերի վերամշակման ու դասավանդման ժամանակ: Աշխատություններում առկա փաստական հարուստ նյութը կարևոր է նաև պատմագիտության հակագիտական ու հորինված տեսակետները մերկացնելու համար:

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հին Արևելքի բաժնի աշխատակիցները մասնակցել են «Հայոց պատմություն» I հատորի II գրքի կազմման, հանրակրթական դպրոցի 8-րդ, 10-րդ դասարանների «Համաշխարհային պատմություն» դասագրքերի պատրաստման գործին:

Մի շարք գիտաշխատողների աշխատությունները թարգմանվել են արաբերեն և հասանելիություն ապահովել էլեկտրոնային հարթակում: Արդեն արաբական 22 երկրի գիտական կենտրոններ կարող են ծանոթանալ հայ արևելագետների աշխատանքներին:

«Քրիստոնեությունը ինչպես որ այն է» գիտահանրամատչելի աշխատության նպատակը հանրության համար պարզ ու հասկանալի տարբերակով քրիստոնեության հիմնական դրույթները ներկայացնելն է:

«Դիմակայող քաղաքական համակարգերը պատերազմների և խաղաղության խաչմերուկներում» կոլեկտիվ մենագրությունում հաշվարկվել է Իրանի ու Ադրբեջանի կայունության ինդեքսը՝ ներկայացնելով այն տարածաշրջանի անվտանգության համատեքստում, ինչը կարևոր է հատկապես ժամանակակից խնդիրներով զբաղվող հետազոտողների, ինչպես նաև արտաքին գերատեսչության մարմինների համար: Հնդկաստանում տպագրված «Տարածաշրջանային երկրների ինտեգրման գործիքակազմը. հայացք Հայաստանից» ("Integration Toolkit for Regional Countries: View from Armenia") հոդվածում կարևորվել է Հայաստանի տարանցիկ դերը Հյուսիս-հարավ տրանսպորտային հաղորդակցության միջանցքում:

Շարունակվել է գիտակիրառական գործունեությունը՝ նպաստելով գիտական ու դիվանագիտական հարթակների ամրապնդմանը: Մերձավոր Արևելքի, Ասիայի և այլ տարածաշրջանների դիվանագիտական ներկայացուցիչների, ակադեմիական ոլորտի մասնագետների ու պետական կառույցների աշխատակիցների ներգրավմամբ կազմակերպվել են միջոցառումներ, որոնք ուղղված են տարածաշրջանային արդի հիմնախնդիրների վերլուծությանը, դրանց ազդեցության գնահատմանը Հարավային

Կովկասում, մասնավորապես Հայաստանի անվտանգության մարտահրավերների համատեքստում:

Տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք գիտական միջոցառումներ՝ գիտաժողովներ, սեմինարներ ու գրքերի շնորհանդեսներ, որոնք նպատակ են ունեցել հասկանալու աշխարհաքաղաքական գործընթացները, վերլուծելու ու ճիշտ գնահատելու դրանց պատճառահետևանքային կապերը՝ «Գազա-Իսրայել ընթացող պատերազմը և դրա ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա», «Կերպափոխվող Մերձավոր Արևելքի հեռանկարները. փոփոխությունների դինամիկա», «Իսլամի և ազգայնականության համադրությունը ՀՀ հարակից երկրներում. ինքնության և քաղաքականության կերպափոխումներ», «Տարածաշրջանային փոխակերպումները և Հայաստանը. անվտանգային տեղաշարժեր», Չինաստանի արդիականացման ու հայ-չինական հարաբերությունների զարգացմանը նվիրվել է 2 գիտաժողով:

Ինստիտուտը հյուրընկալել է միջազգային մի շարք պատվիրակությունների, ընդունել է ՀՀ-ում Հնդկաստանի, Իրանի, Սիրիայի, Ռուսաստանի, Չինաստանի դեսպաններին, Վրաստանի Իլիա համալսարանի արևելագիտության ինստիտուտի տնօրենին, Իրանի Պարսից լեզվի և գրականության ակադեմիայի նախագահին, քննարկումների ժամանակ փորձ է արվել խորացնել համագործակցությունն այդ երկրների գիտական կենտրոնների հետ, քննարկվել են գիտական համագործակցության նոր հեռանկարներ ու մշակութային փոխանակումների ծրագրեր:

Ինստիտուտը կնքել է համագործակցության 3 հուշագիր, ստանձնել է ուժային կառույցի 2 գիտաուսումնական կենտրոնների համակազմի հետ անվճար աշխատանք իրականացնելու պարտավորություն:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Կիրառական մարդաբանության» խումբը (ղեկ.՝ պ.գ.թ. Հ. Խառատյան) իրականացրել է տարատեսակ հետազոտական ու վերլուծական ծրագրեր՝ էթնիկ, կրոնական, լեզվական, հասարակական խմբերի ինքնությունների պահպանության, ձևափոխման, դրանց հասարակական, քաղաքական, մշակութային, գաղափարական պատճառների, ինչպես նաև անհատական, հասարակական, կոլեկտիվ հիշողության ձևավորման մարդաբանական օրինաչափությունների ու քաղաքականության շուրջ: Խումբը հսկայական քանակության նյութ է հավաքել ադրբեջանահայ ու Արցախի հայ փախստականների միջավայրում բռնությունների՝ բռնի տեղահանության, ջարդերի, հայրենիքում թողած ունեցվածքի ու գույքի, ՀՀ-ում տեղավորվելու դժվարությունների, 2020թ. պատերազմի, 2023թ. Արցախի հայաթափության մասին, որոնք հանձնվել են ՀԱԻ արխիվ: Շարունակվում են հայկական մշակույթի ու պատմության վերաբերյալ ադրբեջանական կեղծարարության մերկացման աշխատանքները:

Արցախի մշակութային ժառանգությունը ներկայացնող կայքը (<https://monumentwatch.org/>) շարունակում է հետևել դրա արդի վիճակին, արձագանքում ադրբեջանական վանդալիզմի դեպքերին, կայքի բաժիններում հավելվել է ավելի քան 200 հոդված ու քննություն:

Վերականգնվել, հետազոտության ու թանգարանացման համար նախապատրաստվել են 17 հուշարձաններից հայտնաբերված տարբեր դարաշրջանների գտածոներ՝ ամբողջական 37 անոթ ու 1 կղմինդր, ամբողջացող ու մասնակի վերականգնվող 94 անոթ, 6 կղմինդր ու 5 կարաս, բեկոտված ու մասնակի վերականգնվող 96 անոթ, 83 օբսիդիանե ու 9 ոսկրե մանր իրեր (ղեկ.՝ Լ. Մանուկյան):

Վեդի, Մասիս բլուր, Արտանիշ հուշարձանների պեղումների ժամանակ վերապատրաստվել է 25 ուսանող արտերկրի տարբեր համալսարաններից:

Հնագիտական գտածոների ցուցադրությամբ ինստիտուտը ներկայացել է ԳԱԱ կազմակերպած «Գիտություն» ցուցահանդեսին:

Ինստիտուտն ակտիվորեն մասնակցում է գիտության հանրայնացմանը նպաստող տարբեր միջոցառումներին՝ բաց դասախոսություններ տարբեր հաստատություններում, «Եվրոպական հնագիտության օրեր», «Հայ-գերմանական գիտության օրեր», «Գիտության շաբաթ Երևանում», Հանրային ռադիոյի և Հանրային հեռուստատեսության հաղորդաշարեր, պատրաստում ու խմբագրում է ՀՀ պատմամշակութային հուշարձանների (Գառնիի հնագիտական համալիր, Երևանի ուրարտական հուշարձաններ, Տաթևի վանական համալիր ու շրջակա հուշարձաններ) UNESCO-ի համաշխարհային մշակութային ժառանգության նախնական ու հիմնական ցանկերում ընդգրկելու դիմում-հայտեր:

Ինստիտուտը տարաբնույթ մասնագիտական կարծիքներ է տրամադրել ՀՀ կառավարությանն ու ԿԳՄՍ նախարարությանը: ԿԳՄՍՆ հանձնարարականների, իրավաբանական անձանց դիմումներով դաշտային հետազոտություններով ու տեղազննությամբ հնագիտական փորձաքննություններ են իրականացվել ՀՀ տարբեր մարզերում տնտեսվարող սուբյեկտներին հատկացված հողամասերում: Հուշարձանների բացահայտման պարագայում փաստագրված տվյալները փոխանցվել են լիազոր մարմին՝ վերջիններիս պահպանությունը կազմակերպելու համար: ԿԳՄՍՆ է ներկայացվել Տիրինկատարի հուշարձանախումբը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկելու համար ծրագիրը, որը հաստատվել է: ԿԳՄՍՆ նախարարին կից ոչ նյութական մշակութային ժառանգության հարցերի մասնագիտական խորհրդի քննարկմանն է ներկայացվել 4 հայտ՝ ՀՀ անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ու կենսունակ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը համալրելու համար՝ «Կաճապով կորկոտի պատրաստումն ու կիրառումը ՀՀ Սյունիքի մարզի Շիկահող համայնքում», «Հազար ու մի գիշեր հեքիաթի սյուժետային դրսևորումները հայ ժողովրդական հեքիաթներում», «Խաբ ու խազ» և «Նուրի նուրի»:

Ինստիտուտում պարբերաբար կազմակերպվում են տարբեր թեմաներով սեմինարների շարքեր, որոնց մասնակցում են նաև Հայաստանի այլ գիտական հաստատությունների ու արտասահմանյան հրավիրյալ մասնագետներ, աշխատակիցները մասնագիտական կարծիքներ, գրախոսություններ են տրամադրում Հայաստանի ու արտերկրի վարկանիշային ամսագրերում տպագրվող հոդվածների համար:

Ինստիտուտը պարբերաբար հրատարակում է «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ» և «Армянский гуманитарный вестник» հանդեսները:

Ինստիտուտի գրադարանային ֆոնդում առկա է 45854 միավոր գրականություն: Այս տարի արխիվը ստացել է մեծ քանակությամբ հնագիտական, ազգագրական ու բանահյուսական նյութեր, այդ թվում՝ հեղինակային ամբողջական արխիվներ, XX-XXI դդ. վերաբերող տարբեր տարիների դաշտային հետազոտությունների ու պեղումների հաշվետվություններ, փաստաթղթեր, գծագրեր, լուսանկարներ, նեգատիվներ, սլայդեր, ազգագրական ու բանահյուսական բաժինների հավաքական նյութեր: Թվայնացվել ու մշակվել է 156 միավոր նյութ:

Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎ. ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հրապարակվել է «Հայերենի ածանցների բառարան»-ը, որը կարող է օգտակար լինել ընդհանուր և հայ լեզվաբանությամբ հետաքրքրվողների, բանասիրական ֆակուլտետների ուսանողների համար:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Թ.Ասոյան) հրապարակման են պատրաստվել «Նոր բառեր»-ի մեկական պրակներ՝ արդի գրական արևելահայերենի և արևմտահայերենի գործառական տարբերակներից քաղված նյութի ընդգրկումով:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Դ. Վ.Համբարձումյան) ամփոփվել և հանրայնացվել է երկլեզվության ու լեզվական միավորների ընկալման վերաբերյալ Բեռլինի բժշկական բարձրագույն դպրոցի հետ համատեղ գիտափորձը, որի նպատակն էր պարզել երկլեզու անհատների լեզվամտածողությունը հնչյունային ու բառային մակարդակներում, լեզվի ընկալման ենթագիտակցական ազդակներն ու արձագանքը լեզվական միավորներին: Գիտափորձն իրականացնելու համար մշակվել է հայերենի, անգլերենի ու գերմաներենի հնչյունային ու բառային համակցված շտեմարան, որը դրվել է լեզվական հմտությունը թեստավորող հանրահայտ *LexTale* թեստի նոր տարբերակի կազմության հիմքում: Թեստում առաջին անգամ ներառվել է նաև հայերենը՝ որպես լեզվաիմացության եզր (գիտափորձի անդրադարձին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=v3va2P61nCs>):

Հրապարակվել է «Դիտարկումներ մայրենիի շուրջ: Հոգվածների ժողովածու» գիրքը, որում զետեղված են հայոց լեզվի որոշ հարցերի ու խնդիրների, տարածված սխալների ու երկձևությունների շուրջ դիտարկումներ, այն կարող է օգտակար լինել ինչպես հայոց լեզվի մասնագետների, ուսանողների, ուսուցիչների, այնպես էլ մայրենիի հիմնահարցերը կարևորող ընթերցողների համար:

Հրապարակվել է «ՀՀ ԳԱԱ ԼԻ Տեղեկագիրք 2023» գիրքը, որը ներկայացնում է ինստիտուտի աշխատակիցների հրապարակած գիտական աշխատանքների մատենագիտական ցանկերն ու հրապարակումների համառոտ բովանդակությունը (հայերեն, անգլերեն, ռուսերեն):

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հրատարակվել է հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրքը, «Իշխանիկ» գիրքը՝ աշխարհի ամենաընթերցված ու սիրելի գրքերից մեկի գրաբար թարգմանությունը՝ ծանոթագրություններով ու առաջաբանով, որը կարող է կիրառվել որպես դասագիրք, ընթերցանության ուսումնական ու օժանդակ նյութ գրաբարի դասընթաց ներառող կրթական հաստատությունների՝ ավագ դպրոցների, բուհերի, ինչպես նաև պարզապես դասական հայերեն սովորողների համար:

Լույս է տեսել «Ավելորիքի բարի հրեշտակը» գիրքը, որը ներկայացնում է Ավ.Իսահակյանի կյանքի 47 տարիների կնոջ՝ Սոֆյա Իսահակյանի (1884-1966) կյանքի պատմությունը, որը գրողի գիտական կենսագրության անքակտելի մասն է: Գրքում հրապարակված են բազմաթիվ անտիպ նյութեր՝ Իսահակյանի նամակներ, բացիկներ, հատվածներ ժամանակակիցների հուշերից և հազվագյուտ, նախկինում անտիպ լուսանկարներ: Այն շատ արժեքավոր տեղեկություններ է տալիս ոչ միայն Իսահակյանի, այլև

նրա շրջապատի, հայ գրական, հասարակական կյանքի, այդ թվում՝ Եվրոպայի մի շարք երկրների հայ համայնքների մասին:

Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Կանաչ տնտեսությունը որպես նորարարական գյուղատնտեսության կայուն զարգացման նախապայման» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Մանուչարյան) առանձնացվել են հետևյալ առաջնությունները.

- Նկատի ունենալով, որ ջրօգտագործման ընդհանուր ծավալի շուրջ 55-60%-ը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը և տրանզիտային տեղափոխման ժամանակ ջրի կորուստները կազմում են ջրօգտագործման 28-30%, առաջարկվում է կիրառել ոռոգման ջրի սակագնի տարբերակված մոտեցում՝ ըստ ջրօգտագործման ծավալի ու սեզոնի: Դա սպառողներին կխթանի խնայելու ջրօգտագործման ծախսերը:

- ՀՀ-ում ջրային ռեսուրսները հիմնականում աղտոտվում են կենցաղային ու արտադրական կեղտաջրերով, լեռնահանքային արդյունաբերության գործունեությամբ, գյուղատնտեսությունից վերադարձվող ջրերով, կենցաղային ու արտադրական թափոններով: Վերջին տարիներին թեև նկատվում է կեղտաջրերի հեռացման ծավալների աճման միտում, սակայն դրանց հեռացումը հիմնականում կատարվում է առանց մաքրման: Հիմնվելով մի շարք ուսումնասիրությունների արդյունքների վրա՝ առաջարկվում է կեղտաջրերի արտանետումների համար վճարի մեծությունը սահմանել ծախսային մոտեցմամբ, այն է՝ սահմանել բավականին բարձր դրույքաչափեր՝ փոխհատուցելով արտանետումներ իրականացնող համակարգի կողմից առաջացող բոլոր ծախսերը, դրանք տարբերակել ըստ արդյունաբերական ու կենցաղային կեղտաջրերի ու տնտեսության տարբեր ճյուղերի, և հարկային արտոնություն տալ այն տնտեսավարողներին, որոնք կեղտաջրի վերամշակումից հետո օգտագործում են մի քանի անգամ: Կեղտաջրերի որակական ցուցանիշների մոնիթորինգ կատարելը հնարավորություն կտա դրանց բազմանպատակ օգտագործմանը որպես պարարտանյութ, կենսազագ, շինանյութերի արտադրությունում որպես հումք, չոր տիղմի օգտագործմանը՝ հողի ռեկուլտիվացիայի, աղբավայրերի կանաչապատման, հարթավայրերի ռելիեֆի վերականգնման համար:

- Էներգիայի այլընտրանքային աղբյուրներից հեռանկարային են համարվում վերականգնվող հումքից ստացվող կենսավառելիքները: ՀՀ, որպես ներմուծվող էներգապաշարներից մեծ կախվածություն ունեցող երկիր, կարևորել է կենսազանգվածի ոլորտի զարգացումը, որը միաժամանակ կլուծի սոցիալական, բնապահպանական ու տնտեսական մի շարք հիմնախնդիրներ: Այս առնչությամբ ՀՀ կառավարության որոշման մեջ կատարվել են լրացումներ՝ նախանշելով ՀՀ-ում կենսազանգվածի ստացման հնարավոր աղբյուրները:

Քանի որ Հայաստանում գործող բրիկետավորման կետերը հիմնականում մասնագիտացված են հացահատիկային մշակաբույսերի վեգետատիվ զանգվածի հումքային բազայի վրա, ուստի դիտարկվել են աշնանացան ցորենի մշակությունից ստացվող կենսավառելիքի բնապահպանական ու տնտեսական օգուտները: Բնապահպանական օգուտը՝ յուրաքանչյուր 1000 հա խոզանի այրումից մթնոլորտ են արտանետվում 500 կգ ազոտական օքսիդներ, 370 կգ ածխաջրածիններ, 3 տ մոխիր, 20 տ ածխաթթու գազ, մինչդեռ 1000 կգ ծղոտից կարելի է ստանալ 700 կգ կենսավառելիք, որը հնարավոր է օգտագործել դիզելային շարժիչներով ավտոմեքենաներում՝ կրճատելով շարժիչի գործունեության ժամանակ մթնոլորտ արտանետումների ծավալը, տնտեսական օգուտը՝ ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ 2023թ. 70105 հա ցանքատարածությունից ստացվել է 175.2 հազ տոննա աշնանացան ցորեն ու

262.8 հազ տոննա ծղոտ (մնացորդային ելունքի 1.5 գործակցով արտահայտված): Հաշվի առնելով, որ առաջացած ծղոտի շուրջ 50%-ն օգտագործվում է որպես անասնակեր ու ցամքար, կենսազանգվածի փաստացի քանակը կկազմի 131.4 հազ տոննա: Հաշվարկվել է, որ յուրաքանչյուր 1 կգ կարող է ապահովել 15 ՄՋ էներգետիկ արժեք՝ բրիկետի վերածելու պարագայում: Բրիկետավորման կետերին 20 դրամ/կգ գնի պայմաններում կենսազանգվածի վաճառքից ստացված հավելյալ եկամուտը կկազմի 2.628 մլրդ դրամ:

«Մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Ե.Հակոբյան) առաջարկվել է, որ ՀՀ կենտրոնական բանկը պետք է տնտեսական տվյալների կանխատեսման ու վերլուծության նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ մշակի և ներդնի՝ օգտագործելով դրամավարկային քաղաքականության օպտիմալացման ու իրական ժամանակում որոշումներ կայացնելու համար մեքենայական ուսուցման ալգորիթմներ: Նման նորամուծությունները կարող են զգալիորեն բարելավել դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը, նպաստել մակրոտնտեսական ցուցանիշների ավելի ճշգրիտ կանխատեսմանը, ինչը, ի վերջո, տնտեսությունը կդարձնի ավելի դիմացկուն արտաքին ցնցումներին ու փոփոխություններին:

ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառությունը տեսանելի է, ինչը չի կարելի ասել հարկաբյուջետային քաղաքականության առումով: Մասնավորապես կարելի է հարկային օրենսդրության փոփոխության միջոցով «գերտաքացած» ոլորտների՝ ծառայությունների, առևտրի ու ֆինանսական, հարկային բեռն ավելացնել՝ կիրառելով ավելի արդյունավետ հարկային վարչարարություն, վերանայելով հարկման շեմերն ու արտոնությունները, ներդնելով պրոգրեսիվ հարկման մեթոդներ: Արդյունքում պետությունը կստանա ավելի շատ հարկային եկամուտ ու ռեսուրսների բաշխման հնարավորություն, որոնք էլ պետք է ուղղել տնտեսության ներուժի զարգացմանը միտված կարևոր միջոցառումների իրականացմանը՝ ենթակառուցվածքների զարգացմանը նպաստող խոշորածավալ կապիտալ ծրագրերի իրականացմանը կամ արտաքին պետական պարտքի մարմանը:

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ինստիտուտի տնօրենն ու խմբերից մեկի ղեկավարը որպես փորձագետներ ներգրավվել են Եվրոպայի Խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության կոնվենցիայի շրջանակի խորհրդակցական կոմիտեի և ՄԱԿ-ի Գյուլագիների և գյուղական վայրերում ներգրավված անձանց իրավունքների պաշտպանության խմբի աշխատանքներում, իսկ մի շարք գիտաշխատողներ՝ «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» նախագծի մշակման աշխատանքներում:

Աշխատակիցների գիտական որոշ արդյունքներ, կապված տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների ու կոնֆլիկտների լուծման հետ, պարբերաբար ներկայացվել են ՀՀ պետական համապատասխան կառույցներին, պետության իրավաքաղաքական կյանքի կազմակերպման վերաբերյալ իրենց վերլուծություններով ու առաջարկներով պարբերաբար հանդես են եկել հանրային փորձագիտական-վերլուծական դաշտում, պարբերաբար տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց:

Ինստիտուտի և նրա հիմնարար գիտական ուղղությունների հանրահռչակման նպատակով տեսանկարահանվել է գիտական բանախոսությունների երրորդ շարքը, որն ինստիտուտի յուրօրինակ ալիքով ունեցել է լայն տարածում:

Ինստիտուտի հիմնադրած «The POLITNOMOS. Journal of Political and Legal Studies» անգլալեզու գիտական հանդեսը ներառվել է Google Scholar, Semantic Scholar, Crossref, Scispace, Yubetsu Shibata միջազգային գիտաչափական շտեմարաններում, աշխատանքներ են տարվում այն նաև Scopus և Web of Science միջազգային գիտաչափական շտեմարաններում ներառելու ուղղությամբ:

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի հայ դասականների հոգևոր ժառանգության հրատարակության շրջանակում (ղեկ.՝ արվ.դ. Ա.Ասատրյան) մեկնարկել է Կոմիտասի «Երկերի ժողովածուի» 2-րդ հրատարակությունը, հրատարակվել է 1-ին հատորը, որն ընդգրկում է Կոմիտասի մեներգերը դաշնամուրի նվագակցությամբ:

Հրատարակվել են հանրակրթական դպրոցների 6-րդ ու 8-րդ դասարանների համար «Երաժշտություն» առարկայի դասագրքերը, գիտահանրամատչելի «Ռուսին» արվեստի պատկերազարդ հանդեսի 4 համարը:

Արվեստագիտական արդյունքի հանրայնացմանն են միտված Հանրային ռադիոյում Արարատյան Հայրապետական թեմի «Ինքնություն» հաղորդաշարի հաղորդումները, որոնցում հանդես են եկել ինստիտուտի մասնագետները:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԿՄԿ լսարանները վերազինվել են համակարգիչներով, պրոյեկտորներով, այժմ Կենտրոնի բոլոր լսարանները տեխնիկապես հագեցած են: Թարմացվել է հեռավար ուսուցման հարթակին կից տեսակոնֆերանսների (<https://conference.isec.am>) հարթակը, նորացվել են անվտանգության ու ծրագրային անհրաժեշտ փաթեթները, հեռավար ուսուցման հարթակը, փոխվել է դոմենային անվանումը (<https://online.isec.am>)՝ ընդլայնելով հեռավար ուսուցման կազմակերպման հնարավորություններն ու գործիքակազմը:

ԳԿՄԿ մասնակցել է էրազմուս+ կարողությունների զարգացման «Ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը հանուն Կանաչ գործարքի Հայաստանում և Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա» (AFISHE) ծրագրին: Բացվել է ԳԿՄԿ նոր լաբորատորիա Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնում: Ծրագրի ընթացքում Կենտրոնի աշխատանքներն ու նվաճումները ներկայացվել են Խորվաթիայում, Պորտուգալիայում: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները մասնակցել են երկշաբաթյա մասնագիտական վերապատրաստումների Պորտոյի ու Դուբրովնիկի համալսարաններում: Կազմակերպվել է այց Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղում գտնվող «Սևանի իշխան» ձկնաբուծական գործարան՝ ուսանողների հետազոտական ու գործնական աշխատանքների կազմակերպման հնարավորություններին ծանոթանալու նպատակով: Վերապատրաստումների շարք է իրականացվել նաև ԳԿՄԿ-ում, մշակվել և հաստատվել են դասընթացների ուսումնառության նյութերը:

ԳԿՄԿ վարչակազմն ու պրոֆեսորադասախոսական կազմը գործուղումների են մեկնել ՌԴ, Իտալիա, Լեհաստան, Վրաստան, Թուրքիա, մասնակցել են հայաստանյան ու արտերկրի վերապատրաստման ծրագրերի, համաժողովների, երիտասարդական ֆորումների, գիտաժողովների: Կենտրոնն էրազմուս+ ծրագրի շրջանակում իրականացրել

է ուսանողների, պրոֆեսորադասախոսական ու վարչական կազմերի փոխանակման ծրագրեր եվրոպական 12 համալսարանների հետ:

ԳԿՄԿ-ում ընթացիկ տարում դասախոսություններ են կարդացել Սլովակիայի Պրեշովի համալսարանի, Բուլղարիայի Սուրբ Կյուրեղի ու Մեթոդիոսի անվան Վելիկո Տառնովոյի համալսարանի, Նեապոլի Ֆեդերիկո 2-րդի անվ. համալսարանի, Սանկտ Պետերբուրգի «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի դասախոսները:

ԳԿՄԿ ուսանողներն էրազմուս+ միջազգայի կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում ուսումնառել են Լեհաստանի Կրակովի ազգային կրթության հանձնաժողովի, Բուլղարիայի Սուրբ Կյուրեղի ու Մեթոդիոսի անվ. Վելիկո Տիռնովոյի, Նորվեգիայի Թրոմսյոյի, Ֆրանսիայի Լիլի, Իտալիայի Միջազգային Տելեմատիկ, Իտալիայի Բոլոնիայի համալսարաններում: Հաջողությամբ իրականացվել է նաև արտերկրի հայազգի դասախոսների ներգրավումն ուսումնական գործընթացում:

Զգալի աշխատանքներ են տարվել Մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ-երի) մասնագրերում ու առարկայական նկարագրերում ակնկալվող ուսումնառության արդյունքների, պետական կրթական չափորոշիչների ու Որակավորումների ազգային շրջանակի հետ համադրելիությունն ապահովելու ուղղությամբ, որի արդյունքում ՄԿԾ-երի մասնագրերը համապատասխանեցվել են Որակավորումների ազգային շրջանակի հետ:

Շարունակելով նախորդ տարիների փորձը և հիմնվելով համապատասխան կանոնակարգերի վրա՝ իրականացվել են շրջանավարտների կողմից կրթական ծրագրերի գնահատմանը, ԳԿՄԿ-ի կողմից կազմակերպվող պրակտիկայի գնահատմանն ուղղված հետազոտություններ, անցկացվել են հետազոտական գործունեության ու ուսումնական գործընթացի փոխկապակցումից շրջանավարտների գոհունակության հարցումներ: Հետազոտությանը մասնակցել է 107 ուսանող: Կազմակերպվել և իրականացվել է «Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավում, մոնիթորինգ և որակի գնահատում» թեմայով վերապատրաստում: Կազմակերպվել են պարբերական հանդիպում-քննարկումներ գործատուների հետ, հավաքագրվել և ուսումնասիրվել են նրանց կարծիքները: Ընթացիկ տարում ուսումնասիրվել են «Երկրաբանություն», «Արևելագիտություն» ՄԿԾ-երի հիմնական գործատուների կարծիքները:

ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի շրջանակում իրականացվել է 14773 դատական փորձաքննություն (ընդհանուր 861304.5 հազար ՀՀ դրամ արժեքով), դատարանների կողմից կայացված որոշումների հիման վրա՝ 152 (հետազոտված օբյեկտների քանակը 376), քաղաքացիական դատավարության շրջանակում՝ 37 (հետազոտված օբյեկտների քանակը 108), վարչական դատավարության շրջանակում՝ 2 (հետազոտված օբյեկտների քանակը 3), սնանկության դատարանի որոշումների հիման վրա՝ 71 (հետազոտված օբյեկտների քանակը 715), պետական գնման պայմանագրի ու քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա՝ 93 (հետազոտված օբյեկտների քանակը 646):

ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար

Համակարգող՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների
ինստիտուտ

Ծրագիրը նպատակաուղղված է բնագիտական (հիդրոոդերևութաբանության, բնապահպանության, սեյսմաբանության, կենսաբանության, բժշկական գենետիկայի) խնդիրների լուծմանն ու ամպային ենթակառուցվածքի զարգացմանը՝ օգտագործելով ազգային հետազոտական էլեկտրոնային ենթակառուցվածքի հնարավորությունները:

Ծրագրին մասնակցել են Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների, Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության, Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտների, Գիտակրթական միջազգային կենտրոնի ու Շրջակա միջավայրի նախարարության առաջատար մասնագետները:

Կատարվել են առանց սերվերի բարձր արտադրողականությամբ հաշվողական ենթակառուցվածքները մշակելու հետազոտություններ: Մասնավորապես իրականացվել են բարձր արտադրողականությամբ հաշվողական ամպերը (HPC over cloud) գերհամակարգչային ռեսուրսների հետ համատեղելու աշխատանքներ, գիտափորձեր՝ գնահատելու ու մշակելու կոնտեյներները, որոնք կարող են աշխատեցնել Slurm հերթերի համակարգը՝ օգտագործելով Singularity փաթեթը, մյուս կողմից Kubernetes փաթեթի օգնությամբ ստեղծվել են տարաբաշխված միջավայրեր: Որոշ աշխատանքային հոսքերի համար գնահատվել է Kubernetes փաթեթի արդյունավետությունը Slurm փաթեթի նկատմամբ: Մշակվել է փորձնական ծառայություն (FaaS) միջավայր ֆունկցիա, որի օգնությամբ, օգտագործելով տարբեր ծրագրավորման լեզուները, օգտատերերը կարող են ստեղծել ֆունկցիաներ: Գիտական հաշվարկների խնդիրների օպտիմիզացման ուղղությամբ մշակվել է մուլտի-մոդուլար հարթակ, որը կարող է միաժամանակ հաշվի առնել տարբեր հատկություններ, այդ թվում՝ արտադրողականություն, ծախսեր, պրոցեսորի ու հիշողության օգտագործում, ընդլայնելիություն և այլն: Հարթակը փորձարկվել է արբանյակային նկարների մշակման խնդիրների ուղղությամբ՝ ունենալով տարբեր ծավալի հոսքեր ու ենթակարուցվածքների տիպեր: Գիտական հաշվարկների օպտիմալացման համար իրականացվել են մեծ գրաֆների պահպանման ու մշակման, գծային հանրահաշվի խնդիրների զուգահեռ լուծման հետազոտություններ:

Օդերևութաբանության բնագավառում շարունակվել են գիտահետազոտական աշխատանքները, այդ թվում՝ Հայաստանում ու Հարավային Կովկասում կլիմայական էքստրեմումների փոփոխության հետազոտության, Հայաստանում երաշտի մոնիթորինգի բարելավման, եղանակի կանխատեսման թվային մոդելներով վտանգավոր եղանակային երևույթների կարճաժամկետ կանխատեսման ուղղություններով:

Բնապահպանության բնագավառում, օգտագործելով մթնոլորտ արտանետումների կառավարման միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծման փորձը, կատարվել են թափոնների կառավարման էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքներ:

Սեյսմաբանության բնագավառում կատարվել են երկրաշարժերի վաղ ազդարարման օպերատիվ «խելացի» համակարգի նախագծման և տեկտոնական խզվածքների ակտիվացման ժամանակի նախահաշվարկման ծրագրերի ստեղծման աշխատանքներ:

Կենսաբանության բնագավառում շարունակվել են բարդ համակարգերի համակարգչային մոդելավորման աշխատանքները, մասնավորապես շարունակվել է լիպիդային երկշերտ/տրանսմեմբրանային ինտեգրին բարդ կենսաբանական համակարգի մոդելավորումը, գնահատվել են ռեսուրսներն էներգիայի խնայողության տեսանկյունից՝ փոփոխելով ծրագրային փաթեթի մի շարք պարամետրեր, փորձ է արվել օպտիմալացնել արագագործություն/էներգիայի ծախս հարաբերությունը: Այս տարի նախկինում օգտագործված հաշվողական ռեսուրսներից բացի օգտագործվել են նաև «Ազնավուր» գերհամակարգչի հաշվողական ռեսուրսները:

Բժշկական գենետիկայի բնագավառում կատարվել են գենետիկական տարբերակների բաշխումը Հայկական պոպուլյացիայում հետազոտելու աշխատանքներ:

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված արդյունքները հրապարակվել են 12 հոդվածում:

Հայկական գենոֆոնդի կայունության գործոնները

Համակարգողներ՝ Կ.գ.դ. Ա.Առաքելյան (տնօրեն), Կ.գ.դ. Լ.Եպիսկոպոսյան
Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ

Համարվել է արևելյան Հայաստանի հնամարդաբանական նյութի ՄԿԻ-ի շտեմարանը: Ժամանակակից ԴՆԹ նմուշների ամբողջական գենոմների ու էքզոմների սեքվենավորման տվյալների հիման վրա իրականացվել է հայկական պոպուլյացիայի գենետիկական տարբերակների աշխարհագրական բաշխվածության քարտեզագրում (draft genome):

Կիրառական (կոմերցիոն) նշանակության տիտանի հիմքով համաձուլվածքների սինթեզը հիդրիդային ցիկլի եղանակով

Համակարգող՝ ք.գ.թ. Դ.Մայիլյան
Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ

«Հիդրիդային ցիկլ» (ՀՑ) եղանակով հետազոտվել է տիտանի հիմքով բազմաֆունկցիոնալ բազմակոմպոնենտ $Ti-4Al-Nb-1Zr-0.5Sc-0.5Co$, $Ti-4Al-Nb-1Zr-0.5Sc-0.5Ni$, $Ti-3Al-1Nb-2Zr-3Co$ և $Ti-3Al-1Nb-2Zr-3Ni$ համաձուլվածքների սինթեզի պրոցեսը: Բարձրջերմաստիճանային ինքնատարաձվող սինթեզի (ԲԻՍ) եղանակով սինթեզվել է ելանյութ հանդիսացող TiH_2 , $(Ti+V)H_{1.7}$, ZrH_2 , $NbH_{0.99}$, $ScH_{1.65}$ հիդրիդների անհրաժեշտ քանակ: Ուսումնասիրվել է համաձուլվածքների ձևավորման գործընթացի պարամետրերի ազդեցությունը համաձուլվածքների բնութագրերի վրա՝ բյուրեղային կառուցվածք, միկրոկառուցվածք, խտություն, ջրածնի կլանում: Բացահայտվել են ՀՑ մեթոդով համաձուլվածքների ստացման հիմնական օրինաչափությունները՝ ջերմաստիճանի, ելային խառնուրդի տաքացման ու սառեցման արագության ազդեցությունը, տաքացման առավելագույն ջերմաստիճանի պահպանման տևողությունը, ռեակցիոն խառնուրդի բաղադրության՝ հիդրիդների կամ լեգիրացնող մետաղի ու մետաղի հիդրիդի քանակների հարաբերության, ելային խառնուրդի սեղմման ուժի ազդեցությունը: Արդյունքում որոշվել են ՀՑ եղանակով լաբորատոր պայմաններում համաձուլվածքների ստացման օպտիմալ պարամետրերը՝ ջերմաստիճանը $1050^{\circ}C$, տևողությունը 1.5 ժամ, սեղմման ուժը 250 կՆ: Ռենտգենաֆազային վերլուծությունը (ՌՖՎ) ցույց է տվել, որ համաձուլվածքների բաղադրությունից կախված՝ ձևավորվում են միաֆազ α (ՀԽԴ կառուցվածքով,

տարածական խումբ 194: P6₃/mmc) կամ երկֆազ $\alpha + \beta$ (ԾԿԽ կառուցվածքով, տարածական խումբ 229: Im-3m) համաձուլվածքներ: ՌՖՎ-ի տվյալների հիման վրա որոշվել են ֆազերի բյուրեղացանցի պարամետրերը: Ուսումնասիրվել է ԲԻՍ եղանակով ստացված ջրածնով հարուստ համաձուլվածքների հիդրիդների սինթեզի գործընթացը: Զրաձնի առավելագույն պարունակությունը սինթեզված հիդրիդներում կազմել է 3.36 կշ. %: Սինթեզված համաձուլվածքները կիրառելի են կենսաբժշկության ոլորտում՝ շնորհիվ բարելավված կենսակոռոզիոն հատկությունների ու ուժեղացված բջջային ագլեգիայի:

Ռադիացիոն-կայուն և լազերային լուսացիայից պաշտպանող ապակեկերպ ու կոմպոզիտային նյութերի մշակում

Համակարգող՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան

Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ

Ուսումնասիրվել են ZnO/CdO/PbO-B₂O₃/Bi₂O₃-Al₂O₃-SiO₂, CaO/SrO/BaO/ - B₂O₃/Bi₂O₃ - Al₂O₃-SiO₂ համակարգերի ապակեգոյացման ու կայուն ապակիների տիրույթները, ֆազերի բյուրեղացման դաշտերը:

Մշակվել են բարելավված հատկություններով ռադիացիոն-կայուն ու ճառագայթա-պաշտպանիչ ապակեկերպ, ապակեբյուրեղային ու կոմպոզիտային նոր նյութեր խտության բարձր արժեքներով՝ 3,5-4,7գ/սմ³: Կատարվել են մշակված նյութերի γ -0,5-1,25 ՄէՎ և արագընթաց նեյտրոնների 15-50 ՄէՎ ճառագայթման ու կլանման հետազոտություններ: Ճառագայթման ինտենսիվության գծային նվազման գործակցի տվյալներով սինթեզված նյութերն առանձնանում են գամմա ճառագայթների թուլացման մեծ ունակությամբ (որպես ճառագայթման աղբյուրներ կիրառվել են ¹³⁷Cs, էներգիան 661,7 ԿէՎ և ⁶⁰Co - էներգիան 661,7 1173 և 1333 ԿէՎ): Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ 661,7, 1173 և 1333 կՎ էներգիաների դեպքում նմուշներն ունեն բարձր μ գործակից: Նմուշներն ունեն գամմա ճառագայթումը թուլացնելու մեծ կարողություն: μ գործակցի նվազումը նկատվում է նաև ֆոտոնների էներգիայի ավելացման հետ:

Իրականացվել են մշակված նյութերի կողմից արագընթաց նեյտրոնների ճառագայթների կլանման հետազոտություններ: Ներկայացված նմուշների վրա ճառագայթման ազդեցությունն ուսումնասիրելու նպատակով դրանք տեղադրվել են արագ նեյտրոնային աղբյուրներով տարաներում և 18 օր ճառագայթվել: Պարզվել է, որ մշակված նյութերը կայուն են արագընթաց նեյտրոնների ճառագայթմանը նշված ժամանակահատվածում: Նեյտրոնների ճառագայթման հոսքի ինտենսիվության նվազումը հաշվարկվել է տարրերի միջուկների էֆեկտիվ կտրվածքի գումարային արժեքով:

Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները

Համակարգող՝ պ.գ.դ. Ռ.Կարապետյան

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի հետազոտական խումբը շարունակել է համագործակցությունը 13 երկրների (ՌԴ, Բելառուս, Ղրղզստան, Լիբանան, Քուվեյթ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Պորտուգալիա, Բելգիա, Չեխիա, Ուկրաինա,

ԱՄՆ) գիտական կենտրոնների հետ, տեսական ու համեմատական հետազոտություններ է իրականացրել հայկական համայնքների ինտեգրացման գործընթացների վերաբերյալ: Ստացված նյութերի վերլուծության հիման վրա փորձագիտական առաջարկներ են արվել ՀՀ տարբեր գերատեսչություններին: Հետազոտությունների արդյունքները հրատարակվել են միջազգային և հայաստանյան պարբերականներում:

Ավանդական մշակութային ժառանգության դրսևորումների կիրառումը քաղաքականության մեջ. հնարավորություններ և առաջարկներ

Համակարգող՝ պ.գ.թ. Հ.Խառատյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հետազոտություններ են իրականացվել գլխավորապես «կառավարման, հասարակական, քաղաքական, արտադրական և սպառող շուկա» բաղադրիչի շուրջ: Մանրամասն ուսումնասիրվել են «Հիշատակի և տոների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները 2018թ. հետո: Եղել են յոթը, ավելացել են նոր օրեր՝ «Հայ կինոյի օր», «Հարկ վճարողի օր», «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների օր», «Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր»: Ուժը կորցրած է ճանաչվել օրենքի «Սուրբ Ծննդյան և Հայտնության տոնին հաջորդող՝ Մեռելոց հիշատակի օր՝ նշվում է հունվարի 7-ին, ոչ աշխատանքային օր» հոդվածը:

Ծրագրի աշխատողները եղել են ՀՀ բոլոր մարզերում, հանդիպել են մարզպետների, մարզերից յուրաքանչյուրում՝ երկու կամ երեք խոշորացված համայնքների համայնքապետների և մարզի ու համայնքների մշակութային կյանքի կազմակերպիչների, մարզերի երկրագիտական թանգարանների, դպրոցների տնօրենների, ուսուցիչների, տեղական հասարակական կազմակերպությունների, գրադարանների տնօրինության հետ, մանրամասն քննարկել են նրանց մասնակցությունը տոնահանդեսների կազմակերպմանը, հնարավոր սցենարների առաջարկի դեպքում դրանց կիրառելիության հեռանկարները: Սկզբունքորեն պայմանավորվածություններ են ձեռք բերվել Տոների մասին ՀՀ օրենքի և օրենքում չընդգրկված տոնահանդեսների շուրջ համագործակցության մասին:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Լ.Աղալովյան
Գիտքարտուղար՝ Լ.Մարտիրոսյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Մաթեմատիկայի, Մեխանիկայի, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտները, «Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ-ն:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 8 ակադեմիկոս, 6 թղթակից և 24 արտասահմանյան անդամներ, 5 պատվավոր դոկտոր:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 3 ընդհանուր ժողով:

Բաժանմունքի ապրիլի 12-ի ընդհանուր ժողովը քննարկել է Մեխանիկայի ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի թեկնածուների հարցը:

Բաժանմունքի ապրիլի 22-ի տարեկան ընդհանուր ժողովը քննարկել և հավանություն է տվել Լ.Աղալովյանի «Բաժանմունքի 2023թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցմանը: Լսվել են ֆ.-մ.գ.դ. Գ.Կարագուլյանի (Մաթեմատիկայի ինստիտուտ), թղթ. անդ. Ա.Ավետիսյանի (Մեխանիկայի ինստիտուտ), ֆ.-մ.գ.թ. Ի.Կարապետյանի (Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ) գիտական զեկուցումները:

Բաժանմունքի հոկտեմբերի 4-ի ընդհանուր ժողովը քննարկել է Մեխանիկայի ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի թեկնածուի հարցը, ֆ.-մ.գ.թ. Լ.Դաշտոյանի թեկնածությունը ներկայացրել է ԳԱԱ նախագահության քննարկմանը, նա ընտրվել է տնօրեն:

Բաժանմունքն անցկացրել է բյուրոյի 20 նիստ, որոնցում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2024թ. աշխատանքային պլանը, ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի նախագիծը, 2024-25 ուստարվա ասպիրանտական տեղերի քանակն ու ըստ ինստիտուտների բաշխվածությունը, ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները, ասպիրանտների գիտական ղեկավարներն ու գիտական թեմաները, 2025-26 ուստարվա ասպիրանտուրայի հայտերը, 2024թ. համար ինստիտուտներին տրված բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, պետական նպատակային ծրագրերի, ինստիտուտներին անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսավորում հատկացնելու ու գիտական գործուղումների հայտերը, հաշվետվությունները:

Քննարկվել են Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում տարվող «հատուկ նշանակության» աշխատանքները: Նման ուղղվածության հարցերը քննարկվել են նաև գիտության և կրթության հարցերով Ազգային ժողովի աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ:

Բաժանմունքում անցկացվել է քննարկում Երևանի պետական համալսարանում, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում մեխանիկայի ու հարակից մասնագիտությունների գծով կարդացվող դասընթացների ու ժամանակակից պահանջների վերաբերյալ:

Հաստատվել է Մեխանիկայի ինստիտուտի գիտական խորհրդի նոր կազմը: Քննարկվել և հավանություն է տրվել ԻԱՊԻ տնօրենի թափուր պաշտոնի համար առաջադրված տեխ.գ.դ. Հ.Ասցատրյանի թեկնածությանը, նա ընտրվել է տնօրեն:

Քննարկվել են ինստիտուտների 2024թ. կարևորագույն արդյունքները, գիտակազմակերպական բնույթի այլ հարցեր:

Ըստ բաժանմունքի մասնագիտությունների՝ հրատարակվել են «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մաթեմատիկա» (6 համար), «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա» (4 համար), «ՀՀ ԳԱԱ և ՀԱՃՀ տեղեկագիր» (տեխնիկական գիտություններ սերիա, 4 համար), «Համակարգչային գիտության մաթեմատիկական խնդիրները» (2 համար) հանդեսները, «Հայկական մաթեմատիկական հանդես» էլեկտրոնային ամսագիրը:

Բաժանմունքի ինստիտուտների գիտաշխատողները տպագրել են 5 մենագրություն (3-ն արտասահմանում), 2 ուսումնական ձեռնարկ, 135 հոդված գրախոսվող ամսագրերում (108-ը Scopus/WoS), 35 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (32-ն արտասահմանում), 47 թեզիս (27-ն արտասահմանում):

Բաժանմունքի ինստիտուտները կազմակերպել են 3 միջազգային գիտաժողով:

Միջազգային ֆինանսավորմամբ իրականացվել է 4 դրամաշնորհային ծրագիր (ԻԱՊԻ):

2024թ. դեկտեմբերին բաժանմունքի ինստիտուտներում անցկացվել են տարեկան հաշվետու ժողովներ, որտեղ քննարկվել և հաստատվել են 2024թ. գործունեության մասին հաշվետվությունները:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան

Գիտքարտուղար՝ Ֆ.-մ.գ.թ. Դ.Դավիդովա

Էլեկտրոնային փոստ՝ office@instmath.sci.am

Կայքէջ՝ <http://math.sci.am>

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Դիտարկվել է բացառիկ բազմությունների նկարագրության խնդիրը չափով մետրիկական տարածությունների վրա որոշված օպերատոր հաջորդականությունների համար: Առ օպերատոր հաջորդականությունների վրա դրված որոշակի պայմանների դեպքում տրվում է $U_n(f)$ ֆունկցիոնալ հաջորդականությունների զուգամիտության ու տարամիտության բազմությունների լիովին նկարագրությունը, երբ f -ը պատկանում է L_p դասին: Արդյունքը կիրառվել է դասական անալիզի որոշակի օպերատորների զուգամիտության բազմությունների ուսումնասիրությունում (դեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Գ.Կարագուլյան):

Օգտագործելով Ռիկատիի հավասարման լուծման մեթոդաբանությունը՝ Լեյն-Էմդեն-Ֆաուլերի ու Վան դեր Պոլի տիպի հավասարումների որոշ դասերի համար տրվել են գլոբալ լուծելիության չափանիշներ և ապացուցվել են երկու օսցիլյացիոն թեորեմներ (դեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Հ.Հակոբյան):

Դիտարկվել է $p(d)f=q$ հաստատուն գործակիցներով մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումը, որտեղ p -ն և q -ն մի քանի փոփոխականի ցանկացած բազմանդամներ են: Ապացուցվել է, որ հավասարումն ունի բազմանդամային լուծում, ընդ որում՝ հնարավոր ամենափոքր աստիճանի (դեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Գ.Գևորգյան):

Դիտարկվել են լակունար սպեկտրներով եռանկյունաչափական բազմանդամային համակարգերով շարքերի զուգամիտության հարցերը: Ապացուցվել է, որ նման համակարգի կամայական վերադասավորման համար $(\log n)^{1/2}$ -ը համարյա ամենուրեք զուգամիտության Վեյլի բազմապատկիչն է, ընդ որում՝ բազմապատկիչի այդպիսի աճն օպտիմալ է (դեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Նավոյան):

«Birkhauser, Frontiers of Science» հրատարակչությունում (Շվեյցարիա) հրապարակվել է “Functions of Omega-Bounded Type, Basic Theory” մենագրությունը, որտեղ կառուցված տեսությունները հաստատում են հայկական մաթեմատիկական դպրոցի անվիճելի առաջնայնությունը կոմպլեքս անալիզի մի շատ այժմեական բնագավառում: Մենագրությունում կառուցված տեսությունների ակունքները հայկական մաթեմատիկական դպրոցի հին սկզբնական արդյունքներն են, կա՛մ լիովին նոր են, կա՛մ էլ պարունակում են լուսաբանվող բնագավառի բոլոր հիմնական, ժամանակակից արդյունքները որպես մասնավոր դեպքեր:

Q1 կարգի միջազգային ամսագրում հրապարակվել է ակնարկային հոդված Մ.Ջրբաշյանի ներդրման մասին կոտորակային հաշվի որոշ կարևոր ուղղություններում:

Ամբողջ ֆունկցիաների կամայապես լայն A^p_w տարածություններում ապացուցվել են թեորեմներ Միտտագ-Լեֆլերի ֆունկցիայով կազմված համակարգերի բխորթոգոնալության ու բազիսության մասին:

Ապացուցվել են թեորեմներ Հարդիի H^p տարածությունների մեջ կոմպլեքս հարթության միավոր շրջանում հոլոմորֆ ֆունկցիաների կամայապես լայն A^p_w ($1 \leq p < +\infty$) տարածություններում սահմանափակ պրոեկտորների մասին (ղեկ.՝ ֆ.-մ. գ.դ. Ա.Ջրբաշյան):

Ստացվել են որոշ զուտ երկրաչափական արդյունքներ, որոնք նման են Նևանլինայի ու Աիֆորսի դասական տեսությունների երկրորդ հիմնական թեորեմներին: Այս համանմանները ճիշտ են տրված տիրույթներում կամայական անալիտիկ և կամ մերոմորֆ ֆունկցիաների համար՝ ի տարբերություն Նևանլինայի ու Աիֆորսի դասական տեսությունների, որոնք կիրառելի են այդպիսի ֆունկցիաների միայն որոշ հայտնի ենթադասերի համար:

Սահմանվել է կամայական $P(z)$ բազմանդամի նոր հատկություն՝ կապված դրա ածանցյալի հետ: Ստացվել է, որ կամայական երեք a_1, a_2 և a_3 արժեքների համար կան $|P'(z)|$ -ի ստորին սահմանները, երբ z -ը պատկանում է $P(z)$ -ի a_1, a_2, a_3 կետերի բազմությանը:

Հետազոտվել են $y' = F_1(x, y)$, $x' = F_2(x, y)$ տեսքի հավասարումների հիմնական համակարգի լուծումների պտույտները (ոլորտները): Սա թույլ է տալիս վերադառնալ հայտնի սահմանային ցիկլերի թեմային շատ ավելի լայն տեսանկյունից, մասնավորապես հնարավորություն է տալիս նկարագրել սահմանային ցիկլերի գոյության պայմանները:

Օգտագործելով բոլորովին նոր մեթոդ՝ հետազոտվել են առաջին կարգի հավասարումների հիմնական դասի լուծումների զրոները, ինչը բխում է իրական ֆունկցիաների հետ կապված վերջին սկզբունքից: Առաջին կարգի հավասարումների լուծումների զրոները նախկինում չեն ուսումնասիրվել:

Ուսումնասիրվել է որոշ բավականին ընդհանուր հավասարումների լուծումների զրոների թիվը: Դիտարկված հավասարումները ենթադրում են որոշ մասնակի դիֆերենցիալ հավասարումների ժամանակից անկախ տարբերակներ (այդ թվում՝ Շրոդինգերի, Ֆիշերի, Ջելլոֆիշի, Կորտեզ-դե Վրիսի հավասարումները), ինչպես նաև ենթադրում են որոշ սովորական դիֆերենցիալ հավասարումներ (այդ թվում՝ Էմդեն-Ֆաուլերի, Շտուրմ-Լյուվիլի, Վան դեր Պոլի հավասարումները): Զրոների թիվն ուսումնասիրվել է միայն Շտուրմ-Լյուվիլ տիպի հավասարումների համար (ներառյալ Շրոդինգերի հավասարումները), իսկ վերը թվարկված մյուս հավասարումների համար արդյունքները բոլորովին նոր են (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Բարսեղյան):

Ներմուծվել է Ադամարի փաթեթը կիսահարթությունում: Ցույց է տրվել, որ այն

գոյություն ունի Ադամարի արտադրյալի իմաստով և կոմուտատիվ է կիսահարթության A_a^p տարածությունում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Վաղարշակյան):

Դիտարկվել է $\bar{\partial} f = u$ հավասարումը C^n բազմաչափ կոմպլեքս տարածության ω_n Ջիգելի տիրույթում, որտեղ u -ն C^1 դասի տրված $\bar{\partial}$ -փակ վեկտոր-ֆունկցիա է, իսկ f ֆունկցիան որոնվում է նույն C^1 դասում: Նշված հավասարման լուծումների համար կառուցվել է ինտեգրալ օպերատորների ընտանիք այն դեպքում, երբ հավասարման աջ մասն ունի կոմպակտ կրիչ (ղեկ.՝ ֆ.-մ. գ.թ. Ա.Կարապետյան):

Ապացուցվել է եռանկյունաչափական ուռուցիկության հատկության անալոգն Իվանովի բազմաչափ ինդիկատորի համար՝ $(1, \dots, 1)$ կետի նկատմամբ սիմետրիկ սեկտորային տիրույթներում: Կառուցված օրինակով ցույց է տրվել արդյունքում ստացված գնահատականի ճշգրտությունը:

Հետազոտվել է աստիճանային շարքերի անալիտիկ շարունակելիությունը գործակիցների ինտերպոլացիայի մեթոդով: Ստացվել են պայմաններ ինտերպոլացնող հոլոմորֆ ֆունկցիայի համար, որոնց դեպքում բազմաչափ աստիճանային շարքն անալիտիկ շարունակվում է սեկտորային տիրույթ (ղեկ.՝ ֆ.-մ. գ.թ. Ա.Մկրտչյան):

Դիտարկվել է անկյան մեջ անալիտիկ ու մինչև եզրն անընդհատ տրված ֆունկցիաների լավագույն շոշափումային մոտավորության խնդիրն ամբողջ ֆունկցիաներով: Ստացված արդյունքները ճշգրտում են նախկինում հեղինակի ստացած արդյունքները, որտեղ մոտարկումն իրագործվում էր անկյան ներսում:

Դիտարկվել է անկյան մեջ հարմոնիկ ու մինչև եզրն անընդհատ ֆունկցիայի լավագույն հավասարաչափ ու շոշափումային մոտարկման խնդիրն ամբողջ հարմոնիկ ֆունկցիաներով: Ստացված արդյունքները նոր են, քանի որ անսահմանափակ տիրույթներում այս ուղղությամբ արդյունքներ չկան: Ստացված արդյունքները հնարավոր է կիրառել անկյան մեջ Դիրիխլեի խնդրի լուծման ասիմպտոտիկական հետազոտելու համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Ալեքսանյան):

Ստացվել են Կոշիի տիպի ինտեգրալի տարբեր կարգի ածանցյալների բանաձևային կապերը Վեյլի պոլիէդրների համար (ղեկ.՝ ֆ.-մ. գ.դ. Ա.Պետրոսյան):

Դասական եռանկյունաչափական Ֆուրիեի շարքերի համար կառուցվել են պարամետրիկ բիօրթոգոնալ համակարգեր, հայտնաբերվել է դրանցով իրականացված վերլուծությունների գերզուգամիտության երևույթը: Այստեղ որոշիչ դեր է խաղացել L_2 տարածությունը որպես երկու համապատասխան ենթատարածությունների ուղղանկյուն գումար ներկայացնելը: Արդյունքում առաջարկվել են արագ զուգահեռացված ալգորիթմներ ֆունկցիայի վերակառուցման համար՝ համապատասխան Ֆուրիեի շարքի կտրված մասից (ղեկ.՝ ալ. Ա.Ներսիսյան):

Անբացահայտ դիսկրետ համակարգի համար ապացուցվել է միակության արդյունք՝ սահմանված կապակցված գրաֆների վրա: Այս դիսկրետ համակարգը մոտիվացված է տարածական սեգրեգացիայով ռեակցիա-դիֆուզիոն հավասարումների որոշակի դասից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Առաքելյան):

Ստացվել են պայմաններ, որոնց դեպքում տրված բազմաշերտ դիֆերենցիալ օպերատորն (բազմանդամը) ավելի հզոր է, քան մեկ այլ օպերատոր (բազմանդամ): Սա օգտագործվում է միանդամների գնահատականներ ստանալու համար, որոնք իրենց հերթին օգտագործելով Ֆուրիեի բազմապատկիչների տեսությունը՝ օգտագործվում են ֆունկցիաների ածանցյալների կոերցիտիվ գնահատականներ ստանալու համար՝ այս ֆունկցիաների նկատմամբ կիրառվող դիֆերենցիալ օպերատորի միջոցով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Ղազարյան):

Ուսումնասիրվել են ինտերպոլիացիաները վերջավոր հատվածի վրա, որոնք ճշգրիտ են պոլիհարմոնիկ Նեյմանի սեփական ֆունկցիաների համար: Ուսումնասիրվել են դրանց զուգամիտության հատկությունները: Զուգամիտության արագացման համար կիրառվել է քվադրատիկայի հայեցակարգը, որտեղ բազիսային ֆունկցիաներն ընդլայնված են մի փոքր ավելի մեծ միջակայքի վրա: Ցույց է տրվել, որ այդպիսի ինտերպոլիացիաներն ավելի լավ զուգամիտություն ունեն հատկապես միջակայքի ներսում (դեկ.' ֆ.-մ.գ.թ. Ա.Պոդոյան):

Դիտարկվել են Ռիմանի ու Լեբեգի ինտեգրալների համադրության հարցերը փաթեթի տիպի ինտեգրալ հավասարումների տեսության մեջ ու կիրառություններում: Ներմուծվել է ըստ Ռիմանի անիսկական ուղղակի ինտեգրելիության գաղափարը: Ստացված արդյունքները հնարավորություն են տալիս ընդլայնել Ռիմանի ինտեգրալի դերն ինտեգրալ հավասարումների տեսության մեջ:

Շարունակվել է Վոլտերայի առաջին սեռի ինտեգրալ հավասարումների լուծելիության, լուծման հատկությունների ու կառուցման հարցերի հետազոտումը: Գտնվել են հավասարման լուծման գործընթացի կայունացման հնարավորությունները: Տրվել է սիմետրիկ կորիզով փաթեթի առաջին սեռի հավասարման - պսևդոլուծման գաղափարը: Առաջարկվել են նրա կառուցման եղանակներ՝ հիմնված հեղինակների նախկին արդյունքների վրա (դեկ.' ֆ.-մ.գ.թ. Ն.Ենգիբարյան):

Ուսումնասիրվել են ամբողջ առանցքի վրա Համերշտեյն-Ստիլտեսի տիպի ոչ գծային օպերատորների ոչ տրիվյալ անշարժ կետերի գոյության, միակության, ինչպես նաև դրանց բացակայության հարցերը: Նման օպերատորներով ծնվող հավասարումները, բացի ինքնուրույն մաթեմատիկական հետաքրքրությունից, ունեն նաև կարևոր կիրառական նշանակություն ֆիզիկայի ու կենսաբանության մի շարք բնագավառներում: Ստացվել են բավարար պայմաններ ոչ տրիվյալ, ոչ բացասական, անընդհատ ու սահմանափակ անշարժ կետի գոյության ու միակության համար: Հետազոտվել է լուծման (անշարժ կետի) սովորական ու ինտեգրալ ասիմպտոտիկական $\pm\infty$ -ում: Ստացվել են նաև բավարար պայմաններ ոչ տրիվյալ անշարժ կետի բացակայության վերաբերյալ:

Հետազոտվել են ուռուցիկ ու գոգավոր ոչ գծայնություններով փաթեթի տիպի ինտեգրալ հավասարումների դասեր: Այդպիսի հավասարումները լայնորեն կիրառվում են ք-ադիկ բաց ու փակ լարերի դինամիկ ու գազերի կինետիկ տեսություններում: Կիրառելով հատուկ իտերացիոն մեթոդ՝ հաջողվում է կառուցել այդպիսի հավասարումների ոչ տրիվյալ դրական ու սահմանափակ լուծումը: Ոչ բացասական ու սահմանափակ ֆունկցիաների ենթադասում ապացուցվել է նաև լուծման միակությունը: Ցույց է տրվել անընդհատ լուծմանն անվերջ նվազող երկրաչափական պրոգրեսիայի արագությամբ համապատասխան հաջորդական մոտարկումների հավասարաչափ զուգամիտությունը: Բերվել են կիրառական նշանակություն ունեցող հավասարումների ստույգ օրինակներ, և ստացված արդյունքները կիրառվել են այդպիսի հավասարումների թվային լուծումների կառուցման ուղղությամբ (դեկ.' ֆ.-մ.գ.թ. Ա.Խաչատրյան):

Շարունակվել է Վիներ-Հոփֆի ինտեգրալ առաջին սեռի հավասարումների տարբեր դասերի լուծելիության հարցերի հետազոտությունը: Ստացված առավել կարևոր արդյունքները զեկուցվել են ռուս-հայկական միջազգային գիտաժողովում (դեկ.' ֆ.-մ.գ.թ. Լ.Արաբաջյան):

Շարունակվել են պատահական դաշտերի տեսության ու մաթեմատիկական վիճակագրական ֆիզիկայի հարցերի ուսումնասիրությունները: Առաջարկվել է Գիբսյան պատահական դաշտի զուտ հավանականային սահմանումը, որի հիման վրա հնարավոր է կառուցել Գիբսյան պատահական դաշտերի տեսությունը՝ պատահական պրոցեսների

տեսության մեջ ընդունված սխեմայի համաձայն: Ներկայացվել են նաև այս տեսության ուրվագծերը: Առաջարկվել է պատահական դաշտի ոչ Գիբսյան լինելու արդյունավետ չափանիշը՝ հիմնված ներմուծված պատահական դաշտի պայմանական բաշխումների ֆիլտրացիայի նկատմամբ համակարգի վրա:

Օգտագործելով նախկինում ստացված մեր արդյունքները՝ անցումային էներգիայի դաշտի հայեցակարգի հիման վրա առաջարկվել է կորելյացիոն հավասարումների ընդհանուր համակարգը: Ցույց է տրվել, որ մեկ կետանոց անցումային էներգիայի բավական փոքր արժեքների համար այս համակարգը, դիտարկված անսահման տարածության մեջ, լուծելի է և ունի միակ լուծում (ղեկ.՝ թղթ. անդ. Բ.Նահապետյան):

Դիտարկվել է դասական Գիբսյան կետային պրոցես՝ որոշված բազմաչափ էվկլիդյան R^d տարածության սահմանափակ տիրույթում: Մասնիկները փոխազդում են զույգ պոտենցիալի միջոցով, որը ենթադրվում է կայուն (stable) ու ռեգուլյար: Ուսումնասիրվել է տիրույթում գտնվող մասնիկների թվի ասիմպտոտիկ վարքը, երբ տիրույթն անվերջ մեծանում է: Պոտենցիալի այս լայն դասի համար ստացվել են պայմաններ, երբ տեղի է ունենում կենտրոնական սահմանային թեորեմը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ս.Պողոսյան):

Ուսումնասիրվել են եռանկյունապատումներից սերված մատրիցները, դրանց կիրառումն էլեկտրամագնիսական դաշտի խնդիրների լուծման համար: Կառուցվել է երկչափ էլեկտրամագնիսական դաշտի մաթեմատիկական մոդել (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Սուքիասյան):

Հայտնաբերվել են պայմաններ, երբ երկչափ եզրային խնդիրների թվային լուծման կտոր գծային մոտարկումը հանգեցնում է Դելոնեի ցանցապատման (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Սուքիասյան):

Գտնվել է հարթ կենտրոնական սիմետրիկ ուռուցիկ պատկերի վերականգնման ալգորիթմ (կարծում եմ՝ առաջին անգամ)՝ ըստ պատկերի ուղղորդված լարի բաշխման (երկչափ բաշխում հասկացությունը մտցված մեր կողմից): Օգտվելով ուղղորդված լարի բաշխումից՝ հաջողվել է գտնել այդ պատկերի երկրաչափական մոմենտները, և օգտագործելով մոմենտներով վերականգնման գոյություն ունեցող ալգորիթմը՝ վերականգնել պատկերը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Դիտարկվել են օրթոգոնալ գումարներին առնչվող մի շարք գնահատականներ: Դրանցից մի քանիսը կապված են Խինչինի հայտնի անհավասարության հետ: Մասնավորապես ուսումնասիրվել են Խինչինի անհավասարության որոշ ընդհանրացումները՝ դիտարկելով մարտինգալ տարբերություններ, մուլտիպլիկատիվ համակարգեր ու Ռադեմախեր քառս համակարգեր սովորական Ռադեմախերի համակարգի փոխարեն (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Կարազուլյան):

Ուսումնասիրվել են տոմոգրաֆիայի խնդիրները: Գտնվել է Ռադոնի սֆերիկական ձևափոխության համար նոր շրջման բանաձև ողորկ ֆունկցիաների դասում, որոնց կրիչն ընկած է հարթության մի կողմում: Բանաձևն ունի առավելություն գոյություն ունեցող բոլոր բանաձևերի նկատմամբ նրանով, որ յուրաքանչյուր կետում ֆունկցիայի արժեքը վերականգնելու համար օգտագործում է լոկալ տվյալներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան):

Էվկլիդյան տարածությունում դիտարկվել է բազմաչափ դասական Գիբսյան անվերջ պատահական կետային պրոցես, որում մասնիկները փոխազդում են զույգ պոտենցիալի միջոցով: Սահմանափակ տիրույթում գտնվող մասնիկների քանակի համար ստացվել է կենտրոնական սահմանային թեորեմ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ս.Պողոսյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Jerbashian A.M., Restrepo J.E., “Functions of omega-bounded type. Basic theory”, Frontiers in Mathematics, Birkhauser publishing house, 2024, p. 377. <https://doi.org/10.1007/978-3-031-49885-5>

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Арамян Р.Г., Апинян Л.А., Восстановление эллипса по распределениям хорд по направлениям, Ер., “Вестник Российско-Армянского университета (Серия: физико-мат. и естест.науки)”, N1, 2024, с.17-25.
3. Енгибарян Н. Б., Барсегян А.Г., Уравнение свертки типа Вольтерра первого рода, “Труды ММО”, т. 85, N 1, 2024 с. 24-29.
4. Казарян Г.Г., Коэрцитивные Оценки для многослойно-вырождающихся дифференциальных операторов, М., “Современная математика. Фундаментальные направления”, т.70, N1, 2024, с.99-120.
5. Сукиасян Г.С., Математическая модель двумерного электромагнитного поля, Ер., “Вестник НПУА. Электротехника, энергетика”, N 1, 2024, с. 38-45.
6. Хачатрян А.Х., Хачатрян Х.А., Петросян А.С. , Вопросы существования, отсутствия и единственности решения одного класса нелинейных интегральных уравнений на всей прямой с оператором типа Гаммерштейна-Стилтьеса, Екатеринбург, “Труды ИММ УрО РАН”, т. 30, N 1, 2024, с. 249–269.
7. Хачатрян Х.А., О конструктивной разрешимости одного класса нелинейных интегральных уравнений Гаммерштейна-Вольтерра, Труды XII всеросс. научн. конф. «Математическое моделирование и краевые задачи», Самара, 2024, с. 178-180.
8. Aramyan R., Inversion of the pair of weighted and classical circular Radon transforms in $C(R^2)$, “Journal of Mathematical Analysis and Applications”, v.530, N 2, 2024, pp. 127689. <https://doi.org/10.1016/j.jmaa.2023.127687>
9. Aramyan R., Recovering a function from spherical means in 3D using local data, “Inverse Problems and Imaging”, v.18, N 3, 2024, pp.690-707. doi: 10.3934/ipi.2023050
10. Aramyan R., Reconstruction of a function defined on R^2 from its circular integral transforms, centered on an arc, “Journal of Mathematical Sciences”, v.280, N1, 2024, pp. 1-11. DOI:10.1007/s10958-023-06748-9
11. Aramyan R., Inversion of the two-data circular Radon transform centered on a curve on $C(R^2)$, “Studies in Applied Mathematics”, v. 153, N 2, 2024, e12722. <https://doi.org/10.1111/sapm.12722>
12. Aramyan R., Mnatsakanov R., Aramyan E., Apinyan L., Jafari F., Reconstruction of a planar centrally symmetric convex domain by random chord distribution, “Lobachevskii Journal of Mathematics”, v. 45, N 12, 2024, pp. 28-34.
13. Aramyan R., Aramyan E., Two Crofton formulas in the three-dimensional space, “Proceedings of the YSU, Physical and Mathematical Sciences”, v. 58, N 1, 2024, pp. 1–7.
14. Arakelyan A., Bozorgnia F., Uniqueness of a solution to a general class of discrete system defined on connected graphs, “Nonlinear Analysis”, v. 239, 2024, article 113439.
15. Baghdasaryan A., Bunarjyan T., Poghosyan A., Harutyunyan A., El-Zein J., Knowledge retrieval and diagnostics in cloud services with large language models, “Expert Systems with Applications”, v. 255, Part D: 124736, 2024, pp. 1-10.
16. Barsegian G., Universal version of value distribution theory for functions in a given domain, “Lobachevskii Journal of Mathematics”, v.45, N 8, 2024, pp.3478-3486. <https://doi.org/10.1134/S1995080224604648>
17. Barsegian G., A new property of arbitrary complex polynomials, “Complex Variables and Elliptic Equations”, 2024, pp. 1-8. <https://doi.org/10.1080/17476933.2024.2417367>
18. Barsegian G., On the rotations and limit cycles of solutions to the basic system of equations, “Georgian Mathematical Journal”, v.32, issue 1, 2024. <https://doi.org/10.1515/gmj-2024-2042>
19. Barsegian G., On the zeros of first-order differential equations, “Lobachevskii Journal of Mathematics”, v. 45, N 8, 2024, pp. 3474-3477. <https://doi.org/10.1134/S1995080224604247>
20. Barsegian G., On the zeros of some well-known equations, “Lobachevskii Journal of Mathematics”, v. 45, N 8, 2024, pp. 3463-3473. <https://doi.org/10.1134/S1995080224604211>
21. Engibaryan N., On the combination of Lebesgue and Riemann integrals in theory of convolution equations. “Theor. Math. Phys.”, v. 218, N 1, 2024, pp. 68–74.

22. Grigorian G., Global solvability and oscillation criteria for a class of second order nonlinear ordinary differential equations, Containing Some Important Classical Models, "Bulletin of the Iranian Mathematical Society", 50 (3), 2024.
23. Gharibyan A., Hakopian H., On polynomial solutions of PDE with constant coefficients, in "Proceedings of International Conference Analysis, PDEs and Applications" dedicated to Prof. M.Grigoryan, Y., 2024, pp.7-8.
24. Ghazaryan H., Margaryan V., Comparison of the three-layer polynomials of many variables, "Journal of Contemporary Mathematical Analysis", v.59, 2024, pp.337-348.
25. Harutyunyan A., Poghosyan A., Bunarjyan T., Haroyan A., Harutyunyan M., Harutyunyan L., Baloian N., Discovery of cloud applications from logs, "Future Internet", v. 16, N 6, article 216, 2024, pp. 1-14.
26. Harutyunyan A., Poghosyan A., Bunarjyan T., Grigoryan N., Grigoryan A., Tadevosyan V., Baloian N., Discovery of cloud incidents through streaming consolidation of events across timeline and topology hierarchy, In Proceedings "NOMS 2024-2024 IEEE Network Operations and Management Symposium", Seoul, South Korea, 2024, pp. 1-6.
27. Jerbashian A., Rafayelyan S., Restrepo J.E., Some aspects of the contribution of Mkhitar Djrbashian to fractional calculus, "Fractional Calculus and Applied Analysis", v. 27, 2024, pp. 971-986. <https://doi.org/10.1007/s13540-024-00267-3>
28. Karapetyan A., On extension of weighted spaces of holomorphic functions in the unit bidisc to the unit matrix disc, "Lobachevskii J. Math.", v.45, N 8, 2024, pp.3572-3579.
29. Karapetyants A., Vagharshakyan A., The Hadamard-Bergman convolution on the half-plane, "J. Fourier Anal. Appl.", v. 30, article N 38, 2024. <https://doi.org/10.1007/s00041-024-10097-9>
30. Karagulyan G., On the convergence sets of operators sequences on spaces of homogeneous type, "Sbornik Mathematics", v. 215, 2024, pp. 66-94. <https://doi.org/10.4213/sm10033>
31. Karagulyan G., Sharp inequalities involving multiplicative chaos sums, "Acta Mathematica Hungarica", v. 173, N 2, 2024, pp. 340-351.
32. Khachatryan Kh., Khachatryan A., Narimanyan A., Numerical solutions of some nonlinear integral equations arising in the theory of p-adic strings and physical kinetics. p-adic numbers, "Ultrametric Analysis and Applications", v. 16, N 1, 2024, pp. 43-59.
33. Mkrtchyan A., Vagharshakyan A., Trigonometric convexity of the multidimensional indicator, "Canad. J. Math.", 2024, pp.1-16.
34. Mkrtchyan A., Multivariate analog of the Le Roy-Lindelof theorem about power series analytic continuation, "Lobachevskii Journal of Mathematics", v. 45, N 8, 2024, pp. 3674-3682. <https://doi.org/10.48550/arXiv.2403.17021>
35. Mnatsakanov R., Aramyan R., Jafari F., Reconstructions of piece-wise continuous and discrete functions using moments, "Journal of Mathematical Sciences", 2024. <https://doi.org/10.1007/s10958-024-07175-0>
36. Nersessian A., Super-fast approximation algorithms using classical fourier tools, "Advances in Pure Mathematics", v. 14, 2024, pp. 596-618.
37. Poghosyan A., Poghosyan L., Barkhudaryan R., On an Exact convergence of quasi-periodic interpolations for the Polyharmonic-Neumann Eigenfunctions, "Algorithms", v. 17, N 11, article 497, 2024, pp. 1-30.
38. Poghosyan A., Harutyunyan A., Davtyan E., Petrosyan K., Baloian N., The diagnosis-effective sampling of application traces, "Applied Sciences", v. 14, N 13, article 5779, 2024, pp. 1-29.
39. Poghosyan A., Harutyunyan A., Davtyan E., Petrosyan K., Baloian N., A study on automated problem troubleshooting in cloud environments with rule induction and verification, "Applied Sciences", v. 14, N 3, article 1047, 2024, pp. 1-15.
40. Poghosyan A., Harutyunyan A., Bunarjyan T., Baloian N., Optimizing SaaS solutions for enhanced sustainability and predictive management of cloud assets, In "Proceedings of the 6th Artificial Intelligence and Cloud Computing Conference (AICCC '23), Japan, 2024, pp. 204-210.
41. Sukiasyan H., Matrices generated by triangulation and their application in electromagnetic field problems, "Journal of Mathematical Sciences", N 284, 2024, pp. 562-572.
42. Sukiasyan H., Random sections of convex octahedrons, "Journal of Contemporary Mathematical Analysis (Armenian Academy of Sciences)", v. 59, N 6, 2024, pp. 471-477.

ԳԱԱ «Լավագույն գիտական աշխատանքի համար» մրցույթում Ա.Վաղարշակյանն արժանացել է երկրորդ մրցանակի:

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Լ.Դաշտոյան
Գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Զաքարյան
Էլեկտրոնային փոստ՝ mechins@sci.am
Կայքէջ՝ www.mechins.sci.am

Մասնագիտական խորհուրդ 047՝ «Մեխանիկա»

Նախագահ՝ ակ. Լ.Աղալովյան, գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Սահակյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Առաջարկվել է շփման ուժերի հաշվառումով հարթ հիմքով կոշտ դրոշմի ու առաձգական կիսահարթության հպման խնդրի լուծման նոր մոտեցում: Ի տարբերություն Գալինի հայտնի խնդրի, որտեղ կոնտակտի տիրույթը տրոհվում է հարակցման ու սահքի տեղամասերի՝ այստեղ առաջարկվում է կոնտակտի ամբողջ տիրույթում ընդունել չոր շփման օրենքը, բայց գծայնորեն փոխվող շփման գործակցով: Առաջարկվող մոտեցումը թույլ է տալիս ստանալ խնդրի փակ լուծում, որը քիչ է տարբերվում Գալինի լուծումից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Վ.Հակոբյան):

«Движение деформированного твердого тела» մենագրությունում առաձգականության տեսության սահմաններում շարադրվել է դեֆորմացվող պինդ մարմնի շարժման կինեմատիկական տեսական մեխանիկայի մեթոդների ու շարժումների առանձնացման ասիմպտոտիկ եղանակների կիրառմամբ: Տարբեր կոորդինատական համակարգերում կինեմատիկական մեծությունները ներկայացվել են բացարձակ պինդ մարմնի շարժման կինեմատիկայի շրջանակում՝ ավելացնելով լրացուցիչ անդամներ, որոնք կախված են մարմնի առաձգական հատկություններից: Նման համակարգերի շարժումների բնութագրիչ մեծություններն էապես տարբերվում են բացարձակ պինդ մարմնի կամ մեխանիկական համակարգի շարժման բնութագրիչներից, որոնք չեն պարունակում առաձգական տարրեր (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Ղուկասյան):

Դիտարկվել է հակադիր երկու եզրերը հավասարաչափ բաշխված սեղմող բեռներով բեռնավորված ջերմազգայուն նյութից պատրաստված սալի կայունության խնդիրը, որի ստորին մակերևույթը գտնվում է փոփոխական ջերմային դաշտի ազդեցության պայմաններում, իսկ վերին մակերևույթն ազատ է որևէ ազդեցությունից: Առաձգական բնութագրերի ջերմությունից գծային կախվածության դեպքի համար ստացվել է կայունության դիֆերենցիալ հավասարումը: Թվային ուսումնասիրությունն իրականացվել է հողակապային եզրային պայմանների դեպքում՝ կախված խնդրի նախնական տարբեր պարամետրերից: Ցույց է տրվել, որ ջերմաստիճանի աճը հանգեցնում է կրիտիկական ուժի արժեքի նվազման մինչև 40%: Սալի հաստության ու լայնության հարաբերության տարբեր արժեքների համար ստացվել են կրիտիկական ուժի արժեքները տարբեր ջերմային դաշտերի առկայության պայմաններում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Կ.Սարգսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ուսումնասիրվել է երկու վերջավոր երկարության մետա-ձողերի ստիպողական տատանումների խնդիրը: Մետա-ձողերից մեկի վրա կան պարբերական տեղադրված ներքին հողեր (hinges), իսկ երկրորդն ունի պարբերական տեղադրված ներքին հողեր ու արտաքին հենարաններ: Էյլեր-Բեռնուլիի ձողի տեսության ու տրանսֆեր մարտիցների

մեթոդի հիման վրա ստացվել են պարբերական ձողերի ընդհանուր լուծումներ: Օգտագործելով Բլոխ-Ֆլոկեի տեսությունը՝ դուրս են բերվել լուծումների բացահայտ արտահայտությունները, որոնք նկարագրում են մետա-ձողում ալիքների արգելված հաճախությունները նկարագրող բնութագրիչ հավասարումները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Դ.Փիլիպոսյան):

Մագնիսաակտիվ բարակ թաղանթների համար ստացվել են տատանումների ու կայունության հավասարումներ ու մակերևութային պայմաններ, ձևակերպվել են մաթեմատիկական ֆիզիկայի համապատասխան խնդիրներ: Դիտարկվել է կրկնակի կորության ուղղանկյուն օրթոտրոպ թաղանթի ոչ գծային տատանումների խնդիրը: Ոչ գծային խնդիրների լուծման անալիտիկ մեթոդի հիման վրա ուսումնասիրվել է խնդրի ոչ գծայնության ազդեցությունը տատանողական պրոցեսի բնութագրիչների վրա (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Միկիլյան):

Ձևակերպվել է քառաթև ԱԹՍ-ի տարածական շարժման դիֆերենցիալ հավասարումների գծայնացված մաթեմատիկական մոդելի համար ժամանակի միջանկյալ պահերին ֆազային վեկտորի տարբեր մասերի վրա դրված պայմաններով օպտիմալ ղեկավարման խնդիրը: Ձևակերպվել է լրիվ ղեկավարելիության պայմանը: Մոմենտների պրոբլեմի մեթոդով կառուցվել է օպտիմալ ղեկավարման ֆունկցիան: Առաջարկված մոտեցման կարևորությունը ներկայացնելու համար ստույգ թվային տվյալների դեպքում կառուցվել են օպտիմալ ղեկավարման ու շարժման ֆունկցիաների բացահայտ տեսքերն ու համապատասխան գրաֆիկները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Վ.Բարսեղյան):

Նախագծվել և հետազոտվել է ուղղաձիգ վերթիռով և վայրէջքով նոր տեսակի բազմառոտոր անօդաչու թռչող սարքի կառավարման համակարգ՝ հաշվի առնելով համակարգի մեխանիկական ու կառուցվածքային առանձնահատկությունները: Դենսավիթ – Հարթենբերգի մեթոդի ու Էյլեր-Լագրանժի հավասարումների հիման վրա մշակվել է ԱԹՍ-ի ու նրան կցված երկու ազատության աստիճան ունեցող ռոբոտ մանիպուլյատորի դինամիկայի մաթեմատիկական մոդելը, իրականացվել է մշակված կառավարման համակարգի կայունության ու անցողիկ գործընթացների հետազոտություն (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Վ.Ավետիսյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Baghdasaryan G.Ye., Mikilyan M.A. Magnetoelastic Vibrations and Stability of Magnetically Active Plates and Shells, 2024, Springer, 290p.
2. Агаловян Л.А., Обобщенно-ньютонова теория Всемирного тяготения и Черные Дыры, Ер., “Гитутюн”, 2024, 156 с.
3. Гукасян А.А. Движение деформированного твердого тела, Ер., изд. “Гитутюн НАН РА”, 2024, 189 с.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

4. Aghalovyan L., Generalized Newton's theory of universal gravitation and Black Holes, “Journal of High Energy Physics, Gravitation and Cosmology”, 2024, v.10, pp.126-137.
5. Aghalovyan L., Aghalovyan M., Zakaryan T., Asymptotic behavior of forced vibrations of layered plates, In book: “Selected Problems of Solid Mechanic and Solving Methods”. Advanced Structured Materials, v. 204, Chapter 3, 2024, pp.31-44. (Springer).
6. Avetisyan A., Avetisyan L., Regulation by localization of wave energy along the thickness of a piezoelectric waveguide: problem of optimal control of a three-component electroelastic wave, “Mechanics, Proceed. of NAS RA”, 2024, v.77, N 1, pp.7-17. <https://doi.org/10.54503/0002-3051-2024.77.1-7>

7. Avetisyan A., Ghazaryan K., Marzocca P., Stability of a multi-span current-carrying beam resting on periodic supports and exposed to an external magnetic field, "Journal of Applied Mechanics", ASME, 2024, v.91, 061009-2, <https://doi.org/10.1115/1.4>
8. Avetisyan A., Ghazaryan K., Reflection and refraction of multi-component electro-magneto-elastic waves from the interface of two 6mm class piezoelectrics with different polarization of the medium, "Mechanics, Proceed. of NAS RA", 2024, v.77,N 2, pp.11-24, <https://doi.org/10.54503/0002-3051-2024.77.11-24>
9. Avetisyan A., Mkrtchyan M., Controlling the propagation of an electroacoustic wave in a piezoelectric waveguide by a normal displacement of the electric field, "International Journal of Mechanics and Control", 2024, v.24, N 2, pp.176–182. <https://doi.org/10.1134/S106377102360033X>
10. Avetisyan A., Shahinyan S., Control of the motion of an inverted spherical pendulum on a moving base. Hybrid Impact Approach, "EQUATIONS", 2024, v.4, E-ISSN: 2732-9976. <https://doi.org/10.37394/232021.2024.4.6>
11. Avetisyan A., Khachatryan V., Kamalyan A., Weakened by an infinite system of transverse periodic cracks piezoelectric waveguide as a filter of electroacoustic waves, "Procc. Journal of Physics: Conference Series 2231", 2024, 012025. <http://doi.org/10.1088/1742-6596/2231/1/012025>
12. Avetisyan V., To the problem of controlled guaranteed search for a mobile object on the plane, "Journal of Physics: Conference Series 2231", 2024, 012001. DOI: 10.1088/1742-6596/2231/1/012001.
13. Baghdasaryan G., Mikilyan M., Aero-magneto-elastic interactions in a dielectric plate. In the Book: "Magnetoelastic Vibrations and Stability of Magnetically Active Plates and Shells", Springer, 2024, pp. 239-273. DOI:10.1007/978-3-031-60307-5_7
14. Baghdasaryan G., Mikilyan M., Basic equations and relations of magnetoelasticity of magnetoactive deformable bodies. In the Book: "Magnetoelastic Vibrations and Stability of Magnetically Active Plates and Shells", Springer, 2024, pp. 1-30. DOI:10.1007/978-3-031-60307-5_1
15. Baghdasaryan G., Mikilyan M., Interaction of a superconducting cylindrical shell with magnetic fields. In the Book: "Magnetoelastic Vibrations and Stability of Magnetically Active Plates and Shells", Springer, 2024, pp. 145-179. DOI:10.1007/978-3-031-60307-5_4
16. Baghdasaryan G.Y., Mikilyan M.A. Issues of magnetoelastic interactions in spherical shells. In the Book: Magnetoelastic Vibrations and Stability of Magnetically Active Plates and Shells, Springer, 2024, pp. 181-202. DOI:10.1007/978-3-031-60307-5_5
17. Baghdasaryan G., Mikilyan M.A. The effects of magnetoelastic interactions in soft-magnetic cylindrical shells. In the Book: "Magnetoelastic Vibrations and Stability of Magnetically Active Plates and Shells", Springer, 2024, pp.111-144. DOI:10.1007/978-3-031-60307-5_3
18. Baghdasaryan G., Mikilyan M., Vibrations and stability of magnetostrictive rectangular plates in a magnetic field. In the Book: "Magnetoelastic Vibrations and Stability of Magnetically Active Plates and Shells", Springer, 2024, DOI:10.1007/978-3-031-60307-5_6
19. Baghdasaryan G., Mikilyan M., vibrations and stability of soft ferromagnetic plates in a magnetic field. In the Book: "Magnetoelastic Vibrations and Stability of Magnetically Active Plates and Shells", Springer, 2024, pp.31-109. DOI:10.1007/978-3-031-60307-5_2
20. Barseghyan V., Matevosyan A., Simonyan T., On the completely controllability of one stage by stage changing linear stationary system using a dynamic controller, "International Russian Automation Conference" (RusAutoCon), 2024, pp.808-812. <https://ieeexplore.ieee.org/document/10694207>
21. Barseghyan V., Optimal boundary control of string vibrations with set values of deflection functions and point velocities at different intermediate time instants, "International Applied Mechanics", v.59, N 5, 2024, pp.605-618. <https://link.springer.com/article/10.1007/s10778-024-01245-1>
22. Barseghyan V., Solodusha S., Model of the control problem of the thermal effect of a laser beam on a two-layer biomaterial, "Mathematics", N 12, 2024 , 374. <https://doi.org/10.3390/math12030374>
23. Gevorgyan G., Darbinyan A., On flexural vibrations of orthotropic strips of variable thickness taken into account of transverse effects with elastically built in edges in the presence of axial force, "Journal of Physics: Conference Series 2817", 2024, 012007, doi:10.1088/1742-6596/2817/1/012007
24. Ghazaryan K., Ghazaryan R., Terzyan S., Localized vibrations of homogeneous string with finite number of periodically located scatters, "Mechanics. Proc. of NAS RA", 2024, 77, pp.30-39.

25. Ghazaryan K., Piliposyan D., Jilavyan S., Piliposian G., Localization of shear waves in cubic piezoelectric structure stratified with periodically arranged metallized interfaces, "European Journal of Mechanics - A/Solids", v. 109, 2024, pp.105448. <https://doi.org/10.1016/j.euromechsol.2024.105448>
26. Ghazaryan K., Piliposyan G., Jilavyan S., Piliposian G., Forced vibrations of a finite length meta-beam with periodically arranged internal hinges and external supports, "European Journal of Mechanics A/solids", 2024, v.103, p. 105194.
27. Ghazaryan K., Bandgaps, dynamics and stability of multi-span beam rested on periodically arranged exterior supports, "Reports of NAS RA", 2024, v.124, pp. 7-15.
28. Ghazaryan K., Broadening frequency bandgaps in a beam with periodic internal hinges, external supports and attached masses "Proc.of NAS RA", 3, 2024, pp.18-27. DOI: 10.54503/0002-3051-2024.77.3-18
29. Hakobyan V., Amirjanyan H., Grigoryan A., On the contact of an absolutely rigid stamp with a half-plane taking into account static friction, "J. Phys.: Conf. Ser.", v. 2817, 012004. <https://doi.org/10.1088/1742-6596/2817/1/012005>.
30. Hakobyan V., Amirjanyan A., Hakobyan L., On a contact problem for a homogeneous plane with a finite crack under friction, "Jor.Mechanics of Solids", v. 59, N 2, 2024, pp. 711-722. <https://doi.org/10.1134/S0025654423601593>
31. Hakobyan V., Dashtoyan L., Hakobyan L., On two contact problems for a half-plane with static friction, "J. Phys.: Conf. Ser.", 2024, v.2817, 012004. <https://doi.org/10.1088/1742-6596/2817/1/012004>
32. Hakobyan V., Dashtoyan L., Amirjanyan H., On an indentation of a circular cylindrical punch into an elastic half-space under friction, "Z Angew Math Mech.", v. 104, issue 5, 2024. <https://doi.org/10.1002/zamm.202300743>
33. Hakobyan V., Dashtoyan L., Amirjanyan H., Contact problem for a piecewise homogeneous plane with a finite crack under the static friction. In: "State of the Art and Future Trends in Materials Modelling 2. Advanced Structured Materials", 2024, v.200, pp.243-253. Springer. Cham. https://doi.org/10.1007/978-3-031-72900-3_12
34. Hakobyan V., Sahakyan A., Dashtoyan L., Amirjanyan H., Axisymmetric contact problem for a homogeneous space with a circular disk-shaped crack under static friction, "Jour. of Elasticity", 2024, v. 156, pp. 899-916. <https://doi.org/10.1007/s10659-024-10078-5>
35. Hayroyan S., Grygoryan D., Tigranyan Sh., Khachatryan A. Consistency dependent nature of sliding deformation in swelling soils. ԵՊՀ «Գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագրություն», 2024, v. 58, N 3, pp. 11-20.
36. Kudish I., Sahakyan A., Hakobyan V., Amirjanyan H., Contact problem for an interface crack under action of a moving punch, "Mathematics and Mechanics of Solids", 2024, v.29, issue 11. <https://doi.org/10.1177/10812865241251469>
37. Kurdina S., Gevorgyan H., Analysis of the periodicity of movements of mechanisms with elastic links of variable length, "J. Phys.: Conf. Ser.", 2024, 2817 012029. DOI: 10.1088/1742-6596/2817/1/012029
38. Mikilyan M., Nature of supersonic flutter of aero-magneto-elastic system at pre-critical flowing speeds, "IEEE Aerospace", 2024, IEEE, pp.1-8. 10.1109/AERO58975.2024.10521224
39. Mikilyan M., Hambartsumyan H., Vardanyan I., Influence of magnetic field on the critical speed of supersonic flutter of dielectric plate, "Proceedings of the NAS RA, Mechanics", v. 77, N 2, 2024, pp. 47-67.
40. Mikilyan M., Vardanyan I., The effects of magnetic field on supersonic flutter characteristics of dielectric plate: Dependence amplitude-speed, "Journal of Fluids and Structures", 2024, 128, 104140.
41. Mkhitarian S., Kanetsyan E., Sahakyan V., On the application of a novel approach to solving integral equations of plane contact problems in the theory of elasticity and fracture mechanics, ISSN 1995-0802, "Lobachevskii Journal of Mathematics", 2024, v. 45, N 8, pp. 3656-3672. <https://doi.org/10.1134/S1995080224604442>
42. Mkhitarian S., Matevossian H., Kanetsyan E., Mkrtchyan M., Hypersingular integral equations encountered in problems of mechanics, "Mathematics", 2024, v.12, issue 22. Doi: 10.3390/math12223620
43. Sahakyan A., Contact of the stamp with an elastic half-plane. comparative analysis of models accounting for friction between them. In: "State of the Art and Future Trends in Materials Modelling 2. Advanced Structured Materials", 2024, v.200, Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-031-72900-3_28

44. Valesyan S., Sahakyan A., An experimental research of the influence of the concentrated force application point on the hinge supported beam deflection under the condition of its value constancy in the middle, "J. of Physics: Conference Series", 2024, 2817 012034.
45. Yedoyan V., Sahakyan, A., Kanetsyan, E., On a contact problem of stringer–wedge interaction in antiplane deformation mode, "Mehcanica", 2024, <https://doi.org/10.1007/s11012-024-01756-8>
46. Аветисян В.В., Гаспарян О.Н., Нерсисян Н.Г., Разработка системы управления нового типа БПЛА с вертикальным взлетом и посадкой, Ер., "ДНАН Армении", т. 124, N 1, 2024, с. 12-22. DOI: 10.18720/SPBPU/2/id23-627.
47. Аветисян В.В., Оптимальное по энергозатратам управление электромеханическим манипулятором, Ер., "Изв. НАН РА. Механика", т. 77, N 3, 2024, с. 58-78. DOI: 10.54503/0002-3051-2024.77.3-58
48. Агаян К.Л., Атоян Л.А., Упруго–спиновые волны в двухфазной ферромагнитной конструкции с магнитным экраном, Ер., "Изв. НАН РА. Механика", т.77, N2, 2024, с. 3-9.
49. Акопян В.Н., Амирджанян А.А., Вынужденные колебания полубесконечной пластины с системой параллельных к границе коллинеарных трещин, Ер., "Изв. НАН РА. Механика", т. 77, N 2, 2024, с. 10-24. <https://doi.org/10.54503/0002-3051-2024.77.2-10>.
50. Акопян В.Н., Амирджанян А.А., Вынужденные колебания полубесконечной пластины с системой параллельных к границе коллинеарных трещин и жестких включений, Ер., "Изв. НАН РА. Механика", т.77, N 3, 2024, с. 3-17. <https://doi.org/10.54503/0002-3051-2024.77.3-3>.
51. Акопян Л.В., Даштоян Л.Л.? Контактная задача для плоскости с периодической системой трещина-включение с учетом сил трения под включением, Ер., "Изв. НАН РА. Механика", т. 77, N 1, 2024, с. 18-29 <https://doi.org/10.54503/0002-3051-2024.77.1-18>.
52. Алексанян Р.К., Арутюнян Л.А., Седракан А.М., Плоская задача для внешности кругового сегмента. Slovak international scientific journal vol.80, 2024, с. 34-37. <https://doi.org/10.5281/zenodo.10651872>
53. Арутюнян Л.А., Закарян В.Г., Мартиросян А.В., Плоская задача для составной плоскости со смешанными условиями, Ер., "Сб. научн. тр. Нац. ун-та архитектуры и строительства Армении, т. 3(90), 2024, с. 30-35.
54. Барсегян В.Р., Мкртчян М.Г., Матевосян А.Г., Об одной задаче управления БПЛА по линии визирования, Иркутск, мат. 6-й межд. конф. "Динамические системы и компьютерные науки: теория и приложения (DYSC 2024)" 2024, с.199-202 https://math.isu.ru/export/sites/math/ru/conference/2024/.galleries/docs/materials_DYSC_2024.pdf.
55. Барсегян В.Р., О задачах граничного управления и оптимального управления распределенной неоднородной колебательной системой с заданными промежуточными условиями на функции состояния, М., "Итоги науки и техн. Сер: совр. мат. и ее прил. темат. обзор.", изд. ВИНТИ РАН, т. 232, 2024, с. 13-29, <https://www.mathnet.ru/links/7a4a9d225b29ade7a049477587bb83d3/into1263.pdf>.
56. Барсегян В.Р., Солодуша С.В., Задачи оптимального граничного управления колебаниями струны с промежуточными условиями при минимизации граничной энергии, Екатеринбург, мат. межд. конф. "Динамические системы: устойчивость, управление, дифференциальные игры", изд. ИММ УрОАН, 2024, с. 49-52. http://scdg2024.uran.ru/scdg2024/SCDG2024_Proc_w_cover.pdf.
57. Барсегян В.Р., Солодуша С.В., Задача оптимального управления тепловым воздействием лазерного луча на двухслойный биоматериал, М., "Итоги науки и техн. Сер: совр. мат. и ее прил. Темат. обзор.", изд. "ВИНИТИ РАН", т. 234, 2024, с. 11–20. <https://www.mathnet.ru/links/e633a8264738c2f56a2b1e37bd3fc6df/into1287.pdf>.
58. Барсегян В.Р., Солодуша С.В., Задачи управления и оптимального управления лазерным воздействием на двухслойный биоматериал, М., сб. научн.трудов: XIV всеросс. совещ. по проблемам управления ВСПУ-2024: ИПУ РАН", 2024, с. 231-235.
59. Барсегян В.Р., Солодуша С.В., О задачах оптимального граничного управления колебаниями струны с заданными промежуточными значениями скоростей при минимизации граничной энергии, Иркутск, мат. 6-й межд. конф. "Динамические системы и компьютерные науки: теория и приложения (DYSC 2024)", 2024, с. 99-102. https://math.isu.ru/export/sites/math/ru/conference/2024/.galleries/docs/materials_DYSC_2024.pdf.
60. Барсегян В.Р., Управляемость линейных систем переменной структуры с помощью динамического регулятора, Екатеринбург, "Труды Института математики и механики УрО РАН", N 3, т. 30, 2024, с. 30-44. <https://journal.imm.uran.ru/2024-v.30-3-pp.30-44>.

61. Барсегян В.Р., Об управляемости линейных систем переменной структуры с динамическим регулятором, Екатеринбург, мат. межд. конф. посвященной 100-летию со дня рождения академика Н.Н. Красовского “Динамические системы: устойчивость, управление, дифференциальные игры (SCDG2024)”, изд. ИММ УрОАН, 2024, с.45-48. http://scdg2024.uran.ru/scdg2024/SCDG2024_Proc_w_cover.pdf.
62. Барсегян В.Р., Об управляемости поэтапно меняющихся линейных систем с помощью динамического регулятора, М., сб. научн. тр. XIV всеросс. совещ. по проблемам управления ВСПУ-2024”, 2024, с. 60-64.
63. Барсегян В.Р., Симонян Т.А., Матевосян А.Г., Об одной задаче оптимального управления квадрокоптером с заданным промежуточным значением части координат фазового вектора, СПб., “Дифференциальные уравнения и процессы управления”, N 2, 2024, с. 59-72. <https://diffjournal.spbu.ru/RU/numbers/2024.2/article.1.5.html>.
64. Барсегян В.Р., Симонян Т.А., Матевосян А.Г., Об одной задаче управления квадрокоптером с заданными промежуточными значениями разных частей координат, Тамбов, “Вестник российских университетов. Математика”, т. 145, 29, 2024, с. 29–42. <https://www.mathnet.ru/links/Oed02617481633bc2a21981e7048809a/vtamu311.pdf>.
65. Гукасян А.А., Кинематика деформированного твердого тела в криволинейных координатах, СПб., “Фундаментальные основы механики”, N 14, 2024, с.111-118.
66. Гукасян А.А., О законе Гука, “Journal of Advanced Research in Natural science, Seattle”, USA, Is. 21, 2024, pp. 4-13.
67. Гукасян А.А., Об одном приложении асимптотического метода, СПб., “Мехатроника, автоматика и робототехника”, N 13, 2024, с.23-27.
68. Карапетян К.А., Деформации ползучести в стеклопластиковых элементах: роль разориентации армирования, “Полимеры в строительстве: Научный интернет журнал, N1 (12), 2024, с. 52-54.
69. Мартиросян С.Р., О динамической устойчивости широкой панели с одним свободным краем, нагруженной по двум направлениям: сжатой по потоку газа и растянутой в перпендикулярном направлении, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т.77 (3), 2024, с. 42-57 <http://doi.org/10.54503/0002-3051-2024.77.3-42>.
70. Мартиросян С.Р., Сверхзвуковой флаттер прямоугольной пластинки умеренных размеров со свободным краем, первоначально нагруженной по двум направлениям: сжатой по потоку газа и растянутой в перпендикулярном направлении, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т.77 (2), 2024, с. 25–46. DOI:10.54503/0002-3051-2024.77.2- 25.
71. Мартиросян С.Р., Сверхзвуковой флаттер удлинённой панели со свободным краем, первоначально нагруженной по двум направлениям: сжатой по потоку газа и растянутой в перпендикулярном направлении, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т.77 (1), 2024, с.40-55. DOI:10.54503/0002-3051-2024.77.1- 40.
72. Мкртчян М.М., Мкртчян М.С., О напряженном состоянии кусочно-однородного слоя, взаимодействующего с коллинеарной системой трешин и стрингером при антиплоской деформации, Ер., “Изв. НАН РА. Механика”, т.77, N3, 2024, с. 28-41. <https://doi.org/10.54503/0002-3051-2024.77.3-28>.
73. Саакян А.В., Иной подход к задаче контактного взаимодействия штампа с упругой полуплоскостью при наличии трения между ними, Ер., “Известия НАН РА. Механика”, т.77, N 1, 2024, с. 56-67, <https://doi.org/10.54503/0002-3051-2024.77.1-56>.
74. Саргсян А.М., Плоская задача теории упругости для сектора, радиальная сторона которого взаимодействуют с упругим стрингером с жестким штампом без трения, ч. IV, Anal. L'Italia “Scientific Journal of Italy”, N57, 2024, с. 32-38. <https://doi.org/10.5281/zenodo.12810208>.
75. Саркисян К.С., Авагян Л.Р., Устойчивость и выпучивание пластин из термочувствительных материалов, Ер., «ԱՊՀ Քիմիա», N 2, 2024, с. 12-18.
76. Саркисян С. О., Жамакочян К. А., Саркисян Л. С., Деформационное состояние листа графена в рамках континуальной моментно-мембранной теории упругих пластин. Вычислительная механика сплошных сред, Пермь, т. 17, N 1, 2024, с. 33–43.
77. Саркисян С.О., Жамакочян К.А., Саркисян Л.С., Расчет собственных частот и форм колебаний балки из графена на основе моментно-мембранной теории упругих тонких тел, Великий Новгород, мат. 51 школы-конф. “Актуальные проблемы механики” памяти Д. Индейцева, 2024, с. 214 – 215.

78. Саркисян С.О., Жамакочян К.А., Саркисян Л.С., Устойчивость начально сжатого состояния листа графена по моментно-мембранной теории упругих тонких пластин. Метод конечных элементов, Кремёнки, мат. XXX межд. симп. “Динамические и технологические проблемы механики конструкций и сплошных сред”, т. 1, 2024, с. 189 – 191.
79. Сейранян С.П., Об устойчивости формы прогиба прямоугольной защемленной по контуру пластины к вариации двоякосимметричной поперечной нагрузки, М., мат. XV межд. конф. по прикл. мат. и мех. в аэрокосм. отрасли, 2024, с. 177- 180.
80. Торосян В.С., Погосян А.В., Об исследовании характерных закономерностей изменения скачков на границе прямоугольника в одной известной задаче теории упругости, мат. 6-й межд. конф. «Динамические системы и компьютерные науки: Теория и приложения», Иркутск, 2024, с.70-73. ISBN 978-5-9624-2309-8 <https://doi.org/10.26516/978-5-9624-2309-8.2024.1-224>.
81. Торосян М.С., Стакян М.Г. Изменение микротвердости поверхностно-упрочненных валов в зависимости от режимов упрочнения, Ер., “Вестник НПУА. Механика, машиноведение”, N2, 2024, с.15-23.
82. Шемян Г.Г., Геворкян А.В., Багдасарян Н.Р., К расчету прочности и несущей способности машиностроительных и авиационных конструкционных элементов из композиционных материалов, Ер., “Вестник инженерной академии Армении”, т. XXI, N1, 2024, с. 17-24.
- Հոդվածներ, որոնք լույս են տեսել 2024թ., բայց թվագրված են 2023թ. և դուրս են մնացել 2023թ. հաշվետվությունից**
83. Барсегян В.Р., Солодуша С.В., Оптимальное граничное управление распределенной неоднородной колебательной системой с заданными промежуточными условиями, М., “Итоги науки и техн. Сер: совр. мат. и ее прил. Темат. обоз.” ВИНТИ РАН, т. 230, 2023, с. 25–40. <https://www.mathnet.ru/links/38fd048daf6ffab3b9c08eb593bd3677/into1242.pdf>.
84. Григорян М.Г., Саакян А.В., О взаимодействии концентраторов напряжений типа трещин и упругих стрингеров с упругим клиновидным телом при антиплоской деформации, Ер., “Известия НАН РА. Механика”, т.76, N4, 2023, с. 5-19, <https://doi.org/10.54503/0002-3051-2023.76.4-5>.
85. Avetisyan A., Ghazaryan K., Marzocca P., Stability of a finite length multi-span beam resting on periodic rigid and elastic supports, “International Journal of Solids and Structures”, 2023, v.281, 112410, <https://doi.org/10.1016/j.ijsolstr.2023.112410>
86. Gevorgyan H., Proof of the Collatz Conjecture, “J. Appl. Computat. Math.”, 12 (2023): 540. DOI: 10.37421/2168-9679.2023.12.540.

Պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսություն:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ տեխ.գ.դ. Հ.Ասցատրյան
 Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան
 Գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սահակյան
 Էլեկտրոնային փոստ՝ iiap@sci.am
 Կայքէջ՝ www.iiap.sci.am

Մասնագիտական խորհուրդ 037՝ «Ինֆորմատիկա»

Նախագահ՝ ակ. Յու.Շուքրության, գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.դ. Մ.Հարությունյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Շարունակվել է ինտելեկտուալ համասեռ երամային համակարգերի նախագծման փուլում ավտոմատային հանրահաշվական մոդելների ուսումնասիրությունը: Լրիվ ինֆորմացիայի փոխանակման խնդրի տիրույթում երամի անդամների միջև ձևավորվել է

մոտեցում օրինակի հետ համապատասխանեցման փոխանցումների կիսախմբում խնդիրների լուծման համար (ղեկ.՝ ալ. Յու.Շուրուրյան):

Իրականացվել են վիրուսի տարածման (population) և հարմարվողական իմունային համակարգի համատեղ էվոլյուցիայի մոդելի մի շարք բնութագրիչների անալիտիկ ու էմպիրիկ ճանապարհով արժեքների ստացման հետազոտություններ: Մշակված զուգահեռացված ալգորիթմների հիման վրա իրականացված ծրագրային փաթեթը կփորձարկվի գերհամակարգչի միջավայրում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ս.Պողոսյան):

Հետազոտվել են կարգընթացորեն (ռեկուրսիվորեն) թվարկելի բազմությունների տրոհելիության որոշ տեսակների հատկությունները (կախված նրանից, թե ըստ որ հանգեցման է դիտարկվում համապատասխան տեսակը): Կառուցվում է \hat{P} դաս, որը իզոմորֆ է այնպիսի խնդիրների դասին, որոնք ճանաչելի են դետերմինիստական թյուրինգյան մեքենաների կողմից (դաս P): Նմանակելով հայտնի հասկացությունները՝ սահմանվել են P^{\wedge} -T-միթոտիկություն (ըստ T -հանգեցման), P^{\wedge} -m-միտոտիկություն (ըստ m -հանգեցման) ու համանման այլ հասկացություններ: Ապացուցվել է, որ $\{z \mid W_z \text{ -ը } \hat{P} \text{ - T-միթոտիկ բազմություն է}\}$, $\{z \mid W_z \text{ -ը } \hat{P} \text{ - T -ինքնահանգեցվող բազմություն է}\}$ և $\{z \mid W_z \in \hat{P}\}$ ինդեքսային բազմությունները Σ^3 -լրիվ են: Այնուհետև ապացուցվել է, որ $\{z \mid W_z \text{ -ը } \hat{P} \text{ - m-միթոտիկ բազմություն է}\}$ և $\{z \mid W_z \text{ -ը } \hat{P} \text{ - m -ինքնահանգեցվող բազմություն է}\}$ ինդեքսային բազմությունները նույնպես Σ^3 -լրիվ են (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մոկացյան):

Լավագույն համընկնման փնտրման խնդրի կապակցությամբ հետազոտվել են տարածության տրոհման հիբրիդ-բլոկային կառուցվածքների հնարավորությունները, որոնք մոտավոր կարող են ներկայացվել գնդային ու խորանարդային բլոկների դեկարտյան արտադրյալի տեսքով և կարող են գտնվել պարզ կոմբինատոր եղանակներով: Տրոհման խնդիրը մոդելավորվել է ամբողջարժեք գծային ծրագրավորման միջոցով և օգտագործելով Լագրանժյան դեկոմպոզիցիա՝ հանգեցվել է մասնակի խնդիրների, որոնք դիսկրետ իզոպերիմետրիկ խնդիրներ են, որոնց լուծումը քաջ հայտնի է (ղեկ.՝ թղթ.անդ. Լ.Ասլանյան):

Ներմուծվել է մոնոտոն Բուլյան ֆունկցիաների նոր՝ Nearly KK-MBF դասը, որը KK-MBF (Kruskal-Katona type monotone Boolean function) դասի ընդլայնումն է հետևյալ իմաստով. եթե KK-MBF ֆունկցիայի գրոներն ու մեկերը համապատասխանաբար կազմում են բազմաչափ բինար խորանարդի շերտերի լեքսիկոգրաֆիկ ու հակադարձ լեքսիկոգրաֆիկ սկզբնահատվածները, ապա Nearly KK-MBF դասում թույլատրվում է սկզբնահատվածների խախտում մեկական գրոյով և/կամ մեկով: Հետազոտվել է այս դասի ֆունկցիաների հարցումների միջոցով ճանաչման խնդիրը, տրվել են բարդության գնահատականներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Սահակյան):

Մշակվել է նոր մեթոդ աֆինական $AG(n+1, 3)$ երկրաչափությունում $F_3 = \{0, 1, 2\}$ Գալուայի դաշտի վրա գլխարկների կառուցման համար, երբ P_n -բազմությունը զույգ է, կամ երբ երեք $P_{n_1}, P_{n_2}, P_{n_3}$ -բազմություններից գոնե երկուսը կամ վեց $P_{n_1}, P_{n_2}, P_{n_3}, P_{n_4}, P_{n_5}, P_{n_6}$ -բազմություններից գոնե երեքը զույգ են, որտեղ $n = n_1 + n_2 + n_3$ կամ $n = n_1 + n_2 + n_3 + n_4 + n_5 + n_6$ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ի.Կարապետյան):

Ապացուցվել է հետևյալ թեորեմը. դիցուք D-ն p -գագաթանի ուղղորդված գրաֆ է, որի մինիմալ կիսաաստիճանը փոքր չէ $\left(\left\lceil \frac{p}{2} \right\rceil - 1\right)$ -թվից: Եթե $p \geq 10$ ու $p \neq 11$, ապա D-ն պարունակում է համիլտոնյան շրջանցում (ցիկլ, որը ստացվում է կողմնորոշված համիլտոնյան ցիկլի մեկ աղեղի կողմնորոշումը փոխելուց հետո) (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Դարբինյան):

Դիցուք G-ն n կարգի արեյան խումբ է, $k \geq 2$ ՝ ամբողջ թիվ, իսկ A_1, \dots, A_k -ն G-ի ոչ դատարկ ենթաբազմություններ են: (A_1, \dots, A_k) հավաքածուն կոչվում է k-լուծումներից ազատ

(k -LԱՀ), եթե $x_1 + \dots + x_k = 0$ հավասարումը լուծումներ չունի (A_1, \dots, A_k) հավաքածուում, որտեղ $x_1 \in A_1, \dots, x_k \in A_k$: k -LԱՀ-ների ընտանիքը G -ում նշանակում ենք $S_k(G)$ -ով: $(A_1, \dots, A_k) \in S_k(G)$ հավաքածուն կոչվում է առավելագույն ըստ հզորության, եթե այն առավելագույնն է ըստ $|A_1| + \dots + |A_k|$ -ի և առավելագույն ըստ ներառման, եթե ցանկացած $i \in \{1, \dots, k\}$ և $x \in G \setminus A_i$ -ի համար $(A_1, \dots, A_{i-1}, A_i \cup \{x\}, A_{i+1}, \dots, A_k) \notin S_k(G)$: Դիտարկվել են թվաբանական պրոգրեսիաներից կազմված k -LԱՀ-ներ: Թվաբանական պրոգրեսիաներից կազմված k -LԱՀ-ների համար սահմանենք հետևյալ մեծությունը՝ $\mu_k(G) = |A_1| + \dots + |A_k|$: Ուսումնասիրվել է $\mu_k(G)$ -ի առավելագույն արժեքի խնդիրը: Մասնավորապես ստացվել է $\mu_k(Z_d)$ -ի առավելագույն արժեքը Z_d ցիկլիկ խմբի համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Սարգսյան):

Հետազոտվել է բաղադրյալ գաղտնալսվող կապուղու մոդելը, երբ օրինական հասցեատիրոջ ու գաղտնալսողի կապուղիները փոփոխվում են կախված վիճակներից: Կառուցվել է E- ունակություն-անորոշություն տիրույթի արտաքին գնահատականը, երբ կապուղու վիճակը հայտնի չէ կոդավորիչում ու ապակոդավորիչում: Նման գնահատական ստացվել է նաև ինֆորմացված տերմինալների դեպքի համար: Առաջարկվել է որպես պատկերների որակի չափման մեծություն կիրառել նորմավորված փոխադարձ ինֆորմացիան, որի արդյունավետությունը հիմնավորվել է մի շարք փորձարկումներով՝ համեմատելով այլ հայտնի մեծությունների հետ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Մ.Հարությունյան):

Տվյալների գիտության ու մեքենայական ուսուցման (ՄՈՒ) խնդիրներում մշակվել են նոր մոտեցումներ ու լուծումներ: Մասնավորապես կառուցվել են բացատրելի ալգորիթմներ, որոնք հենվում են Դեմփսթերի-Շեֆերի տեսության վրա և ունեն մեծ կիրառական նշանակություն: Գրականության համակողմանի քննություն է իրականացվել արհեստական բանականության վրա հենված գործիքներում արդարության (fairness) գնահատման վերաբերյալ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Հարությունյան):

Ստեղծվել է պատկերների մշակման նոր մեթոդաբանություն Ռայսի բաշխման օգտագործմամբ: Կատարվել է բաշխման պարամետրերի գնահատման տարբեր ալգորիթմների ճշտությունների համեմատական վերլուծություն (ղեկ.՝ տեխ.գ.թ. Դ.Ասատրյան):

Ուսումնասիրվել են պատկերների վրայից աղմուկի հեռացման եղանակներ, մասնավորապես DnCNN (Denoising Convolutional Neural Network) նեյրոնային ցանցերի միջոցով աղմուկի հեռացման լավարկման եղանակներ: DnCNN-ն բաղկացած է բազմաշերտ կոնվոլյուցիոն ցանցերից, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետորեն սովորել աղմուկի հատկությունները: Ցանցը սովորում է աղմուկը, այլ ոչ թե ամբողջական պատկերը: Սա նշանակում է, որ մոդելը սովորում է կանխատեսել աղմուկը, որն այնուհետև հանվում է մուտքային պատկերից՝ ստանալու մաքուր պատկեր: Եվս մեկ շատ հատնի մոդել՝ DDRM-ը, աշխատում է նախապես ուսուցանված diffusion մոդելներով՝ առանց վերապատրաստման կամ կոնկրետ խնդիրներին հարմարեցման: Սա նվազեցնում է հաշվարկային ծախսերը: Diffusion մոդելների գեներատիվ կարողության շնորհիվ DDRM-ը ստեղծում է բնական ու հստակ պատկերներ՝ հաճախ գերազանցելով ավանդական մեթոդները: Մոտեցումը հիմնված է հավանականության տեսության վրա և ապահովում է մաթեմատիկորեն ճշգրիտ լուծումներ: Փորձ է արվել այս մոդելների հաջորդական կիրառման արդյունքում ստանալ լավարկված պատկերներ: Աշխատանքներն իրականացվել են Տամպերեյի համալսարանի պրոֆ. Կ.Եղիազարյանի հետ համատեղ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Հ.Սարգսյան):

Բուլյան ֆունկցիաների հանրահաշվական ներկայացումը (ANF) հնարավորություն է տվել ուսումնասիրել նրանց որոշ կրիպտոգրաֆիկ հատկություններ վերջավոր դաշտերի վրա: Մասնավորապես բուլյան ֆունկցիաների գծայնության չափանիշը կամ Ուոլշի (Walsh) սպեկտրի կառուցվածքը խոսում են ֆունկցիայի կրիպտոգրաֆիկ պիտանելիության մասին: Դիֆերենցիալ կրիպտանալիզի նկատմամբ կրիպտոկայունություն ունեն այն բուլյան

ֆունկցիաները, որոնք օժտված են, այսպես կոչված, մինիմալ d-uniformity-ով: Այս հատկությունը սահմանվում է բուլյան ֆունկցիաների բոլոր վերջավոր ածանցյալների հիման վրա: Կրիպտոգրաֆիկ ալգորիթմների մեջ բուլյան (վեկտորական) ֆունկցիաների կիրառումը, որոնց d-uniformity-ն 2 է, ապահովում են մաքսիմալ կրիպտոկայունություն դիֆերենցիալ հարձակումներին և կոչվում են համարյա կատարյալ ոչ-գծային (APN) ֆունկցիաներ: Ուսումնասիրվել են համարյա կատարյալ ոչ-գծային (APN) ֆունկցիաների կառուցման եղանակներն ու որոշ հատկություններ: Առաջարկվել է կառուցման նոր եղանակ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Աբրահամյան)

Ընդլայնված զանգվածային սպասարկման մոդելի միջոցով նկարագրվել են բազմապրոցեսորային համակարգի վիճակները, դրանց հավանականությունների համար արտաձվել է հավասարումների համակարգ, որի լուծման համար մշակվել ու ծրագրային իրականացվել է ալգորիթմ: Էքսպոնենցիալ բաշխումներ ունեցող ընդլայնված զանգվածային սպասարկման մոդելի համար մշակվել և իրականացվել է ծրագրային սպասարկման մերժումները մինիմիզացնող ալգորիթմ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան):

Ուսումնասիրվել և իրագործվել է բազմապրոցեսորային համակարգերի ինտեգրումը Zabbix մոնիթորինգի համակարգում: Կատարվել են անհրաժեշտ տվյալների մշակման ու վիզուալացման աշխատանքներ Grafana բազմաֆունկցիոնալ մոնիթորինգի համակարգում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ռ.Թադևոսյան):

Տարրալուծվել են բաղադրամասերի իմացիչների ադեկվատ մոդելների միջուկները, որից հետո այդ բաղադրամասերը համեմատվել են ֆունկցիոնալ անալոգ հայտնի կրկնվող դասակարգիչների հետ: Վերլուծվել են 1/2-տեղանոց դասակարգիչների ձևավորման ալգորիթմները՝ դրանց ծագման հնարավոր հուշումների հայտնաբերման համար: Ուսումնասիրվել է մեքենաների անգլախոս փորձագետների բնական լեզվի (NL) իմաստի ուսուցման LEMP (Learning Expert Meaning Processing) եղանակը: LEMP-ի բարդությունը հաղթահարելու նպատակով ուսումնասիրվել են շախմատի ռազմավարությունների իմաստները: Ուսուցման գործընթացի շախմատի փորձագետների ռազմավարությունների դասակարգիչները խմբավորվել են ըստ բարդության և ուսուցանվել RGT Solver համակարգում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Է.Պողոսյան):

Հետազոտվել և մշակվել են DNS համակարգի master, slave և resolver տարաբաշխված սերվերների համար նոր լուծումներ: Հետազոտվել, մշակվել և իրականացվել են էլեկտրոնային փոստի հակասփամային ու հակավիրուսային պաշտպանության արդյունավետությունը բարձրացնող արդի մեթոդները: Վեբ կայքերի հոսթինգային համակարգի պաշտպանության համար մշակվել են լրացուցիչ նոր մեխանիզմներ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Պետրոսյան):

Ուսումնասիրվել է Վ.Ֆելլերի թեորեմում նորմալացնող հաստատունների վարքագիծը անվերջության վրա «ծանր» պոչերով անկախ նույնականորեն բաշխված պատահական փոփոխականների գումարների բաշխումների կոնվերգենցիայի վերաբերյալ: Ապացուցվել է, որ այս ձևակերպման մեջ նորմալացման հաստատունը ճիշտ է փոխվում անսահմանության ժամանակ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Զիթյան):

Հետևյալ գիտական խնդիրների լուծման համար իրականացվել են տվյալների մշակման ու օպտիմալացման մեթոդներ, հարթակներ, ծառայություններ ու ալգորիթմներ՝ օգտագործելով բարձր արտադրողականությամբ հաշվողական ու ամպային ենթակառուցվածքներ:

- Ամպային ու բարձր արտադրողականության ամպային պահոցներ – գնահատվել են բաշխված պահեստավորման ու ամպային օբյեկտների պահպանման աշխատանքի տարբեր մոտեցումներ: Ծախսերի արդյունավետության ու կատարողականի վերլուծությունը

ապացուցում է, որ ամպի մեջ ինտեգրված հաշվարկները կարող են առաջարկել ավանդական պահեստավորման լուծումների մասշտաբային այլընտրանք:

- Քվանտային հաշվարկներ - ավանդական թվային ու Nureal Network (NN) մեթոդները, որոնք աշխատում են կոմպլեքս թվերի հետ, գնահատվել են քվանտային մեխանիկայի քվանտային երկաստիճան համակարգում սովորական դիֆերենցիալ հավասարումների լուծման համար: Փորձերն ապացուցել են երկու մոտեցումների արդյունավետությունը՝ կախված ճարտարապետության բնութագրերից ու ցանցի պարամետրերից:

- Աստղագիտական ենթաօբյեկտների դասակարգման համար ամպերի վրա հիմնված մեքենայական ուսուցման ծառայություն – մշակվել է ամպի վրա հիմնված համապարփակ ծառայություն՝ առարկաները սպեկտրային դասերի ու ենթատիպերի դասակարգելու համար՝ կենտրոնանալով ածխածնային աստղերի, սպիտակ թզուկների/ենթագաճաճների ու Մարկարյան (ուլտրամանուշակագույն ճառագայթման ավելցուկ) գալակտիկաների վրա, որոնք հիմնական օբյեկտներն են DFBS-ում: Օգտագործելով ամպային հաշվարկի հզորությունը՝ այն արդյունավետորեն լուծում է հաշվողական պահանջները, որոնք կապված են DFBS-ի լայնածավալ տվյալների վերլուծության հետ:

- Գծային հանրահաշիվ – իրականացվել է LU, QR և Cholesky ֆակտորիզացիաների կատարման գնահատում գրաֆիկական պրոցեսորների տարբեր ճարտարապետությունների համար MAGMA 2.6.0 գրադարանի միջոցով: Միջին հաշվով, կոմպլեքս թվերով մատրիցների համար մեկ ճշտությամբ կատարումը 1,5 անգամ ցածր է կրկնակի ճշտությամբ, մինչդեռ LU ֆակտորիզացիայի դեպքում մեկ ճշտությամբ կատարումը 2 անգամ ցածր է կրկնակի ճշտությամբ (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Ասցատրյան):

Շարունակվել են բարդ համակարգերի, մասնավորապես պոլիմերային ու պոլիմեր/մակերևութային ակտիվ նյութ ու ամինաթթուներ միացությունների կլանման առանձնահատկությունների ուսումնասիրությունները մետաղական նանոթաղանթների մակերեսին: Համակարգչային փորձերը կատարվել են GROMACS ծրագրային փաթեթի օգնությամբ, բարձր արտադրողականության մեքենաների վրա, իսկ որպես ուսումնասիրության մեթոդ ընտրվել է մոլեկուլային դինամիկայի (ՄԴ) մեթոդը: Որպես համակարգչային ռեսուրս օգտագործվել են ԻԱՊԻ-ում գործող գերհզոր գրաֆիկական քարտերով զինված մեքենաները, ինչպես նաև «Ազնավուր» գերհզոր հաշվողական ռեսուրսը: Մշակման փուլում է նաև առցանց գործիքների միջավայրը, որը գործելու է <http://mdesigner.bioinformatics.am> հասցեով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Պողոսյան):

OpenAi-ի Assistants API-ի միջոցով ստեղծվել է հայալեզու չատ ասիստենտ, որը նախապես մշակված տեքստային տվյալների հիման վրա կարողացել է զրուցել և անհրաժեշտ տվյալներ ստանալ օգտատիրոջից: Ուսումնասիրություններ են տարվել հայերենի համար BERT դասի լայն շրջանակներում կիրառման մոդելների ստեղծման համար անհրաժեշտ տվյալների ու գործիքակազմի ուղղությամբ: Ուսումնասիրվել են հայալեզու վիքիպեդիայում եղած տվյալները և դրանց պոտենցիալ կիրառման հնարավորությունը հայերենով BERT դասի լայն շրջանակներում կիրառման մոդելների ստեղծման համար: Ուսումնասիրվել են քիչ էլեկտրոնային տեքստային տվյալներ ունեցող լեզուների համար BERT դասի լայն շրջանակներում կիրառման մոդելի ստեղծման տարբեր մոտեցումներ: Վերամշակվել են հայալեզու վիքիպեդիայից վերցված նյութերը BERT մոդելի ուսուցում կազմակերպելու համար (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Գյուրջյան):

Իրականացվել են նախորդ տարիներին սկսված ու շարունակական բնույթ կրող հետևյալ աշխատանքները՝ արտասահմանյան պարբերականներում հայաստանյան գիտնականների ու հետազոտողների հրապարակումների գիտաչափական վերլուծություն, հայաստանյան գիտական ամսագրերի մատենաչափական նկարագրություն և

հեղինակների ու կազմակերպությունների նույնականացում (ստացված շտեմարանները հումք են ծառայում Գիտական հղման հայկական ցուցիչի համար), Российский индекс научного цитирования գիտական շտեմարանում գետնելվել են Mathematical Problems of Computer Science ամսագրի վերջին տարիների համարները (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Շ. Սարգսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Ինքնակազմակերպվող ԱԹՍ-երի երամի խելացի ամպային հիմնահարթակ՝ բազմա-ազենտային ալգորիթմների և համակարգերի ներգրավմամբ» նախագծի (ղեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Ասցատրյան) նպատակն է մշակել և ներդնել ինքնակազմակերպվող անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) երամի գործարկման ու կառավարման օպտիմալորեն բաշխված ծրագրաապարատային ամպային համակարգ՝ բազմաազենտային մոդելավորման ու երամի բանականությանը (swarm intelligence) միտված ալգորիթմների ու ձևայնացված մեթոդների ներգրավմամբ: Մշակվել է ամպային հիմնահարթակ, որը բաղկացած է ինքնակազմակերպվող ԱԹՍ երամի հաշվողական միջավայրից, ամպային հաշվողական միջավայրից, ՊՏ սպասարկման մակարդակներից: Հարթակն իրականացվել է հայկական ամպային հետազոտական ենթակառուցվածքի ռեսուրսների հենքի վրա: Առաջարկվող ամպային հիմնահարթակի հետ օգտագործողը փոխգործակցում է ՊՏ ծառայության մակարդակում՝ ինքնակազմակերպվող ԱԹՍ երամի տեսաբերմանը, կազմաձևմանն ու կառավարմանը միտված գործիքաշարի ու գործառույթների միջոցով: Տեղանքի քարտեզի կոնֆիգուրատորն ԱԹՍ երամի նավիգացիայի ու առաջադրանքների կատարման նպատակով այդ քարտեզների ստեղծման ու փոփոխման կրիտիկական գործիք է, որն օգտագործողին հնարավորություն է տալիս որոշակիացնել խոչընդոտները, թիրախային կետերը, թռիչքուղիները և օպտիմալացնել երամի վարքը:

«Արբանյակային նավիգացիոն համակարգի բացակայության պայմաններում ինքնակազմակերպվող անօդաչու թռչող սարքերի երամի առաջադրանքների իրականացման ապարատածրագրային համակարգի մշակում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ս. Պողոսյան) անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) երամի կողմից տեղանքի մշտադիտարկման ու առաջադրանքների կատարման նպատակով նախատեսվում է ընդլայնել մեր կողմից մշակված կոլեկտիվ արհեստական բանականությամբ օժտված ինքնակազմակերպվող ԱԹՍ-ների երամի մոդելավորման համակարգը՝ ներգրավելով տեսական նոր արդյունքներով հիմնավորված բանական ալգորիթմներ: Ինֆորմացիայի փոխանակման օպտիմալ ու վթարակայուն սխեմաների կառուցման մեր մեթոդներն ու ալգորիթմները կհամալրվեն նոր տեսական արդյունքներով, կապացուցվի k-վթարակայուն gossip գրաֆների համար զանգերի նվազագույն քանակի վերաբերյալ մեր հիպոթեզը, որն առաջօր բաց խնդիր է: Հաղորդակցման անվտանգությունը երամի թռիչքի ողջ ընթացքում ապահովվելու է ներդրված գաղտնի հաշվարկների ու երամի ԱԹՍ-ների խիստ նույնականացման միջոցով: Առաջադրանքների կատարումն ապահովվելու է արբանյակային կապի բացակայության կամ ակտիվ խլացման պայմաններում՝ առանց արտաքին ուղղակի կառավարման որևէ միջոցի ներգրավման: Այդ նպատակով պտուտակավոր ԱԹՍ-ների համար կմշակվի երամի անխափան թռիչքի ապահովման մի քանի մեթոդ: Ստացված արդյունքները, որպես առանձին հանգույց, կինտեգրվեն «ՏԵՍԱ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԻ մշակած «ԿԻԵՏ 1» տիպի ԱԹՍ-ներում: Լուծումների արդյունավետությունը կհետազոտվի ԱԹՍ-ների երամային թռիչքի պայմաններում: Կազմվել են տեխնիկական առաջադրանքները, բաժանվել են մասնակիցներին:

«Ճշգրիտ կառուցվող պատահական շրջակայքով քվանտային համակարգեր, դրանց մոդելավորումը և 3D տեսայնացումը» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան) կոմպլեքս հավանական ընթացքում, որը բավարարում է Լանժեն-Կլեյն-Գորդոն-Ֆոկ տիպի պատահական հավասարմանը, կառուցվել է քվանտային քրոմոդինամիկայի ռելյատիվիստիկ ինվարիանտ տեսություն երեքկլարկանի նուկլոնների համակարգերի համար, որը հաշվի է առնում կվարկների ասիմպտոտիկ ազատության պայմանը, կիրիալ համաչափության խախտումը, գունավոր կվարկային ծովի առաջացումը: Քվարկային համակարգի ալիքային ֆունկցիայի և այլ պարամետրերի մաթեմատիկական սպասումները կառուցվել են երկչափ ինտեգրալային պատկերացումների տեսքով:

«Ռադիոպատկերների միջոցով վերգետնյա շարժվող նշանակետերի դասակարգում» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Սարգսյան) ռադիոպատկերների միջոցով ռադիոլոկացիոն կայանների կողմից հայտնաբերված թիրախների տիպորոշման համար մշակվել են տվյալների պիտակավորման գործիքակազմեր: Փորձարկվել են մի շարք «համակարգչային տեսողության» ճարտարապետություններ ու մոդելներ: Հետազոտությունների արդյունքում դիտարկվել են դասական ճարտարապետություններ, կոնվոլյուցիոն ցանցեր: Առանձնակի ուշադրության է արժանացել դեֆորմացվող կոնվոլյուցիոն նեյրոնային ճարտարապետությունը՝ համադրված ինքնակոդավորվող ճարտարապետության հետ: Շարունակվում են (2+1)D կոնվոլյուցիոն նեյրոնային ցանցերի ու ժամանակային դեֆորմացվող կոնվոլյուցիոն ճարտարապետությունների մշակման աշխատանքները: Մշակվել են հաջորդականությունների վերլուծության ճարտարապետություններ, որոնք կիրառվել են թիրախի շարժման դինամիկա պարունակող ռադիոպատկերների մշակման համար: Առկա տվյալների վրա մշակված մոդելները ցուցադրել են բարձր արդյունքներ:

«Հայաստանյան հետազոտությունների գնահատման համակարգի մշակում» հիմնված գիտաչափական մոտեցման վրա» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.թ. Շ.Սարգսյան) շարունակվել են քննարկումներն իտալացի գործընկերների հետ: Ստեղծվել է 2 շտեմարան (հայաստանյան բուհերի և ԳԱԱ գիտական կազմակերպությունների գիտական ու գիտամանկավարժական կադրերի համար):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Асланян Л., Тяжела ноша величия (The burden of greatness is heavy), Юрий Иванович Журавлёв. Распознавая образ, М., изд. “Буки Веди”, 2024, 512 с.

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

2. Սահակյան Հ.Ա., Դիսկրետ մաթեմատիկայի գործիքներ, Ե., «Գիտություն» հրատ., 2024, 111 էջ:
3. Սահակյան Վ.Գ., Բարդ համակարգերի մոդելավորում, Ե., «Գիտություն» հրատ., 2024, 77 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

4. Abrahamyan R., Belotserkovsky A., Lukashevich P., Gevorgyan A., Grigoryan H., Astsatryan H., Scientific gateway for evaluating land-surface temperatures using landsat 8 and meteorological data over Armenia and Belarus, “Pattern Recognition and Image Analysis”, v. 34, N 2, 2024, pp. 225–236. doi: 10.1134/S1054661824700020
5. Aslanyan L., Sequential data classification under dynamic emission, “Pattern Recognition and Image Analysis”, v.34, issue 1, 2024. (SCOPUS, Q3)
6. Aslanyan L., Shoukourian Yu., Special Issue “Selected Papers of the 14th International Conference Computer Science and Information Technologies”, CSIT2023, “Pattern Recognition and Image Analysis”, v. 34, issue 1, 2024. (SCOPUS, Q3)

7. Aslanyan L., Katona G., Sahakyan H., Shadow minimization boolean function reconstruction, "Informatica", v.35, 1, 2024, pp.1-20. DOI 10.15388/24-INFOR542, (SCOPUS, Q2)
8. Aslanyan L., Sahakyan H., Katona G., Identification of k-distance monotone boolean functions, "Summit280", Alfréd Rényi Institute of Mathematics, Janos Bolyai Mathematical Society, Hungary, 2024. Booklet of abstracts, HUN-REN, p.8, [https://conferences.renyi.hu/uploads/Abstract_Booklet_Summit280_\(9\).pdf](https://conferences.renyi.hu/uploads/Abstract_Booklet_Summit280_(9).pdf)
9. Aslanyan L., Sahakyan H., On logical analysis of transition structure of agents, ISSN 0361-7688, "Programming and Computer Software", 2024, v.50, Suppl. 1, pp.S69–S74. (SCOPUS, Q3)
10. Aslanyan M., On mobile pose estimation and action recognition design and implementation, "Pattern Recognition and Image Analysis", v.34, issue 1, 2024, pp.126-136. (SCOPUS, Q3)
11. Astsatryan H., Babayan S., Mickaelian A., Mikayelyan G., Astsatryan M., Cloud-based machine learning service for astronomical sub-object classification: case study on the first Byurakan survey spectra, "Data Science Journal", v.23, 2024, pp.1-14. DOI: <https://doi.org/10.5334/dsj-2024-006>
12. Atashyan A., Lazyan A., Hayrapetyan D., Astsatryan H., Poghosyan V., Poghosyan S., Shoukourian Yu., Mission preparation for self-organizing UAV swarms on multi-user platform, Springer "Programming and Computer Software", 2024, v.50, Suppl. 1, pp.S39-S46. doi: 10.1134/S0361768824700397 (SCOPUS, Q3).
13. Darbinyan S., A new sufficient condition for a 2-Strong digraph to be Hamiltonian, "Discrete Mathematics and Theoretical Computer Science", 2024, v.26:2 #7. doi.org/10.46298/dmtcs.11560 (SCOPUS, Q2)
14. Darbinyan S., On Hamiltonian cycles in a 2-strong digraphs with large degrees and cycles, "Pattern Recognition and Image Analysis" v.34, issue 1, 2024, pp.62-73. doi.org/10.1134/S105466182401005X (SCOPUS, Q3)
15. Gevorkyan A., Bogdanov A., Mareev V. General three-body problem in conformal-euclidean space: new properties of a low-dimensional dynamical system, "Particles", 2024, v. 7, pp. 1038–1061. <https://doi.org/10.3390/particles7040063> (Q2)
16. Gevorkyan A., Bogdanov A., Quantum chromodynamics of the nucleon in terms of complex probabilistic processes, "Symmetry", 2024, 16(3), p. 256. <https://doi.org/10.3390/sym16030256> (Q2)
17. Gichunts E., Performance of linear algebra factorization in multi-accelerator architectures, "Mathematical Problems of Computer Science", v. 61, 2024, pp. 62-69.
18. Grigoryan S., Naghashyan Z., Adequacy and application of models of cognizing by combinatorial games, "Mathematical Problems of Computer Science", v. 62, 2024, pp. 25–42.
19. Gyurjyan M., Hayrapetyan A., Approach and challenges of training an Armenian version of BERT language model, "Mathematical Problems of Computer Science", v. 62, 2024, pp. 59–71.
20. Harutyunyan A., Poghosyan A., Bunarjyan T., Grigoryan N., Grigoryan A., Tadevosyan V., Baloian N., Discovery of cloud incidents through streaming consolidation of events across timeline and topology hierarchy, "Proc. IEEE Network Operations and Management Symposium" (NOMS), Seoul, 2024, pp. 1-7. doi: 10.1109/NOMS59830.2024.10575213
21. Haroutunian M., Outer bound for E -capacity-equivocate region of compound wiretap channel, "Pattern Recognition and Image Analysis", 2024, v. 34, N 1, pp. 137–143. DOI: 10.1134/S1054661824010073 (Scopus, Q3)
22. Haroutunian M., Margaryan A., Mastoyan K., New approach for online voting ensuring privacy and verifiability, "Programming and Computer Software", 2024, v. 50. suppl. 1, pp. S60-S68. DOI: 10.1134/S0361768824700427 (Scopus, Q3)
23. Haroutunian M., Asatryan D., Mastoyan K., Analyzing the quality of distorted images by the Normalized Mutual Information measure,"Mathematical Problems of Computer Science", 2024, v.61, pp.7-14. DOI: 10.51408/1963-0111
24. Haroutunian M., Mastoyan K., Margaryan A., A simple e-voting system ensuring identification, privacy and verifiability, IX intern. scientific conf. "Industry 4.0", Varna, Bulgaria, 2024, v. 1, pp. 150-153. Reprint in International scientific journal "Industry 4.0", issue 9, v. 2, 2024, pp. 78-81.
25. Ishkhanyan H., Poghosyan A., Pedersen J., Otzen D., A rapid transition in the unfolding of ubiquitin at high SDS concentrations, "Bulletin of the American Physical Society", APS March Meeting, 2024, N 27, 00010.
26. Karapetyan I., Karapetyan K., Complete caps in Affine Geometry $AG(n, 3)$, "Pattern Recognition and Image Analysis", v.34, issue 1, 2024, pp.74–91. <https://doi.org/10.1134/S1054661824010097> (SCOPUS, Q3)

27. Lalayan A., Astsatryan H., Poghosyan S., Giuliani G., Optimized multi-modular services: Empowering Earth observation data processing, "Informatica", v.35, issue 2, 2024, pp.1-16. doi: 10.15388/24-INFOR551 (SCOPUS, Q2)
 28. Mokatsian A., On the proof of the existence of nontotal partial degree and on the turing degree of representative of this partial degree , "Mathematical Problems of Computer Science", v. 62, 2024, pp. 17-24.
 29. Nikoghosyan Zh., Large cycles in graphs around Bondy's and Jung's conjectures - Modifications and sharpness, and perspectives, "Pattern Recognition and Image Analysis", v. 34, issue 1, 2024, pp.49-61. (SCOPUS, Q3)
 30. Papyan N., Kulhandjian M., Kulhandjian H., Aslanyan L., AI-based drone assisted human rescue in disaster: Challenges and opportunities, "Pattern Recognition and Image Analysis", v.34, issue 1, 2024, pp.169-186. (SCOPUS, Q3)
 31. Poghosyan A., Harutyunyan A., Davtyan E., Petrosyan K., Baloian N., A study on automated problem troubleshooting in cloud environments with rule induction and verification, "Applied Sciences", 2024, v.14, 104. <https://doi.org/10.3390/app14031047> (Q2-Scopus)
 32. Poghosyan A., Abel S., Koetz J., The interaction of AOT reverse micelles with Au-PEI nanocluster in hexane: A molecular dynamics study, "Colloids and Surfaces A: Physicochemical and Engineering Aspects 691", 133876, 2024, Q1, Scopus indexing, DOI:10.1016/j.colsurfa.2024.133876.
 33. Pogossian E., Promoting origination of non-cellular cognizers, ISSN 1054-6618, "Pattern Recognition and Image Analysis", 2024, v. 34, N 1, pp. 158–168. <https://doi.org/10.1134/S1054661824010164> /Q3/
 34. Pogossian E., A model of cognizing supporting the origination of cognizing in nature, "AAAI Symposium on Human-Like Learning", Stanford, USA, 2024, pp. 576-578. DOI: <https://doi.org/10.1609/aaais.v3i1.31282>
 35. Sahakyan H., Aslanyan L., Katona G., The Deadlock resolving sets of KK-MBF class, and cardinality estimates, Summit280, Alfréd Rényi Institute of Mathematics, Janos Bolyai Mathematical Society, Hungary, 2024, Booklet of abstracts, HUN-REN, pp. 40-41, [https://conferences.renyi.hu/uploads/Abstract_Booklet_Summit280_\(9\).pdf](https://conferences.renyi.hu/uploads/Abstract_Booklet_Summit280_(9).pdf)
 36. Sahakyan H., Aslanyan L., Alternative approaches of solving discrete tomography, ISSN 0361-7688, "Programming and Computer Software", 2024, v. 50, suppl. 1, pp. S75–S81. (SCOPUS, Q3)
 37. Sahakyan H., Some discrete tomography problems in hypergraph model interpretation, "Pattern Recognition and Image Analysis", v. 34, issue 1, 2024, pp. 116–125 (SCOPUS, Q3).
 38. Sahakyan V., Tadevosyan R., Vardanyan A., Model of a System for Servicing Multiprocessor Tasks without a Queue, «Programming and Computer Software», v. 50, suppl.1, 2024, pp. S47–S50. DOI: 10.1134/S0361768824700403 (SCOPUS, Q3).
 39. Sargsyan R., Sahakyan R., Gazazyan E., Sargsyan Sh., Sarsyan S., Astsatryan H., Evaluation of differential equation solutions through traditional techniques and neural networks in quantum simulations, "Springer Programming and Computer Software", 50 (Suppl 1), 2024, pp. S82–S88. (SCOPUS, Q3)
 40. Sargsyan V., Maximal k-Sum-Free collections in an Abelian group, "Pattern Recognition and Image Analysis", v. 34, issue 1, 2024, pp. 40-48. (SCOPUS, Q3)
 41. Vardanyan A., Advanced queueing model of a multiprocessor computing system, "Mathematical Problems of Computer Science", 2024, v. 62, pp. 43–51.
 42. Yengoyan A., Gomktsyan T., Pivazyany V., Ghazaryan E., Shainova R., Karapetyan A., Avetyan D., Aslanyan L., Baroyan K., Tuzikov A., Sargsyan M., Baghdasaryan B., Bayramyan N., Hakobyan S., Poghosyan A., Avetisyan A., Avagyan H., Hakobyan L., Karalyan Z., Study of different heterocycles showing significant anti-severe acute respiratory syndrome 2 activity in vitro and in vivo, "Veterinary World", 17(6), 2024, pp. 1281–1290. (SCOPUS, Q2)
- Հոդվածները հրատարակվել են «CODASSCA 2024» միջազգային աշխատաժողովի նյութերի «Data Science and Reliable Machine Learning» ժողովածուում, Logos Verlag (Գերմանիա) հրատ., 2024, 156 էջ, DOI 10.30819/5855**
43. Baloian N., Davtyan E., Petrosyan K., Poghosyan A., Harutyunyan A., Peñafiel S., Embedded interpretable regression using Dempster-Shafer theory, pp.131-136.
 44. Baloyan A., Aramyan A., Baloian N., Poghosyan A., Harutyunyan A., Peñafiel S., An empirical analysis of feature engineering for Dempster-Shafer classifier as a rule validator, pp. 143-152.

45. Haroutunian M., Outer bound for rate-reliability-equivocation region of compound wiretap channel with informed terminals, pp. 1-6.
46. Luther W., Harutyunyan A., Fairness in the use of medical online tools, pp. 109-119.
47. Mikayelyan A., Harutyunyan A., Exploring design aspects of an AI-supported farming platform, pp. 120-124.
48. Tarkhanyan A., Harutyunyan A., Improving the DSGD classifier with an initialization technique for mass assignment functions, pp.137-142.
49. Valdivia R., Baloian N., Chahverdian M., Adamyan A., Harutyunyan A., An explainable clustering algorithm using Dempster-Shafer theory, pp. 126-130
Հոդվածները հրատարակվել են «Многомерный статистический анализ, эконометрика и моделирование реальных процессов» им. С.Айвазяна XI միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԵՊՀ հրատ., 2024, 164 էջ, DOI: 10.33276/978-5-8211-0828-9
50. Gevorkyan A., Mathematical expectations of nucleon parameters in terms of complex probabilistic processes, pp.65-69.
51. Davtyan T., The estimation of the term risk premium of the yield curve based on the uncertainty of rate evolution, Multivariate statistical analysis, econometrics and simulation of real processes, pp.47-51
Հոդվածներ, որոնք լույս են տեսել 2024թ., բայց թվագրված են 2023թ. և դուրս են մնացել 2023թ. հաշվետվությունից
52. Poghosyan S., Poghosyan V., Abrahamyan S., Lazyan A., Astsatryan H., Alaverdyan Y., Eguiazarian K., Cloud-based mathematical models for self-organizing swarms of UAVs: Design and analysis, “Drone Systems and Applications”, 2023, v.12. doi: 10.1139/dsa-2023-0039. ranking Q2
53. Poghosyan V., Poghosyan S., Lazyan A., Atashyan A., Hayrapetyan D., Alaverdyan Y., Astsatryan H., Self-organizing multi-user UAV swarm simulation platform, “Programming and Computer Software”, 2023(4), 49 (suppl. 1), pp.S7-S15. DOI: 10.1134/S0361768823090086, 0361-7688, 1608-3261. ranking Q3, (SCOPUS, Web of Science)
54. Sahakyan H., Aslanyan, L., Discrete tomography problems with paired projections and complexity characteristics. In: “Advances in Optimization and Applications”. OPTIMA 2023, Communications in Computer and Information Science, v. 1913. Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-031-48751-4_20 (book chapter) (SCOPUS, Q4).
55. Veziryan R., Khachatryan R., Design of implementation of a lock-free min-max queue, “Bulletin of the Russian-Armenian University. Physico-mathematical and natural science”, v. 2, 2023, pp. 15-28. Published 2024, DOI: 10.48200/1829-0450_pmn_2023_2_15

Պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսություն:

«ՀԻՊԵՐՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻՐՏՈՒԵԼՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ

Տնօրեն՝ տեխ.գ.թ. Գ.Ավետիսյան
 Էլեկտրոնային փոստ՝ energopower@mail.ru

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Իրականացվող ալիքային ու տատանողական պրոցեսների կառավարումը խողովակաշար համակարգերում հետազոտությունների շրջանակում ուսումնասիրվել են նաև պինդ մարմինների շրջիոսելիության խնդիրներն ու նրանց վրա ազդող ուժերը՝ կախված հեղուկի ու գազի արագությունից, ուղղությունից: Կատարված հետազոտությունների արդյունքը սկզբունքորեն նոր ուղղաձիգ առանցքով դանդաղաշարժ (4պտ/րոպ) հողմաէլեկտրակայանի մշակումն է իր բոլոր էտապներով, որի հողմաշարժիչը պատվում է ուղղաձիգ առանցքի շուրջը (<< արտոնագիր):

Էներգիայի վերականգնվող աղբյուրների (արևային, քամու) օգտագործումը որպես ածխածնային էներգիայի ակտերնատիվ՝ հրատապ արդիական թեմա է: Քամու էներգիան

պետք է դիտել որպես էներգետիկ հսկայական պաշար: Անհրաժեշտություն կա (և համարվում է արդիական) զարգացնել քանու էներգիան էլեկտրական էներգիայի փոխակերպելու տեխնոլոգիաները: Մշակված սխեմայի համաձայն՝ քանու հոսքը P ուժով ճնշում է փեռիկի վրա, որը շարժվում է քանու ուղղությամբ, իսկ P_1 ուժով ազդում է նաև քանուն հակառակ շարժվող փեռիկի վրա, որը բացատրվում է նրանով, որ (a) փեռիկի հետնամասում առաջանում է նոսրացում, որն անմիջապես լցվում է (b) փեռիկից անդրադարձող օդի հոսքով: Այսպիսով, ստացված P_1 լրացուցիչ ուժն օգնում է P հիմնական պտտող ուժին: Բացի դրանից, հողմաշարժիչի ռոտորի աշխատանքի արդյունավետությունը մեծանում է նաև հոսանքի ուղղությամբ շարժվող փեռիկի հետնամասում օդի նոսրացման հետևանքով, որը հայտնի է «Մագնուսի էֆեկտ» անունով:

Հողմաշարժիչի աշտարակի ուղղաձիգ առանցքով կտրվածքի արտաքին պատերն ունեն երկրորդ կարգի կամ դրան մոտ կորի (շրջան, էլիպս, պարաբոլիդ և այլն) տեսք, նրանք հանդիսանում են աշտարակի արտաքին մակերևույթի ծնիչը՝ տալով նրան շրջիոսելի մակերևույթի ձև, ընդ որում նրա նեղ մասն աշտարակի վերևում է և աստիճանաբար լայնանում է դեպի ներքև: Հողմաշարժիչի ռոտորը պտտվում է մետաղական կարկասի մեջ, իսկ հողմաշարժիչի կարկասը մետաղյա ճոպաններով ամրացվում է ֆունդամենտին: Մշակված հողմաշարժիչի ռոտորն իր պտտման ուղղությունը չի փոխում քանու ուղղության փոփոխման դեպքում, անհրաժեշտություն չկա նրան ուղղորդել դեպի քանու ուղղությունը: Նրա օ.գ.գ-ն մեծանում է աշտարակի կլոր լինելու, ինչպես նաև նրա կողմնային մակերևույթի շրջիոսելի լինելու շնորհիվ, որը ստացվում է նրա որպես ծնիչ երկրորդ կարգի կամ դրան մոտ կորի կիրառմամբ:

Հողմաշարժիչի կոնստրուկտիվ պարամետրերի որոշման նպատակով կատարվել են տեսական ու փորձարարական հետազոտություններ, որոնք հիմնված են տեսական ու փորձնական աֆրոդինամիկայի սկզբունքների վրա: Ստեղծվել է փորձնական կայանք հողմաշարժիչի բնութագրերը ստանալու համար: Մշակված հողմաէլեկտրակայանի քանու օգտագործման գործակիցը հասնում է - 0,26%-ի:

Ուղղաձիգ առանցքով հողմաէլեկտրակայանները, ունենալով պարզ կառուցվածք ու հուսալի շահագործում, կարող են ունենալ լայն կիրառություն ինչպես հանրապետությունում, այնպես էլ դրսում: Առավել ևս, այս աշխատանքի արդյունքում մեծացնելով նրա օ.գ.գ.-ն՝ կարելի է կազմակերպել նրանց տարբեր մոդուլների սերիական արտադրություն (դեկ.՝ տեխ.գ.թ. Գ.Ավետիսյան):

ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Ռ.Կոստանյան

Գիտքարտուղար՝ Ն.Դավիդյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանը (ԲԱ), Ֆիզիկական հետազոտությունների (ՖՀԻ), Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների (ՖԿՊԻ), Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի (ՌՖԷԻ) ինստիտուտները, ԻԿՐԱՆԵՏ Կենտրոն ՄԿ:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 5 ակադեմիկոս, 10 թղթակից և 22 արտասահմանյան անդամներ:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 4 ընդհանուր ժողով, բյուրոյի 21 նիստ բազմաթիվ ընթացիկ հարցերի քննարկման ու լուծման համար կազմակերպությունների հետ պահպանվել է մշտական կապ:

Բաժանմունքի ապրիլի 22-ի տարեկան ընդհանուր ժողովը քննարկել և հավանություն է տվել ակադեմիկոս-քարտուղար ակ. Ռ.Կոստանյանի «2023թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցմանը: Ժողովը որոշել է՝ կարևորելով գիտական կազմակերպությունների գիտական համագործակցությունը՝ պետական կարևորություն ունեցող նախագծերի ձեռնարկման ու մշակման նպատակով բաժանմունքում նախատեսել լուծման ֆԱԲ ինստիտուտների մասնակցությամբ: Գիտական զեկուցումներով ելույթ են ունեցել թղթ. անդ. Ս.Պետրոսյանը (ՌՖԷԻ), ֆ.-մ.գ.դ. Ն.Սահակյանը (ԻԿՐԱՆԵՏ Կենտրոն ՄԿ), ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյանը (ՖԿՊԻ), ֆ.-մ.գ.դ. Ա.Եղիկյանը (ԲԱ), ֆ.-մ.գ.թ. Մ.Խանթեկյանը (ՖՀԻ):

Բաժանմունքի բյուրոյի նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերը, ասպիրանտուրայի ու գործուղումների հայտերը (11 հայտ), փորձագիտական եզրակացություն է տրվել կառավարության կառույցներից ստացված նամակներին: Քննարկվել և բավարարվել են «ՀՀ ԳԱԱ ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» և «ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունները սարքավորումներով վերազինում» բյուջետային ծրագրերի շրջանակում նախատեսված միջոցների հաշվին սարքավորումների ձեռքբերման ՖՀԻ-ի և ՖԿՊԻ-ի ներկայացված հայտերը:

Բաժանմունքի հունիսի 3-ի ընդհանուր ժողովում հաստատվել և ԳԱԱ նախագահության քննարկմանն է ներկայացվել ՖԿՊԻ նոր տնօրենի թեկնածությունը: Բյուրոյի նիստում հաստատվել է ինստիտուտում վերընտրված գիտական խորհրդի նոր կազմը:

Մշտապես քննարկվել են գիտական աշխատանքների արդյունավետության բարձրացման, կիրառական նշանակություն ունեցող ուսումնասիրությունների ընդլայնման, գիտական կազմակերպությունների աշխատանքի գնահատման հարցերը:

Կազմակերպվել ու պարբերաբար անցկացվել են սեմինարներ, միջազգային ու երիտասարդ գիտնականների 29 գիտաժողով (16-ը միջազգային):

Կնքվել են նոր պայմանագրեր, շարունակվել է համագործակցությունը գիտական ու կրթական ոլորտների այլ ստորաբաժանումների հետ: Քննարկվել են 2024թ. բազային հայտերը, ծրագրերն ու բաժանմունքի կազմակերպությունների ռազմավարությունը:

Բաժանմունքի կազմակերպությունների միջև և արտասահմանյան երկրների հետ

համագործակցությունը խթանելու ակնկալիքով ինստիտուտների հետազոտական ուղղություններով կազմակերպված 5 սեմինարներին զեկույցներով հանդես են եկել տնօրենները, իսկ արտասահմանյան երկրների հետ գիտական համագործակցության շրջանակում (4 սեմինար) ելույթ են ունեցել համատեղ իրականացվող աշխատանքների արտասահմանյան ղեկավարները:

Ձևավորվել են ԳԱԱ «Ներդրումային հիմնահարցերի» ու «Հատուկ նշանակության հիմնախնդիրների» մասնագիտական խորհուրդները, որոնց աշխատակազմում ընդգրկվել են ԳԱԱ անդամներ, գիտական կազմակերպությունների և այլ գերատեսչությունների մասնագետներ: Քննարկվել են «Հայաստանի հողմային էներգիայի զարգացում» ծրագրի, «Հայաստանի Հանրապետությունում ռադիոի համալիր հետազոտություն» նախագծի, «ՓԻ ԷՍ ԱՅ» ընկերության կողմից մշակված սենսորային «բեկումնային» տեխնոլոգիան և նրա կիրառությունները» թեմայի և կազմակերպական այլ հարցեր:

Դեկտեմբերին բաժանմունքի գիտական կազմակերպություններում անցկացվել են տարեկան հաշվետու ժողովներ, քննարկվել են ստացված կարևորագույն հիմնարար ու կիրառական արդյունքները, հաստատվել են գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին հաշվետվությունները, որոնք հաստատվել են բաժանմունքի բյուրոյի նիստում:

Բաժանմունքի ինստիտուտների 4 աշխատակից պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Բաժանմունքի ինստիտուտները ստացել են 3 արտոնագիր (1-ը միջազգային), գիտաաշխատողները տպագրել են 4 մենագրություն (2-ն արտասահմանում), 3 ուսումնական ձեռնարկ, 208 հոդված գրախոսվող ամսագրերում (161-ը Scopus/WoS), 23 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (9-ն արտասահմանում), 151 թեզիս (54-ն արտասահմանում):

Բաժանմունքը հրատարակում է «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» (imp. fac. 0,5, 4 համար), «Աստղաֆիզիկա» (imp. fac. 0.6, 4 համար), «Armenian journal of physics» («Ֆիզիկայի հայկական հանդես», էլեկտրոնային, 4 համար) ամսագրերը:

Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան
Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Աբրահամյան
Էլեկտրոնային փոստ՝ observ@bao.sci.am
Կայքէջ՝ www.bao.am/index.php

Մասնագիտական խորհուրդ 048՝ «Աստղաֆիզիկա, ռադիոաստղագիտություն»
Նախագահ՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան, գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Աբրահամյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ստեղծվել է ցածր դիսպերսային սպեկտրների դասակարգման ավտոմատ համակարգ: Ստեղծվել է ամպային հիմքով մեքենայական ուսուցման ծառայություն աստղագիտական ենթաօբյեկտների դասակարգման համար, որը կիրառվել է Թվայնացված Առաջին բյուրականյան շրջահայության (DFBS) սպեկտրների վրա: Մասնավորապես առանձնացվել և դասակարգվել են ածխածնային (C) աստղեր, սպիտակ թզուկներ (WD), ջերմ ենթաթզուկներ (sd) ու Մարգարյանի (Mrk, ԳՄ ավելցուկով) գալակտիկաներ:

Ուսումնասիրվել են ռենտգենյան աղբյուրների օպտիկական դասերը: ROSAT BSC/FSC կատալոգների հիման վրա կատարված օպտիկական նույնացումների HRC/BHRC միացյալ կատալոգի օբյեկտները համասեռ դասակարգվել են SDSS սպեկտրներով: Ընդամենը դասակարգվել է 1426 ակտիվ գալակտիկական միջուկ, որոնց դասերը տրվել են մեր կողմից մշակված նուրբ դասակարգման սխեմայով. հայտնաբերվել են բազմաթիվ նոր Սեյֆերտներ, LINER-ներ, Composite-ներ ու Starburst-ներ:

DFBS շրջահայությունից հայտնաբերվել են մեծ քանակությամբ նոր C-CH, C-N, ածխածնային աստղեր Գալակտիկայի հալոյում, հարթությունից 8 կպս և ավելի մեծ բարձրությունների վրա: Սպեկտրային դասերի հաստատումը կատարվել է՝ օգտագործելով Gaia DR3 տվյալների շտեմարանը: Որոշ նոր CH աստղեր ունեն ավելի քան 500 կմ/վ տեսագծային արագություններ: Հայտնաբերվել են նաև մեծ թվով կապույտ աստղանման օբյեկտներ գերմանուշակագույն ավելցուկով, ինչպես նաև մեծ թվով առաքման գծերով օբյեկտներ: Պարզվել է, որ նրանք կազմում են կրկնակի համակարգեր (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

Մանրակրկիտ ուսումնասիրվել է մեր ընտրանու BS1114+598 ($z=0.0831$) գալակտիկան: Դիտողական նյութը ստացվել է ՌԴ-ի 6-մ դիտակով MPFS սպեկտրագրի կիրառմամբ: Այդ գալակտիկան բաղկացած է միմյանց հետ կապված երկու գրեթե հավասար չափերի օվալաձև խտացումներից, որոնք դիրքավորված են մոտ $PA \approx 400$ ունեցող առանցքի երկայնքով: Հարավային խտացումն ունի պայծառ միջուկ, որի հետ նույնացվում են թույլ ռադիոաղբյուրներ FIRST և NVSS շրջահայություններից: ՌԴ-ի 6մ աստղադիտակի MPFS սպեկտրագրի կիրառմամբ գրանցված էմիսիոն գծերն են՝ ջրածնի $H\alpha$, հելիումի HI 5876 գծերն ու արգելված գծեր՝ ազոտի $[NII]$ 6548, 6584, ծծումբի $[SII]$ 6717, 6731 ու թթվածնի $[OI]$ 6300, 6364 կրկնակիները: Ստացվել են գծերի ինտենսիվությունների, էկվիվալենտ լայնությունների և այլ ֆիզիկական պարամետրերի մակերևութային բաշխման քարտեզները, ներառյալ արագությունների դաշտը: Որոշվել են BLR տիրույթի և HII տիրույթների չափերը, լուսատվությունը, SFR՝ աստղառաջացման տեմպը և այլն (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ռ.Անդրեասյան):

Որոշվել են Կեպլերի հայտնաբերած ակտիվ բռնկվող աստղերի բռնկման հաճախականության ֆունկցիան, աստղաբծերի ծածկույթը: Մշակվել և կիրառվել է աստղաբծերի ծածկույթի մակերեսը որոշելու նոր մեթոդ PFFF-ի միջոցով: Որոշվել են PFFF ֆունկցիաները՝ բացահայտելով աստղերի պտտման պարբերությունների հետ սերտորեն համապատասխանող պարբերականություններ: Բռնկումների ակնկալվող փուլային բաշխումները մոդելավորվել և համեմատվել են համապատասխան պտտման պարբերությունների համար դիտվող բաշխումների հետ: Բոլոր դեպքերում համեմատությունը հաստատել է բռնկման հաճախականությունների պարբերական բնույթը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Նիկողոսյան):

Դիտողական փաստերի ու ֆիզիկայի օրենքների ինքնահամաձայնեցված կիրառմամբ ցույց է տրվել, որ մութ էներգիայի առկայության դեպքում վերանում է մութ նյութի ներմուծման անհրաժեշտությունը, քանի որ տիեզերական օբյեկտների ցանկացած համակարգ ստանում է հավելյալ էներգիա, որի շնորհիվ նրա վիրիալի թեորեմը դրական է անկախ համակարգի առաջացման մեխանիզմից: Ցույց է տրվել, որ մութ էներգիայի ազդեցության տակ սպեկտրորը շեղվում է դեպի կապույտ կողմ: Որքան երկար է էվոլյուցիան, այնքան մեծ է շեղումը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Հ.Հարությունյան):

Վերջերս առաջարկված նոր՝ «Արդյունարար դաշտի տրոհման» (ԱԴՏ) եղանակով կառուցվել է կլանող-ցրող կիսաանվերջ միջավայրից ճառագայթման դիֆուզ անդրադարձման խնդրի բացահայտ լուծումը՝ իզոտրոպ ցրման տարրական

գործողությունում՝ ըստ հաճախությունների վերաբաշխման կամայական օրենքի դեպքում: Ընդգծվել է նոր մոտեցման առավելությունն «ավանդական» մոտեցման նկատմամբ: Այս խնդրի չորս անկախ փոփոխականից կախված լուծումը հաջողվել է արտահայտել մի փոփոխականից կախված երկու օժանդակ ֆունկցիաների միջոցով: Վերջիններս որոշվում են ոչ գծային երկու ինտեգրալ հավասարում և մի հանրահաշվական հավասարում պարունակող միասնական համակարգից: Ստացվել են նաև նոր ու ավանդական եղանակներում առկա օժանդակ ֆունկցիաների միջև երկկողմանի կապերը բացահայտ տեսքով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Տեր-Ղազարյան):

Օգտագործելով Պլանկի մոդիֆիկացված օրենքը (ՊՄՕ) «զանգվածեղ ֆոտոնների» համար՝ ցույց է տրվել, որ ֆոտոնների զանգվածի «միջին համարժեքի» հարաբերությունն իր անփոփոխ (հանգստի) զանգվածին ձգտում է 1-ին ջերմաստիճանի նվազման հետ: Դուրս է բերվում Ստեֆան-Բոլցմանի ձևափոխված օրենքը տարբեր ջերմաստիճանային պայմաններում, ինչպես նաև Վինի տեղաշարժի օրենքը: «Զանգվածեղ ֆոտոնների» վարկածի աստղաֆիզիկական հնարավոր կիրառությունները քննարկվում են աստղերի տիպօրինակ մոդելի, Տիեզերքի էվոլյուցիայի վաղ փուլերի ու Բրեյթ-Ուիլերի գործընթացի համար, ինչպես նաև ակտիվ գալակտիկական միջուկների պարագայում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Տեր-Ղազարյան):

Բացահայտվել է Պորտասարի հնավայրի թիվ 27 սյան աստղագիտական գործառույթը: Այն կապված է աստղերի կուլմինացիաների դիտումների հետ, որոնց դիտման օրերը հստակեցման համար կիրառվել է T-աձև սյան հատուկ կառուցվածքով ի հայտ բերված սովերաչափը: Սովերաչափ գործառույթ է բացահայտվել նաև նույն հուշարձանի D կառույցի կենտրոնական թիվ 31 ու 18 սյուների ուսումնասիրությամբ (ղեկ.՝ բ.գ.թ. Հ.Մալխասյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

SDSS շրջահայության միջին դիսպերսային սպեկտրների հիման վրա իրականացվել է Մարգարյանի գալակտիկաների համասեռ դասակարգում ըստ ակտիվության դասերի: Ընդամենը դասակարգվել է 779 օբյեկտ: Բացահայտվել է 2 QSO, 49 դասական Սեյֆերտ (լայն գծերով Սեյֆերտ 1-եր, BLS1), 17 նեղ գծերով Սեյֆերտ 1 (NLS1s), 4 Sy2, 12 LINER, 11 ակտիվ գալակտիկական միջուկ (AGN) առանց որոշակի դասի, 31 Բաղադրյալ սպեկտրներով օբյեկտ (Composite) և 533 HII/Starburst (աստղառաջացման բռնկումով գալակտիկա): Ցածր որակի սպեկտրների պատճառով որոշ օբյեկտներ մնացել են առանց որոշակի ակտիվության դասերի և դասակարգվել են որպես առաքման կամ կլանման գծերով գալակտիկաներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

Օգտագործելով վերանորոգված 1մ Շմիդտի աստղադիտակը՝ հատուկ մշակված մեթոդով կատարվել են դիտումներ: Արդյունքում հայտնաբերվել են Հերբիգ-Հարոյի տասնյակ նոր օբյեկտներ, այդ թվում՝ հոսքեր, որոնցից մի քանիսը մեկ պարսեկից ավել երկարություն ունեն, այսինքն՝ պատկանում են այսպես կոչված հսկա հոսքերի դասին: Շատ դեպքերում հայտնաբերվել են նաև մոլեկուլային ջրածնի ուղղորդված հոսքեր, որոնք տեսանելի են միայն ԵԿ տիրույթում և համընկնում են օպտիկական հոսքերի հետ: Բացահայտվել են նաև հոսքեր եզակի ձևերով, մասնավորապես C-աձև ու հելիքոիդային հոսքեր (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մաղաքյան):

GRSMC45.46+0.05 հսկա մոլեկուլային ամպի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ միջաստղային նյութն ունի պղպջակային կառուցվածք, որը ձևավորվել է Գերնորի պայթյունի հետևանքով առաջացած GRS1915+105 հզոր ռենտգենյան աղբյուրի շուրջ: Այս

մոլեկուլային ամպին պատկանող G045.49+00.04 և G45.14+00.14 աստղառաջացման տիրույթներում նույնացվել են մեծ թվով երիտասարդ աստղային օբյեկտներ, որոնք ձևավորում են խիտ աստղակույտեր: Տիրույթները գտնվում են պղպջակի եզրին և առանձնանում են իրենց բարձր պայծառությամբ ու խտությամբ: Խմբերի էվոյուցիոն տարիքը նեղ բաշխում ունի (մի քանի միլիոն տարի), ինչը վկայում է նրանց ձևավորման արագ գործընթացի մասին, որը հնարավոր է միայն արտաքին ճնշման ազդեցության ներքո: Այդ ճնշման հիմնական աղբյուրը GRS1915+105 Գերնորի պայթյունից առաջացած հարվածային ճակատն է (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ե.Նիկողոսյան):

Փորձել ենք գտնել բարձր արագությամբ աստղեր, որոնք հեռացել են CrA մոլեկուլյար ամպից շուրջ 8-15 միլիոն տարի առաջ՝ պայմանավորված շրթայական աստղառաջացման երևույթով (6-7 աստղային խմբերից) մի շարք Գերնորերի պայթյունների ու դինամիկական արտանետումների հետևանքով: Այս աստղախմբերը ցույց են տալիս արտասովոր, արագացումով շարժումներ, որոնց մեծությունը կախված է աստղախմբի տարիքից: Բազմաթիվ պոլսարների, ջերմ, հսկա փախչող աստղերի, մեծ ու փոքր զանգվածով ռենտգենյան կրկնակիների ու քիմիապես արտասովոր աստղերի հետշարժը (հաշվի առնելով Գալակտիկայի գրավիտացիոն պոտենցիալը) թույլ է տվել հայտնաբերել առնվազն երկու տասնյակ մեծ արագությամբ աստղերի հավանական թեկնածուներ, որոնք հավանաբար հեռացել են CrA աստղառաջացման տիրույթից: Գնահատվել է նաև աստղառաջացման կոմպլեքսի նախնական զանգվածի ֆունկցիան: Բացի այդ, մեր կողմից հայտնաբերվել է B0834+06 և B1742-30 պոլսարների զույգերի հնարավոր ընդհանուր ծագման աղբյուրը (պայթյունի վայրը), գնահատվել է համակարգի տարիքը՝ 0.2-0.8 միլիոն տարի, որը համընկնում է պոլսարներից առնվազն մեկի տարիքի հետ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Վ.Համբարյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Դավթյան Ա., «Լուգալ-բանդան» լեռան քարայրում, շումերական պոեմ (բնագրից թարգմ. ու աստղագիտ. քննություն), Ե., ԲԱ, 2024, 220 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Մալխասյան Հ.Ա., «Զորաց Քարեր» հուշարձանի ուսումնասիրության որոշ նոր արդյունքներ (հարթակ 3), Ե., «Բազմավեպ», N 1-2, 2024, էջ 87-128:
3. Акопян А.А., Определение функции частоты вспышек и запятненности активных вспыхивающих звезд, обнаруженных «Кеплер», *Астрофизика*, 2024, т. 67, вып. 4, с. 495-511.
4. Арутюнян Г.А., Наличие тёмной энергии и тёмной материи, *Ер., Астрофизика*, т. 67, вып. 4, 2024, с. 531-540
5. Михайлов Е.А., Андреасян Р.Р., Марчевский И.К., Тянь А.И., Батарейный механизм Бирмана как источник магнитных полей в галактических и аккреционных дисках, *СПб., “Журнал технической физики”*, т. 94, вып. 12, 2024, с. 2014-2016.
6. Abrahamyan H., Mickaelian A., Classification of Blazars by Activity Types, “Communications of BAO”, v. 71, N 1, 2024, pp. 48-54.
7. Akopian A., Spottiness of most active flare stars detected by TESS, “Communications of BAO”, v. 71, 2024, pp. 328-337.
8. Alford M., Harutyunyan A., Sedrakian A., Tsiopelas S., Bulk viscosity of two-color superconducting quark matter in neutron star mergers, “Physical Review D”, 110 6, 2024, id L061303.
9. Andreasyan R., Hakopian S., Mahtessian A., Sukiasyan A., Active galaxies in the field and in Galaxy Clusters, “Communications of BAO”, 2024, v. 71, pp. 366-372.

10. Andreasyan R., Marchevsky I., Mikhailov E., Role of Biermann battery mechanism in appearance of magnetic fields in accretion discs, "Astronomy Reports", v. 68 (3), 2024, pp. 238-246.
11. Arshakian T., Hambardzumyan L., Pushkarev A., Homan D., Studies of stationary features in jets: BL Lacertae II. Trajectory reversals and superluminal speeds on sub-parsec scales, "Astronomy & Astrophysics (A&A)", 2024, v.692, A127.
12. Asryan M., Farmanyan S., Mickaelian A., A journey through the history and statistics of ArASNews, "Communications of BAO", v. 71, 1, 2024, pp. 174-177.
13. Rah M., Mickaelian A., Flammini F., Spurzem R., Pulsars and millisecond pulsars i: advancements, open questions and finding gaps via statistical insights, "Communications of BAO", v. 71, 2024, pp. 383-393.
14. Astsatryan H., Babayan S., Mickaelian A., Mikayelyan G., Astsatryan M., Cloud-based machine learning service for astronomical sub-object classification: case study on the first Byurakan survey spectra, "Data Science Journal", v. 23 (6), 2024, pp. 1-14.
15. Azatyan N., Search and study of young infrared stellar clusters, "Astrophysics & Space Science", 369 (4), 2024, article id33.
16. Azatyan N., Nikoghosyan E., Samsonyan A., Elia D., Kaper L., Yeghikyan A., Andreasyan D., Baghdasaryan D., Searching for stellar population in the molecular cloud GRSMC 045.49+00.04, "Publications of the Astronomical Society of Australia", 41, 2024, id e055.
17. Baleyan G., Farmanyan S., Davtyan A., Mickaelian A., ArAS educational activities: history and statistics, Communications of BAO, v. 71, 1, 2024, pp. 162-168.
18. Farmanyan S., Mikayelyan G., Mickaelian A., Scientific (Astro) tourism activities in Armenia and in South West and Central Asian region, "Communications of BAO", v. 71, 1, 2024, pp. 169-173.
19. Gigoyan K., The digitized First Byurakan Survey database. New carbon stars confirmed, "Communications of BAO", v. 71, 1, 2024, pp. 22-28.
20. Gigoyan K.K., Gigoyan K.S., Sarkissian A., Meftah M., Bekki S., Karapetyan E., Rahmatullaeva F., Kostandyan G., The digitized first Byurakan survey database late-type stars candidates. New confirmations. II, "Astrophysics", v. 67, 1, 2024, pp. 60-66.
21. Gigoyan K., The digitized first Byurakan survey database. Late-type stars candidates. New confirmations, "Communications of BAO", v.71, 1, 2024, pp.13-16.
22. Grigoryan V., Samsonyan A., Nikoghosyan E., Azatyan N., Andreasyan D., Khachatryan A., Stellar membership of RCW 34 HII star-forming region, "Communications of BAO", v. 71, 1, 2024, pp. 29-35.
23. Harutyunian H., Torosyan A., On the Blueshift of the Andromeda Galaxy, "Communications of BAO", v. 71, 1, 2024, pp. 68-71.
24. Harutyunian H., Dark energy as a key player in the evolution of cosmic objects, "Communications of BAO", v.71, 1, 2024, pp.55-62.
25. Harutyunyan A., Sedrakian A., Gevorgyan N., Hayrapetyan M., Electrical conductivity of a warm neutron star crust in magnetic fields: Neutron-drip regime, "Physical Reviews" C, 109 5, id055804.
26. Harutyunyan A., Sedrakian A., Thermal conductivity and thermal hall effect in dense electron-ion plasma, "Particles", 7, 2024, pp. 967-983.
27. Hovhannisyan M., Mkhitarian S., Mahtessian L., Mnatsakanyan A., Vardanyan J., Minasyan A., Mahtessian A., Distributions of quasars as an indicator of the homogeneity or inhomogeneity in the Universe, "Journal of Instrumentation", 19 8, 2024, id C08002.
28. Hovhannisyan M., Mkhitarian S., Mahtessian L., Vardanyan J., Markosyan J., Minasyan A., Mahtessian A., Studies of the NGC315 galaxy and the distribution of extragalactic objects around it, "Nuclear Instruments and Methods in Physics Research" A, 1060, 2024, id 169098.
29. Khachatryan A., Nikoghosyan E., Andreasyan D., Samsonyan A., Azatyan N., Grigoryan V., Simonyan R., Identification of the young stellar clusters in the G345.5+1.5 Star-Forming Region, "Communications of BAO", v. 71, 1, 2024, pp. 36-41.
30. Kostandyan G., New M dwarfs found in DFBS plates, "Communications of BAO", v. 71, 1, 2024, pp. 17-21.
31. Malkhasyan H., Astronomical interpretation of a small example of Armenian folklore, "Communications of BAO", v. 71, 2024, pp. 338-344.
32. Malkhasyan H., On the possible astronomical function of Portasar's (Göbekli Tepe) Pillar 27, "Communications of BAO", v. 71, 1, 2024, pp. 185-198.

33. Malkhasyan H., On the astronomical significance of stone number 137 of Zorats Qarer Megalithic Monument 27, "Communications of BAO", v. 71, 1, 2024, pp. 199-210.
37. Grigoryan L., Mkrtchyan A., Aleksandrov P., Saharian A., Wagner W., Grigoryan M., Markosyan J., Sargsyan A., Martirosyan A., Khachatryan H., Spectral-angular distribution of radiation generated by train of electron bunches passing through the centre of a ball, "NIM A", v.1059, 2024, 168991.
38. Harutyunyan G., Muradyan A., Aramyan A., Alexanyan H., Sargsyan N., Mkrtchyan L., Harutyunyan V., Khachikyan L., Analysis of shock wave propagation in the atmosphere through generated sound waves, "JINST", v. 19, 2024, C06012.
39. Harutyunyan V., Deghoyan N., Mkrtchyan L., Amiraghyan L., Sargsyan N., Aramyan A., Muradyan A., Baghramyan V., Harutyunyan I., Alexanyan H., Crystallization of SrB₂O₇ in a glass tape and its electrical, dielectric, ferroelectric and nonlinear optical properties, "JINST", v. 19, 2024, C05039.
40. Hayrapetyan Ye., Hunanjan H., Single-channel high-precision laser rangefinder, "JINST", v.19, 2024, C10002.
41. Hayrapetyan Ye., Hunanyan H. Petrosyan S., High-Precision light rangefinder with phase modulation accumulation, "JPCS", v. 2924, 2024, 012014.
42. Hovhannisyan A., Allahverdyan A., The most likely common cause, "International Journal of Approximate Reasoning", v. 173, 2024, 109264.
43. Hovhannisyan M., Mkhitarian S., Mahtessian L., Vardanyan J., Markosyan J., Minasyan A., Mahtessian A., Studies of the NGC315 galaxy and the distribution of extragalactic objects around it, "NIM A", v. 1060, 2024, 169098.
44. Hovhannisyan M., Mkhitarian S., Mahtessian L., Mnatsakanyan A., Vardanyan J., Minasyan A., Mahtessian A., Distributions of quasars as an indicator of the homogeneity or inhomogeneity in the Universe, "JINST", v. 19, 2024, C08002.

45. Hovhannisyan M., Mkhitarian S., Karapetyan R., Sargsyan T., Mahtesyan L., Vardanyan J., Mahtessian A., Investigation of Giant Radio galaxy B2 1141+37, IOP Conference Serials, "JPCS", v. 2924, 2024, 012013.
46. Khachatryan H., Grigoryan L., Kotanjyan V., Grigoryan M., Harutyunyan H., Markosyan J., Margaryan G., Saharian A., Quasi-coherent radiation from a train of electron bunches inside a waveguide partially filled with dielectric, "JINST", v. 19 (05), 2024, C05021.
47. Khudaverdyan A., Yengibaryan A., Hmayakyan S., Tiratsyan N., Hmayakyan M., Vardanyan S., Antonyan A., Kocharyan V., Tuberculous spondylitis: Macromorphological and radiological studies on a skeleton from the Late Iron Age monument of Nor Armavir, Armenia, "Anthropological Review", v.87(1), 2024, pp. 109-126.
48. Khudaverdyan A., Yengibaryan A., Hmayakyan S., Hmayakyan M., Tiratsyan N., Vardanyan Sh., Hovsepyan I., Antonyan A., Kocharyan V., A rare manifestation of spinal tuberculosis in the 6th–5th Century BC skeleton (Nor Armavir, Armenia): A morphological and computed tomography, "Anthropologie", v.62(3), 2024, pp. 201-208.
49. Margaryan V., Noreyan S., Mesropyan M., Trouni K., Aghabekyan V., Mirzoyan R., Kocharyan V., Absorption characteristics of diffracted X-ray radiation in a quartz crystal at an external temperature gradient, "JINST", v.19 (05), 2024, C05044.
50. Margaryan V., Noreyan S., Trouni K., Cherepennikov Yu., Mesropyan M., Movsisyan A., Aghabekyan V., Mamyan A., Kocharyan V., Diffraction absorption in a quartz single crystal in the presence of a temperature gradient, "Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)", v. 59, N 3, 2024, pp. 377-383.
51. Manvelyan M., Mkrtchyan M., Sarkisyan H., Second and third harmonic generations in CdSe nanoplatelets, "JPCS", v.2924, 2024, 012017.
52. Minassian H., Melikyan A., Goncalves M.R., Petrosyan P., $\text{Ti}_3\text{C}_2\text{T}_x$ MXene as surface-enhanced Raman scattering substrate, "Nanotechnology" v. 35, 2024, 415702.
53. Mkhitarian S., Margaryan H., Vasilyan M., Drmeyer H., On an X-ray 3-block Laue-interferometer with violation of ideal geometry, "JINST", v.19(04), 2024, C04012.
54. Mkrtchyan M., Sarkisyan H., Influence of external magnetic field on intraband transitions in lens-shaped quantum dot, "JINST", v.19 (05), 2024, C05014.
55. Mkrtchyan M., Mamasakhlisov Y., Hayrapetyan D., Baskoutas S., Sarkisyan H., Two-dimensional pair-interacting hole gas thermodynamics: Exactly solvable Moshinsky model for lens-shaped quantum dots, "Heliyon", v.10, 2024, e34762.
56. Miloichikova I., Bulavskaya A., Gargioni E., Grigorieva A., Cherepennikov Y., Belousov D., Stuchebrov S. Investigation of the possibility of shaping an electron dose field of a clinical accelerator with 3D printed polymer products, "NIM A", v.1059, 2024, 168996.
57. Nahapetyan A., Mkrtchyan M., Sarkisyan H., Interband and intraband optical transitions in asymmetric ellipsoidal quantum dot, "JPCS", v.2924, 2024, 012016.
58. Parazian V., Fermionic condensate and the vacuum energy-momentum tensor for planar fermions in homogeneous electric and magnetic fields, "Physics Letters, Section A", v.510, 2024, 129544.
59. Petrosyan A., Ghazaryan V., Srinivasan B., Comments on "Investigations on growth, XRD, strain, FTIR, UV-Vis NIR, photoluminescence, SHG, and z-scan analyses of L-cysteine picrate single crystal for NLO and optical limiting applications", "Inorganic Chemistry Communications", v.166, 2024, 112631.
60. Potylitsyn A., Vukolov A., Shevelev M., Baldin A., Bleko V., Kobets V., Karataev P., Kocharyan V., On the effect of focusing of coherent diffraction radiation by a semi-parabolic target, "Physics of Particles and Nuclei Letters", v.21(2), 2024, pp.140-145.
61. Potylitsyn A., Baldin A., Bleko V., Vukolov A., Naumenko G., Karataev P., Kobets V., Kocharyan V., Kubankin A., Toktaganova M., Characteristics of coherent transition radiation in the prewave zone from a finite-size target, "Physics of Particles and Nuclei Letters", v. 21(2), 2024, pp. 131-139.
62. Saharian A., Avagyan R., Harutyunyan G., Nikoghosyan G., Fermionic vacuum stresses in models with toroidal compact dimensions, "Astrophysics", v. 67(2), 2024, pp. 231–245.
63. Saharian A., Dabagov S., Khachatryan H., Grigoryan L.S, Quasidiscrete spectrum Cherenkov radiation by a charge moving inside a dielectric waveguide, "JINST", v.19(06), 2024, C06017.
64. Sukiasyan R., Danghyan A., Apreyan R., Gharibyan N., Atanesyan A., $(\text{H}_3\text{O})\text{Li}_2(\text{IO}_3)_3$: crystal structure and IR spectrum, "JINST", v. 19(04), 2024, C04018.

65. Sukiasyan R., Apreyan R., Danghyan A., Gharibyan N., Atanesyan A., Study of L-nitroarginine perchlorate and L-nitroarginine tetrafluoroborate crystals, "JPCS", v. 2924, 2024, 012015.
66. Srinivasan B., Petrosyan A., Does a "glycine magnesium chloride" crystal exist?, "J. Mol. Struct.", v. 1310, 2024, 138237.
67. Shahverdyan A., Trouni K., Kocharyan V., Dynamic diffraction of thermal neutrons in crystals with continuous deformation field, "JINST", v. 19 (06), 2024, C06014.
68. Shchagin A., Kube G., Potylitsyn A., Stokov S., Frequency splitting in undulator radiation from solid-state crystalline undulator, "JINST", v. 19 (05), 2024, C05045.
69. Shevelev M.V., Konkov A.S., Uglov S.R., Alekseev B.A., Cherepennikov Y.M., Spectral characteristics of polarization radiation in the water window range, "Quantum Beam Science", v. 8(1), 2024, 6.
70. Simonyan H., Kocharyan V., Margaryan V., Minasyan E., Cherepennikov Yu., XRF and μ -tomography investigations of gold jewellery from the Middle Bronze Age from the Nerkin Naver burial mound (Armenia), The International Archives of the Photogrammetry, Remote Sensing and Spatial Information Sciences, 2024, XLVIII-2/W5-2024, pp. 123-128.
71. Stepanyan V., Badasyan A., Morozov V., Mamasakhlisov Y., Podgornik R., Sequence disorder-induced first order phase transition in confined polyelectrolytes, "Journal of Chemical Physics", v.161, 2024, id134906.
72. Tadevosyan L., Stepanyan V., Ghaltaghchyan H., Mamasakhlisov E., Sarkisyan H., Thermodynamics of an ideal electron gas localized in a thin spherical CdSe nanolayer, "Journal of Contemporary Physics"(Armenian Academy of Sciences), v. 59, N 2, 2024, pp. 172-178.
73. Tonoyan G., Giester G., Ghazaryan V., Chilingaryan R., Margaryan A., Mkrtchyan A., Petrosyan A., Crystal structure of bis (β -alaninium) tetrabromidoplumbate, "Acta Crystallographica Section E Crystallographic Communications", v.80 (9), 2024, 931, doi: 10.1107/S2056989024007722.
74. Tonoyan G., Giester G., Ghazaryan V., Chilingaryan R., Margaryan A., Mkrtchyan A., Petrosyan A., Crystal structure of hexaglycinium dodecaiodotriplumbate, "Acta Crystallographica Section E Crystallographic Communications", v. 80 (9), 2024, 916.
75. Tonoyan G., Giester G., Szafranski M., Petrosyan A., Salts of amino acids with polar symmetry exhibiting a dimeric cation of the $[A(1)+\cdots A(2)]$ type. New type of polymorphism, "Journal of Crystal Growth", v. 626(15), 2024, 127472.
76. Tonoyan G., Giester G., Petrosyan A., Salts containing different amino acids: L-argininium(+) sarcosine halogenides, "Struct. Chem.", v. 35, 2024, pp. 943–952.
77. Tonoyan G., Giester G., Ghazaryan V., Badalyan A., Chilingaryan R., Margaryan A., Mkrtchyan A., Petrosyan A., Hexa- β -alaninium tetradeca(bromido)tetraplumbate(II), "JPCS", v.2924, 2024, 012011.
78. Tonoyan G., Giester G., Ghazaryan V., Badalyan A., Chilingaryan R., Margaryan A., Mkrtchyan A., Petrosyan A., Glycinium tribromidoplumbate(II). "JPCS", v.2924, 2024, 012008.
79. Tonoyan G., Giester G., Petrosyan A., New class of salts containing different amino acids - an overview, "JPCS", v. 2924, 2024, 012007.
80. Trouni K., Kocharyan V., Noreyan S., Bagdasaryan D., Mesropyan M., Margaryan V., Shahverdyan A., Diffraction image of a narrow X-rays beam in crystals with weak deformation, "NIM A", v.1060, 2024, 169042.
81. Ustimenko R., Karaulov D., Vinnichenko M.Y, Makhov I., Firsov D., Sarkisyan H., Sargsian T., Hayrapetyan D., Photoinduced light absorption in Ge/Si quantum dots, "St. Petersburg Polytechnic University Journal. Physics and Mathematics", v.17. 2024, N 1.1, pp.105-112.
82. Ustimenko R., Vinnichenko M., Karaulov D., Sarkisyan H., Hayrapetyan D., Firsov D., Effect of doping and interband pumping on optical properties of GeSi/Si quantum dot nanostructures for infrared detectors, "ACS Applied Nano Materials", v.7, 2024, pp.27245–27253.

Պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսություն:

ՈԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան
Փոխտնօրեն՝ Ֆ.-մ.գ.թ. Է.Ասմարյան
Գլխավորտնօրեն՝ Ֆ.-մ.գ.թ. Ս.Ներսեսյան
Էլեկտրոնային փոստ՝ office@irphe.am
Կայքէջ՝ www.irphe.sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Առաջարկվել է ռադիոլոկացիոն հեռահար զննման եղանակ ջրի մակերևույթի ծածանքի ուսումնասիրման համար: Հաստատվել է, որ դա հնարավոր է իրականացնել՝ առանձնացնելով ծածանքի ազդանշանն անդրադարձած ազդանշանի ընդհանուր ֆոնից՝ վեկտորական ընդունիչի կիրառմամբ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան):

Առաջարկվել է Ֆերմայի վերջին թեորեմի կոմպակտ ապացույց դասական հանրահաշվական մեթոդների կիրառմամբ (Նյուտոնի բինոմի, հանրահաշվական հավասարումների տեսության և այլ) (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Է.Ասմարյան):

Երկշերտանի MoS_2 , թաղանթի հիման վրա ստեղծվել է դաշտային ֆոտոտրանզիստոր, ուսումնասիրվել են նրա էլեկտրական ու ֆոտոէլեկտրական բնութագրերը՝ կախված փականի, աղբյուրի ու ակունքի միջև կիրառված լարումներից, ընկնող լազերային ճառագայթման ինտենսիվությունից: Կառուցվածքի ֆոտոզգայնությունը հասնում է մինչև 12.5 mA/W: Լույսի իմպուլսներով լուսավորման դեպքում դիտարկվում է փոխանջատման երևույթ, որի բնութագրական ժամանակները կազմում են տասնյակ միլիվայրկյաններ (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Տեղական բնական ապարի՝ Արագածի պեղիտի հիման վրա սինթեզվել է ապակեկերամիկական նյութ, որը պարունակում է նանոչափային վոլաստոնիտի ու գելենիտի բյուրեղիկներ: Ուսումնասիրվել է ֆտորային խմբից Na_2SiF_6 կատալիզատորի ազդեցությունն ապակու բյուրեղացման հատկությունների վրա: Ցույց է տրվել, որ կատալիզատորի պարունակության նվազումը մեծացնում է ապակիացման ու բյուրեղացման ջերմաստիճանները, ինչպես նաև ակտիվացման էներգիան (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Քիմիական նստեցման եղանակով 50մկմ հաստությամբ պոլիմերային տակդիրի վրա ստացվել են CdS -ի բազմաբյուրեղային, 100 նմ կարգի հաստության բարակ թաղանթներ լուծույթի ֆիքսված ջերմաստիճանի դեպքում: Ուսումնասիրվել է նստեցման ժամանակի ազդեցությունը ստացվող թաղանթի հաստության, կառուցվածքային ու օպտիկական հատկությունների վրա: Ֆոտոլյումինեսցենցիայի սպեկտրներում ընդգծված կանաչ ճառագայթային մաքսիմումի առկայությունը ցույց է տվել, որ CdS թաղանթներն ունեն բյուրեղականության բարձր աստիճան և բնութագրվում են արատների նվազագույն խտությամբ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Մուսայելյան):

Ստացվել են նոր տիպի արևային CsPbBr_3 պերովսկիտային թաղանթներ ապակե տակդիրների վրա 10^{-5} Տորր վակուումի պայմաններում, հետազոտվել են դրանց կառուցվածքային ու օպտիկական հատկությունները պրոտոններով ճառագայթման դեպքում: Ցույց է տրվել թաղանթների պիտանելիությունը բարձր էներգիաներով ճառագայթումների պայմաններում (ղեկ.՝ Լ.Մաթևոսյան):

Հաստատվել է, որ p-InSb-n-CdTe հետերոանցման մեջ ֆոկուսացված լուսային ճառագայթով գրգռված երկայնական ու լայնական ֆոտոէլեկտրոնների հարաբերությունն էականորեն կախված է CdTe պատուհանային շերտի հատկություններից: Ցույց է տրվել, որ

երկայնական ֆոտոտերևայթի հիման վրա կարելի է ստեղծել 3-5 մկմ տիրույթի մեծ ֆոտոզգայնությամբ սեկտորային, քառատարր ֆոտոընդունիչներ, որոնք կարող են օգտագործվել մթնոլորտում տեղաշարժվող ջերմային աղբյուրների դիրքը գրանցող սարքերում: Մասնավորապես ստեղծված ֆոտոընդունիչներն օժտված են մեծ, մինչև 750 մՎ/մկմ կոորդինատային ու 1000 Վ/Վտ ֆոտոէլեկտրական զգայնությամբ (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Ուսումնասիրվել են նանոանհարթությունների շնորհիվ առաջացող լույսի հակաանդրադարձման երևույթները: Հիմնվելով նոր սահմանային պայմաններով տեսության վրա՝ հայտնաբերվել են զգալի փոփոխություններ հայելային ու դիֆուզ անդրադարձման մեջ: Ուսումնասիրվել են նաև նանոանհարթությունների առաջացրած մշուշի անկյունային ու բևեռացման կախվածությունները: Ցույց է տրվել, որ մշուշը հիմնականում p-բևեռացված է, իսկ անկյունային կախվածությունն աննշան է նանոանհարթությունների դեպքում՝ չնայած հայելային անդրադարձման գործակցի զգալի փոքրացմանը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

Տրվել է $N=8$ սուպերսիմետրիկ մեխանիկայի նոր մոդելի համիլտոնյան ձևակերպումը: Ցույց է տրվել, որ այն ունի դինամիկ osp (8|2) սուպերկոնֆորմ սիմետրիա, ընդ որում, համակարգի բոզոնային մասը պարզապես ազատ մասնիկ է ութչափանի կոնի վրա, մինչդեռ ֆերմիոնային մասը կարող է մեկնաբանվել որպես սպին-օրբիտալ փոխազդեցություն (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Ներսեսյան):

Հետազոտվել են չկարգավորված կիսահաղորդչային բարակ թաղանթներում ու էքսիտոնային հետերոկառուցվածքներում էկրանավորված կուլոնյան փոխազդեցությունը նկարագրող կրկնակի Ֆուրիեի ինտեգրալի առանձնահատկությունները: Մշակվել է այս ինտեգրալը ճշգրիտ հաշվարկելու մեթոդ՝ փոխազդեցության ուժեղ էկրանավորման դեպքում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Լ.Հովակիմյան):

Կատարվել է երկշերտ տեղաշարժված գրաֆենային կառուցվածքներում ոչ գծային էլեկտրամագնիսական երևույթների հետազոտում բիքրոմատիկ լազերային դաշտերում: Ցույց է տրվել, որ Բերրի կորության ու շեղման վեկտորի էֆեկտներով պայմանավորված՝ տեղի է ունեցել բարձր կարգի հարմոնիկների ու կոմբինացիոն հաճախությունների գեներացիայի հավանականությունների աճ: Ուսումնասիրվել է վերջիններիս կախումը հարկադրող լազերային դաշտի ինտենսիվությունից ու երկգույն հաճախություններից (ղեկ.՝ թղթ. անդ. Հ.Մաթևոսյան):

Մշակվել և պատրաստվել է մարմնի բիոակտիվ կետերի էլեկտրական խթանիչ, կատարվել են լաբորատոր փորձարկումներ, պարզաբանվել են սարքի տեխնիկական բնութագրերը (ղեկ.՝ ակ. Ա.Ղուլյան):

7,5 ԳՀց ու 16 ԳՀց հաճախականային տիրույթների ռադիոմետրերի համար մշակվել և պատրաստվել են ուժեղարարներ, ԳԲՀ մոդուլներ՝ ցածր հաճախականային ելքային ազդանշանով: Պատրաստվել են L-տիրույթի պարուրած և անտենաներ, որոնք փորձարկվել են հաճախականային մոդուլացմամբ ռադարի կազմում: Մշակվել և պատրաստվել են 2,4 Գհց ու 5,8 Գհց հաճախականային տիրույթների տարբեր ֆունկցիոնալ բլոկների նախանմուշներ, ուսումնասիրվել է դրանց կիրառման հնարավորությունը ԳԲՀ ազդանշանների միջոցով՝ հեղուկների տաքացման համար (ղեկ.՝ Կ.Դադայան):

Կատարվել են լազերային աբլյացիայի մեթոդով տարբեր նյութերի նանոմասնիկների ստացման և դրանց չափերի որոշման հետազոտություններ: Մասնավորապես ստացվել են գրաֆիտի նանոմասնիկների չափերը՝ կախված գրաֆիտի կարծրությունից: Ուսումնասիրվել է թորած ջրում արծաթի նանոմասնիկների չափերի կախվածությունը տարբեր ալիքի

երկարության ու տարբեր տևողության լազերային իմպուլսի դեպքում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Մշակվել է զենիթահրթիռային համակարգի թիրախների հետագծման հանգույցի կազմի մեջ մտնող շրջանաձև բևեռացմամբ պարաբոլային անտենաների էլեկտրական բնութագրերի (ուժեղացման գործակցի, շրջանաձև բևեռացման մակարդակի) չափագրման մեթոդիկա, հեռավոր գոտում կատարվել են անտենաների չափագրման աշխատանքներ: Մշակվել և պատրաստվել է կառավարվող բարձրավոլտ վոլտամպերային բնութագրիչ համակարգ՝ եռաչափ տպագրությամբ պատրաստված դիէլեկտրիկների պարաման բնութագրերի չափման համար: Առաջարկվել է մեթոդիկա՝ կամրջակային չափիչի օգնությամբ հարթ կոնդեսատորում տեղադրված այդպիսի դիէլեկտրիկների թափանցելիության ու կորուստների չափման համար (ղեկ.՝ Ն.Պողոսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Օբյեկտների ցրման արդյունարար մակերևույթի գնահատման համար օգտագործվող շարժական հարթակի չափման ճշտությունը բարձրացնելու նպատակով առաջարկվել է կատարել հարթակի շարժման արագությամբ պայմանավորված շտկում, ինչը շուրջ 5 դԲ-ով լավացնում է չափվող մեծությունների ճշտությունը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան):

Մշակվել և մոդելավորվել են իոնազգայուն նանոլարային տրանզիստորի աղմկային բնութագրերը «Վերիլոգ Ա» լեզվային միջավայրում: Ստացված մոդելի համար սխեմատիկական սիմուլյատորի օգնությամբ արտածվել են մի շարք բնութագրական գրաֆիկներ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ն.Եզակյան):

Կատարվել են սպեկտրալ քողարկման նոր մեթոդների իրականացման հետազոտություններ: Առաջարկվել է նոր մեթոդ ոչ գծային ազդանշանների մշակման համար, որը միավորում է սպեկտրալ անալիզը ԼԼենբերգ-Մարկվարդտի ալգորիթմի հետ: Փորձնականորեն ցույց է տրվել, որ նման համատեղված մոտեցումը լավացնում է ոչ գծային պրոցեսների նույնականացումը և հանգեցնում է բարդ ազդանշանների ավելի խորը անալիզի (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Է.Սիվոլենկո):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Аракелова Э.Р., Григорян С.Л., Агбальян С.Г., Мирзоян А.Б., Савченко Л.М., Хачатрян А.М., А.С. Цоколкян А.М., Структурные, электрофизические и оптические характеристики тонких пленок $ZnO/Ag/Fe$ n- и p-типа проводимости, полученных методом DC-магнетронным методом при комнатной температуре, Ер., “Изв. НАН Армении. Физика”, т. 59, N 3, 2024, с. 355-365.
2. Асмарян Э.А., О Последней теореме Ферма, сб. мат. XIX межд. симп. по фундамент. и приклад. проблемам науки”, М., изд. РАН, 2024, с. 155-161.
3. Григорян Л.Н., Петросян П. Г., Петросян С. Г., Влияние двухкомпонентной добавки $TiO_2:ZrO_2$ на механические свойства стеклокристаллического материала, синтезированного на основе перлита, Ер., “Изв. НАН РА.Физика”, т. 59, N 2, 2024, с. 203-210.
4. Гулян А.Г., Езакян Н.Д., Мадосян Л.В., Аракелян А.С., Радиоастрономический метод измерения эффективности сверхвысокочастотных приёмных систем, Ер., “Вестник НПУА: Информационные технологии, электроника, радиотехника”, N 1, 2024, с. 82-88.
5. Гулян А. Г., Н. Д. Езакян, А. С., Аракелян, Мадосян Л. В., Измерения шумовой температуры антенн высокочувствительной приемной системы, Ер., “Доклады НАН РА”, т. 124, N 2, 2024, с. 24-32.

6. Гулян А.Г., Езакян Н.Д., Гомцяц С.Г., Разработка системы функциональной электростимуляции с использованием микроконтроллера ARDUINO, Ер., “Вестник НПУА: Информационные технологии, электроника, радиотехника”, N 2, 2024, с. 80-91.
7. Шевчик П.В., Станчик А.В., Матевосян Л. А., Хачатрян А.М., Петросян С.Г., Элементный и фазовый составы пленок теллурида кадмия, полученных методом лазерно-импульсного осаждения, сб. докл. “XXI межд. научн. конф. молод. учен.”, Минск, изд. “Беларуская Навука”, 2024, с. 419-421.
8. Aleksanyan E., V.Harutyunyan, Badalyan A., Grigoryan N, Margaryan N., Manukyan A., Matevosyan L., Okrepka H., Trepalin V., Ding Y., Zhukovskyi M., Kuno M., Aprahamian A., Manukyan Kh., Superior stability of CsPbBr films under high-energy proton irradiation, “The Journal of Physical Chemistry C”, 2024, 128 (40), pp. 16854-16860.
9. Aleksanyan E., Badalyan A., Harutyunyan V., Grigoryan N., Matevosyan L., Kirakosyan A., Lead halide perovskite based sensors under extreme conditions, “Proc. 10th International Conference on Sensors and Electronic Instrumentation Advances”, Ibiza, Spain, 2024, pp.169-171.
10. Avetissian H., Matevosyan H., Mkrtchian G., Berry curvature and shift vector effects at high-order wave mixing in biased bilayer graphene, arXiv preprint arXiv: 2409. 06269 v1. [cond-mat. mes-hall], 2024.
11. Ayvazyan G., Dashtoyan H., Khudaverdyan A., Matevosyan L., Properties of vacuum-evaporated metal halide perovskite absorbers on planar and nanotextured silicon substrates, “Lecture Notes in Networks and Systems”, 2024, 939, pp.3-10.
12. Gareyan V., Gevorkian Zh., Impact of surface roughness on light absorption, “Phys.Rev.A”, v. 109, 2024, p.013515.
13. Gareyan V., Margaryan N., Gevorkian Zh., Nanoroughness induced anti-reflection and haze in opaque systems “Physical Review A”, 110, 2024, 063523.
14. Gremenok V., Zaretskaya E., Stanchik A., Buskis K, Pashayan S., Tokmajyan A., Musayelyan A., Petrosyan S., Study of structural and optical properties of CdS thin films depending on chemical deposition time, “Optics and Spectroscopy”, v.132, N 2, 2024, pp.145-151. doi: 10.61011/EOS.2024.02.58449.5731-23.
15. Grigoryan L., Petrosyan P., Asryan L., Knyazyan N., Petrosyan S., Differential thermal analysis of the crystallization kinetics in perlite-based nanocrystalline glass-ceramics», “Ceramics-Silikáty”, 68 (3), 2024, pp.360-365. doi: 10.13168/cs.2024.0035 360
16. Khastyan E., Krivonos S., Nersessian A., Note on Ruijsenaars-Schneider model, “Physics of Particles and Nuclei”, v.55, 2024, N 3, pp.630-633.
17. Khastyan E., Krivonos S., Nersessian A., Note on N=8 supersymmetric mechanics with dynamical and semi-dynamical multiplets, “International Journal of Modern Physics A”, 2024, <https://doi.org/10.1142/S0217751X24501653>.
18. Yezakyan N., Yesayan A., Sallese J.-M., Nanowire junctionless ISFET noise model in Verilog-A, “International Journal of Electronics Letters”, v.12, N 4, 2024.
19. Zaretskaya E., Gremenok V., Buskis K., Korolik O., Pashayan S., Tokmajyan A., Musayelyan A., Petrosyan S., Microstructure and Raman Scattering of CdS Films Obtained by Chemical Deposition, “J. Appl. Spectrosc.”, v.91, 2024, pp.25–30. <https://doi.org/10.1007/s10812-024-01686-z>
20. **Հովածները հրապարակվել են “International Conference on Microwave and THZ technologies, wireless communications and Optoelectronics(IRPHE2024)” միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, 2024, IET Conference Proceedings, Volume 2024, Issue 36, pp. 89**
20. Gareyan V., Margaryan N., Gevorkian ZH., Antireflectivity and diffuse scattering from rough surfaces, pp. 1-5. <https://doi.org/10.1049/icp.2025.0980>
21. Vardanyan H., Hakhoumian A., Mkhitarian V., Application of Bessel beams for radio communication, pp. 6–10. <https://doi.org/10.1049/icp.2025.0981>
22. Petrosyan S., Musayelyan A., Tokmajyan A., Gremenok V., Korolik O., Stanchik A., Buskis K., CdS thin films grown on polyimide plastic substrate by chemical bath deposition, pp. 26–29. <https://doi.org/10.1049/icp.2025.0986>
23. Petrosyan S., Khachatryan A., Petrosyan P., 2D MoS2 phototransistor deposited on a flexible substrate, pp. 30–33. <https://doi.org/10.1049/icp.2025.0988>
24. Ayvazyan G., Dashtoyan H., Gasparyan F., Khudaverdyan S., Matevosyan L., Experimental determination of the binding energy of excitons in organometallic CH3NH3PbCl3-xlx perovskite films obtained by dual source vacuum thermal evaporation, pp. 34–37. <https://doi.org/10.1049/icp.2025.0989>

25. Harutyunyan V., Matevosyan L., Mkrtchyan V., Pluzyan G., Petrosyan S., Tokmajyan A., Investigation of structural and optical properties of CsPbBr₃ films synthesized by single-source vacuum evaporation method, pp. 38–41. <https://doi.org/10.1049/icp.2025.0990>
26. Sivolenko E., Hakhoumian A., Gasparyan N., Barseghyan M., Babayan H., More accurate and effective monitoring of moving targets in complex environments using "spectral mask" for harmonic signatures using higher-ordered statistics, pp. 49–52. <https://doi.org/10.1049/icp.2025.0993>
27. Haroyan H., Stepanyan A., Hakhoumian A., Beam scanning realization by a single electrically small antenna covered by magnetodielectric resonator, pp. 53–56. <https://doi.org/10.1049/icp.2025.0994>
28. Hovakimian L., On a Bessel function integral which occurs in electronic thin film theory, pp. 61–62. <https://doi.org/10.1049/icp.2025.0996>
29. Martirosyan S., Torikyan J., Some peculiarities of the Schmitt trigger, inverse problem, pp. 63–66. <https://doi.org/10.1049/icp.2025.0997>
30. Gasparyan N., Hakhoumian A., Sivolenko E., Barseghyan M., SC-DSB signal as a probe signal for testing nonlinearity in electronic circuits, pp 75–78. <https://doi.org/10.1049/icp.2025.1000>
31. Babayan H., Poghosyan N., Sargsyan S., Zakaryan T., Moving target indication as a radar cross section rapid estimate, pp. 86–89. <https://doi.org/10.1049/icp.2025.1003>

Պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսություն:

ԻԿՐԱՆԵՏ ԿԵՆՏՐՈՆ ՄԿ

Տնօրեն՝ Ֆ.-մ.գ.դ. Ն.Սահակյան

Էլեկտրոնային փոստ՝ icranet-armenia@icranet.org,
yerevan.secretariat@gmail.com

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Բազմաալիքային տվյալները, որոնք ընդգրկում են ինֆրակարմիր (IR), ռենտգենյան ու գամմա տիրույթները, կարևոր դեր են խաղում բլազարների շիթերում տեղի ունեցող ճառագայթման պրոցեսների ուսումնասիրության համար: Վերլուծելով 8 տարվա IR տիրույթի տվյալները, Neil Gehrels Swift աստղադիտակով ռենտգենյան տիրույթում գրանցված տվյալները և Fermi Large Area Telescope դիտակով գամմա տիրույթում 12 տարվա ընթացքում ստացված տվյալները՝ հետազոտվել են բլազարների տարբեր տիրույթներում ճառագայթային հոսքերի հնարավոր կոռելացիաները: Յուրաքանչյուր տարվել, որ կա կապ IR սպեկտրալ ինդեքսի, սինքրոտրոն բաղադրիչի առավելագույն հաճախության ու հոսքի միջև, ինչպես նաև ուժեղ կոռելացիա IR ու գամմա տիրույթների ճառագայթային հոսքերի միջև, հատկապես BL Lacertae տիպի բլազարներում: Օգտագործելով ստացված կոռելացիաները՝ ցույց է տրվել, որ մոտ 180 բլազարների ճառագայթումը կարող է գրանցվել CTA դիտակով, ինչն արժեքավոր տեղեկություն կտրամադրի դրանց շիթերում տեղի ունեցող պրոցեսների մասին:

Իրականացվել է Mrk 501 բլազարի համապարփակ ուսումնասիրություն բազմաալիք տիրույթում, որը ներառում է 2–8 կԷՎ տիրույթում Imaging X-ray Polarimetry Explorer (IXPE) դիտակով ռենտգենյան բևեռականության առաջին չափումները: Դիտումները, որոնք ընդգրկել են ռադիոալիքներից մինչև գերբարձր էներգիաների (ԳԲԷ) գամմա տիրույթը, իրականացվել են 2022թ. մարտից մինչև հուլիս: Արդյունքները ցույց են տվել, որ ԳԲԷ տիրույթում հոսքի փոփոխականությունը թույլ է եղել, մինչդեռ ռենտգենյան տիրույթում գրանցվել են բևեռականության ու սպեկտրալ հատկությունների էական փոփոխություններ: Սինքրոտրոնային բաղադրիչի առավելագույն հաճախականության

փոփոխությունները կոռելացվել են բևեռականության աստիճանի փոփոխությունների հետ, ինչը ցույց է տվել շիթի էներգիայով շերտավորված կառուցվածքը: Ստացված արդյունքները մոդելավորվել են երկգոտիական լեպտոնային մոդելի շրջանակում՝ դիտված սպեկտրալ ու բևեռականության փոփոխությունները բացատրելու համար՝ դրանք կապելով շիթի մագնետիզացիայի ու ճառագայթման գոտու չափերի փոփոխությունների հետ: Այս արդյունքները նոր պատկերացումներ են տալիս բլազարների շիթերում մասնիկների արագացման ու ճառագայթման մեխանիզմների վերաբերյալ:

PG 1553+113 TeV բլազարը բնութագրվում է հետաքրքիր փոփոխականությամբ, այդ թվում՝ գամմա տիրույթում կիսապարբերական (quasi-periodic) փոփոխություններով: Աղբյուրի տարբեր տիրույթներում հոսքի փոփոխականությունն ուսումնասիրվել է՝ օգտագործելով 10 տարվա ընթացքում բազմաալիքային տիրույթում գրանցված դիտողական տվյալները: Այս դիտումները, որոնք ներառում են էլեկտրամագնիսական սպեկտրի ողջ տիրույթը, ցույց են տվել, որ գամմա տիրույթում առկա է ճառագայթման պարբերական մոդուլացիա, սակայն այլ էներգետիկ տիրույթներում վիճակագրորեն նշանակալի պարբերականություն չի հայտնաբերվել: Գրանցված տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ փոփոխականությունը պայմանավորված է բարդ ֆիզիկական պրոցեսներով, որոնք չեն կարող բացատրվել պարզ մեկ տիրույթից մոդելների շրջանակում: Փոխարենն անհրաժեշտ են մոդելներ, որոնք ներառում են մի քանի ճառագայթման տիրույթներ ու պարբերական բաղադրիչներ, ինչպիսիք են jet precession կամ կրկնակի սև խոռոչների փոխազդեցությունները՝ դիտված փոփոխականությունները բացատրելու համար:

Իրականացվել է 1ES 2344+514 բլազարի բազմաալիքային տիրույթում ճառագայթման ուսումնասիրություն՝ օգտագործելով 2019-21թթ. ընթացքում գրանցված տվյալները: Դիտումները ցույց են տվել, որ աղբյուրը հաճախ ցուցաբերում է ծայրահեղ ճառագայթման հատկություններ, ինչպես օրինակ, երբ սինքրոտրոնային բաղադրիչը գերազանցում է 1 կէՎ-ը նույնիսկ ցածր ճառագայթման վիճակում: Այս արդյունքները հակասում են BL Lac տիպի օբյեկտներում հաճախ դիտվող «harder-when-brighter» ավանդական գրանցված փոփոխականությանը: Բացի այդ, դիտումների ընթացքում գրանցվել է ուժեղ բռնկում ռենտգենյան տիրույթում, երբ ճառագայթման ինդեքսը եղել է բավականին փոքր, ինչպես նաև բռնկում ԳԲԷ գամմա տիրույթում, որը չէր կոռելացվում ցածր էներգիաների տիրույթում փոփոխականության հետ, ինչը ցույց է տալիս, որ ճառագայթումն առաջանում է տարբեր տիրույթներից: Այս փոփոխականությունները մոդելավորելու համար կիրառվել են ժամանակից կախված լեպտոնային մոդելներ:

GRB 201216C գամմա բռնկումը գրանցվել է MAGIC դիտակներով, որի հեռավորությունը համապատասխանում է 1.1 կարմիր շեղմանը, ինչը ԳԲԷ տիրույթում (70 ԳէՎ-ից բարձր) գրանցված ամենահեռավոր գամմա բռնկումն է: Գրանցված ճառագայթումը մոդելավորվել է սինքրոտրոնային ֆոտոնների հակադարձ Կոմպտոնյան ցրման մոդելի (SSC) շրջանակում, որն հաջողությամբ բացատրում է տվյալներն օպտիկականից մինչև ԳԲԷ գամմա տիրույթները: Ի տարբերություն այլ գամմա բռնկումների, որոնք գրանցվել են ԳԲԷ գամմա տիրույթում՝ GRB 201216C-ի շրջակա միջավայրը համապատասխանել է քամու նման միջավայրի, իսկ մոդելի պարամետրերը մոտ էին նախկին հետազոտություններում ստացված պարամետրերին:

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Բլազարների բազմաալիքային էներգիայի սպեկտրալ բաշխվածությունների (ԷՄԲ-երի) մոդելավորման համար մշակվել է նորարարական ու արդյունավետ մեթոդ՝ հիմնված կոնվոլյուցիոն նեյրոնային ցանցերի (CNNs) վրա: Այս մոտեցումը լուծում է ավանդական մոդելավորման խնդիրները, որոնք, լինելով ժամանակատար պրոցեսներ, պահանջում են մեծ հաշվարկային ռեսուրսներ՝ սահմանափակելով դրանց կիրառումն իրական ժամանակում տվյալների վերլուծության ու մոդելավորման համար: CNN-ն ուսուցանվել է սինքրոտրոնային ֆոտոնների հակադարձ Կոմպտոնյան ցրման մոդելի վրա, որոնց սպեկտրները գեներացվել են SOPRANO կոդով: Արդյունքում ստացված CNN-ը բարձր ճշգրտությամբ վերարտադրում է բազմաալիքային տիրույթում բարդ ճառագայթային առանձնահատկությունները և կարող է օգտագործվել գրանցված տվյալների մոդելավորման համար: Ստացված CNN-ն օգտագործվել է Mrk 421 և 1ES 1959+650 բլազարների ԷՄԲ-երը մոդելավորելու համար, ինչի արդյունքում գնահատվել են աղբյուրները նկարագրող կարևոր պարամետրերը, ինչպիսիք են Դոպլերի գործակիցը, մագնիսական դաշտի ուժգնությունը, էլեկտրոնների լուսավորությունը, ճառագայթման տիրույթի չափերը: CNN-ի արդյունավետությունը հնարավորություն է տալիս արագորեն գնահատել պարամետրերը, ինչը նախկինում անհասանելի էր ավանդական մոդելների դեպքում: Առաջարկվող նոր մեթոդը կարևոր առաջընթաց է բլազարների ճառագայթման սպեկտրի մոդելավորման խնդիրներում՝ համատեղելով թվային սիմուլյացիաներն ու տվյալների մոդելավորման արդյունավետությունը: Ստացված CNN-ը հասանելի է գիտական հանրությանը MMDC տվյալների բազայում:

Ընդլայնվել է կոնվոլյուցիոն նեյրոնային ցանցերի (CNNs) կիրառությունը բլազարների ԷՄԲ-երի մոդելավորման համար՝ ներառելով արտաքին ֆոտոնային դաշտերի հակադարձ Կոմպտոնյան ցրման (EIC) պրոցեսները: Այս դեպքում հաշվի են առնվում շիթերում ռեյաստիվիստական էլեկտրոնների փոխազդեցություններն ակրետացիոն սկավառակից ճառագայթված, լայն գծերի տիրույթից ու փոշոտ տորուսանման տիրույթից ճառագայթված արտաքին ֆոտոնների հետ: CNN-ն ուսուցանվել է 1 միլիոն ԷՄԲ-երի տվյալների բազայի վրա, որը ստացվել է SOPRANO կոդով: Ստացված CNN-ը կիրառվել է 3C 454.3 և CTA 102 աղբյուրների ուսումնասիրություններից ստացված տվյալների մոդելավորման համար, ինչի արդյունքում գնահատվել են շիթն ու մասնիկների բաշխվածությունը նկարագրող հիմնական պարամետրերը: Այս CNN-ը հնարավորություն է տալիս մոդելավորել FSRQ դասի բլազարների ճառագայթման սպեկտրը և հասանելի է գիտական հանրությանը MMDC տվյալների բազայում:

Պատրաստվել է Markarian Multiwavelength Data Center (MMDC) վեբ հարթակը, որը նախատեսված է բլազարների բազմաալիքային ու բազմամեսենջերային դիտումների տվյալների ներբեռնման ու մոդելավորման համար: MMDC-ն ներառում է ավելի քան 80 կատալոգի արխիվային, խոշոր դիտումների օպտիկական (օրինակ՝ ASAS-SN, ZTF, Pan-STARRS), ինչպես նաև նոր վերլուծված տվյալներ օպտիկական/ուլտրամանուշակագույն, ռենտգենյան ու գամմա տիրույթներում: MMDC-ն պարունակում է մեծ թվով բլազարների տարբեր ժամանակահատվածներում գրանցված ԷՄԲ-եր, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրել այդ աղբյուրներում տեղի ունեցող պրոցեսների դինամիկ փոփոխությունները: Տվյալների բազան հնարավորություն է տալիս իրականացնել ԷՄԲ-երի ճշգրիտ տեսական մոդելավորում՝ կիրառելով մեքենայական ուսուցման ալգորիթմներ, որոնք ուսուցանվել են լեպտոնային ու լեպտոն-հադրոնային մոդելների վրա: MMDC-ն նաև առաջարկում է տվյալների ստացման ու վիզուալիզացման գործիքներ՝ ապահովելով

արդյունավետ միջոցներ բլազարների ուսումնասիրության համար: Տվյալների համապարփակ հասանելիությունն ու առաջադեմ մոդելավորման հնարավորությունների համադրության շնորհիվ MMDC-ն զգալիորեն նպաստում է բլազարների ճառագայթման մեխանիզմների ու փոփոխականության խորացված ուսումնասիրություններին:

Հետազոտվել են $z = 2.0$ -ից $z = 2.5$ տիրույթում կարմիր շեղում ունեցող 79 բլազարի շիթերում տեղի ունեցող պրոցեսները՝ վերլուծելով Fermi LAT, Swift XRT/UVOT և NuSTAR դիտակներով 14 տարվա ընթացքում գրանցված տվյալները: Այս մեծ հեռավորությամբ բլազարները, որոնք տիեզերքի ամենալուսավոր աղբյուրներից են, առանցքային նշանակություն ունեն ռելյատիվիստական շիթերի էվոլյուցիան ու դրանց կապն ակրետացիոն սկավառակների հետ հասկանալու համար: Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ 31 աղբյուրներում գրանցվել է հոսքի փոփոխականություն գամմա տիրույթում, որոնցից մի քանիսի դեպքում լուսատվությունը հասել է 10^{50} էրգ/վրկ-ի: Այդ աղբյուրների EUP-երը մոդելավորվել են մեկ տիրույթից լեպտոնային մոդելի շրջանակում՝ ենթադրելով, որ ռենտգենյան ու գամմա տիրույթում ճառագայթումներն առաջանում են սինքրոտրոնային ու լայն գծերի տիրույթից ֆոտոնների հակադարձ Կոմպտոնյան ցրումից: Մոդելավորումը հնարավորություն է տվել գնահատել մի շարք կարևոր ֆիզիկական պարամետրեր, այդ թվում՝ մասնիկների էներգիական բաշխումները, շիթերում մագնիսական դաշտերի ուժգնություններն ու լուսավորությունները՝ տրամադրելով արժեքավոր պատկերացումներ բարձր կարմիր շեղմամբ բլազարների շիթերում ընթացող պրոցեսների մասին:

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Sahakyan N., Vardanyan V., Giommi P., Bégué D., Israyelyan D., Harutyunyan G., Manvelyan M., Khachatryan M., Dereli-Bégué H., Gasparyan S., Markarian multiwavelength data center (MMDC): A tool for retrieving and modeling multitemporal, multiwavelength, and multimessenger data from blazar observations, “The Astronomical Journal”, v.168, issue 6, id.289, 2024.
2. Sahakyan N., Bégué D., Casotto A., Dereli-Bégué H., Giommi P., Gasparyan S., Vardanyan V., Khachatryan M., Pe'er A., Modeling blazar broadband emission with convolutional neural networks. ii. External compton model, “The Astrophysical Journal”, v.971, issue 1, id.70, 2024.
3. Abe S., Abhir J., Abhishek A., ... Ansoldi S., Antonelli L. A., Arbet Engels A., ... Sahakyan N., ..., Constraints on VHE gamma-ray emission of flat spectrum radio quasars with the MAGIC telescopes, “Monthly Notices of the Royal Astronomical Society”, v.535, issue 2, 2024, pp.1484–1506.
4. Sahakyan N., Harutyunyan G., Gasparyan S., Israyelyan D., Broad-band study of gamma-ray blazars at redshifts $z = 2.0$ – 2.5 , “Monthly Notices of the Royal Astronomical Society”, v.528, issue 4, 2024, pp.5990–6009.
5. Bégué D., Sahakyan N., Dereli-Bégué H., Giommi P., Gasparyan S., Khachatryan M., Casotto A., Pe'er A., modeling blazar broadband emission with a convolutional neural network. I. Synchrotron self-compton model, “The Astrophysical Journal”, v.963, issue 1, id.71, 2024.
6. Giommi P., Sahakyan N., Israyelyan D., Manvelyan M., The remarkable predictive power of infrared data of blazars, “The Astrophysical Journal”, v.963, issue 1, id.48, 2024.
7. Tripathi D., Giommi P., ..., Doro M., Israyelyan D., Pollock A. M. T., Sahakyan N., Firmamento: a multimessenger astronomy tool for citizen and professional scientists, “The Astronomical Journal”, v.167, issue 3, id.116, 2024.
8. MAGIC Collaboration, Algaba J. C., Baoković M., Chandra S., ... Sahakyan N., ... Parsons H., Broadband multi-wavelength properties of M87 during the 2018 EHT campaign including a very high energy flaring episode, “Astronomy & Astrophysics”, v.692, id.A140, 2024.

9. MAGIC Collaboration, Abe S., Abhir J., Abhishek A.,... Sahakyan N., ..., Standardised formats and open-source analysis tools for the MAGIC telescopes data, “Journal of High Energy Astrophysics”, v.44, 2024, pp.266–278.
10. MAGIC Collaboration, Abe S., Abhir J., Abhishek A.,... Sahakyan N., ..., Constraints on Lorentz invariance violation from the extraordinary Mrk 421 flare of 2014 using a novel analysis method, “Journal of Cosmology and Astroparticle Physics”, v. 2024, issue 7, id.044, 2024.
11. MAGIC Collaboration, Abe H., Abe S., Abhir J., ... Sahakyan N., ..., Constraints on axion-like particles with the Perseus Galaxy Cluster with MAGIC, “Physics of the Dark Universe”, v.44, id.101425, 2024.
12. MAGIC Collaboration, Abe S., Abhir J., Acciari V. A., ... Sahakyan N., ..., Insights into the broadband emission of the TeV blazar Mrk 501 during the first X-ray polarization measurements, “Astronomy & Astrophysics”, v.685, id.A117, 2024.
13. MAGIC Collaboration, Abe S., Abhir J., Acciari V. A., Aguasca-Cabot A.,... Sahakyan N., ..., Performance and first measurements of the MAGIC stellar intensity interferometer, “Monthly Notices of the Royal Astronomical Society”, v.529, issue 4, pp.4387–4404, 2024.
14. MAGIC Collaboration, MAGIC Collaboration, Abe H., Abe S., Abhir J., Acciari V. A., ... Sahakyan N., ..., The variability patterns of the TeV blazar PG 1553+113 from a decade of MAGIC and multiband observations, “Monthly Notices of the Royal Astronomical Society”, v.529, issue 4, pp.3894–3911, 2024.
15. MAGIC Collaboration, Abe S., Abhir J., Acciari V. A., Agudo I., Aniello T.,... Sahakyan N., ..., First characterization of the emission behavior of Mrk 421 from radio to very high-energy gamma rays with simultaneous X-ray polarization measurements, “Astronomy & Astrophysics”, v.684, id.A127, 2024.
16. MAGIC Collaboration, Abe H., Abe S., Acciari V. A., Agudo I., ... Sahakyan N., ..., Multi-year characterisation of the broad-band emission from the intermittent extreme BL Lac 1ES 2344+514, “Astronomy & Astrophysics”, v.682, id.A114, 2024.
17. MAGIC Collaboration, Abe H., Abe S., Acciari V. A., Agudo I., ... Sahakyan N., ..., MAGIC detection of GRB 201216C at $z = 1.1$, “Monthly Notices of the Royal Astronomical Society”, v. 527, issue 3, 2024, pp. 5856–5867.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ թղթակից անդամ Ռ.Հարությունյան

Գիտքարտուղար՝ Ա.Մինասյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են էկոլոգանոսֆերային հետազոտությունների, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնները, Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության, Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի, Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների, Մոլեկուլային կենսաբանության, Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտները:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 6 ակադեմիկոս, 8 թղթակից և 27 արտասահմանյան անդամներ, 12 պատվավոր դոկտոր:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 1 ընդհանուր ժողով, բյուրոյի 26 նիստ ու աշխատանքային խորհրդակցություն, գիտական կազմակերպությունների 8 հաշվետու ժողով:

Բաժանմունքի տարեկան ժողովում քննարկվել են կազմակերպությունների հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքները:

Բյուրոյի 26 նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2024թ. աշխատանքային պլանը, բաժանմունքի գիտական կազմակերպությունների 2023թ. բազային ֆինանսավորման, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, պետական նպատակային ծրագրերի մասին հաշվետվությունները, 2024-25 ուստարվա ասպիրանտուրայի ու դոկտորանտուրայի ընդունելության հարցերը, ԳՀԿ-ների՝ անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման հայտերը, ԳԱԱ համակարգի գիտական գործուղումների ֆինանսավորման դիմումները: Բյուրոյի նիստում քննարկվել է նաև Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի համար առաջադրված թեկնածությունը, որը ներկայացվել է ԳԱԱ նախագահության հաստատմանը: Ինստիտուտի տնօրեն է ընտրվել Ժ.Հովակիմյանը:

Բաժանմունքն անցկացրել է «Կենսաբազմազանության և կենսանվտանգության պրոբլեմային խորհրդի» 5 նիստ, քննարկվել է Երևանում ծառերի փոխարինման ծրագիրը, Սևանա լճի էկոհամակարգերին վերաբերող հիմնախնդիրները, բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության հրատապ և Հայաստանում վիրուսային վարակների արդի խնդիրները:

ԳԱԱ մրցութային հանձնաժողովի նիստերում քննարկումների արդյունքում բաժանմունքի ինստիտուտներին ու կենտրոններին տրամադրվել է ֆինանսավորում անհրաժեշտ սարքերի ձեռքբերման համար:

Բաժանմունքի բյուրոն հաստատել է 32 աշխատակցի գիտական գործուղումների ֆինանսավորման հայտերը:

Երիտասարդների շրջանում գիտության հանրայնացման նպատակով բաժանմունքը նախաձեռնել է «Գիտությունն այսօր» սեմինարների շարք՝ «Չընդհատված ծածկագիր. հայեր», «Ապակողավորում ենք գենոմը», «Հավաքում ենք փաթիլ. ատոմներից դեպի մոլեկուլ և բյուրեղ», «Սննդակարգ և առողջություն», «Թմրամիջոցները և դրանց հետևանքները», «Ամբողջական գենոմի առաջին հետազոտությունը հայկական պոպուլյացիայում»:

Բաժանմունքի ԳՀԿ-ներն անցկացրել են հանրապետական ու միջազգային 35 միջոցառում, այդ թվում՝ գործնական դասընթացներ, խաղ-մրցույթներ, ամառային ու

գարնանային դպրոցներ, սիմպոզիում, ուսուցողական սեմինարներ, գիտաժողովներ, գիտարշավներ, որոնց մասնակցել է 1396 մարդ (142-ն արտերկրից):

Բաժանմունքի կազմակերպություններն իրենց արդյունքները ներկայացրել են «Գիտության շաբաթ» գիտական փառատոնի տաղավարներում, երիտասարդ գիտնականները մասնակցել են Գիտության օրվա առթիվ ԳԱԱ-ում կազմակերպված ցուցահանդեսին, առանձին գիտնականներ հանդես են եկել դասախոսություններով:

Բաժանմունքի ԳՀԿ-ների 1 աշխատակցի շնորհիվ է ՀՀ պետական պարզև՝ «Երախտագիտություն» մեդալ, 1 աշխատակցի՝ ՌԴ պետական պարզև՝ «Բարեկամության շքանշան»:

Բաժանմունքի ԳՀԿ-ները տպագրել են 318 հոդված գրախոսվող ամսագրերում (277-ը Sqopus/WoS), 19 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (17-ն արտասահմանում), 172 թեզիս (154-ն արտասահմանում), 3 մենագրություն (արտասահմանում), 7 ուսումնական ձեռնարկ և ստացել են 4 արտոնագիր:

Բաժանմունքի 3 մասնագիտական խորհուրդներում պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

Բաժանմունքի ԳՀԿ-ներում միջազգային ֆինանսավորմամբ իրականացվել է 41 դրամաշնորհային ծրագիր:

ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան

Փոխտնօրեն՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան

Գիտքարտուղար տեխ.գ.թ. Ք.Սարգսյան

Էլեկտրոնային փոստ՝ ecocentr@sci.am, info@cens.am

Կայքէջ՝ www.cens.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Օրգանական նյութի (ՕՆ) քանակության, pH մեծության, քիմիական ու մեխանիկական կազմի միջև եղած կապի պիլոտային ուսումնասիրությունը ՀՀ 5 մարզերի գյուղատնտեսական հողերի 30 նմուշներում ցույց է տվել ՕՆ հետ դրական նշանակալի կոռելյացիա Cr, Ni, Cu, Ca տարրերի ու տիղմ-կավի հետ, իսկ բացասական նշանակալի կոռելյացիա դիտվել է P, Mn, Zn, Rb, Al ու հողի ավազի քանակության հետ, որոնք դրական նշանակալի կոռելյացիա են դրսևորել pH հետ: Հաստատվել է ՕՆ տեղանքի հողատիպերից ունեցած կախվածությունը: Հրազդան գետի՝ Երևանի տարածքով անցնող հատվածի հատակային նստվածքներում որոշ քիմիական տարրերի պարունակությունների բազմամյա (2019-23թթ.) ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մեդիանի արժեքի փոփոխման համանման միտում է գրանցվել քաղաքի երկրաբանական հենքի (Cr, V, Fe, Co, Zr, Mn, K, Ba) կազմությանը բնորոշ տարրերի համար: Քաղաքի հարավ-արևմուտքում գրանցվել են բազմատարր աղտոտման չափավոր ու բարձր վտանգավորության մակարդակներ, իսկ չափավոր (2020թ.) ու նշանակալի (2021թ.) մակարդակների էկոլոգիական ռիսկ գրանցվել է Երևանյան լճին կից տեղամասում: Նույնականացվել են 3 երկրաքիմիական ասոցիացիաներ՝ բնական (Fe, Mn, Co, V, Ti, Zr, K, Rb, Ba), անթրոպոգեն (Cu, Zn, Pb, Mo) ու (Ca, Sr, Cr) խառը ծագման: Անթրոպոգեն ասոցիացիան կապված է եղել Ca-ի հետ՝ մատնանշելով Cu^{2+} , Pb^{2+} , Mo^{2+} , Zn^{2+} իոնների ֆիկսացիայի ու նստեցման գործընթացում կարբոնատների նշանակալի դերը: Առաջին անգամ Հրազդան գետի՝ Երևանի տարածքով անցնող հատվածի

հատակային նստվածքների համար որոշվել են Cr, V, Ti, Ca, K, Mo, Zr, Rb, Zn, Cu, Co, Fe, Mn, Pb, Ba հիմնագծային պարունակությունները: Կախության նյութի մասնիկների միկրոանալիզի արդյունքում Cu, Zn, Pb, Mo տարրերի քանակություններ չեն հայտնաբերվել (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Տեփանոսյան):

Շիրակի մարզի գյուղատնտեսական հողերում գնահատվել են գումարային ալֆա ու բետա ակտիվության մակարդակները, բնական ^{226}Ra , ^{232}Th , ^{40}K -ի ու տեխնածին ^{137}Cs -ի տեսակարար ակտիվությունները՝ որպես հանրապետության ռադիոէկոլոգիական ռիսկերի գնահատմանն ուղղված հետազոտությունների շարունակություն: Բնական ռադիոնուկլիդների առավելագույն ակտիվությունները գրանցվել են մարզի հարավում ու արևելքում: Գրանցվել է նշանակալի կոռելյացիա բնական ռադիոնուկլիդների տեսակարար ակտիվության, գումարային բետա ակտիվության ու գամմա դոզայի հզորության միջև: Տեխնածին ^{137}Cs -ի ակտիվությունը տատանվել է 1.62-71.6 Բք/կգ սահմաններում և օրինաչափորեն աճել է նմուշառման կետի բացարձակ բարձրությանը զուգընթաց: Տարեկան արդյունարար դոզայի մեջ ամենամեծ մասնաբաժինը պատկանել է բնական ռադիոնուկլիդներին: Քաղցկեղածին ռիսկի միջին գլոբալ մակարդակը գերազանցվել է մարզի հարավում: Ստացված արդյունքների հիման վրա մշակվել են հողում ռադիոնուկլիդների բաշխվածության փորձագիտական քարտեզներ (ղեկ.՝ Կ.գ.թ. Օ.Բեյլասա):

Շարունակվել են ՀՀ բնակչության կողմից սննդամթերքի սպառման ու քիմիական վտանգների պարունակության տվյալների հենքերի թարմացման աշխատանքները: Արդյունքները հիմք են հանդիսանում բնակչության համար հնարավոր առողջական ռիսկերի գնահատման ու հաղորդակցման համար: Երևանում իրականացվել են շաքար պարունակող մթերքների սպառման վերաբերյալ սննդակարգային հարցումներ: Սննդի սպառման հաճախականության հարցաթերթի տվյալների վիճակագրական վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ մայրաքաղաքի չափահաս բնակչության կողմից հաճախակի սպառվող շաքար պարունակող մթերքներից են շոկոլադը, քաղցրավենիքը, հրուշակեղենը, գազավորված ըմպելիքն ու կոմպոտը: Արդյունքները հիմք են հանդիսանալու բնակչության սննդակարգում շաքարի օրական ընդունումը գնահատելու ու առողջապահական արժեքներին համապատասխանությունն ուսումնասիրելու համար (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

Լանդշաֆտային բաղադրիչներից հողերի էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդների կատարելագործմանն ուղղությամբ իրականացվել է գյուղատնտեսական հողերի 30 նմուշներում մի շարք քիմիական տարրերի պարունակությունների և դրանց շարժական սպեկտրաչափությամբ տեսանելի, մոտ ու կարճալիք ինֆրակարմիր սպեկտրալ տիրույթներում (350-2500 նմ) որոշված անդրադարձման արժեքների հետ համադրում մեքենայական ուսուցման (ՄՈՒ) K-means ու PCA մեթոդներով: Առանձնացել է 3 խումբ մակրոտարրերի (Si, Al, Fe, Ca, K) ու 350-2500 նմ տիրույթում անդրադարձման արժեքների միջև առկա կոռելյացիոն առանձնահատկություններով: I խմբում՝ Si, Al, Fe օքսիդները նշանակալի բացասական կոռելյացիայով՝ 800-1750նմ ու 2000-2400նմ տիրույթներում, SiO_2 ՝ $r=-0.5$, $p<0.05$; Al_2O_3 $r=-0.7$, $p<0.01$; Fe_2O_3 $r=-0.7$, $p<0.01$, II խմբում՝ CaO նշանակալի դրական կոռելյացիայով (450-650նմ՝ $r=0.75$; $p<0.01$ ու 2000-2400նմ՝ $r=0.7$, $p<0.001$), III խմբում K_2O կոռելյացիա չի դրսևորվել: Գյուղատնտեսական հողահանդակների (խաղողի այգիներ) էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդի կատարելագործմանն ուղղությամբ համադրվել են 129 կետում տերևներում չափված քլորոֆիլի ու ԱԹՍ պատկերներից ստացված վեգետացիոն ինդեքսների (NDVI, SAVI, GNDVI և այլն) արժեքները և ՄՈՒ PLSR ու Random Forest մոդելներով կանխատեսվել է տերևներում քլորոֆիլի քանակը: Արդյունքները (PLSR: $R^2_{\text{Val}}=0.64$, $\text{RMSE}_{\text{Val}}=25.56$; RF: $R^2_{\text{Val}}=0.63$, $\text{RMSE}_{\text{Val}}=25.80$) հիմք են հանդիսանում խաղողի տերևներում քլորոֆիլի պարունակության

կանխատեսման ու քանակական գնահատման գործիքի ստեղծման համար (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

Կոտայքի մարզի Ակունք խոշորացված 2 համայնքների տարբեր բարձրության (50-60սմ ու 70-80սմ) բուսածածկով բնական խոտհարքերի արդյունավետության ու դրա հետ կապված մի շարք կենսաբանական չափորոշիչների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բարձր խոտածածկով տեղամասի միջին բերքատվությունը գերազանցել է ցածրին 1.5 անգամ, իսկ բուսախմբերի համեմատությամբ՝ բակլազգի ու տարախոտայինները՝ 1.7 անգամ: Անկախ բուսածածկի բարձրությունից՝ բոլոր համակեցություններում բուսախմբերի վերին հարկաշարքի տերև/ցողուն հարաբերակցության արժեքը եղել է զգալի բարձր ստորին հարկաշարքի նույն ցուցանիշից: Ուսումնասիրված գերակշռող տեսակներից հացազգիները (աշորա, ցորնուկ, դաշտավլուկ) աչքի են ընկել բույսերի բարձրությամբ, իսկ չոր կշռի, տերևային մակերեսի, տերև/ցողուն հարաբերության հաշվով 1.5-3 անգամ գերազանցել է բակլազգի տեսակների (վիկ, եղջրառվույտ, կորնգան, տափուլոռ) մոտ: Բոլոր տարբերակներում հում պրոտեինի առավելագույն արժեք դիտվել է բոլոր բույսերի տերևներում, թաղանթանյութը՝ ցողուններում, հատկապես բակլազգիների մոտ, իսկ ֆոսֆորի ու կալցիումի պարունակությամբ բուսատեսակներն էականորեն չեն տարբերվել (ղեկ.՝ գյուղ.թ.դ. Բ.Մեժունց, աշխ.գ.թ.՝ Լ.Սահակյան):

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնը շարունակել է աջակցել «Կրթություն հանուն կայուն զարգացման (ԿԿԶ)» միջազգային գործընթացին՝ իրականացնելով էկոլոգիական գրագիտության բարձրացման ոչ ֆորմալ կրթություն ՀՀ-ում ասոցացված ու գործընկեր դպրոցներում (դպրոցներ 2, արհեստագործական պետական ուսումնարան 1, տարածաշրջանային պետական քոլեջ 1): Ամբիոնի գործունեությունը լայնորեն լուսաբանվել է միջազգային կրթական ֆորումներում ու հանդիպումներում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Պողոսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Երևան քաղաքի մթնոլորտային օդի մասնիկների, փոշու և ասոցացված պոտենցիալ տոքսիկ տարրերի համալիր հետազոտություններ. երկրաքիմիա, ռիսկեր և լուծումներ» նախագծի (ղեկ.՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան) արդյունքում պարզվել է, որ Երևանի տարածքի բակերում ու փողոցների մակերևույթին դեպոնացված փոշում գերակայում են բազմատարր աղտոտման չափավոր ու բարձր մակարդակները: Լոկալ Մորանի ինդեքսի կիրառությամբ քաղաքի հարավ-արևմտյան հատվածում նույնականացվել է բազմատարր աղտոտման բարձր արժեքների տարածական կլաստերը, որը համընկել է չափազանց բարձր աղտոտման մակարդակի դաշտի հետ: Ավելին, Երևանի տարածքի փոշում ուսումնասիրված քիմիական տարրերը հանդես են գալիս երկու երկրաքիմիական ասոցիացիաներով. I՝ Fe, Co, Ti, Mn, V, II՝ Pb, Zn, Cu, Mo: Քաղաքի ճանապարհային ու բակային փոշում ուսումնասիրված տարրերից ՄԹԿ նկատմամբ գերազանցումներ հայտնաբերվել են Cr, As, Zn, Cu ու Pb դեպքում: Երեխաների համար միատարր ոչ քաղցկեղածին ռիսկ ճանապարհային փոշում դիտվել է As, Cu, Co ու Fe -ի դեպքում, բակային փոշում՝ Fe-ի ու Pb-ի դեպքում, իսկ առողջությանն ուղղված քաղցկեղածին ռիսկ դիտվել է ճանապարհային փոշում Cr, As ու Pb-ի համար, բակային փոշում՝ Cr, As, և Pb-ի համար: Փողոցային ու բակերի փոշու դեպքում մեծահասակների առողջությանն ուղղված միատարր ոչ քաղցկեղածին ռիսկ չի գրանցվել:

«Արածեցման տարբեր ռեժիմների ազդեցությունն արոտների արդյունավետության և հողերի բերրիության ցուցանիշների վրա» նախագծի (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Նավասարդյան)

արդյունքների համաձայն՝ արածեցումը նվազեցնում է բուսածածկի բարձրության, կենսազանգվածի, բարձրարժեք բուսախմբերի մասնաբաժնի ու հողում մանրահողի արժեքները և մեծացնում է հողի ծավալային կշիռը, ազոտի ու ֆոսֆորի քանակությունը: Արածեցումը զգալի ազդեցություն չի ունեցել հողերի կարբոնատների, pH, ազոտի, ֆոսֆորի, կալիումի շարժուն ձևերի ու բույսերի սննդանյութերի պարունակության վրա, իսկ արածեցման ռեժիմի կարգավորումը կարող է բարձրացնել արոտների արդյունավետությունը (մինչև 25%) և հանդիսանալ արդյունավետ միջոց տափաստանային արոտավայրերի դեգրադացվածության կանխարգելման ու կայուն կառավարման համար:

«Ռադոնի էմանացիայի պոտենցիալի և ռադոնային վտանգի գնահատում Երևան քաղաքում» նախագծի (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Օ.Բեյլանա) ամփոփման արդյունքում առաջին անգամ ստացվել է Երևանի հողի գազային ֆազայում ռադոնի ակտիվության բաշխվածության քարտեզ: Երևանի հողի գազային ֆազայում ռադոնի ակտիվությունը տատանվել է բավականին լայն սահմաններում՝ 210-40500 Բք/մ³, առավել բարձր ակտիվություն գրանցվել է քաղաքի կենտրոնական ու արևելյան հատվածներում՝ նստվածքային ապարների վրա զարգացած հողերում: Առաջին անգամ գնահատվել են Երևանի հողերում բնական ռադիոնուկլիդների լոկալ հիմնագծային ակտիվությունները:

«Սննդամթերքում միկոտոքսինների ռիսկի գնահատում» նախագծի (ղեկ.՝ տեխ.Գ.Թ. Մ.Բեգլարյան) ամփոփմամբ մթերքների օրական տարբեր քանակներ սպառող բնակչության առանձին խմբերի համար գնահատված ներգործության սահմանի արժեքները ցույց են տվել, որ համեմունքների, ընդեղենի, չրերի, քաղցրավենիքի, հացի ու լավաշի սպառման արդյունքում աֆլատոքսինների քրոնիկ ներգործությունը հանրային առողջապահության տեսանկյունից մտահոգիչ է. աֆլատոքսինների՝ սահմանված թույլատրելի մակարդակները չգերազանցող պարունակությունները բնակչության առողջության համար նույնպես կարող են ռիսկային լինել:

«Լեռնային լճերի ջրի որակի տարածաժամանակային փոփոխությունների գնահատում հեռազննման տվյալների մշակման տեխնոլոգիաների կիրառմամբ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ աշխ.Գ.Թ. Շ.Ասմարյան) վտանգավոր ջրիմուռների ծաղկման երևակումների, քլորոֆիլ ա, սեկի սկավառակի ու լճի ջրի մակերևութային ջերմաստիճանի ցուցանիշների՝ գերմանական EOMAP կազմակերպության MIP ալգորիթմներով վերծանման արդյունքների և Sentinel 3 OLCI տեսանելի սպեկտրում (RGB) պատկերների բինար համակարգով դասակարգման արդյունքների համադրման արդյունքում մշակվել է մեթոդական մոտեցում Սևանա լճի ծաղկման հայտնաբերման ու մշտադիտարկման համար:

«Բնական և մարդածին օբյեկտների սպեկտրալ հայտանիշների ստացման և վերլուծության մեթոդների մշակում» գերբարձր լուծաչափի հեռազննման տվյալների հիման վրա» նախագծի շրջանակում (ղեկ.՝ աշխ.Գ.Թ. Ա.Մեղվեղև) բնական ու անթրոպոգեն օբյեկտների սպեկտրալ հայտանիշների բազայի մշակման նպատակով իրականացվել է ՀՀ տարածքի որոշ բնական ու անթրոպոգեն օբյեկտների ԱԹՍ օպտիկական ու բազմասպեկտրալ նկարահանում, ստացված տվյալների մշակում և դրանց համեմատում դաշտային սպեկտրաչափության արդյունքների հետ:

«Գեոէկոլոգիական հետազոտություններում ակտիվ հեռազննման համակարգերի ներդրման ուղղությամբ կարողությունների հզորացում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ աշխ.Գ.Թ. Շ.Ասմարյան) Դիլիջանի Ազգային պարկի 4 փորձահրապարակներում իրականացված փորձնական վերերկրյա LIDAR սքանավորման արդյունքների համաձայն սքանավորման տեղեկատվական արդյունավետությունը կախված է անտառամերձ թփուտների, մատղաշ ծառերի առատությունից, խտությունից ու փայտային բուսականության տեսակային կազմից:

«ՀՀ որոշ լանդշաֆտային գոտիներում բնական կերահանդակների էկոլոգիական վիճակի տարածաժամանակային փոփոխությունների գնահատման մեթոդի մշակում հեռազննման տեխնոլոգիաների և ՄՈւ մոդելների կիրառմամբ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ Գ.Այվազյան) իրականացվել է Արագածոտնի մարզի Ներքին Սասունաշեն համայնքի բնական կերահանդակների LANDSAT, Sentinel ու PlanetScope արբանյակային պատկերների սպեկտրալ ինդեքսներով վերծանում ու համադրում ԱԹՍ պատկերների նույն ինդեքսներով վերծանման հետ: Կոռելյացիոն լավագույն արդյունքները ($r=0.5$, $p<0.01$) ստացվել են Sentinel ու PlanetScope պատկերներից վերծանված GLI, EVI, NDVI ու SAVI ինդեքսների արժեքների համար:

«Արարատյան դաշտի հողերի համապարփակ երկրաքիմիական բնութագրում. հազվագյուտ հողային տարրերի ներուժի բացահայտում խաղողի հետազոտության համար» նախագծի շրջանակում (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Գ.Տեփանոսյան) իրականացվել է հետազոտության համար անհրաժեշտ մուտքային տվյալների հավաքագրում, քարտեզագրական հենքերի ստեղծում, հողի արխիվային նմուշների առանձնացում, նախապատրաստում ու քիմիական կազմի որոշում:

«Ռադիոէկոլոգիական հետազոտությունների ամրապնդում՝ Հայաստանում ճառագայթման ռիսկի գնահատման և կառավարման համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Օ.Բեյլանա) կազմվել է աշխատանքային պլան, որը համաձայնեցվել է արտասահմանյան գործընկերոջ հետ, իրականացվել է շուկայի ուսումնասիրություն՝ ձեռքբերվող սարքավորման գնման մրցույթի կազմակերպման նպատակով:

«Լոռու մարզի հողերում հազվագյուտ հողային տարրերի համապարփակ երկրաքիմիական բնութագրում՝ կոմպոզիցիոն տվյալների վերլուծության և մեքենայական ուսուցման կիրառմամբ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Գ.Տեփանոսյան) իրականացվել են քարտեզագրական հենքերի ու տվյալների բազաների նախապատրաստական աշխատանքներ:

«Սննդամթերքի ռիսկի և օգուտի գնահատման կարողությունների զարգացում Հայաստանում» նախագծի ընթացքում (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան) կազմակերպվել է արտասահմանյան խորհրդատուի հետ առցանց հանդիպում ու հետազոտությունների պլանավորում, ռիսկի ու օգուտի գնահատման միջազգային առաջավոր փորձի ու գրականության ուսումնասիրություն:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Kosoy M., Imnadze P., Malania L., Bolashvili N., Asmaryan Sh., Sahakyan L., Tepanosyan G., Hovsepyan A., Ayvazyan G., et al., ATLAS of Zoonotic Diseases in the South Caucasus, G., «Lepl national centre for disease control and public health (NCDC)», 2024, 300p. <https://doi.org/10.52340/9789941869020>

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Այվազյան Գ.Մ., Խլղաթյան Ա.Ն., Մուրադյան Վ.Ս., Ասմարյան Շ.Գ., Օդատիեզերական հեռազննման կիրառումը ՀՀ որոշ գյուղատնտեսական հողահանդակների էկոլոգիական վիճակի և տարածաժամանակային փոփոխությունների գնահատման գործում, Ե., «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Գիտություններ երկրի մասին», N 77(3), էջ 38-56:
3. Բեգլարյան Մ.Ռ., Պիպոյան Դ.Ա., Արշակյան Ե.Հ., Երևանի բնակչության կողմից հացի սպառման արդյունքում աֆլատոքսին B1 միկոտոքսինի ներգործության գնահատում, հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարներ, Ե., գիտ. հոդվ. ժող., 2024, էջ 250-260:

4. Հովհաննիսյան Ս.Մ., Մովսիսյան Ն.Է., Բեյլանա Օ.Ա., Երևան քաղաքի խմելու ջրում լուծված ռադոնի տարածաժամանակային բաշխվածության առանձնահատկությունները, «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Գիտություններ երկրի մասին», N 1-2, 2024, էջ 87-95, DOI: 10.54503/0515-961X-2024.77.1-2-87
5. Պիպոյան Դ.Ա., Արշակյան Ե.Հ., Բեգլարյան Մ.Ռ., Կարեյան Տ.Կ., Հանքալեռնային տարածքներում աճեցված բանջարեղենում պոտենցիալ թունավոր տարրերի ռիսկի գնահատում, Ե., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N 3(87), 2024, էջ 268-273:
6. Պիպոյան Դ.Ա., Սիրեյան Լ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Մերենդինո Ն., Ջերմային մշակման ազդեցությունը Հայաստանում աճեցված կտավատի սերմերի հակաօքսիդանտային ակտիվության և ֆենոլային պարունակության վրա, Ե., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N1(85), 2024, էջ 95-100:
7. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Դավթյան Լ.Ս., Մակրոսնդանյութեր: Նշանակությունը և աղբյուրները, Ե., «Գիտության աշխարհում», N 1, 2024, էջ 52-58:
8. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Դավթյան Լ.Ս., Վիտամիններ: Նշանակությունը և աղբյուրները, Ե., «Գիտության աշխարհում», N 3, 2024, էջ 48-56:
9. Սահակյան Լ.Վ., ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, Ե., «Գիտության աշխարհում», N2, 2024, էջ 52-57:
10. Пипоян Д.А., Бегларян М.Р., Костанян М.В., Оценка потребления кальция и его пищевых источников для взрослого населения Еревана, сб. научн.ст. мат. межд. конф., “Современные проблемы и перспективы развития научно-исследовательского образования”, Ер., 2024, с.618
11. Погосян Г.С., Гаспарян А.М., Григорян М.М., Амирян Е.В., Необходимые условия реализации обучения на протяжении всей жизни в Армении, мат. II межд. научно-практ. конф. «Социокультурные, психологические и педагогические координаты развития личности», Владимир, «Транзит-ИКС», 2024, с. 335-341
12. Aghayan S., Grigoryan G., Gevorgyan H., Harutyunyan T., Rukhkyan M., Muradyan V., Karadjian G., Marsot M., Moutailler S., Pollet T., Diversity and Distribution of Bacterial and Parasitic Tick-Borne Pathogens in Armenia, Transcaucasia, Iran, “Iranian Journal of Public Health”, v. 53(11), 2024, pp. 2563-2571. <https://doi.org/10.18502/ijph.v53i11.16960>
13. Aleksanyan V., Mirzoyan M., Galstyan M., Galstyan S., Assessment of the economic efficiency of using organo-mineral fertilizers and growth stimulants in potato fields cultivated in the conditions of foothill zone, “Bulletin of High Technology”, N 3(31), 2024, pp. 16-26.
14. Asmaryan Sh., Khlghatyan A., Hovsepyan A., Muradyan V., Avetisyan R., Gevorgyan G., Hayrapetyan A., Eissa M.M.A.A., Bernert, H., Schultze M., et al., Satellite-based detection of algal blooms in large alpine Lake Sevan: can satellite data overcome the unavoidable limitations in field observations?, “Remote Sensing”, 2024, 16(19), 3734. <https://doi.org/10.3390/rs16193734>
15. Ayvazyan G., Muradyan V., Medvedev A., Khlghatyan A., Asmaryan S., Exploring multisource remote sensing for assessing and monitoring the ecological state of the mountainous natural grasslands in Armenia, “Appl. Sci.”, 2024, 14(22), 10205. <https://doi.org/10.3390/app142210205>
16. Belyaeva O., Movsisyan N., Pyuskyulyan K., Hovhannisyan S., Sahakyan L., Assessing radioactivity in agricultural soils: spatial distribution patterns, area-specific influences, and radiological hazard, “ACS Agric. Sci. Technol.”, v. 4(9), 2024, pp.916–928. <https://doi.org/10.1021/acsagscitech.4c00265>
17. Beglaryan M., Pipoyan D., Chirkova V., Risk assessment of nitrofurans in Armenian honey, “Katchar”, N 1, 2024, pp.153-161. DOI: 10.54503/2579-2903-2024.1-153
18. Beglaryan M., Pipoyan D., Stepanyan S., Hovhannisyan A., Mantovani A., Risk assessment of dietary exposure to aflatoxins in nuts and spices. A pilot study in Yerevan, Armenia, “Human and Ecological Risk Assessment: An International Journal”, v. 30, 2024, pp.858-871, <https://doi.org/10.1080/10807039.2024.2425007>
19. Galstyan M., Sayadyan H., Meliqyan An., Sahakyan Ag., Sahakyan N., Martirosyan H., Aleqsanyan V., Hakobjanyan H., Economic-ecological assessment of multi-crop small-scale model farms in the Republic of Armenia (piloting results from Gegharqunik region), “Academic Society for Functional Foods and Bioactive Compounds, Functional Food Science”, v.4, N 11, 2024, pp.401-412. <http://doi.org/10.31989/ffs.v4i11.1506>
20. Larionov M., Sargsyan K., Sayadyan H., Margaryan V., Hunanyan S., Yeritsyan S., Jhangiryan T., Aleksanyan V., Hakobjanyan I., Galstyan M., The influence of cultivation, storage and processing technology on the nitrate content in potato tubers and vegetable crops as the example of ecologically and hygienically oriented

organic agricultural nature management, "Journal of Ecohumanism", v.3(8), 2024, pp. 292-302. doi.org/10.62754/joe.v3i8.4731

21. Navasardyan M., Sargsyan T., Daveyan H., Mezhunts, B., Abraham E.M., Effect of grazing on plant and soil parameters of steppe pastures on Mount Aragats, Armenia, MDPI "Land", N 13, 2024, 1430, <http://doi.org/10.3390/land13091430>
22. Petrosyan H., Efendyan P., Aleksanyan V., Application of the results of monitoring contemporary vertical movements of the earth's crust in the region of the Spitak earthquake for its further studies, "Geography Proceedings of the YSU, Geological and Geographical Sciences", N3, 2024, pp.201-210. ...
23. Pipoyan D., Arshakyan Y., Beglaryan M., Risk assessment of toxic elements in buckwheat produced in Armenia, "Agriscience and Technology", N 2(86), 2024, pp.166-170.
24. Pipoyan D., Hovhannisyan A., Beglaryan M., Mantovani A., Risk assessment of AFM1 in raw milk and dairy products produced in Armenia, a Caucasus region country: A pilot study, "Foods", 13(10), 2024, 1518. <https://doi.org/10.3390/foods13101518>
25. Pyuskyulyan K., Hovhannisyan S., Movsisyan N., Belyaeva O., Background activity of naturally occurring and reference values of fallout radionuclides in soils of mountainous areas (Armenia), "Chem. Ecol.", 2024. <https://doi.org/10.1080/02757540.2024.2402897>
26. Pyuskyulyan K., Pipoyan D., Hovhannisyan S., Beglaryan M., Movsisyan N., Belyaeva O., Assessing radon hazard in drinking water: A comprehensive approach integrating deterministic and probabilistic methods with water consumption routines, "Science of The Total Environment", v. 949, 2024, 175217, <https://doi.org/10.1016/j.scitotenv.2024.175217>
27. Sereda I., Determining the timing of phytopathological monitoring for early detection of winter wheat diseases in the Republic of Armenia using remote sensing methods, "Agriscience and technology", 4, 2024, pp. 317-325.
28. Tepanosyan G., Gevorgyan A., Albanese S., Baghdasaryan L., Sahakyan L., Compositional-geochemical characterization of lead (Pb) anomalies and Pb-induced human health risk in urban topsoil, "Environmental Geochemistry and Health", v.46, 2024, 192. <https://doi.org/10.1007/s10653-024-01984-7>
29. Tepanosyan G., Poghosyan Zh., Sahakyan L., Geochemical characterization of changes in the chemical composition of river sediments under the continuous anthropogenic influence of Yerevan, Armenia, "Environmental pollution", v.359, 2024, 124553. <https://doi.org/10.1016/j.envpol.2024.124553>
30. Tepanosyan G., Poghosyan Zh., Sahakyan L., Identification of spatial clusters of potentially toxic elements in different soil types using unsupervised machine learning and compositional data analysis, v.2, 2024, 10085. <https://doi.org/10.1016/j.seh.2024.100085>
31. Tepanosyan G., Asmaryan Sh., Baghdasaryan L., Medvedev A. Compositional-geochemical characterization and multi-element pollution and risk assessment of potentially toxic elements in the urban landfill soil, "Chemosphere", v.366, 2024, 143556, <https://doi.org/10.1016/j.chemosphere.2024.143556>

Ա.ԹԱԽՏԱԶՅԱՆԻ ԱՆՎ. ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրենի ժ/պ՝ Կ.գ.թ. Ա.Ղուկասյան

Գիտքարտուղար՝ Կ.գ.թ. Ժ.Հովակիմյան

Էլեկտրոնային փոստ՝ botanyinst@sci.am, botinst@sci.am, science@botany.am

Կայքէջ՝ www.botany.sci.am

Մասնագիտական խորհուրդ 035՝ «Բուսաբանություն»

Նախագահ՝ թղթ. անդ. Ժ.Վարդանյան, գիտքարտուղար՝ Կ.գ.թ. Ժ.Հովակիմյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Իրականացվել է *Asteraceae*, *Brassicaceae*, *Crassulaceae*, *Fabaceae*, *Gentianaceae*, *Globulariaceae*, *Hypericaceae*, *Lentibulariaceae*, *Lythraceae*, *Menyanthaceae*, *Monotropaceae*, *Rosaceae*, *Poaceae*, *Polygalaceae*, *Solanaceae* ընտանիքների 65 ցեղի 820 բուսանմուշի

որոշում ու վերաորոշում, որոշ տեսակների համար նոր տեղավայրերի վերաբերյալ տեղեկություններ են գրանցվել: Ավարտվել են Boraginaceae ընտանիքի անորոշ տեսակների նմուշների որոշման աշխատանքները: Հերբարիում է հանձնվել 700 նմուշ: Շարունակվել են Ranunculaceae ընտանիքի *Delphinium*, *Adonis*, *Caltha* ցեղերի կարգաբանական հետազոտությունները միկրո- ու մակրոմորֆոլոգիական մեթոդների կիրառմամբ: Ուսումնասիրվել են Malvaceae ընտանիքի *Malva mauritiana* ու *Malva sylvestris* տեսակների մակրո- ու միկրոմորֆոլոգիական բնութագրերը՝ միջցեղային ու միջտեսակային տարբերությունների հայտնաբերման նպատակով:

Ծառերի ու թփերի ծաղկափոշու ուսումնասիրությունների շրջանակում հստակեցվել են ողջ *Cornus* ցեղի (Cornaceae) հիմնական դիագնոստիկ հատկանիշները՝ բավականին հազվադեպ հանդիպող բարդ ապերտուրային տիպը բավականին պարզ քանդակի հետ մեկտեղ: Հայաստանի *Rubus* L. ցեղին (Rosaceae) պատկանող 14-ից 10 տեսակի, այդ թվում՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված 2 էնդեմիկ (*R. takhtadjanii* Mulk, *R. zangezurus* Mulk.) տեսակների պալինոմորֆոլոգիական ուսումնասիրություններից պարզվել է, որ ծաղկափոշու ընդհանուր միանմանության պատճառով որպես դիագնոստիկ որոշ դեպքերում կարող են օգտագործվել միայն քանդակի տիպն ու փոշեհատիկների չափերը: Անատոմիական հետազոտությունների հետ մեկտեղ առաջին անգամ ուսումնասիրվել են ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված Հարավային Անդրկովկասի էնդեմիկ *Hyacinthella atropatana* (Grossheim) Mordak & Zakharyeva տեսակի (Hyacinthaceae) ծաղկափոշու հատկանիշները: Բացահայտվել են այս տեսակի որոշ պալինոլոգիական առանձնահատկություններ՝ համեմատած *Hyacinthella* ցեղի նախկինում ուսումնասիրված այլ տեսակների հետ:

Շարունակվել են Հայաստանի ֆլորայի տեսակների կարիոլոգիական ուսումնասիրությունները: Կատարվել է Lamiaceae ընտանիքին պատկանող *Nepeta* L. ու *Salvia* L. ցեղերի որոշ տեսակների կարիոլոգիական ուսումնասիրություն: *Salvia nemorosa* L. տեսակի համար բացահայտվել է դիպլոիդ ցիտորասա $2n=2x=14$, $x=7$ հիմնական թվով, *Salvia sclarea* L. տեսակի համար՝ նույնպես դիպլոիդ ցիտորասա $2n=2x=22$, $x=11$ հիմնական թվով: *S. verticillata* L. տեսակի համար բացահայտվել է տետրապլոդ ցիտորասա $2n=4x=32$, $x=8$ հիմնական թվով, *Nepeta mussini* Spreng. տեսակի համար՝ դիպլոիդ ցիտորասա $2n=2x=18$, $x=9$ հիմնական թվով: Կազմվել են կարիոտիպերի բանաձևերը: Բացահայտվել են Papaveraceae ընտանիքի *Papaver* ցեղի, Primulaceae ընտանիքի *Primula* ցեղի, Alliaceae ընտանիքի որոշ տեսակների քրոմոսոմային թվերը (դեկ.՝ կ.գ.դ. Ա.Հայրապետյան):

Շարունակվել են Հայաստանի բուսական համակեցությունների, հազվագյուտ էկոհամակարգերի ուսումնասիրությունները, հանրապետության էկոհամակարգերի ու բնակմիջավայրերի դասակարգումը: Բոլոր հետազոտություններում շեշտը դրվել է այն էկոհամակարգերի վրա, որոնցում հանդիպել են էնդեմիկ բուսատեսակներ: Պարզվել է, որ առավել մեծ թվով էնդեմիկ բուսատեսակներ հանդիպում են բազմամյա խոտաբուսային ու տափաստանային էկոհամակարգերում (34 տեսակ), ապա հաջորդում են մերձալպյան ու ալպյան խոտաբուսային համակեցությունները (23), կաղնուտները (21), միջերկրածովյան քսերոֆիլ խոտաբուսային էկոհամակարգերը (16) ու բարեխառն լեռնային գոտու քարացրոնները (10): Շարունակվել է Հայաստանի մերձալպյան գոտու բուսականության, մասնավորապես մերձալպյան բարձրախոտերի տեսակային կազմի և Հայաստանում դրանց տարածվածության ուսումնասիրությունը: Իրականացվել են կենսաբազմազանության կարևորագույն տարածքներում աճող վտանգված բուսատեսակների՝ *Potentilla porphyrantha*, *Corylus colurna*, *Taxus baccata*, *Amberboa moschata*, *Bienertia cycloptera*, *Halocnemum strobilaceum*, *Halostachys belangeriana*, *Kalidium caspicum* էկոֆիզիոլոգիական ուսումնասիրություններ ժամանակակից լաբորատոր ու դաշտային սարքավորումներով,

որոնք թույլ են տվել գնահատել դրանց հարմարվողականության պոտենցիալը, բացահայտել խոցելիության հնարավոր պատճառները փոփոխվող կլիմայի պայմաններում (ղեկ.՝ Կ.գ.դ. Գ.Ֆայվուշ):

Շարունակվել են նոր գեղազարդ ծառաբույսերի (*Euonymus*, *Celastrus*, *Exochorda*, *Viburnum*, *Genista* և այլ ցեղերի ներկայացուցիչներ) ներմուծման ու էկոլոգիական հարմարվողականության ուսումնասիրությունները, արդյունքում պարզվել է, որ դենդրոհավաքածուները վերականգնելու ու հարստացնելու նպատակով վերջին տարիներին ներմուծվել է 41 նոր տեսակ ու պարտիզային ձև: Իրականացվել են *Corulus colurna*, *Taxus baccata* և *Rhododendron caucasicum* տեսակների եզակի պոպուլյացիաների առկայության, վիճակի, բնական ինքնավերականգնման, էկոլոգիական հարմարվողականության հետազոտություններ:

«Հայաստանի ֆլորա և բուսականություն» էքսպոզիցիոն հողամասի հավաքածուն համալրվել է նոր բուսատեսակներով *Asteraceae*, *Campanulaceae*, *Caryophyllaceae*, *Chenopodiaceae*, *Fabaceae*, *Iridaceae*, *Lamiaceae*, *Malvaceae*, *Papaveraceae*, *Poaceae*, *Primulaceae*, *Rosaceae* ընտանիքներից: Ալպիական բուսականության հավաքածուն համալրվել է 21 ցեղի նոր տեսակներով՝ *Alchemilla sericea*, *Artemisia splendens*, *Campanula tridentata*, *Cerastium szowitsii*, *Chamaesciadium acaule*, *Erigeron caucasicum*, *Helichrysum pallasii*, *Melica transcaucasica*, *Opopanax persicus*, *Primula algida*, *Puschkinia scilloides*, *Rubus hirtus*, *Taraxacum stevenii*, *Trifolium ambiguum*, *Trifolium bordzilovskii* և այլն: Հողամասում կատարվել է ծառերի ու թփերի տնկում՝ *Betula litwinovii* (13 հատ), *Acer platanooides* (12 հատ), *Fraxinus excelsior* (14 հատ) և 80 թուփ (*Ligustrum vulgare*): Արևադարձային ու մերձարևադարձային բույսերի հավաքածուն համալրվել է 4 ընտանիքի ու 4 ցեղի 4 նոր տեսակով՝ *Adansonia digitata* L. (*Malvaceae*), *Agave striata* Zucc. (*Asparagaceae*), *Curio hallianus* (G.D.Rowley) P.V.Heath (*Asteraceae*), *Oxalis megalorrhiza* Jacq. (*Oxalidaceae*): Ամփոփվել են Հարավային Աֆրիկայի 9 ընտանիքի ու 18 ցեղի 30 էնդեմիկ տեսակների ներմուծման արդյունքները: Ծաղկային բույսերի հավաքածուն համալրվել է ինչպես տեղածին (*Allium scabriscapum* Boiss., *Hesperis matronalis* L., *Dianthus libanotis* Labill., *Nepeta mussini* Spreng., *Salvia nemorosa* L. և այլն), այնպես էլ մշակովի տեսակներով՝ *Callistephus chinensis* 36 սորտ, *Tagetes erecta* 3, *Gaillardia cristata* 2, *Echinacea purpurea* 2: Բուսաբանական այգու տարածքում ստեղծվել է հիրիկների մանրապուրակ, հավաքածուն ներառում է Հայաստանի ֆլորայի *Iris* ցեղի 14 վայրի աճող, 22 մշակովի տեսակներ ու սորտեր (ղեկ.՝ Կ.գ.դ. Ժ.Վարդանյան):

Հարստացվել է հնէաբուսաբանական տվյալների Excel բազան, որն ընդգրկում է մոտ 1200 անվանում: Ամբողջությամբ գրանցվել է Պլիոցենի դարաշրջանի Կարճևան գյուղի շրջակայքի բրածո բույսերի հավաքածուի կազմը՝ մոտ 1000 նմուշ, ընթացքի մեջ է Մուշականի տեղավայրի նմուշների գրանցումը (2714 նմուշ): Բաժնի նմուշների քանակն ընթացիկ տարում ավելացել է մոտ 200 նմուշով: Ուսումնասիրվել է Դրախտավարդազգիների (*Hydrangeaceae*) ընտանիքի *Philadelphus* ցեղին պատկանող կովկասյան սրնգենու (*Philadelphus caucasicus* Koehne) հազվագյուտության կարգավիճակը Հայաստանի ֆլորայում: Վերլուծվել են տաքսոնի վերաբերյալ մի շարք բուսաբանների տված մեկնաբանություններն ու սահմանվել են տեսակի համար ծառաթփային բույսերի ռելիկտայնությունը բնորոշող հստակ չափորոշիչներ, Հայաստանի ֆլորայի համար հայտնաբերվել է քարաքոսերի երկու նոր տեսակ: Բաժնի հավաքածուում գրանցվել և էլեկտրոնային բազայում ավելացվել են 2715 նմուշների տվյալներ (ղեկ.՝ Կ.գ.դ. Ի.Գաբրիելյան):

Ուսումնասիրման ու պահպանման նպատակով հավաքվել է մոտ 220 նմուշ՝ 6 ընտանիքից, 12 ցեղից ու 20 բուսատեսակից, այդ թվում՝ վայրի պտղատուների, վտանգված տեսակների սերմեր: Ստուգվել է 39 ընտանիքի պատկանող մոտ 200 տեսակի սերմերի ծլունակությունը: Հավաքվել է նյութ վայրի պտղատուների կայուն մոլեկուլային ուսումնասիրությունների համար: «Կիսաանապատ», «Ալպիական անկյուն», «Տափաստան» բիոտոպների հավաքածուները համալրվել են 15 տեսակով: Էկոէպիկենտրոնն ընդունել է 8254 մեծահասակ, 1982 երեխա այցելու, իրականացվել են 38 էքսկուրսիա, 4 միջոցառում, այդ թվում՝ «CYFEST 16» միջազգային ցուցահանդեսը, աշխատարաններ ու բազմաթիվ ֆոտո և տեսանկարահանումներ (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Ներսեսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Քարաքոսերի բազմազանության հետազոտումը և պահպանությունը Հայաստանում» և «Հայաստանի քարաքոսերի ԴՆԹ շտրիխ կոդավորում» թեմաների շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Գասպարյան) իրականացվել են քարաքոսերի ու սնկերի դաշտային հետազոտություններ տարբեր էկոհամակարգերում՝ Լոռու, Սյունիքի, Արագածոտնի, Տավուշի մարզերում և նմուշառում (ընդհանուր շուրջ 650 նմուշ), որոնք նույնականացվում են և պահեստավորվելու են քարաքոսերի ու սնկերի նորաստեղծ հերբարիումում (ERE-Lichen, ERE-fungi), իսկ տվյալները հասանելի են լինելու միջազգային JACQ առցանց հերբարիումների տվյալների բազայի միջոցով: Իրականացվել է քարաքոսերի ու սնկերի նմուշների ԴՆԹ էքստրակցիա, ՊՇՌ հետազոտություն, որի արդյունքն ուղարկվել է սերվենավորման: Սերվենավորվել է ընդհանուր թվով 128 քարաքոսի ու սնկի նմուշ, ինչը հնարավորություն է տալիս ԴՆԹ շտրիխ կոդավորման միջոցով նույնականացնել Հայաստանում աճող 63 տեսակ քարաքոս ու սունկ:

«Հայաստանի ֆլորայի էնդեմիկ բույսերի ERE հերբարիումի նմուշների թվայնացում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.դ. Մ.Հովհաննիսյան) JACQ միջազգային տվյալների բազա է մտցվել և սկանավորվել 157 տեսակի, 71 ցեղի, 28 ընտանիքի պատկանող շուրջ 2940 նմուշ, որոնց սկանավորված պատկերները համալրելու են Վիեննայի տվյալների բազան: Պիտակների տվյալները բաց մուտք ունեն միջազգային JACQ տվյալների բազայում JACQ (<http://herbarium.univie.ac.at/database/search.php>) ու GBIF (Global Biodiversity Information Facility) (gbif.org) միջազգային ցանցում: *Cousinia armena*, *C. daralaghezica*, *C. erivanensis*, *C. lomakinii*, *Scorzonera aragatzi*, *S. gorovanica*, *Onosma gehardica*, *Cephalaria armeniaca* տեսակները հանվել են էնդեմիկների ցուցակից, քանի որ հայտնաբերվել են Հայաստանի սահմաններից դուրս, սակայն նրանց տվյալները առկա են բազայում: Ավելացվել են վերջին 17 տարվա ընթացքում նկարագրված տեսակներ, ներկայում Հայաստանի էնդեմիկները ներկայացված են 149 տեսակով:

«Հայաստանի որոշ վայրի և մշակովի պտղատու բույսերի (*Rosaceae*՝ *Malus*, *Pyrus*, *Prunus*) կենսամորֆոլոգիական և պալինո-կարիոլոգիական վերլուծությունը և դրանց պահպանությունը» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.դ. Ժ.Հակոբյան) պարզաբանվել է էնդեմիկ տեսակների, տարատեսակների ու միջտեսակային հիբրիդային ձևերի հարուստ բազմազանությունը: Առաջին անգամ որոշվել են քրոմոսոմային թվերը $2n=34$ *Pyrus hyrcana* Fed. var. *yeghegisi* Akopian, *P. daralaghezii* Mulk., *P. oxyprion* Woronow, *P. medvedevii* Rubtzov, *P. takhtajianii* Fed. տեսակների համար: «Հայկենսատեխնոլոգիա» կենտրոնում իրականացվել է *Malus* ու *Prunus* տեսակների ու սորտերի պտուղների կենսաքիմիական վերլուծություն: Ուսումնասիրվել են *Rosaceae* ընտանիքի 23 պտղատու տեսակի ու սորտի ծաղկափոշու ֆերտիլությունն ու ծլունակությունը, կատարվել է ծաղիկների

Ֆենոտիպավորում: Միջազգային համագործակցության շրջանակում Դադստանի դաշնային հետազոտական կենտրոնի լեռնային բուսաբանական այգու հետ համատեղ իրականացվել է ոչ սելեկցիոն «Խարջի» ծիրանենու ուսումնասիրություն, կատարվել է ֆենոտիպավորում, պտուղների կենսաքիմիական կազմի, ծաղկափոշու ֆերտիլության, կենսունակության ու սորտի արտադրողականության ուսումնասիրություն: Ստեղծվել է պտղատու բույսերի *ex situ* հավաքածու Երևանի բուսաբանական այգու «Հայաստանի ֆլորա և բուսականություն» հողամասում, կազմվել է տվյալների բազա, որը կտեղադրվի կենդանի բույսերի *ex situ* հավաքածուների միջազգային էլեկտրոնային կատալոգում:

«ՀՀ քաղաքային կանաչ տնկարկների օպտիմալացման և ֆիտոտեխնիկական միջոցառումների էկոլոգակենսաբանական ասպեկտները» թեմայի շրջանակում (ղեկ.՝ աշխ.գ.դ. Հ.Սայադյան) իրականացվել է սոցիարցում ՀՀ քաղաքային կանաչ տնկարկների առկայության, ներկա վիճակի, դրանց միկրոկլիմակարգավորիչ ու սանիտարահիգիենիկ պայմանների լավացման վերաբերյալ: Հարցմանը մասնակցել է 250 քաղաքացի, որոնց տեսակետները մեծամասամբ համընկել են հետազոտողների մասնագիտական կարծիքին: Կանաչ տարածքները բարելավման, հասանելիության բարձրացման, պատշաճ կառավարման կարիք ունեն: Իրականացվել են Երևանի կանաչ տարածքների հարմարվողականության, կայունության բարելավման ուսումնասիրություններ՝ կախված կլիմայի փոփոխության մարտահրավերներից: Առաջարկվել են երաշտադիմացկուն ու էկոլոգիապես ավելի հարմարվողական ծառաթփատեսակներ, որոնք աչքի են ընկնում նաև գեղազարդությամբ: Երևանի, Գյումրիի ու Վանաձորի դաշտային ուսումնասիրությունների ու նմուշառումների հիման վրա իրականացվել է քաղաքների կանաչ տարածքների՝ այգիների ու փողոցային տնկարկների՝ ծառաբույսերի էկոլոգիական վիճակի ուսումնասիրություն:

«Հայաստանի բուսաբանական այգիներում Կովկասի ֆլորայի ռելիկտային մի շարք տեսակների հարմարվողականության ուսումնասիրությունը» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.դ. Ի.Գաբրիելյան) իրականացվել են Կովկասի ֆլորայի նախապես ընտրված 10 տեսակ ռելիկտային բույսերի էկոֆիզիոլոգիական հարմարվողականության ուսումնասիրություններ Երևանի, Վանաձորի, Սևանի բուսաբանական այգիներում, թիրախային տեսակների տարածվածությունը դրանցում, ինչպես նաև Իջևանի դենդրոպարկում, կազմվել են տեսակների տարածվածության քարտեզները: Երևանի բուսաբանական այգու Կովկասի ֆլորայի հողամասում կատարվել են նոր արահետների, ծառուղիների բացման աշխատանքներ, տնկվել են մի շարք ռելիկտ տեսակներ: Վեր է հանվել ՀՀ տարածքից հայտնաբերված բրածո բույսերի ավելի քան 1300 տեսակ, որոնցից մոտ 220 տեսակ դիտարկվում է որպես ռելիկտ բուսատեսակ:

«Ինվազիվ բուսատեսակները Ա-ից Ֆ: Ազգային գույքագրում, ազդեցության գնահատում, վերահսկում և կառավարում Հայաստանի համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.դ. Գ.Ֆայվուշ) իրականացվել է Հայաստանում հանդիպող տարբեր նպատակային ներմուծված կամ պատահաբար ներթափանցած տեսակների ինվազիվության գնահատում՝ ըստ միջազգային մեթոդաբանության ու նախկինում արդեն մեր կողմից Հայաստանում առավել մեծ տարածում ունեցող 11 օտարածին տեսակների համար փորձարկված: Գնահատվել է 99 օտարածին տեսակ, ընդամենը 110 տեսակ, այդ թվում՝ 57 ծառաբույս, 53 խոտաբույս:

«Իրանաթուրանական տարածաշրջանի C₄ դոմինանտ բուսականության և էքստրեմոֆիլ բուսատեսակների էկոֆիզիոլոգիական և աշխարհագրական ուսումնասիրություններ որպես մոդել կլիմայի փոփոխման կանխատեսման և էկոհամակարգերի պահպանության համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ռուդով) կատարվել են

գիտարշավներ՝ ծածկելու չուսումնասիրված C₄ դոմինանտ բուսականության տարածքները Արմավիրի, Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում: 40 կետից հավաքվել է մոտ 400 հերբարիումի նմուշ, 47 բուսատեսակի սերմեր ու C₄ և C₃ բույսերից քսիլեմի, ջրի ու հողի նմուշներ էկոհիդրոլոգիական անալիզներ կատարելու նպատակով (ավելի քան 350 նմուշ): Հայտնաբերվել են նոր C₄ ու քսերոֆիլ բուսատեսակների պոպուլյացիաներ Հայաստանում: Խումբը համագործակցել է Պիրենեյան էկոլոգիայի ինստիտուտի հետ, ուսումնասիրվել են գիպսոֆիլ բուսականությանը և ՀՀ-ում աճող գիպսոֆիլ բուսատեսակները: Մշակվել է հազվագյուտ ու վտանգված C₄ և այլ քսերոֆիտ բույսերի պահպանման ռազմավարություն՝ ըստ խմբի նոր տվյալների: Ուզբեկստանի Հանրապետության Բուսաբանության ինստիտուտի համագործակցության արդյունքում ուսումնասիրվել են *Rhamnus erythroxylodes* subsp. *sintenisii* տեսակի տարածման էկոլոգիական ասպեկտները Կիզիլկում անապատում: Ուսումնասիրվել են C₄ տեսակների հյուսվածքային կուլտուրաները, մշակվել է հյութալի տաքսոնների աճեցման մեթոդ: Պիրենեյան էկոլոգիայի ինստիտուտի (Իսպանիա) գործընկերների հետ ուսումնասիրվել են C₄ բույսերն ու բուսականությունը Մոնղոլիայի անապատային բիոմներում:

«Անցյալ և ներկա կլիմայական և միջավայրային կտրուկ փոփոխությունների ազդեցությունը Հայկական լեռնաշխարհի էկոհամակարգերի էվոլյուցիայի վրա» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Ֆեդորով) կլիմայի վերականգնման ու էկոհամակարգի զարգացման նպատակով իրականացվել են և՛ գիտարշավային, և՛ վերլուծական ուսումնասիրություններ՝ մի շարք փոքր լճերի հիդրոլոգիական, հիդրոքիմիական ու հիդրոկենսաբանական, Սևանա լիճ թափվող գետերի, առուների ջրի ու պինդ արտահոսքի, մի շարք փոքր լճերի շրջակայքի ծաղկափոշային սպեկտրների, Ուրասար (Շուշանալիճ) լճի հատակային նստվածքների: Առաջիկայում կստացվեն ռադիոածխածնային թվագրման ու մի շարք միկրոպալեոնտոլոգիական վերլուծությունների արդյունքները:

«Հայաստանում երկրաբազմազանության և կենսաբազմազանության փոխազդեցությունը անտառային և տափաստանային բնակմիջավայրերում էկոկլիմայական գրադիենտի երկայնքով. գլոբալ տաքացման հետևանքների համար կիրառվող տեսական հայեցակարգ» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Ալեքսանյան) Բնապահպանական երկրաբանության և երկրաճարտարագիտության ինստիտուտի, Միլանի Բիկոկա և Բոլոնիայի համալսարանների միջև հաստատված հայ-իտալական համագործակցության շրջանակում շարունակվել են դաշտային ուսումնասիրությունները հիմնական օբյեկտի՝ Արագած լեռան երկայնքով ձգվող էկոգրադիենտով (ծովի մակերևույթից 1100 մ-ից մինչև 3700 մ բարձրության վրա) նախորդ տարում տեղադրված 14 տեղամասերի 84 փորձահրապարակների կենսաբազմազանության գույքագրում, յուրաքանչյուր տեղամասից նկարագրվել է հողային պրոֆիլը, կատարվել է փոշեհատիկների ու հողի նմուշառում:

«Հայաստանի քաղաքների կանաչ տնկարկների ֆունկցիոնալության և գեղագիտական արժեքի բարձրացման նոր մոտեցումները կլիմայի գլոբալ փոփոխության համատեքստում» ծրագրի (ղեկ.՝ Կ.գ.թ. Ն.Մուրադյան) նպատակն է մշակել նորարարական մոտեցումներ՝ բարելավելու Հայաստանի քաղաքային կանաչ տարածքների վիճակն ու ֆունկցիոնալ հնարավորությունները՝ պայմանավորված կլիմայի գլոբալ փոփոխությամբ:

«Քարաքոսերի հետազոտությունների զարգացում և կարողությունների հզորացում Հայաստանում» թեմայի շրջանակում իրականացվել են դաշտային հետազոտություններ, հավաքագրվել է 600-ից ավել քարաքոսի ու սնկի նմուշ, որոնք գտնվում են նույնականացման փուլում: Հասանելիություն է ստացվել վիրտուալ հերբարիումների տվյալների առցանց շտեմարան՝ JACQ database, որտեղ ERE-fungi ու ERE-lichens ենթաբաժիններում գիտական հանրությանը հասանելի է լինելու նորաստեղծ հերբարիումում

պահեստավորվող նմուշների վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Գասպարյան):

«Կլիմայի փոփոխության պայմաններում գենետիկական կենսահսկողության կարողությունների հզորացումը Հայաստանում» (ArmBioClimate) հայ-ավստրիական համագործակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ալեքսանյան) մեկնարկել են էկոհամակարգերի վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման աշխատանքները: Մասնավորապես հավաքագրվել և վերլուծվել են էկոհամակարգերի տարածվածության, վիճակի, կլիմայի փոփոխության կանխատեսումների, կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման մեթոդների վերաբերյալ առկա, հասանելի տվյալների բազաներն ու գրականությունը: Ստացված տվյալները համադրվել են շնագայլի տարածվածության ու շնագայլի համար առավել բարենպաստ պայմաններով էկոհամակարգերի նախնական տվյալների հետ:

«Բույսերի բազմազանության տեղեկատվական ենթակառուցվածքի ստեղծում Հայաստանի համար» դրամաշնորհի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.դ. Մ.Հովհաննիսյան) ծրագրի մասնակիցները մասնակցել են Բեռլինի Ազատ համալսարանի, Բեռլինի Բուսաբանական այգու, Բուսաբանական թանգարանի երկամյա դասընթացներին՝ մոլեկուլյար ուսումնասիրությունների մեթոդի ուսուցման ու Հայաստանի ֆլորայի բուսատեսակների EDIT Platform տվյալների բազա ներմուծելու համար: Ներկայում Տվյալների բազա են ներմուծվել Հայաստանի ֆլորա բազմահատորյակի 7-11 հատորների տվյալները:

«Պտղատու ծառատեսակների վայրի բազմազանության թաքնված ներուժի օգտագործումը կայուն գյուղատնտեսության համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ներսեսյան) կատարվել են բազմաթիվ արշավներ ՀՀ 4 մարզեր, հավաքվել է 10 պոպուլյացիայից նյութ (տերև, սերմ) պտղատուների վայրի ցեղակիցների 5 ցեղից ու 7 տեսակից: Կազմակերպվել է սոցիալացումների հիման վրա տվյալների հավաքագրում:

«Տարածաշրջանային էնդեմիկ և վտանգված վայրի պտղատու և դեկորատիվ ծառերի ex situ պահպանման հայ-տաջիկական նախաձեռնություն, BGCI» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ռուդով) պատրաստվել է Տաջիկստանի ու Միջին Ասիայի ապագա կենդանի հավաքածուի 1600 մ² տարածք: Կատարվել են հողային աշխատանքներ, տարածքը մաքրվել է մոլախոտերից, ինվազիվ թփերից, շինանյութի մնացորդներից: Նշված տարածքում կառուցվում է ոռոգման գիծ՝ չոր ժամանակահատվածում ջուր ապահովելու համար: Ծլունակության փորձեր են իրականացվել Տաջիկստանի վայրի մշակաբույսերի ազգակիցների վրա՝ *Pyrus spp.*, *Prunus spp.*, *Colutea paulsenii*):

«Երևանի բուսաբանական այգու Հայաստանի ալպիական էքսպոզիցիոն հավաքածույի վերականգնում» ծրագրով (ղեկ.՝ կ.գ.դ. Ժ.Հակոբյան) իրականացվել են «Հայաստանի ֆլորա և բուսականություն» հողամասի Ալպիական բույսերի էքսպոզիցիայի վերականգնման ու բարելավման աշխատանքներ՝ ալպիական բլուրերի լանդշաֆտի ձևավորում, ալպիական բլուրների ու ճանապարհների մաքրում, ինվազիվ բույսերի հեռացում, քարերի դասավորում: Իրականացվել է 3 գիտարշավ Արագածի լեռնազանգված ու Գեղարքունիքի մարզի բարձր լեռնային գոտի: Հավաքվել են ալպիական բուսատեսակներ և ներդրվել Ալպինարիումում, որի տարածքում որոգման համար անցկացվել է նոր ջրամատակարարման ցանց:

«Բուսաբանական այգիների հավաքածուներում եզակի և հնագույն բույսերի նմուշների պահպանումը գիտելիքների տարածման և ինտերակտիվ ցուցանակների միջոցով. Լվովի և Երևանի բուսաբանական այգիների օրինակով» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Գասպարյան) Երևանի Բուսաբանական այգում ցուցադրված եզակի ու հետաքրքիր ծառատեսակների հետ ծանոթանալու, դրանց մասին հետաքրքիր փաստեր բացահայտելու,

թիմային աշխատելու կարողությունները զարգացնելու նպատակով ստեղծվել է «Ծառախաղ», որի համար տպագրվել է 200 քարտ 11 հարցերով:

«Բնության հատուկ պահպանվող տարածքներում բույսերի բազմազանության մշտադիտարկում» ծրագրով (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Ալեքսանյան) իրականացվում է Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներում բույսերի բազմազանության ու էկոհամակարգերի մշտադիտարկում, որի նպատակն է ցուցիչ տեսակների (հազվագյուտ ու անհետացող, ինվազիվ, անտառային վիճակի ցուցիչ) և էկոհամակարգերի (անտառային ու խոտաբուսային) երկարաժամկետ մշտադիտարկման հիման վրա գնահատել դրանց վիճակը, հիմնական սպառնալիքներն ու դրանցից բխող փոփոխությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ կենսաբազմազանության պահպանության ու կառավարման բարելավման համար: Տեղադրվել են շուրջ 450 մշտական փորձահրապարակներ 9 պահպանվող տարածքներում, այդ թվում՝ 3 ազգային պարկ, 3 արգելոց, 2 արգելավայր, 1 պահպանվող լանդշաֆտ:

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Алоян А., Оганезова Г., Морфология нектарников некоторых родов семейства *Malvaceae* флоры Армении, АлтГУ, “Turczaninowia”, т. 27, N 4, 2024, с. 43-46. (Q3)
2. Akhani H., Abdullahi H., Rudov A., *Afrosalsola* (Amaranthaceae-Chenopodiaceae), an intermediate C3-C4 lineage from NW Africa and the Canary Islands, and some new combinations in African species of Caroxylon and Soda, Spain, “Mediterranean Botany”, v. 45, N 2, 2024, pp. 1-12. DOI: <https://doi.org/10.5209/mbot.94654> (Q3)
3. Aghababayan K., Akopian J., Hakobyan S., Kalashyan M., Ghazaryan A., Aghasyan L., Pipoyan S., Zarikeyan N., and Jenderedjian K., Wetlands of Armenia: biodiversity, livelihoods and conservation, Chapter 5, In “Wetlands of Mountainous regions: Biodiversity, Livelihoods and Conservation”, UK, 2024, pp. 1-38. ISBN: 9781394235209
4. Akopian J., Navasardyan Y., Rudov A., Stepanyan L., Zaroyan G., Gabrielyan G., Phenotypic characteristics of black apricot *Prunus × dasycarpa* cultivar “Shlor-Tsiran” in Armenia, Poland, “Folia Horticulturae”, v. 36, N 2, 2024, pp. 1–12. DOI: 10.2478/fhort-2024-0018 (Q2)
5. Akopian J., Ghukasyan A., Elbakyan A., Martirosyan L., Hovakimyan Zh., Morphological, reproductive and ecological-physiological characteristics of endangered *Amberboa moschata* (Asteraceae) and some aspects of its *ex situ* conservation, Switzerland, “Journal of Zoological and Botanical Gardens”, Preprints v.1, 2024, pp.1-14. <https://doi.org/10.20944/preprints202408.0123.v1> (Q2)
6. Akopian J., Taxonomic synopsis of the genus *Rubus* (Rosaceae) in Armenia, New Zealand, “Phytotaxa”, v. 677, N 2, 2024, pp. 125-143. (Q2)
7. Asatryan A., First plant conservation translocation in Armenia: restoring globally threatened wild pear populations, UK, “Oryx”, v. 58, N 3, 2024, pp. 286. doi:10.1017/S0030605324000279 (Q1)
8. Asatryan A., New data on globally threatened pears *Pyrus daralagezi*, *P. hajastana* and *P. gergerana*: studies in Vayots Dzor province of Armenia. UK, “Oryx”, v. 58, N 4, 2024, pp. 386 (Q1)
9. Asatryan A., Shcherbakova Y., Rudov A., Navasardyan Y., Propagation of *Campanula bayerniana* (Campanulaceae) by seeds as a reproduction model for the conservation of threatened small-seed plant species, Serbia, “Botanica Serbica”, v.48, N 2, 2024, pp.223-229, DOI: 10.2298/BOTSERB2402223A (Q3)
10. Barjadze S., Gabrielyan I., Kalashian M., Karagyan G., Stepanyan I., Some new records of aphid species (Hemiptera Aphididae) from Armenia, Italy, “Redia” 107, 2024, pp. 39-42. <https://doi.org/10.19263./REDIA-107.24.01> (Q2)
11. Barjadze S., Stepanyan I., Kalashian M., Karagyan G., Gabrielyan I., & Thieme H., A new species of *Metopeurum* Mordvilko, 1914 (Hemiptera: Aphididae) from the Transcaucasus, with a key to the species of

- this genus, New Zeland, "Zootaxa" v. 5463, N 3, 2024, pp. 417–428. <https://doi.org/10.11646/zootaxa.5463.3.7> (Q2)
12. Clavel J., Lembrechts J.J., ... Aleksanyan A., ... Nijs I., Roadside disturbance promotes plant communities with arbuscular mycorrhizal associations in mountain regions worldwide, UK, "Ecography", v.2024, Issue 7, 2024, pp.1-14. <https://doi.org/10.1111/ecog.07051> (Q1)
 13. Fayvush G., Janjughazyan K., Hovhannisyan H., Aleksanyan A., Beginning of the Invasion of *Impatiens glandulifera* (Balsaminaceae) in Armenia, RF, "Russian Journal of Biological Invasions", v. 15, N 4, 2024, pp.687–692. <https://doi.org/10.1134/S207511172470053X> (Q3)
 14. Gabrielyan I., Sargsyan M., Achoyan A., Fossil remains of the genus *Crataegus* (Rosaceae, Amygdaloideae) from Southeastern Armenia, Poland, "Acta Palaeobotanica", v. 64, N 2, 2024, pp. 351-359 (Q3)
 15. Ghukasyan A., Akopian J., IAPB chromosome data 42/1. In: IAPT chromosome data 42, Austria, "Taxon", v.73, issue 5, 2024, pp.1324-1325. <https://doi.org/10.1002/tax.13257> (Q1).
 16. Ghukasyan A., Hayrapetyan A., IAPB chromosome data 42/2. In: Marhold, K. & Kučera, J. (eds.) & al., IAPT chromosome data 42, Austria, "Taxon", v. 73, issue 5, 2024, pp. 1324-1325. <https://doi.org/10.1002/tax.13257> (Q1).
 17. Ghukasyan A., Martirosyan L., Adamyan R., Poghosyan A., Harutyunyan A., Hovakimyan Zh., IAPB chromosome data 42/3. IAPT chromosome data 42, Austria, "Taxon", v.73, issue 5, 2024, pp.1325-1326. <https://doi.org/10.1002/tax.13257>(Q1).
 18. Ghukasyan A., Muradyan N., Gatrchyan G., Vardanyan Zh., IAPB chromosome data 42/4. IAPT chromosome data 42, Austria, "Taxon", v. 73, 2024, pp. 1327. <https://doi.org/10.1002/tax.13257>(Q1)
 19. Ghukasyan A., Nersesyan A., Navasardyan E., Galstyan S., Elbakyan A., IAPB chromosome data 42/5. IAPT chromosome data 42, Austria, "Taxon", v. 73, Issue 5, 2024, pp. 1327-1328. <https://doi.org/10.1002/tax.13257>(Q1).
 20. Grigoryan N., Balayan K., Magomedova M., Magomedova P. & Hayrapetyan V., New species of the genus *Calycomyza* Hendel (Diptera, Agromyzidae) in the South Caucasus fauna, RF, "South of Russia ecology development", v.19, N 1, 2024, pp.72-76, <https://doi.org/10.18470/1992-1098-2024-1-7> (Q3).
 21. Grigoryan N., Kalashyan M., Hayrapetyan V. & Balayan K., First records of Anthomyiidae (Diptera) from Nagorno-Karabakh, Armenia, India, "Indian Journal of Entomology", v. 86, N 2, 2024. pp. 365-368. <https://doi.org/10.55446/IJE.2024.1588> (Q4).
 22. Hayrapetyan A., Beketovski D. A., Oganessian M., Asatryan M., Balayan K., Palynological data to the genus *Cornus* L. (Cornaceae), Ukraine, "Biosystems Diversity", v. 32, N 1, 2024, pp. 150-157. <https://doi.org/10.15421/012415> (Q3).
 23. Hayrapetyan A., Muradyan A., Sonyan H., Asatryan M., Oganessian M., Palynotaxonomy of the genus *Gladiolus* (Iridaceae) of the flora of Armenia, Ukraine, "Biosystems Diversity", v. 32, N 1, 2024, pp. 43–48. <https://doi.org/10.15421/012404> (Q3).
 24. Hayrapetyan A., Sonyan H., Muradyan A., Palynological studies of some species of the genus *Cuscuta* with emphasis on taxonomy, Poland, "Acta Palaeobotanica", v. 64, N 1, 2024, pp. 60–74. <https://doi.org/10.35535/acpa-2024-0005> (Q3)
 25. Hovakimyan Z., Muradyan N., Gatrchyan G., Grigoryan M., Vardanyan Z., Adaptability and prospects for the use of introduced representatives of the genus *Weigela* in different climatic conditions, Ukraine, "Regulatory Mechanisms in Biosystems", v.15, N3, 2024, pp.522-526. <https://doi.org/10.15421/022473> (Q4)
 26. Hovakimyan Z., Papikyan A., Hayrapetyan N., Hakobyan E., Fayvush G., Gabrielyan I., Ecophysiological characteristics of *Corylus colurna* and *Taxus baccata* in Armenia under *in situ* and *ex situ* conditions, Ukraine, "Regulatory Mechanisms in Biosystems", v.15, N 3, 2024, pp.543–547. doi:10.15421/022475 Relic-21T-1F198 (Q4)
 27. Janjughazyan K., Ghukasyan A., Khachatryan L., Hovhannisyan H., Hovakimyan Zh., Characteristics of the extremely rare, narrow-range plant species *Potentilla porphyrantha* Juz. (Rosaceae), Ukraine, "Regulatory Mechanisms in Biosystems", v.15, N 3, 2024, pp.593-604. <https://doi.org/10.15421/022484> (Q4)
 28. Khachatryan S., Cascales-Minana B., Danelian T., ... Grigoryan A., Gabrielyan I., Hairapetian V., ... Serobyan V., First palynological evidence from the Upper Devonian of Armenia (northern Gondwanan margin): biostratigraphic implications, Netherland, "Palaeoworld", 2024, pp. 1-14. <https://doi.org/10.1016/j.palwor.2024.09.003> (Q2)

29. Kozuharova E., ... Aleksanyan A., Marino P., et al., Wild species from the family Apiaceae, traditionally used as food in some mediterranean countries, Switzerland, "Plants" v.13, Issue 16, 2024, pp.2324. <https://doi.org/10.3390/plants13162324> (Q1)
30. Laktionov A., ... Asatryan A., Galstyan S., Dehghani M., ... Kosyan H., ... Nersesyan A., Papikyan A., Rudov A., ... Tagiyev Ch., New and rare species for the floras of the Caspian region and Southwest Asia, RF, "Turczaninowia" v.27, N 3, 2024, pp. 65–76. DOI: 10.14258/turczaninowia.27.3.6 (Q3)
31. Nersisyan G., Przybysz A., Vardanyan Zh., Sayadyan H., Muradyan N., Grigoryan M., Ktrakyan S., Peculiarities of particulate matter absorption by urban tree species in the major cities of Armenia, Switzerland, "Sustainability", v.16, issue 23, 2024, 10217. 7 (Q1)
32. Oganezova G., Achoyan A., Aloyan A., Sargsyan M., The genus *Scilla* (Hyacinthaceae) in Armenia (an updated review), Ukraine "Regulatory Mechanisms in Biosystems", v.15, N 3, 2024, pp.514–521. DOI: <https://doi.org/10.15421/022472> (Q4)
33. Roy H., Pauchard A., ... Aleksanyan A., Ansong M., ... Fayvush G., ... Ziller S.R., Curbing the major and growing threats from invasive alien species is urgent and achievable, "Nature Ecology & Evolution", v.8, 2024, pp.1216-1223. <https://doi.org/10.1038/s41559-024-02412-w> (Q1)
34. Rudov A., Nersesyan A., Asatryan A., New data on the genus *Ferula* for the flora of Armenia – a new record and a rediscovery, Iran, "Iranian Journal of Botany", v.30, issue 2, 2024, pp. 132-138. Q4
35. Sargsyan M., Achoyan A., Taxonomic revision of the genus *Polygala* (Polygalaceae) in Armenia, Iran, "Iranian Journal of Botany", v.30, issue 2, 2024, pp.99-108 (Q4)
36. Sarneel J., Hefting M., ... Aleksanyan A., Laurent A., et al., Reading tea leaves worldwide: Decoupled drivers of initial litter decomposition mass-loss rate and stabilization, "Ecology letters", v.27, issue 5, 2024, pp.1-14. <https://doi.org/10.1111/ele.14415> (Q1)
37. Sevoyan G., Ghazaryan K., Yesayan T., Hayrapetyan A., Minasyan S., Babayan B., Gabrielyan I., Esoyan S., Chakhmakhchyan A., Grigoryan A., Melkumyan M., Yesayan A., Traditional vegetarian food products in villages of Syunik, Armenia: Technogenic contamination risks assessment, US, "Functional Food Science", v.4, issue 10, 2024, pp.380-389. <https://www.doi.org/10.31989/ffs.v4i10.1464> (Q3)
38. Shomurodov Kh., Adilov B., Rudov A., ... Khabibullaev B., Ecological aspects of distribution and population status assessment of *Rhamnus erythroxylodes* subsp. *sintenisii* (Rich.f) Mabb., a relict species in the Kyzylkum Desert of Uzbekistan, Switzerland, "Plants" v.13, 2024, 3154. <https://doi.org/10.3390/plants13223154> (Q1)
39. Vardanyan Zh., Sayadyan H., Muradyan N., Grigoryan, M., Assessment of the state and functionality of urban green areas of Armenia based on the population sociological survey, Italy, "Annali d'Italia", v.52, 2024, pp.19-23. 10.5281/zenodo.10702960
40. Vardanyan Z., Aleksanyan A., Gasparyan A., Grigoryan M., Gatrchyan G., Muradyan N., Green legacy: plant introduction and dendrological collections in Yerevan Botanical Garden: from the past to the future, Switzerland, "Journal of Zoological and Botanical Gardens", v.5, 2024, pp.238-259. <https://doi.org/10.3390/jzbg5020017> (Q2)
41. Vardanyan Zh., Nersisyan G., Przybysz A., Elbakidze M., Sayadyan H., Grigoryan M., Ktrakyan S., Avetisyan G. & Muradyan N., Improvement in the adaptation and resilience of the green areas of Yerevan city to climate-ecological challenges, Switzerland, "Atmosphere", v. 15, N 4, 2024, 473. <https://doi.org/10.3390/atmos15040473>(Q2)
42. Vynokurov D., Aleksanyan A., Becker T., ..., Fayvush G., Garcia-Mijangos I., ..., Oganessian M., Vasheniak I., Dengler J, Dry grasslands and thorn-cushion communities of Armenia: a first syntaxonomic classification, Bulgaria, "Vegetation classification and survey", v.5, 2024, pp.39-73. <https://doi.org/10.3897/VCS.119253> (Q2)

Պաշտպանվել է 2 թեկնածուական ատենախոսությոն:

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՂՐՈՒԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ Կ.գ.թ. Ս.Աղայան
Փոխտնօրեն՝ Կ.գ.թ. Գ.Գևորգյան
Գիտքարտուղար՝ Կ.գ.թ. Հ.Խաչատրյան
Էլեկտրոնային փոստ՝ zoohec@sci.am
Կայքէջ՝ www.sczhe.sci.am

Մասնագիտական խորհուրդ 036՝ «Կենդանաբանություն»
Նախագահ՝ Կ.գ.դ. Բ.Գաբրիելյան, գիտքարտուղար՝ Կ.գ.թ. Մ.Քալաշյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հայաստանի տարբեր մարզերից գրանցվել է բզեզների (Coleoptera) շուրջ 500, երկթևերի (Diptera) Syrphidae ընտանիքի 60 ու Cecidomyiidae ընտանիքի 18 տեսակ, որոնցից համապատասխանաբար 4-ը, 15-ն ու 2-ը նոր են երկրի ֆաունայի համար (ղեկ.՝ Կ.գ.թ. Մ.Քալաշյան):

Ուսումնասիրվել է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան անկյան թիթեռների բազմազանությունը, գրանցվել է թեփուկաթևերի 120 տեսակ: Հետազոտվել են կենտրոնի սարդերի հավաքածուն, ՀՀ խոնավ տարածքների սարդերի բազմազանությունը, մի շարք մարզերի այգիների վնասատու տզերի տեսակային կազմը: Փորձարկվել են *Bacillus thuringiensis* մանրէների շտամներն ընդդեմ *Euproctis chrysorrhoea* վնասատու թեփուկաթևի թրթուռների (ղեկ.՝ Կ.գ.թ. Ն.Զարիկյան):

Հայտնաբերվել է կենդանիների մակաբույծների 61 տեսակ, այդ թվում՝ հելմինթների 37, նախակենդանիների 11, իքսոդային տզերի 13, ինչպես նաև ցամաքային ու քաղցրահամ ջրերի փափկամարմինների 1-ական տեսակ: Ուսումնասիրվել են Արարատի մարզի որոշ ջերմատների բանջարանոցային կուլտուրաները, հայտնաբերվել է բույսերի համատարած վարակվածություն *Meloidogyne* ցեղին պատկանող գալային նեմատոդով, որի առկայությունը խիստ անդրադարձել է բերքի և՛ քանակի, և՛ որակի վրա՝ մեծ վնաս պատճառելով տվյալ տնտեսություններին: Առավել վարակված էին լոբու բույսերը (ղեկ.՝ Կ.գ.թ. Մ.Վարդանյան):

Հավաքագրվել և հետազոտվել են շուրջ 700 ընտանի ու վայրի կենդանիների արյան ու կղանքի նմուշներ, 620 մոծակ ու տիզ ավելի քան 25 նմուշառման կետերից: Մանրադիտակային, շճաբանական ու մոլեկուլային-գենետիկական մեթոդների կիրառմամբ գրանցվել են 13 տեսակի տիզ, 22 տեսակի մոծակ, 13 տեսակի ցեստոդ, 8 տեսակի տրեմատոդ, 7 տեսակի նեմատոդ, 6 տեսակի նախակենդանի (ղեկ.՝ Կ.գ.թ. Հ.Գևորգյան):

Իրականացվել է ՀՀ ցամաքային ողնաշարավորների ֆաունայի, մասնավորապես վտանգված ու Կարմիր գրքային տեսակների արդի վիճակի գնահատում: Հայտնաբերվել են կենսաբազմազանության պահպանության համար կարևորագույն տարածքներ: Ուսումնասիրվել է մարդ-վայրի կենդանի կոնֆլիկտը, մշակվել են դրա մեղմման մեխանիզմներ (ղեկ.՝ Կ.գ.թ. Մ.Ղասաբյան):

Կատարվել է կրծողների ոսկրաբանական հավաքածուների ոսկրաչափական տվյալների ամփոփ վերլուծություն: Եռաչափ սկանների միջոցով (3D) իրականացվում են հնակենդանաբանական նյութերի սկանավորում ու եռաչափ թվային հավաքածուի ձևավորում: Վերլուծության փուլում են Հայաստանի շնագիների գանգաչափական ուսումնասիրությունների արդյունքները (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Գյոնջյան):

Ուսումնասիրվել են *Gobio* և *Cobitis* ցեղերի ու *Oxynoemacheilus bergianus*, *O. brandtii* տեսակների սոմատիկ կարիոտիպերը, ինչպես նաև Արփի լճից ու Սյունիքի մարզի ջրամբարներից ստացված կարասի (*Carassius gibelio*) դիպլոիդ ու տրիպլոիդ ձկները (ղեկ.՝ Կ.գ.թ. Ի.Ստեփանյան):

Սևանա լճի ջրածածկ որոշ տարածքներում իրականացված ֆիտոպլանկտոնային համակեցության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գարնանն ու ամռանը պլանկտոնում դոմինանտել են կանաչ ջրիմուռները, որոնք կազմել են ընդհանուր քանակական ցուցանիշների 88%-ն ըստ թվաքանակի ու 51%-ն ըստ կենսազանգվածի: Կանաչ ջրիմուռների բարձր քանակական ցուցանիշները պայմանավորված են եղել դոմինանտ *Binuclearia lauterbornii* տեսակով, որի քանակական արժեքները տատանվել են 480–1056 հազ. բջ/լ սահմաններում: Առանձին հատվածներում այս տեսակն առաջացրել է թույլ ծաղկում (ղեկ.՝ Կ.գ.թ. Լ.Համբարյան):

Իրականացվել է Սևանա լճի ափամերձ հատվածների պլանկտոնային համակեցությունների (ֆիտոպլանկտոն, զոոպլանկտոն), ինչպես նաև կենսամիջավայրերի էկոլոգիական պայմանների քանակական ու որակական տարածաժամանակային գնահատում: Կատարվել է Սևանա լճում հատակային մեյոֆաունայի քանակական ու որակական բաշխվածության ուսումնասիրություն (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Գևորգյան):

Հրազդանի կիրճում գրանցվել է 50 տեսակի հատակային անողնաշար կենդանի, այդ թվում՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված *Platycnemis pennipes* (Pallas, 1771) ճպուռի տեսակը, *Theodoxus major* (Issel, 1865) փափկամարմինը, որն ունի շատ սահմանափակ տարածում և ենթակա է գրանցվելու ՀՀ Կարմիր գրքում: Կենսաբացահայտման ու գենոտիպիկ մեթոդներով գնահատվել է Ախուրյան գետի էկոլոգիական վիճակը, վեր են հանվել առավել խոցելի հատվածները, որտեղ ԵՄ ՋՇԴ պահանջներին համապատասխան էկոլոգիական վիճակի հասնելու նպատակով ջրավազանային կառավարման մարմինների կողմից անհրաժեշտ են հատուկ գործողություններ (ղեկ.՝ Կ.գ.թ. Վ.Ասատրյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ստեղծվել և կահավորվել է համապատասխան կենսաանվտանգության մակարդակ ունեցող նոր աշխատանքային տարածք: Վայրի կենդանիների ու թափառող շների, կատուների կղանքի ու արյան մակաբուծաբանական, շճաբանական հետազոտություններով բացահայտվել է 21 տեսակի մակաբույծ: Հետազոտված կաթնասունների մոտ գրանցված մակաբույծներից 10 տեսակն ունի զոոնոզ նշանակություն, 3-ը՝ պայմանական զոոնոզ, 7-ը վտանգավոր է միայն կենդանիների համար: *Toxoplasma gondii* գենոտիպավորման վերջնարդյունքում կենդանական ծագման նմուշներում նույնականացվել են հարուցչի I, II, III տիպերը, ընդ որում՝ I ամենաբարձր ախտածնությամբ օժտված տիպը գրանցվել է նաև խոշոր եղջերավոր կենդանիների մոտ: *Toxoplasma gondii* գենոտիպավորման վերջնարդյունքում նույնականացվել են հարուցչի բոլոր 3 տիպերը, ամենաբարձր ախտածնությամբ օժտված I տիպը գրանցվել է նաև խոշոր եղջերավոր կենդանիների մոտ (ղեկ.՝ Կ.գ.թ. Հ.Գևորգյան):

Ստեղծվել է ժամանակակից լաբորատոր ենթակառուցվածք՝ մակաբուծաբանության ու իմունաբանության ոլորտում փորձարարական հետազոտություններ իրականացնելու համար, որը լիովին պատրաստ է ընթացիկ ու հետագա հետազոտական նախագծերի իրականացմանը: In silico եղանակով նախագծվել է տոքսոպլազմայի նոր պատվաստանյութի սպիտակուցային կառուցվածքը: Պատրաստվել է 5 տեսակի հայկական բույսերից մզվածք, և *Toxoplasma gondii* Rh շտամի նկատմամբ իրականացվել են

գունաչափական թեստ (MTT assay) ու *in vitro* փորձարկումներ՝ որոշելու IC50 և CC50 ցուցանիշները, ինչպես նաև գնահատելու դրանց հնարավոր թերապևտիկ ազդեցությունը (ղեկ.՝ Կ.գ.թ. Ս.Աղայան, Կ.գ.թ. Ա.Դարյանի):

Կեռնեխների 3 տեսակին (*Turdus merula*, *Turdus torquatus*, *Turdus viscivorus*) պատկանող 41 առանձնյակներից հավաքված արյան նմուշներից անջատվել է ԴՆԹ և սեքվենավորվել: ՀՀ Լոռու, Սյունիքի, Արագածոտնի, Կոտայքի մարզերում ու Երևանի հարակից տարածքներում կատարվել է թռչունների արյան նմուշառում 83 առանձնյակից (ղեկ.՝ Կ.գ.դ. Վ.Հայրապետյան):

Ուսումնասիրվել են որոշ թռչնատեսակների սեռական բջիջների, ինչպես նաև գորշ արջի մեյոտիկ կարիոտիպերը (ղեկ.՝ Կ.գ.թ. Վ.Սպանգենբերգ):

Կազմվել է հարցաշար՝ հասկանալու Հայաստանում սննդի անվտանգության ոլորտի մասնագետների դիրքորոշումը տարբեր մակաբուծային հիվանդությունների վերաբերյալ, վերլուծության արդյունքում գտնելու մեր երկրի համար վտանգ ներկայացնող սննդածին մակաբույծը (ղեկ.՝ Հ.Պապոյան):

Վերլուծվել է ցիկադակերպերի վերաբերյալ գրականությունը: Կատարվել են գիտարշավներ դեպի ՀՀ բոլոր մարզեր, հավաքվել է մոտ 3000 առանձնյակ: Նյութը մշակվել է միջատաբանական ավանդական եղանակներով, գտնվում է տեսակորոշման փուլում: Հայտնաբերվել է Հայաստանի համար նոր տեսակ (ղեկ.՝ Մ.Մազմանյան):

Վերլուծվել է թրիպսերի վերաբերյալ գրականությունը, վեր են հանվել նյութի որոշման համար անհրաժեշտ որոշիչները: Կատարվել է նյութի հավաք Հայաստանի բոլոր մարզերից: Հայտնաբերվել են շուրջ 30 տեսակի թրիպսեր ու դրանց կերաբույսերը: Պատրաստվել են մշտական պատրաստուկներ, կատարվում է տեսակորոշում (ղեկ.՝ Մ.Տիգրանյան):

Իրականացվել է ՀՀ հարավային ջրավազանային տարածքի որոշ գետա-էկոհամակարգերի (Ողջի, Գեղի, Աճանան, Մեղրիգետ, Կարճևան գետեր) հետքային տարրերով աղտոտվածության պայմաններում հատակային կենսահամակեցությունների (միկրոֆիտոբենթոս, մակրոզոոբենթոս) զարգացման օրինաչափությունների ուսումնասիրություն (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Գևորգյան):

Սևանա լճի ջրահավաք գետավազանի հետքային տարրերով աղտոտվածության ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ գետավազանում հետքային տարրերից էկոլոգիապես առավել խնդրահարույց են եղել արսենը, մոլիբդենը, ծարիրը (ղեկ.՝ Գ.Խաչատրյան):

Կատարվել են Սևանա լճի հիմնական վտակներից Արգիճի, Գավառագետ ու Կարճաղբյուր գետերի ջրաքիմիական ուսումնասիրություններ: Գարնանը գետերում գրանցվել են ամոնիումային ազոտի բարձր արժեքներ: Գավառագետում այն գերազանցել է էկոլոգիական նորմը և համապատասխանել է ՀՀ մակերևութային ջրերի որակի III դասին (միջակ որակ): Ամռանն Արգիճի գետի միջին ու ստորին հոսանքներում, գետաբերանում գրանցվել են ամոնիումային ազոտի բարձր արժեքներ, ըստ որի գետի ջրի որակն այդ հատվածներում համապատասխանել է III դասին: Գետաբերանում գրանցվել են նաև օրգանական նյութի բարձր քանակներ, որոնք ևս համապատասխանել են ջրի որակի III դասին (ղեկ.՝ Կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

Հրազդան գետում և ուսումնասիրված վտակներում նախորդ տարիների համեմատ ավելացել է օրգանական նյութի քանակությունը: Հրազդան գետում Երևանից հոսանքն ի վար գրանցվել է կենսածին նյութերի (հատկապես ամոնիումային ազոտի) պարունակության ավելացում: Գետը Երևանից վերև դրսևորել է հարուստ մակրոֆիտային բազմազանություն, սակայն Երևանում ու դրանից ներքև ակտիվացել է *Potamogeton pectinatus* տեսակը, որը Երևանից ու հարակից գյուղերից չմաքրված հոսքաջրերի Հրազդան գետ ներթափանցման

արդյունք է: Սանիտարական տեսանկյունից նույնպես գետի ջուրն առավել աղտոտված է եղել Երևանից հոսքով վար ընկած գետահատվածներում, որտեղ ջուրը պիտանի չի եղել ոռոգման, ռեկրեացիոն նպատակով օգտագործման համար (ղեկ.՝ Կ.գ.թ. Մ.Դալլաքյան):

Մշակվել է էկոլոգիական համակեցություններում տեսակների հիերարխիկ մրցակցության մոդել, որում տեսակների բազմազանության վրա մրցակցային բացառման սկզբունքով հարկադրվող առավելագույն սահմանը չի սահմանափակվել համակեցության տեսակների կողմից վիճարկվող պաշարների թվով գծայնորեն, այլ քառակուսային օրենքով: Սա բավական է պլանկտոնային պարադոքսին հայեցակարգային լուծում տալու համար (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Գևորգյան):

Լայնածավալ ուսումնասիրություններ են իրականացվել Ախուրյան, Հրազդան, Ողջի, Մեղրի գետերի ավազաններում՝ գնահատելու մատակարարող, մշակութային ու կարգավորող էկոհամակարգային ծառայությունների վիճակը, դրանց ակնկալիքները տեղացի շահառուների կողմից (ղեկ.՝ Կ.գ.թ. Վ.Ասատրյան):

Հայաստանում առաջին անգամ գրանցվել են մամուռների հետ համատեղ աճող ջրիմուռներ՝ *Chlorokybus* sp., *Chlorosarcina* sp., *Sarcinofilum* sp. (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Մամյան):

Ուսումնասիրվում են սպիտակ արագիլի (*Ciconia ciconia*) էկոլոգիական առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում՝ դրանց ենթատեսակային և/կամ հապլոտիպային բազմազանությունը բացահայտելու նպատակով: Կատարվել են դաշտային հաշվառումներ, արյան ու փետուրների նմուշառումներ, արբանյակային տվիչով նշադրումներ, օդակավորում: Իրականացվել են հավաքագրված տվյալների ու նյութերի նախնական վերլուծական աշխատանքներ (ղեկ.՝ Լ.Աղաջանյան):

Հրապարակումներ

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

1. Մելքոնյան Լ.Մ., Մովսիսյան Ի.Ռ., Վարդանյան Մ.Վ., Նուկլեինաթթուների հետազոտման մեթոդները և տեխնոլոգիաները, Ե., ՀԱԱՀ հրատ., 2024, 618 էջ:
2. Հարությունյան Լ.Ռ., Մարմարյան Գ.Յու., Բադալյան Մ.Վ., Քարիմյան Ռ.Ա., Ավդալյան Ն.Գ., Ավագյան Ս.Ս., Վարդանյան Մ.Վ., Մեթոդական ուղեցույց ռեֆերատային և փորձարարական բնույթի ինքնուրույն աշխատանքներ կատարելու վերաբերյալ, Ե., ՀԱԱՀ հրատ., 2024, 12 էջ:
3. Դալլաքյան Մ.Ռ., Եփրեմյան Հ.Վ., Ասատրյան Վ.Լ., Գետերի էկոլոգիական վիճակի կենսաբացահայտումը հատակային մակրոանոդոնաշարների և մակրոֆիտների միջոցով, Ե., «Գիտություն» հրատ., 2024, 108 էջ:
4. Գաբրիելյան Բ.Կ., Ղուկասյան Է.Խ., Մելքոնյան Հ.Ֆ., Կոբեյան Հ.Հ., Ասատրյան Վ.Լ., Գետերի էկոլոգիական վիճակի գնահատման կենսաախտորոշման մեթոդներ, Ե., «Գիտություն» հրատ., 2024, 56 էջ:
5. Ստեփանյան Լ.Գ., Ղուկասյան Է.Խ., Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում, Ե., «ԿԶՆԱԿ» հրատ., 2024, 162 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

6. Акопян А.Р., Абрамян В.В., Щербаков О.В., Казарян А.С., Григорян В.В., Григорян Л.Г., Фауна нематод рыб Армении, “Российский паразитологический журнал”, т. 18, 2024, с.14-22.
7. Барсегян Р.Э., Петросян Р.А., Акопян К.В., Варданян М.В., Никогосян М.А., Барсегян Н.Э., Жакмакян Р.Р.А., Тадевосян Н.Н., Дудукчян З.М., Магомедова М.З., Магомедова П.Д., Арутюнова Л.Дж., О фауне паразитов желудочно-кишечного тракта мелкого рогатого скота в горной зоне Армении, Юг России: экология, развитие, т. 19 (2), 2024, с. 33-39, <https://doi.org/10.18470/1992-1098-2024-2-4>.
8. Слободяник Р.В., Зыкова С.С., Щербаков О.В., Сравнительный анализ антигельминтиков при токсокарозе, мат.VI межд. конгр. «Эффективные и безопасные лекарственные средства в ветеринарии», СПб., с. 121-124.

9. Степанян Н.Т., Дилбарян К.П., Зарикян Н.А., Материалы к фауне клещей Тидеид (Acariformes, Tydeidae) Армении, “Биологические науки, т. 1, 2024, с. 32-37.
10. Aghayan S., Asikyan M., Raković M., Stanković D., Fadeev I., Gevorgyan H., Shcherbakov O. et al., Molecular detection of *Toxoplasma gondii* (Chromista: Apicomplexa) in the blood of passerines (Aves: Passeriformes) in south-eastern Armenia, “Zoologia” (Curitiba), v. 41, 2024, pp.1-10. <http://dx.doi.org/10.1590/S1984-4689.v41.e24016>.
11. Aghayan S., Asikyan M., Shcherbakov O., Ghazaryan A., Hayrapetyan T., Malkhasyan A., Gevorgyan H., Makarikov A., Kornienko S., Daryani A., *Toxoplasma gondii* in rodents and shrews in Armenia, Transcaucasia, “International Journal for Parasitology: Parasites and Wildlife”, v.25, 2024, 100987. <https://doi.org/10.1016/j.ijppaw.2024.100987>.
12. Aghayan S., Grigoryan G., Gevorgyan H., Harutyunyan T., Rukhkyan M., Muradyan V., Karadjian G., Marsot M., Moutailler S., Pollet T., Diversity and distribution of bacterial and parasitic tick-borne pathogens in Armenia, Transcaucasia, “Iranian Journal of Public Health”, v.53, 2024, pp.2563-2571, <https://doi.org/10.18502/ijph.v53i11.16960>.
13. Anvari D., Gholami Sh., Spotin A., Hosseini S., Daryani A., Sarvi Sh., Narouei M., Hosseini M., Siyatpanah A., Phylogeography, genetic diversity and population structure of *Echinococcus granulosus* sensu stricto inferred by mitochondrial DNA markers between southeast of Iran and Pakistan, “Iranian Journal of Parasitology”, v.19, 2024, pp. 140-152. <https://doi.org/10.18502/ijpa.v19i2.15850>.
14. Arakelyan M., Petrosyan V., Pipoyan S., Karagyan G., Ghrejian T., Ghazaryan A., Asatryan V., Dallakyan M., Gharmajyan A., Arzumanyan M., Kalashian M., Invasive alien species of animals in Armenia, “Bioinvasions Records”, v.13, 2024, pp.293-303. <https://doi.org/10.3391/bir.2024.13.2.01>.
15. Arbuzova E., Karagyan G., Ghrejian T., Akopyan K., Kozyreva N., Shchukovskaya A., Shahazizyan I.V. Assessment of the phytosanitary condition of pine plantations of the “Sevan” National Park, Armenia, “Plant Health and Quarantine”, N 4S (20b), 2024, pp.8-9.
16. Arzumanyan M., Zhamakochyan G., Torosyan H., Gharmajyan A., Arakelyan M., Nanagulyan S., Margaryan L., Aghayan S., Davis R., Turóci A., First record of *Arion vulgaris* Moquin-Tandon, 1855 (Arionidae) from Armenia, “Biodiversity Data Journal”, v.12, 2024, e121176. <https://doi.org/10.3897/BDJ.12.e121176>.
17. Asadi M., Babaei Z., Afsar A., Banabazi M., Ali N., Daryani A., Aghajani E., Mahdavi M., Attari M., Zarrinkar F., Brain-cyst-driven genes expression in *Toxoplasma Gondii* Tehran strain: a parasitic-immunogenicity assessment by dint of RNA-Seq, “Veterinary Research Communications”, v. 48, 2024, pp. 2563-2581. <https://doi.org/10.1007/s11259-023-10241-8>.
18. Asatryan V., Keryan T., Radinger-Peer V., Dallakyan M., Assessment of cultural ecosystem services potential in river catchments in the Caucasus: Evidence from Dilijan National Park, Armenia, “Mountain Research and Development”, v.44, 2024, pp.R1-R13. <https://doi.org/10.1659/mrd.2023.00045>.
19. Asmaryan S., Khachatryan A., Hovsepyan A., Muradyan V., Avetisyan R., Gevorgyan G., Hayrapetyan A., Eissa M.M.A.A., Bernert H., Schultze M., Rinke K., Satellite-based detection of algal blooms in large alpine Lake Sevan: can satellite data overcome the unavoidable limitations in field observations?, Remote Sensing, v.16, 2024, 3734, <https://doi.org/10.3390/rs16193734>.
20. Aydinyan L., Hayrapetyan V., Fieldfare (*Turdus pilaris* L.) nesting ecology in the city of Stepanakert of the Republic of Artsakh and its surrounding territories, “Journal of Advanced Zoology”, v. 45, 2024, pp. 33-41. <https://doi.org/10.17762/jaz.v45i1.235>.
21. Balyan L., Manaseryan N., Ghasabyan M., Kumelova M., Gyonyan A., Osteometric data of Avian Fauna of Armenia: A baseline for zoologists and archaeozoologists, “Data in Brief”, v. 52, 23, 110059. <https://doi.org/10.1016/j.dib.2024.110059>.
22. Barseghyan N., Vardanyan T., *Oxynoemacheilus caucasicus* sp. nov. (Teleostei: Nemacheilidae): A new species for Armenia, “Electronic Journal of Natural Sciences”, v. 43, 2024, pp. 17-24. <https://doi.org/10.5584/1728-791X-2024.2.43-17>.
23. Barjadze Sh., Gabrielyan I., Kalashian M., Karagyan G., Stepanyan I., Some new records of Aphid species (Hemiptera Aphididae) from Armenia, “Redia”, v. 107, 2024, pp. 39-42. <https://doi.org/10.19263/REDIA-107.24.05>.
24. Barjadze Sh., Stepanyan I., Kalashian M., Karagyan G., Gabrielyan I., Thieme Th., A new species of *Metopeurum* Mordvilko, 1914 (Hemiptera: Aphididae) from the Transcaucasus, with a key to the species of this genus, “Zootaxa”, v. 5463, 2024, pp. 417-428. <https://doi.org/10.11646/zootaxa.5463.3.7>.

25. Emami S., Sadeghi M., Shahdin S., Daryani A., Khalilian A., Pirestani M., Hosseini S., Mahboobeh Montazeri, Nejad Z., Sarvi Sh., In vitro evaluation of anti-parasitic activities of quinolone-coumarin hybrids derived from fluoroquinolones and novobiocin against *Toxoplasma gondii*, "Acta Parasitologica", v. 69, 2024, pp. 1275-1283. <https://doi.org/10.1007/s11686-024-00852-9>.
26. Frunzikyan H., Margaryan V., Karyan V., Asatryan V., Assessment of ecological condition of surface water bodies. A case-study of the Northern Basin Management Area, Armenia, "Mining Information and Analytical Bulletin", v. 9, pp. 99-116. DOI: 10.25018/0236_1493_2024_9_0_99.
27. Gabrielyan B., Asatryan V., Kobelyan H., Khosrovyan A., The sediment of a river having "good ecological status" turned out to be toxic to midge *Chironomus riparius* larvae: Implication for environmental monitoring?, "Ecotoxicology and Environmental Safety", v. 283, 2024, 116855. <https://doi.org/10.1016/j.ecoenv.2024.116855>.
28. Gnezdilov V., Mazmanyanyan M., Neimorovets V., The first record of the genus *Balcanocerus* Maldonado-Capriles, 1971 (Hemiptera, Auchenorrhyncha: Cicadellidae: Eurymelinae) from Transcaucasia, "Entomological Review", v. 103, 2024, pp. 987-989. <https://doi.org/10.1134/S0013873823090051>.
29. Grigoryan G., Kalashyan M., Hayrapetyan V., Balayan K., First records of Anthomyiidae (Diptera) from Nagorno-Karabakh, Armenia, "Indian Journal of Entomology", v. 86, 2024, pp. 365-368. <https://doi.org/10.55446/IJE.2024.1588>.
30. Grigoryan N., Balayan K., Magomedova M., Magomedova P., Hayrapetyan, V., New species of the genus *Calycomyza* Hendel (Diptera, Agromyzidae) in the South Caucasus fauna, "South of Russia: ecology, development", v. 19, 2024, pp. 72-76. <https://doi.org/10.18470/1992-1098-2024-1-7>.
31. Grigoryan N., Hovhannisyan V., Balayan K., Galstyan H., Species composition, morphological and ecological features of mining flies (Diptera: Agromyzidae) in Nagorno Karabakh Republic, "Vestnik Tomskogo gosudarstvennogo universiteta. Biologiya", v. 63, 2024, (2023), pp. 109-131.
32. Grigoryan V., Shcherbakov O., Abrahamyan V., Yeribekyan S., Grigoryan L., Some biological and ecological features of *Hypoderma Latreille*, 1818 in Tavush region of Armenia, "Siberian Journal of Life Sciences and Agriculture", v. 16, 2024, pp. 48-63. <https://doi.org/10.12731/2658-6649-2024-16-3-1145>.
33. Hakobyan S., Jenderedjian K., Kalashian M., First record of *Lynceus brachyurus* (Branchiopoda: Diplostraca: Laevicaudata: Lynceidae) in Armenia, "Acta Biologica Sibirica", v. 10, 2024, pp. 395-400. <https://doi.org/10.5281/zenodo.11183092>.
34. Hakobyan S., Jenderedjian K., The first checklist of rotifers of Armenia, "Acta Biologica Sibirica", v. 10, 2024, pp. 921-957. <https://doi.org/10.5281/zenodo.13753720>.
35. Hambaryan L., Avalyan R., Atoyants A., Aghajanyan E., Ghukasyan E., Gabrielyan B., Aroutiounian R., Ecotoxicological assessment of the water conditions in high-mountain Lake Sevan (Armenia) during the period of eutrophication, "Proceedings of the 5th International Scientific Conference in Memory of Corresponding Member RAS Matishov D.G.", Rostov-on-Don, SSC RAS Publishers, 2024, pp. 475-477.
36. Imran A., Suleira A.R.H., Arshad M.U., Wei C.R., Zarikyan N.A., Afzaal M., Raza M., Amjad N., Naeem U., Unleashed protein power: redefining backed goods with legume flour mixtures, "Cogent food and agriculture", v.10, 2024, pp.78-92. <https://doi.org/10.1080/23311932.2024.2407652>.
37. Kalashian M., Ghrejyan T., Shokhin I., On the nomenclature of Genus-group name *Eulasia* Truqui, 1848 (Coleoptera, Glaphyridae), "Euroasian Entomological Journal", v. 23, 2024, pp. 220-221. <https://doi.org/10.15298/euroasentj.23.04.06>.
38. Kalashian M., Volkovitch M., A new subgenus of the genus *Sphenoptera* Dejean, 1833 with Redescription of *S. epistomalis* Obenberger, 1927 (Coleoptera, Buprestidae), "Entomological Review", v. 103, 2024 (2023), pp.887-892. <https://doi.org/10.1134/S0013873823080080>.
39. Karagyan G., Ghrejyan T., Akopyan K., Arbuzova E., Shchukovskaya A., Grigoryan N., Kalashian M., Expansion of some invasive insect pests in coniferous plantations of Armenia, "Plant Health and Quarantine", N 4 S (20b), 2024, pp. 38-39.
40. Karagyan G., Ghrejyan T., Arbuzova E., Akopyan K., Shchukovskaya A., Shahazizyan I., Quarantine, invasive and expansive invertebrates and phytopathogenic mycoflora of pine plantings of Armenia, "Plant Health and Quarantine", v. 18, 2024, pp. 95-96.
41. Karagyan G., Kalashian M., Ghrejyan T., Mazmanyanyan M., Petrov A., Annotated checklist of Armenian Platypodinae and Scolytinae (Coleoptera: Curculionidae), "Zootaxa", v. 5514, 2024, pp. 41-65. <https://doi.org/10.11646/zootaxa.5514.1.3>.

42. Koohestan G., Saberi R., Daryani A., Sarvi Sh., Sharifdini M., Anvari D., Shariatzadeh S., Hosseini S., Gholami Sh., Identification and genotyping of *Echinococcus granulosus* from human clinical samples in Guilan province, north of Iran, "Parasite Epidemiology and Control", v. 25, 2024, e00353. <https://doi.org/10.1016/j.parepi.2024.e00353>.
43. Kondar D., Lepikhina P., Garlitska L., Udalov A., Chikina M., Mokievsky V., Decadal changes in Nematoda and Harpacticoida taxocenes in Blagopoluchiya Bay (the Kara Sea), "Oceanology", v. 64, 2024, pp.514-524. <https://doi.org/10.1134/S0001437024700188>.
44. Kreshchenko N., Terenina N., Poddubnaya L., Voropaeva E., Mochalova N., Kuznetsov G., Movsesyan S., *Acrolichanus auriculatus* (Digenea, Allocreadiidae): surface topography, musculature and FMRFamide-like immunoreactivity in the nervous system, "Zoomorphology", v. 143, 2024, pp. 313-328. <https://doi.org/10.1007/s00435-024-00665-4>.
45. Mamadashvili G., ... Ghrejian T., Hleb R., Kalashian M., Kambarov I., Karagyan G., ... Mazmanyman M., ... Müller J., Drivers of wood-inhabiting fungal diversity in European and Oriental beech forests, "Ecology and Evolution", v.14, 2024, e11660. <https://doi.org/10.1002/ece3.11660>.
46. Mamyán A., Gevorgyan G., Zhamakochyan G., Hayrapetyan N., Hakobyan E., Melkonian B., Melkonian M., The Armenian Algal Culture Collection (AACC) for ex situ conservation of biodiversity, "Nova Hedwigia", v.119, 2024, pp. 269-286. https://doi.org/10.1127/nova_hedwigia/2024/1033.
47. Melkonyan H., Chuiko G., Barseghyan N., Vardanyan T., Ghukasyan E., Kobelyan H., Gabrielyan B., Assessment of the health status of whitefish (*Coregonus lavaretus* Linnaeus, 1758) and the quality of its habitat in Lake Sevan (Armenia) using a multi-biomarker approach, "Water", v. 16, 2024, 2789. <https://doi.org/10.3390/w16192789>.
48. Mochalova N., Terenina N., Movsesyan S., Kreshchenko N., The organization of the muscle system of the causative agent of dicrocoeliosis, *Dicrocoelium dendriticum*, "Invertebrate Biology", v.143, 2024, e12421. <https://doi.org/10.1111/ivb.12421>.
49. Nayeri T., Moosazadeh M., Dalimi A., Ghaffarifar F., Sarvi Sh., Daryani A., *Toxoplasma gondii* infection and ABO blood groups: a systematic review and meta-analysis, "Transactions of The Royal Society of Tropical Medicine and Hygiene", v.118, 2024, pp.234-246, <https://doi.org/10.1093/trstmh/trad085>.
50. Nayeri T., Sarvi Sh., Daryani A., Effective factors in the pathogenesis of *Toxoplasma gondii*, Heliyon, v. 10, 2024, e31558. <https://doi.org/10.1016/j.heliyon.2024.e31558>.
51. Nayeri T., Sarvi Sh., Fasihi-Ramandi M., Asgarian-Omran H., Ajami A., Hosseini Z., Dodangeh S., Daryani A., Structural prediction and antigenic analysis of ROP18, MIC4, and SAG1 proteins to improve vaccine design against *Toxoplasma gondii*: an in silico approach, "Infectious Disorders Drug Targets", 2024, e18715265332103. <https://doi.org/10.2174/011871526533210324091113422>.
52. Nikitin P., Sidorov S., Liehr T., Klimina K., Al-Rikabi A., Korchagin V., Kolomiets O., Arakelyan M., Spangenberg V., Variants of a major DNA satellite discriminate parental subgenomes in a hybrid parthenogenetic lizard *Darevskia unisexualis* (Darevsky, 1966), "Journal of Experimental Zoology. Part B: Molecular and Developmental Evolution", v. 342, 2024, pp. 368-379, <https://doi.org/10.1002/jez.b.23244>.
53. Pipoyan S., Stepanyan I., Ghrejian T., Arakelyan M., Changes in fish species composition in the rivers of the Ararat Plain during the last century, "Zoology in the Middle East", v. 70, 2024, pp. 236-247. <https://doi.org/10.1080/09397140.2024.2378518>.
54. Portnova D., Garlitska L., Preliminary data on the depth effect on the Nematode community in the East Siberian Sea, "Oceanology", v. 64, 2024, pp. 525-531. <https://doi.org/10.1134/S000143702470019X>.
55. Rees E., ... Ghasabyan M., Wood K.A., Langendoen T., Nagy S., Clausen P., Fox A.D., International census and population trends for Bewick's Swans *Cygnus columbianus bewickii* wintering from the East Mediterranean to Central Asia, "Wildfowl", N 7, 2024, pp. 179-201.
56. Sadeghi M., Hosseini S., Sarvi Sh., ... Aghayan S., ... et al., Efficacy of clindamycin in preventing abortion and vertical transmission of *Toxoplasma gondii* (PRU strain) infection in pregnant BALB/c mice, "IJ Pharmaceutical Research", v. 23, 2024, e150424. <https://doi.org/10.5812/ijpr-150424>.
57. Sadeghi M., Hosseini S., Sarvi Sh., ... Aghayan S.,... et al., Enhanced clindamycin delivery using chitosan-coated niosomes to prevent *Toxoplasma gondii* strain VEG in pregnant mice: an experimental study, "Tropical Medicine and Health", v.52, 2024, 64. <https://doi.org/10.1186/s41182-024-00643-y>.

58. Saldaitis A., Gyulai P., Kalashian M., A new species of the genus *Standfussiana* Boursin, 1946 from Armenia (Lepidoptera, Noctuidae), "Lepidopterologica Hungarica", v. 20, 2024, pp. 19-24. <https://doi.org/10.24386/LepHung.2024.20.2.19>.
 59. Serratos J., Oppel S., Rotics S., Butchart S.H.M., ... Aghababian K., et al., Tracking data highlight the importance of human-induced mortality for large migratory birds at a flyway scale, "Biological Conservation", v 293, 2024, e110525. <https://doi.org/10.1016/j.biocon.2024.110525>.
 60. Shcherbakov O., Aghayan S., Gevorgyan H., Abgaryan T., Gevorgyan R., Jiménez-Meléndez A., Robertson L., Preliminary investigations of parasite contamination of water sources in Armenia, "Food and Waterborne Parasitology", v.34, 2024, e00221. <https://doi.org/10.1016/j.fawpar.2024.e00221>.
 61. Shcherbakov O., Mkrtchyan J., Aghayan S., Gevorgyan H., Grigoryan V., Hakobyan A., Grigoryan L., Preliminary parasitological investigation of brown trout with new recorded species in Armenia, "Bulletin of the Iraq Natural History Museum", N 18, 2024, pp. 447-463. <https://doi.org/10.26842/binhm.7.2024.18.2.0447>.
 62. Sokolova N., Oleynikov A., Korablev N., Korablev P., Kaloyan G., Gyonjyan A., Korolev A., Hernandez-Blanco J., Sorokin P., Genetic structure and diversity of Eurasian Otter (*Lutra lutra*) in Northern Eurasia and Caucasus: Are there any differences between the two subspecies?, "Diversity", 2024, N 16, 764. <https://doi.org/10.3390/d16120764>.
 63. Stefanovic M., Bogdanowicz W., Adavoudi R., Hayrapetyan V., ... et al., Range-wide phylogeography of the golden jackals (*Canis aureus*) reveals multiple sources of recent spatial expansion and admixture with dogs at the expansion front, "Biological Conservation", v.290, 2024, p.110448, <https://doi.org/10.1016/j.biocon.2024.110448>.
 64. Stepanyan N., Zarikyan N., Exploring Tydeoidea mites in Armenia, "Euroasian Entomological Journal", v.23, 2024, pp.215-219. <https://doi.org/10.15298/euroasentj.23.04.05>.
 65. Stonis J.R., Dobrynina V., Remeikis A., Diškus A., Orlovskytė S., Kalashian M., The first attempt to assess the taxonomic diversity of the Nepticulidae of Armenia resulted in the discovery of new species and cryptic taxa in the Caucasus, "Diversity", v.16, 2024, 60. <https://doi.org/10.3390/d16010060>.
 66. Stonis J., Orlovskytė S., Dobrynina V., Remeikis A., Diškus A., Kalashian M., Micro wonders: updates and insights into diversity of Nepticulidae from previous fieldwork in Armenia, "Biologija", v.70, 2024, pp.90-115. <https://doi.org/10.6001/biologija.2024.70.2-3.3>.
 67. Tabolin S., Akopyan K., Migunova V., Morphological and molecular characterisation of *Xiphinema vuittenezi* Luc, Lima, Weischer&Flegg, 1964 (Nematoda: Dorylaimida) from vineyards in Armenia, "Russian Journal of Nematology", v.32, 2024, pp.1-6. <https://doi.org/10.24412/0869-6918-2024-1-1-6>.
 68. Terenina N., Kreshchenko N., Movsesyan S., Serotonergic elements in the nervous system of parasite of acipenserid fishes, *Acrolichanus auriculatus* (Digenea: Allocreadiidae), "Micron", v.185, 2024, 103690, <https://doi.org/10.1016/j.micron.2024.103690>.
 69. Terlemezyan H., Harutyunyan H., Sargsyan S., Karapetyan G., Mkrtchyan H., Zarikyan N., Sargsyan M., Evaluation of *Bacillus Thuringiensis* for the control of *Euproctis chrysorrhoea* (L.) (Lepidoptera: Erebidae), "Indian Journal of Agricultural Research", 2024. <https://doi.org/10.18805/IJAR.AF-896>.
 70. Tork M., Sarvi Sh., Asgarian-Omran H., Sadeghi M., Basirpour B., Nejad M.H., Gholami Sh., Hosseini S.A., Daryani A., Aghayan S., Design and optimization of IgG avidity test for differentiating acute from chronic human toxoplasmosis: A systematic review and meta-analysis, "Experimental Parasitology", 2024, 108883. <https://doi.org/10.1016/j.exppara.2024.108883>.
 71. Vardanyan T., Barseghyan N., Yepremyan H., Asatryan V., Barseghyan R., Gyonjyan A., Gabrielyan B., Ecological and biological features of *Capoeta capoeta* Güldenstädt, 1773 in artificial water bodies on example of the Aghbyurak reservoir (Armenia), "Electronic Journal of Natural Sciences", v. 43, 2024, pp. 9-16. <https://doi.org/10.55841/1728-791X-2024.2.43-9>.
 72. Vezhnavev V., Kouraev A., Gukasyan E., Gabrielyan B., Zooplankton study of Lake Sevan as an indicator of ecosystem stability in the context of global climate change, "Inland Water Biology", v.17, 2024, pp.48-58. <https://doi.org/10.1134/S1995082924010188>.
- Հոդվածները հրատարակվել են «Теория и практика борьбы с паразитарными болезнями» միջազգային գիտաժողովի նյութերի գիտական հոդվածների ժողովածուում, Մ., «Наука» հրատ., 2024, 480 էջ**
73. Мазур О.Е., Кутырев И.А., Сидорова Т.В., Суханова Л.В., Теренина Н.Б., Мовсесян С.О., Транскриптомный анализ селезенки байкальского омуля (оз. Байкал, Восточная Сибирь), с. 251-255.

74. Мовсесян С.О., Варданыан М.В., Петросян Р.А., Никогосян М.А., Арутюнова Л.Д., Рухкян М.Я., Оганесян Р.Л., Акопян К.В., Барсегян Р.Э., Дудукчян З.М., Теренина Н.Б., Воронин М.В., Биоразнообразие фауны паразитов животных и растений в условиях антропогенной экосистемы северных районов Армении: Лорийском и Тавушском и бассейна оз. Севан, с. 268- 255.
75. Мочалова Н.В., Теренина Н.Б., Крещенко Н.Д., Воропаева Е. Л., Мовсесян С.О., Мышечная система паразита стерляди *Acrolichanus auriculatus* (Trematoda: Allocreadiidae), с. 280-284.
Հոդվածները հրատարակվել են «Биологическое разнообразие Кавказа и Юга России» միջազգային գիտաժողովի նյութերի գիտական հոդվածների ժողովածուում, Մազրախ (Նազրախ), «КЕП» հրատ., 2024, 332 էջ
76. Магомедова М.З., Магомедова П.Д., Арутюнова Л.Д., Мирумян Л.С., Гусейнова Н.О., Магомедова А.Ш., Особенности современного распространения *Saewilioides acicula* (Muller, 1774) на территории республики, с. 246-247
77. Магомедова М.З., Магомедова П.Д., Арутюнова Л.Д., Мирумян Л.С., Гусейнова Н.О., Магомедова А.Ш., Современное состояние изученности наземной малакофауны Среднегорного Дагестана, с. 258-262.
78. Volynkin A., Dûda J., Saldaitis A., Benedek B., Titov S.V., Kalashian M., Yumatov A., Gorbunov P., Tóth B., On the taxonomy of the genus *Cteipolia* Staudinger (Lepidoptera: Noctuidae: Noctuinae) with descriptions of two new species from Transcaucasia and Central Asia, "Ecologica Montenegrina", v. 77, 2024, pp. 146-160. <https://doi.org/10.37828/em.2024.77.15>.
79. Yeranyan N., Zarikyan N., Simonyan H., Reviewing the anthropomorphic stelae: People in Iron Age monument Nor Karmiravan, East Armenia, "Alpine and Mediterranean Quaternary", N 37 (2), 2024, pp. 1-12. <https://doi.org/10.26382/AMQ.2024.07>.
80. Zarikyan N., Vardanyan M., Rukhkyan M., Hovhannisyan R., Barseghyan R., Dudukchyan Z., Akopyan K., Harutyunova L., The potential of Araneae as biological control agents against honey-wax pests (Pyrilidae), "International Journal of Agriculture and Biosciences", v. 3, 2024, pp. 288-294. <https://doi.org/10.47278/journal.ijab/2024.115>.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսությամբ:

Ս.Մովսեսյանը պարգևատրվել է ՌԴ «Орден Дружбы» մեդալով:

«ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան
 Փոխտնօրեն՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան
 Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Հ.Քոլոյան
 Էլեկտրոնային փոստ՝ armbiotech@gmail.com
 Կայքէջ՝ www.armbiotech.am

Մասնագիտական խորհուրդ 018՝ «Միկրոբիոլոգիա, կենսատեխնոլոգիա»
 Նախագահ՝ ակ. Ա.Սադյան, գիտքարտուղար՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Շարունակվել են գիտաարտադրական նշանակություն ունեցող Մանրէների կուլտուրաների հավաքածուի կենսունակ վիճակում պահպանման աշխատանքները: Ուսումնասիրվել են գոմեշի մածուկից մեկուսացված ԿԹԲ-ների 30 շտամների ֆիզիոլոգիական ու կենսաքիմիական հատկությունները: *Pseudomonas* ցեղի բակտերիաների 6 շտամների մոտ օսլա պարունակող սուբստրատի վրա կուլտիվացնելիս հայտնաբերվել է բարձր ամիլազային ակտիվություն: *Bacillus thuringiensis ssp. morrisoni*, *B.*

thuringiensis ssp. tenebrionis բակտերիալ շտամների մոտ կարծրաթևավոր ու թեփուկաթևավոր միջատների նկատմամբ հայտնաբերվել է արտահայտված միջատասպան ակտիվություն: *B. mycoides*-ի 50 շտամներից 21-ի մոտ հայտնաբերվել են պարասպորալ ներառումներ և բարձր միջատասպան ակտիվություն կարծրաթևավոր ու թեփուկաթևավոր միջատների նկատմամբ: Ածխաջրերի յուրացումը *Aspergillus* ու *Penicillium* ցեղերի բորբոսասնկերի 20 շտամների կողմից ուսումնասիրվել է աուքսանոգրաֆիայի մեթոդով: *Aspergillus* ու *Penicillium* ցեղերի բորբոսասնկերի 20 շտամների մոտ աուքսանոգրաֆիայի մեթոդով ուսումնասիրվել է ածխաջրերի յուրացումը: Խաղողի 6 ավտոխթոն սորտերից առանձնացվել են խմորասնկի 18 շտամներ, մանրամասն ուսումնասիրվել են դրանց մորֆոֆիզիոլոգիական հատկությունները (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Վ.Բագիյան):

pBE-S մաքրքային վեկտորի կազմում թթվային α -ամիլազի գենի կլոնավորման նպատակով նախագծվել և ձեռք է բերվել պրայմերային զույգը, որի օգնությամբ *Bacillus amyloliquefaciens* MDC 2156 շտամի գենոմային ԴՆԹ-ից ամպլիֆիկացվել է α -ամիլազի գենն առանց իր ազդանշանային պեպտիդի: Մոլեկուլային կլոնավորումն իրականացվել է Գիբսոնի հավաքման մեթոդով, pBE-S վեկտորի *NdeI* ու *XbaI* ռեստրիկցիայի տեղամասերում: Արդյունքում ստացվել է α -ամիլազի գենը կրող pBE-S_amy2156 ռեկոմբինանտ պլազմիդը: Կլոնավորման համար ստացված ռեկոմբինանտ պլազմիդը բազմացվել է *E. coli* Top 10-ի բջիջներում և անջատվել է ՊՇՌ-պրոդուկտների մաքրման լրակազմի կիրառմամբ: pBE-S_amy2156 ռեկոմբինանտ պլազմիդի դրոշմ *B. subtilis* Rik 1285 բջիջների տրանսֆորմացումը կատարվել է մեր կողմից մոդիֆիկացված մեթոդով: Նպատակային գենի առկայությունը բջիջներում հաստատվել է գաղութային ՊՇՌ-ի մեթոդով:

Տրանսֆորմացված բջիջներն աճեցվել են 20 մլ օպտիմալացված T9 միջավայրում (2 % սախարոզ, 0,2 % $(\text{NH}_4)_2\text{SO}_4$, 0,3 % NH_4Cl , 0,5 % KH_2PO_4 , 142 մլ խմորասնկային մզվածք (7 %), 0,02 % MgSO_4 , 200 մկգ/մլ CaCl_2 , 40 մկգ/մլ L-լիզին, 40 մկգ/մլ L-տրիպտոֆան, 10 մկգ/մլ կանամիցին) 500 մլ տարողությամբ կոլբաներում, ճոճանակի վրա (220 պտ/րոպ, 33°C ջերմաստիճանում, 48 ժամ): 24-րդ ժամին միջավայրերին ավելացվել են օսլա (2%) ու կանամիցին (10 մկգ/մլ):

Այսպիսով, ստացվել է 1200 միավոր/մլ ծավալային ակտիվությամբ α -ամիլազ պարունակող 100 մլ կուլտուրալ հեղուկ: Ամոնիումի սուլֆատով ֆրակցիոնացման արդյունքում ստացվել է α -ամիլազային պատրաստուկ (մաքրությունը 20%), որը 5-20% գրադիենտային SDS-PAGE էլեկտրոֆորեզում ցուցաբերել է 54,5 կԴա մոլեկուլային կշիռ: Ցույց է տրվել, որ պատրաստուկն առավել ակտիվ է t 55-75°C և pH 6,5-7,5 միջակայքում: Ակտիվության կորուստ 50%-ով տեղի է ունենում 78°C-ում (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ա.Ամբարձումյան):

P. rhodozyma խմորասնկի վայրի շտամի քիմիական եղանակով մուտագենեզի արդյունքում ստացվել են բնական կարոտինոիդ՝ աստաքսանտին սինթեզող մի շարք մուտանտներ: Ընտրվել են արտադրության համար կարևոր նշանակություն ունեցող 25-28°C ջերմաստիճանում ու pH 4,5 աճող շտամ-արտադրիչներ: Արտադրության ծախսերը նվազեցնելու նպատակով իրականացվել է պիզմենտի կենսասինթեզի պայմանների օպտիմալացում: Մշակվել է Ֆերմենտման միջավայրի կազմը (%)՝ գլյուկոզ - 2, $(\text{NH}_4)_2\text{SO}_4$ - 0,15, KH_2PO_4 - 0,5, $\text{MgSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}$ - 0,05, CaCl_2 - 0,01, միկրոէլեմենտներ (մգ/լ). MnSO_4 - 0,5, ZnCl_2 - 15,0, $\text{FeCl}_3 \cdot 6\text{H}_2\text{O}$ - 0,3, $\text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O}$ - 1,0: Ֆերմենտման միջավայրին էթանոլի (10 գ/լ) ու քացախաթթվի (5 գ/լ) ավելացումը նպաստել է աստաքսանտինի սինթեզի բարձրացմանը 2,5 մգ/գ-ով (չոր կենսազանգվածի վրա հաշված): Հետագայում որպես համեմատաբար էժան ու հասանելի հումք օգտագործվել է սպիտակ խաղողի բազասը: Ֆերմենտման միջավայրի հետ համատեղ օպտիմալացվել են նաև pH-ը 4,5, կուլտիվացման

ջերմաստիճանը 28°C, ֆերմենտման տևողությունը 120-130 ժ, 200 պտ/րոպե արագությամբ ճոճանակի վրա: Արդյունքում որպես հեռանկարային շտամ-արտադրիչ ընտրվել է *P. rhodozyma* MAS 22-ը, որը սինթեզում է մինչև 10 մգ/գ աստաքսանտին՝ չոր կենսազանգվածի վրա վերահաշվարկված (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Ուսումնասիրվել է բակտերիալ արտաբջջային պրոտեազների ակտիվության արգելակումը: Պարզվել է, որ *Streptococcus faecalis* MDC 5242 և *Klebsiella* sp. MDC 5244 շտամների արտաբջջային պրոտեոլիտիկ ակտիվությունը ցածր է, իսկ պրոտեազների արտազատման վրա Me^{2+} -ի ազդեցությունը չի հայտնաբերվել: Միաժամանակ *P. aeruginosa* MDC 80 ու *St. maltophilia* MDC 9288 շտամները ցուցաբերել են բարձր պրոտեոլիտիկ ակտիվություն: Քանի որ այս միկրոօրգանիզմներն արտազատում են տարբեր տեսակի պրոտեազներ (հիմնային ու սերինային), ապա վերջիններիս ակտիվությունը որոշվել է կազեին ու ժելատին պարունակող ազարոզի գելում (pH 8.9 և pH 7.2): Ցույց է տրվել, որ (S)-3-([1,1':4',1''-տերֆենիլ]-4-իլ)-ալանին ոչ սպիտակուցային ամինաթթուն 2,5 մՄ կոնցենտրացիայի դեպքում անկախ միջավայրի սուբստրատից ու pH-ից արգելակում է *St. maltophilia*-ի պրոտեոլիտիկ ակտիվությունն ավելի քան 90%-ով: Պարզվել է, որ *P. aeruginosa*-ի պրոտեոլիտիկ ակտիվությունը ժելատին պարունակող միջավայրում pH 7.2-ի դեպքում արգելակվում է 70%-ով, իսկ pH 8.9-ի դեպքում՝ 50%-ով: Միաժամանակ կազեինով ազարոզային գելում pH 8.9-ի դեպքում տեղի է ունենում 35% արգելակում, իսկ pH 7.2-ի դեպքում՝ 45%: Այսպիսով բացահայտվել է, որ *P. aeruginosa*-ի հիմնային պրոտեազն ավելի կայուն է (S)-3-([1,1':4',1''-տերֆենիլ]-4-իլ)-ալանին արգելակիչի նկատմամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Շարունակվել են սելեկցիոն եղանակով ընտրված *Brevibacterium flavum* G27 (m-FP-r, 5-FT-r) ու *B. flavum* 59C (m-FP-r, 5-FT-r) շտամների հիման վրա L-տրիպտոֆանի հեռանկարային շտամ-արտադրիչների ստացման հետազոտությունները: Գենետիկայի ու սելեկցիայի մեթոդներով ստացվել են 5-մեթիլտրիպտոֆանի նկատմամբ լրացուցիչ կայունությամբ օժտված մուտանտներ: Մուտանտների ստացման փուլում որոշվել են ամինաթթվի նմանակի (5-մեթիլտրիպտոֆան) նվազագույն կոնցենտրացիաները, որոնք արգելակում են սկզբնական շտամների աճը: Արդյունքում բացահայտվել է նոր մուտանտներ ստանալու համար 5-մեթիլտրիպտոֆանի կոնցենտրացիան՝ 5 մգ/մլ: Քիմիական մուտագենեզի եղանակով ստացվել են տրիպտոֆանի կառուցվածքային նմանակի կոնցենտրացիայի նկատմամբ կայուն (մուտագենիզացված) մի շարք մանրէների գաղութներ: Ֆերմենտման միջավայրում նպատակային ամինաթթվի սինթեզի համեմատական բնութագիրը ցույց է տվել, որ լավագույն արտադրիչ են *B. flavum* G27 շտամի G8՝ մուտանտը և *B. flavum* 59C շտամի 18՝C մուտանտը, որոնք համապատասխանաբար սինթեզում են 8.0-10.0 ու 12.0 գ/լ L-տրիպտոֆան (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա):

Առաջարկվել է ֆերմենտատիվ հիդրոլիզի մեթոդով *Saccharomyces cerevisiae* սննդային խմորասնկերի սպիտակուցային հիդրոլիզատի ստացման եղանակ: Եղանակի հիմնական առավելությունը խմորասնկային բջիջների սպիտակուցների հիդրոլիզի խորության բարձրացումն է, կենսազանգվածի սպիտակուցի հիդրոլիզատի որակի բարելավումը, պրոտեազ ֆերմենտի ծախսի նվազեցումը, գործընթացի պարզեցումն ու էժանացումը, պատրաստի պատրաստուկի օգտագործումը լաբորատորիայում ու Կենտրոնում ամբողջությամբ կենսատեխնոլոգիական խնդիրները լուծելու համար: Մեթոդի էությունը 30% խմորասնկային սուսպենզիայի պատրաստման, 125 միավոր/գ կենսազանգվածի հաշվարկով թթվային պրոտեազի ավելացման, 40°C ջերմաստիճանում ու pH 4.0, 3 ժամվա ընթացքում հիդրոլիզի իրականացման, 80-85°C ջերմաստիճանում 20-30 րոպե տևողությամբ պաստերիզացման ու չորացման մեջ է: Ցույց է տրվել, որ հիդրոլիտիկ

ճեղքման հետևանքով անջատված նյութերը 2,5% հիդրոլիզատի կոնցենտրացիայով ֆերմենտման միջավայրում *Corynebacterium glutamicum* LGS8 շտամի կուլտիվացման դեպքում ապահովում են L-հիստիդին ամինաթթվի 22 գ/լ քանակությամբ ելքը (ղեկ.՝ կ.գ.թ. Ս.Քելեշյան):

Իրականացվել է կարևոր օրգանական թթուների (օքսալաթթու, խնձորաթթու, կիտրոնաթթու, սաթաթթու, կաթնաթթու, գինեթթու, պիրուվատ), սպիրտների (մեթանոլ, իզոպրոպանոլ, 1-պրոպանոլ, իզոբութանոլ, 1-բութանոլ, իզոմաիլ սպիրտ) ու եթերների (էթիլացետատ) քանակական ու որակական նույնականացման ԲԱՀՔ ու ԳՔ մեթոդների մշակում ու վալիդացում: Մեթոդների հիմնական առավելություններն են համարվում բարձր ընտրողականությունը, կայունությունը, ճշտությունը, զգայունության ցածր սահմանը, տարբեր ծագման նմուշներում լայն շրջանակի միացությունների միաժամանակյա բաժանման ու նույնականացման հնարավորությունը (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Իրականացվել է վայրի ու գենետիկորեն մոդիֆիկացված մոշի սերմերից ստացված բնական կոսմետիկ յուղի ելքերի համեմատական վերլուծություն, ուսումնասիրվել է ճարպաթթվային բաղադրությունը: Ստացված արդյունքների համաձայն և՛ վայրի, և՛ գենետիկորեն մոդիֆիկացված մոշի սերմերում առկա են ցածր, մոտավորապես հավասար քանակությամբ 3 նույնական ճարպաթթուներ (մեթիլհեքսանոատ, մեթիլ ունդեկանոատ, մեթիլ տրիդեկանատ): Միաժամանակ վայրի մոշի սերմերում պարունակում են համեմատաբար զգալի քանակությամբ, արժեք ներկայացնող մեթիլ ցիս-11-էյկոզենոատ (308,0 մկգ/մլ) ու մեթիլ բեհենատ (1176,0 մկգ/մլ), իսկ գենետիկորեն մոդիֆիկացված բույսում՝ մեթիլ տրիկոսանոատ (4793,0 մկգ/մլ): Ցույց է տրվել, որ գենետիկորեն մոդիֆիկացված մոշի սերմերի յուղի ելքը կազմում է 18-20%, իսկ վայրի բույսերի նմուշներինը՝ 5-7%: Մոշի յուղի արտադրության թափոնների հիման վրա ստացվել են մացառների ու խոնավեցնող քսուքների փորձնական նմուշներ (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան):

Պրոբիոտիկ բակտերիաների արդյունավետ կոնսորցիումներ ստեղծելու նպատակով իրականացվել է շտամների ընտրություն՝ ելնելով մետաբիոտիկներ (ամինաթթուներ ու էկզոպոլիշաքարներ (ԷՊՇ)) սինթեզելու նրանց կարողությունից: Արդյունքում փորձարկվել են կոնսորցիումներ, որոնք *Lactobacillus rhamnosus* 20-12 շտամի հետ համատեղ պարունակել են *L. acidophilus* MDC 9602, *L. brevis* 31-9, *Enterococcus faecium* KՅ-5, *E. durans* AA-11-6, *E. faecium* AA-20-2 շտամները, իսկ *E. faecium* KՅ-5 -ի հետ՝ *L. acidophilus* MDC 9602, *L. brevis* 31-9, *E. durans* AA-11-6, *E. faecium* AA-20-2 շտամները: Ցույց է տրվել, որ արգինինի լավագույն սինթեզը նկատվում է *L. rhamnosus* 20-12-ի *E. faecium* KE-5-ի հետ կոնսորցիումում՝ մինչև 1,2 մգ/մլ: Մինչդեռ *L. rhamnosus* 20-12-ը *E. faecium* AA-20-2-ի հետ կոնսորցիումի նյութափոխանակության արգասիքներում հայտնաբերվել է L-ամինաթթուների (գլուտամինաթթու, գլիցին, թիրոզին, վալին, լեյցին, լիզին) ամենամեծ սինթեզը, բացառությամբ արգինինի: Որոշ բակտերիաների համակցություններում արգինինի ցածր ելքը, մեր կարծիքով, պայմանավորված է ամինաթթվի նկատմամբ շտամների աուքսոտրոֆությամբ: Պարզվել է, որ *L. rhamnosus* 20-12-ի ու *E. durans* AA-11-6-ի կոնսորցիումի լեղաթթուների աղերի հիդրոլազ ֆերմենտը լավագույն ձևով նպաստում է սննդարար միջավայրում տաուրինի կուտակմանը՝ մինչև 2 մգ/մլ, իսկ *L. rhamnosus* 20-12-ի *E. faecium* AA-20-2-ի հետ կոնսորցիումում՝ գլիցինի կուտակմանը՝ մինչև 1,9 մգ/մլ: *E. faecium* KՅ-5-ի *E. durans* AA-11-6-ի հետ կոնսորցիումը բնութագրվում է ԷՊՇ-ի ամենաբարձր սինթեզի ունակությամբ՝ մինչև 35% (ղեկ.՝ կ.գ.թ. Ֆ.Տխրունի):

Պարզվել է, որ պատրինջ դեղատուփ էթանոլային էքստրակտը ցուցաբերում է արտահայտված խթանիչ ազդեցություն մի շարք ԿԹԲ-ների աճի վրա: Մինչույն ժամանակ կասիայի էթանոլային էքստրակտը ճնշում է ԿԹԲ-ների աճը, իսկ դուբրովնիկ սովորականի

էքստրակտի ազդեցությունը կախված է կոնցենտրացիայից: Հետագա աշխատանքի համար ընտրվել են *L. helveticus* կուլտուրան ու պատրինջի չոր էթանոլային էքստրակտը: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ 0,25% չոր էթանոլային էքստրակտը խթանում է *L. helveticus*-ի աճը, ապահովում է կաթի մակարդման առավելագույն արագությունը և բարձրացնում է կաթնաթթվի կոնցենտրացիան: Ցույց է տրվել, որ պատրինջի չոր էթանոլային էքստրակտը 0,125% ու 0,250% կոնցենտրացիաներում զգալիորեն բարձրացնում է ֆերմենտացված կաթի հակաօքսիդանտային ակտիվությունը համապատասխանաբար 75,4% ու 82,5%-ով: Ստացված տվյալների հիման վրա մշակվել է կաթնաթթվային արտադրանք՝ պատրինջի էքստրակտի ու *L. helveticus* ԿԹԲ կուլտուրայի կիրառմամբ, որն օժտված է արտահայտված զգայունաբանական՝ տեսքի, համի, հոտի, մածուցիկության, համասեռության, թթվայնության հատկություններով (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Դանիելյան):

Ուսումնասիրվել են բնական կարոտինոիդ աստաքսանտին արտադրող *Haematococcus pluvialis* Pa-031 կանաչ միկրոօրգանիզմի մորֆոֆիզիոլոգիական ու կենսաքիմիական հատկությունները: Ցույց է տրվել, որ չոր կենսազանգվածում լիպիդների ընդհանուր քանակը կազմում է 23%, որը ներառում է ճարպաթթուներ՝ 30% լինոլինաթթու, 16% լինոլաթթու, 22% օլեինաթթու, 18% պալմիտինաթթու, 9% ստեարինաթթու: Աստաքսանտինի ելքի քանակական ցուցանիշները գնահատելու համար վեգետատիվ բջիջների վերափոխումն ապլանոսպորի իրականացվել է ֆերմենտացման միջավայրում ազոտի ու ֆոսֆորի աղբյուրների 20 անգամ նվազման, լուսավորության մինչև 3200 լյուքս բարձրացման պայմաններում: Ջերմաստիճանը մինչև 18-20°C: TLC և HPLC մեթոդների կիրառմամբ պարզվել է, որ չոր կենսազանգվածում կարոտինոիդների ընդհանուր քանակը 5% է, որտեղ β -կարոտինը 7% է, իսկ աստաքսանտինը՝ 85%:

Դաշտային պայմաններում ուսումնասիրվել է սիմբիոտիկ պալարաբակտերիաների (*Rhizobium leguminosarum*, *Bradyrhizobium arachidis*, *B. japonicum*) ու ցիանոբակտերիաների (*Arthrospira platensis*, *Nostoc*) համակեցությունների ազդեցությունը հատիկաընդելեն բույսերի՝ ոլոռի, սոյայի, գետնանուշի աճի ու զարգացման վրա: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կենսապարարտանյութի բաղադրության *B. arachidis*-ի ու *A. platensis*-ի համադրությունը լավագույն ազդեցությունն ունի գետնանուշի բույսերի աճի վրա: Բույսն ունի փարթամ, լավ զարգացած կենսազանգված, իսկ պատիճների բերքատվությունը գերազանցում է ստուգիչին 124%-ով: Ոլոռի բույսերի լավագույն ցուցանիշն արձանագրվել է, երբ սերմերը մշակվել են *R. leguminosarum*-ի համակցությամբ, 1000 հատիկի բերքը *Nostoc*-ի հետ համատեղ տարբերակում 276,0 գ է, սպիտակուցի պարունակությունը՝ 21,9% (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

Կաշենի պղնձամոլիբդենային հանքավայրի կույտային տարրալվացման համակարգից մեկուսացվել է երկաթ օքսիդացնող մանրէ, որը բնութագրվում է չափազանց ցածր pH-ով ու պղնձի իոնների բարձր պարունակությամբ: Նախնական մորֆոֆիզիոլոգիական ուսումնասիրությունների հիման վրա շտամը բնութագրվել է որպես *Leptospirillum* sp. Ksh-L, և շնորհիվ մոլեկուլային գենետիկական ուսումնասիրությունների նույնականացվել է որպես *Leptospirillum ferrodiazotrophum*: Ուսումնասիրվել է արտադրական նշանակություն ունեցող մետաղների իոնների (Cu^{2+} , Zn^{2+}) ազդեցությունը մեկուսացված շտամի վրա՝ կախված նրա աճի փուլից ու սուբստրատի (Fe^{2+}) կոնցենտրացիայից: Ցույց է տրվել, որ *L. ferrodiazotrophum* Ksh-L-ի աճին զուգընթաց նվազում է Cu^{2+} ու Zn^{2+} իոններով երկաթի օքսիդացման արգելակման աստիճանը: Fe^{2+} -ի կոնցենտրացիայի ավելացումը հանգեցրել է բակտերիայի կողմից Fe^{2+} օքսիդացման ճնշման աստիճանի նվազեցմանը Cu^{2+} ու Zn^{2+} իոնների առկայության դեպքում: Ցույց է տրվել, որ *L. ferrodiazotrophum*-ի մեկուսացված կուլտուրան 4

անգամ ավելի է խթանում խալկոպիրիտից պղնձի ու երկաթի կենսատարրալուծումը, իսկ ծծումբ օքսիդացնող *Acidithiobacillus thiooxidans* ATCC 19377 մանրէի հետ համակեցությունը, համեմատած ստուգիչ ցուցանիշների հետ, թույլ է տալիս 1,7 անգամ բարձրացնել խալկոպիրիտից պղնձի տարրալուծման արդյունավետությունը: Այսպիսով, *L. ferrodiazotropum* ու *At. thiooxydans* բակտերիաների համակեցությունը կարող է հաջողությամբ օգտագործվել խալկոպիրիտից պղնձի կորզման արդյունավետության բարձրացման համար, իսկ *L. ferrodiazotropum*-ի կուլտուրան, շնորհիվ երկաթ օքսիդացնող բարձր ակտիվության, կարող է կիրառվել երկրորդային հումքից արժեքավոր մետաղների կորզմանը նպաստող լիքսիվիանտների ստացման համար (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Վարդանյան):

Ուսումնասիրվել և գնահատվել են կլորատերև սպունդուկի ու ճահճային շուծադեղի դեղաբույսերի տարածվածությունն ու հումքային բազան: Որոշվել է բույսերի նմուշների որակական ու քանակական քիմիական բաղադրությունը: Ցույց է տրվել, որ կլորատերև սպունդուկ ու ճահճային շուծադեղ բույսերի մոտ մնացորդային խոնավությունը համապատասխանաբար 4,4 ու 5,1% է, ընդհանուր մոխիրը՝ 5,8 ու 8,9%, էքստրակտիվ նյութերի քանակը՝ 29,5 ու 18,4%, ծանր մետաղները՝ Pb-երը՝ 3,0 ու 3,5 մգ/կգ, Cd, Hg լրիվ բացակայություն, As-ը՝ 0,3 ու 0,3 մգ/կգ, ֆենոլային միացությունները՝ 36,4 ու 26,8 մգ GAE/գ, ֆլավոնոիդները՝ 1,26 ու 2,28%, անտոցիանինները՝ 0,44 ու 0,36%, դաբադանյութը՝ 20,6 ու 8,45%, օրգանական թթուները՝ 2,35 ու 4,26%, վիտամին C-ն՝ 242,7 և 360,7 մգ%, վիտամին P-ն՝ 23,6 ու 0%, կարոտինոիդները՝ 0 ու 21,4%: Մշակվել են հումքի մացերացիայի միջոցով թուրմերի ստացման լաբորատոր մեթոդներ (ղեկ.՝ ք.գ.թ. Գ.Հովսեփյան):

Սինթեզվել է Ni^{II} իոնի հարթ-քառակուսային կոմպլեքսը, որն ուսումնասիրվել է Մաննիխի ռեակցիայում: Ռեակցիայի շրջանակում փորձարկվել են տարբեր ամիններ, անջատվել են 5 նոր α-ամինաթթուներ և ենթարկվել են մոլեկուլային դոկինգ հետազոտության: Ստացված ամինաթթուների հենքի վրա նույնպես սինթեզվել են 4 պաշտպանված ամինաթթուներ՝ 9-ֆլուորենիլմետօքսիկարբոնիլ-(S)-վալին, N-9-ֆլուորենիլմետօքսիկարբոնիլ-(S)-β-[4-ալիլ-3-(2'-քլորֆենիլ)-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանին, 9-ֆլուորենիլմետօքսիկարբոնիլ-(S)-3-(3-մեթիլ-ինդոլ-1-իլ)-α-ալանին, N-9-ֆլուորենիլմետօքսիկարբոնիլ-(S)-ալիլգլիցին: Ակտիվացված էսթերների եղանակի կիրառմամբ ստացվել են ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող 3 դիպեպտիդներ՝ 9-ֆլուորենիլմետօքսիկարբոնիլ-(S)-վալիլ-(S)-5-մեթիլ-2-թիօքսո-1,3,4-թիադիազոլ-ալանին, N-9-ֆլուորենիլմետօքսիկարբոնիլ-(S)-β-[4-ալիլ-3-(2'-քլորֆենիլ)-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանիլ-գլիցին, 9-ֆլուորենիլմետօքսիկարբոնիլ-(S)-3-(3-մեթիլ-ինդոլ-1-իլ)-α-ալանիլգլիցին: Ստացված պաշտպանված ամինաթթուների ու դիպեպտիդների կառուցվածքը հաստատվել է ՄՄՌ վերլուծությամբ (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան):

Իրականացվել է (S)-BPB քիրալային օժանդակ ռեագենտի ու ամինաթթվի Շիֆի հիմքի հետ Ni(II)-իոնի առաջացրած հարթ-քառակուսային կոմպլեքսների հենքի վրա ծայրային ալկինային խմբի CH-ակտիվացում Քլիք-համակցմամբ, սինթեզվել են էնանտիոմերապես մաքուր (S)-α-ամինաթթուներ, ինչպես նաև դի-, տրի- ու տետրապեպտիդներ, կողմնային ռադիկալում պարունակող տրիազոլային օղակով կապակցված տարբեր բենզիլային մնացորդներ (որոնց բենզոլային օղակի տարբեր դիրքերում պարունակվում են հալոգեններ): Կենսաբանական ու դեղաբանական հատկությունների համակարգչային (AutoDock 4 ու PASS-Online) ուսումնասիրության հիման վրա իրականացվել է թիրախային էնանտիոմերապես մաքուր (S)-α-ամինաթթուների ու պեպտիդների քանակական սինթեզ, որոնց կառուցվածքը հաստատվել է ժամանակակից սպեկտրալ անալիզի մեթոդներով (ղեկ.՝ ք.գ.թ. Զ.Մարդիյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Իրականացվել են մոնիթորինգ ու նմուշառումներ Հայաստանի մի շարք հանքուղիներից, լքված հանքավայրերից, պոչամբարներից: Մետազենոմային մակարդակով ցույց է տրվել թթու հանքային դրենաժների (ԹՀ) միկրոֆլորայի համեմատական բաղադրությունը, որոշվել են միկրոօրգանիզմների գերակշռող ցեղերը՝ կախված նմուշների ֆիզիկաքիմիական հատկություններից ու պրոֆիլներից: Իրականացվել է Cu^{2+} ու Pb^{2+} իոնների ընտրողական կենսասորբեցիա ջրային լուծույթներից ու ԹՀ-ներից՝ օգտագործելով շաքարի ճակնդեղի չոր կենսազանգված: Ուսումնասիրվել են ադսորբցիայի գործընթացի վրա ազդող մի շարք գործոններ (սկզբնական լուծույթի pH, սորբենտի կոնցենտրացիան, ադսորբցիոն իզոթերմները, կենսասորբցիայի կինետիկան) (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ա.Վարդանյան):

Սինթեզված սալենային կոմպլեքսներն ուսումնասիրվել են որպես կատալիզատորներ: Հայտնաբերվել է, որ 3-րդ դիրքում մեթօքսի տեղակալիչով կոմպլեքսներն ունեն բարձր ստերեոսեλεκտիվություն՝ հատկապես Zn(II)-OMe ու Cu(II)-OMe կատալիզատորների դեպքում: Միաժամանակ ալիլ տեղակալիչ պարունակող կատալիզատորն արգելակում է ռեակցիան: Մշակվել է α -ալիլ-(S)-վալինի սինթեզի նոր մեթոդ Zn(II)-OMe կոմպլեքսի կիրառմամբ (ղեկ.՝ ակ. Ա.Սադյան):

Ստացվել, սեքվենավորվել, կենսասինֆորմատիկական մեթոդներով բնութագրվել և կրիոպահպանվել են թերմոֆիլ ու մեզոֆիլ ծագման 40763 ու 479350 CDS-ներով (կոդավորող հաջորդականություններ՝ պոտենցիալ սպիտակուցի մոլեկուլներ) մետազենոմներ: Ստեղծվել են տվյալների հավաքածուներ ցեյուլազների, հեմիցելուլազների ու լիզինի մոդիֆիկացնող ֆերմենտների նախնական կենսասինֆորմատիկական վերլուծության ու գենների ընտրության համար, ինչպես նաև գենների էքսպրեսիոն կլոնավորման, համապատասխան ֆերմենտների ստացման, բնութագրման, կենսատեխնոլոգիայի մեջ պոտենցիալ կիրառման համար (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ա.Համբարձումյան):

Ազոտֆիքսող, ֆոսֆատներ լուծվող ու էնտոպոմատոգեն բակտերիաների շտամների կիրառմամբ մշակվել և դաշտում համակողմանիորեն բնութագրվել են հողը պարարտացնող («Պոլիագոռիչ») ու բակտերիալ միջատասպան («Կոլեոպտերին») պատրաստուկներ, որոնք օժտված են բարձր կենսաբանական հատկություններով (ղեկ.՝ ան.Գ.Թ. Վ.Գոգինյան):

Gluconacetobacter xylinus շտամ-արտադրիչի հիման վրա ստացվել է մուտանտ, որը «Կիլիկիա» գործարանի գարեջրի արտադրության թափոնների վրա 5-7 օրվա ընթացքում, ստատիկ ֆերմենտման պայմաններում սինթեզում է ավելի քան 10 գ/լ բակտերիալ ցեյուլոզ: Կենսաթաղանթի կառուցվածքն ու ֆիզիկաքիմիական հատկություններն ուսումնասիրվել են սկանավորող էլեկտրոնային մանրադիտակի ու IR-Fourier վերլուծության մեթոդների միջոցով (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ս.Ավետիսյան):

Քիմիական սինթեզի ու կենսատրանսֆորմացիայի մեթոդների կիրառմամբ ստացվել են (D,L)-5-(4-հիդրօքսիֆենիլ)-հիդանտոին և D-4-հիդրօքսիֆենիլգլիցին միացությունները, որոնք ուսումնասիրվել են որպես D- և L-սպեցիֆիկ հիդանտոինազների ու կարբամոլյազների համար որպես պոտենցիալ սուբստրատներ (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ա.Պալոյան):

Սինթեզվել են գրականության մեջ չնկարագրված 10-ից ավել նոր էնանտիոմերապես մաքուր ամինաթթուներ: Մշակվել է Մաննիխի ռեակցիան իրականացնելու 2 նոր մեթոդ: Ցույց է տրվել, որ պարաֆորմից այլ ալդեհիդներ անցման ռեակցիաներում որպես կատալիզատորներ անհրաժեշտ են ավելի ուժեղ Լյուիս թթուներ: Աճեցվել են տարբեր կոմպլեքսների 3 բյուրեղներ, ստացվել են ռենտգենկառուցվածքային անալիզները, հաստատվել են դրանց բացարձակ կոնֆիգուրացիաները:

Սինթեզվել են ավելի քան 10 նոր էնանտիոմերապես մաքուր α -ամինաթթուներ: Մշակվել է Գլեյզերի ռեակցիան վարելու նոր մեթոդ: Փորձարարական տվյալների հիման վրա իրականացվել է DFT (խտության ֆունկցիոնալ տեսություն) վերլուծություն ռեակցիայի մեխանիզմը որոշելու համար, ներկայացվել է դրա ընթացքի նոր հիպոթեզ (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան):

Իրականացվել է ոչ սպիտակուցային ամինաթթուների ելային կոալեքսների սինթեզ: Կատարվել է ֆենոլային միացությունների ֆունկցիոնալ խմբերի պաշտպանում (ղեկ.՝ ք.գ.թ. Տ.Սարգսյան):

Ստացվել են ոչ քարաքոսային սնկերի ու միկրոօրգանիզմների կայուն համակցություններ, որոնք, ի տարբերություն սկզբնական մոնոկուլտուրաների, սինթեզում են տարբեր ճարպաթթուների զգալի քանակություն (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Մշակվել է *Tetrademus obliquus* կանաչ միկրոօրգանիզմի և *Sphingobacterium* sp. L13G8 մանրէի արդյունավետ կոնսորցիում, որը կարող է միաժամանակ կիրառվել որպես կենսապարարտանյութ, կենսախթանիչ, կենսապեստիցիդ (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Մելքոնյան):

Մշակվել և սինթեզվել են կոլագենազ ֆերմենտի ակտիվությունն արդյունավետ արգելակող պրոպարգիլ գլիցին պարունակող մի շարք դի- և տրիպեպտիդներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Սարգսյան):

Ստացվել են երկու տարբեր շտամների՝ *Pseudomonas* sp. KNK003A-ի ու *Ensifer adhaerens* -ի D-կարբամոհլազի գենը կրող *E. coli*-ի ռեկոմբինանտ շտամներ, որոնցից անջատվել և մաքրվել են ֆունկցիոնալ ակտիվ D-կարբամոհլազները: Ուսումնասիրվել են դրանց ֆիզիկաքիմիական ու կատալիտիկ հատկությունները, որոշվել են մոլեկուլային կշիռները (38 կԴա): Նշված D-կարբամոհլազներն ուսումնասիրվել են *in silico* մեթոդներով: Մոլեկուլային դոկինգի վերլուծությունը բացահայտել է սուբստրատի կապակցման վայրը ֆերմենտի եռաչափ կառուցվածքում: Սուբստրատների նկատմամբ ֆերմենտի խնամակցության բարձրացման ու սուբստրատային սպեցիֆիկության ընդլայնման նպատակով D-կարբամոհլազը կոդավորող գեներում իրականացվել է կետային մուտագենեզ: Ստացված մուտանտների մոտ «սուբստրատ կապող գրպանի» կառուցվածքի փոփոխությունը բերել է սուբստրատային սպեցիֆիկության ընդլայնմանը (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Քոլոյան):

Ընտրվել են պրոբիոտիկ բակտերիաների հեռանկարային շտամներն ու նրանց կոնսորցիումները (*L. rhamnosus*, *L. fermentum*, *L. delbrueckii* ssp. *lactis*, *L. brevis*, *L. casei*, *L. helveticus*, *E. faecium*, *E. durans*): Բազմակողմանի ուսումնասիրվել են մանրէների կենսաբանական հատկությունները, այդ թվում՝ ամինաթթուների սինթեզը, ֆերմենտային ու հականախիչ ակտիվությունները, լեղաթթուների նկատմամբ կայունությունը, կենսաթաղանթներ ձևավորելու, պեպտիդային բնույթի միացություններ սինթեզելու ունակությունները (ղեկ.՝ կ.գ.թ. Կ.Կարապետյան):

Ուսումնասիրվել է Fe^{3+} -ի տարբեր կոնցենտրացիաների ազդեցությունը տպագիր տպատախտակներից (PCB) Cu-ի, Zn-ի, Al-ի ու Ni-ի կորզման վրա: Վերականգնված Cu-ի առավելագույն քանակությունը՝ 87,19%, դիտվել է 15 գ/լ Fe^{3+} իոնների առկայության դեպքում՝ անկախ pH-ի արժեքներից: Zn-ի տարրալուծման դեպքում որոշիչ գործոնը սկզբնական pH-ի արժեքն է: Ni-ի առավելագույն վերականգնում դիտվել է pH 1-ի և Fe^{3+} -ի 15 գ/լ կոնցենտրացիայի դեպքում: Al-ի վերականգնումը հիմնականում կախված է pH-ից և Fe^{3+} կոնցենտրացիայից: Ելանյութի ու տարրալվացման մնացորդների մանրադիտակային պատկերներն ու էներգոդիսպերսիոն սպեկտրոսկոպիայի տվյալները ցույց են տվել, որ PCB-ներում մետաղների ձևը, ինչպես նաև նախնական նյութի հատիկաչափական մշակումն առանցքային դեր են խաղում PCB-ներից մետաղների լիարժեք կորզման գործում (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Վարդանյան):

Մշակվել են օպտիկապես ակտիվ α -դիրքում պրոպարգիլային ածանցյալներ պարունակող տեղակալված (S)- α -ֆենիլալանինի նմանակների ու դրանց հենքի վրա պեպտիդների ստացման մեթոդներ: Հետազոտվել է սինթեզված միացությունների հակամանրէային ազդեցությունը մի շարք ֆիտոպաթոգեն բակտերիաների նկատմամբ՝ *Pseudomonas syringae* pv. *lachrymans* (ղեկ.՝ ք.գ.թ. 2.Մարդիյան):

Synechocystis sp. և *Arthrospira platensis* ցիանոբակտերիաների, *Neochloris oleoabundans* ու *Chlorella vulgaris* միկրոօրգանիզմների կենսազանգվածներից անջատվել են գլիկոգլիկերոլիպիդներ, որոնց քանակները, քիմիական կառուցվածքը, մաքրությունը հաստատվել են անալիտիկ հետազոտական մեթոդներով: Հայտնաբերվել է նշված կենսաբանական պատրաստուկի զգալի հակաքաղցկեղային ազդեցությունը կրծքագեղձի քաղցկեղային մոդելային բջիջներում (ղեկ.՝ կ.գ.թ. Բ.Հարությունյան):

Իրականացվել է 4 նոր պաշտպանված ամինաթթուների ու 8 դիպեպտիդների նպատակաուղղված սինթեզ: Համաձայն համակարգչային սբրինինգի տվյալների՝ *in vitro* հետազոտվել են միացությունների հակասնկային, հակամանրէային ու ֆերմենտային արգելակիչ ակտիվությունները (ղեկ.՝ ք.գ.թ. Լ. Ստեփանյան):

Իրականացվել է 4 նոր պաշտպանված ամինաթթուների ածանցյալների ու 2 դիպեպտիդների նպատակաուղղված սինթեզ: Համակարգչային սբրինինգի հիման վրա *in vitro* հաստատվել է ստացված դիպեպտիդների հակասնկային ակտիվությունը (ղեկ.՝ ք.գ.թ. Ա. Սարգսյան):

Հրապարակումներ

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

1. Աղաջանյան Ա., Գրիգորյան Ա., Կենսաբանորեն ակտիվ որոշ միացությունների ստացման տեխնոլոգիայի հիմունքներ (ուսումն. ձեռնարկ), Ե., ՀՈՀ հրատ., 2024, 207 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Евлагина Е.Г., Евлагин Е.В., Лейнвебер Е.Ф., Юматов Е.Н., Аветисян С.В., Многолетние исследования японских ученых в области разработки искусственного рациона тутового шелкопряда (обзор), Тр. Ставропольского отделения русского энтомологического общества, Ставрополь, Михайловск, т. 20, 2024, с. 154-169, <https://doi.org/10.48612/FARC/3034-2392/016.20.2024>
3. Исаханян А.У., Овсян З.А., Григорян Г.С., Мхитарян Р.П., Габриелян Л.С., Паносян Г.А., Дангян М.Ю., Саргсян А.С., Амбарцумян А.А., Арутюнян А.А., Пиразолины и пиримидины на основе (Е)-1-(4-пентилоксифенил)-3-арилпроп2-ен-1-онов. Синтез, докинг-исследование и люминесцентные свойства, “Журнал общей химии”, т. 94, N 5, 2024, с.569-582. <https://doi.org/10.31857/S0044460X24050048>
4. Оганесян Н.А., Кураков А.В., Хачатурян Н.С., Геворгян С.А., Матевосян Р.Э., Багиян В.А., Совместное культивирование грибов и микроводорослей для биотехнологий, “Микология и фитопатология”, т. 58, N 6, 2024, с. 435-445. <https://doi.org/10.31857/S0026364824060029>
5. Погосян М.В., Саргсян Р.Ш., Андриасян А.А., Хачатрян Л.М., Аветисян С.В., Минасян А.Л., Степанян Г.Ю., Саргсян В.Р., Манукян А.М., Саргсян Дж.С., Соотношение возбуждающих и тормозных синаптических процессов в кортико-игральных проекциях: модель болезни Паркинсона с меланиновой защитой, “Психология. Психофизиология”, т. 17, N 1, 2024, с. 103-118. <https://doi.org/10.14529/jpps240110>
6. Aghajanyan A., Hambardzumyan A., Minasyan E., Hovhannisyan G., Yeghiyan K., Soghomonyan T., Avetisyan S., Sakanyan V., Tsaturyan A., Efficient isolation and characterization of functional melanin from various plant sources, “International Journal of Food Science and Technology”, v. 59, N 6, 2024, pp. 3545-3555. <https://doi.org/10.1111/ijfs.17016>

7. Aghajanyan A., Mikaelyan A., Martirosyan H., Melyan G., The role of plant-derived melanin in enhancing vitro growth and nutrient accumulation in potato varieties, "Bioactive Compounds in Health and Disease", v. 7, N 10, 2024, pp.511-524. <https://doi.org/10.31989/bchd.v7i10.1445>
8. Avetisova G., Melkonyan L., Ghochikyan V., Tsarukyan G., Toplaghatsyan A., Karapetyan Z., Keleshyan S., Biofertilizer based on *Agrobacterium* as a key to food security, "Bioactive Compounds in Health and Disease", v. 7, N 10, 2024, pp. 558-569. <https://www.doi.org/10.31989/bchd.v7i10.1423>
9. Avetisyan S., Hovsepyan A., Saghatelian L., Koloyan H., Chizhik O., Hovhannisyan S., Paronyan M., Obtaining melanin-synthesizing strains of *Bacillus thuringiensis* and their use for biological preparations, "Frontiers in Bioscience – Elite", v. 16, N 3, 2024, pp. 27. <https://doi.org/10.31083/j.fbel603027>
10. Avetisyan S., Koloyan H., Paronyan M., Petrosyan T., Hovsepyan A., Hydrophilic melanin as a potential hair growth stimulant: A secondary observational study, "Journal of Cosmetic Dermatology", v. 23, issue 12, 2024, pp. 4369-4370. <https://doi.org/10.1111/jocd.16504>
11. Bagiyany V., Chitchyan K., Goginyan V., Tsaturyan A., Baker's yeast of the tkhmoor with high α -glucosidase activity for cultivation on whey, "Food and Humanity, Elsevier", v. 2, 100209, 2024, pp. 1-8. <https://doi.org/10.1016/j.foohum.2023.100209>
12. Bagiyany V., Ghazanchyan N., Khachatryan N., Gevorgyan S., Barseghyan S., Davidyan T., Chitchyan K., Fungal microbiota of biodamages of various polymeric materials, "Brazilian Journal of Microbiology", v. 55, 2024, pp.3251-3260. <https://doi.org/10.1007/s42770-024-01547-z>
13. Bagiyany V., Kinosyan M., Ghazanchyan N., Khachatryan N., Gevorgyan S., Chitchyan K., Barseghyan S., Verdyan A., Goginyan V., *Bacillus thuringiensis* strains with high insecticidal activity against insect larvae of the orders *Coleoptera* and *Lepidoptera*, "Open Agriculture", v. 9, N 1, 2024, pp. 1-10. <https://doi.org/10.1515/opag-2022-0384>
14. Burkhardt C., Baruth L., Meyer-Heydecke N., Klippel B., Margaryan A., Paloyan A., Panosyan H.H. & Antranikian G., Mining thermophiles for biotechnologically relevant enzymes: evaluating the potential of European and Caucasian hot springs, "Extremophiles", v. 28, N 5, 2024, 27 pp.. <https://doi.org/10.1007/s00792-023-01321-3>
15. Castro L., Abrahamyan N., Vardanyan A., González F., Vardanyan N., Muñoz J.A., Selective biosorption and recovery of scandium using the alga *Fucus vesiculosus*, "Minerals Engineering", v.214, 2024, p.108768. <https://doi.org/10.1016/j.mineng.2024.108768>
16. Dadayan A., Mkrtchyan A., Poghosyan A., Dadayan S., Stepanyan L., Israyelyan M., Tovmasyan A., Tsaturyan A., Hovhannisyan N., Topuzyan V., Sargsyan T., Saghyany A., Unnatural phosphorus-containing α -amino acids and their N-FMOC derivatives: Synthesis and *In Vitro* investigation of anticholinesterase activity, "Chemistry Select", v.9, N 3, 2024, <https://doi.org/10.1002/slct.202303249>
17. Dadayan S., Poghosyan A., Arstamyany L., Hovhannisyan A., Ghazaryan S., Sheyranyan M., Dadayan A., Comparative study of fatty acids formation in natural and genetically modified blackberry seeds, "Proceedings of the Yerevan state university. Chemistry and biology", Y., v. 58, N 2, 2024, pp. 114-120. <https://doi.org/10.46991/PYSU:B.2024.58.2.114>
18. Danielyan L., Hovhannisyan H., Baghdasaryan L., Barseghyan A., New generation of functional yogurts fermented with probiotic lactic acid bacteria isolated from human milk, "Functional Foods in Health and Disease", v.14, N 4, 2024, pp.232-247. <https://doi.org/10.31989/ffhd.v14i4.1347>
19. Danielyan M., Karapetyan K., Avetisyan Z., Hovsepyan A., Karapetyan A., Dallakyan A., Nebogova K., Morphological and behavioral analysis of the protective effects of bacterial melanin in a rat model of Parkinson's disease, "Georgian Medical News", 2024; v. 349, N 4, pp. 6-11. <https://geomednews.com/currentissue.html>
20. Esayan S., Hayrapetyan A., Yesayan T., Sargsyan A., Chakhmakhchyan A., Babayan B., Sevoyan G., Yesayan A., Impact of ceramic packaging on the quality and safety of Armenian fermented dairy product Matsoun, "Functional Food Science", v.4, N 10, 2024, pp.370-379. <https://www.doi.org/10.31989/ffs.v4i10.1459>
21. Gasparyan G.Ts., Bichakhchyan A.S., Derdzian L.V., Avetisyan S.Kh., Panosyan H.A., Poghosyan A. S., Features of the reaction of (1,2- Dibromoethyl) (diphenyl) phosphine oxide with CH- and NH-nucleophiles, Russian Journal of General Chemistry, v. 94, N1, 2024, pp. 62–65. <https://doi.org/10.1134/S1070363224010055>
22. Ghevondyan D., Soghomonyan T., Hovhannisyan P., Margaryan A., Paloyan A., Birkeland N.K., Antranikian G., Panosyan H., Detergent-resistant α -amylase derived from *Anoxybacillus karvacharensis* K1 and its

- production based on whey, Scientific Reports, v. 14, 2024, 12682. <https://doi.org/10.1038/s41598-024-63606-7>
23. Goginyan V., Harutyunyan B., Hovhannisyan R., Novak M., 5-Aminolevulinic acid production: Strategies for microbial biosynthesis, Advances and perspective, In Book: "Microbial Essentialism. An Industrial Prospective", Academic Press, Elsevier, Chapter 13, 2024, pp. 317-338. <https://doi.org/10.1016/B978-0-443-13932-1.00004-0>
 24. Harutyunyan A., Israelyan S., Hakobyan M., Safaryan M., Madoyan R., Sukiasyan A., Gevorgyan K., Harutyunyan A., Sargsyan A., Hambardzumyan A., Karapetyan H., Mnatsakanyan A., Panosyan H., Danghyan M., Gasparyan S., Synthesis and biological properties of hybrid compounds based on nitrogen-containing heterocycles and 1,5-disubstituted 3,7-Diazabicyclo[3.3.1]nonan-9-ones, "Russian Journal of General Chemistry", v.94, 2024, pp.2809–2823. <https://doi.org/10.1134/S107036322411001X>
 25. Harutyunyan A., Israelyan S., Safaryan M., Sumbatyan A., Nersesyan L., Aharonyan A., Danielyan I., Muradyan R., Sargsyan A., Hambardzumyan A., Panosyan H., Synthesis, molecular docking study, and effect on the methylation of tumor DNA of Benzo[4',5']imidazo[2',1':6,1]pyrido[2,3-d]pyrimidines functionalized by aromatic groups and azines, "Russian Journal of Organic Chemistry", v. 60, 2024, pp.1909-1920. <https://doi.org/10.1134/S1070428024100051>
 26. Harutyunyan S., Stepanyan T., Khachatryan G., Goginyan V., Biodiversity, spreading and practical appliance of nodule bacteria in Armenia. Review, In Book: "Microbial Essentialism. An Industrial Prospective", Academic Press, Elsevier, Chapter 19, 2024, pp. 419-442. <https://doi.org/10.1016/B978-0-443-13932-1.00007-6>
 27. Hovhannisyan A.M., Tovmasyan A.S., Mkrtchyan A.F., Ghazaryan K.R., Minasyan E.V., Dallakyan O.L., Chobanyan M.S., Zakaryan H., Roviello G.N., Saghyan A.S., Synthesis and evaluation of new mono- and binuclear salen complexes for the α -alkylation reaction of amino acid substrates as chiral phase transfer catalysts, "Molecular Catalysis", v.569, 2024, p.114618. <https://doi.org/10.1016/j.mcat.2024.114618>
 28. Hovhannisyan H., Danielyan L., Chichoyan N., Pashayan M., Baghdasaryan L., Melkumyan I., Barseghyan A., Improvement of functional and sensory properties of fermented dairy drink "Narine" using raw apricot gum, "Functional Foods in Health and Disease", v.14, N 8, 2024, pp. 600-614. <https://doi.org/10.31989/ffhd.v14i8.1398>
 29. Hovhannisyan H., Danielyan L., Baghdasaryan L., Melkumyan I., Barseghyan A., The influence of the alcoholic extract of lemon balm on the growth of *Lactobacillus helveticus* MDC 9602 and the technological, physicochemical, organoleptic, and antioxidant properties of fermented milk, "J Food Sci Technol", v. 61, issue 11, 2024. <https://doi.org/10.1007/s13197-024-06121-x>
 30. Hovhannisyan H., Danielyan L., Gaboyan E., Pashayan M., Grigoryan G., Barseghyan A., Mutational improvement of *Lactobacillus delbrueckii* subsp. *lactis* biopreservation potential, "Applied Biochemistry and Microbiology", v.60, N 5, 2024, pp.844–854. <https://doi.org/10.31989/ffhd.v14i4.1347>
 31. Hovhannisyan N., Abrahamyan S., Grigoryan L., Yeribekyan S., Balasanyan H., Grigoryan V., Arstamyanyan L., Badalyan A., The use of secondary raw materials in confectionary production, "Functional Food Science", v.4, N 10, 2024, pp.390-400. <https://doi.org/10.31989/ffs.v4i10.1455>
 32. Iskandaryan M., Baghdasaryan L., Minasyan E., Trchounian K., Antranikian G., Poladyan A., A novel, cost-effective approach for the production of hydrogenase enzymes and molecular hydrogen from recycled whey-based by-products, "International Journal of Hydrogen Energy", Available online 23 October 2024. <https://doi.org/10.1016/j.ijhydene.2024.10.256>
 33. Israyelyan A., Balabekyan Ts., Sargsyan Z., Tkhruni F., Effect of some metabiotics from strains of the genus enterococcus on the growth of pathogenic bacteria that cause pneumonia, "Biology Bulletin", v.51, N 1, 2024, pp.91-97. <https://doi.org/10.1134/S1062359023603786>
 34. Iwanov I., Kaloyanov N., Lumov N., Sargsyan A., Neykov M., From cyclic ribopyranose to furfural-new insight and new concept, "Biomedical Journal of Scientific and Technical Research", v. 56, N 1, 2024, pp. 47675-47680. <https://doi.org/10.26717/BJSTR.2024.56.008794>
 35. Keleshyan S., Karapetyan Zh., Toplaghaltsyan A., Khachaturyan N., Chitchyan K., Gevorgyan S., Melkonyan L., Ghochikyan V., Tsarukyan G., Avetisova G., Antibiotic-resistant mutants of lactic acid bacteria: potential food control agents, "Bioactive Compounds in Health and Disease", v. 7, N 9, 2024, pp. 430-443. <https://doi.org/10.31989/bchd.v7i9.1424>

36. Khachatryan A., Vardanyan N., Willscher S., Sevoyan G., Zhang R., Vardanyan A., Bioleaching of chalcopyrite by a new strain *Leptospirillum ferro Diazotrophum* Ksh-L isolated from a dump-bioleaching system of Kashen Copper-Molybdenum Mine, "Minerals", v. 14, 2024, 26. <https://doi.org/10.3390/min14010026>
37. Melkumyan E., Minasyan E.V., Toplaghalsyan A.G., Characterization of citric acid biosynthesis by fungi *Aspergillus niger* for surface and deep cultivation, "Biology Bulletin", v. 50, 2024, pp.S589-S597. <https://doi.org/10.1134/S106235902360068X>
38. Melkumyan M., Babayan B., Grigoryan A., Yesayan A., Crops biological protection: Phytopathogens growth inhibition by the entomopathogens, "Bioactive Compounds in Health and Disease", v. 7, N 8, 2024, pp. 361-374. <https://doi.org/10.31989/bchd.v7i8.1427>
39. Mikaelyan A., Babayan B., Grigoryan A., Grigoryan A., Asatryan N., Melkumyan M., Tartaric acid new derivatives as prospective and safe alternative to antimicrobials for food products packing, "Functional Foods in Health and Disease", v.14, N 1, 2024, pp.33-50. <https://www.doi.org/10.31989/ffhd.v14i1.1195>
40. Mikaelyan A., Bagdasaryan S., Babayan B., Asatryan N., Melkumyan M., Grigoryan A., new functionally substitutes cyclopropanecarboxylic acids as ethylene biosynthesis innovative regulators, "Bioactive Compounds in Health and Disease", v.7, N 10, 2024, pp.500-510. <https://doi.org/10.31989/bchd.v7i10.1472>
41. Mikaelyan A., Bagdasaryan S., Yesayan A., Yesayan T., Hayrapetyan A., Babayan B., Milkman M., Sargsyan V, Sustainable methods for producing food-derived bioactive compounds, "Bioactive Compounds in Health and Disease", v. 7, N 10, 2024, pp. 525-536. <https://www.doi.org/10.31989/bchd.v7i9.1428>
42. Mikaelyan A., Soghomonyan T., Babayan B., Bagdasaryan S., Asatryan N., Grigoryan A., Melkumyan M., Colamine and Tartaric acid based innovative antioxidant and anti-spoilage food additive for fish product industry, "Bioactive Compounds in Health and Disease", v. 7, N 10, 2024, pp. 489-499. <https://www.doi.org/10.31989/bchd.v7i10.1429>
43. Minasyan E., Bio-protective activity of grape melanin in relation to antibiotics. Y., "Proceedings of the YSU B: Chemical and Biological Sciences", v.58, N 2 (264), pp.151-158.
44. Minasyan E., Aghajanyan A., Karapetyan K., Khachatryan N., Hovhannisyan G., Yeghyan K., Tsaturyan A., Antimicrobial activity of melanin isolated from wine waste, "Indian J Microbiol", v. 64, 2024, pp. 1528-1534. <https://doi.org/10.1007/s12088-023-01155-9>
45. Paloyan A., Dukova K., Aminotransferases and Aspartate ammonia-lyases as the biocatalysts for the syntheses of amino acids, In Book: "Microbial Essentialism. An Industrial Prospective", Academic Press, Elsevier, Chapter 7, 2024, pp.157-180. <https://doi.org/10.1016/B978-0-443-13932-1.00019-2>
46. Paronyan M., Koloyan H., Aganyants H., Hambardzumyan A., Soghomonyan T., Avetisyan S., Kocharov S., Panosyan H., Sakanyan V., Hovsepyan A., Structural analysis and substrate specificity of D-Carbamoylase from *Pseudomonas*, "BioTech", v.13, N 4, 2024, 40. <https://doi.org/10.3390/biotech13040040>
47. Poghosyan A., Khachatryan E., Mkrtchyan A., Mirzoyan V., Hovhannisyan A., Ghazaryan K., Minasyan E., Langer P., Saghyan A., Synthesis of enantiomerically enriched β -substituted analogs of (S)- α -alanine containing 1-phenyl-1H-1,2,3-triazole groups, "Amino Acids", v. 56, N 67, 2024, pp. 1-11. <https://doi.org/10.1007/s00726-024-03430-5>
48. Pramanik Sh., Alhomrani M., Alamri A.S, Alsanie W.F., Nainwal P., Kimothi V., Deepak A., Sargsyan A.S., Unveiling the versatility of gelatine methacryloyl hydrogels: a comprehensive journey into biomedical applications, "Biomedical Materials", v. 19, N 4, 2024, p.042008. <https://doi.org/10.1088/1748-605X/ad4df7>
49. Pramanik Sh., Singh A., Abualsoud B. M., Deepak A., Nainwal P., Sargsyan A.S., Bellucci S., From algae to advancements: laminarin in biomedicine, "RSC Advances", v. 14, N 5, 2024, pp. 3209-3231. <https://doi.org/10.1039/D3RA08161C>
50. Sargsyan T., Stepanyan L., Israyelyan M., Hakobyan H., Jamgaryan S., Gasparyan A., Saghyan A., The synthesis and in vitro study of 9-fluorenylmethoxycarbonyl protected non-protein amino acids antimicrobial activity, "Eurasian Chemico-Technological Journal", 2023, v.25, N 4, pp.235-240 (Published: 2024-02-15). <https://doi.org/10.18321/ectj1546>
51. Sevoyan G., Ghazaryan K., Yesayan T., Hayrapetyan A., Minasyan S., Babayan B., I. Gabrielyan S., Esoyan A., Chakhmakhchyan A., Grigoryan A., Melkumyan M., Yesayan A., Traditional vegetarian food products in villages of Syunik, Armenia: Technogenic contamination risks assessment, "Functional Food Science", v. 4, N 10, 2024, pp. 380-389. <https://www.doi.org/10.31989/ffs.v4i10.1463>

52. Sevoyan G., Minasyan S., Yesayan T., Babayan B., Avetisyan S., Yesayan H., The safety of animal-derived food products in areas of technogenic pollution, "Functional Foods in Health and Disease", v. 14, N 10, 2024, pp. 704-712. <https://doi.org/10.31989/ffhd.v14i10.1484>
53. Shahinyan S., Badasyan A., Babayan B., Melkumyan M., Yesayan T., Yesayan A., strategic food reserves storage, safety and risk minimization: problems and perspectives, "Functional Foods in Health and Disease", v. 14, N 8, 2024, pp. 615-629. <https://doi.org/10.31989/ffhd.v14i8.1410>
54. Soghomonyan T., Hambardzumyan A., Mkhitarian A., Khoyetsyan L., Paronyan M., Izmailyan M., Kinosyan M., Bagiyany V., Ghochikyan V., Panosyan H., Paloyan A., Obtaining and characterizing thermostable α -Amylases secreted by *Bacillus subtilis*, originating from *Bacillus amyloliquefaciens* and *Bacillus subtilis*, "Fermentation", v. 10, N 11, 2024, 547, <https://doi.org/10.3390/fermentation10110547>
55. Soghomonyan T., Extracellular expression of the alpha-Amylase gene from *Bacillus amyloliquefaciens* MDC1974 strain using *Bacillus subtilis* RIK1285 cells, Y., "Bulletin of High Technology", v. 29, N 1, 2024, pp.15-24. <https://doi.org/10.56243/18294898-2024.1-15>
56. Soghomonyan T., Khoyetsyan L., Paloyan A., Hambardzumyan A., Development of technology for pilot-scale production, drying, and storage of extracellularly expressed recombinant Amy1974 Alpha-Amylase, Y., "Bulletin of High Technology", v.30, N 2, 2024, pp.28-38. <https://doi.org/10.56243/18294898-2024.2-28>
57. Stepanyan L., Israyelyan M., Hakobyan H., Khachaturyan N., Gevorgyan S., Hovhannisyan A., Zhamharyan S., Sargsyan T., Targeted synthesis of dipeptides containing derivatives of (S)-phenylalanine and study of their antifungal activity, "Pharmacia", v.71, 2024, pp.1-6. <https://doi.org/10.3897/pharmacia.71.e121336>
58. Tsaturyan A., Sahakyan L., Hayrapetyan L., Minasyan E., Chakhoyan A., Hayrapetyan S., Saghyan A., Ion-chromatographic determination of common anions in drinking water in some regions of the Republic of Armenia, "Pharmacia", v.71, 2024, pp.1-9. <https://doi.org/10.3897/pharmacia.71.e135658>
59. Tuchina E., Korchenova M., Zakoyan A., Tuchin V., Influence of strain differences on resistance of *Staphylococcus aureus* to photodynamic action using meso-substituted cationic porphyrins, "Izvestiya of Saratov University. Physic", v.24, N 3, 2024, pp.216-227. <https://doi.org/10.18500/1817-3020-2024-24-3-216-227>
60. Ulikhanyan G., Hovhannisyan V., Arshakyan N., Altunyan A., Ghukasyan N., Ghazaryan A., Dumanyan K., Poghosyan G., Hovhannisyan H., Danielyan L., Harutyunyan R., Feschyan S., Hovsepyan M., Mkrtchyan S., Kyslychenko V., Chichoyan N., Elemental analysis and ecological safety assessment of nutritive herb *Ziziphora clinopodioides* Lam. cultivated and wild growing in the South-Caucasian flora, "Functional Foods in Health and Disease", v. 14, N 11, 2024, pp. 841-855. <https://doi.org/10.31989/ffhd.v14i11.1489>
61. Vardanyan A., Zhang R., Khachatryan A., Melkonyan Z., Hovhannisyan A., Willscher S., Kamradt A., Jost M., Zhang Y., Wang C., Extraction of copper from copper concentrate by indigenous association of iron-oxidizing bacteria, *Separations*, v.11, 2024, p.124. <https://doi.org/10.3390/separations11040124>
62. Yesayan A., Chetta M., Babayan B., Yesayan T., Esoyan S., Sevoyan G., The epigenetic impact of daily diet food choices on human health and chronic diseases, "Functional Foods in Health and Disease", v. 14, N 10, 2024, pp.739-750. <https://doi.org/10.31989/ffhd.v14i10.1464>
63. Yesayan A., Yesayan T., Babayan B., Esoyan S., Hayrapetyan A., Sevoyan G., Chakhmakhchyan A., Nanagulyan S., Melkumyan M., Carnivorous fungi application for pesticide-free vegetable cultivation, "Functional Food Science", v. 4, N 9, 2024, pp. 325-336. <https://doi.org/10.31989/ffs.v4i9.1432>
Հոդվածները հրատարակվել են «Կենսատեխնոլոգիա և մետաղներ» 6-րդ միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, «Stará Lesná» հրատ., Սլովակիա, 2024, 276 էջ
64. Khachatryan A., Vardanyan N., Melkonyan Z., Zhang R., Vardanyan A., Development of copper recovery process from calcocite dominated flotation concentrate, pp. 144-149.
65. Khachatryan A., Vardanyan N., Melkonyan Z., Zhang R., Vardanyan A., Indigenous association perspective for copper bioleaching, pp. 150-154.
66. Vardanyan A., Vardanyan N., Khachatryan A., Abrahamyan N., Melkonyan Z., Two-stage eco-friendly approach for recovery of copper from printed circuit boards (PCBs), pp. 258-262.
Հոդվածները հրատարակվել են «Ֆունկցիոնալ սնունդ և կենսաակտիվ միացություններ. ժամանակակից և միջնադարյան մոտեցումներ» 31-րդ միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, «Food Science» հրատ., Դալաս (ԱՄՆ), 2024, 399 էջ
67. Melkonyan L., Karapetyan Zh., Toplaghalsyan A., Gouveia L., Avetisova G., Isolation and characterization of nitrogen-fixing bacteria to create a new multifunctional biotechnological mean for organic agriculture, pp. 230-232.

68. Melkonyan L., Ferreira A., Vela Bastos C., Figueiredo D., Avetisova G., Karapetyan Z., Toplaghalsyan A., Gouveia L., Creating a consortium of nitrogen-fixing bacterium and microalga for healthier organic food, pp. 233-236.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

Լ.Մելքոնյանը պարգևատրվել է «International Academic Conference on Science, Ecological Agriculture and Forestry» միջազգային գիտաժողովի (Դուբայ ԱՄԷ) գերազանցության վկայականով:

Գ.ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎ. ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Կ.գ.թ. Խ.Մայրապետյան
Փոխտնօրեն՝ Կ.գ.թ. Ա.Թադևոսյան
Գիտքարտուղար՝ Կ.գ.թ. Ա.Կարապետյան
Էլեկտրոնային փոստ՝ hydropinstitute@gmail.com
Կայքէջ՝ www.sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Արարատյան դաշտի բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում «Էկոբիոֆիդ+» կենսապարարտանյութի ու Դավթյանի սննդալուծույթի (0.25N) համակցված, ինչպես նաև միայն Դավթյանի սննդալուծույթի կիրառման պարագայում հնարավոր է ապահովել բուրավետ կալիգիայի (*Callisia fragrans* (Lindl.) Woodson) 4.4-6.0 անգամ ավելի վերգետնյա թարմ զանգված՝ միայն կենսապարարտանյութով սնուցված բույսերի համեմատ: Միաժամանակ կենսապարարտանյութի տերևային ու արմատային եղանակով բույսերին համատեղ մատակարարումը, ինչպես նաև դրա արմատային եղանակով համակցումը Դավթյանի սննդալուծույթի հետ նպաստել է կողային ընձյուղներում գումարային ֆլավոնոիդների կենսասինթեզի 2.1-3.0 անգամ ուժգնացմանը մյուս տարբերակների համեմատ:

Ծիթրոնի (*Satureja hortensis* L.) ու ռեհանի (*Ocimum basilicum* L.) 1000 մկգ/լ Se պարունակող սննդալուծույթով արմատային և 0.005% Se պարունակող սննդալուծույթով տերևային սնուցման դեպքում ստուգիչի համեմատ (առանց սելենի) դիտվել է չոր բուսահումքի ավելացում 51 և 76%-ով ու եթերայուղի պարունակության բարձրացում 1.3 և 1.4 անգամ:

Սև խարամ լցանյութում ելունդավոր կեչու (*Betula pendula* Roth) բուսակների աճի համար տնկարկի օպտիմալ խտություն է համարվել 8 բույս/մ², որտեղ բուսակների բարձրությունն ու բնի տրամագիծը 1.9 և 1.9 անգամ գերազացել են 10 բույս/մ², 1.7 և 1.3 անգամ՝ 12 բույս/մ², 1.5 և 1.1 անգամ՝ 14 բույս/մ² տարբերակներին:

Բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում սրատերև թխկու (*Acer platanoides* L.) երկամյա տնկիների աճի ու զարգացման համար լավագույն լցանյութ է համարվել սև խարամը, որտեղ տնկիների բարձրությունն ու բնի տրամագիծը 1.9 և 2.1 անգամ գերազանցել են գլաքարին, 2.7 և 2.8 անգամ՝ կարմիր խարամին:

Դեղատու եղեսպակի (*Salvia officinalis* L.) երկու տարեկան բույսերի արմատամերձ միջավայրում Ղրիմի գյուղատնտեսության գիտահետազոտական ինստիտուտի ու «Aegis» միկրոհատիկավորված միկրոբիզային պատրաստուկների կիրառումը սննդալուծույթում

ֆոսֆորի պարունակության 88%-ով և 92%-ով նվազեցման դեպքում, ստուգիչի համեմատ, նպաստել է բույսերի տերևների չոր քաշի 1.8, տերևներում դաբաղանյութերի պարունակության 1.2, ֆենոլների 1.4 և ֆլավոնոիդների ընդհանուր պարունակության 1.4-1.5 անգամ ավելացմանը:

Սննդալուծույթի ամենանոսր խտության (0.5N) դեպքում դիտվել է նրբաձաղիկ ռեհանի (*Ocimum tenuiflorum* L.) չոր բուսահումքի 1.2-2.0 անգամ բարձր բերք, ինչպես նաև գումարային ֆլավոնոիդների (շուրջ 10%-ով) ու էքստրակտիվ նյութերի (շուրջ 10-30%-ով) համեմատաբար բարձր պարունակություն: Սննդալուծույթի խտության բարձրացմանը զուգընթաց դիտվել է բերքատվության անկում: Սննդալուծույթի բարձր խտությունը (1.25N) նպաստել է վիտամին C-ի (1.3-1.4 անգամ), β-կարոտինի (1.2-1.3 անգամ) ու դաբաղանյութերի (շուրջ 1.2 անգամ) պարունակության նվազմանը:

Ակվապոնիկայի պայմաններում աճեցված եգիպտացորենի (*Zea mays* L.) մեկ բույսից ստացված թարմ կողրերի զանգվածն էականորեն չի տարբերվել դասական հիդրոպոնիկական պայմաններում աճեցված բույսերից, սակայն գերազանցել է հողային բույսերին 1.4 անգամ: Դասական հիդրոպոնիկայի, ակվապոնիկայի ու հողային բույսերի հատիկներում պրոտեինի պարունակությունն էականորեն չի տարբերվել:

Դեղատու հազրեվարդի (*Rosmarinus officinalis* L.) հիդրոպոնիկ բույսերի թարմ տերևներում եթերայուղի պարունակությունը 2.1 անգամ գերազանցել է հողային բույսերին: Եթերայուղում հայտնաբերվել է մոտ 28 բաղադրիչ: Եվ՝ հիդրոպոնիկ, և՛ հողային տարբերակներում գերակշռել են լինալոլը 8.78 և 20.11%, էվկալիպտոլը 10.0 և 9.55%, իզոբորնեոլը 9.64 և 7.07%: Հիդրոպոնիկ եթերայուղը β-օցիմենի, իզոբորնեոլի ու կարիոֆիլենի պարունակությամբ 1.3, 1.4 և 1.6 անգամ գերազանցել, իսկ լինալոլի պարունակությամբ 2.3 անգամ զիջել է հողի տարբերակին:

Ըստ գումարային β-ռադիոակտիվության՝ հիդրոպոնիկայում դեղաբույսերը կազմել են հետևյալ նվազող շարքը՝ եղերդակ սովորական (*Cichorium intybus* L.) > մորինգա յուղատու > էխինացեա բոսորագույն (*Echinacea purpurea* (L.) Moench) = սուտերլանդիա թփային (*Sutherlandia frutescens*) > նարդոս հիբրիդային՝ (*Lavandin*) = նարդոս նեղատերև (*Lavandula angustifolia*), իսկ բանջարաբույսերը՝ ալիքաձև խավրժիլ (*Rheum rhabarbarum* L.) > պրասասոխ (*Allium porrum* L.) > հազար (*Lactuca sativa* L.) > ծիթրոն > ռեհան > սիսեռ (*Cicer arietinum* L.) > ոսպ (*Vicia lens* Coss & Germ.) > եգիպտացորեն (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ներկայացվել է, որ թույլի աճեցման լավագույն պայմաններն են Արարատյան դաշտը, հիդրոպոնիկ կարմիր խարամ լցանյութը, Դավթյանի 1N լուծույթը՝ 32:32:36 ատոմ% NPK-ի հարաբերությամբ, 10-14 բույս/մ² տնկարկի խտությունը (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ա.Հակոբջանյան):

Պարզվել է, որ հիդրոպոնիկական պայմաններում արդյունավետ է *Rhizobium* ՊԲ-ի ու ԱՄՍ-ի համատեղ կիրառումը, որի դեպքում սննդալուծույթում 80%-ով ազոտի ու 88%-ով ֆոսֆորի քանակների կրճատման դեպքում յուրաքանչյուր մետրից ապահովվում է մոտ 1 կգ սոյայի բերք, 382 գ սպիտակուց ու 218 գ ճարպ: Կատարվել է հիդրոպոնիկ պայմաններում սոյայի աճեցման տնտեսական արդյունավետության գնահատում և ներկայացվել ներդրման առաջարկ (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ա.Թադևոսյան):

Առաջին անգամ մշակվել են փշոտ էլեութերոկոկոս (*Eleutherococcus senticosus* (Rupr. & Maxim.)) կլոնալ միկրոբազմացման ու հիդրոպոնիկ աճեցման, բազմացման կենսատեխնոլոգիական մեթոդներ: Բուսահումքի կենսաակտիվ միացությունների

(վիտամին C, β-կարոտին, կարոտինոիդներ, քլորոֆիլ (a+b), գումարային ֆլավոնոիդներ, կվերցետին, ռուտին, էլեուտերոզիդներ, քլորոգենաթթու, ռոզմարինաթթու, գալաթթու, սրճաթթու, ֆերուլաթթու, էքստրաակտիվ նյութեր) պարունակության լավագույն ցուցանիշներով առանձնացել են տերևները: Տերևներում ամենաբարձր պարունակություն կազմել են քլորոգենաթթուն ու ռուտինը, ընդ որում՝ Արարատյան դաշտում (հիդրոպոնիկա, հող) աճեցված բույսերը դրանց պարունակությամբ 1.8 և 2.7 անգամ գերազանցել, իսկ ֆերուլաթթվի պարունակությամբ 1.1 և 1.3 անգամ զիջել են Դիլիջանի անտառային փորձակայանի (ԴԱՓԿ) բույսերին: Փշոտ էլեուտերոկոկի բուսահումքը (տերև, արմատ, ցողուն, պտուղ), անկախ մշակման մեթոդից (հիդրոպոնիկա, հող) ու գոտուց (Արարատյան դաշտ, ԴԱՓԿ), ըստ թունահարույց հատկություններով օժտված ծանր մետաղների (As, Cd, Pb) պարունակության ու գումարային β-ռադիոակտիվության մակարդակի՝ էկոլոգիապես անվտանգ է (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Դարյադար):

Ուսումնասիրվել է սննդալուծույթի խտության ազդեցությունը ոչ ավանդական սննդաբույս ալիքածն խավրծիլի բերքատվության ու բուսահումքի կենսաքիմիական ցուցանիշների վրա: Պարզվել է, որ Արարատյան դաշտի պայմաններում բարձր արդյունավետություն է ապահովել Դավթյանի նորմալ սննդալուծույթը, որի դեպքում սննդի մեջ կիրառվող տերևակոթոնների թարմ բերքը գերազանցել է մյուս տարբերակներին (0.75N և 1.25N) 1.9-2.0 անգամ: Խավրծիլի տերևակոթոնների կենսաքիմիական վերլուծությունը ցույց է տվել, որ սննդալուծույթի խտությունն էականորեն ազդել է էքստրաակտիվ նյութերի, ֆլավոնոիդների, ֆենոլային թթուների ու դաբաղանյութերի պարունակության վրա. ամենանոսր խտության տարբերակում դիտվել է դրանց նվազագույն, իսկ ամենախիտ սննդալուծույթի դեպքում՝ առավելագույն պարունակություն:

Հիդրոպոնիկ ու հողային մշակույթ է ներմուծվել սիբեխ սովորականը (*Falcaria vulgaris* L.): Տերևների կենսաքիմիական վերլուծությունից պարզվել է, որ 1 տարեկան հիդրոպոնիկ ու հողային բույսերն իրարից չեն տարբերվել դաբաղանյութերի ու ֆլավոնոիդների պարունակությամբ, սակայն հիդրոպոնիկ բույսերն աչքի են ընկել էքստրաակտիվ նյութերի (1.2 անգամ), ֆենոլային թթուների (1.2 անգամ) ու սպիտակուցի (1.3 անգամ) բարձր պարունակությամբ (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Դարյադար):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Babakhanyan M., Ghalachyan L., Chavushyan V., Simonyan K., Darbinyan L., Gulnazaryan Sh., Hovhannisyan L., Efficacy and selenium enrichment of *Lycium barbarum* in hydroponic and soil conditions in the Ararat valley, "Functional Foods in Health and Disease", 14(7), 2024, pp.517-527.
2. Babakhanyan M., Simonyan K., Darbinyan L., Ghalachyan L., Zaqaryan S., Gulnazaryan S., Hovhannisyan L., Agricultural and health-related perspectives of *Lycium barbarum* L. Biotechnologies, "Electronic Journal of Natural Sciences", v.42, N 1, 2024, pp.4-8.
3. Darbinyan L., Danielyan M., Chavushyan V., Simonyan K., Babakhanyan M., Hambardzumyan L., Manukyan L., Karapetyan K., Hovhannisyan L., The protective effects of selenium-enriched hydroponic radish on paracetamol-induced liver damage in rats, "Georgian Medical News", N 7-8 (352-353), 2024, pp.168-172.
4. Daryadar M., Matevosyan A., Roosta, H.R., Ghorbanpour M., Stepanyan A., Ghahramanyan A., Tadevosyan A., Some parameters of hydroponic and soil Rhubarb cultivated in the Ararat Valley of Armenia, "Functional Foods in Health and Disease", N 14(8), 2024, pp.564-573.
5. Ghalachyan L., Mayrapetyan Kh., Tadevosyan A., Ghahramanyan A., Eloyan S., Yeghiazaryan A., Hakobjanyan A., Gross beta-radioactivity of leaves of *Thuja pyramidalis* in conditions of hydroponics and

- soil in Ararat Valley and Dilijan forest experimental station, "RAD Conference Proceedings", v. 8, 2024, pp. 7-11.
6. Ghalachyan L., Mairapetyan S., Tadevosyan A., Hovhannisyan L., Vardanyan A., Mairapetyan Kh., Daryadar M., Siseryan R., Tovmasyan A., Stepanyan A., Asatryan A., Hakobjanyan A., The study of biologically active compounds and gross β -radioactivity of some vegetables and medicinal plants in conditions of outdoor hydroponic systems and soil culture in Ararat Valley, "Functional Foods in Health and Disease", N 14(8), 2024, pp. 589-599.
 7. Hakobjanyan A., Karapetyan A., Ghahramanyan A., Yeghiazaryan A., Gasparyan A., Mayrapetyan K., Photosynthetic abilities and essential oil content of hydroponic and soil *Thuja occidentalis*, "Bioactive Compounds in Health and Disease", N 7(10), 2024, pp.550-557.
 8. Karapetyan A., Application of biofertilizers in hydroponics: a review, "Journal of Plant Nutrition", 2024, N 47(5), pp.822-836.
 9. Karapetyan A., The role of biofertilizer on the growing efficiency of *Callisia fragrans* cultivated under open-air hydroponic conditions of the Ararat Valley, "Bioactive Compounds in Health and Disease", N 7(4), 2024, pp. 211-220.
 10. Mairapetyan S., Tadevosyan A., Tovmasyan A., Asatryan A., Efimenko S., Efimenko S., Matevosyan A., The influence of planting density on the oil and fatty acids content of soybean in hydroponic and soil conditions of the Ararat Valley, "Bioactive Compounds in Health and Disease", N 7(9), 2024, pp. 418-429.
 11. Shaboyan G., Matevosyan L., Sarikyan K., Martirosyan G., Biochemical analyses in the ICARDA collection of unique dried materials of lentils, "Bioactive Compounds in Health and Disease", N 7(2), 2024, pp. 131-140.
 12. Tadevosyan A., Daryadar M., Tovmasyan A., Asatryan A., Hakobjanyan A., Silver nanoparticles prepared by colloid assisted biofabrication methodology using soilless-grown *Moringa oleifera* in Armenia. "Colloid & Nanoscience Journal", N 2(2), 2024, pp.270-276.
 13. Tadevosyan A., Daryadar M., Tovmasyan A., Asatryan A., Roosta H.R., Hakobjanyan A., Comparison of growth, antioxidant, and antibacterial activities in hydroponic and soil-grown *Moringa oleifera* in Armenia, "International Journal of Horticultural Science and Technology", N 11(2), 2024, pp.217-228.
 14. Tadevosyan A., Hakobjanyan A., Tovmasyan A., Asatryan A., Roosta H., Daryadar M., New crop in Armenia – *Moringa oleifera*: optimization of mineral nutrition in outdoor hydroponics, "Acta Horticulturae" 1394, 2024, pp.67-76.
 15. Vardanyan A., Ghalachyan L., Tadevosyan A., Gasparyan T., Sardaryan A., Daryadar M., Antiradical activity and bioactive substances of *Eleutherococcus senticosus* (Rupr. and Maxim) grown under hydroponic and soil conditions in Ararat Valley and Dilijan Forest zone, "Bioactive Compounds in Health and Disease", N 7(9), 2024, pp. 467-475.

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Կ.գ.դ. Ա.Առաքելյան
Գիտքարտուղար՝ Կ.գ.թ. Զ.Խաչատրյան
Էլեկտրոնային փոստ՝ imb@sci.am
Կայքէջ՝ www.molbiol.sci.am

Մասնագիտական խորհուրդ 042՝ «Կենսաքիմիա» (Գ.00.03)

Նախագահ՝ Կ.գ.դ. Ա.Առաքելյան, գիտքարտուղար՝ Կ.գ.թ. Ռ.Զախարյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Երկարատև հիպերգլիկեմիան խախտում է M1 և M2 մակրոֆագերին բնորոշ ֆունկցիոնալ դիֆուզիան, ինչը կարող է բացատրել հյուսվածքային մակրոֆագերի խառը բնույթով քրոնիկ հիպերգլիկեմիայի հետ կապված մետաբոլիկ համախտանիշի ժամանակ: Օստեոարթրիտով հիվանդների մոտ առաջին անգամ բնութագրվել է սինովիալ

հեղուկի բջջային կազմը՝ բացահայտելով միելոիդ դենդրիտային բջիջների գերակշռությունը: Զանգվածային միելոիդ դենդրիտային բջիջների առկայությունը սերտորեն ասոցացվում է հոդերի ավելի մեղմ վնասման ու հիվանդության վաղ փուլի հետ (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Մանուկյան):

2023 և 2024թթ. անջատված *Klebsiella pneumoniae* կլինիկական իզոլյատներում հայտնաբերվել են բազմադեղակայուն (ԲԴԿ) շտամներ, որոնք բնութագրվել են ամբողջական գենոմի վերլուծության հիման վրա: Առաջին անգամ Հայաստանում հայտնաբերվել են նոր բարձր ռիսկային ԲԴԿ *K. pneumoniae* ST39 կլոնին պատկանող շտամներ, որոնք գենետիկորեն մոտ են (99.98%) Եթովպիայում 2020թ. անջատված շտամներին: Բացահայտվել է, որ Հայաստանում շրջանառվող բարձր ռիսկային ԲԴԿ ST395 կլինիկական շտամներն առավելագույն նմանություն են ցուցաբերում Ռուսաստանում ու Գերմանիայում անջատված շտամներին (99.96-99.98%), իսկ ST307-ին պատկանող կլինիկական շտամները՝ ԱՄՆ-ում շրջանառվող շտամներին (99.97-99.98%): Այս շտամները համալրել են ինստիտուտում պահպանվող առավել տարածված բակտերիալ վարակների հարուցիչների կլինիկական իզոլյատների հավաքածուն (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Սեդրակյան):

Ֆարմակոֆոր մոդելների կառուցման, վիրտուալ սքրինինգի ու արհեստական բանականության մեթոդների օգտագործմամբ հայտնաբերվել են քիմիական նոր կառուցվածքներ, որոնք ճնշում են SARS-CoV-2-ի Mpro ֆերմենտի ակտիվությունը: Հայտնաբերվել է բջջային միրիստոիլացիայի արգելակիչ IMP1088-ի հակավիրուսային ազդեցությունը խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի ու 1-ին տիպի հասարակ հերպես վիրուսի վրա (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Զաքարյան):

Նիպահ վիրուսի W ու մարդու 14-3-3 սպիտակուցային համալիրի համար մոդելավորվել են 1000 կառուցվածքներ և ընտրվել են 9 լավագույնները հետագա աշխատանքի համար: ZINC, Chem Space, ChEMBL, iPPI-DB, Enamin, PubChem քիմիական միացությունների շտեմարաններից ստեղծվել է 500000 միացությունից բաղկացած գրադարան՝ որպես սպիտակուց-սպիտակուցային փոխազդեցության հնարավոր մոդուլատորներ, որոնք համապատասխանում են դեղաբանորեն ակտիվ միացությունների չափանիշներին (ղեկ.՝ կ.գ.դ. Կ.Նազարյան):

Եղեգիս քարանձավում (Վայոց Ձորի մարզ) պեղումների ժամանակ հայտնաբերվել է 8490 ոսկրային մնացորդ, որոնցից 604-ը ենթարկվել է մոլեկուլային նույնականացման ZooMS մեթոդով: Հայտնաբերվել է 13 կենդանատեսակ: Բրածո ոսկրերի ձևաբանական ու մոլեկուլային նույնականացման արդյունքները ցույց են տվել, որ Եղեգիս-1 քարայրի բոլոր շերտերում կենսաբազմազանության կառուցվածքը պահպանվում է, ինչը հաստատում է, որ էնեոլիթյան համայնքների ապրելակերպում նկատելի փոփոխություններ տեղի չեն ունեցել (ղեկ.՝ կ.գ.դ. Լ.Եպիսկոպոսյան):

Ցույց է տրվել, որ արյան քաղցկեղային բջիջներում սուբլետալ (50% կենսունակություն) ԴՆԹ-ի վնասվածքների ինդուկցումը խթանում է *Ref-1* գենով կոդավորվող APEX1 սպիտակուցի էքսպրեսիան: Այս գենի լոեցումը RNAi տեխնոլոգիայով զգալիորեն վերականգնում է քաղցկեղային բջիջների զգայունությունը՝ հանգեցնելով 80%-ի մահվան (64%-ն՝ ապոպտոտիկ մեխանիզմով)՝ միաժամանակ թույլ ազդեցություն ունենալով առողջ բջիջների վրա (49% կենսունակություն): Այսպիսով, *Ref-1* գենը խոստումնալից թիրախ է սինթետիկ լետալության համար (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Բաբայան):

Մշակվել են կրծքագեղձի քաղցկեղի ու գլխուղեղի գլիոբլաստոմայի եռաչափ բջջային մոդելներ, բնութագրվել է մոդելների աճման դինամիկան երկարաժամկետ կուլտիվացիայի (մինչև 30 օր) պայմաններում: Հետազոտվել է 5-ֆտորուրացիլի ածանցյալների (տրամադրել է Օրգանական և դեղագործական քիմիայի գիտա-տեխնոլոգիական կենտրոնը) հակաքաղցկեղային ակտիվությունը՝ կիրառելով մարդու թոքերի քաղցկեղային ու նորմալ

բջիջներ: Դրանցից երկուսը (C1 և C4) ցուցաբերել են հակաքաղցկեղային ակտիվության ավելի բարձր մակարդակ՝ համեմատած 5-FU-ի հետ, իսկ C6 և C7 ածանցյալները ցուցաբերել են ազատ ռադիկալների առաջացման բարձր ակտիվություն՝ հանդիսանալով պոտենցիալ ռադիոսենսիբիլիզատորներ (ղեկ.՝ Կ.գ.թ. Ն.Բաբայան):

Օգտագործելով KCNQ1/KCNE3 կրիոէլեկտրոնային կառուցվածքը՝ մոլեկուլային դինամիկայի (ՄԴ) սիմուլյացիաների կիրառմամբ բացահայտվել է, որ կալիումի իոնների ներթափանցումը հնարավոր է դառնում դրանց մասնակի ջրազրկման պայմաններում: ՄԴ սիմուլյացիաների, մուտացիոն սքրինինգի ու մեկ ալիքի գրանցման միջոցով բացահայտվել է, որ խոռոչի նեղ հատվածի G345 մուտացիաները կարող են խափանել իոնների հոսքը (ղեկ.՝ Կ.գ.թ. Վ.Վարդանյան):

Նկարագրվել է խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի (ԽԱԺՎ) նոր տարբերակով (Dilijan2011MB, Կովսական շտամ) պայմանավորված հիվանդության ընթացքը, որն ունի քրոնիկ, իսկ որոշ դեպքերում անախտանիշ բնույթ: Բնութագրվել են հիվանդության նոր՝ քրոնիկացված ձևերի զարգացման կլինիկական, պաթոլոգիական, իմունաբանական, վիրուսաբանական ու գենետիկական պարամետրերի առանձնահատկությունները, ըստ որոնց ԽԱԺՎ-ի քրոնիկացումը կարող է պայմանավորված լինել ավելի թույլ արտահայտված իմունային պատասխանով, ինչպես նաև վարակված խոզերի արյան ու հյուսվածքների վիրուսի տիտրերի նվազմամբ: Իմունային պատասխանի շրջանցման համար պատասխանատու վիրուսի բազմազեն ընտանիքի որոշ գենների (multigen family genes) մասնակի սեքվենավորումը բացահայտել է մուտացիաների առկայություն, ինչը կարող է պայմանավորել հիվանդության նոր դրսևորումը (ղեկ.՝ Կ.գ.դ. Զ.Կարալյան):

Իրականացվել է Տավուշի մարզի հին ու լքված խաղողի այգիների գույքագրում, հավաքագրվել են շուրջ 170 տարբեր գենոտիպեր, որոնց համար ստեղծվել են առաջնային անձնագրային տվյալներ, ապա սորոտերը ենթարկվել են ֆրագմենտային սեքվենավորման նույնականացման նպատակով: Ստացված գենետիկական տվյալներն այժմ վերլուծության փուլում են՝ ճշգրտելու սորոտերի, կլոնների կամ մուտանտ ձևերի քանակը, որից հետո նոր սորոտերը կհամալրեն ինչպես ՀՀ, այնպես էլ միջազգային տվյալների բազան (ղեկ.՝ Կ.գ.թ. Բ.Մարգարյան):

«AMADEE-24» Մարսի անալոգային հետազոտության շրջանակում ցույց է տրվել, որ մեկուսացման առաջին օրերին տեղի է ունենում արյան լեյկոցիտների քրոմոսոմների թելոմերների երկարության կտրուկ նվազում, որը սակայն վերականգնվում է ժամանակի ընթացքում: Այսպիսով, մեկուսացումը կարող է հանգեցնել իմունային համակարգի ակտիվության ժամանակավոր նվազման, իսկ իմունային համակարգի մոդուլացնող միջամտությունները վաղ փուլերում կարող են նվազեցնել հնարավոր առողջական ռիսկերը (ղեկ.՝ Կ.գ.դ. Ա.Առաքելյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հակաֆոսֆոլիպիդային համախտանիշով (<ՖՀ) մկների մոդելի կիրառմամբ ստացված տվյալները ցույց են տվել, որ հակաֆոսֆոլիպիդային հակամարմինները նշանակալի դեր են խաղում ընկերքի մի շարք ախտաբանական փոփոխությունում: Ընկերքի մորֆոլոգիայի ու տրանսկրիպտոմային պրոֆիլի դիտարկված փոփոխությունները ենթադրում են կապ <ՖՀ-ի ժամանակ հղիության խաթարումների ու պրեէկլամպսիայի զարգացման հիմքում ընկած մեխանիզմների միջև: Ընկերքի ախտաբանական փոփոխությունները հավանաբար առաջանում են իմունային տոլերանտության խախտման ու անոթագոյացման խանգարումների հետևանքով (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Մանուկյան):

Իրականացվել են 2, 3, 4 մկրվրկ մոլեկուլային դինամիկայի սիմուլյացիաներ 14-3-3/ պիրին, 14-3-3/N ու 14-3-3/p53 համալիրների համար: Ստացված հետազոտվել են կապման կայքերի միջև հեռավորությունը որոշելու, RMSD արժեքների վերլուծության, ազատ կապման էներգիայի (MM-(PB/GB)-SA) հաշվարկի, X-ray կառուցվածքների հետ (14-3-3 ու թիրախային սպիտակուցի պեպտիդ) հետազոտվել համեմատման համար: Հետազոտվել է 14-3-3 սպիտակուցի դերը չկարգավորված կառուցվածք ունեցող սպիտակուցների հավաքման գործընթացում (ղեկ.՝ Կ.գ.դ. Կ.Նազարյան):

Նանոպորային սեքվենավորման ու մեքենայական ուսուցման հիման վրա մշակվել է քրոնիկ լիմֆոցիտար լեյկեմիայի տրանսկրիպտոմային ենթատիպերի բացահայտման ու հիվանդության ընթացքի կանխագուշակման մեթոդ (ղեկ.՝ Կ.գ.դ. Ա.Առաքելյան):

Առնետների գլխուղեղի պարաֆինացված նմուշների տարբեր օրերի սինքրոտրոնային ռենտգենյան ճառագայթահարման ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գերկարճ իմպուլսներով էլեկտրոնային փնջերով ճառագայթումը կենդանիների մոտ հրահրում է գլխուղեղում նյարդային կառույցների ու ուղեղանոթային համակարգի խաթարումներ (ղեկ.՝ Կ.գ.թ. Է.Առաքելովա):

Ցրված սկլերոզի փորձնական մոդելի վրա ցույց է տրվել հարբորբոքային ցիտոկինների կարևոր դերն ալերգիկ աուտոիմունային էնցեֆալոմիելիտի պաթոգենեզում, որը դրսևորվել է սֆինգոմիելինային ցիկլի խթանմամբ ու նյարդային բջիջներում ապոպտոտիկ գործընթացների ակտիվացմամբ: Գանգլիոզիդներ պարունակող դեղամիջոցի ընդունումը հանգեցրել է ուսումնասիրված պարամետրերի մակարդակների նորմալացման, ինչը ցույց է տալիս վերջինիս պոտենցիալ նեյրոպաշտպանիչ ազդեցությունը (ղեկ.՝ Կ.գ.թ. Գ.Նազարյան):

ՀՀ խաղողի ազգային կոլեկցիոն այգում ավարտվել է խաղողի տնտեսական կարևորություն ունեցող վիրուսների մոլեկուլային նույնականացումն ու բնութագրումը: Քարտեզագրվել են ՀՀ խաղողի կոլեկցիոն այգու ու խաղողագործական տարբեր շրջանների այգիները, որտեղ դիտարկվել են GLRaV-1, GLRaV-3, GFLV, GVA, GVB, GFkV վիրուսները (ղեկ.՝ Կ.գ.թ. Ք.Մարգարյան):

Ամփոփվել են տարբեր ուռուցքներով հիվանդ մարդկանց արյան շիճուկի նմուշներում գալարմինի քանակական որոշման տվյալները: «Հայկենսատեխնոլոգիա» կենտրոնի հետ համատեղ, ԻՖԱ մեթոդի կիրառմամբ, իրականացվել են որոշ կաթնաթթվային բակտերիաների իմունախթանիչ հատկությունների *in vitro* ուսումնասիրություններ ինտերլեյկինների հայտնաբերմամբ: Կատարվել են աղմուկի ազդեցության պայմաններում առնետների ուղեղի ու մակերիկամների բջիջների կառուցվածքային փոփոխությունների ուսումնասիրման վերաբերյալ հիստոլոգիական ու իմունահիստոքիմիական հետազոտություններ (ղեկ.՝ Կ.գ.թ. Ի.Սահակյան):

Որոշվել են ԱԴԱ-ֆերմենտի ու դրա իզոմների (ԱԴԱ1 ու ԱԴԱ2) ակտիվության միջին արժեքները ոչ հղիների (ստուգիչ) ու հղիների մոտ ըստ եռամսյակների: Դիտվել է միայն ԱԴԱ2-ի ակտիվության նվազման միտում: Հորմոնալ շեղումներով հղիության երրորդ եռամսյակում ֆիբրինոգենի նորմայից բարձր արժեքների դեպքում դիտվել է ԱԴԱ2 իզոֆերմենտի ակտիվության զգալի նվազում: Նորմալ հղիության ժամանակ դիտվել է բացասական կորելյացիոն կապ ԱԴԱ2 իզոֆերմենտի ակտիվության ու ֆիբրինոգենի միջև, իսկ շեղումներով ընթացող հղիության ժամանակ՝ դրական կորելյացիոն կապ: Որոշվել են ԱԴԱ-ֆերմենտի ու իզոմների ակտիվության միջին արժեքները վուլվովագինալ կանդիդոզով հղիների մոտ: Որպես ՎՎԿ-ի հիմնական հարուցիչ նույնականացվել է *Candida albicans* տեսակը (ղեկ.՝ Կ.գ.թ. Ե. Սարգիսովա):

Տիպ 1 շաքարային դիաբետով դեռահասների ու երիտասարդների պերիֆերիկ արյան լեյկոցիտներում ու արյան պլազմայում ինսուլինային թերապիայի ֆոնի վրա առաջին անգամ հայ ազգաբնակչության մեջ ուսումնասիրվել են իմունային պատասխանում ներգրավված նյութափոխանակության ուղիները: Գնահատվել են արգինազի, ազոտի օքսիդի սինթազի, կրեատին կինազի, կատալազի ակտիվություններն ու դրանց մետաբոլիտների՝ միզանյութի, նիտրիտների, ցիտրուլինի, կրեատինի, կրեատինինի, ինչպես նաև կատեխոլամիններ դոֆամինի ու նորադրենալինի, մալոնային դիալդեհիդի ու ջրածնի պերօքսիդի մակարդակները (ղեկ.՝ Կ.գ.թ. Ն.Ալչուջյան):

ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հետ համատեղ շարունակվում են *Escherichia coli* բակտերիաների կենսագործունեության վրա հիմնված մոլեկուլային ջրածնով աշխատող վառելիքային մարտկոցի վոլտամպերմետրիկ համակարգի զարգացման հետազոտությունները (ղեկ.՝ Կ.գ.թ. Թ.Սեֆերյան):

Արդիականացվել է CCl_4 -ով մակաձած լյարդի ցիռոզի փորձարարական մոդելը, բարելավվել են մոդելի որոշ պարամետրերը՝ ներարկվող CCl_4 -ի չափաբաժնի օպտիմալացում ու մոդելի վերջնարդյունքի ձևավորման ժամկետներ: Սպիտակ առնետների լյարդի միտոքոնդրիումներում ուսումնասիրվել են Mg^{2+} -, Ca^{2+} -, HCO_3^- -կախյալ ԱԵՖազների ակտիվության ու արյան կենսաքիմիական որոշ ցուցանիշների փոփոխությունները CCl_4 -ով մակաձած լյարդի ցիռոզի ժամանակ: Առաջարկվել է լյարդի ցիռոզի փորձարարական աշխատանքներում կիրառել CCl_4 -ով մակաձված մոդելը CCl_4 -ի չափաբաժնի ու դրա ներարկումների ժամկետների համապատասխան ձևափոխություններով (ղեկ.՝ Կ.գ.թ. Ա.Մարգարյան):

LVV-հեմորֆին-3-ը դրսևորել է նեյրոկարգավորիչ ազդեցություն ռոտենոնով հարուցված փորձարարական Պարկինսոնի հիվանդության մոդելում՝ նվազեցնելով նեյրոբորբոքային ֆոնն ու կարգավորելով հակաօքսիդանտների ակտիվությունը ոչ միայն ԿՆՀ-ում, այլև իմունային համակարգի օրգաններում ու արյան մեջ: Զարգացվել է նաև ստերեոտաքսիկ եղանակով 6-OHDA-ով հարուցած Պարկինսոնի հիվանդության մոդելը:

Հետազոտվել է հեմորֆինի ազդեցությունը ստրեպտոկոկոցինով խթանված դիաբետիկ առնետների հակաօքսիդանտային կարգավիճակի վրա: Այն կալցինեյրինի ազդանշանային ուղու միջոցով վերականգնում է շաքարախտի պաթոֆիզիոլոգիայում խախտված հակաօքսիդանտային համակարգի ակտիվությունը՝ նվազեցնելով շաքարախտային բարդացումներին նպաստող օքսիդատիվ սթրեսը (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ֆ.Սարուխանյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Դոկինգ անալիզի կիրառմամբ համեմատվել է զանազան պոլիմերների մասնիկներ ձևավորելու ունակությունը նախապես ընտրված ալբումինի հետ: Ստացվել են տարբեր նանո - ու միկրո մասնիկներ՝ ալբումինային, տանին/ալբումինային, տանին/ալբումինային/դեղեր, ալբումինային/դեղեր, ալբումինային/պոլիէթիլենգլիկոլային, ալբումինային/պոլիէթիլենգլիկոլային/դեղեր, էրիթրոցիտային շողքեր: Հետազոտվել են վերոնշյալ մասնիկների ֆիզիկական ու քիմիական հատկությունները: Դինամիկ լույսի ցրման մեթոդով որոշվել են մասնիկների չափսերն ու զետա պոտենցիալը: Գրանցվել են այդ մասնիկների ֆարմակոկինետիկ հատկությունները: Փորձարկվել է մասնիկների ազդեցությունն ինսուլինի մոդելի վրա: Իրականացվել է բոլոր փոխազդող միացությունների դոկինգ անալիզ: Դիտարկվել է մասնիկների դեղեր արտազատելու ժամանակ-կախյալ ունակությունը *in vitro* պայմաններում: Ստացված ինսուլինի մոդելները դիտարկվել են էլեկտրոֆիզիոլոգիական փորձերի ընթացքում: Հայտնաբերվել է, որ ինչպես ալբումինային, այնպես էլ դեղեր պարունակող ալբումինային մասնիկները ցուցաբերում են պաշտպանիչ հատկություն (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ք.Դանիելյան):

Ուսումնասիրվել են իմունային պատասխանում ներգրավված նյութափոխանակության ուղիները տիպ 1 շաքարային դիաբետով (T1DM) դեռահասների ու երիտասարդների պերիֆերիկ արյան պլազմայում ինսուլինային թերապիայի ֆոնի վրա: Գնահատվել են արգինազի, ազոտի օքսիդի սինթազի, կրեատինինազի ակտիվություններն ու դրանց մետաբոլիտների մակարդակը՝ միզանյութ, նիտրիտներ, ցիտրուլին, կրեատին ու կրեատինին, Redox-կարգավիճակը՝ մալոնային դիալդեհիդի, ջրածնի պերօքսիդի մակարդակներն ու կատալազի ակտիվությունը, ինչպես նաև կատեխոլամիններ դոֆամինի ու նորադրենալինի մակարդակները: Ադենիլային միացությունների նյութափոխանակության լաբորատորիայի հետ համատեղ արյան պլազմայում ուսումնասիրվել են նաև գլյուտամինազ ու ադենոզինդեամինազ իզոֆերմենտներ ADA1-ի ու ADA2-ի ակտիվությունները: Գնահատվել է վերը նշված պարամետրերի, գլիկեմիկ կարգավիճակի ու ինսուլինի օրական չափաբաժնի միջև կապը: Սեռական դիմորֆիզմը բացահայտվել է առողջ մարդկանց ու T1DM-ով հիվանդների մոտ: Արգինազը, ազոտի օքսիդի սինթազը, ADA2-ն ու ADA1-ը կարող են դիտվել որպես պոտենցիալ կենսամարկերներ, որոնք կիրառելիս պետք է հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են տարիքը, սեռն ու էթնիկ պատկանելությունը: Աուտոիմուն շաքարախտի նյութափոխանակության այս ուղիների հարաբերական տեղաշարժերի ուսումնասիրությունը թույլ կտա գնահատել ինսուլինի ընդհանուր օրական չափաբաժինը և նախանշել թերապևտիկ թիրախավորման առաջնահերթությունները (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Մ.Հովհաննիսյան):

Հրապարակումներ

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

1. Հովհաննիսյան Մ.Ռ., «Կենսաքիմիա» լաբորատոր աշխատանքի ուսումնամեթոդ. ձեռնարկ, Ե., «Նահապետ» հրատ., 2024, 32 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Համբարձումյան Ա.Ձ., Մադոյան Ռ.Ա., Մարտիրոսյան Ն.Հ., «ՆԱՐԻՆ-Է»-ի տեղորոշումը «Բիոտիկ»-ների ընտանիքում, «Մեդիաբյանի անվ. բժշկական քոլեջի տեղեկագիր», N 16, 2024, էջ 131-138, DOI:10.53821/1829040X
3. Алчуджян Н.Х., Оганнисян М.Р., Мовсесян Н.О., Андреасян А.А., Айрапетян Р.Л., Мелконян А.М., Агаджанова Е.М., Влияние инсулинотерапии на взаимосвязь ферментов метаболизма L-аргинина в лейкоцитах и плазме крови при длительно текущем сахарном диабете 1 типа, Ер., “Мед. наука Армении”, 64 (4), 2024, с. 133-141. doi: 10.54503/0514-7484-2024-64.4-133.
4. Евлагина Е.Г., Евлагин Е.В., Лейнвебер Е.Ф., Юматов Е.Н., Аветисян С.В., Многолетние исследования японских ученых в области разработки искусственного рациона тутового шелкопряда (обзор), Ставрополь, «Труды Ставропольского отделения Русского энтомологического общества», 20, 2024, с. 154-169, ISSN 3034-2392, DOI: 10.48612/FARC/3034-2392/016.20.2024.
5. Паронян З.Х., Степанян А.А., Аракелян Л.Н., Григорян Л.С., Сеферян Т.Е., Действие нового антидиабетического аминокислотного комплекса на плазменный гемостаз, сб. мат. III межд. научно-практич. конф. “Актуальные проблемы медико-биологических наук, физкультуры и спорта”, Коломна, изд. ГСГУ, 2024, с.21-27.
6. Погосян М.В., Саргсян Р.Ш., Андриасян А.А., Хачатрян Л.М., Аветисян С.В., Минасян А.Л., Степанян Г.Ю., Саргсян В.Р., Манукян А.М., Саргсян Дж.С., Соотношение возбуждающих и тормозных синаптических процессов в кортико-игральных проекциях: модель болезни Паркинсона с меланиновой защитой, Челябинск, “Психология, Психофизиология”, 17(1), 2024, с. 103–118. <https://doi.org/10.14529/jpps240110> ISSN 2686-7281.
7. Симонян Р.М., Екмалян А.А., Бабаян М.А., Симонян Г.М., Бальян Г.А., Оксюзян Г.Р., Алексанян А.С., Алексанян С.С., Симонян М.А., Оптический спектральный метод определения стационарной концентрации монокомпонентных супероксидных радикалов, непрерывно продуцирующихся в жидкой и газ фазах новым ферментном-ассоциатом из мембран эритроцитов донорской крови, Гюмри, Ученые записки ШГУ, вып. А, N 2, 2024, с. 96-106.
8. Alchujyan N., Aghajanova E., Melkonyan A., Guevorkian A., Andreasyan A., Hovhannisyan M., Sex-specific alterations in creatine metabolism in cellular compartments of peripheral blood leukocytes in type 1 diabetes, “AIMS Bioengineering”, N 11(4), 2024, p.598-613, DOI:10.393434/bioeng2024027
9. Aghajanyan A., Hambardzumyan A., Minasyan E., Hovhannisyan G., Yeghiyan K., Sghomonyan T., Avetisyan S., Sakanyan V., Tsaturyan A., Efficient isolation and characterization of functional melanin from various plant sources, “International Journal of Food Science & Technology”, v. 59 (6), 2024, pp. 1-11, <https://doi.org/10.1111/ijfs.17016>.
10. Al-Mosuli A., Hakobyan G., Manukyan A., Danielyan K., Fungal infections due to ischemic stroke (Abstract), “BULLETIN» of the Medical College after Mehrabyan, Scientific & Methodical Journal”, N 16, 2024, pp .97–103. DOI: 10.53821/1829040X-2024.16-97.
11. Alzaki A., Danielyan K., Tannic acid as the component of albumin particles prolongs the circulation of the medicines in blood stream (Abstract), «BULLETIN» of the Medical College after Mehrabyan, Scientific & Methodical Journal, N 16, 2024, pp.86–88. DOI: 10.53821/1829040X-024.16-86.
12. Avetisyan S., Hovsepyan A., Saghatelyan L., Koloyan H., Chizhik O., Hovhannisyan S., Paronyan M. Obtaining melanin-synthesizing strains of *Bacillus thuringiensis* and their use for biological preparations, “Front. Biosci.”, (Elite Ed) 16(3), 2024, 27. <https://doi.org/10.31083/j.fbe1603027>.
13. Avetisyan S., Koloyan H., Paronyan M., Petrosyan T., Hovsepyan A., Hydrophilic melanin as a potential hair growth stimulant: A secondary observational study, “J CosmetDermatol”, 2024, pp.1–2, DOI: 10.1111/jocd.16504
14. Buniatian G., Schwinghammer U., ... Schwab M., Danielyan L., Consequences of amyloid-β deficiency for the liver, “Adv Sci” (Weinh), N 11 (18), 2024, 2307734, doi: 10.1002/adv.202307734. Epub ahead of print. PMID: 38430535.
15. Danielyan M., Karapetyan K., Avetisyan Z., Hovsepyan A., Karapetyan A., Dallakyan A., Nebogova K., Morphological and behavioral analysis of the protective effects of bacterial melanin in a rat model of

- Parkinson's disease, "Georgian Medical News", 349(4), 2024, pp. 6-11, <https://geomednews.com/currentissue.html>
16. Harutyunyan A., Israelyan S., Hakobyan M., Safaryan M., Madoyan R., Sukiasyan A., Gevorkyan K., Harutyunyan A., Sargsyan A., Hambardzumyan A., Karapetyan H., Mnatsakanyan A., Panosyan H., Danghyan M., Gasparyan S., Synthesis and biological properties of hybrid compounds based on nitrogen-containing heterocycles and 1,5-disubstituted 3,7-diazabicyclo[3.3.1]nonan-9-ones, "Russian Journal of General Chemistry", N 17.12, 2024, pp. 2809-2823, DOI: 10.1134/s107036322411001x, ISSN: 1070-3632
 17. Karapetyan A., Danielyan M., Badalyan B., Simonyan K., Grigoryan V., Simonyan M., Dallakyan A., Simonyan G., Simonyan R.. Protective effect of a new superoxide-producing enzyme complex from raspberry in rats with third-degree thermal burns. "Georgian medical news", N 6 (351), 2024, pp. 116-124, ISSN 1512-0112, nlm.nih.gov
 18. Knaryan V., Sarukhanyan F., The Ca^{2+} -regulated enzymes calpain and calcineurin in neurodegenerative processes and prospects for neuroprotective pharmacotherapy, "Neuroscience and Behavioral Physiology", 54 (1), 2024, pp. 27-34, <https://doi.org/10.1007/s11055-024-01564-3>.
 19. Khachatryan N., Balagyozyan R., Balagyozyan V., Hekimyan G., Grigoryan G., Mardanyan S., Antonyan A., Antidiabetic effect of a GABA-supporting mixture in a streptozotocin-induced diabetes model in rats, "Rom J Diabetes Nutr Metab Dis", N 31(4), 2024, pp.371-378, <https://doi.org/10.46389/rjd-2024-1776>
 20. Kukurtchyan N., Karapetyan G., Visualisation and evaluation study of some patients arteriosclerosis microvessel with coronary artery, disease at coronary artery bypass grafting, "European Society of Medicine. Medical Research Archives", v. 12 (Issue 3), 2024. <https://doi.org/10.18103/mra.v12i3.5095>.
 21. Mardanyan S.S., Sharoyan S.G., Antonyan A.A. Diversity of amyloid beta peptide actions, *Reviews in the Neurosciences*, 35(4), 2024, 387-398, <https://doi.org/10.1515/revneuro-2023-0100>.
 22. Mkrtchyan L.V., Seferyan T. E., Parkhats M., Lepeshkevich S., Dzhagarov B., Shmavonyan G., Tuchina E., Tuchin V., Gyulkhandanyan G. The role of singlet oxygen and hydroxyl radical in the photobleaching of meso-substituted cationic pyridyl porphyrins in the presence of folic acid, "Journal of Innovative Optical Health Sciences", v.17, N 3, 2024, pp. 2440002-1 – 2440002-14. DOI: 10.1142/S1793545824400029.
 23. Muradyan G., Dolukhanyan S., Ter-Galstyan O., Mnatsakanyan N., Khasanov S., Asatryan K., Mardanyan S., Hovhannisyan A., The role of hydrogen in the synthesis of High-entropy alloys and their hydrides, "Journal of Alloys and Compounds", 1010, 2024, p.177327, <https://doi.org/10.1016/j.jallcom.2024.177327>.
 24. Ohanyan N., Abelyan N., Manukyan A., Hayrapetyan V., Chailyan S., Tiratsuyan S., Danielyan K. Tannin-albumin particles as stable carriers of medicines, "Nanomedicine" (London), N 19(8), 2024, pp.689–708. <https://doi.org/10.2217/nnm-2023-0275>.
 25. Paronyan M., Koloyan H., Aganyants H., Hambardzumyan A., Soghomonyan T., Avetisyan S., Kocharov S., Panosyan H., Sakanyan V., Hovsepyan A., Structural analysis and substrate specificity of D-carbamoylase from pseudomonas, "BioTech", v.13, issue 4, 2024. <https://doi.org/10.3390/biotech13040040>.
 26. Seferyan T., Baghdasaryan L., Iskandaryan M, Trchounian K., Poladyan A., Development of an H2 fuel cell electrochemical system powered by Escherichia coli cells, "Electrochemistry Communications", v.165, 2024, 107746, (1-8). <https://doi.org/10.1016/j.elecom.2024.107746>. (print) ISSN: 13882481, (electronic) ISSN: 1873-1902.
 27. Simonyan R., Feschyan S., Madoyan R., Simonyan G., Sargsyan H., Babayan M., Yekmalyan H., Melkonyan M., Simonyan M., Manukyan A., Superoxide-producing associates from gastrointestinal bacteria: stimulation of its growth by exogenous superoxide-producing complex from raspberries, "Free Radical Research", N 1, 2024, pp.1-14, DOI: 10.1080/10715762.2024.2325940.
 28. Sukiasyan A., Stepanyan L., Sultan M., Hambardzumyan A., Khachatryan H., Barseghyan J., Chailyan S., Madoyan R., Identification of pathogen microorganisms via morphological, cultural and biochemical properties, "Biology and medicine", v.16, 2024, pp.1-4, DOI ISSN 0974-8369.
 29. Zeyer K., Bornert O., Nelea V., Bao X., Leytens A., Sharoyan S., Sengle G., Antonyan A., Bruckner-Tuderman L., Dengjel J., Reinhardt D. P., Nyström A., Dipeptidyl peptidase-4-mediated fibronectin processing evokes a pro-fibrotic extracellular matrix, "Journal of Investigative Dermatology", 144, 2024, pp. 2477-2487, doi:10.1016/j.jid.2024.03.020.

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Լ.Թավադյան
Գիտքարտուղար՝ տեխ.գ.թ. Լ.Գասպարյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի, Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի, Երկրաբանական գիտությունների, Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտները, Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 5 ակադեմիկոս, 5 թղթակից և 16 արտասահմանյան անդամներ:

Հաշվետու տարում բաժանմունքն անցկացրել է 4 ընդհանուր ժողով, հանձնաժողովի 1 ու բյուրոյի 14 նիստեր, 5 խորհրդակցություն, ԳԱԱ սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության, բնական ու տեխնածին աղետների հիմնախնդիրների պրոբլեմային խորհրդի ենթահանձնաժողովի 2 նիստ:

Բաժանմունքի ապրիլի 22-ի տարեկան ընդհանուր ժողովում լսվել են 2023թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության վերաբերյալ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի ու ինստիտուտների տնօրենների տարեկան հաշվետվությունները, բաժանմունքի առաջատար գիտնականների զեկուցումները գիտական գործունեության ոլորտի, գիտական նվաճումների վերաբերյալ:

Բաժանմունքի ընդհանուր ժողովներում լսվել և քննարկվել է Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի համար առաջադրված ե.գ.թ. Զ.Կարապետյանի թեկնածության հարցը: Քննարկվել և հաստատվել են «Հայաստանի քիմիական հանդես»-ի և «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Գիտություններ Երկրի մասին» պարբերականի խմբագրական կոլեգիաների տարեկան հաշվետվությունները:

Բաժանմունքի հանձնաժողովի նիստում լսվել և քննարկվել է «Գիտական և փորձարարական լաբորատորիաների կենտրոնի» ստեղծման հարցը:

Խորհրդակցություններում լսվել և քննարկվել է «Նաիրիտ գործարան» ՓԲԸ «Լաք էթինոլ» վտանգավոր քիմիական թափոնի վտանգի գնահատման ու դրա անվտանգ վերացման հարցը:

Պրոբլեմային խորհրդի ենթահանձնաժողովի նիստերում քննարկվել են «Էկոատոմ» ՍՊԸ ներկայացրած «Նաիրիտ գործարան» ՓԲԸ առկա լաք էթինոլի օգտահանման տեխնոլոգիան, «Փի Էս Այ» ՍՊԸ մշակած սենսորային տեխնոլոգիան ու դրա կիրառությունները (հիմնականում սահմանների հսկման համար):

Բաժանմունքի բյուրոյի նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի գիտական կազմակերպությունների 2025թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման հայտերը, բաժանմունքի և ինստիտուտների 2024թ. աշխատանքային պլանը, 2025-26թթ. ուստարվա առկա ու հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի և «ՀՀ ԳԱԱ ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» ծրագրի շրջանակում նախատեսված միջոցների հաշվին սարքավորումների ձեռքբերման բաժանմունքի գիտական կազմակերպությունների կողմից ներկայացված

հայտերը: Քննարկվել և հաստատվել են Երկրաբանական գիտությունների, Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության, Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտների գիտական խորհուրդների նոր ու փոփոխված կազմերը: Քննարկվել և վերանայման է հանձնվել Երկրաբանական գիտությունների ինստիտուտի կառուցվածքային նոր փոփոխությունների հարցը:

Քննարկվել են ՀՀ պետական բուհերին և գիտահետազոտական կազմակերպություններին ներկայացվող հայեցակարգային առաջարկությունները ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի քիմիական լաբորատորիայի ստեղծմանն աջակցելու, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ հարցերը:

Քննարկվել և հաստատվել են բաժանմունքի գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» և պետական նպատակային-ծրագրային ծրագրերի 2024թ. հաշվետվությունները:

Բաժանմունքի ինստիտուտների գիտնականները համատեղ գիտական աշխատանքներ իրականացնելու և գիտաժողովներին մասնակցելու նպատակով գործուղվել են (98 գործուղում, որոնցից 4-ը ֆինանսավորվել են ԳԱԱ համակարգի գիտական գործուղումների համար նախատեսված միջոցներից) ՌԴ, Չինաստան, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա և այլն: Բաժանմունքի ինստիտուտները տպագրել են 198 հոդված գրախոսվող ամսագրերում (143-ը Scopus/WoS), 4 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (արտասահմանում), 84 թեզիս (53-ն արտասահմանում), 5 մենագրություն (2-ն արտասահմանում), 2 ուսումնական ձեռնարկ և ստացել 11 արտոնագիր (4-ը միջազգային):

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

Բաժանմունքը մասնակցել է ինստիտուտների տարեկան ժողովներին, ստացված արդյունքների քննարկմանը:

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎ. ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ք.գ.թ. Ս.Մինասյան

Փոխտնօրեն՝ ք.գ.թ. Ա.Հարությունյան

Գիտքարտուղարի ժ/պ՝ Լ.Սեդրակյան

Էլեկտրոնային փոստ՝ ichph@ichph.sci.am

Կայքէջ՝ www.chph.sci.am

Մասնագիտական խորհուրդ 017՝ «Քիմիա»

Նախագահ՝ ակ. Լ.Թավադյան, գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Սարգսյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ելանյութերի իմպուլսային ներարկման կինետիկական ԷՊՌ, թթվածնակենտրոն ռադիկալների նկատմամբ կլանման տարողության որոշման (ORAC) և ուլտրամանուշակագույն-տեսանելի սպեկտրաչափական եղանակներով քանակապես որոշվել են կատեխոլի ու կատեխոլամիների՝ դոպամինի, նորէպինեֆրինի հակառադիկա-

լային/հակաօքսիդիչային տարողությունները պերօքսիդային ու կայուն ԴՖՊՀ ռադիկալների նկատմամբ: Կազմվել է հակառադիկալային ակտիվության շարք:

Ուլտրամանուշակագույն-տեսանելի սպեկտրաչափական եղանակով որոշվել են դիֆենիլ սելենօքսիդի (Ph_2SeO) ու դրա ծծումբ պարունակող նմանակի՝ դիֆենիլ սուլֆօքսիդի (Ph_2SO) հակառադիկալային ակտիվություններն ու տարողությունները կայուն ԴՖՊՀ ռադիկալի հետ ռեակցիայում: Ցույց է տրվել, որ Ph_2SeO -ի հակառադիկալային տարողության արժեքը գերազանցում է Ph_2SO -ի համապատասխան արժեքին:

Բացահայտվել են տիտանի նանոերկօքսիդի (TiO_2) ու վոլֆրամի եռօքսիդի (WO_3) օպտիմալ հարաբերությունները WO_3 -ով դոպացված TiO_2 -ի հիման վրա սինթեզված ֆոտոկատալիզատորներում, որոնք ցուցաբերել են բարձր ֆոտոկատալիզային ակտիվություն մեթիլեն կապույտ (MV) ներկանյութի ջրային լուծույթի գունազրկման ռեակցիայում: TiO_2 -ի դոպացումը WO_3 -ով նպաստել է կոմպոզիտներում լիցքակիրների ռեկոմբինացիայի նվազմանը՝ բարձրացնելով դրանց ֆոտոկատալիզային արդյունավետությունը, որն ընթանում է Z-մեխանիզմով հետերոանցման միջոցով:

Իոնիզացնող ճառագայթներով ախտահարված կենդանիների արյան էրիթրոցիտների կենսաթաղանթի ռեոլոգիական հատկությունների (մածուցիկություն, հոսունություն) փոփոխություններն էՊՌ եղանակով սպինային զոնդերի օգտագործմամբ ուսումնասիրելու համար մշակվել են հատուկ սխեմաներ՝ կապված կենդանիներին տարբեր դոզաչափերով ճառագայթման ու համապատասխան փորձանմուշների պատրաստման հետ: Աշխատանքներն իրականացվել են Ֆիզիոլոգիայի ինստիտուտի ու «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի հետ համատեղ (ղեկ.՝ ակ. Լ.Թավադյան):

Քվանտային քիմիայի տարբեր հաշվողական եղանակների (DFT հիբրիդային B3LYP, M06-2X, կոմպոզիտային CBS-QB3, *ab initio* MP2) օգնությամբ ուսումնասիրելով $\text{NH}_3 + \text{H}$, $\text{C}_2\text{H}_4 + \text{HO}_2$, $\text{C}_2\text{H}_5\text{O}$, $\text{O}_3 + \text{CH}_4$ ռեակցիոն համակարգերի պոտենցիալ էներգիայի մակերևույթները՝ որոշվել են հիմնական ռեակցիաների ուղիները: Գտնվել են դրանց ռեազենտները, միջանկյալ միացությունները, արգասիքները, անցումային վիճակները, հաշվարկվել են ակտիվացման էներգիաներն ու ռեակցիոն ուղիների էնթալպիաները:

Մեթանի գազաֆազ օքսիդացման ժամանակ շղթայի զարգացման մեխանիզմի փորձարարական ու տեսական ուսումնասիրություններով ցույց է տրվել, որ կախված պրոցեսի ջերմաստիճանից՝ տեղի է ունենում դրա սահմանափակող փուլի փոփոխություն: 728 Կ ջերմաստիճանում պրոցեսի ընթացքը հիմնականում որոշվում է պերօքսիդային ռադիկալների միմյանց հետ փոխազդեցությամբ: Ջերմաստիճանի բարձրացման հետ մեծանում է պերօքսիդային ռադիկալների ռեակցիաների դերը ֆորմալդեհիդի հետ, ինչը $T = 804 \text{ K}$ -ում դառնում է որոշիչ: $T = 873 \text{ K}$ -ում գործընթացի սահմանափակող փուլը պերօքսիդային ռադիկալների փոխազդեցությունն է մեթանի հետ:

Գազային պրոպանի՝ օդի թթվածնով օքսիդացման ժամանակ հայտնաբերվել է լույսի ճառագայթումով ուղեկցվող տատանողական ռեժիմ, ինչը բացատրվել է օզոնի առաջացմամբ ու դրա մասնակցությամբ իոն-մոլեկուլային ռեակցիաների իրականացմամբ:

Փորձնականորեն ցույց է տրվել, որ 603-683 Կ ջերմաստիճանային տիրույթում պրոպանի կայունացված սառը բոցի ռեժիմում ռեակցիայի արագության բացասական ջերմաստիճանի գործակցի երևույթի բնույթը կախված է ելային խառնուրդի բաղադրությունից: $\text{C}_3\text{H}_8:\text{O}_2 = 6:1$ խառնուրդում ռեակցիան գործնականում անկախ է ջերմաստիճանից, որը կարող է սահմանվել որպես զրոյական ջերմաստիճանի գործակցի շրջան (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Արսենտև):

Մշակվել է միկրոալիքային սինթեզի նոր մոտեցում՝ հիմնված ռեակցիոն խառնուրդի բազմափուլ ակտիվացման երևույթի վրա, որը թույլ է տալիս կառավարել ստացվող նյութերի

Ֆազային ու քիմիական բաղադրությունը, կառուցվածքը, հատիկի չափսը, միջանկյալ ֆազերը: Այս եղանակով սինթեզված Mo_2C կարբիդը ցուցաբերում է կառավարելի ակտիվություն ու ընտրողականություն կատալիզում: Մասնավորապես հնարավորություն է ստեղծվել ստանալ ինչպես կարբիդի մաքուր ֆազը, այնպես էլ դրա օքսիկարբիդները բաղադրությունների գրեթե ամբողջ հնարավոր միջակայքում: Մոտեցումը թույլ է տվել առաջին անգամ ստանալ մոլիբդենի կարբիդի բետա-ֆազը մաքուր վիճակում:

Ներդրվել է պիրոտեխնիկական խառնուրդների այրման պարամետրերի (ջերմաստիճան, այրման արագություն և այլն) չափման համալիր համակարգ, որի միջոցով հնարավոր է եղել բացահայտել ամոնիումի ու կալիումի նիտրատների հիմքով պիրոտեխնիկական բաղադրությունների առանձնահատկությունները: Գտնվել է ամոնիումի ու կալիումի նիտրատների այն բաղադրությունը, որի դեպքում 200°C -ում քայքայումն ընթանում է կայուն ռեժիմում, առանց տատանումների:

Ներդրվել է միկրոալիքային ճառագայթման ազդեցությամբ կատալիտիկ հետազոտությունների ամբողջական համակարգ: Միկրոալիքի ազդեցությամբ հիդրազինի քայքայման ռեակցիայի օրինակով ցույց է տրվել, որ $\text{Cu-Mo}_2\text{C}$ կատալիտիկ համակարգը միկրոալիքային ճառագայթման 450 Վտ հզորության պայմաններում ապահովում է ամբողջական փոխարկում 4 րոպեի ընթացքում, ինչը շատ անգամ ավելի արագ է այլ տիպի կատալիտիկ ռեակցիաների համեմատ (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Դավթյան):

Մշակվել և առաջարկվել է նոր ռեյատիվիստական քվանտային պատկերացում մատերիայի կարևորագույն հիմնաքարերի՝ նուկլոնների նկարագրման համար:

Հետազոտվել է դասական երեք մարմնի խնդիրը կոնֆորմալ-էվկլիդյան տարածության մեջ՝ կապված մարմինների համակարգի էներգիայի մակերևույթի հետ: Մշակվել է մաթեմատիկական ալգորիթմ 6-րդ կարգի կոշտ դիֆերենցիալ հավասարումների համակարգի թվային մոդելավորման համար: Ստացվել է Ֆոկկեր-Պլանկի տիպի հավասարում գեոդեզիական հետազոտային փնջի էվոլյուցիան փուլային տարածության մեջ նկարագրելու համար: Հետազոտելով դինամիկ համակարգի շարժման փուլերը նկարագրող ժամանակային պարամետրի վարքը՝ ցույց է տրվել, որ այն անհամասեռ է, անշրջելի, ունի տարածման սլաք: Առաջադրված տեսական պատկերացումն ու մաթեմատիկական ալգորիթմը հնարավորություն են տալիս թվայնորեն ուսումնասիրել բոլոր այն քիմիական գործընթացները, որոնք նկարագրվում են երեք մարմնի խնդրի շրջանակում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան):

Ուսումնասիրվել է մեխանաակտիվացված ստեխիոմետրական $4\text{B}+\text{C}$ փոշեխառնուրդից բորի կարբիդի (B_4C) ստացումը գծային օրենքով արագ տաքացման պայմաններում ($V_{\text{տ}}=100-4800$ %/րոպե, $T_{\text{max}}=2000$ K): Ցույց է տրվել էկզոթերմ պիկերի առկայությունը $1150-1300$ °C ջերմաստիճանային տիրույթում. 1 րոպե տևողությամբ մեխանիկական մշակումը մոլորակային գնդաղացում բավարար է նշված փոշեխառնուրդի ակտիվացման ու նպատակային բորի կարբիդի ստացման համար:

Բարձր ջերմաստիճանային տիրույթում ($900-1300$ °C) կոբալտի օքսիդի (CoO)՝ ջրածնով վերականգնման կինետիկայի թերմոգրաֆիմետրական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձևավորվում է նիստակենտրոն խորանարդաձև կառուցվածքով մետաստաբիլ $\gamma\text{-Co}$ ֆազը, իսկ ընթացող տոպոքիմիական ռեակցիան լավագույնս նկարագրվում է սաղմերի երկչափ աճման Ավրամի-Երոֆեևի օրենքով: Բացահայտվել է, որ մետաստաբիլ $\gamma\text{-Co}$ ֆազը սենյակային ջերմաստիճանում կայունանում է շնորհիվ նմուշի արագ սառեցման, ինչի հետևանքով կանխվում է $\gamma \rightarrow \varepsilon$ ֆազային անցումը:

Բացահայտվել է, որ տարրերից հաֆնիումի ու տանտալի կարբիդների ստացումը գծային օրենքով արագ տաքացման պայմաններում ($V_{\text{տ}}=100-4800$ %/րոպե, $T_{\text{max}}=2000$ K)

միափուլ էկզոթերմ ռեակցիա է, որը տաքացման փոքր արագությունների դեպքում ընթանում է դիֆուզիոն արգելակման պայմաններում, իսկ տաքացման բարձր արագությունների դեպքում՝ դինամիկական ջերմային պայթյունի/բոցավառման ռեժիմում: Առաջարկվել է փոխազդեցության հնարավոր մեխանիզմ (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Խառատյան):

«Հիդրիդային ցիկլ»-ի (ΔS) և բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի (ԲԻՍ) եղանակների կիրառմամբ ուսումնասիրվել է $(\text{Ti}_{0.8}\text{Zr}_{0.2})_2\text{AlN}_x$ պինդ լուծույթ MAX ֆազի ձևավորման պրոցեսը: Սինթեզված նմուշների ռենտգենաֆազային (ՌՖ) վերլուծությունը ցույց է տվել, որ ձևավորվել են երկֆազ բաղադրությամբ՝ հեքսագոնալ (տարածական խումբ 194: P63/mmc) ու օրթոռոմբիկ (տարածական խումբ 63:Cmcm) համաձուլվածքներ, որոնց բյուրեղացանցների պարամետրերը որոշվել են Ռիտվելդի վերլուծության միջոցով: Հաստատվել է, որ սինթեզված բարդ բաղադրությունների բյուրեղագիտական պարամետրերը համապատասխանում են Ti_2AlN և Ti_3AlN MAX ֆազերի պարամետրերին (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Մայիլյան):

Կենսահամատեղելի, կենսաքայքայվող իմպլանտների եռաչափ տպագրման համար որպես հումք օգտագործվող հիդրոքսիապատիտը ստացվել է կովի, ջայլամի ու խոզի ոսկորների ջերմային մշակմամբ: Ցիտոտոքսիկ անալիզների արդյունքները հաստատել են ստացված իմպլանտների կենսահամատեղելիությունը, իսկ եռաչափ տպագրված հիդրոքսիապատիտի մեխանիկական հատկությունները չեն զիջել բնական ոսկորի համապատասխան բնութագրերին:

Ընտրողական լազերային (ալիքի երկարությունը $2=1,06$ մկմ) հալեցման ու ստերեոլիթոգրաֆիայի եղանակներով պատրաստվել են ալյումինի նիտրիդի ու սիլիցիումի կարբիդի կոմպոզիտներ, որոնցից պատրաստվել են մեծ խտությամբ նմուշներ: Խնդիր է դրվել իրականացնել այդ կոմպոզիտների մեխանիկական հատկությունների բարելավում:

Եռաչափ տպագրությամբ պատրաստվել են բարձր էլեկտրական դիմադրություն ունեցող պոլիմերներ՝ արհեստական մկանների պատրաստման, դրանց էլեկտրական, մեխանիկական ու ջերմային բնութագրերը որոշելու համար: Պոլիմերները հաջողությամբ պատվել են գրաֆենի ու ոսկու շերտերով, որոնք ծառայում են որպես էլեկտրոդներ արհեստական մկանների էլեկտրաշարժման համար (ղեկ.՝ տեխ.գ.թ. Մ.Աղայան):

Իմպուլսային լազերային փոշենստեցման (PLD) ու քիմիական գոլորշենստեցման (CVD) եղանակներով մշակվել է ZnO , MoS_2 , ու PdSe_2 նյութերի ուլտրաբարակ (<10 նմ) նանոկառուցվածքային թաղանթների և ZnO/MoS_2 , $\text{MoS}_2/\text{PdSe}_2$ հետերոկառուցվածքների ստացման տեխնոլոգիա: Մթնային ու լուսային ռեժիմներում իրականացված չափումները ցույց են տրվել, որ 30 մՎտ/մ² լույսի ինտենսիվության դեպքում ժամանակից կախված ֆոտոարձագանքը փոփոխվում է թռիչքաձև՝ ֆոտոլարումը 71 մկՎ-ից դառնում է 247.4 մՎ, իսկ ֆոտոհոսանքը՝ 237 մկԱ-ից 380 մկԱ, ինչը կիրառական հետաքրքրություն է ներկայացնում ֆոտոդետեկտորներում:

Լուծույթային հակադարձ թորման եղանակով սինթեզվել են Al-ով լեզիրված ցինկ-օքսիդային պլազմոնային նանոմասնիկներ և կենսամոլեկուլներով (L-ցիստեինի և HSA) դրանց մակերևույթի պատման միջոցով ստացվել են միջուկ-կեղև նանոչափային կառուցվածքներ: Ցույց է տրվել, որ միջուկ-կեղև համակարգի ձևավորումը (նանոմասնիկի մակերևույթին կապվող կենսամոլեկուլների թվի մեծացումը) ընթանում է UV-vis կլանման առավելագույն արժեքի նվազմամբ, սպիտակուցի ֆլյուորեսցենցիայի մարմամբ: FT-ATR սպեկտրում դիտվել է պլազմոնային երևույթին բնորոշ վարքի պահպանում ու սպիտակուցների բնութագրական կլանման ինտենսիվացում՝ ուժեղացման գործակցի մինչև 4 անգամ ավելացում (մակերևույթով ուժգնացված ԻԿ կլանման գրանցված երևույթը

կիրառական հետաքրքրություն է ներկայացնում փոքր (ենթամոլյար) կոնցենտրացիաներով սպիտակուցների գրանցման համար) (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Մ.Երանոսյան):

Հաշվարկային եղանակների (արդյունարար զանգվածի մոտավորության, վերջավոր տարրերի և այլն) օգտագործմամբ հետազոտվել է երկխառնուրդային կենտրոններով երկու գնդաձև, երկէլեկտրոնային համակարգ՝ դիտարկելով հիմնական վիճակի էներգիան, սինգլետ-տրիպլետ վիճակների էներգիայի պառակտումն ու դինամիկ զարգացումը, որոնք կարևոր են քվանտային ինֆորմացիայի մշակման ու օպտոէլեկտրոնային սարքերի զարգացման համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Դ.Հայրապետյան):

Վերջավոր տարրերի հաշվարկային եղանակով հետազոտվել են GaAs-ից կառուցված երկկոնական քվանտային կետերի էլեկտրոնային բնութագրերը, ինչը հնարավորություն է տվել բացահայտել քվանտային կետի երկրաչափության ազդեցությունը դրա էլեկտրոնային կառուցվածքի վրա: Հիմք ընդունելով մեկ էլեկտրոնի ալիքային ֆունկցիաներն ու էներգիաները՝ հաշվարկվել են տարբեր քվանտային անցումների տատանումների ուժերը: Հաշվարկվել է լույսի միջգոտիական կլանման սպեկտրը հիմնական վիճակից հաջորդ չորս գրգռված վիճակներ անցումների համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Պ.Մանթաշյան):

Թաց պտտման (wet spinning) եղանակով ստացվել են վերականգնված գրաֆենի օքսիդի հեղուկ բյուրեղի հիման վրա մանրաթելեր՝ որպես լավարկված մեխանիկական ու էլեկտրական հատկություններով էլեկտրոդ կիրառման նպատակով:

Սինթեզվել են Sb_2S_3 նանոասեղներ ու կիրառվել հեղուկ բյուրեղային բջիջներում որպես կողմնորոշիչ շերտ, ինչը թույլ է տալիս նվազեցնել մեխանիկական եղանակներով (նրբահղկում) պայմանավորված արատները շնորհիվ նանոասեղների անիզոտրոպ երկրաչափության: Կողմնորոշիչ շերտը նպաստում է նանոասեղների առանցքի երկայնքով հեղուկ բյուրեղների մոլեկուլների ուղղորդմանն ու հեղուկ բյուրեղային սարքերի պատրաստման տեխնոլոգիաների լավարկմանը՝ բարձրացնելով դրանց արտադրողականությունն ու կայունությունը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Հ.Նարագույան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Սելեն պարունակող օրգանական միացության դիֆենիլ սելենօքսիդի վերօքս բնութագրերի հետազոտության արդյունքում ցույց է տրվել, որ նշված միացության անոդային օքսիդացումն ու կատոդային վերականգնումն ապրոտոնային լուծիչի՝ ացետոնիտրիլի միջավայրում ավելի հեշտ է ընթանում, քան մեթանոլի միջավայրում, ինչը պայմանավորված է դիֆենիլ սելենօքսիդի ու մեթանոլի մոլեկուլների միջև ավելի ուժեղ ջրածնական կապի առաջացմամբ: Ջրածնական կապերը դժվարացնում են շրջապատող լուծիչի մոլեկուլների վերադասավորումը, որն անհրաժեշտ է էլեկտրոնների տեղափոխման համար:

Քվանտաքիմիական հաշվարկներով խտության ֆունկցիոնալի տեսության (DFT) M06-2X հիբրիդային եղանակի (6-311++G(d,p) բազիսային ֆունկցիաներ) օգնությամբ քանակապես գնահատվել են ֆոլատների (ֆոլաթթու, դիհիդրոֆոլաթթու, տետրահիդրոֆոլաթթու, 5-մեթիլ տետրահիդրոֆոլաթթու, 5-ֆորմիլ տետրահիդրոֆոլաթթու) հակառադիկալային/հակաօքսիդիչային ունակությունները գազային ֆազում ու 3 լուծիչներում (բենզոլ, էթանոլ, ջուր): Ըստ ջրածնի ատոմի փոխանցման ռեակցիայի ընթացքի երեք մեխանիզմների՝ HAT, SPLET և SET-PT՝ բացահայտվել են ֆոլատների հակառադիկալային ռեակցման կենտրոնները, ստացվել է ակտիվության շարք:

Ֆյուորեսցենտային սպեկտրաչափական ու էլեկտրաքիմիական եղանակներով բացահայտվել են ֆլավոնոիդների (քվերցետին, ռուտին, մորին, նարինգենին, քրիզին, 3-հիդրօքսիֆլավոն)՝ ԴՆԹ-ի հետ ոչ կովալենտային կապման առանձին ձևերն ու համապա-

տասխան քանակական բնութագրերը՝ կապման հաստատունները (K) ու հակաօքսիդիչի մեկ կապված մոլեկուլին բաժին ընկնող ԴՆԹ հիմքերի զույգերի թիվը (n): Ցույց է տրվել ֆլավոնոիդների կապման քանակական պարամետրերի կապը ֆլավոնոիդների մոլեկուլային կառուցվածքի, ինչպես նաև կախվածությունը լուծույթի $[Na^+]$ իոնային ուժի հետ (ղեկ.՝ ալ. Լ.Թավադյան):

Միկրոալիքային եղանակով սինթեզվել են մեկ տասնյակից ավել նոր կառուցվածքի անցումային մետաղների (մոլիբդենի, վոլֆրամի, վանադիումի, նիկելի և այլն) կարբիդներ, այդ թվում՝ խառը՝ դրանց կատալիտիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով: Ստացվել և փորձարկվել են նոր կառուցվածքային կատալիզատորների ակտիվ կրիչներ՝ մոլիբդեն-վոլֆրամ խառը կարբիդի հիման վրա: Իրականացվել է սինթեզված կատալիզատորների ակտիվության ու ընտրողականության ուսումնասիրում գուայակոլի, անիզոլի հիդրոդեօքսիգենացման պրոցեսում: Մշակվել և ներդրվել է գազային քրոմատոգրաֆիական նոր եղանակ գուայակոլի, անիզոլի ու հիդրոդեօքսիգենացման ռեակցիաների արդյունքում առաջացած արգասիքների որակական ու քանակական անալիզի համար:

Նախագծվել և պատրաստվել է ջերմաստիճանի, այրման ալիքի տարածման արագության, ծխատվության արագության ու խտության չափման ընդհանուր համակարգ, որն ապահովել է օրինակելի նմուշների առավելագույն արդյունավետ կառուցվածքի ստացումը: Իրականացվել է պիրոտեխնիկական խառնուրդների վերջնական բաղադրությունների օպտիմալացում, այն է՝ մշակվել է կալիումի ու ամոնիումի նիտրատների մոլեկուլային մակարդակով հոմոգեն խառնման եղանակ, դրա հիման վրա իրականացվել է մեկ տասնյակից ավել վառելիքների համարժեքացում, ապահովվել է այրման արագության կառավարելիություն օքսալաթթվի, միզանյութի ու ամոնիումի հիդրոկարբոնատի համատեղ խառնմամբ ստացված պիրոտեխնիկական բաղադրության համար, ամոնիումի քլորիդի հավելումների միջոցով ապահովվել է անհրաժեշտ ծխածածկողականություն, մշակվել և փորձարկվել են երկաթի օքսիդների ու կապարի քրոմատի հիմքով կայուն այրման կատալիզատորներ (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Դավթյան):

ԲԻՍ եղանակով ստացվել են բարձրէնտրոպիական (ԲԷ) 211, 312 ու 413 տիպի նանոշերտավոր միկրոկառուցվածքով կարբիդային ու բորիդային MAX ֆազեր, ինչպես նաև մարգարտախեցու (աղյուս-շաղախ) միկրոկառուցվածքով ԲԷ պինդ լուծույթ- Al_2O_3 կոմպոզիտներ: Նշված նյութերը հեռանկարային են մագնիսական, էլեկտրաքիմիական ու կառուցվածքային կիրառությունների համար (ղեկ.՝ ք.գ.թ. Ս. Այդինյան):

«Հիդրիդային ցիկլ» (ՀՑ) եղանակով $Ti-47.5Al-2Cr-2Nb$ և $Ti-47.5Al-2Mn-2Nb$ բաղադրություններով բարդ համաձուլվածքների ստացման համար որպես ելանյութեր օգտագործվել են բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի (ԲԻՍ) եղանակով սինթեզված TiH_2 և NbH հիդրիդները, և ստացվել են α - և γ - ֆազային բաղադրությամբ նպատակային համաձուլվածքները: Վերջինները բնութագրվում են բարձր ջերմային ու կոռոզիոն դիմադրությամբ, ինչը թույլ է տալիս օգտագործել դրանք էքստրեմալ պայմաններում, օրինակ՝ բարձր ջերմաստիճաններում ու ճնշման տակ աշխատող շարժիչներում:

Հետազոտվել է $Ti_{0.3}Zr_{0.3}Hf_{0.2}Sc_{0.2}$ և $Ti_{0.33}Zr_{0.33}Hf_{0.29}Sc_{0.05}$ համաձուլվածքների սինթեզը ՀՑ եղանակով: ՌՖ վերլուծությունը ցույց է տվել, որ ձևավորվել են միաֆազ համաձուլվածքներ ՀԻԴ բյուրեղային կառուցվածքով, որոնց բյուրեղացանցերի պարամետրերը որոշվել են Ռիտվելդի վերլուծությամբ: Բացահայտվել է, որ սինթեզված համաձուլվածքներում 5 ու 20 ատ.% Sc-ի հավելումը բերում է միաֆազ միջինէնտրոպիական համաձուլվածքների ձևավորման: ՀՑ եղանակով սինթեզվել է $Sc_{0.25}Y_{0.25}Nd_{0.25}Gd_{0.25}$ միջինէնտրոպիական համաձուլվածքը, որից հետո ԲԻՍ եղանակով ստացվել է հիդրիդ: ՌՖ վերլուծությունը ցույց

է տվել, որ համաձուլվածքը բնութագրվում է ՀԽԴ կառուցվածքով, իսկ հիդրիդը՝ ՆԿԽ կառուցվածքով: Բարձր ամրության, հակակոռոզիոն հատկության ու կենսահամատեղելիության շնորհիվ այս համաձուլվածքները կարող են օգտագործվել բժշկության մեջ, մասնավորապես իմպլանտների, հոդային պրոթեզների արտադրության համար (ղեկ.՝ տեխ.գ.դ. Ս. Դոլուխանյան):

Տվյալների հավաքագրման, դրանց բազայի ստեղծման արդյունքում գեներացվել են 44000 նոր կապար պարունակող պերովսկիտներ, մեքենայական ուսուցման (ՄՈՒ) 7 ալգորիթմներով կանխատեսվել են նոր գեներացված կոմպոզիտների արգելված գոտիների էներգիաները: Ընտրված ավելի քան մեկ տասնյակ կոմպոզիտների համար հաշվարկվել են “hull”-ից բարձր էներգիաները, գնահատվել է նյութերի կայունությունը: Խտության ֆունկցիայի տեսության (ԽՖՏ, DFT) եղանակով հաշվվել են ընտրված կոմպոզիտների արգելված գոտու էներգիաները, մտցվել է Հուբբարդի պոտենցիալով ուղղում: Իրականացվել է ընտրված պերովսկիտի սինթեզ, պատրաստվել են թաղանթներ, օպտիմալացվել են դրանց պատրաստման եղանակները: Սինթեզված նյութերը նույնակա-նացվել են ռենտգենկառուցվածքային վերլուծության ու ԽՖՏ տեսական հաշվարկների միջոցով: ՈՒՄ-տեսանելի սպեկտրաչափության միջոցով բնութագրվել են թաղանթները, փորձնականորեն որոշվել են արգելված գոտու էներգիաները: Տարբեր եղանակներով ստացված արդյունքները համընկել են բավարար ճշտությամբ (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Ասատրյան):

Մշակվել են $Ta_2O_5/SiO_2/p-Si/Al$ կառուցվածքով ունակային նանո-բիոսենսորների՝ պոլիմեր/ֆերմենտային ծածկույթների (ուրեազա ու կրեատինին դեհիմինազ) միջոցով մոդիֆիկացման ու զգայուն մակերևույթների ստացման օպտիմալ պայմանները: Արդյունքները կիրառվել են ֆոսֆատային բուֆերներում ու արհեստական մեզի լուծույթներում միզանյութի ու կրեատինինի հայտնաբերման առանձնահատկությունները պարզաբանելու նպատակով: Պոտենցիոմետրիկ ֆերմենտային սենսորի կինետիկական տեսության շրջանակում մշակվել է ֆերմենտային կայուն ծածկույթի հետ սուբստրատի փոխազդեցության հավասարակշիռ վիճակները նկարագրող մաթեմատիկական մոդել, որի կիրառմամբ ստացված հաշվարկային ու փորձնական տվյալների համադրամբ որոշվել են ֆերմենտային ռեակցիաների բնութագրական՝ Միխաելիս-Մենտենի (K_M) ու ֆերմենտային ռեակցիայի արագության (K_v) հաստատունները:

Համակարգչային մոդելավորմամբ ուսումնասիրվել են ալյումինով դոպացված ցինկի օքսիդի (AZO) տարբեր չափերի գնդային համաչափությամբ պլազմոնային նանոմասնիկների ԻԿ կլանման առանձնահատկությունները: Ցույց է տրվել, որ նանոմասնիկները միջին ինֆրակարմիր տիրույթում ունեն ընդգծված ռեզոնանսային կլանման վարք, և կլանման առավելագույն արժեքն ալյումինի կոնցենտրացիայի 1-3% աճին զուգընթաց կարող է աճել ավելի քան 10 անգամ:

Մշակվել է քիմիական սինթեզման լուծույթային հակադարձ թորման եղանակ, որի միջոցով ստացվել են ալյումինի տարբեր կոնցենտրացիաներով լեգիրված նախընտրելի բնութագրերով բարձրորակ գնդաձև նանոմասնիկներ 16-33 նմ բնութագրական չափերով, որոնց համար ԻԿ տիրույթում կլանման տեսական ու փորձնական արդյունքները համընկել են բավարար ճշտությամբ:

AZO 2% պլազմոնային նանոմասնիկները ֆունկցիոնալացվել են ցուլի շիճուկային ալբումին (Bovine Serum Albumin, BSA) սպիտակուցով: Նանոմասնիկների ու սպիտակուցի միջև առաջացած կապը հաստատվել է ֆոտոլյումինեսցենցիայի, դինամիկ լուսացրման (DLS) ու UV-vis եղանակներով: Գրանցվել է կոմպլեքսագոյացման երևույթ, որն արտահայտվում է ֆոտոլյումինեսցենտային սպեկտրում BSA-ին համապատասխանող

առավելագույն արժեքի նվազմամբ, DLS եղանակով չափվող մասնիկների մեծացմամբ, UV-vis սպեկտրերում՝ նանոմասնիկների կլանման սպեկտրի աստիճանական նվազմամբ (ղեկ.՝ Ա.Յոկոլայան):

Որպես ածխածնի աղբյուր օգտագործելով մեթանը՝ քիմիական գոլորշենստեցման եղանակով ստացվել են 1 մկմ երկարությամբ ու 70 նմ տրամագծով ածխածնային նանոխողովակներ: Կլար-էպօքսիդ ու կլար-ածխածնային նանոխողովակներով հարստացված էպօքսիդի նանոկոմպոզիտային խառնուկների մեխանիկական հատկությունների համեմատությունը ցույց է տվել ամրության սահմանի 28% աճ (2 ԳՊա-ից մինչև 2,56 ԳՊա), Յունգի մոդուլի 10% աճ (55 ԳՊա-ից դարձել է 60,5ԳՊա), հարաբերական երկարացման 1,8-2,5 % նվազում:

Comsol Multyphysics ծրագրային փաթեթի շրջանակում վերջավոր տարրերի մոտավորությամբ մշակվել է Բրինելի եղանակով կարծրության որոշման մոդել, և հաշվարկային եղանակով ուսումնասիրվել են ինդենտորի անմիջական շրջակայքում նմուշի դեֆորմացիայի ու լարումների բաշխման առանձնահատկությունները: Հաշվարկային ու փորձնական տվյալների համեմատությունը հանգեցրել է բավարար ճշտությամբ համընկնելիության (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Սիմոնյան):

Էլեկտրաքիմիական եղանակով սինթեզվել են մեկ ու մի քանի ատոմաշերտային թաղանթային (ԱՇԹ) կառուցվածքներ՝ գրաֆեն, գրաֆենի օքսիդ (ԳՕ), MoS_2 , $\text{ԳՕ}/\text{MoS}_2$: Տարբեր լուծիչներում (էթանոլ, դեիոնիզացված ջուր) ցենտրիֆուգացման ու լույսի դինամիկ ցրման եղանակով իրականացվել է ԱՇԹ նանոմասնիկների ըստ չափերի դասակարգում, որոշվել են կախույթում դրանց համասեռ բաշխման օպտիմալ պայմանները: Ցույց է տրվել, որ էթանոլի միջավայրում նանոմասնիկներն ագլոմերացվում են, մինչդեռ դեիոնիզացված ջրում կարելի է ապահովել համասեռ բաշխում 9200 պտ/րոպե դեպքում: ԳՕ-ի էլեկտրոնային մանրագննության արդյունքները ցույց են տվել, որ էլեկտրոնային փնջով ճառագայթման միջոցով հնարավոր է ուղղակիորեն ստեղծել ցիստեին-ԳՕ համակարգի միկրոպատկերներ ԳՕ-ի կաղապարի վրա՝ առանց հատուկ դիմակների ու վիմագրման համակարգերի անհրաժեշտության: Սինթեզվել են RGO/MoS_2 -5CB հիբրիդային կառուցվածքներ, բարելավվել են վերջիններիս ֆոտոէլեկտրական հատկությունները՝ շեմային ինտենսիվության արժեքի փոքրացում 35 մՎտ/սմ²-ից մինչև 15 մՎտ/սմ², ֆոտոարձագանքման մեծացում 15 մՎտ/սմ²-ից մինչև 65 մՎտ/սմ², ինչը հեռանկարային է լիտոգրաֆիական կիրառություններում (ղեկ.՝ Ե.Մելիքյան):

InP քվանտային կետերի ֆոտոնների կապակցման ու օպտիկական շահույթի բարելավման նպատակով իրականացված հետազոտություններով ցույց է տրվել, որ օգտագործելով դիէլեկտրական միջավայր ու արտաքին դաշտեր (մագնիսական, էլեկտրական)՝ հնարավոր է կարգավորել էքսիտոն-բիէքսիտոն կոնֆիգուրացիան՝ առաջացնելով ֆոտոնների կլանում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Պ. Մանթաշյան):

Էլիպսոիդային քվանտային կետում ուսումնասիրելով բիէքսիտոնի վիճակի էներգիայի ու կապի ուժի վրա մագնիսական դաշտի ազդեցությունը՝ հաշվարկվել է ռադիացիոն կյանքի տևողությունը, ինչը կարևոր է արևային ֆոտովոլտային էլեմենտների մոդելավորման համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Յ. Բլեյան):

Նախագծվել է ֆոտոդետեկտորի լաբորատոր նմուշ, ցուցադրվել է փոխանջատման երևույթը թերմոտրոպ հեղուկ բյուրեղի միջոցով. լույսի ազդեցությամբ տեղի է ունենում ռեկոմբինացիա ու ֆոտոհոսանքը նվազում է, իսկ վերջինիս բացակայությամբ, էլեկտրոնների կլանման շնորհիվ, ֆոտոհոսանքը մեծանում է, մինչդեռ պետք է դիտվեր հակառակ էֆեկտը: Հեղուկ բյուրեղով մակածված լուսային փոխանջատման երևույթը կարող է լայն

կիրառություն գտնել ֆոտոդետեկտորներում, ֆոտոգալվանային և այլ օպտոէլեկտրոնային սարքերում:

Պատրաստվել են տերահերցային տիրույթում գրաֆենի օքսիդի հեղուկ բյուրեղի հիման վրա (ճշգրիտ կարգավորելով դիսպերսված գրաֆենի օքսիդի նանոփաթիլների չափերը, կոնցենտրացիան և լուծիչի pH-ը) մինչև 90% կլանիչ թաղանթներ (≈ 40 մկմ հաստությամբ), որոնք կիրառելի են որպես քողարկիչ ծածկույթներ:

ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի Ենթամիլիմետրային ալիքների լաբորատորիայի հետ համագործակցությամբ պատրաստվել են տերահերցային տիրույթում ռեզոնանսային հատկությունների ղեկավարման հնարավորությամբ մետամակերկույթներ: Կարգավորելով վերջինների ռեզոնանսային հատկությունները ցիստեինով ու գրաֆենի օքսիդով՝ ստացված համակարգը կարելի է ներկայացնել որպես պոտենցիալ սենսոր մետամակերկույթի վրա:

Էլեկտրոնային ճառագայթման միջոցով ստեղծվել են գրաֆենի օքսիդի կադապարի վրա ցիստեին-գրաֆենի օքսիդի միկրոպատկերներ՝ առանց հատուկ դիմակների ու վիմագրման համակարգերի անհրաժեշտության, ինչը հեռանկարային է կենսաբժշկության մեջ, մասնավորապես որպես բարձր ընտրողականությամբ ու լավ վերարտադրելիությամբ կլանիչներ, նանոգտման համար թաղանթներ, աերոգելներ, լուսազգայուն մաքրող նյութեր (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Հ.Ղարագույան):

Քվարցային սրվակում միաձուլման, բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի (ԲԻՍ), սոլվոթերմալ ու «փափուկ» քիմիայի եղանակներով ստացվել են փոշիացված ու միաբյուրեղային նյութեր, որոնք հիմնված են բիսմութի ու անտիմոնի տելուրիդի պինդ լուծույթների վրա (Bi_2Te_3 , Bi_2Se_3 , $\text{Bi}_2\text{Se}_{1,5}\text{Te}_{1,5}$, Bi_2SeSTe), ինչպես նաև միջին էնտրոպիական ու բարձր էնտրոպիական համաձուլվածքներ՝ $\text{BiSbSe}_{1,5}\text{Te}_{1,5}$ և $\text{Bi}_{1,5}\text{Sb}_{0,5}\text{Se}_{1,25}\text{Te}_{1,25}\text{S}_{0,5}$: Բացահայտվել է, որ բարձր էնտրոպիական $\text{Bi}_{1,5}\text{Sb}_{0,5}\text{Se}_{1,25}\text{Te}_{1,25}\text{S}_{0,5}$ համաձուլվածքը դրսևորում է մեծ զգայունություն տեսանելի լույսի նկատմամբ, ինչպես նաև տոպոլոգիական մեկուսիչ հատկություններ, ինչը խոստումնալից է դարձնում այն օգտագործել բիսմութի ու անտիմոնի քալկոգենիդների հիմքով ֆոտոգալվանական սարքերում, ինչպես նաև ժամանակակից սպինտրոնիկայի սարքավորումներում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Վասիլև):

Մշակվել է ֆազային անցումով $\text{Ge}_2\text{Sb}_2\text{Te}_5$ (GST) նյութի թաղանթների պատրաստման տեխնոլոգիա՝ օգտագործելով մագնետրոնային փոշենստեցման եղանակը, ուսումնասիրվել են տաքացման ընթացքում (սենյակային ջերմաստիճանից մինչև 325°C) այդ թաղանթների կառուցվածքային ու էլեկտրական հատկությունների փոփոխությունները: Ստացված տվյալների հիման վրա եզրակացություններ են արվել պրոցեսի, ֆազային անցումների պարամետրերի, էլեկտրական հատկությունների կոնտրաստի մասին, ինչն առանցքային նշանակություն ունի էներգաանկախ հիշողության կրիչներում կիրառության համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Մ.Ժեժու):

Հետազոտվել է տիտանի հիմքով բազմաբաղադրիչ բազմաֆունկցիոնալ $\text{Ti-4Al-Nb-1Zr-0.5Sc-0.5Co}$, $\text{Ti-4Al-Nb-1Zr-0.5Sc-0.5Ni}$, $\text{Ti-3Al-1Nb-2Zr-3Co}$ ու $\text{Ti-3Al-1Nb-2Zr-3Ni}$ համաձուլվածքների սինթեզը «Հիդրիդային ցիկլ» (ՀՑ) եղանակով՝ որպես ելանյութ օգտագործելով համաձուլվածքի բաղադրությանը համապատասխան ԲԻՍ եղանակով նախօրոք ստացված TiH_2 , $(\text{Ti}+\text{V})\text{H}_{1,7}$, ZrH_2 , $\text{NbH}_{0,99}$, $\text{ScH}_{1,65}$ հիդրիդների քանակներ: Որոշվել են լաբորատոր պայմաններում նշված համաձուլվածքների ստացման օպտիմալ պարամետրերը՝ ջերմաստիճան (1050°C), գործընթացի տևողություն (1.5 ժամ), ելային խառնուրդի սեղմման ուժի մեծություն (250 կՆ): Ռ-Ֆ վերլուծությամբ ցույց է տրվել, որ բաղադրությունից կախված՝ ձևավորվում են միաֆազ α (ՀԽԴ կառուցվածքով տարածական

խումբ 194: P63/mmc) կամ երկֆազ $\alpha + \beta$ (ԾԿԽ կառուցվածքով, տարածական խումբ 229: Im-3m) համաձուլվածքներ (ղեկ.՝ ք.գ.թ. Դ.Մայիլյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Антонян А.П., Вардеванян П.О., Микаелян М.С., Кочарян Г.Г., Погосян Г.А., Парсаданян М.А., Абсорбционные и флуоресцентные характеристики связывания бромистого этидия с синтетическими одно- и двухцепочечными полирибонуклеотидами, Ер., “Изв. НАН Армении. Физика”, 59(1), 2024, с. 95-103, <https://doi.org/10.54503/0002-3035-2024-59.1-95>.
2. Аракелова Э.Р., Григорян С.Л., Агбалин С.Г., Мирзоян А.Б., Савченко Л.М., Хачатрян А.М., Цоколакян А.С., Структурные, электрофизические и оптические характеристики тонких пленок ZnO/Ag/Fe n-р-типа проводимости, полученных dc-магнетронным методом при комнатной температуре, Ер., “Изв. НАН Армении. Физика”, 59, N 3, с. 355-365, 2024, 10.54503/0002-3035-2024-59.3-355.
3. Макарян Э.М., Арутюнян А.А., Исследование колебательного процесса окисления водорода в присутствии сернистого газа, Новосибирск, “Физика горения и взрыва”, 2024, <https://www.elibrary.ru/item.asp?id=68588375>.
4. Макарян Э.М., Арутюнян А.А., О влиянии сернистого газа на кинетику цепной реакции окисления водорода, Ер., “Хим. журн. Армении”, т. 77, N 1, 2024, с. 21-33. <https://doi.org/10.54503/0515-9628-2024.77.1-21>.
5. Погосян М.Дж., Погосян Н.М., Арсентьев С.Д., Исследование закономерностей газофазного некаталитического окисления смесей n-бутана с этиленом, М., “Нефтехимия”, т. 64, N 3, 2024, с. 222-227. DOI: 10.31857/S0028242124030049.
6. Aleksanyan A., Mayilyan D., Synthesis of Ti-55531 multicomponent alloy by the energy-efficient hydride cycle metho, “International Journal of Self-Propagating High-Temperature Synthesis”, v. 33, N 4, 2024, pp. 251-257. DOI: 10.3103/S1061386224700237
7. Amirkhanyan N., Solution combustion synthesis and kinetic measurements in Ni(NO₃)₂-C₆H₈O₇ System. Preparation of Nickel powder, “International Journal of Self-Propagating High-Temperature Synthesis”, v.33(2), pp.100-108. <https://doi.org/10.3103/S1061386224700031>
8. Antounian F., Avagyan H., Ghaltaghchyan T., Holovenko Y., Khachatryan H., Aghayan M., Designing and additive manufacturing of talus implant for post-traumatic talus avascular necrosis: a case study, “Journal of Orthopaedic Surgery and Research”, 19(1), 2024, <https://doi.org/10.1186/s13018-024-04948-w>
9. Arakelova E., Khachatryan A., Mirzoian A., Grigoryan S., Muradyan R., Stepanyan H., Grigoryan S., Yeranosyan M., Martiryan A., Zatikyan A., Formation of zinc oxide composites of doxycycline with high antibacterial activity based on DC-magnetron deposition of ZnO nanoscale particles on the drug surface, “Applied Physics”, A, 130 (3), 2024, <https://doi.org/10.1007/s00339-024-07296-y>.
10. Arsentev S., Davtyan A., Manukyan Z., Tavadyan L., Strekova L., Arutyunov V. , Kinetic modeling of the effect of the conditions of conjugate oxidation of propane and ethylene on the yield of propylene, “Russian Journal of Physical Chemistry”, B, v.18, N 1, 2024, pp.125-131. DOI: 10.1134/S1990793124010020
11. Asatryan A., Benight A., Badasyan A., Origins of fine structure in DNA melting curves, “The Journal of chemical physics”, 161(5), 2024, p.055103. <https://doi.org/10.1063/5.0213526>
12. Asatryan A., Mamasakhlisov Y., Morozov V., Correlation function for heteropolymers near the melting temperature, “Journal of Contemporary Physics”, (Armenian Academy of Sciences), 59(2), 2024, pp.208-213. <https://doi.org/10.1134/S1068337224700191>
13. Aydinyan S., Synthesis of Ti₂AlC MAX phase and Ti₂C MXene by activated combustion, “Ceramics International”, 50(7), 2024, pp.12263-12269. <https://doi.org/10.1016/j.ceramint.2024.01.130>
14. Badalyan M., Muradyan N., Shainova R., Arzumanyan A., Kalantaryan M., Sukiasyan R., Yeranosyan M., Laroze D., Vardanyan Y., Barseghyan M., Effect of silica fume concentration and water-cement ratio on the compressive strength of cement-based mortars, “Buildings”, 14, 2024, p.757. 10.3390/buildings14030757

15. Bleyan, Y., Hayrapetyan D., Biexciton in prolate ellipsoidal quantum dot: optical-magnetic properties, "Computational and Theoretical Chemistry", 1241, 2024, p. 114874, <https://doi.org/10.1016/j.comptc.2024.114874>
16. Bleyan Y., Baskoutas S., Hayrapetyan D., Magnetoexciton in the ellipsoidal quantum dots, "Matsci Express", 01, 2024, pp.262-268. <https://doi.org/10.69626/mse.2024.02622024>.
17. Chaban V., Markarian Sh., Ghazoyan H., Sargsyan H., Grigoryan G., Sahakyan A., Tavadyan L., Diphenyl selenoxide: Unraveled peculiarities in methanol and acetonitrile solutions, "Journal of Molecular Liquids", 2024, p. 408: 125331. <https://doi.org/10.1016/j.molliq.2024.125331>
18. Davtyan A., Manukyan Z., Arsentev S., Tavadyan L., Arutyunov V., Study of the potential energy surface of reactions in a system containing I-Propyl and N-Propyl radicals, "Russian Journal of Physical Chemistry", B, 2024, v.18, N 2, pp.461-467. DOI: 10.1134/S1990793124020209
19. Ghaltaghchyan Ts., Thermal management systems in space: A review, "Electronic Journal of Natural Sciences", 1(42), 2024, pp.9-15. DOI: 10.5584/1728-791X-2024.1.42-9.
20. Ghaltaghchyan Ts., Nazaretyan Kh., Rstakyan V., Aghayan M., Fast carbidization of silicon in additive manufactured Si-C-SiC composit, "Elsevier BV", <https://doi.org/10.2139/ssrn.4793447>
21. Garoufalos C., Hayrapetyan D., Sarkisyan H., Mantashyan P., Zeng Z., Galanakis I., Bester G., Steenbock T., Baskoutas S., Optical gain and entanglement through dielectric confinement and electric field in InP quantum dots, "Nanoscale", 16(17), 2024, pp.8447-8454. DOI: 10.1039/D3NR06679G
22. Gavalajyan S., Mantashyan P., Kazaryan E., Hayrapetyan D., Single electron states and intraband absorption in GaAs Biconical Quantum Dot., "SPIE Proceedings", 2024, v. 13120, pp. 14-20. <https://doi.org/10.1117/12.3030914>
23. Gavalajyan S., Photoluminescence spectra in GaAs biconical quantum dot, "SPIE Proceedings", v. 12991, 2024, pp.194-200. <https://doi.org/10.1117/12.3016254>
24. Gevorkyan A., Bogdanov A., Mareev V., General three-body problem in conformal euclidean space: New properties of a low-dimensional dynamical system, "Particles", N 7, 2024, pp. 1038-1061. <https://doi.org/10.3390/particles7040063>.
25. Gevorkyan, A., Bogdanov, A., Quantum chromodynamics of the nucleon in terms of complex probabilistic processes, "Symmetry", 2024, 16, p.256. <https://doi.org/10.3390/sym16030256>,
26. Grigoryan K., Shilajyan H., Savvaidis I., Mkhitarian L., Zatikyan A., Effect of bovine serum albumin on gallic acid and tannic acid radical scavenging properties and binding kinetics with 2,2-diphenyl-1-picrylhydrazyl "Process Biochemistry", 2024, v.141, pp.30-38. <https://doi.org/10.1016/j.procbio.2024.02.009>
27. Ivanov O., Yaprntsev M., Yaprntseva E., Nickulicheva T., Vasil'ev A., Topological insulator behavior in low-temperature electrical resistivity of the high-entropy single-crystalline thick-filmed (Bi Sb) (Te Se S) alloy, "Physica Scripta", v. 99, N 2, 2024, p.025913. DOI 10.1088/1402-4896/ad185e
28. Ivanov O., Yaprntsev M., Yaprntseva E., Nickulicheva T., Vasil'ev A., Temperature evolution of transverse magnetoresistance due to forming the topological insulator state in single-crystalline n-type Bi Te Se, "Physica Scripta", v.99, N 3, 2024, p.035960. DOI: 10.1088/1402-4896/ad29cc
29. Karschuck T., Poghossian A., Ser J., Tsokolakyan A., Achtsnicht S., Wagner P., Schöning M., Capacitive model of enzyme-modified field-effect biosensors: Impact of enzyme coverage. "Sensors and Actuators", B: Chemical 408, 2024, 135530. 10.1016/j.snb.2024.135530
30. Kharatyan G., Exciton binding energy and interband absorption in a cylindrical quantum dot GaN/In_xGa_{1-x}N, SPIE Proceedings, v.12991, 2024, pp.232-239. <https://doi.org/10.1117/12.3021117>
31. Kirakosyan H., Nazaretyan K., Amirkhanyan N., Beglaryan H., Aydinyan S., A novel pathway of solution combustion synthesis of silicon carbide and SiC based composite whiskers. In "AIP Conference Proceedings" AIP Publishing, v.2989, 2024, 040009. <https://doi.org/10.1063/5.0189204>
32. Kirakosyan H., Nazaretyan K., Kharatyan A., Aydinyan S., The preparation of high-entropy refractory alloys by aluminothermic reduction process, In "AIP Conference Proceedings" AIP Publishing, v. 2989, 2024, 040012. <https://doi.org/10.1063/5.0189206>
33. Malumyan S., Muradyan N., Kalantaryan M., Arzumanyan A., Melikyan Y., Laroze D., Barseghyan M., Simultaneous effect of diameter and concentration of multi-walled carbon nanotubes on mechanical and electrical properties of cement mortars: with and without biosilica, "Nanomaterials", 2024, v. 14, N 15, 1271. <https://doi.org/10.3390/nano14151271>

34. Mantashian G., The role of geometry in tailoring the linear and nonlinear optical properties of semiconductor quantum dots, "SPIE Proceedings", v.12991, 2024, pp.321-335. <https://doi.org/10.1117/12.3027238>
35. Melikyan Y., Gharagulyan H., Vasil'ev A., Hayrapetyan V., Zhezhu M., Simonyan A., Ghazaryan D., Torosyan M., Kharatyan A., Michalicka J., Yeranosyan M., E-beam induced micropattern generation and amorphization of L-cysteine-functionalized graphene oxide nano-composites, "Colloid and Interface Science Communications", v.58, 2024, 100766. [10.1016/j.colcom.2024.100766](https://doi.org/10.1016/j.colcom.2024.100766)
36. Mkhitarian L., Baghdasaryan L., Karabekian Z., Gasparyan S., Rodríguez M.A., Aghayan M., Rstakyan V., 3d printed pegda-hydroxyapatite composite scaffolds for bone regeneration, 2024, <https://ssrn.com/abstract=5018215> or <http://dx.doi.org/10.2139/ssrn.5018215>
37. Mkrtchyan M.A., Mamasakhlisov, Y.S., Hayrapetyan, D.B., Baskoutas, S. and Sarkisyan, H.A., Two-dimensional pair-interacting hole gas thermodynamics: Exactly solvable Moshinsky model for lens-shaped quantum dots. *Heliyon*, 10(15), 2024. DOI: [10.1016/j.heliyon.2024.e34762](https://doi.org/10.1016/j.heliyon.2024.e34762)
38. Mnatsakanyan R., Aghoyan A., Adamyan R., Kharatyan S., Akopyan A, Davtyan D., Rapid microwave-assisted synthesis of rare-earth hexaborides powders, "Advances in Applied Ceramics,"v. 123, issue 4-6, 2024. <https://doi.org/10.1177/17436753241302225>
39. Muradyan G., Dolukhanyan S., Aghajanyan N., Ter-Galstyan O., Mnatsakanyan N., The influence of hydrogen on the synthesis of biocompatible alloy Ti-6Al-7 Nb by a new Hydride Cycle method, "Journal of Alloys and Compounds", v.1002, 2024, 175229. <https://doi.org/10.1016/j.jallcom.2024.175229>
40. Ohanyan N., Abelyan N., Manukyan A., Hayrapetyan V., Chailyan S., Tiratsuyan S., Danielyan K., Tannin-albumin particles as stable carriers of medicines, "Nanomedicine", v. 18, 2024, 689. <https://doi.org/10.2217/nnm-2023-0275>
41. Paspalakis E., Baskoutas S., Hayrapetyan D., Thanopulos I., Non-Markovian dynamics in a quantum emitter near a topological insulator nanoparticle, AIP Conference Proceedings, v. 3094, N 1, 2024. <https://doi.org/10.1063/5.0210126>
42. Poghosyan N., Poghosyan M., Davtyan A., Arsentev S., Strekova L., Arutyunov V., Regularities of the formation of cool-flame oxidation products of rich propane-oxygen mixtures in a two-section reactor, "Russian Journal of Physical Chemistry", B, 2024. v. 18, N 3, 2024, pp.745–752. DOI: [10.1134/S1990793124700040](https://doi.org/10.1134/S1990793124700040)
43. Poghosyan A., Hakobyan S., Avagyan H., Avetisyan A., Bayramyan N., Hakobyan L., Abroyan L., Davtyan A., Poghosyan D., Baghdasaryan B., Arakelova E., Karalova E., Karalyan Z., The role of gastropods in African swine fever virus ecology, "Virology Journal", v. 21, 180, 2024. DOI: [10.1186/s12985-024-02444-5](https://doi.org/10.1186/s12985-024-02444-5)
44. Rstakyan V., Mkhitarian L., Baghdasaryan L., Ghaltaghchyan Ts., Karabekian Z., Sevoyan G., Aghayan M., Rodríguez A. Miguel., Stereolithography of ceramic scaffolds for bone tissue regeneration: Influence of hydroxyapatite/silica ratio on mechanical properties, "Journal of the Mechanical Behavior of Biomedical Materials", v.152, 2024, 106421. <https://doi.org/10.1016/j.jmbbm.2024.106421>.
45. Sargsian, T., Vinnichenko, M, Hayrapetyan D., Modelling the optical properties of gold nanoparticles using COMSOL multiphysics: influence of geometry, environment, and temperature, "Matsci Express", v. 1, N 4, 2024, pp.278-290. <https://aristonpubs.com/modelling-the-optical-properties-of-gold-nanoparticles-using-comsol-multiphysics-influence-of-geometry-environment-and-temperature/>
46. Sargsyan G., Baghdasaryan N., Gukasyan P., Silveistr A., Sargsyan H., Pulsating light emission during the initiation of the low-temperature propane oxidation reaction due to the presence of quantum resonance in the system. "Sci Herald Uzhhorod Univ Ser Phys", v. 56, 2024, pp. 2528-2538. <https://doi.org/10.54919/physics/54.2023.36>
47. Shvetsov S., Orlova T., Hayrapetyan A., Vasil'ev A., Rafayelyan M., Light-controllable liquid crystal platform for microparticle oscillations and transport, "Soft Matter", v. 20, N 35, 2024, pp.6920-6928. <https://doi.org/10.1039/D4SM00771A>
48. Sevoyan G., Ghazaryan K., Yesayan T., Hayrapetyan A., Minasyan S., Babayan B., Gabrielyan I., et al. Traditional vegetarian food products in villages of Syunik, Armenia: Technogenic contamination risks assessment, "Functional Food Science", 2024, v. 4, N 10, pp. 380-389. <https://www.doi.org/10.31989/ffs.v4i10.1463>
49. Sevoyan G., Minasyan S., Yesayan T., Babayan B., Avetisyan S., Yesayan H., The safety of animal-derived food products in areas of technogenic pollution, "Functional Foods in Health and Disease", 2024, v. 14, N 10, pp. 704-712. <https://doi.org/10.31989/ffhd.v14i10.1484>

50. Simonyan K., Gharagulyan H., Parsamyan H., Khachatryan A., Yeranossyan M., Broadband THz metasurface bandpass filter/antireflection coating based on metalized Si cylindrical rings, "Semiconductor Science and Technology", 11, 2024, p.0230. DOI: 10.1088/1361-6641/ad6d86
51. Vardanyan V., Kharatyan S., Olshin P., Aprahamian A., Manukyan Kh., Initial stages of hydrogen-enhanced methane reduction of nickel oxide, "Industrial & Engineering Chemistry Research", v.63, N 11, 2024, pp.4838-4844. <https://doi.org/10.1021/acs.iecr.4c00035>
52. Yeghishyan A., Malakpour Estalaki S., Chilukuri R., Zakaryan M., Luo T., Manukyan K., Harnessing spontaneous crystallization of amorphous nanoparticles for the preparation of metastable cobalt, "Journal of Physical Chemistry", C, v.128, N 27, 2024, pp.11456-11464. <https://doi.org/10.1021/acs.jpcc.4c03697>
53. Yengibaryan N., Khachatryan G., Mantashian G., Mantashyan P., Bester G., Baskoutas S., Hayrapetyan D., Mollow triplet in Two-Impurity dumbbell quantum dot, "Results in Physics", 57, 2024, p.107429. <https://doi.org/10.1016/j.rinp.2024.107429>
54. Yengibaryan N., Single electron states and intraband absorption in dumbbell quantum dot, "SPIE Proceedings", v. 12991, 2024, pp.201-206. <https://doi.org/10.1117/12.3016255>
55. Ustimenko R., Vinnichenko M., Karaulov D., Sarkisyan H., Hayrapetyan D., Firsov D., Effect of doping and interband pumping on the optical properties of GeSi/Si quantum dot nanostructures for infrared detectors, "ACS Applied Nano Materials", v.7, issue 23, 2024. <https://pubs.acs.org/doi/abs/10.1021/acsanm.4c05251>
56. Vasil'ev A., Melikyan Y., M. Zhezhu, Hayrapetyan V., Torosyan M., Ghazaryan D., Yeranossyan M., Gharagulyan H., Improving the electro-optical properties of MoS₂/rGO hybrid nanocomposites using liquid crystals, "Materials Research Bulletin", v. 180, 2024, p. 113036. <https://doi.org/10.1016/j.colcom.2024.100766>
57. Zhezhu M., Vasil'ev A., Ivanov O., Yaprincev M., Yaprinceva E., Effects of locally-gradient Co-doping on the electron properties of BiTeSe + 0.33 wt.% Co composite, "Materialia", v.36, 2024, p.102172. <https://doi.org/10.1016/j.mtla.2024.102172>

Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ տեխ.գ.թ. Կ.Գրիգորյան
Փոխտնօրեն՝ տեխ.գ.դ. Ն.Կնյազյան
Գիտքարտուղար՝ տեխ.գ.թ. Գ.Մանուկյան
Էլեկտրոնային փոստ՝ ionx@sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Մշակվել են գերմանիում-մոլիբդենականադատային խառը հետերոպոլիմիացության ստացման պայմանները՝ Mo և V -ի տարբեր մոլային հարաբերությունների (1:1; 1:2; 1:3; 1:4) ու տարբեր թթվային միջավայրերում: Վանադիումի ներմուծումը մոլիբդենային հետերոպոլիմիացությունների մոլեկուլների կառուցվածք բարձրացնում է դրանց օքսիդավերականգնման պոտենցիալը, որը հնարավորություն է տալիս նոսր ջրային միջավայրում սինթեզված նոր գերմանիում-մոլիբդեն-վանադատային խառը հետերոպոլիմիացությունը օգտագործել քիմիական անալիզում որպես օքսիդավերականգնման ինդիկատոր (դեկ.՝ ք.գ.թ. Է.Հայրիյան):

Սինթեզվել է ապակետեցեդենային նոր կոմպոզիտային նյութ 31,0 BaO–30,0 B₂O₃–15,0 Al₂O₃–7,0 SiO₂–6,8 MgO– 5,9 ZnO–4,3 MgF₂ (մոլ %) բաղադրության դյուրահալ ապակու և Al₂O₃ լցոնի հիման վրա՝ կիրառելի ցածր ջերմաստիճանային համատեղ թրծման խեցեղենի տեխնոլոգիայում (LTCC):

Վիճակագրական ֆիզիկայի, ֆիզիկական կինետիկայի ու միկրոանհամասեռ միջավայրերի առաձգականության տեսության եղանակներով դիտարկվել է ալմաստի

սաղմերի առաջացման մոդելը բարձր ճնշման խցիկում՝ որպես գրաֆիտ-ալմաստ մարտենսիտային տիպի ֆազային փոխարկման արդյունք: Ստացվել է հավասարում, ըստ որի հնարավոր է բավարար ճշտությամբ որոշել սաղմերի քանակը՝ կախված ջերմաստիճանից և ճնշումից:

Ջրածորի հանքավայրի դիատոմիտից, կրային մշակման եղանակով ստացվել է կալցիումի հիդրոմետասիլիկատ՝ $C-S-H$ (I) տիպի և ցույց է տրվել նրա օգտագործման արդյունավետությունը որպես լցոն, ադսորբենտ և ֆիլտրող նյութ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Կոստանյան):

Միկրոալիքային սինթեզի եղանակով Հայաստանի ալյումինասիլիկատային ապարների թափոնների ու խարամների վերամշակումով ստացվել են կոմպոզիտային երեսպատման նյութեր: Հիմնավորվել է մշակման նոր եղանակի առավելությունն ավանդական ջերմամշակման եղանակի համեմատ: Որոշվել են սինթեզված նյութերի հատկությունները՝ միջին խտությունը, սեղմման ամրությունը, ջրակլանումը (12-16 զանգ.%) (ղեկ.՝ տ.գ.թ. Ն.Գուրգենյան):

Ուսումնասիրվել են ալյումինաբորոսիլիկատային $MeO/MeF_2-Al_2O_3-B_2O_3-SiO_2$, ($Me-Mg, Ca, Sr, Ba$) ու բիսմութազերմանատային համակարգերում ապակեգոյացման տիրույթները, ֆազային դիագրամները, ապակիների, ուղղորդված բյուրեղացմամբ սինթեզված ապակեբյուրեղային նյութերի ֆիզիկաքիմիական հատկությունների փոփոխությունների օրինաչափությունները՝ կախված բաղադրությունից ու ջերմաստիճանից:

Մշակվել են ֆտորպարունակող սիլիցիումզերմանատային համակարգերի հիմքով թափանցիկ ապակիներ 5,5-6,0 մկմ տիրույթում՝ գիշերային տեսողության սարքերի համար: Միկրոէլեկտրոնիկայի համար սինթեզվել են ջերմակայուն, բարձր դիէլեկտրիկ պարամետրերով թափանցիկ ապակեբյուրեղներ $90\%-(15-30) \cdot 10^{-7} \text{ Կ}^{-1}$ արժեքներով:

Տեղական կավահողային հումքի հիման վրա մշակվել են արագ ամրացող ալյումինատային ցեմենտի նոր բաղադրություններ ու տեխնոլոգիա: Պարզվել են ցեմենտների սինթեզի ու հիդրատացման ընդհանուր օրինաչափությունները՝ կախված կլինկերային ֆազերի հարաբերությունից $C_{12}A_7/CA$ ու հալույթների սառեցման արագությունից (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ն.Կնյազյան):

Դժվար սինթեզվող սիլիկատային միացությունների՝ նիկելի, բարիումի սիլիկատների, ցիրկոնի $ZrSiO_4$ -ի հիմքով միացությունների սինթեզի համար նստեցման փուլում կիրառելով որպես սիլիցիումի երկօքսիդի ելանյութ՝ սերպենտինիտներից $(Mg(Fe))_6[Si_4O_{10}](OH)_8$ ստացված հիդրոսիլիկաժելը, մշակվել և կիրառվել են համակցված քիմիական ու ջերմային պրոցեսներ: Ստացված արդյունքները թույլ են տվել պարզեցնել սինթեզի պայմանները նոր նյութերի ու էներգախնայող տեխնոլոգիաների մշակման համար: Մշակվել են տեղական հումքի հիման վրա կերամիկական ջնարակների բաղադրություններ (ղեկ.՝ ք.գ.դ. Ն.Զուլումյան):

Մշակվել է նոր մեթոդաբանություն վիճմիտի հիմքով գունանյութերի ($Zn_{2-x}Co_xSiO_4$ (կապույտ $x=0.01-0.5$) և $Zn_{2-x}Ni_xSiO_4$ (երկնագույն $x=0.1-0.4$, կանաչ $x=0.5-2.0$)) ստացման համար՝ կիրառելով կոմերցիոն մատչելի նյութեր: Ստացված գունանյութերը փորձարկվել են տարբեր ջնարակներում. ուսումնասիրվել են տաքացման ընթացքում դրանց ջերմաստիճանային կայունությունը, ջնարակի մատրիցայի հետ փոխազդեցությունը, վերջնական գունային հատկությունները ջերմամշակումից հետո: Սինթեզված գունանյութերի գունային հատկությունները համեմատվել են սերպենտինիտներից $(Mg(Fe))_6[Si_4O_{10}](OH)_8$ առաջացած հիդրոսիլիկաժելի հիման վրա ստացված նմանատիպ գունանյութի հետ: Պարզվել է, որ գունանյութերը ցուցաբերում են տարբեր երանգների,

ինտենսիվության ու գույնի կայունություն՝ կախված ելանյութերից (ղեկ.՝ տեխ.գ.թ. Հ.Բեգլարյան):

Մշակվել է լեռնային ապառների հիման վրա իտրիումի ալյումինատների ստացման նոր՝ միկրոալիքային (ՄԱ) եղանակ՝ էներգետիկ ծախսերը նվազեցնելու, հատկությունները բարելավելու նպատակով: ՄԱ եղանակով ալյումինի ու իտրիումի լուծելի աղերից սինթեզվել են իտրիումալյումինատային նոնաքարեր (YAG) - $2Y_2O_3 \cdot Al_2O_3$; $Y_2O_3 \cdot Al_2O_3$ և $3Y_2O_3 \cdot 5Al_2O_3$ բաղադրությամբ: Ուսումնասիրվել են սինթեզված YAG-երի կառուցվածքն ու օպտիկական հատկությունները, մշակվել ֆունկցիոնալ հատկությունները բարելավելու եղանակներ: Այդ նպատակով օգտագործվել են ինչպես ՄԱ քիմիայի առանձնահատկությունները, այնպես էլ սինթեզված նյութերի լեգիրացումը: Պարզվել են իտրիում ալյումինատային նոնաքարերի ՄԱ սինթեզի ու ՄԱ ջերմամշակման օպտիմալ պայմանները (ղեկ.՝ տ.գ.թ. Վ.Բաղդամյան):

Ուսումնասիրվել է տարբեր բյուրեղային կառուցվածքի տիտանի երկօքսիդի քիմիական փոխարկումն ածխաջրածինների ու ջրածնի օքսիդացման գազաֆազ շղթայական ռեակցիաների ազդեցությամբ (ՇՌԱ): Ցույց է տրվել, որ ՇՌԱ-ռեժիմում TiO_2 -ը ենթարկվում է արդյունավետ մոդիֆիկացման: ՇՌԱ-մշակված նմուշների կատալիտիկ ակտիվության հետազոտությունն ածխաջրածինների օքսիդացման արդյունաբերական կարևոր ռեակցիաներում ցույց է տվել, որ պրոցեսներն ընթանում են ռեակցիաների ոչ նպատակային ու կողմնակի արգասիքների ելքի նվազմամբ և նպատակային արգասիքների ընտրողականության բարձրացմամբ (ղեկ.՝ ք.գ.թ. Կ.Մանթաշյան):

Շարունակվել են պղնձամոլիբդենային կոմբինատի թափոնների վերամշակման ուսումնասիրությունները: Պղնձի ու մոլիբդենի կորզումից հետո լուծահանվել են թափոնի մյուս բաղադրամասերը (SiO_2 , Al_2O_3 , Fe_2O_3) հիմնաթթվային եղանակով: Պարզվել է, որ վերջնական մնացորդից կարելի է ստանալ բարձր ամրության աղյուսներ, միջնորմային սալեր: Կատարվել են նաև մոլիբդենի կոնցենտրատի վերամշակման հետազոտություններ ցածր ջերմաստիճաններում, մթնոլորտային ճնշման պայմաններում: Հիդրոմետալուրգիական եղանակով մոլիբդենը լուծահանվել է նատրիումի մոլիբդատի ձևով (ղեկ.՝ տեխ.գ.թ. Է.Նազարյան):

Սինթեզվել են վոլաստոնիտի հիմքով կերամիկական պիգմենտներ քվարցային ավազից ու կրից 5 զանգ. % կոբալտի, երկաթի ու քրոմի օքսիդների առկայությամբ: $1300^\circ C$ ջերմաստիճանում, 1 ժամ թրծելուց հետո, կոբալտի օքսիդ պարունակող նմուշների դեպքում առաջացել է վոլաստոնիտ $CaO/SiO_2=1$ հարաբերության դեպքում, իսկ երկաթի ու քրոմի օքսիդների առկայությամբ (նույն պայմաններում)՝ վոլաստոնիտ ու կրիստոբալիտ պարունակող պիգմենտներ ($CaO/SiO_2= 0.8$):

Ուսումնասիրվել է բորոգիպսից կապակցանյութի ստացումը միկրոալիքային վառարանում (ՄԱՎ), միներալիզատորների առկայությամբ: Պարզվել է, որ միկրոալիքային ճառագայթման կիրառումը բարձրացնում է միներալիզատորների արդյունավետությունը՝ բարելավելով ստացվող կապակցանյութի ֆիզիկամեխանիկական հատկությունները: ՄԱՎ-ում կալիումի մալեինատի (0,1%) առկայությամբ ստացված նյութի կապակցման տևողությունը երկարում է 2,5-4 -ից մինչև 7-12 րոպե, իսկ սեղմման ամրությունը մեծանում է գրեթե կրկնակի՝ մինչև 9 ՄՊա:

Ուսումնասիրվել է դիատոմիտի ազդեցությունը պորտլանդցեմենտի ամրության, դրա հիդրատացման ու կառուցվածքի ձևավորման վրա: Լավագույն արդյունքը նկատվել է դիատոմիտի 2 զանգ.% պարունակության դեպքում, երբ պնդացման բոլոր փուլերում նկատվել է ամրության աճի առավելագույն արագություն: Այդ նմուշի ամրությունը 28-րդ օրը կազմել է 63,6 ՄՊա, ինչը գերազանցել է հսկիչ նմուշի ամրությունը, որը ձևավորվել է պնդացման 56-րդ օրը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Կատարվել են Հայաստանի պղինձ ու մոլիբդեն պարունակող հանքաքարերի մշակման քիմիական ու տեխնոլոգիական հետազոտություններ Mo-ի ու Cu-ի կորզմամբ և դրանց հիմքով կարբիդների, սիլիցիդների, սուլֆիդների ստացմամբ: Իրականացվել է նաև արտադրական թափոններից պղնձի ու մոլիբդենի քիմիական կորզման հնարավորությունը՝ հաշվի առնելով նաև բնապահպանական խնդիրները (ղեկ.՝ տ.գ.դ. Կ.Դավիթյան):

Ուսումնասիրվել են թթուներով ու հիմքերով հանքային ապարների ու կավային հանքանյութերի մշակման պրոցեսները: Հետազոտվել են կալցիումի հիդրոսիլիկատի ստացման օպտիմալ պայմանները: Ուսումնասիրվել են ստացված նյութերի սորբցիոն-ծակոտկենային ու ֆիլտրացիոն հատկությունները: Ստացված հիդրոսիլիկատներն օժտված են բարձր սորբցիոն-ծակոտկենային, ֆիլտրացիոն, սպիտակեցնող հատկություններով (ղեկ.՝ տ.գ.թ. Վ.Մարտիրոսյան):

ՀՀ Այունիքի մարզի Լիճքի պղինձ-մոլիբդենային հանքավայրի հին պոչամբարի տարածքում կատարվել են երկրաքիմիական նմուշարկման դաշտային աշխատանքներ: Կազմվել են տվյալ տարածքի համար մետաղների երկրորդային ցրման պսակների երկրաքիմիական քարտեզներ՝ առանձնացնելով պոչամբարի մետաղներով հագեցած տարածքները: Ստացված նյութերի մշակումից հետո կազմվել են պղնձի, մոլիբդենի, կապարի համար երկրորդային ցրման պսակների քարտեզներ, որոնցում երևում են տարրերի կուտակումների տարածքները և դրանց միջին պարունակությունները: Այդ տարածքներից վերցված նմուշների բաղադրությունում, բացի թվարկված էլեմենտներից, առկա են նաև ոսկու որոշակի քանակներ (ղեկ.՝ ե.գ.թ. Լ.Հարությունյան):

Մշակվել է սենյակային ջերմաստիճանում և նորմալ մթնոլորտային ճնշման պայմաններում մետաղական մակերեսների միկրոկարծրության մեծացման տեխնոլոգիա, որի հիմքում ընկած է մետաղի մակերեսի պատումը կարծր կերամիկական նյութերով, նաև ալմաստի փոշով: Պատումը կատարվում է մեխանաքիմիական եղանակով: Որպես հիմք վերցվել են տարբեր մակնիշի ալյումինե ու պողպատե փորձանմուշներ: Նախնական չափումները ցույց են տվել, որ մետաղների մակերեսի կարծրությունը կարող է աճել մոտ 2 անգամ, իսկ մաշակայունությունը՝ մինչև 3: Առաջարկվող մշակման տեխնոլոգիան մատչելի է և արդյունավետ (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Թաթարյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Մշակվել է ֆոտոկատալիտիկ ակտիվությամբ օժտված կոմպոզիտների ստացման նոր ՄԱ եղանակ: Սինթեզվել են հատուկ՝ միջուկ (SiO_2) –պատյան (ZnO , լեգիրացված ZnO , Zn_2SiO_4 , լեգիրացված Zn_2SiO_4) կառուցվածքով կոմպոզիտներ, որոշվել է դրանց ֆոտոկատալիտիկ ակտիվությունը: Ֆինկի միացությունների կատալիտիկ ակտիվությունը սպեկտրի ՈւՄ ու տեսանելի տիրույթներում մեծացնելու նպատակով իրականացվել է տարբեր մետաղներով ZnO և Zn_2SiO_4 լեգիրացում: Որոշվել են սինթեզված միացությունների ֆիզիկաքիմիական, օպտիկական հատկություններն ու ֆոտոկատալիտիկ ակտիվությունը: Ստացված ֆոտոկատալիզատորները մատչելի են, ինչի շնորհիվ էլ կարող են լայն կիրառություն գտնել կենցաղում՝ օդի ու կեղտաջրերի մաքրման համար, օրգանական նյութերի սինթեզում, արևային մարտկոցներում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա. Սարգսյան):

Դժվար սինթեզվող սիլիկատային գունանյութերի ստացման համար մշակվել է առավել արդյունավետ ու էկոլոգիապես անվնաս եղանակ, որը հնարավորություն է տվել ստանալ շուկայում մրցունակ սիլիկատային պիգմենտներ:

Առաջին անգամ ցածր՝ $900\text{--}1100^\circ\text{C}$ ջերմաստիճաններում, 1 ժամ տևողությամբ ջերմամշակման պայմաններում նստեցման եղանակով հնարավոր է եղել ստանալ նիկելի

դժվար սինթեզվող սիլիկատ՝ Ni_2SiO_4 -ի բարձր ելքով, 94–98%: Նոր մոտեցման արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նստեցման գործընթացում առաջացած նյութի մինչև 900 °C ջերմամշակումն իր մեջ ներառում է *in situ* առաջացող միներալիզատոր, իսկ որպես սիլիցիումի երկօքսիդի աղբյուր օգտագործվել է սերպենտինիտներից $(\text{Mg}(\text{Fe}))_6[\text{Si}_4\text{O}_{10}](\text{OH})_8$ ստացված հիդրոսիլիկատները (ղեկ.՝ ք.գ.թ. Հ.Բեգլարյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Григорян К.Г., Хачатрян А.А., Айрапетян С.М., Получение вяжущего материала из борогипса микроволновым излучением, Комплексная переработка борсодержащего минерального сырья и техногенных отходов, Владивосток, изд. ВВГУ, 2024, 198 с.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Հարությունյան Ս.Ա., Դավիդյան Ա.Կ., Գրիգորյան Ա.Ս., Հակոբյան Ա.Ռ., Սաֆարյան Տ.Ն., Մոլիբդենի դիսիլիցիդի ստացման գործընթացի հետազոտումը՝ մոլիբդենիտային խտանյութերի մաքրմամբ, Ե., «ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ տեղեկագիր», հտ. LXXVII, N 1, 2024, էջ 5-11:
3. Агамалян Н.Р., Гюласарян А.Т., Кафадарян Е.А., Нерсисян М.Н., Саргсян А.А., Баграмян В.В., Оптическая и эпр-спектроскопия модифицированного микроволновым методом натурального цеолита, активированного оксидом цинка и серебром, Ер., «Известия НАН Армении. Физика», т. 59, 2024, с. 87-94.
4. Агамалян Н.Р., Саргсян А.А., Азатян Т.С., Григорян Т.В., Казарян А.А., Петросян А.А., Гюласарян А.Т., Кафадарян Е.А., Нерсисян М.Н., Князян Н.Б., Баграмян В.В., Фотокаталитические и радиационно-оптические свойства метасиликата свинца, полученного микроволновым методом, Ер., «Известия НАН Армении. Физика», т.59, N 2, 2024, с. 211–222.
5. Агамалян Н.Р., Гамбарян И.А., Гюласарян А.Т., Кафадарян Е.А., Нерсисян М.Н., Чилингарян Г.Н., Сааков А.С., Саргсян А.А., Азатян Т.С., Баграмян В.В., Исследование излучательных и абсорбционных свойств натуральных и синтетических стекол, подвергнутых гамма-облучению, Ер., “Известия НАН Армении. Физика”, т. 59, N 3, 2024, с. 342-354.
6. Айриян Э.Х., Мирзоян Ф.В., Карапетян А.А., Оганян Н.А., Мирзоян Л.А., Багдасарян Л.С., Новые представления о химизме образования молибденовых гетерополикислот некоторых 3-х, 4-х и 5-ти валентных элементов в разбавленных водных растворах, Ер., “Хим. журнал Армении”, N 3-4, т. 77, 2024, с. 268-281.
7. Гургенян Н.В., Князян Н.Б., Радиационно-защитный композиционный материал на основе отходов рудных минералов и камнепереработки, “Строительство и техногенная безопасность”, N 32(84), 2024, с. 33-39.
8. Давитян К.Г., Арутюнян С.А., Давидян А.К., Акобян А.Р., Сафарян Т.Н., Разработка технологии получения молибдата свинца из молибденитовых концентратов и выращивания его кристаллов при низкой температуре, Ер., изд. “Вестник НПУА”, Металлургия, материаловедение, недропользование, N 1, 2024, с. 25-34.
9. Евстропьев С.К., Булыга Д.В., Шашкин А.В., Дукельский К.В., Столярова В.Л., Манукян, Г.Г., Князян Н.Б., Фотостимулированные процессы в стёклах и стеклокристаллических материалах системы $\text{MgO-Al}_2\text{O}_3\text{-TiO}_2\text{-SiO}_2$, модифицированных диффузией серебра, Ер., “Хим. жур.Армении”, т. 77, N 1, 2024, с. 6-20.
10. Еганян Дж.Р., Синтез и свойства прозрачных ситаллов системы $\text{MgO/MgF}_2\text{-B}_2\text{O}_3\text{-Al}_2\text{O}_3\text{-SiO}_2$. Ер., “Хим. журн. Армении”, N 1, 2024, с. 43-51.
11. Манташян К.А., Абраамян М.М., Запросян А.В., Процессы гетерофазного химического превращения природных кварцитов Армении методом ВЦР с получением перспективных материалов, Ер., сб. научн.ст., изд. “Вестник НПУА”, ч. II, 2024, с. 481-488.

12. Манукян А. Г. Синтез и исследование адсорбционно-структурных свойств гидрометасиликата кальция на основе диатомита, М., “Неорганические материалы”, N 1, 2024, с. 9–16.
13. Мартиросян А.В., Гургенян Н.В., Влияние газообразователей на технологические свойства композиционного материала, полученного из отходов туфа сверхвысокочастотным синтезом, Ер., “Банбер”, N 1, 2024, с. 27-38.
14. Мовсисян Б. В. Особенности получения высокоглиноземистого цемента, содержащего оксифторидные добавки трёхвалентных элементов, Ер., “Хим. журн. Армении” N 1, 2024, с. 34-42
15. Мовсисян Б.В. Влияние соотношения $C_{12}A_7/CA$ и фторидов CaF_2 и AlF_3 на процесс гидратации и твердения глиноземистого цемента, Ер., “Изв. НАН РА и НПУА. сер. ТН”, N 1, 2024, с. 21-28.
16. Мовсисян Б.В., Григорян Т.В., Арутюнян В.Р., Князян Н.Б., Механические характеристики высокоглиноземистого цемента, содержащего оксифторидные добавки трехвалентных элементов, Металлургия, материаловедение, недропользование, Ер., “Вестник НПУА”, N 1, 2024, с. 46-55.
17. Мовсисян, Б.В., Аветян Р.А., Князян, Н.Б., Влияние оксидных примесей на формирование клинкерных фаз и свойства глиноземистого цемента на основе местного сырья, Ер., “Хим. журн. Армении”, N 2, 2024, с. 142-153.
18. Мовсисян, Б. В., Аветян, Р. А., Мовсисян, Э. М., Князян Н. Б. Исследование и переработка местного сырья для синтеза глиноземистых цементов, Ер., “Хим. журн. Армении”, т. 77, N 2, 2024, с. 162-169.
19. Назарян Э.М., Аракелян А.М., Князян Н.Б., Агамян Э.С., Акопян А.А. Арустамян А.Г., Разработка способа получения перегородочных плит на основе карьерных и промышленных отходов РА, Ер., “Известия НУАСА”, т. 1(88), 2024, с. 80-86.
20. Назарян Э.М., Арустамян А.Г., Акопян А.А., Агамян Э.С., Аракелян А.М., Извлечение меди и молибдена из отходов производства медно-молибденовых комбинатов, М., “Химическая технология”, т. 24, N 8, 2024, с. 308-311.
21. Паскевичян Т.Г., Давитян К.Г., Миракян А.А., Давидян А.К., Арутюнян С.А., Акопян А.Р., Экстракционно-абсорбциометрическое определение содержания кадмия с пиронином Ж в присутствии йодид-иона в табаке, Ер., изд. Вестник НПУА, “Химические и природоохранные технологии”, N 1, 2024, с. 48-56.
22. Пашаян Р.А., Карапетян Д.К., Арутюнян Л.В., Маргарян С.С., Геворкян А.А., Карамян Р.А., Товмасын К.Г., Сейсмотектоническая активность очаговых зон землетрясений Северной и Центральной Армении за период времени 2019-2023 гг., Обнинск, “Российский сейсмологический журнал”, т. 6, N 1, 2024, с. 65–79.
23. Пашаян Р.А., Карапетян Д.К., Геворкян А.А., Карамян Р.А., Оценка гидрогеологических показателей формирования напряженного состояния земной коры территории Армении, Владикавказ, “Геология и геофизика Юга России”, т. 14, N 2, 2024, с. 61-76.
24. Aghamalyana N.R., Sargsyan A.A., Azatyan T.S., Grigoryan T.V., Kazaryan A.A., Petrosyan A.A., Gyulasaryan H.T., Kafadaryan Y.A., Nersisyan M.N., Knyazyan N.B, and Baghramyan V.V., Photocatalytic and Radiation-Optical Properties of Lead Metasilicate Obtained by the Microwave Method, “Journal of Contemporary Physics” (Armenian Academy of Sciences), 59, 2024, p p. 199-207.
25. Aghamalyan N.R., Gyulasaryan H.T., Kafadaryan E.A., Nersisyan M.N., Sargsyan A.A. & Baghramyan V.V, Optical and EPR Spectroscopy of Microwave-Modified Natural Zeolite Activated with Zinc Oxide and Silver, “Journal of Contemporary Physics”, 59, 2024, pp. 97-102.
26. Beglaryan H., Isahakyan A., Terzyan A., Stepanyan V., Elovikov D., Gusarov V., Melikyan S., Zulumyan N. Precipitation synthesis of $Zn_{2-x}Co_xSiO_4$ blue ceramic pigments: Color performance and application, “Ceramics International” 50(12), 2024, pp. 21386-21395.
27. Beglaryan H., Isahakyan A., Terzyan A., Stepanyan V., Sarkeziyan V., Zulumyan N. Nickel-doped willemite–liebenbergite composite pigments synthesis via a precipitation route involving silica hydrogel derived from serpentine minerals and its modification, “Heliyon”, Vol. 10, 2024 Issue 21, pp.1-22, DOI: 10.1016/j.heliyon.2024.e40070
28. Evstropiev S. K., Stolyarova V. L., Saratovskii A. S., Bulyga D. V., Dukelskii K. V., Knyazyan N. B., and Yurchenko D. A., Luminescent Mn^{2+} -Doped $MgO-Al_2O_3-ZrO_2-SiO_2$ Sol-Gel Materials. “Russian Journal of Inorganic Chemistry», 2024, v. 69, N 3, pp. 359–365

29. Grigoryan L., Petrosyan P., Asryan L., Knyazyan N., Petrosyan S., Differential thermal analysis of the crystallization kinetics in perlite-based nanocrystalline glass-ceramics, "Ceramics-Silikáty", 68 (3), 2024, pp. 360-365
30. Gurgenyanyan N.V., Grigoryan A.E., Kostandyan M.F., Martirosyan A.V., Vardanyan N.K., and Khachanova I. B. Petrographic, physical and chemical investigations of the perlite rock of the Aragats, "Theoretical Foundations of Chemical Engineering", 2024, Vol. 58, N 1, pp. 10-15.
31. Harutyunyan V.G., Deghoyan N.A., Mkrtchyan L.S., Amiraghyan L.A., Sargsyan N.H., Aramyan A.R., Muradyan A.A., Baghranyan V.V., Harutyunyan I.G. and Alexanyan H.A, Crystallization of SrB4O7 in a glass tape and its electrical, dielectric, ferroelectric and nonlinear optical properties, "Journal of Instrumentation", N 19, 202, pp. 41-10
32. Hayrapetyan S.S., Hayrapetyan M.S., Simonyan G.S., Margaryan L.A. , Chobanyan M.S., khachatryan H.G., Effect of cellulose functionalized with phosphoric acid on the sorption properties of sorbents based on bentonite and diatomite, "Oxidation Communications" v. 47, N 1, 2024, pp. 151-162
33. Martirosyan V. G., Sarkisova Yu. S., Kazinyan A. A. COMPARISON OF THE ION-EXCHANGE PROPERTIES OF CARBON ION-EXCHANGERS SYNTHESIZED ON THE BASIS OF APRICOT AND PEACH STONE SHELLS. Proceedings of NPUA. "Chemical and environmental technologies.", N1, 2024, pp. 9-18.
34. Pashayan R.A., Harutyunyan L.V., Tovmasyan K.G., Avetyan R.G., Spatio-temporal changes in stress and deformation of the earths crustin central Armenia."Polish journal of science", N 73, 2024, pp.15-20.
35. Sukiasyan A.R., Kroyan S.Z., Tovmaysan S.V., Margaryan A.A., Kirakosyan A.A., Comparative analysis of soil pollution in influence zone of cement plants. MIAB, Mining Informational and Analytical Bulletin, N 12, 2024, pp. 78-91.

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ ք.գ.դ. Ս.Գասպարյան
Փոխտնօրեն՝ ք.գ.թ. Ռ.Հակոբյան
Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Լ.Ներսեսյան
Էլեկտրոնային փոստ՝ nanraifok54@mail.ru, stcopc@sci.am
Կայքէջ՝ www.stcopc.sci.am

Մասնագիտական խորհուրդ 010՝ «Քիմիա»

Նախագահ՝ թղթ. անդ. Վ.Թովուլյան, գիտքարտուղար՝ ք.գ.թ. Ն.Հոբոսյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

(1-(3,4-դիմեթօքսիֆենիլ)ցիկլոպլան)մեթիլ- և (4-(3,4-դիմեթօքսիֆենիլ)տետրահիդրո-2H-պիրան-4-իլ)մեթիլամինների և բենզոդիօքսուլ-5-կարբոնաթթվի քլորանհիդրիդի ռեակցիայի միջոցով սինթեզվել են N-տեղակալված բենզոդիօքսուլ-5-կարբոքսամիդներ: Վերջիններից ֆոսֆորի օքսիքլորիդով ցիկլացմամբ ստացվել են 1-բենզոդիօքսուլ-3,4-դիհիդրոթիզոքինոլիններ, որոնք նատրիումի բորոհիդրիդով վերականգնվել են մինչև համապատասխան 4-սպիրոտեղակալված տետրահիդրոթիզոքինոլինների, իսկ դրանց մեթիլացումը բերել է N-մեթիլ ածանցյալների: Վերոնշյալ ամինների ու բենզոդիօքսուլ-5-կարբալդեհիդի փոխազդեցությամբ սինթեզվել են Շիֆի հիմքեր, որոնք նատրիումի բորոհիդրիդով վերականգնվել են մինչև համապատասխան ամիններ, որոնք էվելյեր-Քլարկի ռեակցիայի պայմաններում ենթարկվել են ցիկլացման՝ առաջացնելով 2-բենզոդիօքսուլմեթիլ տեղակալված տետրահիդրոթիզոքինոլիններ:

1-(բենզոդիօքսուլ-5-իլ)ցիկլոպլանտանի և 4-(բենզոդիօքսուլ-5-իլ)տետրահիդրո-2H-պիրան-4-կարբոնաթթուների քլորանհիդրիդների ու տարբեր դիալկիլամինաալկիլամին-

ների ու դիալկիլամինաականոլների փոխազդեցությամբ սինթեզվել են համապատասխան ամինամիդային ու ամինաէսթերային ածանցյալներ:

Նախկինում սինթեզված 4-(1,4-բենզոդիօքսան-6-իլ)տետրահիդրո-2H-պիրան-4-կարբոնաթթվի քլորանհիդրիդի ու տարբեր հիդրազիդների փոխազդեցությամբ ստացված դիացիլտեղակալված հիդրազինները ֆոսֆորի օքսիքլորիդի ազդեցության տակ ենթարկվել են ցիկլացման: Արդյունքում սինթեզվել է 1,4-բենզոդիօքսան պարունակող 1,3,4-օքսադիազոլի 2,5-երկտեղակալված ածանցյալների շարք:

1,4-բենզոդիօքսան, տետրահիդրոպիրան և 1,2,4-տրիազոլ պարունակող նոր եռացիկլիկ ածանցյալներ սինթեզելու նպատակով ուսումնասիրվել են 3-(բենզիլթիո)-5-(4-(1,4-բենզոդիօքսան-6-իլ)տետրահիդրո-2H-պիրան-4-իլ)-4H-1,2,4-տրիազոլի փոխազդեցության ռեակցիաներն ակրիլոնիտրիլի, ակրիլամիդի ու ակրիլաթթվի էթիլ էսթերի հետ: Արդյունքում ստացվել են N-տեղակալված 1,2,4-տրիազոլի ածանցյալներ: Մանիթիլ ռեակցիայի միջոցով սինթեզվել են համապատասխան N-պիպերիդինոմեթիլ- և N-մորֆոլինոմեթիլ-S-բենզիլտրիազոլներ (ղեկ՝ ք.գ.թ. Ա.Աղեկյան):

Իրականացվել են պիրիմիդինների, կոնդենսված պիրիմիդինների, քինոլինների, հիբրիդային միացությունների ազոտ պարունակող հետերոցիկլերի ու 1,3-դիազաադամանտանների հիմքի վրա և քլորամֆենիկոլ հակաբիոտիկի անալոգների ուսումնասիրություններ:

Մեկ ռեակտորային կոնդենսմամբ սինթեզվել են 6-ամինա-2-(ալկիլ-, արիլմեթիլթիո)պիրիմիդին-4(3H)ոների, 5,5-դիմեթիլցիկլոհեքսան-1,3-դիոնի և արոմատիկ ալդեհիդների նախկինում չնկարագրված 5-արիլ-8,8-դիմեթիլ-2-(ալկիլ-, արիլմեթիլ)թիո-5,8,9,10-տետրահիդրոպիրիմիդոլ[4,5-b]քինոլին-4,6-(3H,7H)-դիոններ:

Սինթեզվել են 2-արիլ (հետարիլ)-5,7-դիմեթիլ-1,3-դիազաադամանտան-6-ոներ, 2-արիլքինոլին-4-կարբոնաթթուների ամիդներ ու կարբօքսիլատներ, 2-ամինա-1-(4-նիտրոֆենիլ)պրոպան-1,3-դիոլի (տրեո-ամինի) N-ացիլացված- և N,O-դիացիլացված ածանցյալներ (քլորամֆենիկոլ հակաբիոտիկի անալոգներ), (2E)-3-արիլ-1-(4-ալկօքսիֆենիլ)պրոպ-2-են-1-ոներ և համապատասխան պիրազոլի ու պիրիմիդինի ածանցյալներ: Ընդլայնվել է π -զուգորդված շղթաներ պարունակող 2,4,6-ետտեղակալված պիրիմիդինների կառուցվածքային բազան: Ստացվել են պիրիդինի օդակ պարունակող 1,2,4-նոր տրիազոլներ, իրականացվել են SH- կամ NH-խմբերի ալկիլացումներ:

Կատարվել են սինթեզված միացությունների դոկինգ-հետազոտություններ, ուսումնասիրվել են դրանց կենսաբանական հատկությունները, մասնավորապես հակամանրէային, հակասնկային, հակաուռուցքային, հակաՄԱՕ: Հետազոտվել են պիրազոլի ու պիրիմիդինի ածանցյալների լումինիսենտ հատկությունները (ղեկ՝ ք.գ.դ. Ա.Հարությունյան):

N-տեղակալված α,β -դեհիդրոամինաթթուների հիդրազիդների հիման վրա իրականացվել են մի շարք փոխարկումներ, որոնց արդյունքում ստացվել են մոնո- և բիս-5-իմիդազոլոններ: Որոշվել են սինթեզված իմիդազոլոնների, α,β -դեհիդրոամինաթթուների ամիդների, ինչպես նաև պեպտիդների հակառադիկալային, հակախոլինէսթերազային ու ֆլուորեսցենտող հատկությունները:

Շարունակվել են Ալցհեյմերի հիվանդության բուժման համար գտնված երեք առաջատար միացությունների նախակլինիկական հետազոտությունները:

Տետրաէթօքսիսիլանի (TEOS) գլիցերինի ու 1,2-պրոպիլենգլիկոլի անալոգները՝ տետրա(2,3-դիհիդրօքսիպրոպօքսի)սիլանն ու տետրա(2-հիդրօքսիպրոպօքսի)սիլանը, առաջին անգամ օգտագործվել են հիդրօքսիլ խմբեր պարունակող պոլիդիմեթիլսիլօքսանի (PDMS-OH) կարման համար: Ցույց է տրվել, որ այս կարող ագենտներն ունեն մի շարք առավելություններ TEOS-ի նկատմամբ: Այս ճանապարհով ստացված դիկլոֆենակ

պարունակող սիլիկոնային կոմպոզիտային թաղանթները կարող են կիրառվել բժշկության մեջ որպես տրանսդերմալ թաղանթներ (պլաստիկներ) (ղեկ.՝ թղթ. անդ. Վ.Թովուզյան):

Մշակվել է 10-բենզիլթիո-5-պիպերիդինտեղակալված համակցված պիրիդո- [3',2':4,5]թիենո[3,2-*d*]պիրիմիդին-8-ոնների ստացման եղանակ: Շարունակական ռեակցիաների արդյունքում ստացվել են համապատասխան քլորո- և հիդրազինոածանցյալները, որոնց փոխազդեցությամբ օրթոմրջնաթթվի էթիլ էսթերի առկայությամբ սինթեզվել են հնգադիկ տրիազոլո[4,3-*c*]պիրիմիդիններ: Ուսումնասիրվել է Դիմրոտի վերախմբավորումն այդ համակարգերում: Ցույց է տրվել, որ նատրիումի էթիլատի և հիդրազինի ազդեցությամբ տրիազոլո[4,3-*c*]պիրիմիդինները վերախմբավորվում են իզոմեր տրիազոլո[1,5-*c*]պիրիմիդինների: Վերախմբավորման հետ միաժամանակ տեղի է ունեցել թիոբենզիլ խմբի նուկլեոֆիլ տեղակալում պիրիմիդինի օղակի երկրորդ դիրքում: Արդյունքում ստացվել են 5-էթոքսի ու 5-հիդրազինտրիազոլո[1,5-*c*]պիրիմիդինների ածանցյալներ:

Մշակվել են 2-ամինոթիենո[2,3-*c*]պիրանի ածանցյալների ստացման օպտիմալ պայմաններ, որոնց հիման վրա սինթեզվել են նոր հետերոցիկլիկ համակարգի համակցված պիրանո[4',3':4,5]թիենո[2,3-*b*]պիրիդինի ածանցյալներ՝ փոխազդեցության մեջ դնելով թիոֆենի օղակի 3-րդ դիրքում տեղակալված 2-ամինոթիենո[2,3-*c*]պիրանը ցիանքացախաթթվի էսթերի, մալոնոնիտրիլի ու ցիանացետամիդի հետ: Ցույց է տրվել, որ ռեակցիաներն ընթանում են թիոֆենի օղակի ամինոխմբի ու ցիանքացախաթթվի ածանցյալների փոխազդեցության արդյունքում միջանկյալ ոչ ցիկլիկ արդյունքների առաջացմամբ:

Մշակվել է ֆուրանի օղակ պարունակող համակցված թիենո[3,2-*d*]պիրիմիդինի հիդրազինոածանցյալի ստացման մեթոդ, որի հիման վրա սինթեզվել են համակցված տետրազոլո[1,5-*c*]-, տրիազոլո[4,3-*c*]- ու -[1,5-*c*]պիրիմիդիններ: Ուսումնասիրվել է համակցված տետրազոլո[1,5-*c*]պիրիմիդինում ազիդ-տետրազոլային տաուտոմերիայի հնարավորությունը: ՄՄՌ ¹H սպեկտրասկոպիկ հետազոտություններով հաստատվել է, որ CDCl₃-ում նկատվում են կրկնակի ազդանշաններ, ինչը վկայում է լուծույթում իզոմեր ձևերի գոյության մասին:

Իրականացված հետազոտությունների արդյունքում առաջարկվել է մեթոդ, որը նոր հեռանկարներ է բացում բազմաթիվ նոր ու յուրօրինակ հետերոցիկլիկ համակարգերի սինթեզի համար: Մեթոդի իրագործման կարևոր պայման է ամինոէսթերների վիցինալ խմբերի ու թիենո[3,2-*d*]պիրիմիդինների 3-րդ դիրքում տեղակալված առաջնային ամինների առկայությունը:

Թիենո[2,3-*b*]պիրիդինների ամինոէսթերների ու քլորքացախաթթվի քլորանհիդրիդի փոխազդեցության արդյունքում ստացված միացությունները ռեակցվել են տարբեր ամինների հետ: Սինթեզված թիենո[2,3-*b*]պիրիդինների ամինոածանցյալները հիդրազին հիդրատի ազդեցությամբ ցիկլվել են թիենո[3,2-*d*]պիրիմիդինների: Այնուհետև դրանց հետագա ցիկլումը մրջնաթթվի օրթոէսթերի հետ հանգեցրել է նոր, յուրօրինակ հետերոցիկլիկ համակարգերի՝ թիենո[3',2':4,5]պիրիմիդո[2,1-*f*][1,2,4]տրիազինների առաջացմանը: Սա յուրահատուկ է նրանով, որ վերջին երկու ցիկլերի համակցությունն ինքնին նոր հետերոցիկլիկ համակարգ է (ղեկ.՝ ք.գ.դ. Ե.Պարոնիկյան):

Սինթեզվել են արտահայտված հանգստացնող, հակացնցումային ու հիպնոտիկ հատկություններով հայտնի թիոբարբիտուրաթթվի նոր 5-արիլիդեն ածանցյալներ՝ մի դեպքում արոմատիկ ալդեհիդների, իսկ մյուսում արոմատիկ դիալդեհիդների հետ կոնդենսացման արդյունքում:

Նախապես սինթեզված 7-նիտրո-1,3,5-տրիազաադամանտանը վերականգնվել է 7-ամինո-1,3,5-տրիազաադամանտանի, որը ռեակցվել է տարբեր տեղակալիչներ պարու-

նակող ինդոլ-3-ալդեհիդների հետ՝ արդյունքում առաջացնելով տրիազաադամանտանների նոր ածանցյալներ:

Ակսվել են ազաադամանտանների ու բիսպիրոլինների հիման վրա նոր ամֆիֆիլային մոլեկուլների սինթեզի աշխատանքները: Սինթեզված համապատասխան դիազա- ու տրիազաադամանտանները ռեակցվելով բենզիլ- ու ալկիլհալոգենիդների հետ՝ բերել են սպասված ամֆիֆիլային միացությունների (ղեկ.՝ ք.գ.դ. Ա.Գասպարյան):

Ցույց է տրվել, որ 3-րդ դիրքում ալիլ ու մետալիլ ռադիկալներով տեղակալված 2-թիոքսո-2,3-դիհիդրոբենզո[*h*]խինազոլինների ու ամինային միացությունների փոխազդեցությամբ կարող են ստացվել տարբեր կառուցվածքի միացություններ: Նշված միացությունների կոնդենսումը հիդրազինի հետ բերում է սպասվելիք 2-հիդրա-զինո-միացությունների առաջացմանը, մինչդեռ վերոհիշյալ թիոքսոբենզոխինազոլինների փոխարկումները 2-ամինոէթանոլի, 3-ամինոպրոպանոլի ու բենզիլ ամինի հետ ընթանում են անոմալ ձևով: Եթե ամինոէթանոլի ու ամինոպրոպանոլի դեպքում թիոքսո խմբի տեղակալումն ամինային խմբով ուղեկցվում է 3-րդ դիրքի տեղակալիչի պոկմամբ, ապա բենզիլամինի դեպքում վերջինս հանդես է գալիս որպես կատալիզատոր, և ռեակցիաների արդյունքում առաջանում են թիազոլ[2,3-*b*]խինազոլիններ: Առաջարկվել է 3-ալիլ (մետալիլ) բենզո[*h*]խինազոլինների ու ամինային միացությունների փոխազդեցության ընդհանուր սխեմա:

Էթիլ 4'-ամինո-1'*H*-սպիրո[ցիկլոհեպտան-1,2'-նավթալին]-3'-կարբոքսիլատը մեթանոլի միջավայրում փոխազդեցության մեջ է դրվել 3-մեթիլֆենիլ- ու 3-մեթոքսի-ֆենիլիզոթիոցիանատների հետ: Ստացված թիոմիզանյութի ածանցյալները, առանց ռեակցիայի միջավայրից անջատելու, կալիումի հիդրօքսիդի առկայությամբ ցիկլացվել են 3-տեղակալված 2-թիոքսո-2,3-դիհիդրո-1'*H*-սպիրո[բենզո[*h*]խինազոլին-5,1'-ցիկլոհեպտան]-4(6*H*)-ոնների: Վերջիններս բացարձակ էթանոլի միջավայրում, կալիումի հիդրօքսիդի առկայությամբ ալկիլացվել են տարբեր կառուցվածքի հալոգենիդներով, ինչը հանգեցրել է նպատակային 3-արիլ-2-թիոտեղակալված 3'*H*-սպիրո[բենզո[*h*]խինազոլին-5,1'-ցիկլոհեպտանների ստացմանը: Ուսումնասիրվել է սինթեզված միացությունների հակամանրէային ակտիվությունը՝ օգտագործելով գրամ դրական ստաֆիլակոկեր ու գրամ բացասական ցուպիկներ, ինչպես նաև հակառուցքային հատկությունները մկների փոխպատվաստված սարկոմա 180 ուռուցքային մոդելի վրա (ղեկ.՝ ք.գ.դ. Ա.Մարկոսյան):

Իրականացվել են Կենտրոնի լաբորատորիաներում սինթեզված տարբեր քիմիական կառուցվածքներ ունեցող 241 միացության առաջնային կենսաբանական հետազոտություններ, այդ թվում՝ հակամանրէային 127, հակաօքսիդանտային 19, հակաուռուցքային 48, հակաբորբոքային ու ցավազրկող 12, հակաառիթմային 10, ինչպես նաև ուսումնասիրվել է 25 միացության ազդեցությունն ուռուցքային ԴՆԹ-ի մեթիլացման մակարդակի վրա *in vitro* պայմաններում: Ուսումնասիրված միացությունները հիմնականում չեն ցուցաբերել արտահայտված ակտիվություն հետազոտությունների նշված ուղղություններում:

Պարբերաբար իրականացվել է Կենտրոնում արտադրվող դեղանյութերի ու պատրաստի դեղաձևերի որակի կենսաբանական հսկում՝ թունականության, արդյունավետության, մանրէազերծության դեղագրքային փորձարկումներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ռ. Մուրադյան):

Ուսումնասիրվել են Կենտրոնում սինթեզված 274 քիմիական միացության բժշկական կենսաբանական հատկությունները: Հակացնցումային ու հոգեմետ հատկությունների ուսումնասիրության են ենթարկվել մորֆոլինոպիրանո(թիենո)պիրիդոպիրիմիդինի 25, մորֆոլին-կարբօքսամիդի ու նաֆտիրիդինի 14, պիրանոթիենոպիրիմիդինի 5, պիրազոլոնաֆտիրիդինի 15, դիազաադամանտանի 6 ածանցյալներ: Որոշ միացություններ ցուցաբերել են բարձր ակտիվություն, մասնավորապես մորֆոլինոպիրանո(թիե-

նո)պիրիդոպիրիմիդինի ածանցյալները՝ 60-80%: Հոգեմետ հատկություններն ուսումնասիրվել են տարբեր նեյրոտրոպային թեստերով: Առանձնացվել է 9 միացություն հետազախորը ուսումնասիրությունների համար:

Իրականացվել են Կենտրոնում սինթեզված 82 միացության հակաօքսիդանտային հատկությունների ուսումնասիրություններ գլխուղեղի ու լյարդի հյուսվածքներում ֆոսֆոլիպիդների որակական ու քանակական փոփոխությունները հայտնաբերելու համար: Հետազոտվել են 69 քիմիական միացության հակաՄԱՕ հատկությունները: Ուսումնասիրվել է ավելի քան 48 քիմիական միացության ազդեցությունն առնետների սերմնատար ծորանների ադրենոլնկալիչների վրա սիմպատո-ադրենալային եղանակով, հակահիպոքսիկ ազդեցությունը հիպոքսիկ հիպոքսիայի տարբեր մոդելներով, կենդանիների արյան հեմոդինամիկայի վրա, «Sistola phlogiston» սարքի օգնությամբ: Առավել ակտիվություն ցուցաբերած միացություններն առանձնացվել են հետազախորը ուսումնասիրությունների համար:

Մշակվել է արյան ճնշման կարճաժամկետ կարգավորման մեխանիզմի՝ բարոռեֆլեքսի նոր մոդել, որը կապված է հորիզոնական մակերեսի երկայնքով մեխանիկական բլրկի շարժման հավասարումների հետ: Ապացուցվել է «Բարոռեցեպտորային համալիրի ավտոմատ մոդելի կոնվերգենցիայի մասին» թեորեմը:

Իրականացվել են GART 5272, GART 7782, GART 76, GART 8398 քիմիական միացությունների նյարդապաշտպանիչ հատկությունների հիստոպաթոլոգիական ուսումնասիրություններ կորագլով ինդուցված ցնցումների պայմաններում: Իրականացվել են TVA, TVS, TVV միացությունների ավելի խորը հետազոտություններ ֆլուորեսցենտային իմունոցիտոքիմիական եղանակով:

Իրականացվել են Գանգլերոն դեղամիջոցի պիրոգեն հատկությունների ուսումնասիրություններ, դեղաձևի պարկուճների պատրաստում (դեկ.՝ կ.գ.թ. Հ.Գասպարյան):

Շարունակվել է դիալիզ(4-հիդրօքսիբութ-2-ինիլ)(3-ֆենիլպրոպ-2-ենիլ)ամոնիում բրոմիդների վարքի ուսումնասիրումը ջրահիմնային պայմաններում: Պարզվել է, որ ի տարբերություն նախկինում իրականացված հետազոտությունների՝ 3-ֆենիլպրոպ-2-ենիլ խումբը հանդես չի գալիս որպես դիենային բաղադրիչ, այլ դիալիզ(4-հիդրօքսիբութ-2-ինիլ)(3-ֆենիլպրոպ-2-ենիլ)ամոնիում բրոմիդների դեպքում տեղի է ունենում ընդունող ու միգրվող խմբերում ռեակցիոն կենտրոնների տեղաշարժ՝ հանգեցնելով սթիվենսյան վերախմբավորման, ապա՝ ներմոլեկուլային ցիկլացման ու վերախմբավորման-ճեղքման:

Իրականացվել են β,γ-չհագեցած խմբի հետ մեկտեղ տարբեր ենինային բաղադրիչներ պարունակող չորրորդային ամոնիումային աղերի հիմքով կատալիզվող ներմոլեկուլային ցիկլացման մեխանիզմի պարզաբանման ուսումնասիրություններ ինչպես փորձնական, այնպես էլ ֆիզիկաքիմիական եղանակներով:

ԵՊԲՀ ֆարմացիայի ամբիոնում իրականացվել է 2,2-դիմեթիլ-6-բրոմբենզո- [ֆ]իզոինդոլինիում բրոմիդի հականոցիցեպտիվ ակտիվության ուսումնասիրում: Պարզվել է, որ 2,2-դիմեթիլ-6-բրոմբենզո[ֆ]իզոինդոլինիում բրոմիդը, ինչպես նաև նախկինում հետազոտված 2,2-դիպրոպիլ-6-բրոմբենզո[ֆ]իզոինդոլինիում, 6-բրոմ-1,3-դիհիդրոսպիրոբենզո[ֆ]իզոինդոլապերիդինիում ու -մորֆոլինիում բրոմիդներն օժտված են հականոցիցեպտիվ ակտիվությամբ: Կատարվել է նաև այդ միացությունների՝ ագետիլխոլինային ընկալիչների հանդեպ խնամակցության գնահատում (դեկ.՝ ք.գ.դ. Է.Զուխաջյան):

Մշակվել է ֆենիլացետիլենի, ինչպես նաև N- և C- տեղակալված ու չտեղակալված պիրազոլային ածանցյալների ու մոլեկուլային յոդի փոխազդեցության արդյունավետ եղանակ կադմիումի (II) ագետատի առկայությամբ, որի արդյունքում ստացվել են համապատասխան միա-, երկ- ու եռյոդաածանցյալներ: Օպտիմալացվել է լուծիչների դերն ու

ռեագենտների մոլային հարաբերակցությունը: Պարզվել է, որ ստացված յոդոֆենիլացետիլենի եռակի կապը հեշտությամբ մերկուրացվում է քացախաթթվում սնդիկի (II) ացետատի առկայությամբ, առաջանում է սնդիկօրգանական ինտերմեդիատ, որի դեմերկուրացումը մոլեկուլային յոդով հանգեցնում է դիյոդոֆենիլվինիլացետատի ստացմանը: Յոդոֆենիլացետիլենի օքսիդիչ դեհալոդիմերման արդյունքում դիլիթիումի տետրաքլորոկուպրատի առկայության պայմաններում ստացվել է 1,4-դիֆենիլբուտա-1,3-դիին:

Պիրազոլային ածանցյալների օրինակով ցույց է տրվել, որ կադմիումի (II) ացետատի հարուցմամբ առաջացած էլեկտրոֆիլային յոդի գրոհման թիրախ է օդակի C-4 դիրքը: Պարզվել է, որ պիրազոլների ռեակցիոնունակությունը զգալիորեն մեծանում է էլեկտրոնոդոնոր ավիլ խմբերի ազդեցությամբ և նվազում N-պրոպարգիլ տեղակալիչի դեպքում: N-պրոպարգիլպիրազոլի օրինակով իրականացվել է տերմինալային եռակի կապի ջրածնի ատոմի տեղակալումը յոդով, ստացված յոդալկինների էլեկտրոֆիլային յոդացումը, ինչպես նաև հիմնավորվել է N-պրոպարգիլպիրազոլից եռյոդտեղակալված ածանցյալների *one pot* սինթեզի հնարավորությունը: Ցույց է տրվել, որ մեթիլ խմբերի ներմուծումը N-պրոպարգիլտեղակալված պիրազոլի օդակ նպաստում է C4 դիրքում տեղակալման ռեակցիաների ընթանալուն ու պիրազոլի օդակի ուղղակի յոդացմանը: N- ու C-ավիլտեղակալված ու չտեղակալված պիրազոլների ու յոդի փոխազդեցությունը կադմիումի (II) ացետատի առկայությամբ իրականացնելիս ևս արձանագրվել է միայն օդակի C-4 դիրքի յոդացում (դեկ.՝ ք.գ.թ. Հ.Սարգսյան):

Նոր, այլ եղանակներով դժվարամատչելի կենսաակտիվ նյութերի ստացման նպատակով իրականացվել է մի շարք բազմատեղակալված 1,2,4-տրիազոլների սինթեզ 1,4,6-եռմեթիլ-2-(էթօքսիկարբոնիլ)մեթիլպիրիմիդինիումի յոդիդի ու մոնոտեղակալված հիդրազինների փոխազդեցությամբ: Սինթեզվել են (1-ավիլ-5-մեթիլ-1,2,4-տրիազոլ-3-իլ)-քացախաթթվի էթիլ էսթերներ, ինչպես նաև համապատասխան հիդրազիդներ, N-4 դիրքում N-ավիլացված յոդիդներ:

Շարունակվել են պիրիմիդինային օդակում մեթիլ խմբեր ընդգրկող, համակցված 1,2,4-տրիազոլ[1,5-*a*]պիրիմիդինների սինթեզի աշխատանքները:

Հակաքաղցկեղային ակտիվության հետազոտման նպատակով նախկինում սինթեզված որոշ նյութերի նմուշներ փոխանցվել են Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի համալսարան (դեկ.՝ թղթ. անդ. Գ.Դանագուլյան):

Շարունակվել են ֆոսֆորտեղակալված ազիրիդինների ու դոնորակցեպտորային ցիկլոպրոպանների սինթեզի հետազոտությունները: Ցույց է տրվել, որ էթիլենդիամինի, ինչպես և առաջնային ավիլամինների փոխազդեցությունը (1,2-դիբրոմէթիլ)(դիֆենիլ) ֆոսֆինօքսիդի հետ բերում է բիսֆոսֆինօքսիդի առաջացմանը, որը հաստատում է յուրաքանչյուր ամինոխմբի առանձին ազդեցությունը: Նշված ֆոսֆինօքսիդի փոխազդեցությամբ ցիան-ակտիվացված CH-թթուների, մասնավորապես ցիանքացախաթթվի էսթերի, բենզիլցիանիդի ու ցիանքացախաթթվի ամիդի հետ սենյակային ջերմաստիճանում, հիմքի առկայությամբ ստացվում են ֆոսֆորիլտեղակալված ցիկլոպրոպաններ: Ցույց է տրվել, որ ինչպես ֆոսֆինօքսիդը, այնպես էլ (1,2-դիբրոմէթիլ)(դիէթիլ)ֆոսֆոնատը նույն պայմաններում հեշտությամբ փոխազդում է ացետիլացետոնի, ացետոքացախաթթվի- ու մալոնաթթվի- էսթերների հետ՝ առաջացնելով ֆոսֆոնիլտեղակալված ցիկլոպրոպաններ:

Իրականացվել է β-արոհիվինիլտրիֆենիլֆոսֆոնիումային աղերի փոխազդեցությունը տարբեր նուկլեոֆիլների հետ՝ զարգացնելով բինուկլեոֆիլների հետ վերը նշված աղերի հատկությունների ուսումնասիրությունը, դրանց հիման վրա սինթեզել կենսաբանական ակտիվության լայն սպեկտր ունեցող հետերոցիկլիկ միացություններ: Այս հետա-

զոտությունների սահմաններն ընդարձակելու համար ուսումնասիրվել է ցիկլիկ ֆրագմենտ պարունակող 1,3-դինուկլեոֆիլային ամիդինի՝ 2-ամինոպիրիդինի ազդեցությունը: Առաջարկվել է ընթացող ռեակցիաների այլընտրանքային սխեմա, ըստ որի փոխազդեցությունը սկսվում է կարբոնիլ խմբի վրա նուկլեոֆիլի հարձակումով՝ առաջացնելով [(2-(4-տեդակալված)-արիլ-3-իմիդազոլ-[1,2- α]-պիրիդին-3-իլ)մեթիլ]տրիֆենիլֆոսֆոնիում բրոմիդներ (դեկ.՝ ք.գ.թ. Գ. Գասպարյան):

Իրականացվել է նիտրոպիրազոլների տրանսվինիլացում վինիլացետատով սնդիկի ացետատի ներկայությամբ ամրացված պոլիվինիլազոլների մակերեսին: Ցույց է տրվել, որ պոլիվինիլազոլները, մասնավորապես պոլիվինիլիմիդազոլն ու պոլիվինիլտրիազոլը կարող են հանդես գալ որպես կրիչներ սնդիկի ացետատի համար, և ստացված կոմպլեքսները կարող են կիրառվել որպես հետերոգեն կատալիզատորներ տրանսվինիլացման ռեակցիաներում վինիլացետատ-ազոլ համակարգերում: Ցույց է տրվել, որ ստացված կոմպլեքսները հաջողությամբ օգտագործվում են (մոտ 6 անգամ) տրանսվինիլացման ռեակցիաներում նիտրոզոլկարբոնաթթվի մեթիլ էսթերների ու վինիլացետատի համակարգերում: Նույն կատալիզատորի 6 անգամ կիրառումը կրճատում է հետադարձ ջրերի աղտոտումը թունավոր սնդիկի իոններից:

Ուսումնասիրվել է իմիդազոլի, 1,2,4-տրիազոլի ու բենզոլտրիազոլի փոխազդեցությունը կրոտոնաթթվի հետ լուծիչ/կատալիզատոր համակարգի բացակայությամբ: Ի տարբերություն պիրազոլների, որտեղ ռեակցիան ավտոկատալիտիկ է ու բարձր ելքեր են ստացվում, ազոլների ու կրոտոնաթթվի փոխազդեցության արդյունքում ստացված վերջանյութերի ելքերը համեմատաբար ցածր են: Ցույց է տրվել, որ իմիդազոլի դեպքում մեծ դեր է խաղում հիմնայնությունը, որը բերում է դրա քվանտերնիզացիային կրոտոնաթթվի հետ՝ իմիդազոլի ցիանամատի առաջացմամբ: 1,2,4-տրիազոլի ու բենզոտրիազոլի դեպքում ցածր ելքերը պայմանավորված են ռեակցիաների ոչ ավտոկատալիտիկ բնույթով ու ջերմաստիճանով:

Սինթեզվել են պիրիդին և եռլոնդեսացված համակարգեր պարունակող γ -լակտոնային օղակների նոր ածանցյալներ: Առաջին փուլում սինթեզվել է 2-ացետիլֆուրանային օղակը, հաջորդ փուլում Կնևենագելի ռեակցիայի արդյունքում ստացվել են 3-տեդակալված լակտոններ, որոնք տաքացվել են դիմեթիլֆորմամիդ/դիմեթիլացետատի հետ, և ստացված օղակները, փոխազդելով համապատասխան ամինների հետ, ստացվել են նպատակային միացություններ, որոնք պարունակում են լակտոնային ու պիրիդինային օղակներ: $R=H$ դեպքում, հիմքերի ներկայությամբ, տաքացմամբ ստացվում են եռլոնդեսված համակարգեր (դեկ.՝ ք.գ.դ. Հ.Աթթարյան):

Կատարվել են տարբեր ինֆեկցիոն հիվանդությունների իմունոանալիզում կիրառվող լատեքսների սինթեզման որոնողական աշխատանքներ: Մշակվել է պոլիստիրոլի մոնոդիսպերս լատեքսի վերարտադրելի սինթեզի սկզբունքորեն նոր եղանակ, որն արտոնագրվել է (դեկ.՝ ք.գ.դ. Ա.Հովհաննիսյան):

Շարունակվել են էլեկտրակցեպտոր խմբերով ակտիվացված էլեկտրաֆիլ ալկենների (Միքայելի ակցեպտոր) ու նուկլեոֆիլների ($C=H$ թթու) փոխազդեցության աշխատանքները: Հաստատվել է, որ արիլմեթիլդեն-ցիանքացախաթթվի էսթերների ու N,N -դի(2-մեթօքսիֆենիլ)մալոնամիդի փոխազդեցությունը տրիէթիլամինի ներկայությամբ ընթանում է «բացարձակ» էթանոլում թե՛ սենյակային ջերմաստիճանում, թե՛ եռացման պայմաններում: Համաձայն 1H , ^{13}C սպեկտրասկոպիայի տվյալների՝ Միքայելի միջանկյալ արգասիքի ռեզիոսելեկտիվ ներմոլեկուլային հետերոցիկլման արդյունքում ստացվում են էթիլ 4-արիլ-2-իմինո-1-(2-մեթօքսիֆենիլ)-5-(2-մեթօքսիֆենիլկարբամոիլ)-6-օքսոպիպերիդին-3-կարբօքսիլատներ 73–90% ելքերով:

Իրականացվել է էթիլ 2-ցիանո-3-էթօքսիակրիլատի ու N^1, N^6 -դիարիլմալոնամիդների փոխազդեցությունը բացարձակ էթանոլում և՛ տրիէթիլամինի, և՛ նատրիումի էթիլատի առկայությամբ ինչպես սենյակային ջերմաստիճանում, այնպես էլ եռացման պայմաններում: Սինթեզվել են պիրիդինի ածանցյալներ՝ էթիլ 2-ամինո-1-(արիլ)-5-(արիլկարբամոյլ)-6-օքսո-1,6-դիհիդրոպիրիդին-3-կարբօքսիլատներ 20–77% ելքերով: Ստացված բոլոր միացությունների կառուցվածքը հաստատվել է ԻԿ, ՄՄՌ (^1H , ^{13}C), ինչպես նաև մաս-սպեկտրասկոպիայի տվյալներով: Ուսումնասիրվել է ստացված որոշ միացությունների հակաբակտերիալ ակտիվությունը: Ցույց է տրվել, որ սինթեզված միացությունները ցուցաբերում են չափավոր հակաբակտերիալ ակտիվություն (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Խաչատրյան):

Իրականացվել է որպես ընդունող 4-(ալիլօքսի)բութ-2-են-1-իլ ու որպես միգրվող մեթօքսի, ֆենացիլ, պ-քլորֆենացիլ խումբ պարունակող մորֆոլինիումային ու պիպերիդինիումային աղերի սինթեզ, Ստիվենսի վերախմբավորում կալիումի հիդրօքսիդի ազդեցությամբ բացարձակ բենզոլում ամինոկետոնների առաջացմամբ:

Իրականացվել են պրոպիլ, իզոպրոպիլ, բուտիլ խմբեր ունեցող N-ալկիլ-N,N-դի(պրոպ-2-ին-1-իլ)պրոպ-2-ին-1-ամոնիումային աղերի բրոմացման ռեակցիաներ բրոմացված ցիկլման արգասիքի ստացմամբ: Ելային երրորդային դիպրոպարգիլային ամինները ստացվել են միջֆազային կատալիզի պայմաններում:

Տարբեր չիազեցած ֆունկցիոնալ տեղակալված ամինների հիման վրա ալկիլ հալոգենիդների ու քլորքացախաթթվի ալկիլ էսթերների փոխազդեցությամբ սինթեզվել են չորրորդային աղեր: Պարզվել է, որ 10-12 ածխածին պարունակող ալկիլ ու ալկօքսի խմբեր պարունակող աղերն ունեն բարձր հակամանրէային ակտիվություն գրամ դրական ու գրամ բացասական բակտերիաների, սնկերի նկատմամբ, N-(3,5-դիմեթիլբենզիլ)-2-մեթօքսի-N,N-դիմեթիլ-2-օքստէթան-1-ամոնիումի քլորիդները (C6-C12) ցուցաբերում են կարդիոտրոպ ակտիվություն (ղեկ.՝ ք.գ.թ. Վ. Հովսեփյան):

Enraf Nonius CAD-4 և Rigaku XtaLAB Synergy-S դիֆրակտոմետրերով իրականացվել է 30 բյուրեղական փորձանմուշի ուսումնասիրություն: Ստացված արդյունքների հիման վրա կատարվել է կառուցվածքի վերծանում, ճշգրտում, վերլուծություն: Արդյունքները հիմնականում հաստատել են ենթադրյալ կառուցվածքները:

Waters XEVO G3 QTOF հեղուկ քրոմատոգրաֆ մասս-սպեկտրոմետրով ու Waters GC Agilent-TQ-GC XEVO գազ քրոմատոգրաֆ մասս-սպեկտրոմետրով կատարվել է շուրջ 600 փորձանմուշի ուսումնասիրություն: Ստուգվել են նմուշների մաքրության աստիճանը, կառուցվածքային համապատասխանությունը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Կարապետյան):

Ուսումնասիրվել են կոբալտի ու մանգանի պորֆիրինների նիտրոկոմպլեքսների ռեակցիաներն ուժեղ օքսոֆիլ հանդիսացող տրիմեթիլֆոսֆինի հետ: Իրականացվել են $\text{Co}(\text{Por})\text{NO}_2$ ու $\text{Mn}(\text{Por})\text{ONO}$ ռեակցիաները $\text{P}(\text{Me})_3$ -ի հետ: Արդյունքները ցույց են տվել, որ կոբալտի դեպքում գոյանում է $\text{Co}(\text{Por})((\text{P}(\text{Me})_3)^{2+}(\text{NO}_2)^-)$ իոնային կոմպլեքսը, իսկ մանգանի դեպքում տեղի է ունենում թթվածնի ատոմի անցում և $\text{Mn}(\text{Por})(\text{NO})$ ու $\text{O}=\text{P}(\text{Me})_3$ նիտրոգիլային կոմպլեքսի գոյացում: Այդ միացությունների առաջացումը հաստատվել է ինֆրակարմիր սպեկտրասկոպիայի միջոցով ^{15}NO -ով պիտակավորված իզոտոպով:

Գրանցվել են ՀՀ քիմիկոսների սինթեզած միացությունների մոտավորապես 1400 ԻԿ ու էլեկտրոնային կլանման սպեկտրներ (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Մամյան):

Շարունակվել են հանրապետության տարբեր գիտական ու արտադրական կազմակերպություններում սինթեզված նոր միացությունների կառուցվածքային ուսումնասիրությունները միջուկային մագնիսական ռեզոնանսի (ՄՄՌ) սպեկտրասկոպիայի մեթոդով: Varian Mercury 300 ու Bruker AvanceNeo 400 սպեկտրոմետրերի հուսալի շահագործման արդյունքում, օգտագործելով ՄՄՌ ^1H , ^{13}C , ^{31}P , ^{15}N միաչափ, ինչպես նաև մի

շարք ժամանակակից կորելյացիոն երկչափ մեթոդներ՝ COSY, NOESY, HMQC, HMBC, DEPT, իրականացվել են Հայաստանի քիմիական լաբորատորիաներում սինթեզված ավելի քան 4000 նոր միացության կառուցվածքների ու մաքրության ուսումնասիրություններ: Այդ հետազոտությունները թույլ են տվել պարզել ստացված միացությունների կառուցվածքային առանձնահատկությունները, քիմիական կապերի երկրաչափությունը, երկրաչափական իզոմերների նույնականացումը, դրանց քանակների որոշումը: Իրականացվել են նիկելային կոմպլեքսների ու դրանցից անջատված օպտիկապես ակտիվ նոր ամինաթթուների, դրանց հիման վրա սինթեզված նոր պեպտիդների ՄՄՄ սպեկտրների գրանցման ու վերլուծության մեծ ծավալի աշխատանքներ (ղեկ.՝ ք.գ.թ. Հ.Փանոսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Մշակվել է *N,S*-տեղակալված համակցված թիենո[3,2-*d*]պիրիմիդինների ու ամինո-տեղակալված թիենո(ֆուրո)[3,2-*d*]պիրիմիդինի ածանցյալների ստացման եղանակ: Իրականացվել է նոր հետերոցիկլիկ համակարգերի համակցված թիենո[3,2-*d*][1,3]օքսազինների սինթեզ, ուսումնասիրվել է դրանց փոխազդեցությունը առաջնային ամինների հետ: Հաստատվել է ռեակցիայի մեխանիզմը:

Մշակվել են նոր հետերոցիկլիկ համակարգերի՝ պիրազոլ[4,3-*e*]տետրազոլ[1,5-*a*]պիրիդինի, տետրազոլ[1,5-*a*]թիենո[3,2-*e*]պիրիդինի, տետրազոլպիրազոլ[1,5-*a*]պիրիմիդինի ու թիենո[3,2-*d*][1,2,4]տրիազինի ածանցյալների ստացման եղանակներ:

Մոլեկուլային մոդելավորմամբ կատարվել է սինթեզված միացությունների կենսա-բանական ակտիվության գնահատում: Համագործակցության շրջանակում իրականացված հոգեմետ ազդեցության ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվել են բարձր հակատազնապային ու հակադեպրեսսանտ ակտիվությամբ օժտված միացություններ, որոնք ենթարկվել են դոկինգ հետազոտությունների (ղեկ.՝ ք.գ.դ. Ե.Պարոնիկյան):

Մշակվել է CO₂-ի կլանման մեխանիզմ ամինների ու ամինաթթուների միջոցով: Ուսումնասիրվել է բնական լույսի ու մութ պայմանների ազդեցությունը փորձերի ընթացքի վրա, ինչպես նաև փորձերն իրականացվել են 15°C ու 30°C ջերմաստիճանների միջա-վայրում:

Ուսումնասիրվել է մոտ 30 ամին, 20 ամինաթթու: Ընտրվել են տարբեր հարա-բերակցությամբ ամինների ու ամինաթթուների խառնուրդներ, ինչպես նաև ուսումնասիրվել է ածխաթթու գազի կլանողականությունն ամինաթթուներում՝ կախված հիմքի բնույթից (անօրգանական KOH, օրգանական առաջնային ու երկրորդային ամիններ): Ցույց է տրվել, որ առաջացած միացությունները բավականին կայուն են ջերմաստիճանային փոփո-խությունների նկատմամբ, բայց ուժեղ հիդրոսկոպիկ են (ղեկ.՝ ք.գ.թ. Ա. Հարությունյան):

Տրիազոլ[3,4-*a*]-2,7-նաֆթիրիդինների 5-քլոր ածանցյալների հիման վրա սինթեզվել են թիենո[2,3-*c*][1,2,4]տրիազոլ[3,4-*a*]-2,7-նաֆթիրիդիններ: Այնուհետև ամինոէսթերների ու ֆորմամիդի փոխազդեցությունը հանգեցրել է հնգացիկ հետերոցիկլիկ համակարգերի՝ պիրիմիդո[4',5':4,5]թիենո[2,3-*c*][1,2,4]տրիազոլ[3,4-*a*]-2,7-նաֆթիրիդինների ստացմանը: Սինթեզվել են նաև վերջիններիս ֆունկցիոնալ *N*-ալկիլ, ամինո- ու հիդրազինածանցյալներ: Այս շարքի բոլոր սինթեզված միացությունների սպեկտրոսկոպիկ հետազոտությունները ցույց են տվել, որ հետագա ռեակցիաներում չորրորդ օղակի փակումից հետո Դիմրոտի վերախմբավորում չի նկատվում: Ամենայն հավանականությամբ այս հանգամանքը կարելի է բացատրել տարածական դժվարություններով (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Սիրականյան):

Ստևիոլի կետոնային ու կարբօքսիլային խմբերի փոխարկումների հաշվին իրակա-նացվել է դիտերպենային շարքի միացությունների սինթեզի մեթոդների մշակում, որոնք

հնարավորություն են տվել ստանալ բենզո[*h*]խինազոլինային բաղադրիչ պարունակող նոր համակարգեր՝ միացված դիտերպեն իզոստեմիոլին էսթերային կամ ամինային խմբերով: Սինթեզված միացությունները ցուցաբերել են հակաուռուցքային ու հակաբակտերիալ հատկություններ (ղեկ.՝ ք.գ.դ. Ա.Մարկոսյան):

Ուսումնասիրված հիդանտինների ու դրանց լիթումական ածանցյալների շարքում բացահայտվել են բարձր ակտիվությամբ հակաէպիլեպտիկ միացություններ, որոնք ունեն նաև զուգորդված հոգեմետ հատկություններ՝ տրանկվիլիզացնող ու հակադեպրեսանտ: Պաթոհիստոլոգիական հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ դրանցից 3 ունեն նաև նյարդապաշտպանիչ ազդեցություն, ավելի արդյունավետ են, քիչ նեյրոթունավոր, ավելի քիչ կողմնակի հատկություններով համեմատական դեղանյութ՝ կառուցվածքային անալոգ Դիլանտինից: Հետազոտված միացությունները կարող են կիրառվել բժշկական պրակտիկայում որպես հակաէպիլեպտիկ միացություններ՝ օժտված հոգեմետ հատկություններով (ղեկ.՝ կ.գ.դ. Ռ.Պարոնիկյան):

Մշակվել է լոլիկի ցեցի *Keifera lycopersicella* սեռական ֆերոմոնի հիմնական ակտիվ բաղադրամասերի՝ (E),(Z)-տրիդեց-4-են-1-իլ ացետատների սինթեզի եղանակ երկսինտոն C10 + C3 մարտավարությամբ:

Որպես ելանյութ կիրառվել է դեցին-1-ը, որը կադմիումի(II) ալցետատի առկայությամբ հաջողությամբ յոդացվել է ու ստացվել է 1-յոդդեց-1-ին (C10)՝ համաձայն բազային հետազոտությունների շրջանակում մշակված եղանակի: Որպես C3 բաղադրիչ կիրառվել է 2-(3-բրոմպրոպօքսի)տետրահիդրո-2H-պիրանը, որից ստացվել է Գրինյարի համապատասխան ռեագենտը: C10+C3 զուգակցումն իրականացվել է տետրահիդրոֆուրանում Na/հեղուկNH₃ համակարգի կիրառմամբ, սինթեզվել է (E),(Z)-2-(տրիդեց-4-են-1-իլօքսի)տետրահիդրո-2H-պիրանների խառնուրդ 78/22 հարաբերակցությամբ: Հավանաբար հիդրման արդյունքում տեղի է ունեցել E-կոնֆիգուրացիայի մասնակի դարձ: Ստացված խառնուրդն աղիացվել է AcOH/AcCl 10/1 հարաբերակցությամբ, և ստացվել է նպատակային ֆերոմոնը:

Հունիս-սեպտեմբեր ամիսներին *Keifera lycopersicella*-ի տարածվածությունը բացահայտելու նպատակով ՀՀ տարբեր մարզերում իրականացվել են դաշտային փորձարկումներ, որոնք վկայում են, որ վնասատուն ոչ միայն առկա է Հայաստանում, այլև ունի որոշակի տարածում մորմազգիների մշակությամբ զբաղվող մարզերում: Սա այդ վնասատուի առաջին հայտնաբերումն է ՀՀ տարածքում (ղեկ.՝ ք.գ.թ. Հ.Սարգսյան):

Անցումային մետաղներով կատալիզվող ռեակցիաները թույլ են տվել իրականացնել տարբեր տեսակի C-H ու N-H ֆունկցիոնալացում, որոնք հիմնականում իրականացվել են թանկարժեք մետաղներով՝ պալադիումով, ռութենիումով, ոսկով: Հետազոտություններն ավելի մատչելի ու հասանելի դարձնելու համար համադրել են ֆոտոքիմիական մեթոդով իրականացվող փոխարկումների հնարավորությունները, որը թույլ է տալիս իրականացնել փոխարկումներ սենյակային ջերմաստիճանում, ավելի մատչելի մետաղների՝ պղինձ, կոբալտ, նիկել, կիրառմամբ կամ դրանց լրիվ բացակայության պայմաններում: Որպես մոդելային ռեակցիա կարելի է ներկայացնել Հեկի ռեակցիան, որն ընթանում է կրկնակի կապի ու տարբեր հալոգենիդների միջև: Իրականացվող հետազոտությունները թույլ կտան վերջնարդյունքում ավելի մատչելի եղանակ առաջարկել տարբեր կրկնակի կապ պարունակող միացությունների համար (ղեկ.՝ ք.գ.թ. Ռ. Հակոբյան):

Սինթեզվել են Co(TPP), Cr(TPP), Cr(TTP), Fe(TPP), Fe(TTP), Mn(TTP) և Mn(TPP) պորֆիրիններ, ձեռք են բերվել մեթիլ դիսուլֆիդ, մեթիլ տրիսուլֆիդ ու մերկապտոէթանոլ:

Ուսումնասիրվել է կենսաբանական մեծ նշանակություն ունեցող մետաղապորֆիրինների (Co, Mn, Fe) նիտրատային, նիտրիտային կոմպլեքսների փոխազդեցությունը ծծմբաջրածնի (H₂S) ու էթանթիոլի (EtSH) հետ:

Առաջին անգամ հայտնաբերվել և նկարագրվել է երկաթ պորֆիրինների նիտրատային (Fe(TPP)NO₃) կոմպլեքսների՝ թթվածնի ատոմի տեղափոխման ռեակցիային մասնակցելու ունակությունը: Ցույց է տրվել, որ ռեակցիայի արդյունքում առաջանում է նիտրոզիլային կոմպլեքս (Fe(TPP)(NO)), ինչպես նաև ջուր ու համապատասխան դիսուլֆիդ (ղեկ.՝ ք.գ.թ. Գ.Մարտիրոսյան):

Առաջին անգամ իրականացվել է հայ ականավոր նկարիչ Մ. Սարյանի կտավներում ներկերի Ռաման սպեկտրալ ուսումնասիրություն: Ցույց է տրվել, որ ներկերում առկա են ուլտրամարին կապույտ, կոբալտ կապույտ, զմրուխտ կանաչ, կոբալտ կանաչ, ցելադոնիտ կանաչ, կադմիում դեղին, քրոմ դեղին, վենետիկյան կարմիր, դեղին օխրա, կարմիր օխրա, կապարի սպիտակ, ցինկ սպիտակ, կալցիումի կարբոնատ: Բացի այդ, նկատվել են մետաղական կարբոքսիլատներ ու օքսալատներ, որոնք վկայում են կտավներում դեգրադացման արոցեսների մասին: Ստացված արդյունքներն արժեքավոր են Մ. Սարյանի ստեղծագործությունների պահպանման ու վերականգնման համար (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Հովհաննիսյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Сборник трудов “Синтезы гетероциклических соединений”, Ер., изд. «Антарес», 2024, 101 с.

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

2. Ղազարյան Է., Դանագույան Գ., Թոշոնյան Ա., Մախլյան Ս., Մելիքյան Գ., Պատանի բնագետի հանրագիտարան, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2024, 215 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

3. Խաչատրյան Հ.Ս., Կարախանյան Մ.Գ., Պարոնիկյան Ռ.Գ., Գայլուկի լուծամզվածքով պաստերացված ֆունկցիոնալ նշանակության կաթի տեխնոլոգիա, Ե., “Вестник медицинского колледжа имени Меграбяна”, N 16, 2024, с. 119–129. <https://doi.org/10.53821/1829040X-2024.16-119>.
4. Պահուրյան Ն., Հունանյան Հ., Ստեփանյան Շ., Արաքյան Գ., Գասպարյան Հ., Նավոյան Ք., Դիամիդ թրթնջկաթթվի ածանցյալների հակաօքսիդանտային հատկությունների ուսումնասիրումը սպիտակ առնետների ուղեղային և լյարդային հյուսվածքներում, Ե., «Երևանի «Հայբուսակ» համալսարանի գիտական հանդես», N 11, 2024, էջ 73-84:
5. Акопян Р.М., Харатян Л.А., Айоцян С.С., Аттарян О.С., Меликян Г.С., Синтез новых производных г-лактонного кольца, содержащих пиридиновые и триконденсированные системы, Иван., М., “Известия высших учебных заведений. Химия и химическая технология”, т. 67, N 7, 2024, с. 28-40, <https://doi.org/10.6060/ivkkt.20246707.7068>.
6. Арутюнян А.А., Израелян С.Г., Акобян М.Р., Сафарян М.С., Мадоян Р.А., Сукиасян А.Г., Геворкян К.А., Арутюнян А.Д., Саргсян А.С., Амбарцумян А.А., Карапетян А.А., Мнацаканян А.А., Паносян Г.А., Дангян М.Ю., Гаспарян С.П., Синтез, докинг и биологические свойства гибридных соединений на основе азотсодержащих гетероциклов и (1s,5s)-1,5-дизамещенных-3,7-дизабицикло[3.3.1]нонан-9-онов, СПб., “Журнал общей химии”, т. 94, N 11, с. 2809–2823, <https://doi.org/10.1134/S107036322411001X>.
7. Бичахчян Л.А., Маркосян А.Дж., Шахатуни А.Г., Бадалян К.С., Аттарян О.С., Хачатрян А.Н., Синтез 1-винил-3(5)-метил-4-нитропиразола и изучение эффекта метильных заместителей пиразольного кольца при радикальной полимеризации, М., “Известия высших учебных заведений. Химия и химическая технология”, т.67, N 12, 2024, с.39-46, <https://doi.org/10.6060/ivkkt.20246712.7065>.

8. Исаханян А.У., Акопян Н.З., Овасян З.А., Григорян Г.С., Мхитарян Р.П., Есаян Д.Л., Григорян А.С., Гаспарян Г.В., Паносян Г.А., Арутюнян А.А., Поиск ингибиторов моноаминоксидазы среди производных пиразолинов и пиримидинов и изучение люминесцентных свойств полученных соединений, СПб., “Журнал общей химии”, т. 94, N 1, 2024, с. 80–91, <https://doi.org/10.31857/S0044460X24010065>.
9. Кочаров С.Л., Паносян Г.А., Назарян И.М., Мирзоян Л.С., Пароникян Р.Г., Синтез и оценка нейротропной активности новых производных β -циклокетолов, М., “Хим.-фарм. журн.”, т. 58, N 5, 2024, с.18-25, <https://doi.org/10.30906/0023-1134-2024-58-5-18-25>.
10. Мангасарян С.Г., Акопян Э.А., Шахатуни А.А., Топузян В.О., Изучение реакции ненасыщенных оксазолонов с аминометилбензимидазолом, Ер., “Хим. журн. Армении”, т. 77, N 1, 2024, с. 111–127, <https://doi.org/10.54503/0515-9628-2024.77.1-111>.
11. Маркосян А.И., Айвазян А.С., Габриелян С.А., Дангян М.Ю., Авакимян Дж.А., Арсенян Ф.Г., Синтез и некоторые превращения 2-хлорметил-3*H*-спиро[бензо[*h*]хиназолин-5,1'-циклогептан]-4(6*H*)-она, М., “Хим.-фарм. журн.”, т. 58, N 9, 2024, с. 23-29, <https://doi.org/10.30906/0023-1134-2024-58-9-23-29>.
12. Маркосян А.И., Багдасарян А.С., Айвазян А.С., Габриелян С.А., Дангян М.Ю., Арсенян Ф.Г., Аракелян А.Г., Синтез и биологические свойства 5,5-диметил-4-оксо-3,4,5,6-тетрагидробензо[*h*]хиназолин-2-ил)гидразонов дитерпеноида изостевиола, Ер., “Хим. журн. Армении”, т. 77, N 2, 2024, с. 217-230. <https://doi.org/10.54503/0515-9628-2024.77.2-217>.
13. Маркосян А.И., Габриелян С.А., Синтез и свойства бензо[*h*]хиназолинов, спироконденсированных с карбоциклами в положении 5, Ер., “Хим. журн. Армении”, т. 77, N 2, 2024, с. 170-207, <https://doi.org/10.54503/055-9628-2024.77.2-170>.
14. Маркосян А.И., Айвазян А.С., Габриелян С.А., Дангян М.Ю., Арсенян Ф.Г., Авакимян Дж.А., Синтез и некоторые закономерности превращений 5,5-диметил-3-(2-метилаллил)-2-тиоксо-2,3,5,6-тетрагидробензо[*h*]хиназолин-4(1*H*)-она. Антибактериальные свойства полученных соединений, СПб., “Журнал общей химии”, т. 94, N 3, 2024, с. 376-384, <https://doi.org/10.31857/s004446-0x24030083>.
15. Хачатрян А.Х., Авагян К.А., Бадасян А.Э., Синтез диэтил 6-амино-1-арил- 2-оксо-1,2-дигидропиридин-3,5-карбоксилатов, СПб., “Журнал общей химии”, т. 94, N 4, 2024, с. 462–468. <https://doi.org/10.31857/S0044460X24040011>.
16. Agababayan A.G., Hovhannisyan N.A., Tosunyan S.R., Makichyan A.T., Hovhannisyan A.A., Shahkhatuni A.A., Topuzyan V.O., Synthesis, Antiradical and Anticholinesterase Activity of Ketoamides of *N*-Substituted α,β -Dehydroamino Acids and Corresponding Imidazol-4-ones, SPb, “Russ.J.Gen.Chem.”, v. 94, N 5, 2024, pp.1055–1064. <https://doi.org/10.1134/S1070363224050062>
17. Aghekyan A.A., Panosyan H.A., Buniatyan Zh.M., Muradyan R.E., Mkryan G.G, Synthesis and Antioxidant Activity of Furan Derivatives Containing a 1,3,4-Oxadiazole Ring, M., “Russ.J. Org. Chem.”, v.60, N 4, 2024, pp.655–663. <https://doi.org/10.1134/S1070428024040146>
18. Aleksanyan A.G., Aghekyan M.A., Hakobyan R.M., Shahkhatuni A.G., Shahkhatuni, A.A., Attaryan H.S., Chitosan-supported mercury(ii) acetate as a catalyst for transvinilation reactions of azoles, Ivan., “ChemChemTech”, v.67, N 3, 2024, pp.119-126. <https://doi.org/10.6060/ivkkt.20246703.6942>
19. Aleksanyan M. V., Harutyunyan G. K., Gasparyan S. P., Synthesis of substituted 4-amino-1,3,5-triaryl-1*H*-pyrrol-2(5*H*)-ones, SPb, “Russ.J.Gen.Chem.”, v. 94, N 5, 2024, pp. 1031–1039. <https://doi.org/10.1134/S1070363224050037>
20. Arajyan G., Navoyan Q., Pahutyan N., Hunanyan H., Pogosyan A., Gasparyan H., Comprehensive study of antioxidant activity of oxalic acid diamide derivatives and their effect on the concentration of malonic dialdehyde in the brain and liver tissues of white rats, Tb., “Georgian medical news”, v.I, N 7-8(352-353), 2024, pp.18-23.
21. Arakelova E.R., Khachatryan A.M., Mirzoian A.A., Muradyan R.E., Stepanyan H.R., Grigoryan S.G., Yeranossyan M.A., Martiryan A.I., Zatikyan A.L., Formation of zinc oxide composites of doxycycline with high antibacterial activity based on DC-magnetron deposition of ZnO nanoscale particles on the drug surface, “Applied Physics A”, v.130, N 3, pp.152 1-19. <https://doi.org/10.1007/s00339-024-07296-y>
22. Arustamyan Zh.S., Margaryan R.E., Mkryan G.G., Aghekyan A.A., Panosyan H.A., Buniatyan Zh.M. & Muradyan R.E., Synthesis and Antioxidant Activity of *N*-[4-(1,3-Benzodioxol-5-yl)tetrahydro-2*H*-pyran-4-yl)methyl]-Substituted 3-Aryloxy-2-hydroxypropanamines, 2-Aminoacetamides, and 2-(Hetarylsulfanyl)

- acetamides, M., "Russ.J.Org.Chem.", v. 60, N 1, 2024, pp. 18–24. <https://doi.org/10.1134/S1070428024010032>
23. Arustamyan J.S., Margaryan R.E., Aghekyan A.A., Mkrtchyan G.S., Muradyan R.E., Grigoryan M.S., Panosyan H.A., Mkryan G.G., Synthesis and Antiarrhythmic and Anticonvulsant Activities of Amino Amides and Amino Esters Based on 1-(4-Fluorophenyl)- and 1-[3-(Trifluoromethyl)phenyl]cyclopentane-1-carboxylic Acids, M., "Russ.J.Org.Chem.", v. 60, N 6, 2024, pp. 1028–1035. <https://doi.org/10.1134/S1070428024060071>
 24. Dabaeva V.V., Barkhudaryants I.M., Paronikyan E.G., Dashyan Sh.Sh., Baghdasaryan M.R., Synthesis of novel pyranopyridothienopyrimidines derivatives based on fused thieno[3,2-d][1,3]oxazin-4-one, "Arkivoc", (8) 202412264, 2024, 12p. <https://doi.org/10.24820/ark.5550190.p012.264>
 25. Dabaeva V.V., Paronikyan E.G., Barkhudaryants I.M., Dashyan Sh.Sh., Baghdasaryan M.R., Synthesis and Transformations of Hydrazine-Substituted Pyrano[3',4'':5',6']pyrido[3',2':4,5]thieno[3,2-d]pyrimidine, SPb, "Russ.J.Gen.Chem.", v. 94, N 3, 2024, pp.370-375. <https://doi.org/10.31857/S00444460X24030079>
 26. Dadayan A.S., Mkrtchyan A.F., Poghosyan A.S., Dadayan S.A., Stepanyan L.A., Israyelyan M.H., Tovmasyan A.S., Tsaturyan A.H., Hovhannisyan N.A., Topuzyan V.O., Sargsyan T.H., Saghyan A.S., Unnatural Phosphorus-Containing α -Amino Acids and Their N-FMOC Derivatives: Synthesis and In Vitro Investigation of Anticholinesterase Activity, "Chemistry select", v. 9, N 3, 2024, e202303249. <https://doi.org/10.1002/slct.202303249>.
 27. Danagulyan G.G., Arakelyan M.R., Aksekov N.A., Panosyan H.A., Ayvazyan A.G., Hasratyan A.H., Synthesis of 4-(Pyrazol-1-yl)pyrimidines from 4-Hydrazinopyrimidines and Investigation of Their Structure and Some Chemical Properties, "Journal of Molecular Structure", v.1295, 2024, 136676. <https://doi.org/10.1016/j.molstruc.2023.136676>
 28. Dashyan Sh.Sh., Babaev E.V., Ayvazyan A.G., Mamyan S.S., Paronikyan E.G., Nikoghosyan T.A., Hunanyan L.S., Paronikyan R.G., Synthesis, evaluation of biological activity and SAR of new thioalkyl derivatives of pyridine, "Bioorganic Chemistry", v.148, 2024, 107435. <https://doi.org/10.1016/j.bioorg.2024.107435>
 29. Dashyan Sh.Sh., Nikoghosyan T.A., Paronikyan E.G., Synthesis and Alkylation of Pyrano[4',3'':4',5']pyrido[3',2':4,5]thieno[3,2-d]pyrimidine-8,10-dithione, SPb, Russ.J.Gen.Chem.", v.94, N 8, 2024, pp.1–6. <https://doi.org/10.1134/S107036322408005X>
 30. Dashyan Sh.Sh., Paronikyan E.G., Mamyan S.S., Stepanyan H.M., Nikoghosyan T.A., New bithioalkyl substituted thieno[3,2-d]pyrimidines: Synthesis and antitumor activity, "Arkivoc", (8) 202412245, 2024, 11p. <https://doi.org/10.24820/ark.5550190.p012.245>
 31. Dilanyan S.V., Buniatyan Zh.M., Panosyan H.A., Synthesis and Antioxidant Activity of new Bis-1,3,4-oxadiazoles, Bis-1,3,4-thiodiazoles and Their Derivatives, M., "Russ.J.Org.Chem.", v. 60, N 7, 2024, pp. 1-6. <https://doi.org/10.1134/S1070428024070224>
 32. Gasparyan G.Ts., Bichakhchyan A.S., Derdzian L.V., Avetisyan S.Kh., Panosyan H.A. and Pogosyan A.S., Features of the Reaction of (1,2-Dibromoethyl)(diphenyl)phosphine Oxide with CH- and NH-Nucleophiles, SPb, "Russ.J.Gen.Chem.", v.94, N 1, 2024, pp.62–65. <https://doi.org/10.1134/S1070363224010055>
 33. Gevorgyan H.R., Chukhajian E.O., Rearrangment–Cyclization of Dialkyl(4-hydroxybut-2-ynyl)(3-phenylprop-2-enyl)ammonium Bromides in the Presence of Aqueous Alkali, M., "Russ.J.Org.Chem.", v.60, N 5, 2024, pp.806–810. <https://doi.org/10.1134/S1070428023050038>
 34. Gevorgyan H.R., Chukhadzhyan E.O. and Ayrapetyan L.V., Mechanism of Intramolecular Cyclization of Quaternary Ammonium Salts Containing a β,γ -Unsaturated Fragment and Various π^4 Fragments M., "Russ.J.Org.Chem.", v.60, 2024, pp. 984-994. <https://doi.org/10.1134/S1070428024060022>
 35. Gevorgyan K.A., Galstyan M.V., Buniatyan J.M., Muradyan R.E., Harutyunyan A.D., Synthesis of 1,3-diazaadamantanes containing a pyridine ring and study of their antioxidant properties, Y, "Chem. J. Armenia", v.77, N 2, 2024, pp. 208-216. <https://doi.org/10.54503/0515-9628-2024.77.2-208>
 36. Grigoryan N.G., Hovhannisyan A.A., Nadaryan A.G., and Grigoryan G.K., Synthesizing Monodisperse Polydiene Latexes in an Emulsifier-Free Heterogeneous Monomer Water System, Sustainable Water Treatment and Ecosystem Protection Strategies, published by Apple Academic Press, USA, chapter 12, 2024.
 37. Hakobyan N.Z., Isakhanyan A.U., Grigoryan G.S., Mkhitarayan R.P., Sargsyan H.R., Grigoryan A.S., Pahutyanyan N.H., Pogosyan A.E., Arajyan G.M., Gasparyan H.V., Muradyan R.Y., Panosyan H.A., Israelyan S.G., Harutyunyan A.A. Synthesis and study of luminescent, anti-MAO and antioxidant properties of (2E)-3-

- aryl-1-(4-alkoxy-phenyl)prop-2-en-1-ones and their pyrazoline derivatives, SPb, "Russ.J.Gen.Chem.", v.94, N 11, 2024, pp.2847-2858. doi: 10.1134/S1070363224110057.
38. Hakobyan R.M., Shahkhatuni A.G., Polynski M.V., Ayvazyan A.G., Aleksanyan A.G., Bichakhchyan L.A., Shahkhatuni A.A., Attaryan H.S., The role of the nitro group on the formation of intramolecular hydrogen bond in the methyl esters of 1-vinyl-nitro-pyrazolecarboxylic acids, "Journal of Molecular Structure", v.1322, 2024, 140350. <https://doi.org/10.1016/j.molstruc.2024.140350>
 39. Harutyunyan A.A., Israelyan S.G., Safaryan M.S., Sumbatyan A.S., Nersesyan L.E., Aharonyan A.S., Danielyan I.S., Muradyan R.E., Sargsyan A.S., Hambardzumyan A.A., Panosyan H.A., Synthesis, Molecular Doking Study, and Effect on the Methylation of Tumor DNA of Benzo[4',5']imidazo[2',1':6,1]pyrido[2,3-d]pyrimidines Functionalized by Aromatic Groups and Azines, M., "Russ.J.Org.Chem.", v.60, N 10, pp.1909–1920. doi: 10.1134/S1070428024100051
 40. Hobosyan N.G., Balyan K.V., Pogosyan H.R., Movsisyan L.A., Hovsepyan V.S., Sargsyan H.B., Iodination of Phenylacetylene and Some Transformations of the Resulting Iodo Derivatives, M., "Russ.J.Org.Chem.", v.60, 2024, pp.1698–1704. <https://doi.org/10.1134/S1070428024090124>
 41. Hovhannisyan A.A., Grigoryan G.K., Nadaryan A.G., Grigoryan N.H., Possibilities Of Synthesis Of Uncharged Stable Latex Particles For Immunoanalysis, "Journal of Law and Sustainable Development", v.12, N 10, 2024, <https://doi.org/10.55908/sdgs.v12i10.4071>
 42. Hovsepyan V.S., Babakhanyan A.V., Balyan K.V., Harutyunyan N.A., Khamisyan Sh.G., Hobosyan N.G., Sargsyan H.B., Synthesis and antimicrobial properties of quaternary ammonium salts with two propargyl groups, SPb, "Russ.J.Gen.Chem.", v.94, N 7, 2024, pp.1603–1609. <https://doi.org/10.1134/S1070363224070016>
 43. Isakhanyan A.U., Hakobyan N.Z., Muradyan R.E., Tumajyan A.E., Panosyan H.A., and Harutyunyan A.A., Synthesis and Anti-inflammatory, Analgesic, and Antipyretic Activities of Azomethine Derivatives of the Tetrahydropyran Series, "Russ.J.Org.Chem.", 2024, v. 60, N 3, pp. 539–542. <https://doi.org/10.1134/S1070428024030230>
 44. Khachatryan A.Kh., Avagyan K.A., Sargsyan A.A., Badasyan A.E., Synthesis of Ethyl 4-Aryl-2-imino-1-(2-methoxyphenyl)-5-[(2-methoxyphenyl)carbamoyl]-6-oxopiperidine-3-carboxylates, M., "Russ.J.Org.Chem.", v. 60, N 4, 2024, pp.743–746. <https://doi.org/10.1134/S1070428024040250>
 45. Khachatryan A.Kh., Avagyan K.A., Sargsyan A.A., Simonyan A.G., Panosyan H.A., Ayvazyan A.G., Badasyan A.E., The synthesis of ethyl 2-amino-1-(aryl)-5-(arylcarbamoyl)-6-oxo-1,6-dihydropyridine-3-carboxylates, "Chem. Heterocycl. Comp.", v.60, N 3/4, 2024, pp.150–155. <https://doi.org/10.1007/s10593-024-03311-5>
 46. Manukyan A.L., Melkonyan M.M., Sukiasyan L.M., Vardanyan S.O., Hunanyan L.S., Yenkovyan K.B., Harutyunyan S.H., The regulatory effects of mesedin and beditin α_2 -adrenoblockers on the functional activity of the nervous, cardiovascular, and endocrine systems in rats under the hypoxic conditions Naunyn-Schmiedeberg's, "Arch Pharmacol", v.397, N 7, 2024, pp.5303–5315. <https://doi.org/10.1007/s00210-024-02968-1>
 47. Markosyan A.I., Ayvazyan A.S., Gabrielyan S.A., Mamyan S.S., Muradyan R.E., Synthesis and Antibacterial Activity of New 3-Benzylspiro[benzo[h]quinazoline-5,1'-cycloheptan]-4(6*H*)-one Derivatives, M., "Russ.J.Org.Chem.", v.60, N 3, 2024, pp.415–422. <https://doi.org/10.1134/S1070428024030072>
 48. Martirosyan G.G., Hovhannisyan A.A., Iretskii A.V., Mechanism of autoxidation of the chromium(II) porphyrins. In situ infrared spectroscopic detection of the peroxo- intermediate, "Inorganica Chimica Acta", 566, 2024, 122031. <https://doi.org/10.1016/j.ica.2024.122031>
 49. Millar S.B., Khachatryan H.N., Malmir M., Sperry J., Xylochemical synthesis of diarylated heterocycles, "Sustainable Chemistry and Pharmacy", v.42, 2024, 101798. <https://doi.org/10.1016/j.scp.2024.101798>
 50. Pahutyan N., Navoyan Q., Arajyan G., Harutyunyan S., Pogosyan A., Gasparyan H., The impact of diamide derivatives of oxalic acid on free radical lipid oxidation in white rat brain and liver, Tb., "Georgian medical news", v.349, N 4, 2024, pp.25–30. <https://www.geomednews.com/v349i4.html>
 51. Paronyan M., Koloyan H., Aganyants H., Hambardzumyan A., Soghomonyan T., Avetisyan S., Kocharov S., Panosyan H., Sakanyan V., Hovsepyan A., Structural Analysis and Substrate Specificity of *D*-Carbamoylase from *Pseudomonas*, "BioTech", v.13, N 40, 2024, pp.1–16. <https://doi.org/10.3390/biotech13040040>
 52. Paronikyan E.G., Ayvazyan A.G., Mamyan S.S., Dashyan Sh.Sh., New synthesis of 6, 8-diamino-substituted pyrano[3,4-*c*]pyridines from related pyrano[3,4-*c*]pyridin-6-one, "Mendeleev Communications", v. 34, N 1, 2024, pp.129–130. <https://doi.org/10.1016/j.mencom.2024.01.039>

53. Paronikyan E.G., Dashyan Sh.Sh., Mamyan S.S., Paronikyan R.G., Nazaryan I.M., Balyan K.V., Gasparyan H.V., Buloyan S.A., Harutyunyan L.S., Hobosyan N.G., Synthesis and Psychotropic Properties of Novel Condensed Triazines for Drug Discovery, "Pharmaceuticals", v. 17, N 7, 2024, 829. <https://doi.org/10.3390/ph17070829>
54. Paronikyan R.G., Grigoryan A.S., Barkhudaryants I.M., Arshakyan L.M., Harutyunyan A.A., Synthesis and neurotropic activity of new derivatives of some amino acid hydantoins and their lithium salts, "Bioactive Compounds in Health and Disease", v.7, N 5, 2024, pp.274-288. <https://doi.org/10.31989/bchd.v7i5.135>
55. Paronikyan R., Buloyan S., Pogosyan A., Arshakyan L., Mirzoyan L., Gasparyan H., Evaluating Anticonvulsant and Neuroprotective potentials of New Hydantoin Derivatives in PTZ and MES Models, "Research Journal of Pharmacy and Technology", v.17, N 11, 2024, pp.5221-9. <https://doi.org/10.52711/0974-360X.2024.00799>
56. Petrosyan A., Ayyazyan A., Ghochikyan T., Galstyan A., Ligand-Free Cu(0) Catalyzed C-S Cross-Coupling Ullmann-type Reaction: S-Arylation of 5,4-Disubstituted-2,4-dihydro-3H-1,2,4-triazole-3-thiones, "European Journal of Organic Chemistry", 2024, e202400199. <https://doi.org/10.1002/ejoc.202400199>
57. Sargsyan H.B., Balyan K.V., Pogosyan H.R., Movsisyan L.A., Hovsepyan V.S., Ayyazyan A.G., Hobosyan N.G., Iodination of Substituted Alkynes in the Presence of Cadmium (II) Acetate, "Chemistry Select", v. 9, N 17, 2024, e202303432. <https://doi.org/10.1002/slct.202303432>
58. Sirakanyan S.N., Dilip H., Geronikaki A., Spinelli D., Kirubakaran S., Petrou A., Hakobyan E.K., Kartsev V.G., Paronikyan E.G., Yegoryan H.A., Yermalovyan L.V., Hovakimyan A.A., In silico design, synthesis and biological evaluation of novel thieno[3,2-d]pyrimidine derivatives for cancer therapy – a preliminary study on the inhibitory potential towards ATR kinase domain and PIKK family, "Chem. Biodiversity", v.21, 2024, 202302071. <https://doi.org/10.1002/cbdv.202302071>
59. Sirakanyan S.N., Spinelli D., Geronikaki A., Hakobyan E.K., Petrou A., Kartsev V., Yegoryan H.A., Paronikyan E.G., Zuppiroli L., Jughetsyan H.V., Paronikyan R.G., Arakelyan T.A., Hovakimyan A.A., New triazole-based hybrids as neurotropic agents, "RSC Adv.", v.14, 2024, pp.32922–32943. <https://doi.org/10.1039/D4RA06121G>
60. Sirakanyan S.N., Spinelli D., Mattioli E.J., Calvaresi M., Geronikaki A., Kartsev V.G., Hakobyan E.K., Yegoryan H.A., Jughetsyan H.V., Manukyan M.E., Hovakimyan A.A., Synthesis and Rearrangement of New 1,3-diamino-2,7-naphthyridines and 1-amino-3-oxo-2,7-naphthyridines, "Int. J. Mol. Sci.", v.25, 2024, 11977. <https://doi.org/10.3390/ijms252211977>
61. Szczepankowska J., Woszczak L., Khachatryan G., Khachatryan K., Krystijan M., Grzesiakowska-Dul A., Kuchta-Gładysz M., Wojciechowska-Puchałka J., Hovhannisyan A., Krzan M., Preparation, Physicochemical, and Cyto- and Genotoxic Characterisation of Polysaccharide Composites Containing Carbon Quantum Dots, "Materials", v.17, №12, 2024, 2967. <https://doi.org/10.3390/ma17122967>
62. Topuzyan V.O., Hovannisyan A.A., Reactions of Oxazol-5(4H)-ones Involving Organosilicone Reagents (A Review), M., "Russ.J.Org.Chem.", v. 60, N 5, 2024, pp. 753–788. <https://doi.org/10.1134/S1070428024050014>
63. Vardanyan S.O., Avagyan A.S., Sargsyan A.B., Harutyunyan S.A., Gasparyan H.V., Aghekyan A.A., Synthesis of Substituted Thienopyrimidinones Based on Ethyl 2-Amino-4-(1,4-benzodioxan-2-yl)thiophene-3-carboxylate, M., "Russ.J.Org.Chem.", v. 60, N 3, 2024, pp. 397–402. <https://doi.org/10.1134/S1070428024030047>
64. Vardanyan S.O., Avagyan A.S., Sargsyan A.B., Panosyan H.A., Harutyunyan S.A., Gasparyan H.V., Aghekyan A.A., Synthesis and Antihypoxic Properties of New 2-(1,4-Benzodioxan-2-yl)-1,3,4-oxadiazole Derivatives, M., "Russ.J.Org.Chem.", v.60, N 9, 2024, pp.1685–1691. <https://doi.org/10.1134/S1070428024090100>
65. Zerrov N., Ghamaryan V., Daria V., Makichyan A., Hunanyan L., Discovery of a novel piperazine derivative, cop2: a selective TRPC6 activator suitable for treatment of synaptic deficiency in Alzheimer's disease hippocampal neurons, "Scientific reports", v.14, N 1, 2024, 23512. <https://doi.org/10.1038/s41598-024-73849-z>

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

Է.Հակոբյանն արժանացել է «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթի առաջին մրցանակի:

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Ե.Գ.Պ. Խ.Մելիքսեթյան
Փոխտնօրեն՝ Ե.Գ.Թ. Լ.Սահակյան
Գիտքարտուղար՝ Ե.Գ.Թ. Հ.Շահինյան
Էլեկտրոնային փոստ՝ igs@sci.am
Կայքէջ՝ www.geology.am

Մասնագիտական խորհուրդ 054՝ «Երկրաբանություն»
Նախագահ՝ ակ. Ռ.Զրբաշյան, գիտքարտուղար՝ Ե.Գ.Թ. Լ.Սահակյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Միջդիսցիպլինար գեոարխեոլոգիական հետազոտությունների ամփոփման արդյունքում մշակվել է օբսիդիանների երկրաքիմիական տիպիզացիայի ինովացիոն մոդել: Ցույց է տրվել Հայաստանի, Վրաստանի ու Կարս-Էրզրումի պլատոյի ռիոլիտային հրաբուխների օբսիդիանի տարածաշրջանային աղբյուրների հստակ տարանջատումը: Հաստատվել է, որ Հարավային Կովկասի ռիոլիտային հրաբուխների օբսիդիանը նախապատմական ժամանակաշրջանում (պալեոլիթից մինչև վաղ երկաթի դար) օգտագործվել է ոչ միայն Հայաստանի ու Վրաստանի, այլև դրանցից մեծ հեռավորությունների վրա՝ Տրոյայում, Իրանի ընդարձակ սարահարթում, Հյուսիսային Կովկասում, Քուռի իջվածքի բնակավայրերում (ղեկ.՝ Ե.Գ.Պ. Խ.Մելիքսեթյան):

Կամչատկայի Սրեդինի լեռնաշղթայից (SR) նմուշների գլխավոր ու հազվագյուտ տարրերի մանրամասն, Sr-Nd-Pb իզոտոպային ու գեոխրոնոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել աղբյուրի անհամասեռություն հարստացված մագմայի համար: Ցույց է տրվել, որ Sr իզոտոպային հարաբերակցություններն ու LILE-ի պարունակությունները հիմնականում սուբդուկցիոն ֆլյուիդների ազդեցության հետևանք են, մինչդեռ Nd իզոտոպները, HFSE ու REE բաշխումները տարբերվում են ըստ աշխարհագրության ու ժայթքման հասակի: Հյուսիսային ու արևելյան/կենտրոնական Սրեդինի լեռնաշղթայի միոցենի ապարները ձևավորվել են աղքատացած MORB-անման մանթիայից՝ մետասոմատիզացված սուբդուկցիոն ազդեցությամբ, կեղևի ասիմիլիացիայով, ֆրակցիոնային բյուրեղացումով: Արևմտյան թևի ու չորրորդական՝ հյուսիսային Սրեդինի լեռնաշղթայի լավաներն ունեն լիթոսֆերայի շերտազատման հետ կապված հարստացում: Nd իզոտոպներն ու HFSE-ի պարունակությունները ցույց են տվել մանթիայի հարստացված տիրույթներ՝ բացահայտելով հին լիթոսֆերային բլոկների դերը ժամանակի ընթացքում մագմայի առաջացման գործում (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Ն.Նեկրիլով):

Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի հետ Քարին Տակ քարանձավի նստվածքներում բրածոների բազմապրոֆիլ, այդ թվում՝ $\delta^{13}\text{C}$, $\delta^{18}\text{O}$ իզոտոպային ուսումնասիրությունները բացահայտել են, որ MIS 3-վաղ MIS2 ժամանակահատվածը Փոքր Կովկասում բնորոշվում է կայուն կլիմայական պայմաններով՝ ի տարբերություն գլոբալ կլիմայական զգալի փոփոխությունների: Ընդհանրացվել և վերլուծվել են Արարատյան իջվածքի բնական տարբեր վտանգավոր երևույթները՝ երկրաշարժեր, հրաբխի ժայթքում, լահարներ, սողանքներ, ջրհեղեղներ, հողերի ջրիկացում ու նստեցում, գետերի միգրացիա (ղեկ.՝ Ե.Գ.Պ. Ա.Ավագյան):

Հավաքագրվել և ամփոփվել են Լոռու մարզի քարաթափման պրոցեսների տվյալները, կազմվել է մարզի քարաթափման վտանգի քարտեզ (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Դ.Առաքելյան):

Ըստ Փոքր Սևանից 141սմ հորատահանուկի բազմապրոֆիլ ուսումնասիրությունների՝ լճի ջրի ամենաբարձր մակարդակը եղել է 2500 ու 2000 cal BP: Ջրի մակարդակը եղել է ցածր՝ 4870+190/-245 cal BP՝ բերելով անթթվածին պայմաններ: Ջրի մակարդակի բարձրացմանը զուգահեռ (բնական պայմաններում) լճում վերականգնվել է թթվածնի պարունակությունը (ղեկ.՝ ե.գ.թ. Լ.Սահակյան):

Ալավերդու հանքային դաշտի տարածքում դուրս է բերվել խմելու քաղցրահամ ջրերի 3 դաս, որոնք ունեն կատիոնային միևնույն՝ կալցիում-մագնեզիում-նատրիումային, հիդրոկարբոնատային, հիդրոկարբոնատ-սուլֆատային ու հիդրոկարբոնատ-սուլֆատ-քլորիդային անիոնային շարքերը: Հիդրոքսիմիական հիմնական բնութագրերով, ինչպես նաև տարածաշրջանին բնորոշ ծանր մետաղների պարունակություններով այս ջրերը հիմնականում համապատասխանում են ՀՀ-ում խմելու քաղցրահամ ջրերի համար ընդունված նորմերին, չեն կրում հանքային դաշտի զգալի ազդեցություն:

Սոթքի հանքավայրից մինչև Սևանա լիճ տարածքի մակերևութային հոսքերն ունեն հիմնականում հիդրոկարբոնատ-սուլֆատային կամ հիդրոկարբոնատային, կալցիում-մագնեզիում-(նատրիումային), լճի արևելյան ու հարավ-արևելյան ափին տեղակայված մի քանի բնակավայրերի խմելու քաղցրահամ ջրերը՝ հիդրոկարբոնատ-սուլֆատային, կալցիում-մագնեզիում-(նատրիումային) կազմ: Որոշ բաղադրիչների պարունակությունների թվային արժեքները երբեմն գերազանցում են ԹՄԿ, սակայն, ըստ ամենայնի, դա հետևանք է մարդու տնտեսական գործունեության, այլ ոչ թե հանքավայրի ազդեցության (ղեկ.՝ ե.գ.թ. Հ.Շահինյան):

Առաջին անգամ լուսաբանվել են Ամասիա-Ստեփանավան օֆիոլիտային ճյուղի սահմաններում մերկացող Հովտուն գյուղի մերձակայքի օֆիոլիտային ասոցիացիայի երկրաբանական-կառուցվածքային ու հատկապես պետրոգրաֆիական-երկրաքիմիական հարցերը: Հայտնաբերված ապարները ներկայացվել են սերպենտինիտներով, տարբեր տեսքի ու կազմի վուլկանիտներով, նաև հասպիս-ռադիոլարիտներով: Ըստ գլխավոր էլեմենտների պարունակությունների՝ հետազոտված նմուշները կազմում են բազալտ-անդեզիտ-դագիտային շարք (ներառյալ բազալտային տրախիանդեզիտները), որոնք պատկանում են կրաակալային սերիային: Դիսկրիմինացիոն երկրաքիմիական դիագրամներում դրանք համապատասխանում են հատկապես կղզաղեղային կամ ակտիվ ցամաքային ծայրամասերի դաշտերին, հետևաբար ունեն առավելապես սուբդուկցիոն ծագում՝ բացառելով սպրեդինգային (MORB-նման) կամ մանթիական պլյումային (OIB-տիպ) երկրադինամիկ աղբյուրները: Վեդիի օֆիոլիտների Սագրաբերդի տեղամասից փիլոու լավաների խառնուրդ տարրերի երկրաքիմիական անալիզը հաստատել է մեր նախնական գնահատականն ալկալային մագմատիզմի OIB բնույթի վերաբերյալ (ղեկ.՝ ե.գ.թ. Ղ.Գալոյան):

Վերլուծվել են կայծակի լիցքաթափումը գետնին երևույթի հիմնական արդի պատկերացումները՝ լրացված հատուկ մշակված մեթոդական երկրաէլեկտրական եղանակների կիրառմամբ՝ հաշվի առնելով երկրաբանական միջավայրի մակերեսին տարածական-ժամանակային էլեկտրական բնութագրերի մեր բազմամյա գործիքային դիտարկումների արդյունքները: Առաջին անգամ ներկայացվել է երկրաբանական միջավայրի կարևոր դերն ամպ-երկիր կայծակի ծնման, ձևավորման, զարգացման, իրագործման ժամանակ: Հիմնավորվել է, որ երկրաէլեկտրական գործոնի անտեսումը թույլ չի տալիս բազմակողմանի ու օբեկտիվ հետազոտել քննարկվող սույն բազմաբնույթ, վիթխարի բնական երևույթի բոլոր առանձնահատկությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Մաթևոսյան):

Նոր մշակած եղանակով ՀՀ տարածքի ԲԹՄ-ից տարանջատվել և քարտեզագրվել են ռելիեֆի տեկտոնական ծագման գծային միավորները (morphostructures): Կազմվել է քարտեզի բացատրագիր: Հայաստանի տարածքում առանձնացվել են ռելիեֆի 24 հիմնական գծային կառուցվածքներ ու համակարգեր: Մորֆոստրուկտուրաների հատման տիրույթները քարտեզագրվել են որպես տեկտոնական հանգույցներ: Առաջին անգամ քարտեզագրվել է տարածաշրջանային ու տեղական նշանակության 7 մորֆոստրուկտուրա (ղեկ.՝ Ե.-հ.գ.թ. Արշ.Ավագյան):

Արարատյան արտեզյան ավազանի 6 մոնիթորինգային հորատանցքերից վերցված ջրի նմուշների կայուն ($\delta^2\text{H}$, $\delta^{18}\text{O}$) ու ռադիոակտիվ (^3H) իզոտոպային հետազոտություններով ավազանի տարբեր հորիզոններում հայտնաբերվել են հին ջրեր՝ ձևավորված մինչև 1960-ականները, միջին հասակի ջրեր, 1960-70-ականներին ձևավորված ու ժամանակակից ջրեր՝ ձևավորված վերջին 50 տարում (ղեկ.՝ Ա.Ներսիսյան):

Մշակվել է Հայաստանում սակավաջրության ու երաշտի կառավարման հայեցակարգային մոդել՝ հիմնված մակերևութային ջրերի ու ջրօգտագործման մոնիթորինգի իրական ժամանակին մոտ (near real-time) տվյալների համադրման վրա, ինչը կաջակցի ջրային ռեսուրսների կառավարմանը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Առաքելյան):

Արարատի մարզի Երախ կտրվածքի սիլիցիֆիկացված կրաքարերից ստացվել են կամպանի հասակին բնորոշ ռադիոլարիաներ (ղեկ.՝ Ե.-հ.գ.թ. Ա. Գրիգորյան):

Առաջին անգամ Ջերմանիսի հյուսիս-արևմտյան տեղամասի վերին տրիասի նստվածքային ածխաբեր շերտերում հայտնաբերվել են սնդիկի անոմալ բարձր պարունակություններ՝ կապված Երկրի վրա կարնիան ժամանակաշրջանում տեղի ունեցած խոշոր հրաբխականության հետ, ինչի հետևանքով էլ տեղի են ունեցել կլիմայի ու կենսոլորտի համամոլորակային լուրջ փոփոխություններ: Այն հայտնի է որպես «Carnian pluvial episode» (230,9 մլն. տ.): Նախկինում այս ածխաբեր գոյացությունները վերագրվել են նորիան հարկին (ղեկ.՝ Ե.գ.թ. Վ.Սերոբյան):

Արմանիսի պղինձ-բազմամետաղային հանքավայրի խտանյութերի համար իրականացվել է կենսատարալվացում՝ երկաթ ու ծծումբ օքսիդացնող բակտերիաների մաքուր կուլտուրաների և դրանց հիման վրա կառուցված խառնուրդների միջոցով: Ցույց է տրվել, որ այդ խառնուրդների կիրառումը տալիս է պղնձի մոտ 94% վերականգնում: Հանքաբանական վերլուծությունը ցույց է տվել, որ խառնուրդում խալկոպիրիտի լուծումը եղել է 20%-ից ցածր, պիրիտի լուծումն առավելագույնը կազմել է 22,7%: Սֆալերիտը ցույց է տվել գրեթե ամբողջական տարրալուծում (>95%): Գալենիտը դիմացկուն է եղել թթվային տարրալվացման նկատմամբ (ղեկ.՝ Ե.գ.թ. Ա.Հովհաննիսյան):

Սևանա լճի ավազանի ու ջրի մակարդակի տատանումների վերաբերյալ տվյալների վերլուծությունը ցույց է տվել վաղ բրոնզի դարի ընթացքում լճի զարգացման ռեգրեսիվ ռեժիմ ջրի մակարդակի 1894,5-1896,5մ բարձրությամբ: Հնէաբուսաբանական տվյալները մատնանշում են ժամանակակից կլիմային բնորոշ տաք ու չոր կլիմայական պայմաններ (ղեկ.՝ Ե.գ.թ. Ա.Հովհաննիսյան):

Մեծամորի հնավայրի կերամիկական բեկորների վրա իրականացված երկրա-քիմիական ու պետրոգրաֆիական հետազոտությունները ցույց են տվել, որ ուրարտական կարմիր խեցեղենի համար կավը ներմուծվել է Վեդիի օֆիոլիտային համալիրի տարածքից (ղեկ.՝ Ե.գ.թ. Ա.Հովհաննիսյան):

Քաջարանի հանքային դաշտի ու պղինձ-մոլիբդեն-պորֆիրային հանքավայրի հետազոտությունների արդյունքում ստացված հանքավայրի կառուցվածքի, միներալոգիայի, մերձհանքային փոփոխվածության, հանքայնացման հասակների վերաբերյալ նոր

տվյալների հիման վրա մշակվել է հանքավայրի նոր երկրաբանական մոդելը (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Ս.Հովակիմյան):

Շարունակվել է ՀՀ տարածքում գործող սեյսմիկ կայաններից գրանցումների հավաքագրումը, այդ տվյալների հիման վրա երկրաշարժերի կատալոգի լրացումն ու ճշգրտումը: Կատարվել է երկրաշարժերի հիմնական տվյալների վերահաշվարկ, վերահաշվարկված ու նորացված տվյալներով շարունակվել է սեյսմիկ տոմոգրաֆիայի հաշվարկը, ՀՀ տարածքի համար եռաչափ 3D արագությունների մոդելի ճշտումը: Գործող 8 սեյսմիկ կայանների ու հարևան պետությունների հնարավոր սեյսմիկ կայանների տվյալների հիման վրա Seiscomp համակարգչային փաթեթի կիրառմամբ տրվել են երկրաշարժերի ավտոմատ լուծումներ (automatic solutions): Վերջիններս լրացուցիչ ենթարկվել են մշակման, վերահաշվարկի արդյունքում տրվել են երկրաշարժերի հիմնական պարամետրերը հնարավորինս փոքր սխալանքով (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Մ.Գևորգյան):

Նոր մոտեցմամբ հաշվարկվել են վերջին տարիներին ՀՀ տարածքում գրանցված ($M \geq 3.0$) մագնիտուդով երկրաշարժերի մոմենտ թենզորները (MTA) երկակի դիպլի (double couple) կոմբինացիայի մոտեցմամբ, կազմվել է համապատասխան կատալոգ վերահաշվարկված պարամետրերի համար, այդ թվում՝ երկրաշարժի խորության համար հնարավոր լավագույն լուծման (Best Depth) արժեքով:

Շրջակա միջավայրի սեյսմիկ աղմուկի տոմոգրաֆիայի (Ambient Noise Tomography) եղանակով գեոթերմալ դաշտերի ուսումնասիրության արդյունքում հաշվարկվել են դիսպերսիոն կորերը, կազմվել են սեյսմիկ կայանների փոխադարձ կորելյացիաները (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Լ. Սարգսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Բացահայտվել է Գեղամա բարձրավանդակում պոլիգեն հրաբխականությունից մոնոգենի անցման 1.1մլն տարի դադարի ժամանակահատվածը: Պոլիգեն հրաբխականության վերջնական գործունեությունը դրսևորվել է ճեղքերից լավային հոսքերի արտավիժմամբ, իսկ մոնոգեն հրաբխականության սկիզբն ուղեկցվել է էքստրուզիվ հրաբխականության արտահայտմամբ՝ պեռլիտների ու օբսիդիանների կուտակումներով: Ըստ երկրաքիմիական տվյալների՝ պոլիգեն ու մոնոգեն հրաբխականության սնուցումը եղել է ընդհանուր, մեկ մագմատիկ օջախից, հետևանք է տեկտոնական ընդարձակման աստիճանի աճով ու մագմատիկ օջախում մագմայի պաշարների նվազմամբ:

Գեղամա բարձրավանդակի շուրջ տեղադրված 3 ժամանակավոր սեյսմիկ կայանների 14.10.2022թ. – 30.04.2024թ. ժամանակահատվածում գրանցված ավելի քան 445 սեյսմիկ իրադարձություններից 367 երկրաշարժի համար ստացվել են լուծումներ: Երկրաշարժերից միայն մի քանիսի համար է գրանցվել $2.0 < M < 3.0$ տիրույթում, և միայն մեկ երկրաշարժի մագնիտուդն է հավասար եղել 3.1, որը գրանցվել է 20.01.2023թ: Երկրաշարժերի օջախային խորությունները հասել են մինչև 30 կմ: Այդ նույն ժամանակահատվածի 5 երկրաշարժերի ($M > 2.0$) ֆոկալ մեխանիզմները բնութագրվել են հիմնականում կողաշարժային, միայն մեկը՝ վարնետքային մեխանիզմով: Յուրաքանչյուր երկրաշարժի մշակման արդյունքում ստացվել է V_P/V_S հարաբերակցության 1.7078 արժեքը, 1-20 կմ խորությունների համար կազմվել են անոմալիաների սխեմատիկ քարտեզներ (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Գ.Նավասարդյան):

Դինամիկ մոդելավորմամբ ցույց է տրվել, որ Սևանի ավազանի Արեգունու լեռների հարավ-արևելյան զառիթափ լանջերն ուժեղ երկրաշարժի ազդեցությամբ դառնում են անկայուն, ինչը կարող է հանգեցնել սողանքների, քարաթափումների՝ վտանգելով լանջերի ստորոտով անցնող հանրապետական նշանակության տրանսպորտային ուղիները:

Ծովագյուղի տարածքում հայտնաբերված պալեոերկրաշարժը ցույց է տվել, որ մ.թ.ա. 2333-901 միջակայքում տեղի է ունեցել Mw7.2 մագնիտուդով երկրաշարժ, որն առաջացրել է ≥ 22 կմ մակերևութային խզվածք, որի ուղղաձիգ տեղաշարժը մոտ 2 մետր է: Թվային մոդելավորմամբ ապացուցվել է, որ նման մակերևութային խզվածքը Սևանա լճում կարող է առաջացնել լճային ցունամի (ղեկ.՝ Ե.գ.դ. Ա.Ավագյան):

Հաշվետվությունների, գրականության տվյալների հիման վրա իրականացվել է Հայաստանում հրաբխային մոխրի թափման վտանգի ու տեֆրոխրոնոլոգիայի վերաբերյալ առկա երկրաբանական, պետրոգրաֆիական, երկրաքիմիական ու Ar/Ar իզոտոպային հասակային (երկրաժամանակագրական) տվյալների հավաքագրում, բազայի ստեղծում: Ճշգրտվել, քարտեզագրվել, փաստագրվել են տեֆրաների շերտերի առկայությամբ երկրաբանական կտրվածքների տեղադիրքերը, հայտնաբերվել են տեֆրաների մի շարք նոր շերտեր, շերտագրական նոր հորիզոններ (ղեկ.՝ Է.Գրիգորյան):

Արբանյակային լուսանկարների ու Հանրապետական երկրաբանական ֆոնդի տվյալների համադրման հիման վրա քարտեզագրվել են Սևանի ավազանի մետաղական ու ոչ մետաղական հանքավայրերի սահմանները (ղեկ.՝ Լ.Սարգսյան):

Հազվագյուտ հողային տարրերի (REEs) նոր ICP-MS անալիզների տվյալներով Թեժսարի ու Մեղրու ավալային կոմպլեքսների ապարները բնութագրվել են Ce-ային խմբի թեթև լանթանոիդների, հատկապես La-ի, Ce-ի ու Nd-ի բարձր պարունակություններով, իսկ ծանր հազվագյուտ հողերից համեմատաբար բարձր պարունակություններ ունեն Y-ը և Gd-ը: Թեժսարի ավալային կոմպլեքսի ապարները Մեղրու պլուտոնի համեմատությամբ ունեն REEs-ի համաչափորեն առավել բարձր պարունակություններ: Թեժսարի ավալային կոմպլեքսի ու Մեղրու պլուտոնի ապարների նոր ICP-MS անալիզների տվյալներով առավել հետաքրքրություն են ներկայացնում փայլարային պեգմատիտները՝ մինչև 105ppm լիթիումի պարունակությամբ (ղեկ.՝ Ե.գ.թ. Ս.Հովակիմյան):

Դևոնի հասակի ապարներում հայտնաբերվել են բրախիոպոդների նոր տեսակներ, որոնք նախկինում հայտնի չէին գիտությանը: Առաջին անգամ բացահայտվել են դևոնի հասակի բույսերի սպորներ, որոնց միջոցով իրականացվել է Էրտիչի կտվածքի հասակագրում կենսաշերտագրական մեթոդով, բուսական աշխարհի վերականգնում:

Հայաստանի Պալեոզոյան հասակի կտրվածքներից գտնվել են տենտակուլիտներ ներքին կառուցվածքի ու մկանային համակարգի բացառիկ պահպանվածությամբ: Վերջիններիս ուսումնասիրություններն արժեքավոր պատկերացումներ են տալիս այս կենդանիների հնարավոր նախնիների, ծագումնաբանության վերաբերյալ:

Հայաստանի ֆրան-ֆամեն հասակի միջակայքից առաջին անգամ նկարագրվել են մամռակերպերի համալիրներ (bryozoans), որոնք հնակենսաաշխարհագրության տեսանկյունից նման են Իրանի ու Լեհաստանի տարածքներից գտնված համալիրներին: Ըստ մամռակերպերի վերլուծության պարզվել է, որ Գոնդվանայի հյուսիսային մասում վերին դևոնի ֆրանի հարկը նշանավորվում է կոսմոպոլիտ տեսակների բարձր պարունակությամբ այն դեպքում, երբ դևոնի վերջում էնդեմիզմի մակարդակը կտրուկ աճել է (ղեկ.՝ Ե.գ.թ. Վ.Սերոբյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Джрбашян Р.Т., Меликсетян Х.Б., Навасардян Г.Х., Григорян Э.С., Геворгян Р.П., Гукасян Ю.Г., Каталог четвертичных вулканов территории Республики Армения, Ер., изд. «Гитутюн», 2024, 212с.
2. «Էդուարդ Եփրեմի Խաչիյան. Կենսամատենագիտություն», Ե., «Գիտություն» հրատ., 2024, 86 էջ:

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

3. Առաքելյան Ա.Ա., Փիլոյան Ա.Ա., «Arcgis 10» ծրագրային փաթեթ (ուսումնամեթոդական ուղեցույց), Ե., ԵՊՀ հրատ., 2024, 118 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

4. Amiryan M., Kunze R., Hovhannisyan A., Melik-Adamyan H., Hovsepyan R., Bobokhyan A., The Eastern shores of Lake Sevan during the Early Bronze Age: preliminary reflections. The end of the Kura-Araxes phenomenon, The Chrono-Cultural Aspect of the EB/MB Transition in the South Caucasus. Brepols Publisher, 2024. ISBN 978-2-503-60673-6.
5. Avagyan A., Arakelyan D., Avagyan S., Sahakyan L., Haroutiunian R., Egnatosyan N., Alaverdyan G., Asatryan A., Overview of the geology and related hazards of the Ararat depression, “AJNES” XVIII/1-2, 2024, pp.4-25.
6. Meliksetian Kh., Pernicka E., Badalyan R., Schifer Th., Keller J., Gasparyan B., Jrbashyan R., Navasardyan G., Kunze R. (2024) Trace element geochemistry of Armenian obsidian sources and the provenance of archaeological obsidian. Book chapter. Strategies of Obsidian Procurement, Knapping and Use in the First Farming Societies. Austrian Academy of Sciences Press, pp.167-249. doi:10.1553/9780EAW93241
7. Abersteiner A., Beier Ch., Genske F., Berndt J., Kamenetsky M., Goemann K., Nekrylov N., Kamenetsky V., Multi-stage evolution of the oceanic lithosphere beneath Heard Island, Southern Indian Ocean,” *Journal of Petrology*”, v.65, N 10, 2024, egae106. <https://doi.org/10.1093/petrology/egae106>
8. Antonosyan M., Roberts P., Aspaturyan N., Mkrtchyan S., Lucas M., Boxleitner K., Jabbour F., Hovhannisyan A., Cie’slik A., Sahakyan L., Avagyan A., Spengler R., Kandel A.W., Petraglia M., Boivin N., Yepiskoposyan L., Amano N. Multiproxy evidence for environmental stability in the Lesser Caucasus during the Late Pleistocene, “Quaternary Science Reviews”, 330, 2024, 108559. <https://doi.org/10.1016/j.quascirev.2024.108559>
9. Avagyan S., Arakelyan D., Alaverdyan G., Egnatosyan N., Avagyan A., Insights into earthquake-induced tsunamis in the Caucasus’ largest Lake Sevan, “Scientific Reports”, 14, 2024, 30011. <https://doi.org/10.1038/s41598-024-81884-z>
10. Ernst A., Serobyan V., Danelian T., Biostratigraphic, palaeoenvironmental and palaeobiogeographic implications of bryozoan fauna from the Upper Devonian sequences of Armenia, “Geobios”, v. 85, 2024, pp.10-18, <https://doi.org/10.1016/j.geobios.2024.02.001>
11. Frahm E., Saribekyan M., Mkrtchyan S., Furquim L., Avagyan A., Sahakyan L., Azatyan K., Roberts P., Fernandes R., Yepiskoposyan L., Amano N., Antonosyan M., Increasing obsidian diversity during the Chalcolithic Period at Yeghegis-1 Rockshelter (Armenia) reveals shifts in land use and social networks, “Scientific Reports”, 14(1), 2024, 9528. <https://doi.org/10.1038/s41598-024-59661-9>
12. Galoyan Gh, Geology of the Bazoum horst-anticlinorium (Northern Armenia): existing knowledge gaps and the nature of the southern boundary of the ophiolites, “KATCHAR” Scientific Periodical of NAS RA, N 1, 2024, pp.162-174. Doi: 10.54503/2579-2903-2024.1-162
13. Galoyan Gh., Danelian T., Ojo G., Regnier S., Atayan L., Amiraghyan S., Grigoryan A., Late Valanginian-Hauterivian Radiolarian age constraints for subduction-related submarine volcanic activity in the Amasia-Stepanavan ophiolite (Northern Armenia), “Ofioliti”, 49 (2), 2024, pp. 97-106. Doi: 10.4454/ofioliti.v49i2.573
14. Haberzettl T., Adolpha M.-L., Grigoryan T., Hovakimyan H., Kasper T., Nowaczyk N., Zeedend Ch., Sahakyan L., Causes and consequences of natural and anthropogenically induced Late Holocene hydrological variations on the largest freshwater system in the Lesser Caucasus (Lake Sevan, Armenia). “Quaternary Science Reviews”, v.344, 2024, 108945, <https://doi.org/10.1016/j.quascirev.2024.108945>
15. Hambardzumyan T., Serobyan V., Guillam E., Hairapetian V., Danelian T., Grigoryan A., An updated review of Late Devonian–early Carboniferous ostracods from the Lesser Caucasus, “Proceedings of NAS RA, Earth Sciences”, v.77, N1-2, 2024, pp.5-25. DOI: 10.54503/0515-961X-2023.77.1-2-5
16. Iskra M., Woronko B., Zalewska K., Hovhannisyan A., Kaproń G., Kossowski T.M, Sobczak M., Piliposyan A., Jakubiak K., Urartian Red Burnished Ware in local context: An archaeometric study of the assemblage from Metsamor (Armenia, South Caucasus), “Journal of Archaeological Science: Reports”, v. 53, 2024. <https://doi.org/10.1016/j.jasrep.2023.104370>

17. Kazarian A., Kazarian H., Software for investigating the relationship between hydrogeochemical earthquake precursors and planetary period, "Programming and Computer Software" 49 (Suppl 1), 2024, S1–S6. <https://doi.org/10.1134/S0361768823090050>
18. Khachatryan S., Cascales-Min˜ana B., Danelian T., Breuere P., Steemans Ph., Grigoryan A., Gabrielyan I., Hairapetian V., Regnier S. Marius-Kroeck D., Serobyan V., First palynological evidence from the Upper Devonian of Armenia (northern Gondwanan margin): biostratigraphic implications, "Palaeoworld", v. 34, issue 3, 2024. <https://doi.org/10.1016/j.palwor.2024.09.003>
19. Khachian E., Levonyan L., Egnatosyan N., Prediction of synthetic seismograms and accelerograms for two-layer basis beddings, "Journal of Architectural and Engineering Research", v. 7, 2024, pp. 103-117.
20. Kotlyar O., Serobyan V. Some lower Famennian (Upper Devonian) cyrtospiriferid brachiopods from the Volhyn-Podillian plate (western Ukraine), "Geological Journal" 3(388), 2024, pp. 3-10. <https://doi.org/10.30836/igs.1025-6814.2024.3.309864>
21. Kuttyrev A., Kamenetsky V., Chayka I., Nekrylov N., Kryuchkova L., Shilovskikh V., Kontonikas-Charos A., Krashenninnikov S., Sapegina A., Perchuk A., Metamorphic origin of large nuggets of platinum-group metals: evidence from multiphase inclusions in Os-Ir-Ru alloys from the Adamsfield placer, Tasmania, "Journal of Petrology", v.65, Issue 8, 2024, egae086, <https://doi.org/10.1093/petrology/egae086>
22. Margaryan L., Arakelyan A., Khachatryan A., Simonyan G., Banyan L., Hayrapetyan S., Assessment of a self-purification capacity of Voghji River under the environmental risk, "Journal of Environmental Protection and Ecology", v.25, Issue 2, 2024, pp.374–381.
23. Sargsyan L., Sahakyan E., Levonyan A., Demirchyan H., Navasardyan G., Grigoryan E., Gevorgyan M., Meliksetian K., Recent seismic activity in the area of the Gegham volcanic ridge (Armenia), "Proceedings of NAS RA. Earth Sciences", 2024, v.77, pp.26–40. <https://doi.org/10.54503/0515-961X-2024.77.1-2-26>
24. Serobyan V., Olev V., Mottequin B., Cyrtospiriferid (Spiriferida) brachiopods from the lower Famennian recovery interval of Central Armenia: insights on biotic interactions and "blisters", "Bollettino della Societa Paleontologica Italiana", v.63 (1), 2024. <https://doi.org/10.4435/BSPI.2024.14>
25. Sherriff J.E., Petrosyan A., ... Arakelyan D., Gur-Arieh S., ... Adigyozyan A., Haydosyan H., Glauberman Ph., Gasparyan B., Malinsky-Buller A., Palaeoenvironmental and chronological context of hominin occupations of the Armenian Highlands during MIS 3: Evidence from Ararat-1 cave, "Quaternary Science Advances" 13, 2024, 100122. <https://doi.org/10.1016/j.qsa.2023.100122>.
26. Vardanyan A., Zhang R., Khachatryan A., Melkonyan Z., Hovhannisyan A., Willscher S., Kamradt A., Jost M., Zhang Y., Wang C., Vardanyan N., Extraction of copper from copper concentrate by indigenous association of iron-oxidizing bacteria, "Separations" 11, 2024, 124. <https://doi.org/10.3390/separations11040124>
27. Vinn O., Hambardzumyan T., Temereva E., Grigoryan A., Tsatryan M., Harutyunyan L., Asatryan K., Serobyan V., Fossilized soft tissues in tentaculitids from the Upper Devonian of Armenia: Towards solving the mystery of their phylogenetic affinities, "Palaeoworld," v. 34, issue 3, 2024, 100888. <https://doi.org/10.1016/j.palwor.2024.10.004>
28. Vishnevskaya V., Grigoryan A., Stepanyan Zh., Amiraghyan S., Galoyan G., New Data on the Cenomanian and Early Turonian Radiolaria of Armenia (Lesser Caucasus), "Paleontol.", J. 58, 2024, pp.1015–1024. <https://doi.org/10.1134/S003103012460077X>
29. Volynets A., Nekrylov N., Kostitsyn Y., Goltsman Y., Pevzner M., Perepelov, A., Lebedev V., Tolstykh M., Babansky A., Deciphering mantle source heterogeneity in space and time in the back-arc of a contemporary subduction system: A regional study of the Sredinny Range, Kamchatka, "Lithos" 476, 2024, 107605. <https://doi.org/10.1016/j.lithos.2024.107605>
30. Zelenski M., Kamenetsky V., Nekrylov N., Chayka I., Shcherbakov V., Kontonikas-Charos A., Pokrovsky B., Korneeva A., Sulfide-sulfate metasomatism and nickel release in the suprasubduction mantle, "Earth and Planetary Science", Letters, 626, 2024, 118500. <https://doi.org/10.1016/j.epsl.2023.118500>
31. Агамалян Н.Р., Гамбарян И.А., Гюласарян А.Т., Кафадарян Е.А., Нерсисян М.Н., Чилингарян Г.Н., Сааков А.С., Саргсян А.А., Азатян Т.С., Исследование излучательных и абсорбционных свойств натуральных и синтетических стекол подвергнутых гамма-облучению, Ер., "Изв. НАН Армении. Физика", т. 59, N 3, 2024, с.342-354. DOI: 10.54503/0002-3035-2024-59.3-342
32. Матевосян А.К., С геоэлектрических позиций к вопросу феномена наземных разрядов молний, Ер., "Изв. НАН Армении. Науки о Земле", т. 77, N 1-2, 2024, с. 58-68.

33. Назаретян С.Н., Арутюнян Р.А., Воздействие разрушительного землетрясения на жизнь и здоровье людей, “Вопросы инженерной сейсмологии”, М., т. 51, N 2, 2024. DOI: <https://doi.org/10.21455/VIS2024.2-8>.
34. Назаретян С.Н., Арутюнян Р. А., Сейсмический риск населения Армении. Ер., “Изв. НАН РА. Науки о земле”, т. 77, N 1-2, 2024, с. 41-57. DOI: 10.54503/0515-961X-2024.77.1-2-41

Է.Խաչիյանը, Ա.Հովհաննիսյանը, Ղ.Գալոյանը ստացել են ՀՀ ՏԿԷՆ նախարարի Շնորհակալագրեր:

Ա.ՆԱԶԱՐՈՎԻ ԱՆՎ. ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆժԵՆԵՐԱՅԻՆ ՍԵՅՍՄԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Ե.Գ.Թ. Զ.Կարապետյան
Փոխտնօրեն՝ Ֆ.-Մ.Գ.Թ. Կ.Կարապետյան
Գիտքարտուղար՝ Ֆ.-Մ.Գ.Թ. Վ.Գրիգորյան
Էլեկտրոնային փոստ՝ iges@sci.am
Կայքէջ՝ www.iges.am

Մասնագիտական խորհուրդ 040՝ «Երկրաֆիզիկա»

Նախագահ՝ թղթ. անդ. Ա.Հովհաննիսյան, գիտքարտուղար՝ Ե.Գ.Թ. Զ.Կարապետյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հայաստանի տարածքի երկրակեղևի սեյսմատեկտոնական դեֆորմացիաների հետազոտման համար ուսումնասիրվել է Հայաստանի ու շրջակա տարածքների 2018-23թթ. $K > 9,0$ տեղի ունեցած երկրաշարժերի տարածաժամանակային սեյսմիկ ակտիվության բաշխման քարտեզը՝ ներառելով այդ երկրաշարժերի հետցնցումային ակտիվության հաջորդականությունն ու դրանց ֆոկալ մեխանիզմների պարամետրերը: Բացահայտվել է ուսումնասիրվող տարածքի երկրակեղևի ռեգիոնալ ու լոկալ բնույթի սեյսմատեկտոնական դեֆորմացիաների սեղմման ու ձգման առանցքների ուղղությունների վերադասավորումը, հաստատվել է լարվածային վիճակի տիպը, որը ներկայացվում է մերձմիջօրեականի ուղղությամբ ծռման դեֆորմացիաների տեսքով (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Մ.Մկրտչյան):

Մշակվել և կառուցվել են Հյուսիսային Հայաստանի ու նրան հարակից Ջավախքի սեյսմոակտիվ լեռնաշխարհի ընթացիկ սեյսմիկությունը քանակապես նկարագրող 5 անկախ պարամետրերի ($A_{10}, \gamma, n, \Sigma E, d_e$) փոփոխության տարածաժամանակային շարքերը: Իրականացվել է յուրաքանչյուր պարամետրի ռեգիոնալ ու լոկալ լարվածային դաշտերի փոփոխություններին արձագանքելու զգայունության աստիճանի գնահատում մաթ. վիճակագրական տեսության կիրառմամբ: Բացահայտվել է, որ Արդահան-Բոլնիսի սեյսմոակտիվ գոտում տարանջատվել են սեյսմիկության անոմալ դրսևորման տիրույթներ, որոնք ցույց են տալիս արևելքից դեպի արևմուտք՝ Էրզրումի սեյսմոգենարացնող հանգույց տեկտոնական լարումների տեղափոխման միգրացիոն բնույթը (ղեկ.՝ Բ. Սահակյան):

Ժամանակային համադրական վերլուծության հիման վրա իրականացվել է $M \geq 7.0$ մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժերին բնորոշ հետցնցումների մարման պրոցեսների մոդելավորում: Ցույց է տրվել, որ կախված օջախային գոտու երկրաբանական միջավայրի կառուցվածքից ու դրանց ֆիզիկամեխանիկական հատկություններից՝ ժամանակի

ընթացքում առաձգական լարումների ռելաքսացիոն պրոցեսներն ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները (ղեկ.՝ Մ.Մկրտչյան):

Հայտնաբերվել և հիմնավորվել են երկրաշարժերի հետցնցումների տարածման (միգրացիայի) երևույթի օրինաչափությունները, արդյունքում վերլուծվել է տարածաշրջանում ուժեղ երկրաշարժերի կենտրոնացման դինամիկան (ղեկ.՝ Կ.գ.ա. Ռ.Կարապետյան):

Կազմվել է սեյսմաբանական տվյալների մշակման դեկլաստերիզացիայի հեղինակային ալգորիթմ ծրագրային փաթեթի տեսքով (ղեկ.՝ Լ.Հովհաննիսյան):

Շենքերի, գրունտների դինամիկ բնութագրերի որոշման, ինչպես նաև երկրակեղևի աղմուկների վերծանման նպատակով մշակվել է աղմուկների Horizontal to Vertical Spectral Ratio մեթոդի իրական ժամանակում վերլուծման ալգորիթմ՝ ծրագրային փաթեթի տեսքով (ղեկ.՝ Ս.Սավոյան):

Ուսումնասիրվել են ՀՀ տարածքում տեղի ունեցած երկրաշարժերի ելակետային ու մշակված արդյունքների տվյալների բազայի կառուցման հիմնախնդիրները, որոնք կարևոր նշանակություն ունեն սեյսմիկ ակտիվության օրինաչափությունների մոդելավորման, իրական ժամանակում սպասվող երկրաշարժերի ուժգնության գնահատման, երկրաֆիզիկայի կառուցվածքային մի շարք խնդիրների լուծման համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Ավետիսյան):

Մշակվել են երկրաբանաերկրաֆիզիկական ու գեոդեզիական տվյալների համատեղ վերլուծության անհրաժեշտ ձևաչափեր ու մեթոդական մոտեցումներ՝ ՀՀ հյուսիսային տարածքի երկրակեղևի կառուցվածքային տարրերի երկրադինամիկ ակտիվության գնահատման նպատակով: Արդյունքում ստեղծվել է տվյալների ու մշակումների թվային տեղեկատվական գիտական բազա (ղեկ.՝ Ա. Ավդալյան):

Համաշխարհային ցանցի մագնիսական դիտակայաններից ստացված առավել ամփոփ տվյալների բազայի հիման վրա ուսումնասիրվել են գլխավոր երկրամագնիսական դաշտի բարձր-հաճախային տիրույթը ձևավորող դարային վարիացիաները: 20-րդ դարի սկզբից մինչև 21-րդ դարի երկրորդ տասնամյակն ընդգրկող ընդլայնված ժամանակային տիրույթի համար հայտնաբերվել են ջերքերը՝ որպես կտրուկ թռիչքաձև փոփոխություններ երկրամագնիսական հաստատուն արագացումների արժեքներում, որոնք հատկանշական են ջերքերի միջև ընկած ժամանակային միջակայքերում դաշտի ստացիոնար զարգացման փուլերին: Ստացված արդյունքների համալիր վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երկրի գլխավոր մագնիսական դաշտի դինամիկան հարյուր տարվա կարգի ժամանակային միջակայքի ընթացքում ձևավորվում է գլոբալ ջերքերի տարածաժամանակային սուպերպոզիայի հետևանքով, որն առաջանում է Երկրի հեղուկ միջուկի մակերևույթին հոսքերի համակարգի կտրուկ վերադասավորումների արդյունքում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Սիմոնյան):

Վերլուծվել են Երկրի աշխարհագրական բևեռի X ու Y կոորդինատների տվյալները 1890-2022թթ. ժամանակահատվածի համար (EOP(IERS) C 01-eopc01.1846-now): Թարմացվել են IGRF մոդելների շարքերը 13-րդ գեներացիայի համաձայն: Կենտրոնական էպոխայում՝ 1980թ., դարային քայլի սֆերիկ-հարմոնիկ մոդելի գնահատման համար իրականացվել է տարբեր աղբյուրներում ներկայացված սֆերիկ-հարմոնիկ մոդելների համեմատական վերլուծություն (ղեկ.՝ Մ.Օհանյան):

Հետազոտվել են լայնական տատանումները հողակապային ամրակցված ուղղանկյուն թիթեղում՝ հաշվի առնելով նրանում առաջացող պտտական շարժումը: Ստացվել են նոր ռեզոնանսային հաճախություններ՝ կախված թիթեղում ծռման ալիքի տարածման ուղղությունից (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Կ.Մկրտչյան):

Աշխարհի տարբեր ռեգիոններում գործող մագնիսական դիտակայանների տվյալների բազայի հիման վրա ստացված դարային վարիացիաների շարքերի Ֆուրյե-ձևափոխության միջոցով իրականացված սպեկտրալ վերլուծությամբ հայտնաբերվել են գլխավոր երկրամագնիսական դաշտի վարիացիաների սպեկտրի տասնամյակային տիրույթը ձևավորող պարբերությունները: Ստացվել է, որ ինչպես տարածության, այնպես էլ ժամանակի մեջ ի հայտ գալու առումով ստոխաստիկ բնույթի ջերքերի միջոցով լիովին նկարագրվում են երկրամագնիսական բարձր-հաճախային տիրույթի դարային վարիացիաները (ղեկ.՝ Տ.Մեծոյան):

Մշակվել է դիֆերենցիալ զտիչների «պատուհան» անցած ցրման ճառագայթների ազդեցությունը հաշվի առնելու եղանակ՝ բարդ նյութական կազմ ունեցող պղինձ-կոլչեդանային հանքանյութում արգելակման ճառագայթման ռադիոակտիվ աղբյուրի կիրառմամբ պղնձի ռենտգենառադիոչափական նմուշարկման ժամանակ (ղեկ.՝ Ե.գ.դ. Ա.Թամրազյան):

Երկրաֆիզիկական տվյալների վիճակագրական կախվածության ուսումնասիրությունների արդյունքում պարզվել են Հանքածորի պղնձի հանքավայրում ստացված տարբեր երկրաֆիզիկական պարամետրերի միջև կորելյացիոն կախվածության տեսակները (ուղիղ, հիպերբոլիկ, պարաբոլիկ): Ստացված վիճակագրական կախվածությունների համար հաշվարկվել են ռեգրեսիոն հավասարումներ, ինչը հնարավորություն է տալիս գնահատել մեկ պարամետրի փոփոխության միտումը մյուսի միջոցով (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Կ.Կարապետյան):

Գնահատվել են Հանքածորի պղնձի հանքավայրի հետախուզման ժամանակ դիմադրության մեթոդով էլեկտրապրոֆիլացման հիմնական տիպերի հնարավորությունները՝ հիմնվելով բնական ու տիպային ֆիզիկաերկրաբանական մոդելների վրա (ղեկ.՝ Ա.Զիլինգարյան):

Ցույց է տրվել, որ գոյություն ունեն երկու տիպի էլեկտրոններ, որոնք «նստած են» երկու տարբեր գրավիտացիոն լիցքերի վրա՝ λ - գծային (էլեկտրական) ու ν - հաճախականային (իմպուլսային): Այս նոր տիպի «էլեկտրոնները» կարող են ծառայել որպես երկրաշարժերի նախանշաններ (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Հովհաննիսյան):

Որոշվել են փոփոխական բեռի ազդեցության տակ առաձգական հեծանի երկայնքով հենարանների օպտիմալ դիրքի պարամետրերը՝ ապահովելով հեծանի ամենամեծ ճկվածքի ամենափոքր արժեքը (ղեկ.՝ տեխ.գ.թ. Ա.Էլոյան):

Իրականացվել է 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից առաջ ու հետերկրաշարժյան ժամանակահատվածում կառուցված տարբեր նշանակության քաղաքացիական շենքերի ու շինությունների դասակարգումն ըստ իրենց բնորոշ կոնստրուկտիվ լուծումների, դրանց կառուցման ժամանակաշրջանի ու այդ ընթացքում գործող շինարարական նորմերի, խոցելիության մակարդակի ու կիրառության մասսայականության՝ սեյսմիկ ինտենսիվության գնահատման տարածաշրջանային սանդղակի մշակման, երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման ազգային նորմերի հետագա կատարելագործման նպատակով: ՀՀ տարածքում շենքերի ու շինությունների առկա կառուցապատման ընդհանրացված նկարագրի (առաջին մոտավորությամբ) ու բնութագրական առանձնահատկությունների ուսումնասիրությունն իրականացվել է Գյումրի քաղաքի կառուցապատման օրինակով (ղեկ.՝ Ա.Հովսեփյան):

Գնահատվել և գոտիավորվել է Փոքր Կովկասի հարավ-արևելյան մասն ընդգրկող $\varphi=39.0^{\circ}\text{N}\div 40.5^{\circ}\text{N}$ և $\lambda=44.35^{\circ}\text{E}\div 47.10^{\circ}\text{E}$ աշխարհագրական կոորդինատներով սահմանափակված տարածքում սպասվող սեյսմիկ վտանգը: Կառուցվել են սեյսմիկ վտանգի գոտիավորման 1:200000 մասշտաբի դետերմինիստական ու հավանականային քարտեզներ: Արդյունքները ցույց են տվել, որ սպասվող արագացման առավելագույն

$PGA(դետ.)=0.55g$ և $PGA(հավ.)=0.5g$ արժեքները պետք է սպասել հյուսիսային մասում Մոավի (MF), արևմտյան մասում Երևանյան (ErFI սեզմենտ) ու հարավային մասում Զանգեզուրի (ZF) սեյսմածին գոտիներից, որոնց սեյսմիկ պոտենցիալը գնահատվել է $M_{max}=7.5$ (դեկ.՝ Գ.Մկրտչյան):

Հետազոտությունների արդյունքում ստացվել են Սուրենավանի ու Վեդիի աղբյուրների ջրի ընդհանուր հանքայնացման արժեքների երկարաժամկետ ու ժամանակային կայուն տատանումները, որոնք արտացոլում են տարածաշրջանի գեոդինամիկական զարգացման պայմանները և կարող են օգտագործվել նաև երկարաժամկետ կանխատեսումների համար: Փաստացի նյութի վիճակագրական վերլուծությունը ցույց է տվել, որ երկրաշարժերի ժամանակ կարճաժամկետ կանխատեսման չափանիշների ստացման առավել տեղեկատվական բնութագրիչը որոշակի ժամանակային ընդմիջումով ջրի մեջ ածխաթթու գազի պարունակության ցրումն է (դեկ.՝ Ե.Գ.Թ. Ռ.Փաշայան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Տավրոս-Կովկասյան տարածաշրջանի համար լուծվել է սեյսմաբանական տվյալների մշակման դեկլաստերիզացիայի խնդիրը, որի ժամանակ կիրառվել են Gardner ու Knopoff (1974), Uhrhammer (1986) ու Grünthal (1985) պատուհանային մեթոդները, ինչպես նաև Reasenberգ (1985) ու Zaliapin-Ben-Zion (2013) դեկլաստերիզացիայի ալգորիթմները: Հիմնավորվել են տարածաշրջանի համար առավել կիրառելի մեթոդները (դեկ.՝ Ե.Գ.Թ. Զ.Կարապետյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Пашаян Р.А., Современная геодинамика земной коры территории Армении, Саарбрюген, Германия, LAP Lambert Academic Publishing, 2024, 140 с.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Թամրազյան Ա.Ա., Պղնձի և ցինկի ռենտգենառադիոչափական նմուշարկումը դիֆերենցյալ գոտիների կիրառմամբ, «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Գիտություններ Երկրի մասին», հտ. 77, N 1-2, 2024, էջ 69-78:
3. Авдалян А.Г., Гравитационная модель глубинного строения вдоль профиля Анкаван-Еранос., мат. XV межрег.научно-практич. конф. “Геология, полезные ископаемые и проблемы геоэкологии Башкортостана, Урала и сопредельных территорий”, Уфа, 2024, с. 11-13.
4. Авдалян А.Г., Гравитационная модель коры и верхней мантии по профилю Октемберян-Ленинакан, сб. научн. мат. XXV Уральской молод. научн. школы по геофизике, Екатеринбург, 2024, с. 4-8.
5. Аветисян А. М., Петросян Г. Р., Шахбазян Л. Г., Некоторые вопросы моделирования и цифровизации систем реального времени с помощью сетей петри, «Цифровая экономика как драйвер экономического и социального развития», мат. V межд. научн. конф., М., изд. ООО “Русайнс”, 2024, с. 7-22, https://istina.msu.ru/workers/104890747/all/#conference_presentation.
6. Гаспарян Р.К., К вопросу о геофизических критериях оценки геодинамического состояния оползневых склонов, М., «Интернаука», N 43 (360), ч. 2, 2024 с. 35-39. URL: <https://internauka.org/journal/science/internauka/360>.
7. Гаспарян Р.К., Связь подпочвенного радона с напряжённо-деформированным состоянием массива горных пород, М., «Научная перспектива», 2024, с. 147-149. DOI: 10.34660/INF.2024.76.93.151, ISSN 2077-3153.
8. Геодакян Э.Г., Мкртчян М.А., Саакян Б.В., Карапетян Р. К., Сейсмический мониторинг Кавказского региона и выделения аномальных вариаций ее сейсмичности, сб. научн. тр. XII всерос. научно-практич. межд. конф., “Теория и практика разведочной и промысловой геофизики”, Пермь 2024, с. 72-77.

9. Геодакян Э.Г., Карапетян Дж.К., Заалишвили В.Б., Мкртчян М.А., Саакян Б.В., Оганесян С.М., Карапетян Р.К., Мкртчян Г.А., Разрядка сейсмотектонических напряжений Восточно-Турецкого землетрясения 6 февраля 2023 г. $M_w = 7.8$ как процесс деструкции геологической среды очаговой области, Владикавказ, “Геология и геофизика Юга России”, N 3, 2024, с. 71-84.
10. Мкртчян Г.А., Оценка и построение карт сейсмической опасности территории юго-восточной части Малого Кавказа, сб. ст. XII всерос. молод. конф., М., изд. «Перо», 2024, с. 94-97. ISBN 978-5-00244-857-9.
11. Оганесян С.М., Карапетян Дж.К., Геодакян Э.Г., Саакян Б.В. Задачи, приводящие к необходимости изменения понятия гравитационного заряда, Ер., «Լրիվեր» НПУА, 2 (2), 2024, с. 435-443, ISBN 978-9939-79-089-3.
12. Пашаян Р.А., Карапетян Д.К., Арутюнян Л.В., Маргарян С.С., Геворкян А.А., Карамян Р.А., Товмасыан К.Г., Сейсмотектоническая активность очаговых зон землетрясений Северной и Центральной Армении за период времени 2019-2023 гг., Обнинск, “Российский сейсмологический журнал”, т. 6, N 1, 2024, с. 65–79. DOI: <https://doi.org/10.35540/2686-7907.2024.1.04>.
13. Пашаян Р.А., Карапетян Д.К., Геворкян А.А., Карамян Р.А., Оценка гидрогеологических показателей формирования напряженного состояния земной коры территории Армении, Обнинск, “Геология и Геофизика Юга России”, т.14, N 2, 2024, с. 61-76. DOI:10.46698/VNC.2024.40.17.005
14. Чилингарян А.З., Карапетян К.А., Определение пространственного положения кварц-сульфидных зон оруденения с использованием комплексных данных геолого – геофизических наблюдений, сб. стат. XII всерос. конф. «Геология, геоэкология и ресурсный потенциал Урала и сопредельных территорий», М., изд. «Перо», 2024, с. 26-30, ISBN 978-5-00244-857-9
15. Eloyan A., Karapetyan J., Optimal design in the problem of bending a rectangular orthotropic piecely homogeneous plate, “The Internet and Information and Communication Technologies in Today’s Society”, Cambridge Scholars Publishing, Chapter 10, 2024, pp.72-78. ISBN: 1-0364-0768-3; ISBN13: 978-1-0364-0768-1
16. Karapetyan J., Li L., Zhou J., Hovhannisyan L., Wang Y., Karapetyan R., Gevorgyan A., Harutyunyan K., The problems of declustering in the processing of seismic information in the Tauro Caucasus Region, “Bulletin of the Seismological Society of America”, v.114, N 4, 2024, pp.2008-2027. DOI: 10.1785/0120230291
17. Avetisyan A., Burmin V., Petrosyan G., Analysis of registration and processing of seismological data in the Republic of Armenia from 1991 to 1998, “Open Access Library Journal”, v.11, 2024, pp.379-389.
18. Pashayan R., Harutyunyan L., Tovmasyan K., Avetyan R., Spatio-temporal changes in stress and deformation of the earths crustin in central Armenia, “Polish journal of science”, N 73, 2024, pp. 15-20.

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Յու.Սուվարյան
Գիտքարտուղար՝ Ա.Մելքումյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Պատմության, Արևելագիտության, Արվեստի, Հնագիտության և ազգագրության, Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության, Հ.Աճառյանի անվ. լեզվի, Մ.Աբեղյանի անվ. գրականության, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտները, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 5 ակադեմիկոս և 14 թղթակից անդամ:

2024թ. անցկացվել է բաժանմունքի 3 ընդհանուր ժողով:

Բաժանմունքի հունվարի 17-ի ընդհանուր ժողովում լսվել է Արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում առաջադրված թեկնածուների՝ սահմանված կարգով քննարկման ու նախագահությանը ներկայացնելու հարցը:

Բաժանմունքի ապրիլի 4-ի տարեկան ընդհանուր ժողովում քննարկվել և հաստատվել է բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յու.Սուվարյանի «Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի 2023թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցումը: Լսվել են թղթ. անդ. Ա.Աղասյանի «Սասունցի Դավթի կերպարը Երվանդ Քոչարի արվեստում», Բ.Գ.Դ. Վ.Կատվայանի «Լեռնային Ղարաբաղի բարբառները» գիտական զեկուցումները:

Բաժանմունքի հուլիսի 3-ի ընդհանուր ժողովի օրակարգում էր Արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում առաջադրված թեկնածուների կանոնակարգով սահմանված ձևաչափով քննարկման և նախագահությանը ներկայացնելու հարցը:

Բաժանմունքի ակտիվ մասնակցությամբ գիտական կազմակերպությունների հետ կազմակերպվել են հետևյալ միջազգային գիտաժողովները՝ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության, Բելառուսի ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտների և ՌԴ գիտությունների ակադեմիայի Սարատովի գիտական կենտրոնի հետ համատեղ՝ «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներն արհեստական բանականության նվաճումների ներդրման պայմաններում», Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի հետ՝ Վ.Բրյուսովի մահվան 100-րդ տարելիցին նվիրված «Գրականագիտական և մշակութաբանական փոխառնչությունների խնդիրները համընդհանրացման դարաշրջանում», «Գրական ուղղությունները և դպրոցները համաշխարհային դասական գրականության և ազգային գրականությունների համատեքստում (վաղ կլասիցիզմից մինչ 20-րդ դարի 20-ական թվականներ)» տիպաբանությունը, ընդհանրություններն ու առանձնահատկությունները», Պ.Սևակի ծննդյան 100-ամյակին և մեծավաստակ գիտնական ակ. Ս.Սարինյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական, Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի հետ՝ «Արևմտահայերենը 21-րդ դարում. մարտահրավերներ և հնարավորություններ», «Բարբառագիտական ընթերցումներ»:

Հաշվետու տարում կայացել է բաժանմունքի բյուրոյի 14 նիստ:

Բյուրոյի նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2024թ. աշխատանքային պլանը, բաժանմունքի գիտական հիմնարկների՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, պետական նպատակային հայտերն ու ծրագրերը, նշված ծրագրերի կատարման ընթացիկ հաշվետվությունները, ասպիրանտուրայի ընդունելության տեղերի հայտերը,

«Հայոց պատմության» I հատորի I գրքի շարադրման ընթացքի, բաժանմունքի գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման և գիտական հանդեսները միջազգայնացնելու ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքների, բաժանմունքում մասնագիտական խորհուրդների կազմավորման, բաժանմունքի գիտական կազմակերպությունների «Գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» և «ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունները սարքավորումներով վերազինում» 2024թ. բյուջետային ծրագրերի և գիտակազմակերպական այլ հարցեր: Բաժանմունքի բյուրոյի դեկտեմբերի 11-ի նիստում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի բյուրոյի, գիտական հաստատությունների 2024թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին հաշվետվությունները, Արևելագիտության ինստիտուտի գիտական անձնակազմի ժողովի առաջադրած տնօրենի թեկնածության հարցը՝ ըստ ԳԱԱ գիտական կազմակերպության տնօրենի ընտրության նոր կանոնակարգի:

2024թ. հրատարակվել են «Պատմաբանասիրական հանդեսի», «Բանբեր հայագիտության» և «Լրաբեր հասարակական գիտությունների» պարբերականների 3-ական համարներ, թողարկվել է «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային անգլերեն հանդեսի 2 համար: Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտը հրատարակել է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի 1, «Ջահուկյանական ընթերցումներ» հանդեսի 2, Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտը՝ «Գրականագիտական հանդես», Արվեստի ինստիտուտը՝ «Արվեստագիտական հանդես» պարբերականների 2-ական համարներ:

Բաժանմունքի գիտական կազմակերպությունների աշխատակիցները հրատարակել են 134 գիրք (13-ն արտասահմանում), 16 դասագիրք և ձեռնարկ, 712 հոդված գրախոսվող ամսագրերում (106-ը Scopus/WoS), 364 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (99-ն արտասահմանում), 223 թեզիս (69-ն արտասահմանում), ՄԳՇ համակարգում հրապարակվել է 111 հոդված:

Անցկացվել են 36 միջազգային և 21 հանրապետական գիտաժողովներ:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ակ. Ա.Մելքոնյան

Փոխտնօրեն՝ պ.գ.դ. Կ.Խաչատրյան

Գիտքարտուղար՝ պ.գ.թ. Հ.Մուրադյան

Էլեկտրոնային փոստ՝ history@sci.am, patminst@sci.am

Կայքէջ՝ www.academhistory.am

Մասնագիտական խորհուրդ 004՝ «Հայոց պատմություն»

Նախագահ՝ ակ. Ա.Մելքոնյան, գիտքարտուղար՝ պ.գ.թ. Հ.Մուրադյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918թ.» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ակ. Ա.Մելքոնյան) հրատարակվել են.

- «Տավուշ գավառը XVII դ. – XVIII դ. առաջին քառորդին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» գիրքը, որը նվիրված է Տավուշ գավառի 1600-1725թթ. պատմությանը: Հատուկ ուշադրություն է դարձվել պատմաժողովրդագրական

հարցերին: Հիմք ընդունելով 1727թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ը՝ ներկայացվել են հայերի և գավառում ու հարակից տարածքներում հայտնված թյուրքական ցեղերի բնակության արեալը, Տավուշի գյուղերն ու հարկատու հայ բնակիչները՝ անուն առ անուն, գավառի տնտեսական դրությունը: Անդրադարձ է կատարվել նաև հայկական մելիքության ու հոգևոր-մշակութային կյանքի պատմությանը:

- «Հայ ազգային ազատագրական պայքարի 1885-1908թթ. փուլը հնչակյան գործիչների գնահատմամբ» մենագրությունը, որտեղ լուսաբանվել են հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության 1885-1908թթ. իրադարձություններով հարուստ ժամանակահատվածի խնդիրները և դրանց գնահատումը հնչակյան գործիչ-տեսաբանների կողմից:

- «Պետականության վերականգնման գաղափարը Հայոց պատմության հոլովույթում (XVI դ. կեսեր – XX դ. սկիզբ)» մենագրությունը, որը նվիրված է Հայոց հին և միջնադարյան պետականությունների կորստից հետո հայ ժողովրդի համար քաղաքական գերագույն արժեք հանդիսացող ազատության և անկախ պետականության վերականգնման գաղափարի շուրջ հայ հոգևոր ու աշխարհիկ գործիչների, հասարակական-քաղաքական մտքի դեգերումներին, փայփայած հույսերին, կազմած ծրագրերին, որոնք, ի վերջո, XX դարի շեմին նյութականացվեցին, և 1918թ. վերականգնվեց հայոց անկախ պետականությունը: Աշխատանքում հարկ եղած չափով անդրադարձ է կատարվել նաև հարցի պատմագրությանը:

- «Լոռե բերդից մինչև Ստեփանավան. պատմամշակութային ժառանգության հետքերով» և «ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի XLIII գիտական նստաշրջան՝ նվիրված Ս. Կրկյաշարյանի ծննդյան 100-ամյակին» գիտաժողովների նյութերի ժողովածուները: Գիտաժողովներից մեկը նվիրված էր Ստեփանավան քաղաքի անվանակոչության 100-ամյակին, մյուսը՝ Պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի հերթական գիտական նստաշրջանին էր: Զեկուցումներում քննարկվել են Հայաստանի հին և միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմությանն առնչվող մի շարք հիմնահարցեր:

«Կիլիկիայի հայությունը 1908–1922թթ.» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն, որտեղ ընդգրկվել են 2022թ. ինստիտուտում տեղի ունեցած միջազգային գիտաժողովի զեկուցումները: Դրանք վերաբերում են Կիլիկիայի հայերի ստեղծած պետականությանը, տնտեսական, գաղափարախոսական ու մշակութային կյանքին:

«Հայաստանը և հայությունը նորագույն ժամանակաշրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.դ. Կ.Խաչատրյան) հրատարակվել են.

- «Լեւոն Գաբրիել Շաղոյեան (1887–1974)» մենագրությունը, որտեղ ներկայացվել է XX դարի հայ ազգային ազատագրական պայքարի ամենապայծառ հերոսներից Լեւոն Շաղոյանի կյանքն ու գործունեությունը, որին ժողովուրդը մեծարել է «փաշա» պատվանունով: Աշխատությունում լուսաբանվել է Լ.Շաղոյանի 1908-1918թթ. Վասպուրականում, 1918-1930-ական թվականներին Պարսկաստանում ու Իրաքում ծավալած գործունեությունը:

- «Հայերն Աֆրիկայում. պատմաբանասիրական ուսումնասիրություն» աշխատությունը, որն ընդգրկում է հայության ներկայության պատմությունն Աֆրիկա մայրցամաքի երկրներում (բացառությամբ Եգիպտոսի ու Եթովպիայի) հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

«Աղբյուրագիտություն և պատմագրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Ա.Շահնազարյան) հրատարակվել է. ««Մշակ»-ը պատմության զուգահեռականներում»

«Մշակ»-ի հիմնադրման 150-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն, որտեղ բազմակողմանիորեն լուսաբանվել է լրագրի ամենատարբեր հրապարակումների ու հոդվածների գնահատականը: Ուշագրավ է, որ վեր են հանվել այնպիսի հիմնահարցեր, որոնց չեն անդրադարձել լրագրի հետազոտողներն իրենց աշխատություններում:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Բախչիկյան Ա.Հ., Հայերն Աֆրիկայում. պատմաբանասիրական ուսումնասիրություն, Ե., Պատմ. ինստ., 2024, 293 էջ:
2. Գասպարյան Դ.Վ., Համո Սահյան, Ե., «Անտարես» հրատ., 2024, 384 էջ:
3. Եսայան Ա.Ա., Տավուշ գավառը XVII դ. – XVIII դ. առաջին քառորդին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., «Մեկնարկ» հրատ., 2024, 196 էջ + քարտեզ:
4. «Լոռե բերդից մինչև Ստեփանավան. պատմամշակութային ժառանգության հետքերով» և «ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի XLIII գիտական նստաշրջան՝ նվիրված Ս. Կրկյաշարյանի ծննդյան 100-ամյակին» գիտաժողովների նյութերի ժողովածու, Ե., Պատմ. ինստ., 2024, 281 էջ:
5. «Կիլիկիայի հայությունը 1908–1922 թթ.» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., Պատմ. ինստ., 2024, 180 էջ:
6. Հակոբյան Ա.Մ., Պետականության վերականգնման գաղափարը Հայոց պատմության հոլովույթում (XVI դ. կեսեր–XX դ. սկիզբ), Ե., «Գիտություն» հրատ., 2024, 422 էջ:
7. Հայոց պատմություն, գիրք II (Ք.ա. IX դար–Ք.հ. III դար), Հին դարեր (Հին քարի դար–Ք.հ. III դար), հտ. I, Ե., «Հանգակ» հրատ., 2024, 700 էջ+24 էջ ներդիր:
8. Հարությունյան Մ.Ա., Ռազմական շինարարությունը Արցախում 1991-2006թթ., Ե., «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2024, 416 էջ+նկ.:
9. Հարությունյան Մ.Ա., Արցախի Հանրապետության Հաղրուփի պաշտպանական շրջանի մարտական ուղու պատմությունից, Ե., «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2024, 256 էջ+8 էջ լուսանկ., քարտեզ:
10. «Մշակ»-ը պատմության զուգահեռականներում» միջազգային գիտաժողով՝ նվիրված «Մշակ»-ի հիմնադրման 150-ամյակին, Ե., Պատմ. ինստ., 2024, 573 էջ:
11. «Պատմութիւն Տէր Յովհաննիսի Թովմաճանեան, որ զամս երեսուն 'ի կեանս իւր շրջեցաւ յԵւրոպիայ, յԱսիայ, 'ի Հնդկս եւ յԱփրիկէ, 'ի Հապեշտան» (աշխատասիրութեամբ Է.Թաճիրեանի եւ Մ.Կարապետեանի), Ե., Լոնդոն, Սք. Ղազար, Վենետիկ, 2024, 768 էջ:
12. Սարգսյան Ս.Թ., Հայ ազգային ազատագրական պայքարի 1885-1908թթ. փուլը հնչակյան գործիչների գնահատմամբ, Ե., Պատմ. ինստ., 2024, 192 էջ:
13. Օհանեան Ա.Տ., Լեւոն Գաբրիէլ Շաղոյեան (1887–1974), Ե., Պատմ. ինստ., 2024, 257 էջ:
14. Օհանեան Ա.Տ., Իրաքահայ թեմի եւ համայնքի համառոտ պատմութիւն (համահեղինակ եւ խմբագիր), Ե., «Ինֆոկոպ» հրատ., 2024, 457 էջ:
15. Амбарцумян К.Р., Величко Л.Н., Крючков И.В., Меликян В.Г., Мелконян А.А., Саакян Р.О., Армянский вопрос в международных отношениях (1895–1923гг.), Ставрополь, изд. Северо-Кавказского федерального университета, 2024, 208 с.
16. Россия и народы Закавказья (конец XVIII – начало XX века): модернизационные процессы и межкультурный диалог, сборник документов, составители: Квициани Д.Д., Крючков И.В., Мелконян А.А. и др., Ставрополь, издатель Еремин С.В., 2024, 400 с.
17. Тунян В.Г., Армянский вопрос и Геноцид армян в политмифотворчестве: конец XX - начало XXI вв., Ер., изд. "Чартарагет", 2024, 128 с.
18. Тунян В.Г., Манук-бей: грани созидания, Ер., изд. "Чартарагет", 2024, 240 с.
19. 2024 Մաղալյան Ա., Հայերենով թարգմանված երկու սկզբնաղբյուր Նադիր շահի ժամանակաշրջանի մասին, թարգմանությունը՝ Գարուն Սարգսյանի, Թեհրան, Իրանի պատմություն հրատարակչություն, (2024):

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

20. Գասպարյան Դ.Վ., Գրականություն, 8-րդ դասարան, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2024, 176 էջ:
21. Գասպարյան Դ.Վ., Աղաջանյան Ա.Գ., Գրականություն, 8-րդ դասարան (մեթոդական ուղեցույց), Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2024, 320 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

22. Ազատյան Շ.Խ., Դավիթ Դվնեցու վկայաբանությունը և նրա պատմագիտական արժեքը, Ե., «Արևելյան աղբյուրագիտություն», N 5, 2024, էջ 129-176:
23. Ազիզբեկյան Ռ.Լ., Միջպետական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 1992-2000 թթ., Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2 (671), 2024, էջ 9-28:
24. Ազիզբեկյան Ռ.Լ., Հակոբյան Տ.Վ., Ռուսաստանի Դաշնությունը դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում (1991թ. սեպտեմբեր - 1992թ. դեկտեմբեր), Ե., «Հայոց պատմության հարցեր» գիտ. պարբերական, N 1 (28) 2024, էջ 107-129:
25. Ամիրջանյան Հ.Հ., Ազնվականական հողատիրությունը Լոռիում XIX դարի երկրորդ կեսին, «Տայքը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ) գիտաժող. նյութ., Գյումրի, 2024, էջ 233-246:
26. Ամիրջանյան Հ.Հ., Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տպարանի գործունեությունը, «Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և նրա դերը հայության կրթական կյանքում» միջազգ. գիտաժող. նյութ., Ե., 2024, էջ 10-21:
27. Ամիրջանյան Հ.Հ., Հայ պարբերական մամուլի խնդիրները «Արարատ» ամսագրի էջերում (1868-1919), «Սուրբ Էջմիածինը՝ գրքի հանգրվան», գիտաժողով՝ նվ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի հիմնադրման 10-ամյակին, Ս. Էջմիածին, 2024, էջ 89-98:
28. Ավագյան Բ.Ռ., Սիրիական կրթական ծրագրով «Կիլիկեան» դպրոցը Հայաստանում (2012-2013թթ.), Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N2, 2024, էջ 116-130:
29. Ավագյան Բ.Ռ., Աջակցություն սիրիահայ հայրենադարձների ուսումնակրթական խնդիրներին (2012-2018 թթ.), Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N3, 2024, էջ 35-47:
30. Ավետիսյան Ս.Ռ., Ամերկումի և ՀԽՍՀ իշխանությունների փոխհարաբերությունները 1920-ականներին, Պեյրուֆ, «Հայկազեան հայագիտական հանդես», N 44/1, 2024, էջ 183-192:
31. Բադալյան Մ.Ս., Գալստյան Վ.Ա., Խուդանյան Հ.Հ., Իլիկ, թե՛ գուրգ. որոշ դիտարկումներ Կարմիր բլուրից հայտնաբերված Թեյշեբա աստծո ատրիբուտներից մեկի վերաբերյալ, Ե., «Պատմամշակութային ժառանգություն» գիտ. հոդված. ժող., N 5, 2024, էջ 21-26:
32. Բալայան Վ.Ռ., Բալայան Մ.Գ., Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցին որպես Արցախի թեմի նստավայր, Ե., «ՎԷՄ» համահայկական հանդես, N 1(85), 2024, էջ 66-93:
33. Բախչինեան Ա.Հ., Սուրճը եւ սրճարանային մշակույթը հայերի մէջ (պատմաբանասիրական ակնարկ), Վիեննա, «Հանդէս ամսօրեայ», N 1-12, 2024, էջ 445-484:
34. Բախչինեան Ա.Հ., Մատթեոսեան Վ.Զ., Արմէն Օհանեան-Արշակ Զօպանեան առնչութիւնները, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2024, էջ 157-168:
35. Գասպարյան Դ.Վ., Պարույր Սևակ – 100. հայրենիքը և բանաստեղծը, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 1, 2024, էջ 131 – 163:
36. Գասպարյան Դ.Վ., Եղիշե Զարենց-Նիկոլ Աղբալյան, Ե., «Բանբեր հայագիտության», N 1, 2024, էջ 131-149:
37. Գասպարյան Դ.Վ., Ակսել Բակունցը քաղաքական բռնությունների զոհ, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2024, էջ 78-97:
38. Գրիգորյան Մ.Գ., Կինը և մասնավոր սեփականությունը, Ե., «Պատմամշակութային ժառանգություն» գիտ. հոդված. ժող., N 5, 2024, էջ 84-96:
39. Դանիելյան Մ.Դ., Ազգային նարոդնիկական խմբակները Մոսկվայում և Պետերբուրգում XIX-րդ դարի ութսունական թվականների երկրորդ կեսին, Ե., “Регион и мир” научно-аналитический журнал, N 5, 2024, էջ 54-69:
40. Եսայան Ա.Ա., Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքը 17-րդ դարում, Ե., «Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի», N 1 (13), 2024, էջ 8-18:
41. Զաքարեան Լ.Ս., Պետականաշինութեան հիմնախնդիրները ՀՀ գերագույն խորհրդում 1990-1995-ին, Պեյրուֆ, «Հայկազեան հայագիտական հանդես», N 2, 2024, էջ 185-216:

42. Թամարյան Զ.Լ., Լեզվական իրավիճակը Խորհրդային Վրաստանում XX դարի 20-80-ական թվականներին, Ե., «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը և լեզուների դասավանդման արդի հիմնահարցերը» հանրապետ. գիտաժող. նյութ., 2024, էջ 137-146:
43. Թաջիրյան Է.Խ., Կարապետյան Մ.Մ., Սարգիս դպիր Յովհաննիսեան, Հրդեհներ, Համաճարակներ, Հրավառություններ, Երկրաշարժեր. Բնական աղետները Կ. Պոլսում (1760-1790-ական թթ.), Վիեննա, «Հանդես Ամսօրեայ», 2024, էջ 301-370:
44. Թոխաթյան Կ.Ս., Արագած լեռան ժայռապատկերները, Ե., «Գիտության աշխարհում», N 1, 2024, էջ 24-33:
45. Թոխաթյան Կ.Ս., Հայաստանի ժայռափորագիր նշանները և միջնադարյան գաղափարագրերը, Ե., «Հայոց պատմության հարցեր» գիտ. պարբերական, N 1 (28), 2024, էջ 3-26:
46. Թոխաթյան Կ.Ս., Հայաստանի հնագույն մշակույթի բազմաշերտ քարտեզ-շտեմարան, Ե., «Պատմա-մշակութային ժառանգություն V» գիտ. հոդված. ժող., 2024, էջ 226-241:
47. Թորոսյան Վ.Հ., Սուրբ Ներսէս Շնորհալին եւ Կիլիկիայի հայկական պետականությունը, Անթիլիաս-Լիբանան, «Հասկ» հայագիտական հանդես, Նոր շրջան, ԺԳ տարի (2011-2023), 2024, էջ 205-220:
48. Թորոսյան Վ.Հ., Ֆրանսիական հետքեր Կիլիկիայի հայոց արքաների թագադրման ծեսում, Ե., «Բանբեր Մատենադարանի», N 38, 2024, էջ 32-47:
49. Խաչատրյան Հ.Ա., Մամիկոնյանների տիրույթների խնդիրը VIII դ. վերջին, Ե., «Պատմա-բանասիրական հանդես», N 2, 2024, էջ 26-38:
50. Խառատյան Ա.Ա., Դավանական ներհակությունները Կոստանդնուպոլսի հայ համայնքում (XVIII դ. I տասնամյակ), Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, 2024, էջ 12-29:
51. Խառատյան Ա.Ա., Զաքարյան Ա.Հ., Գիտության անխոնջ ջահակիրը (ակ. Վ.Միքայելյանի ծննդյան 100-ամյակի առթիվ), Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, 2024, էջ 381-385:
52. Խառատյան Ա.Ա., Օսմանեան իշխանությունները եւ յոյն-հայկական բանավեճը ըստ յունական սկզբնաղբիւրի (1720-1730-ական թթ.), Երուսաղէմ, «Սիոն», N 1-3, 2024, էջ 72-83:
53. Խառատյան Ա.Ա., Կոստանդնուպոլսի հայ համայնքում դավանական ներհակությունների պատմությունից (1715-1764), Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2024, էջ 3-20:
54. Խառատյան Ա.Ա., Սիլվարդ Մալխասեան, Աւետիք Պատրիարքի խորհրդաւոր կեանքը, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2, 2024, էջ 384-391 (գրախոսություն):
55. Խառատյան Ա.Ա., Հայկազ Մանուկի Պողոսյան (ծննդյան 100-ամյակի առթիվ), Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 2, 2024, էջ 249-254:
56. Խուդինյան Գ.Ս., ՀՅ Դաշնակցությունն առաջավորասիական և արևելաեվրոպական երկրների քաղաքական համակարգերում 19-րդ դարի վերջերին - 20-րդ դարի սկզբներին. մաս V: ՀՅԴ առանցքային դերակատարությունը Իրանի 1905-1912թթ. Սահմանադրական հեղափոխության եվրոպական արևելումի ապահովման գործում, Ե., «Վէմ» համահայկական հանդես, N 3, 2024, էջ 57-78:
57. Խուդինյան Գ.Ս., Դանիելյան Մ.Դ., ՀՅ Դաշնակցության՝ Բաքվի կազմակերպության գործունեության հետաքննությունը. Ռուսաստանի Արդարադատության նախարարության 1895-1897 թվականների փաստաթղթերում, Ե., «Վէմ» համահայկական հանդես, N 2, 2024, էջ 299-342:
58. Խուդինյան Գ.Ս., Կոզնիտիվ պատերազմի գործիքներն ու թիրախները, Ե., «Վէմ» համահայկական հանդես, N2, 2024, էջ 3-8:
59. Խուդինյան Գ.Ս., Հայագիտության քաղաքակրթական գործառույթը, Ե., «Վէմ» համահայկական հանդես, N3, 2024, էջ 3-9:
60. Խուդինյան Գ.Ս., Հայերի վախերը չափելու ժամանակը, Ե., «Վէմ» համահայկական հանդես, N 1, 2024, էջ 3-7:
61. Խուդինյան Գ.Ս., Սիմոն Զաւարեանի անտիպները, «Սիմոն Զաւարեանի անտիպ նամակները», Պէյրութ, 2024, էջ 5-10:
62. Կարապետյան Ա.Հ., Պետականության վերականգման գաղափարի արծարծումները հայոց պետականության հոլովությունում, Ե., «Բանբեր հայագիտության» հայագիտ. միջազգ. հանդես, N 2, 2024, էջ 210-213:
63. Կարապետյան Ա.Հ., Հոգևոր լույսի խորհուրդը, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, 2024, էջ 360-370:
64. Կարապետյան Ա.Հ., Հասարակական-քաղաքական համազգային հիմնախնդիրների արտացոլումը «Հորիզոն» պարբերականի էջերում, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, 2024, էջ 61-73:

83. Խալիկեան Զ.Գ., Մարաշլեան Յ.Գ., Արեւմտահայերէն խօսքը Հայաստանի մէջ, էջ 13-28:
84. Ափոշեան Ա.Յ., Արեւելահայերէնէն արեւմտահայերէն փոխադրելու արդի հիմնախնդիրները. քերականութիւն եւ եզրութաբանութիւն, էջ 29-40:
85. Խաչատրյան Վ. Մ., Գոյականի հոգնակիակազմության խնդիրները արևմտահայերենում, էջ 41-63:
86. Տիոյեան Ս.Կ., Խալիկեան Զ.Գ., «Հակադիր» իմաստներ արեւմտահայերէն-արեւելահայերէն բառապաշարին մէջ, էջ 87-95:
87. Մարաշլեան Յ.Գ., Արևմտահայերէնի կենսունակութեան պայմանները, էջ 95-105:
- Հոդվածները հրապարակվել են «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2024, 269 էջ**
88. Avetyan S.R., Some Diachronic Observations on Forms of Theorist with a Vocalic Augment in the Dialect of Šatax, p. 3-9.
89. Բառնասյան Զ.Ա., Երկբարբառացումը որպես քերականական միջոց հայերենի որոշ բարբառներում, էջ 20-28:

90. Գևորգյան Գ.Գ., Դիտարկումներ Սևերեկի, Տիգրանակերտի և Եդեսիայի հնչյունական առնչությունների շուրջ, էջ 29-42:
91. Զաքարյան Հ.Լ., Բարբառային մի հնաբանության մասին, էջ 43-61:
92. Խաչատրյան Հ.Ռ., Դիտարկումներ Համշենի բարբառի հնչյունական առանձնահատկությունների շուրջ, էջ 62-83:
93. Խաչատրյան Վ.Մ., Հինգերորդ դարի հայերեն բարբառների հարցը հայերենագիտության մեջ, էջ 84-113:
94. Կատվալյան Վ.Լ., Խառատյան Մ.Հ., Սահակյան Ն.Գ., Շարահյուսական որոշ զուգաբանությունների արտահայտությունը բարբառային հայերենում, էջ 114-130:
95. Մարգարյան Ի.Ա., Չբառարանագրված դարձվածքներ Գորիսի բարբառում, էջ 131-147:
96. Սարգսյան Ա.Յու., Ղարաբաղի բարբառի առաջին ուսումնասիրությունները, էջ 176-188:
97. Վարդանյան Ա.Վ., Դիտարկումներ Ջուղայի բարբառի վերաբերյալ տարածամանակյա հայեցակետով, էջ 189-200:
98. Քումունց Մ.Ս., Բաբայան Ա., Ածանցումը Գորիսի բարբառում, էջ 201-228:
99. Քումունց Մ.Ս., Բակունց Ա., Դարձվածքները Ա.Բակունցի «Կյորես» վիպակում (համեմատական քննություն), էջ 229-248:
100. Քումունց Մ.Ս., Բաղդասարյան Մ., Կապի հնչյունական, բառային և քերականական դրսևորումները Գորիսի բարբառում, էջ 230-249:
101. Քումունց Մ.Ս., Մարգարյան Մ., Արևելյան լեզուներից անցած փոխառությունները Գորիսի բարբառում (ըստ Ս. Խանգադյանի «Մատյան եղելությանց» վիպակի), էջ 250-269:
Հոդվածները հրապարակվել են «Հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., «Ալվարդ Օհանջանյան Վառլենի» ԱԶ հրատ., 2024, 620 էջ, https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/Gitajoghov_2024.pdf
102. Սարգսյան Մ.Ա., Մոլոդիչենկո Ե., Հայերենի ուսուցումը միջմշակութային հաղորդակցության միջոցով. պատկերացումներ և հեռանկարներ, էջ 21-27:
103. Ավագյան Օ.Ս., Ժամանակակից արևելահայերենի լեզվական իրավիճակը և գրական լեզվի զարգացման միտումները, էջ 39-51:
104. Ներսիսյան Վ.Ա., Ավետիսյան Ա.Ա., Բառակազմության ուսումնասիրումը երկրորդ դասարանում, էջ 81-90:
105. Միքայելյան Ս.Ա., Հայերենում և ռուսերենում գործածվող արաբերեն փոխառյալ բառերի շուրջ, էջ 91-96:
106. Խաչիբաբյան Ն.Պ., Բաղդամյան Ս.Ե., Գենդերային դրսևորումները հայերեն առաձներում և ասացվածքներում, էջ 97-106:
Հոդվածները հրապարակվել են «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2024, 173 էջ, https://language.sci.am/sites/default/files/hlp_-_gitazhoghovi_nyowter_07.12.pdf
107. Մխիթարյան Գ.Մ., Հայերեն Աստվածաշնչում սեռական, տրական հոլովներով ենթակաների գործածության շուրջ, էջ 5-10:
108. Ափոշեան Ա.Յ., Յատուկ անուններու տառադարձության խնդիրները արեւմտահայերէնի մէջ. պատմական զարգացումն ու զուգընթացութիւնը արեւելահայերէնի հետ, էջ 34-49:
109. Գրիգորյան Ս.Մ., Իրավական հասկացությունները Գ.Տաթևացու «Գիրք Քարոզության» Ամառան հատորի «Նորին քարոզ վասն տասնաբանեան օրէնս» գլուխներում, էջ 50-60:
110. Թադևոսյան Հ.Մ., Բառակապակցական բուսանունների կիրառությունը Ա.Ամասիացու բժշկարաններում, էջ 78-86:
111. Խաչատրյան Վ.Մ., Միջինհայերենյան փոխառությունների գործածությունը XIV դարի երկերում, էջ 87-103:
112. Խալիկեան Զ.Գ., Հայերէնէ անգլերէն գրուցատրութիւն, էջ 104-110:
113. Սիրունյան Տ.Ղ., Բարդուղիմեոս Բոլոնիացու «Դիալեկտիկայի» քերականական լատինաբանությունները՝ վաղ և ուշ շրջանի ձեռագրերի համեմատությամբ, էջ 120-127:

Պաշտպանվել է 1 թեկնածուականատենախոսություն:

Մ.ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Բ.Գ.Թ. Հ.Որսկանյան
Փոխտնօրեն և գիտքարտուղար՝ Բ.Գ.Թ. Մ.Մարգարյան
Էլեկտրոնային փոստ՝ litinst@sci.am
Կայքէջ՝ www.litinst.sci.am

Մասնագիտական խորհուրդ 003՝ «Գրականագիտություն»

Նախագահ՝ Բ.Գ.Դ. Ս.Աբրահամյան, գիտքարտուղար՝ Բ.Գ.Թ. Ս.Մարգարյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Հ.Որսկանյան) «Հայ հին և միջնադարյան գրականություն» գիտական ուղղությամբ կատարված հետազոտություններով տրվել է հայ հին և միջնադարյան գրականության մի շարք ժանրերի տիպաբանական մանրամասն բնութագրությունը: Օգտագործվել են ոչ միայն տպագիր, այլև ձեռագիր աղբյուրներ: Առանձին քննության նյութ են առակի ժանրի զարգացման օրինաչափությունները հայ և համաշխարհային գրականության հատույթներում, միջնադարյան գրավոր հանելուկները՝ իբրև կիրառական ժանր: Ամբողջացվել են 17-18-րդ դարերի պատմիչներին ներկայացնող հատվածները: «Թումանյանը և համաշխարհային միջնադարյան գրականությունը» թեմայի շրջանակում պատրաստվում է «Թումանյանը և պարսից գրականությունը» հետազոտությունը, ուսումնասիրվում են գուսանաժողովրդական հայրենները: Հրատարակվել է աշխատության 2-րդ հատորը, որում քննվել են 39 հայրենների բնագրեր: Ուսումնասիրվում են նաև հայ գրականության հարցերը հայ գաղթավայրերի 16-18-րդ դարերի տպագիր դասագրքերում:

«Հայ նոր գրականություն» գիտական ուղղությամբ (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Ս.Մարգարյան) կատարվել են 19-րդ դարի վերջին տասնամյակների և 20-րդ դարասկզբի գրականության, գրական ուղղությունների ու դպրոցների հետազոտություններ: Ուսումնասիրվել ու քննության են ենթարկվել Գ.Սրվանձտյանցի, Ե.Տեմիրճիպաշյանի, Լ.Մանվելյանի, Սիամանթոյի կյանքն ու գրական ժառանգությունը, Հովհ.Թումանյանի կենսիմաստասիրությունը, Վ.Տերյանի քաղաքական փիլիսոփայությունը: Զուգահեռներ են տարվել Սիամանթոյի ստեղծագործության ու եվրոպական գրականության միջև, վեր են հանվել Գ.Սրվանձտյանցի գիտագեղարվեստական ժառանգության և 19-րդ դարի 60-80-ական թվականների արևմտահայ գրականության նշանավոր ներկայացուցիչների՝ Ալիշանի ու Խրիմյան Հայրիկի երկերի առնչությունները: Կատարվում է «Արցախը հայ դասական գրողների գործերում» հետազոտությունը:

«Նորագույն շրջանի հայ գրականություն» գիտական ուղղությամբ (ղեկ.՝ Բ.Գ.Դ. Ս.Աբրահամյան) շարունակվել են «Հայ գրականության պատմության» 6-րդ հատորի աշխատանքները: Ուսումնասիրվել է Պ.Սևակի պոեզիան: Հրատարակման է ներկայացվել «Հակոբ Մովսես. բանաստեղծը և գեղագետը» մենագրությունը, որում արժևորվում է բանաստեղծի տեղն ու դերն արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգում: Առաջին անգամ համակարգային քննության են ենթարկվել Հ.Մաթևոսյանի «Անտիպներ» երկհատորյակի ստեղծագործությունները: Նորագույն գրականագիտական մեթոդների առաջադրած տեսական սկզբունքների կիրառմամբ վերլուծվել են Գ.Մահարու «Այրվող այգեստաններ» վեպում գեղագիտական արժեքավոր շերտ ներկայացնող երազ-պատկերները: Շարադրվել է Ա.Այվազյանի դրամատիկական երկերի պարատեքստային

լուծումների, ժանրային առանձնահատկությունների, պարադոքսի գաղափարագեղագիտական համակարգի գիտական արժևորման տեսական հատվածը: Բաժնում ուսումնասիրվում են նաև Ռ.Հովսեփյանի վեպերն ու վիպակները, այլ արձակ ստեղծագործությունները, Դ.Հովհաննեսի բանաստեղծական ժողովածուները: Պատրաստ է «Գրական վավերագրեր» հատորի 1926-28թթ. հատվածը: Վավերագրերի սկզբնաղբյուրը խորհրդահայ մամուլն է՝ Երևանում, Թիֆլիսում, Բաքվում հրատարակված պարբերականները:

«Սփյուռքահայ գրականություն» գիտական ուղղությամբ (ղեկ.՝ բ.գ.թ. Ա.Ավանեսյան) շարունակվել են Սփյուռքի գրականության հանրագիտարանի աշխատանքները, խմբագրվել են հոդվածները, կատարվել են հեղինակների ու մամուլի հետ կապված վերաճագրություններ: Հետազոտման ընթացքի մեջ են Զարեհ Խրախունու, Էդուարդ Պոյաճյանի, Հակոբ Կարապետցի, Լևոն Սյուրմեյանի, Դևի (Մարգար Ղարաբեկյան) գրական դիմանկարները (վերջինս կներկայացվի նաև մենագրության տեսքով): Լրացվում են Արամ Հայկազին նվիրված մենագրության նյութերը: Ուսումնասիրվել են կանանց հիմնախնդիրներին առնչվող գրական նյութերը: Հետազոտվել են «Հայ կին» հանդեսի 5 տարվա համարները, վավերագրերը, աղբյուրներն ու ֆոնդերը:

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության ուղղություններով (ղեկ.՝ բ.գ.թ. Ք.Բեջանյան) ուսումնասիրվել են 5-18-րդ դարերի հայկական աղբյուրներն Անգլիայի մասին, եվրոպական միջնադարյան գրականության մեջ պահպանված ավանդություններն ու լեգենդները Հայաստանի և հայերի մասին, հայ-ռուսական գրական կապերը (20-րդ դարավերջ-21-րդ դարի սկիզբ), գրականության տեսության հարցեր՝ գրականության տեսության արդի մեթոդաբանությունը (միջգիտակարգային ուսումնասիրության լույսի ներքո), հեղինակն արդի հայ վեպում, Վ.Տերյանի պոետիկան, Հովհ.Թումանյանի չափածոյի տաղաչափությունը 19-20-րդ դարասկզբի արևելահայ ոտանավորի զարգացման համատեքստում: Հետազոտվում է պոեզիայի փիլիսոփայությունը 20-րդ դարի 2-րդ կեսի հայ և համաշխարհային բանաստեղծության համատեքստում: Քննության նյութ են «Գեղարվեստական տեքստի կերպափոխումը կինոյում» թեմաները:

«Հայ դասականների երկերի գիտական հրատարակություն» ծրագրի (ղեկ.՝ բ.գ.թ. Հ.Որսկանյան) շրջանակում տեքստաբանության ուղղությամբ (ղեկ.՝ բ.գ.դ. Ավ.Իսահակյան) տպագրության են պատրաստվել Ավ.Իսահակյանի երկերի լիակատար ժողովածուի 9-րդ («Հիշատակարան») հատորը և «Ուստա Կարո» վեպի 2-րդ տարբերակի 3-րդ գրքի բնագիրը: Ավ.Իսահակյանի տուն-թանգարանի հետ համատեղ կազմվել է «Ավետիք Իսահակյանը ժամանակակիցների հուշերում» երկհատոր ժողովածուի մատենագիտական ցանկը: Նոր նյութերով լրացվում են Ն.Աղբալյանի երկերի լիակատար ժողովածուի 5-րդ (լեզվաբանական աշխատություններ), 6-րդ (հրապարակախոսական գործեր) և 7-րդ հատորների տեքստերը: Պատրաստվում է Խաչատուր Աբովյանի կյանքի և գործունեության տարեգրության 2-րդ հատորը:

Թումանյանագիտության ուղղությամբ (ղեկ.՝ բ.գ.դ. Ե.Մնացականյան) կազմվում է Հովհ.Թումանյանի երկերի 6-րդ հատորը: Վերանայվել են բոլոր նյութերը, համեմատվել, կատարվել են որոշ ուղղումներ ու հավելումներ, հայտնաբերվել են սևագիր նոր ինքնագիր տարբերակներ, որոնք ընթերցվել ու համակարգչային շարվածքով ներառվել են հատորի «Սևագրություններ և հատվածներ» բաժնում: Ծրագրի շրջանակում կազմվել է Ե.Զարենցի երկերի ժողովածուի 2-րդ հատորը (ղեկ.՝ բ.գ.թ. Ա.Նիկողոսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Հայ միջնադարյան գրական-մշակութային ժառանգությունը և նորարարական տեխնոլոգիաները» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Ն.Համբարձումյան) Ն.Համբարձումյանը վերապատրաստվել է Լոնդոնի Ռոյալ Հոլոուեյ համալսարանում, մասնակցել է “Introduction to Molecular Techniques” վերապատրաստման, դոկտորական ատենախոսության ղեկավարի զարգացման ծրագրերին, գիտելիքների փոխանակման աշխատաժողովներին, ձեռք է բերել միջազգային դրամաշնորհային ծրագրի հայտ գրելու, ծրագրի ու ժամանակի արդյունավետ կառավարման, «Transition and Networking» ծրագրեր վարելու գիտելիքներ ու հմտություններ, դարձել է UKRI-ի և European Society for Periodical Research (ESPRit) գիտահետազոտական կազմակերպությունների անդամ:

«Հայկական լեզենդների գերմանական գրառումները և մեկնաբանությունները» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Ս.Փարսադանյան) Ս.Փարսադանյանը վերապատրաստվել է Զալցբուրգի Փարիզ-Լոդրոնի համալսարանի Քրիստոնյա Արևելքի հետազոտությունների կենտրոնում, դարձել այդ ասոցիացիայի անդամ: «Յոհան Շիլտբերգերի ուղեգրությունը և նրանում տեղ գտած հայ ժողովրդական բանահյուսության նմուշները» զեկուցմամբ հանդես է եկել Մատենադարանի «Միջնադարագիտական 10-րդ միջազգային գիտաժողովում»:

«Իտալական կլասիցիզմի և ռոմանտիզմի ազդեցությունը Վենետիկի Մխիթարյանների ստեղծագործությունների և գրքարվեստի վրա (18-19-րդ դարեր)» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Ա.Սողոյան) խմբի անդամները զեկուցումներով հանդես են եկել միջազգային գիտաժողովներում ու աշխատաժողովներում, նկարահանել են հաղորդումներ, ուսումնասիրություններ են իրականացրել Մխիթարյան Միաբանության պահոցում, գրադարանում ու թանգարանում:

«Լևոն Շանթի պատմական դրամաները և 19-րդ դարի 70-90-ական թվականների եվրոպական դրամատուրգիան» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Ն.Սարգսյան) ուսումնասիրվել են ՀՀ ազգային և ԳԱԱ հիմնարար գիտական գրադարաններում գտնվող տարբեր նյութեր, աղբյուրներ, բնագրեր, էլեկտրոնային ռեսուրսներ, մասնավորապես 19-րդ դարի 2-րդ կեսի հայ ու եվրոպական գրականությանն առնչվող գրքեր, թերթեր, հանդեսներ, նյութեր: Կատարվել են թարգմանություններ տվյալ շրջանի եվրոպական դրամատուրգիայից:

«Հայ մանկագրություն. ակունքները և զարգացումը 19-րդ դարում» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Ա.Սողոյան) Ա.Սողոյանը վերապատրաստվել է Միչիգանի համալսարանի (ԱՄՆ) Հայագիտության կենտրոնում, ամբողջական հասանելիություն է ունեցել համալսարանի գրադարանի աղբյուրներին, էլեկտրոնային շտեմարաններին, առցանց դասերին, մասնակցել է ակադեմիական անգլերենի դասընթացներին, Համեմատական գրականագիտության ֆակուլտետի դասախոսությունների, աշխատել կենտրոնի առաջատար մասնագետների հետ:

«Կանայք, պարբերականները և տպագիր մշակույթը 1840-1920 թվականներին Օսմանյան կայսրությունում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Ն.Համբարձումյան) ուսումնասիրվել են ՀՀ ազգային արխիվում գտնվող տարբեր նյութեր, հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի կանանց մամուլը, Երևանի Մատենադարանի, ԳԱԹ-ի, Ազգային գրադարանի աղբյուրները, միջազգային մի շարք թվանշային շտեմարաններ: Համակարգվել են անհրաժեշտ թերթերը, ամսագրերը, մասնավորապես Կ.Պոլսում հրատարակված «Մասիս» լրագրի 1852-1908թթ. համարները, Թեոդիկի «Ամենուն տարեցոյցը», «Արձագանք», «Երկրագունտ», «Գրական-իմաստասիրական

շարժում» և այլ պարբերականներ, որոնք զուգադրելի են կանանց կողմից հրատարակված հանդեսներին, կազմակերպվել են թեմայի հանրայնացման աշխատանքներ:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Անտոն Սուրբ-Եքսուպերացի, «Իշխանիկ» (գրաբար թարգ. և առաջաբանը Լ.Ալեքսեյան), Ե., հեղ. հրատ., 2024, 100 էջ:
2. Եղիազարյան Վ.Ա., Քննություն գուսանաժողովրդական հայրենների, հտ.2, Ե., «ՎՄՎ-Պրինտ» հրատ., 2024, 128 էջ:
3. Իսահակյան Ա.Վ., Սոֆյան՝ Ավետիքի բարի հրեշտակը, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2024, 380 էջ:
4. Հակոբյան Պ.Հ., Հակոբյան Ա.Պ., Խաչատուր Աբովյանի կյանքի և գործունեության տարեգրություն (1809-1833), հտ. Ա, Ե., հեղ. հրատ., 2024, 872 էջ + 74 էջ ներդիր:
5. Մխիթար Գոշ, Առակներ (աշխատասիրությամբ Վ.Եղիազարյան), Ե., «ՎՄՎ-Պրինտ» հրատ., 2024, 464 էջ:
6. Մնացականյան Ե.Ժ., Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ, Ե., «ՎՄՎ-Պրինտ» հրատ., 2024, 464 էջ:
7. «Գրական ուղղությունները և դպրոցները համաշխարհային դասական գրականության և ազգային գրականությունների համատեքստում (վաղ կլասիցիզմից մինչև 20-րդ դարի 20-ական թվականներ). տիպաբանությունը, ընդհանրություններն ու առանձնահատկությունները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., «Գիտություն» հրատ., 2024, 426 էջ:
8. «Պարույր Սևակ-100: Հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածու», Ե., «Գիտություն» հրատ., 2024, 394 էջ:
9. «Գրականագիտական հանդես», N1(ԻԸ), Ե., «Գիտություն» հրատ., 2024, 230 էջ:
10. «Գրականագիտական հանդես», N2(ԻԹ), Ե., «Գիտություն» հրատ., 2024, 264 էջ:

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

11. Նիկողոսյան Ա.Հ., Վարդանյան Ա.Վ., Գրականություն 8, Ե., «Անտարես» հրատ., 2024, 176 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

12. Աբրահամյան Ս.Ս., Արտեմ Հարությունյան. «Տողիս վերջում միշտ բաց դուռ կա», Ե., «Գրականագիտական հանդես», N 1 (ԻԸ), 2024, էջ 129-139:
13. Աբրահամյան Ս.Ս., Պոեզիան՝ Հոր, բանաստեղծությունը՝ Որդին Մարդու (Հակոբ Մովսեսի «Գործք» ժողովածուն), Ե., «Գրականագիտական հանդես», N 2(ԻԹ), 2024, էջ 39-75:
14. Ավետիսյան Ա.Հ., Երազների համազգային և ներանձնային բովանդակությունը Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» վեպում, Ե., «Գրականագիտական հանդես», N 2(ԻԹ), 2024, էջ 137-151:
15. Արսենյան Վ.Ա., Շեքսպիրի «Համլետ» պիեսի հեղինակային վերարտադրությունը Ա. Կուրոսավայի կողմից «Չարերը քնում են անվրդով» ֆիլմում, Ե., «Գրականագիտական հանդես», N 1(ԻԸ), 2024, էջ 219-230:
16. Բալայան Ն.Մ., Հիշողություն, տուն, հավատ. Էդուարդ Պոյադյանի «Հողը» ժողովածուն, Ե., «Գրականագիտական հանդես», N 2(ԻԹ), 2024, էջ 179-200:
17. Բալայան Ն.Մ., Խ.Աբովյանն ու նրա ստեղծագործությունները՝ Արշակ Չոպանյանի հայացքով, Ե., «Էջմիածին», N5, 2024, էջ 97-113:
18. Դեմիրճյան Պ.Հ., «Սերգեյ Սարինյան-100», Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2024, էջ 124-127:
19. Դեմիրճյան Պ.Հ., Եղիա Տեմիրճիպաշեանի արձակ բանաստեղծությունները, Վենետիկ-Ս.Ղազար, «Բազմավեպ», N 1-2, 2024, էջ 291-311:
20. Դեմիրճյան Պ.Հ., Եղիա Տեմիրճիպաշյանը՝ հրապարակագիր, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, 2024, էջ 165-182:
21. Դեմիրճյան Պ.Հ., Արշակ Չոպանյան, Եղիա Տեմիրճիպաշյան և Տիրան Չրաքյան (Ինտրա). գրական կապերի պատմությունից, Ե., «Գրականագիտական հանդես», N 1(ԻԸ), 2024, էջ 9- 23:
22. Դեմիրճյան Պ.Հ., Եղիա Տեմիրճիպաշյան գրաքննադատը, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 2, 2024, էջ 82-107:

23. Եղիազարյան Վ.Ա., Լաստիվերցու պատմության հավանական պատվիրատուն, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 1, 2024, էջ 258-270:
24. Եղիազարյան Վ.Ա., Մանուկ Աբեղյանը հայրենիների կին հեղինակների մասին, Վ., «ՎՊՀ Գիտական տեղեկագիր. հումանիտար և հասարակական գիտություններ», N 1, 2024, էջ 89-96:
25. Եղիազարյան Վ.Ա., Մի անտիպ տաղ Խել Յովհաննէս Թլկուրանցուց, Վենետիկ-Ս.Ղազար, «Բազմավէպ», N 1-2, 2024, էջ 55-63:
26. Զարգարյան Ա.Ս., Լևոն Արիսյանի և Ամատունի Վարդապետյանի նախատիպերը Եղիշե Զարենցի պոեզիայում, Ե., «Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի», N 1, 2024, էջ 180-187:
27. Զարգարյան Ա.Ս., Մարդկային մեկուսացած հոգու ողբերգությունը Հովհ. Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմում, Գյումրի, «Գիտական աշխատություններ», հտ. 27, N 1, 2024, էջ 102-112:
28. Զարգարյան Ա.Ս., Մեկուսացած մարդու ողբերգությունը ռուսական և ամերիկյան արձակուրդ (Պուշկին, Գոգոլ, Մելվիլ), Գյումրի, «Գիտական տեղեկագիր», N 1, պր. Բ, 2024, էջ 32-40:
29. Էդոյան Հ.Ա., Պոեզիայի «Վերացական մոդելը» և Վահան Տերյանի սիմվոլիզմը, Ե., «Գրականագիտական հանդես», N 2(ԻԹ), 2024, էջ 9-38:
30. Իսահակյան Ա.Վ., Արյունոտ օրերի մատյանը (Ավետիք Իսահակյանի 1941-1944 թթ. օրագրությունը), Ե., «Գրականագիտական հանդես», N1(ԻԸ), 2024, էջ 23-29:
31. Հակոբյան Լ.Մ., Դանիել Վարուժան. ազատության առաքյալը, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 2, 2024, էջ 56-81:
32. Համբարձումյան Ն.Վ., Անդրանիկ Ծառուկյանի կենսապատումը բանաստեղծության ու հրապարակախոսության համապատկերում, Վանաձոր, «ՎՊՀ Գիտական տեղեկագիր», N 2, 2024, էջ 69-80:
33. Հովհաննիսյան Ս.Գ., Հովհաննես Թումանյանը և բարեգործությունը, Ե., «Բարեգործությունը հայոց մեջ» միջազգ. գիտաժող. նյութ. ժող., 2024, էջ 77-105:
34. Հովհաննիսյան Ս.Գ., Զարենց-Թումանյաններ. մի անհայտ էջ Զարենցի գրական ժառանգությունից, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 1, 2024, էջ 172-189:
35. Հովհաննիսյան Ք.Բ., Քաղաքական միջը Ե.Զարենցի «Երկիր Նաիրի» վեպում, Ե., «Բանբեր Երևանի պետական համալսարանի. բանասիրություն», N 3, 2024, էջ 6-24:
36. Ղազարյան Ա.Վ., Խաչատուր Աբովյանը Հովհաննես Թումանյանի գնահատմամբ, Ե., «Գրականագիտական հանդես», N 2(ԻԹ), 2024, էջ 83-92:
37. Ղազարյան Ա.Վ., Հ. Թումանյանի գյուղաշխարհի մարդիկ, Ե., «Հայագիտական հանդես», N 2(65), 2024, էջ 145-160:
38. Ղազարյան Ա.Վ., Րաֆֆու «Խենթը» և Ավ.Իսահակյանի «Ուստա Կարո» վեպերի հերոսների երազները. զուգահեռներ, Ե., «ՎԷմ», N 1(85), 2024, էջ 172-188:
39. Մանուկեան Ա.Լ., Ավետիք Իսահակեանը եւ Սուրբ Էջմիածինը, Է., «Էջմիածին», N 2(Բ), 2024, էջ 140-155:
40. Մանուկյան Ա.Լ., Վահագն Դավթյանի թարգմանչական արվեստի որոշ հարցեր, Ե., «Գրականագիտական հանդես», N 1(ԻԸ), 2024, էջ 185-199:
41. Մանուկյան Ա.Լ., Եղիշե Զարենց և Ավետիք Իսահակյան. 37 թվականի քրոնիկոն, Ե., «Գրականագիտական հանդես», N 2(ԻԹ), 2024, էջ 121-136:
42. Մարգարյան Ս.Ա., «Գրական ուղղությունները և դպրոցները համաշխարհային դասական գրականության և ազգային գրականությունների համատեքստում (վաղ կլասիցիզմից մինչև 20-րդ դարի 20-ական թվականներ). տիպաբանությունը, ընդհանրություններն ու առանձնահատկությունները» միջազգ. գիտաժող., Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2024, էջ 290-294:
43. Մարգարյան Ս.Ա., Վերնագիր, առաջաբան եւ գիրք յարաբերակցութիւնը Հ.Ղ.Ալիշանի եւ Գարեգին եպս. Սրուանձտեանցի ստեղծագործութիւններում, Վենետիկ-Ս.Ղազար, «Բազմավէպ», N 1-2, 2024, էջ 334-360:
44. Մարգարյան Ս.Ա., Հոբելյանական գիտաժողով՝ նվիրված գրականագետ, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի 100-ամյակին, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2024, էջ 298-302:
45. Մարգարյան Ս.Ա., Քրոնոտոպի գործառույթը Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում, Ե., «Գիտական Արցախ», N 1, 2024, էջ 139-156:
46. Մելքումյան Ք.Խ., 17-րդ դարի հայերեն տպագիր ուսումնական ձեռնարկները, Ե., «Գիտական Արցախ», N 2, 2024, էջ 85-92:

47. Մելքումյան Ք.Խ., Արգար Դպիր Թոխաթեցու տպագրական գործի կրթական արժեքը, Ե., «Հայագիտական հանդես», N2(65), 2024, էջ 203-215:
48. Մելքումյան Ք.Խ., Հայ գրականությունը Հակոբ Մեղապարտի հրատարակություններում, Ե., «Գրականագիտական հանդես», N 1 (ԻԸ) 2024, էջ 208-218:
49. Մնացականյան Ե.Ժ., «Շիլլոնի կալանավորը» պոեմի թարգմանությունը իբրև XIX դարավերջի իրադարձությունների հոգեբանական արձագանք, Ե., «Հայագիտական հանդես», N 2(65), 2024, էջ 82-95:
50. Մնացականյան Ե.Ժ., «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկներին» ստեղծագործության ընթերցման նոր փորձ, Ե., «Գիտական տեղեկագիր», N 1(46), 2024, էջ 122-136:
51. Մուսայելյան Հ.Գ., Հենրիկ Էդոյանի «Արցունքոտ օր» բանաստեղծությունը, Ե., «Գրականագիտական հանդես», N 1(ԻԸ), 2024, էջ 114-129:
52. Նիկողոսյան Ա.Հ., Ներսես Շնորհալիի հայ մատենագրության մեջ (երեք հատույթ), Ե., «Գրականագիտական հանդես», N 2(ԻԹ), 2024, էջ 76-82:
53. Որսկանյան Հ.Վ., Ավետիք Վիգենի Իսահակյան (ծննդյան 80-ամյակի առթիվ), Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2024, էջ 263-268:
54. Որսկանյան Հ.Վ., Հուշ-հանդիսություն՝ Վարդան-Դերիկյանի ծննդյան 60-ամյակի առթիվ, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 2, 2024, էջ 284-287:
55. Սառաջյան Զ.Գ., Համո Սահյան. գրական դիմանկար, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2024, էջ 98-116:
56. Սարգսյան Ն.Ղ., Միրզոյան Ա.Ս., Լևոն Շանթի «Կայսր» դրաման 19-րդ դարի 70-90-ական թթ. եվրոպական պատմական դրամատուրգիայի համատեքստում, Ե., «Գրականագիտական հանդես», N 2(ԻԹ), 2024, էջ 103-120:
57. Սեյրանյան Լ.Բ., «Ալքիմիական փոխակերպման» գաղափարագեղագիտական համակարգը Վահագն Դավթյանի «Ծիրանի ծառ» պիեսում, Ե., «Գրականագիտական հանդես», N 1(ԻԸ), 2024, էջ 79-103:
58. Սեյրանյան Լ.Բ., Արտաջունյան սկզբունքը Մատթեոս Զարիֆյանի պոեզիայում, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2024, էջ 55-77:
59. Սեյրանյան Լ.Բ., Պ. Սևակի 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողով, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2024, էջ 295-298:
60. Վարդանյան Լ.Յ., Միջնադարի պատկերը Վահագն Դավթյանի «Թոնդրակեցիներ» պոեմի երկու տարբերակներում, Ե., «Գրականագիտական հանդես», N 2(ԻԹ), 2024, էջ 163-178:
61. Амбарцумян Н.В., Армянские благотворительные общества и образовательные учреждения Константинополя в контексте женской эмансипации, СПб., “Вестник Санкт-Петербургского университета. История”, т. 69. вып. 2, 2024, с. 401–411.
62. Беджанян К.Г., Международная научная конференция “Проблемы литературоведческих и культурологических взаимосвязей в эпоху глобализации”, посвященная 100-летию со дня смерти В.Брюсова, Ер., “Историко-филологический журнал”, “Гитутюн”, 2024, с. 281-289.
63. Беджанян К.Г., Татевосян Р.В., Стихотворение Лермонтова “Звезда”, (“Вверху одна”) в переводах на английский и армянский языки, Будапешт, изд. “Научное наследие”, N 134, 2024, с. 52-55.
64. Карагезян Г.Л., Армянский след западноевропейской легенды о ястребином замке и проклятом армянском царе, Ер., “Вестник арменоведения”, N 1 (34), 2024, с. 150-162.
65. Карагезян Г.Л., История проникновения легенды о вечном жиде в средневековую Европу, Ер., “Вестник общественных наук”, N 2 (671), 2024, с. 227-242.
66. Мнацаканян Е.Ж., Образ Комитаса в воспоминаниях современников, Ер., изд. “Научный Арцах”, N 1(20), 2024, с. 130-138.
67. Ованесян С.Г., Достоевский в литературной жизни Армении, “Неизвестный Достоевский”, Петрозаводск, т. 11, N 1, 2024, с. 184-205.
68. Bejanyan K., Karagyozyan G., Armenian trace of a European legend, Moscow, “Steps”, v. 10, N 2, 2024, pp. 284-295.
69. Bejanyan K., Karagyozyan G., Motif about the king cursed by the fairy and the hawk in the aspect of the comparative analysis, Tomsk, “Imagology and Comparative Studies”, Tomsk State University, N 22, 2024, pp. 7-18.
70. Gasparyan L., Hayryan Z., Sayat-Nova’s Oeuvre in the Light of Interpretation and Translation by V. Bryusov, M., “Studia Litterarum”, v. 9, N 1, 2024, pp. 168-185.

71. Hambardzumyan N., A Neglected fact of Armenian History and Culture in Constantinople in the Second Half of the 19th Century: Elpis Kesaratsian and the Magazine Guitar (1861-1863), London, "Women's Writing", v.31, Issue 4, 2024, pp.1-26.
72. Hambardzumyan N., The Phenomenon Écriture Féminine and the Structuring of Poetic Language in the Poetry of Western Armenian Women Authors, Y., "Armenological Studies", N 2 (35), 2024, pp.150-172.
73. Hayryan Z., Gasparyan L., Translation as a Form of Intercultural interrelation (with special reference to D. Samoylov's translations of G. Emin's poetry), Y., "Katchar", N 1, pp. 102-109.
74. Makaryan A., Sharuryan H., Vorskanyan H., Khachatryan M., The philosophy of narration in Ghazaros Aghayan's tales, Y., "Katchar", N 1, 2024, pp. 75-87.
75. Sarinyan M., Structuralism: Hemingway's Novel – Memoir "A Moveable Feast" in the Light of Structuralist and Myth Criticism, Y., "Literary Journal", N 1, 2024, pp. 154-164.
76. Seyranyan L., Soghoyan A., The ontological formula for eternal renewal of life in the Armenian fairy tale Barekendan and the singing game Tsapik, Tsapik, Tsirani, "Имагология и компаративистика/ Imagology and Comparative Studies", N 21, 2024, c. 7-30.
77. Soghoyan A., Devrikyan Sh., Pagan and Christian Interpretations of Dream-visions in "History of Armenia", published by Hakobos Issavertents, "Religiovedenie", N 3, 2024. pp. 110-119.
78. Yeghiazaryan V., Marutyan T., Les hayrēns arméniens comparés aux albas des troubadours occitans, "Revue des Études Arméniennes", N 42, 2023-2024, pp. 145-154.
79. Yeghiazaryan V., Hakobyan L., Grigor Aknerts'i. Facts of his not Being Albanian. On the occasion of Statements by Farida Mamedova, Y., "Bulletin of Matenadaran", N 37, 2024, pp. 263-275.
80. **Հոդվածները հրատարակվել են «Գրական ուղղությունները և դպրոցները համաշխարհային դասական գրականության և ազգային գրականությունների համատեքստում (վաղ կլասիցիզմից մինչև 20-րդ դարի 20-ական թվականներ). տիպաբանությունը, ընդհանրություններն ու առանձնահատկությունները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., «Գիտություն» հրատ., 2024, 426 էջ**
80. Ավանեսյան Ա.Ա., Լևոն Շանթի Հին աստվածները և 20-րդ դարասկզբի գրական հոսանքները, էջ 374-384:
81. Դեմիրճյան Պ.Հ., Եվրոպական և հայկական սիմվոլիզմ. ընդհանրություններն ու առանձնահատկությունները, էջ 72-89:
82. Հովհաննիսյան Ս.Գ., Ռուս գրողներն ու գրական դպրոցները հայ պարբերականների էջերում (1890-ական-1910-ական թթ.), էջ 105-124:
83. Ղազարյան Ա.Վ., Բարուց և չարից անդին. Ավետիք Իսահակյանը Նիցշեի փիլիսոփայության կրող, էջ 298-307:
84. Մարգարյան Ս.Ա., Գարեգին Սրվանձտյանցի երկերի քննությունը միջուղգիական դպրոցի լույսի ներքո, էջ 211-234:
85. Մելքումյան Ք.Խ., Կլասիցիստական գեղագիտության դրսևորումները Մխիթարյանների դասագրքերում (18-րդ դար), էջ 413-422:
86. Մկրտչյան Ն.Լ., Սիրո հավերժության փիլիսոփայությունը Իսահակյանի ստեղծագործություններում («Հավերժական սերը», «Լիլիթ»), էջ 278-297:
87. Մնացականյան Ե.Ժ., Գրական մեթոդների խաչաձևումները Հովհաննես Թումանյանի ստեղծագործական աշխարհում, էջ 145-161:
88. Պոլոբոյարինովա Լ.Ն., Գասպարյան Լ.Ա., Հետպատերազմյան տրավմայի արտացոլումը Վիրջինիա Վուլֆի «Մխիս Դելուելյ» ստեղծագործության մեջ (Հայկական հարցի մեկնաբանությամբ), էջ 198-210:
89. Սառաջյան Զ.Գ., Ամարասը և մշակութային հիշողությունը. հայ պատմագրությունից մինչև 19-րդ դարի գրականություն, էջ 351-373:
90. Սարգսյան Ն.Ղ., Սիմեոն Հակոբյանը սիմվոլիզմի տեսաբան. «Սիմվոլիզմը դրամայի մեջ» ուսումնասիրության հիմնարար դրույթները, էջ 385-402:
91. Փարսադանյան Ս.Հ., Լևոն Մանվելյանի դերը 20-րդ դարասկզբի հայ գրականության համատեքստում, էջ 403-412:
91. **Հոդվածները հրատարակվել են «Պարույր Սևակ-100» հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., «Գիտություն» հրատ., 2024, էջ 394**
92. Աբրահամյան Ս.Ս., Պարույր Սևակի պոեզիայի գրապատմական նշանակությունը, էջ 9-21:

93. Արիստակեսյան Ռ.Բ., Բազմաձայնությունը Պ.Սևակի գեղարվեստական մտածողության համակարգում, էջ 51-78:
94. Արսենյան Վ.Ա., Ուլթ Ուիթմենի ստեղծագործական արվեստի արձագանքները Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ» բանաստեղծական ժողովածուում, էջ 311-331:
95. Բեջանյան Ք.Հ., Պարույր Սևակի ստեղծագործությունների անգլերեն թարգմանությունները, էջ 332-350:
96. Դեմիրճյան Պ.Հ., Երագի և իրականության կապը Պարույր Սևակի «Եղիցի լույս» ժողովածուում, էջ 182-204:
97. Խաչատրյան Թ.Ա., Արվեստը և Պարույր Սևակի «Արվեստ» բանաստեղծությունը, էջ 288-310:
98. Նիկողոսյան Ա.Հ., Պարույր Սևակը և հայ միջնադարյան գրականությունը, էջ 101-114:
99. Սեյրանյան Լ.Բ., Հին աշխարհակարգից նորի անցման նշանները Պ.Սևակի «Եղիցի լույս» ժողովածուի բանաստեղծություններում, էջ 79-100:
100. Վարդանյան Լ.Յ., Միջտեքստայնությունը Պարույր Սևակի «Նահանջ երգով» պոեմում, էջ 228-245:
101. Айрян З.Г., Переводы Поэзии Г. Эмина Давидом Самойловым как форма литературных взаимосвязей, мат. XIV межд. научно-практич. конф. "Перевод. Язык. Культура", ժող., СПб, 2024, с. 24-31.
102. Айрян З.Г., Русский мир Ивана Тургенева в армянских переводах, "сб. межд. научн. конф. "Проблемы конкурентного образования и науки в меняющемся мире", Ер., 2024, с. 82-94.
103. Айрян З.Г., Русско-армянские литературные взаимосвязи (на примере переводов Ирины Снеговой из поэзии Маро Маргарян), сб. научн. тр. межд. научн. конф. "Перевод. Язык. Культура", ժող., СПб., 2024, с. 64-75.
104. Беджанян К.Г., Не плачь, не думай, надейся... (по поводу перевода одного стихотворения В.Я. Брюсова на англ. яз.), "Брюсовские чтения 2024 г." միջազգ. գիտաժող. նյութ. ժող., Ер., 2024, с. 437-445.
105. Беджанян К.Г., Сонет В.Брюсова "Женщине" и его переводы на армянский язык, сб. научн. ст., Ер., 2024, с. 20-33.
106. "Bejanyan K., V. Brusov's poem "The measured noise of wheels" translated into English, "Переводческий дискурс: междисциплинарный подход", мат. VIII межд. научно-практич. конф., Симферополь, 2024, pp. 37-41.
- Հոդվածները հրատարակվել են «Մշակ»-ի հիմնադրման 150-ամյակին» նվիրված ««Մշակ»-ը պատմության գուգահեռականներում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., Պատմության ինստ., 2024, 573 էջ:**
107. Համբարձումյան Ն.Վ., Գրիգոր Արծրունին, «Մշակը» և կանանց հարցը, էջ 411-428:
108. Հովհաննիսյան Ս.Գ., Ուրվագիծ Թումանյան-Մշակ առնչակցության պատմության, էջ 447-463:
109. Մանուկյան Ա.Լ., «Մշակ» լրագիրը Դաֆֆու գնահատմամբ, էջ 97-108:
110. Սարգսյան Մ.Ս., Վահան Տերյանի հրապարակախոսությունը «Մշակ»-ում, էջ 475-490:
- Հոդվածները հրատարակվել են «Պալիմպսեստ» գրականագիտական հոդվածների ժողովածուում, Ե., ԵՊՀ հրատ., 2024, 150 էջ:**
111. Էդոյան Հ.Ա., Կրակի սիմվոլիկան Ե. Չարենցի վաղ շրջանի պոեզիայում, էջ 101-131:
112. Навасардян В.С., Метрическая структура поэмы О.Туманяна "Ануш", с. 49-78.

Պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

Հ. Էդոյանն արժանացել է «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչման:

Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ տնտ.գ.թ. Մ.Մանուչարյան
Փոխտնօրեն՝ տնտ.գ.թ. Լ.Խաչատրյան
Գիտքարտուղար՝ տնտ.գ.թ. Ե.Հակոբյան
Էլեկտրոնային փոստ՝ info@economics.sci.am
Կայքէջ՝ www.economics.sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Կանաչ տնտեսությունը որպես նորարարական գյուղատնտեսության կայուն զարգացման նախապայման» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Մ.Մանուչարյան) ուսումնասիրվել և վերլուծվել են ՀՀ բնապահպանական կայունության ու բնական ռեսուրսների (հողային, ջրային) արդյունավետ կառավարումը, վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման տնտեսական ու բնապահպանական օգուտները, թափոնների կառավարումն ու վերամշակումը, կանաչ տեխնոլոգիաների ու նորարարությունների մարտահրավերները կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը, կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականությունը, շրջակա միջավայրի աղտոտման խնդիրը, կանաչ տնտեսության ազդեցությունը բնակչության կենսամակարդակի վրա (աշխատատեղերի ստեղծում, սոցիալական առավելություններ և այլն), անտառների կառավարման տնտեսական ու սոցիալական օգուտները, էկոլոգիական անվտանգությունը և այլն: Կատարվել է տեղումների քանակի ու գյուղատնտեսական համախառն արտադրանքի ցուցանիշների միջև էկոնոմետրիկ վերլուծություն, որի հետևանքով ստացված հարաբերակցության գործակիցները վկայում են այն մասին, որ նախորդ տասնամյակում տարեկան տեղումների քանակի նվազումը բացասաբար է ազդել անասնաբուծության վրա: Համախառն արտադրանքի ցուցանիշների ու տեղումների քանակի հարաբերակցության գործակիցը -0.31 է, ինչը ցույց է տալիս հակադարձ կապ: Իրավիճակը բնութագրվում է նրանով, որ ի տարբերություն բուսաբուծության, որտեղ ոռոգման ջրի մատակարարումը որոշվում է ոչ միայն տեղումների քանակով, այլև մի շարք այլ գործոններով՝ անասնաբուծության համար կերային բազայի զգալի մասն ապահովվում է բնական արոտավայրերի միջոցով, որտեղ կերի բերքատվությունն ուղիղ համեմատական է տեղումների քանակին: Ընդհանուր գյուղատնտեսության ու բուսաբուծության ճյուղի համախառն արտադրանքի հարաբերակցության գործակիցների արժեքները խոսում են թույլ կապի մասին, այսինքն՝ ՀՀ-ում, բացառությամբ անասնաբուծության, տեղումների կրճատման առումով կլիմայական փոփոխությունները դեռևս չեն հանգեցրել գյուղատնտեսական արտադրանքի բացասական զարգացումների: Գրեթե բոլոր տեսակի ուսումնասիրությունները մատնանշում են կլիմայի փոփոխության բացասական հետևանքները երկարաժամկետ հեռանկարում, ուստի այս երևույթի հետ կապված գիտական հետազոտությունները պետք է ուղղված լինեն ապագայում հարմարվողականության ու կանխարգելման քաղաքականության մշակմանը: Առաջարկվում է՝ ստեղծել և իրականացնել ազգային ու տարածաշրջանային ռազմավարություններ, որոնք ուղղված են կանաչ տնտեսության զարգացմանը՝ ներառյալ գյուղատնտեսության ոլորտում նորարարական մոտեցումները, կառուցել համագործակցություն պետական, մասնավոր ու հասարակական հատվածների միջև՝ համատեղ ծրագրերի իրականացման համար, մոտեցումներ կիրառել, որոնք ներառում են բարձր տեխնոլոգիաներ, ինչպիսիք են սենսորները, արհեստական բանականությունն ու տվյալների վերլուծությունը՝ գյուղատնտեսական գործընթացների

արդյունավետության բարձրացման համար, հետագոտել նորարարական գյուղատնտեսական տեխնոլոգիաները, որոնք կարող են նվազեցնել ռեսուրսների սպառումը, աջակցել օրգանական գյուղատնտեսությանը, որը նվազեցնում է քիմիական պարարտանյութերի ու թունաքիմիկատների օգտագործումը, հնարավորություններ ստեղծել գյուղացիների՝ կայուն գյուղատնտեսական մեթոդներ կիրառելու համար, կառավարությանն ու միջազգային կազմակերպություններին՝ տրամադրել ֆինանսական աջակցություն այն գյուղացիական տնտեսություններին, որոնք անցնում են կանաչ տնտեսության սկզբունքներին, ստեղծել վարկային ծրագրեր ու սուբսիդիաներ, որոնք խրախուսում են կայուն գյուղատնտեսական նախագծերը, մշակել կառավարական քաղաքականություններ, որոնք ուղղված են բնական ռեսուրսների պահպանմանն ու շրջակա միջավայրի պաշտպանությանը, ստեղծել էկոլոգիական մոնիթորինգի համակարգեր՝ գյուղատնտեսական գործունեության ազդեցությունը գնահատելու համար:

«Մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ. գ. թ. Ե. Հակոբյան) ուսումնասիրվել են ՀՀ գործարար միջավայրը, զարգացման միտումներն ու բարելավման հնարավորությունները, նաև միջազգային փորձն ու տեղայնացման հնարավորությունները, դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման օրենսդրաիրավական հիմքերը ՀՀ-ում: Կատարված վերլուծության արդյունքում առանձնացվել են բյուջետային ծախսերի պլանավորման ու իրականացման արդյունավետության մի շարք խնդիրներ՝ մակրոարդյունավետություն (առանձին ծրագրերի ֆինանսավորմանը պետք է հատկացվի ՀՆԱ-ի այնպիսի չափ, որը կբացառի գնային ցնցումներն ու շուկայական անհավասարակշռության առաջացման հնարավորությունը), միկրոարդյունավետություն (պետական ծախսերը հարկ է արդյունավետորեն բաշխել բյուջետային ֆինանսավորում ստացող ոլորտների միջև՝ նպաստելով գործարար հատվածի զարգացմանը), շահադրդում (զբաղվածության, խնայողությունների ու ներդրումների վրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ընտրել սոցիալական ինստիտուտների ռացիոնալ կառուցվածք, ֆինանսավորման գործող մեխանիզմներ ու տրանսֆերտների ճկուն համակարգ, իսկ էլեկտրոնային առևտրի ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ առկա չեն ամբողջական կարգավորումներ, ինչը հնարավորություն չի տալիս համապարփակ կերպով վերահսկել ու կարգավորել ոլորտը, համապատասխան տվյալների բազաների բացակայությունն էլ իր հերթին խոչընդոտում է ոլորտի վերաբերյալ հավաստի ու ընդգրկուն վերլուծությունների իրականացումը): Առաջարկվել են ոլորտում առկա ռիսկերից խուսափելու որոշակի մեթոդներ, գործնական առաջարկություններ՝ բիզնես մոդելների հարմարեցում, ներդրումներ տեխնոլոգիայի մեջ, որոնք կօգնեն ընկերություններին ոչ միայն նվազագույնի հասցնել հնարավոր կորուստները, այլև արդյունավետ հարմարվել օրեցօր աճող էլեկտրոնային առևտրի կողմից պարտադրվող պայմաններին:

«Ֆինանսական հոսքերի ձևավորման և կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ. գ. թ. Է. Մաթևոսյան) ուսումնասիրվել և վերլուծվել են ՀՀ-ում ֆինանսական հոսքերի ձևավորման և կառավարման ժամանակակից հիմնահարցերը, մասնավորապես հասկացության մեկնաբանման, դասակարգման, ֆինանսական հոսքերի ու դրանց կառավարման վրա ազդող գործոնները ՀՀ-ում ձևավորված պրակտիկայի և մյուս երկրների փորձի համատեքստում: Վերլուծվել են ՀՀ Ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի հիմնական բաղադրիչները, հաշվարկման մեթոդաբանությունը, ֆինանսական հաշվի ներդրման ու վարման գործընթացները: ՀՀ-ում ֆինանսական հոսքերի կառավարման առանձնահատկությունների դիտարկումը կատարվել է ինչպես հանրային (պետական) հատվածի, այնպես էլ

առևտրային կազմակերպությունների մակարդակներում: Հանրային հատվածի ֆինանսական հոսքերի վերաբերյալ կատարվել է նաև օրենսդրական դաշտի վերլուծություն գործադիր մարմնի գործառույթների տեսանկյունից:

ՀՀ երկար տարիներ եղել է և ներկայում էլ մնում է զուտ փոխառու երկիր, այսինքն՝ ավելի շատ միջոցներ ներգրավվում են, քան «արտահանվում»: Ազգային հաշիվների համակարգում ֆինանսական հաշվի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դա հիմնականում բացատրվում է ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածում վարկային պարտքերի ձևավորմամբ: Բացահայտվել է նաև, որ ֆինանսական կազմակերպությունների, պետական կառավարման և տնային տնտեսությունների ու տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների հատվածներում ձևավորվել են «լրացուցիչ միջոցներ», որոնք կարող են դառնալ ինչպես տվյալ, այնպես էլ մյուս հատվածների համար արտադրության, շինարարության, հիմնական միջոցների ձեռքբերման, ֆինանսավորման ու ներքին ներդրումների բավականին լուրջ աղբյուրներ: Ուստի, երկրի մակարդակով ֆինանսական հոսքերի կառավարման տեսանկյունից սա եղել և մնում է չօգտագործվող ռեսուրս:

ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների գործառնական, ներդրումային ու ֆինանսական գործունեության կառավարման համակարգի որակը բարելավելու համար դրամական հոսքերի տնտեսական վերլուծության մեթոդական գործիքակազմի կատարելագործման տեսական, մեթոդական դրույթների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հայրենական մասնագիտական շրջանակներում դեռևս անհրաժեշտ խորությամբ ու ծավալով չեն մշակվում ու ներկայացվում ֆինանսական ու դրամական հոսքերի ձևավորման գործընթացի տեսական դրույթները, դրանց գործնական դրսևորման առանձնահատկությունները, առկա խնդիրները և կատարվում են դրանց լուծման վերաբերյալ գործնական առաջարկություններ հատկապես տնտեսության իրական հատվածում, դրանցում դեռևս չեն ներդրվել ֆինանսական հոսքերի հաշվառման ու վերլուծության ժամանակակից մեթոդներ ու եղանակներ ինչպես հաշվապահական հաշվառման ու վերլուծության ոլորտներում, այնպես էլ առուփտի անցկացման պրակտիկայում:

«Միգրացիայի կանոնակարգման հիմնախնդիրները թվային տնտեսության պայմաններում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Շ.Պողոսյան) բացահայտվել է, որ միգրացիոն գործընթացների կառավարման հիմքում պետք է դնել ինչպես թվային գործիքակազմի կիրառումը, պայմանավորված լայնամասշտաբ թվային ծառայությունների մատուցմամբ, թվային հարթակների կիրառմամբ, այնպես էլ նորարարությունների ու սփյուռքի ներուժի ներգրավումը, միգրանտների փորձի օգտագործումը: Հիմնավորվել է ՀՀ միգրանտների մասնակցությունը տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման գործում տրանսֆերտների կարևորության տեսանկյունից: Միգրացիոն հոսքի արդյունավետ կառավարման նպատակով բացահայտվել են միգրացիոն գործընթացների թվայնացման փոփոխությունները, հիմնավորվել են միգրացիոն գործընթացների կառավարման արդի մեխանիզմների, ինտեգրացիոն քաղաքականության ներդրումը, միգրացիոն գործընթացներում ավելի շատ կառույցների ու կազմակերպությունների ներգրավումը: Առաջարկվել է ստեղծել միգրանտների տվյալների շտեմարան (բազա)՝ աստիճանաբար բարձրացնելով միգրացիայի կառավարման թափանցիկությունը թվային գործիքակազմի և ԱԲ միջոցով, քանի որ վերջիններս օգնում են միգրանտներին հաղթահարել իրենց առջև ծագած խնդիրները նոր բնակավայրում հաստատվելիս: Թվային տեխնոլոգիաները թույլ են տալիս առավել արդյունավետ տեղաբաշխել միգրանտներին՝ հաշվի առնելով որոշակի բնութագրիչներ (լեզվի իմացություն, կրթություն, մասնագիտություն), հնարավորություն են ընձեռում արագ ու հեշտ յուրացնել նոր լեզուն, վերացնում են

լեզվական խոչընդոտները, ավելի հասանելի են դարձնում կրթությունն ու առողջապահական ծառայությունները: Կառավարությունը վերադարձած միգրանտների համար տնտեսական խթաններ ստեղծելով՝ կխթանի ՀՀ աշխատաշուկային ինտեգրվելը: Համապատասխան ծրագրեր պետք է իրականացնել մասնագետ միգրանտների վերադարձն ու Հայաստանում աշխատանքը խրախուսելու համար՝ դրանով իսկ կանխելով ուղեղների արտահոսքը: Միգրացիոն մտադրությունները հաշվի առնելով՝ դոնոր ու ռեցիպիենտ երկրներում նախատեսել կոնկրետ ծրագրեր թվային հարթակների, թվային սփյուռքի գործադրմամբ, որոնք ուղղված կլինեն միգրանտների հմտությունների զարգացմանն ու դրանց օգտագործմանը:

«ՀՀ տնտեսության կայուն զարգացման հնարավորությունները և հեռանկարները ինովացիոն և թվային տնտեսության պայմաններում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Ս.Դավաթյան) ուսումնասիրվել են «Կայուն տնտեսական զարգացման 2030» օրակարգը, նպատակներն ու հնարավորությունները, ՀՀ-ում կայուն տնտեսական զարգացմանն ուղղված կառուցակարգային փաստաթղթերն ու օրենսդրավական դաշտը, թվային փոխարկերպման հնարավորությունները համացանցի օգտագործման համատեքստում: Կատարվել է ինովացիոն տնտեսությունը բնութագրող Համաշխարհային նորարարական համաթվի (ՀՆՀ) տնտեսաչափական վերլուծություն, նաև միկրո-տվյալների վերլուծություն՝ պարզելու համացանց օգտագործողների նկարագիրը, հիմնական գործողությունները համացանցում և մուտք գործելու տարբերակները թվային օրակարգում, ինչպես նաև վերլուծվել են կլաստերների զարգացման հնարավորությունները ՀՀ-ում կայուն տնտեսական զարգացման համատեքստում, ներկայացվել է, թե ինչպես զբոսաշրջության կլաստերացման միջոցով հասնել կայուն տնտեսական զարգացման օրակարգին հետևյալ 3 ուղղություններով՝ բնապահպանական, սոցիալական, կառավարման: Վերլուծվել է ՀՀ ՎԿ-ի կողմից ներկայացված բազան, որի շրջանակում իրականացվել է հարցում շուրջ 2000 մասնավոր ընկերությունների շրջանում՝ համապարփակ կերպով տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների (S&S) օգտագործման վերաբերյալ: Կատարված վերլուծությունների հիման վրա բացահայտվել է, որ ՀՀ-ում մասնավոր ընկերությունների թվային հասունության մակարդակի ինդեքսի միավորը կազմել է 12.251, որը բավական ցածր մակարդակի մասին է փաստում (ինդեքսի հնարավոր առավելագույն 100 միավորի համեմատ): Հետևաբար, մասնավոր ձեռնարկությունների թվային հասունության մակարդակը դասակարգվում է որպես ցածր: Տնտեսաչափական վերլուծությունների հիման վրա բացահայտվել է, որ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների պարագայում ՀՆՀ-ի առաջին ենթահամաթվի արժեքի (Innovation input sub-index) 1% աճը կհանգեցնի ՀՆՀ արժեքի 0.629%-ի աճի, մինչդեռ երկրորդ ենթահամաթվի՝ (Innovation Output sub-index) արժեքի 1% աճը կազդի ՀՆՀ-ի վրա 0.346%-ով: Միկրոտվյալների վերլուծության հիման վրա բացահայտվել է, որ 2022թ. համացանց օգտագործողների կողմից վերջինս սարքերի միջոցով մուտք գործելն ու դրա ընթացքում կատարվող հիմնական գործողություններն արտացոլում են զբաղվածության կառուցվածքն ու աշխատանքին վերագրվող պահանջները: Ուսումնասիրության արդյունքում համաշխարհային նորարարական համաթվի մասով առաջարկվում է, որ Կառավարությունը խթանի բարձր տեխնոլոգիական ու գիտաարդյունաբերական ապրանքների արտադրությունն ու արտահանումը, մատուցի այնպիսի ծառայություններ, որոնք կհանգեցնեն ՀՆՀ «գիտելիքի և տեխնոլոգիաների արդյունքի» հենասյան ավելի բարձր կատարողականին միջնաժամկետ ու երկարաժամկետ հատվածներում: Իսկ «ստեղծարար արդյունքի» հենասյան կատարողականի բարձրացման համար ՀՀ կառավարությունը կարող է կենտրոնանալ «առցանց ստեղծարարության»

ենթահենասյան կատարողականի բարելավման վրա, և նպատակային միջոցառումների շարքում կարող է լինել քաղաքացիների բջջային հավելվածների ստեղծումը:

«Տնտեսական վարքագծի մոդելը որպես տնտեսության հիմնարար բաղադրիչ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Գ.Հարությունյան) ուսումնասիրվել և համակարգվել են տնտեսական վարքագծի հիմնախնդիրներին առնչվող ձևավորված տեսական ու մեթոդական հիմքերը, բացահայտվել է տնտեսական վարքագծի կապը հասարակության սոցիալ-տնտեսական գործընթացների հետ, որոշվել են դրա զարգացման միտումները: Անհրաժեշտ տեսական ու մեթոդաբանական բազա ձևավորելու համար ուսումնասիրվել են «տնտեսական մարդ» մոդելի ու տնտեսական վարքագծի հետ կապված գիտական հրապարակումները: Տնտեսական մարդու մոդելը դիտարկվել է տնտեսագիտական մտքի զուգահեռներում (դասական ու նեոդասական դպրոցներ, գերմանական դպրոց, Կ.Մարքսի տեսություն, մակրոտնտեսական մարդը Զ.Քեյնսի տեսությունում): Տրվել է «տնտեսական մարդ» հասկացության սահմանումը, բացահայտվել են տնտեսական վարքագծի մոդելի հիմնական տարրերը:

«Հայաստանի Հանրապետության տնտեսությունը. տեսության և պրակտիկայի հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տնտ.գ.դ. Ռ.Սարինյան) կատարվել են դիտարկումներ հանրապետության տնտեսության տեղաշարժերի վերաբերյալ՝ նպատակ ունենալով ուղղորդել ու նպաստել հետագա փոփոխություններին: Այս իմաստով ժամանակի որոշակի կտրվածքներով տեսությունները, ինչպես գործնական, այնպես էլ տեսական, շատ նպատակահարմար միջոց են տնտեսության մեջ կատարվող գործընթացներն ընդգծված ներկայացնելու համար:

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Գյուղատնտեսության և գյուղական տարածքների թվայնացման ժամանակակից լուծումները. արտասահմանյան փորձը և ներդրման հնարավորությունները ՀՀ-ում» թեմայի (ղեկ.՝ տնտ.գ.թ. Գ.Հարությունյան) կատարման ընթացքում նախանշվել է 3 նպատակ.

- Թվային փոխակերպման տեսական ու մեթոդաբանական հիմքի ձևավորում:
- Գյուղական բնակավայրերի թվային վերափոխման ուղիների որոշում: Հայաստանի գյուղական վայրերում թվային ներդրման մակարդակը գնահատելու նպատակով ուսումնասիրվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները, տեղական ու արտասահմանյան հետազոտական կազմակերպությունների հրապարակումները: Հայաստանում գյուղական բնակավայրերի թվայնացման մակարդակը գնահատելու ցուցիչներ չկան, այնուամենայնիվ, հայտնաբերվել են ավելի քան 25 հասանելի ցուցանիշներ, և համեմատական վերլուծություն է իրականացվել ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների հետ, ինչի արդյունքում գնահատվել է ՀՀ դիրքը համաշխարհային վարկանիշային աղյուսակում: Հիմնվելով ՀՀ գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների հարցման արդյունքների վրա՝ մշակվել և հաշվարկվել է նաև տնային տնտեսությունների կողմից թվային սարքավորումների ու տեխնոլոգիաների օգտագործման ինդեքսը՝ ԹSOH-ն: Ստացված ցուցանիշը հնարավորություն է տվել ոչ միայն գնահատել գյուղաբնակ տնային տնտեսությունների շրջանում թվային տեխնոլոգիաների ու սարքավորումների կիրառման մակարդակը, որն արտացոլում է գյուղական բնակավայրերում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների ներթափանցման մակարդակը, այլև համեմատական վերլուծության հիման վրա գնահատվել է ՀՀ գյուղական բնակավայրերի թվային անջրպետի մակարդակը: Տարածքային մակարդակում, մասնավորապես գյուղական վայրերում թվային փոխակերպման հաջողված փորձը

բացահայտելու նպատակով ուսումնասիրվել է արտասահմանյան փորձը, և ստացված արդյունքների ամփոփման ու խմբավորման արդյունքում մշակվել են ՀՀ գյուղական տարածքներում թվային զարգացման խթանման առաջարկություններ:

- Թվայնացման համատեքստում գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման մեխանիզմների մշակում, որի իրագործման համար դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝ ՀՀ գյուղատնտեսության ոլորտի թվային վերափոխման նախապայմանների բացահայտում ու պատրաստականության մակարդակի գնահատում, գյուղատնտեսության թվայնացման վիճակի ու միտումների գնահատում, Գյուղատնտեսության թվային փոխակերպման արտասահմանյան փորձի վերլուծություն (ԱՄՆ, Հարավային Կորեա, Գերմանիա, Իսրայել, Իսպանիա, Չինաստան, հետխորհրդային երկրներ), ՀՀ-ում գյուղատնտեսության թվային տրանսֆորմացիայի հիմնախնդիրների լուծման մոտեցումների մշակում:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Ասատրյան Հ.Ս., Խաղողագիտագործական համալիրի զարգացման հիմնահարցերը ՀՀ-ում, Ե., «ՀՀ ԳԱԱ ՏԻ», 2024, 232 էջ:
«ՀՀ-ում առկա որոշ պոչամբարների հարակից տարածքների հողային ռեսուրսներում ծանր մետաղների կոնցենտրացիաների տվյալների բազայի ձևավորումն ու սահմանային թույլատրելի (ֆոնային) կոնցենտրացիաների հետ համադրված վերլուծության և տեխնաձին աղտոտման կանխարգելման արդյունավետ ուղիների վերհանումը» թեմայի շրջանակում վերլուծվել են էկոլոգիական անվտանգության մի շարք խնդիրներ, որոնք միներալային հումքի արդյունահանման ու վերամշակման ժամանակ կարևոր են և արդիական ամբողջ աշխարհում: Հատուկ ուշադրության են արժանի այն պոչամբարները, որոնք զբաղեցնելով հազարավոր հեկտար հողային տարածքներ՝ տարբեր քիմիական ռեագենտներով ու ծանր մետաղներով շրջակա միջավայրի աղտոտման աղբյուր են: Հետազոտության շրջանակում որոշվել են ՀՀ-ում գործող պոչամբարների, մասնավորապես «Ախթալայի ՀՀ» պոչամբարի հարակից տարածքներից վերցված նմուշներում առկա ծանր մետաղների չափաքանակները՝ համեմատելով այդ տվյալները ՀՀ-ում ներկայում գործող նորմերի հետ: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում վերցված նմուշներում հայտնաբերվել են բարիում (Ba), ծարիր (Sb), անագ (Sn), կադմիում (Cd), ցիրկոնիում (Zr), ստրոնցիում (Sr), ռութիլիում (Rb), արսեն (As), սելեն (Se), կապար (Pb), վոլֆրամ (W), ցինկ (Zn), պղինձ (Cu), նիկել (Ni), կոբալտ (Co), երկաթ (Fe), մանգան (Mn), քրոմ (Cr), վանադիում (V), տիտան (Ti), կալցիում (Ca), կալիում (K), ալյումին (Al), ֆոսֆոր (P), սիլիցիում (Si), քլոր (Cl), ծծումբ (S), սկանդիում (Sc), ցեզիում (Cs) և թելուր (Te) քիմիական տարրերը: Ստացված արդյունքները փաստել են, որ վերցված նմուշներում 23 ծանր մետաղներից 21-ի քանակական պարունակությունները 20-50%-ով գերազանցում են սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա մշակվել է պրեսֆիլտրերի կիրառմամբ հարստացման պոչերի չորացման ու բացահանքի մշակված տարածություններում լցակույտերի տեսքով դրանց տեղադրման տեխնոլոգիական սխեմա, որի հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տվել, որ վերջինիս ներդրմամբ հնարավոր է մոտ 30-45%-ով նվազեցնել պոչամբարների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա: Իրականացված վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ հողային սահմանափակ ռեսուրսներ ունեցող Հայաստանի համար առաջարկվող եղանակը համարվում է հանքարդյունաբերության բնագավառում այն տեխնոլոգիական լուծումներից, որը թույլ է տալիս նաև զգալիորեն նվազեցնել օտարվող հողային տարածքները՝ պահպանելով հողային ռեսուրսները գյուղատնտեսական

նպատակների համար, սահմանափակելով ջրային ռեսուրսների աղտոտումը տարբեր քիմիական ռեագենտներով, զգալի չափով նվազեցնելով պոչամբարների այլ բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա:

«Հայրենական և արտասահմանյան արտադրության լայն սպառում ունեցող ալկոհոլային խմիչքների որակի և անվտանգության պահանջների համապատասխանության փորձագիտական հետազոտությունների արդյունավետ մեթոդների մշակման ու արդյունքների գնահատման հիմքերը» թեմայի շրջանակում կատարված լաբորատոր հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ փորձաքննության ներկայացված 93 ալկոհոլային խմիչքների (օղիների) նմուշների 97.8%-ը կեղծված են, նմուշներից միայն 2.2%-ն է համապատասխանել բնօրինակների բոլոր նույնանուն ցուցանիշներին: Բոլոր բնօրինակ նմուշներում էթանոլի ծավալային մասը՝ թնդությունը, կազմել է $40 \pm 0.1\%$: Կատարված հետազոտությունների արդյունքում հաստատվել է, որ օղիների թնդության որոշումը կարող է հիմնականում հանդես գալ որպես նախնական ցուցիչ հնարավոր կեղծիքների բացահայտման գործում: Հատկանշական է, որ բոլոր հետազոտված նմուշներում մեթանոլի պարունակությունը եղել է բավականին ցածր ($\leq 0.003\%$ և $\leq 0.01\%$): Կատարվել են նաև անալիտիկ ու գործիքային մեթոդներով համեմատական վերլուծություններ՝ պարզելու հայրենական ու արտասահմանյան արտադրության լայն սպառում ունեցող ալկոհոլային խմիչքների որակական ցուցանիշները, մասնավորապես կիրառվել են քրոմոտրոպ թթվի գունաչափական անալիտիկ, գազային քրոմատոգրաֆիայի մեթոդներ:

«Տեսաձայնագրային փորձագիտական հետազոտությունների ժամանակակից տեխնիկական հնարավորություններով մեծածավալ տվյալների հետ աշխատելու մեթոդական նոր մոտեցումների մշակումը» թեմայի շրջանակում հետազոտական որոշ գործառույթների ավտոմատացման, այդ թվում՝ նեյրոնային ցանցերի (արհեստական բանականության) հետ աշխատելու հմտությունների ձեռքբերման և գիտականորեն հիմնավորված ու պատճառաբանված արդյունքների ապահովման նպատակով իրականացվել են մեծածավալ ու մեծաքանակ տեսաձայնագրություններով, տեսագրություններով, աուդիոձայնագրություններով ու լուսանկարներով աշխատելու, դրանք խմբագրելու մեթոդների մշակման, տեղայնացման, դրանց առանձնահատկությունների բնութագրման աշխատանքներ: Ակտիվ համագործակցելով Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) գործընկեր կազմակերպությունների հետ՝ «PERFORMANCE EVALUATION OF ASR» ծրագրի (մասնակցել են 25 երկրի փորձագիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ) շրջանակում կատարվել են շուրջ 180 ձայնագրությունում հնչող խոսքի նույնականացման հետազոտություններ, դրանց առանձնահատկություններով պայմանավորված՝ վերջիններիս արդյունավետ խմբավորման ու նույնականացման մեթոդների մշակման աշխատանքներ: «CERTAIN-FORS» ծրագրի (ներգրավված են 12 երկրի փորձագիտական կազմակերպություններ) շրջանակում իրականացվել է մայրենի (հայերեն) ու ոչ մայրենի լեզուներով 40 կամավորներից 130 ձայնի նմուշների հավաքագրում՝ պաշտպանիչ դիմակով ու առանց դիմակի, որի արդյունքում ստացված նմուշների հետազոտությամբ մշակվել են փորձագիտական ավտոմատացված ու կիսավտոմատացված խոսքի նույնականացման առավել արդյունավետ մեթոդներ: Ծրագրի ավարտից հետո հավաքագրվել են մասնակից բոլոր երկրներից ստացված նմուշները (շուրջ 7000 նմուշ) իրենց լեզվական յուրահատուկ առանձնահատկություններով՝ հետագա հետազոտություններ իրականացնելու նպատակով:

«Շինարարատեխնիկական փորձագիտական հետազոտությունների բնագավառում «Cyclon 3DR» ծրագրային ապահովման միջոցով լաբերային սկանավորման տվյալների

վերլուծության արդյունավետ ուղիների մշակումը» թեմայի շրջանակում Cyclone 3DR ծրագրային ապահովումը հնարավորություն է ընձեռել ընդլայնել լաբերային սկաների միջոցով դաշտային պայմաններում շինարարատեխնիկական ու էկոլոգիական փորձագիտական հետազոտական հնարավորությունները: Իրականացվել է լաբերային սկաների միջոցով հանքավայրերից լեռնային զանգվածի արդյունահանված կամ լցակույտային զանգվածների ծավալների ճշգրիտ հաշվարկ: Կատարված հետազոտական աշխատանքների վերլուծությունը հնարավորություն է տալիս գալ այն եզրահանգման, որ գործիքային չափագրումներն առավել արդյունավետ են դառնում, երբ փորձագիտական հետազոտական աշխատանքների ընթացքում կիրառվում է գործիքային համալիր, այսինքն՝ մեկ փորձաքննության ընթացքում կիրառվում են մեկից ավել չափագրող գործիքներ, որոնք էլ համալրում են կամ լրացնում միմյանց:

«Գործվածքների վրա արյան հետքերի վաղեմության որոշման հատկանիշների հետազոտումը՝ հաշվի առնելով հետքերի վրա ազդող գործոնների գնահատման առանձնահատկությունները» թեմայի շրջանակում չոր արյան հետքերում վաղեմության գնահատման հետազոտման մեթոդի մշակման, տեղայնացման ու կիրառման նպատակով վերջնարդյունքների առանձնահատկությունները գնահատելիս իրականացվել են համապատասխան հետազոտություններ՝ քլորիդային իոնների եզրագծերի լայնության գնահատման մեթոդի կիրառմամբ: Փորձարկված մոտեցումը հիմնված է արյան հետքերի առաջացման վաղեմության որոշման վրա՝ հաշվի առնելով հետքից քլորիդային իոնների անջատման աստիճանը, որոնք աստիճանաբար ցրվում են կրող առարկայի՝ հետքի շուրջ քլորիդային սահմանի ձևավորմամբ: Ելնելով այս եզրագծի լայնությունից՝ կարելի է եզրակացնել, թե որքան վաղուց է գոյացել արյան հետքը:

Գիտագործնական աշխատանքներ: Կազմակերպության աշխատակիցներն անցկացրել են վերլուծական բնույթի 90 սեմինար, մասնակցել են փորձագիտական բնագավառներին առնչվող տարբեր առցանց սեմինարների, մասնավորապես Ամերիկյան քրեագիտական լաբորատորիաների տնօրենների միության (ASCLD), Եվրոպական միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL), Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի, «BUCHI Switzerland»-ի, «Legal Academy»-ի, «ThermoFisher Scientific»-ի, «LF Академия»-ի, «Sartorius»-ի, «Agilent technologies»-ի, «Horizon Europe»-ի, «Ultra Forensic Technology»-ի, «TOPCOP Project»-ի, «Академия Роскачества»-ի, «Российский национальный институт медицинского права»-ի և այլն:

2024թ. վերլուծվել և ըստ անհրաժեշտության շարունակաբար արդիականացվել են Կազմակերպությունում գործող փորձագիտական ստորաբաժանումներին վերաբերող համապատասխան հրահանգներն ու ընթացակարգերը, փորձաքննությունների (նաև փորձարկումների) կատարման շրջանակում իրականացվող հետազոտությունների ընթացքում կիրառվող մեթոդների ու մեթոդիկաների, ընթացակարգերի, մասնագիտական գրականության, ստանդարտների, այլ իրավական ակտերի ու վերաբերելի փաստաթղթերի հիմնական ցանկերը:

Կազմակերպության փորձագետները մասնագիտական գիտելիքների ու հմտությունների շարունակական զարգացման ու կատարելագործման նպատակով մասնակցել են ներպետական ու միջազգային առցանց գիտաժողովների, սեմինարների, գործնական դասընթացների, գիտագործնական կլոր սեղանների, միջպետական ստանդարտների նախագծերի մշակման գործընթացի և այլն:

Շարունակվել են փամփուշտների ու պարկուճների, ներկանյութերի, սառը զենքերի նմուշների, տարբեր մակնիշի մեքենաների թափքի նույնականացման համարների տեղակայությունների, կեղծ մետաղադրամների բաղադրությունների, կեղծ թղթադրամների

(ՀՀ, ՌԴ, ԱՄՆ, Եվրո), գրելագործիքների, պայթուցիկ նյութերի արգասիքների, պարենային ու ոչ պարենային ապրանքների, անշարժ գույքի արժեքների, հայտնի հեղինակների ոճային ու կենսագրական տվյալների շտեմարանների համալրման աշխատանքները, իրականացվել են GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար SUDMED-MS_3016 գրադարանի (3116 անվանում նյութերի տեսականի), Cayman Spectral Library.new (CSL) գրադարանի (2000 անվանում նյութերի տեսականի), SWGDRUG.3.9L գրադարանի (4000 անվանում նյութերի տեսականի) ներդրման աշխատանքներ:

Շարունակվել են դատափորձագիտական բնագավառում նոր դենդրոխրոնոլոգիական գործիքային «LINTAB» LTM06-E մոդելի սարքի ու TSAP-Win համակարգչային ծրագրի միջոցով ապօրինի ծառահատումների հիմնական օբյեկտ հանդիսացող ծառատեսակներից վերցված նմուշների տարեկան օղակների պատկերների բազայի համալրման, ծառերի աճի ինտենսիվության բազայի համալրման աշխատանքները:

Շարունակվել է «Genetic Analyzer 3500» գործիքային սարքի ու «GeneMapper™ ID-X Software v1.6» համակարգչային ծրագրի միջոցով դատագենետիկական փորձագիտական հետազոտությունների ԴՆԹ տվյալների պահոցի ձևավորման գործընթացը, որում ներառված են ԴՆԹ սեկվենավորված ու համեմատական հետազոտության համար պիտանի ԴՆԹ-բնութագրերը:

Ստորև ներկայացվում են 2024թ. իրականացված դատափորձաքննությունների տեսակների ու քանակի ամփոփ տվյալները՝

N	Տարեթիվ	Քրեադատավարական շրջանակներում կատարված դատական փորձաքննություններ	
		քանակային ցուցանիշը (հատ)	տեսակների քանակը (հատ)
1	2024	14773 (առ 12.12.2024թ.)	28

Գիտաուսումնական աշխատանքներ: ՀՀ դատախազության ու Կազմակերպության միջև կնքված «Լրացուցիչ կրթության ուսուցման ծառայությունների գնման» պետական պայմանագրի շրջանակում իրավասու մարմինների 98 աշխատող անցել է կատարելագործման ու վերապատրաստման ուսուցողական դասընթացներ:

Իրագործվել են փորձագետների ու փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստման ու կատարելագործման գործընթացի որակյալ կազմակերպման ու իրականացման ապահովման, փորձագիտության բնագավառի մասնագետի, հավակնորդի վերապատրաստման կամ կատարելագործման դասընթացների նոր ծրագիր-առաջարկների մշակման աշխատանքներ: ԳԱԱ համակարգում դատական փորձագետի որակավորում ու վերաորակավորում է ստացել 71 հավակնորդ:

Կազմակերպությունում ճանաչողական այցեր են կազմակերպվել Երևանի պետական համալսարանի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնի, Մ.Մաշտոցի անվ. համալսարանի, Եվրասիա միջազգային համալսարանի, Հյուսիսային համալսարանի և այլ բուհերի ուսանողների համար:

Գիտափորձնական-վերլուծական աշխատանքներ: «Agilent LC-MS-MS 6475» եռակի քառաբևեռ մասսսպեկտրաչափի հետ համակցված հեղուկային քրոմատոգրաֆի կիրառմամբ իրականացվել է կենսաբանական նմուշներում, մասնավորապես մազի, արյան ու մեզի մատրիցաներում թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դեղամիջոցների, թունավոր, խիստ ներգործող նյութերի հայտնաբերման դատաքիմիական (քիմիկո-տոքսիկոլոգիական) հետազոտական մեթոդների մշակում, փորձարկում ու ներդրում, կատարվել են նաև եղունգի մատրիցաների հետազոտական մեթոդների վերլուծության ուսումնասիրություններ: Օպտիմալ մեթոդների ստեղծման համար իրականացվել են դատաքիմիական հետազոտական մեթոդների, այդ թվում՝ նմուշապատրաստման ու

գործիքային հետազոտության օպտիմալացված էֆեկտիվ մեթոդների մշակման ու ներդրման գիտափորձնական աշխատանքներ, ինչպես նաև մասսպեկտրոմետրերի կարևոր բնութագրերի՝ դինամիկ տիրույթի, սկանավորման տեսակի ու արագության պայմաններում ազդանշան-աղմուկ փոփոխության հաշվին բարձր հարաբերակցության ապահովում անալիտների արդյունավետ բաժանման համար, որը միանշանակ նվազեցնում է կեղծ դրական ու բացասական արդյունքների հավանականությունը, թույլ է տալիս հայտնաբերել հսկվող նյութերի նույնիսկ պիկոգրամ քանակությունը, որը չափազանց կարևոր է հատկապես սահմանափակ նմուշների հետ աշխատելիս:

Իրականացվել է մարդու կենսաբանական ծագման նմուշներում ու հետքերում հայտնաբերվող երկու և ավելի անձանցից թողնված ԴՆԹ խառնուրդների հետազոտություն՝ դրանցում մաժոր ու մինոր բաղադրիչների տարանջատման ու դոմոր բնութագրերի հետ համեմատական հետազոտությունների արդյունավետ մոտեցումների մշակմամբ:

Շարունակվել է համագործակցությունը ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության աշխատանքներին:

Իրականացվել են փորձաքննությունների շրջանակում ներկայացվող կանեփ տեսակի բույսի ու կանեփից ստացվող թմրամիջոցների (մարիխուանա, հաշիշ) փորձանմուշների համեմատական փորձագիտական հետազոտություններ՝ կիրառելով մասս-սպեկտրոմետրիական ու ռենտգեն-ֆլուորեսցենտային մեթոդները՝ նպատակ ունենալով պարզել հետազոտվող փորձանմուշների ընդհանուր սեռային պատկանելիությունը:

Ուսումնասիրվել են «Niton XL3T 980» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորով աշխատելու լրամշակված ընթացակարգի հիման վրա տարբեր մետաղների ու դրանց համաձուլվածքների, մետաղադրամների, թանկարժեք մետաղների, հողերի, հանքային ապարների բաղադրակազմերի փորձագիտական հետազոտությունների առանձնահատկությունները, իրականացվել է հանքային ապարներում մետաղների որակական ու քանակական պարունակությունների պարզման մեթոդի փորձարկում:

Իրականացվել են կոնյակների ու կոնյակների թորվածքների որակի գնահատման ու նույնականացման նախնական հետազոտություններ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նաև այլ ուղղություններով գիտափորձնական-վերլուծական բնույթի աշխատանքներ:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես», N 11, Ե., «ԳՈՒԴ ՊՐԻՆՏ» հրատ., 2024, 189 էջ:
2. «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես», N 12, Ե., «ԳՈՒԴ ՊՐԻՆՏ» հրատ., 2024, 174 էջ:
3. Իսրայելյան Գ.Վ., Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության իրավական հիմքերի վերլուծությունը և կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Ե., «Աստղիկ գրատուն» հրատ., 2024, 56 էջ:
4. Մամիկոնյան Կ.Հ., Բիզնեսի իրավական կարգավորման խնդիրները, Ե., հեղ. հրատ. 2024, 143 էջ:
5. Պողոսյան Ս.Հ., Աղուզումցյան Ռ.Վ., Խաչատրյան Ա.Ռ., Ղազեյան Խ.Ա., Ժամանակակից կառավարչի ստեղծարարության զարգացման հոգեբանական գործոնները, Ե., «Պետական կառավարման ակադեմիա» հրատ., 2024, 211 էջ:
6. Տիտանյան Է.Լ., Ոսկանյան Պ.Ս., Էսպոնա Մ.Ջ., Երկակի նշանակության ապրանքների և ոչ նյութական արժեքների արտահանման վերահսկողության առանձնահատկությունները ՀՀ-ում, Ե., «Ինովացիոն հետազոտությունների կենտրոն» հրատ., 2024, 176 էջ:

7. Хох А.Н., Восканян П.С., Методика по установлению обстоятельств антропогенного воздействия на окружающую среду в целом или ее отдельные компоненты расчетно-аналитическими методами, НПЦ Гос. ком. суд. экспертиз РБ. Минск, 2024, 46 с.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

8. Իսրայելյան Գ.Վ., Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության սկզբունքները և մեթոդները, Ե., «Օրենքի պատվար», N 17, 2024, էջ 108-117:
9. Իսրայելյան Գ.Վ., Հանցավորությունը պայմանավորող իրավական բնույթի գործոնները և դրանց կանխարգելման արդի միջոցները Հայաստանի Հանրապետությունում, Ե., «Դատական իշխանություն», N 1-3(295-297), 2024, էջ 62-68:
10. Իսրայելյան Գ.Վ., Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը և իրացումը տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով (քրեաբանական տեսանկյուն) իրավունքի արդի հիմնախնդիրները գիտ. հոդված. ժող., Ե., «Մոավ պրինտ» ՍՊԸ, 2024, էջ 34-44:
11. Իսրայելյան Գ.Վ., Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության իրավական կարգավորման կատարելագործման խնդիրը Հայաստանի Հանրապետությունում, Ե., «Բանբեր Եվրասիա միջազգային համալսարան», N 1, 2024, էջ 24-33:
12. Իսրայելյան Գ.Վ., Համակարգչային հափշտակության ընդհանուր զոհաբանական կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ե., «Դատական իշխանություն», N 4-6 (298-300), 2024, էջ 41-48:
13. Իսրայելյան Գ.Վ., Ապակիների լուսաթափանցելիության՝ օրենսդրությամբ սահմանված չափի խախտմամբ տրանսպորտային միջոց վարելու համար պատասխանատվության անհրաժեշտությունը, հիմքերի մեկնաբանման և կատարելագործման խնդիրները, Ե., ՀՀ սահմանադրական դատարանի «Տեղեկագիր», N 3 (115), 2024, էջ 79-91:
14. Իսրայելյան Գ.Վ., Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների տիպային մեխանիզմները և կանխարգելման միջոցները Հայաստանի Հանրապետությունում, Ե., «Դատական իշխանություն», N 7-9(301-303), 2024, էջ 85-91:
15. Ծերեթյան Կ.Ո., ՀՀ Արմավիրի մարզի քարի դարի և վաղ երկրագործական մշակույթի հուշարձանները, Ե., «Հուշարձան» գիտ. հանդես, հտ. ԻԱ, 2024, էջ 27-44:
16. Մամիկոնյան Կ.Հ., Ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում ապրանքային նշանի արժեքի որոշման մեթոդաբանության հարցերը, Ե., «Դատական իշխանություն», N 10-12(304-306), 2024, էջ 82-93:
17. Агузумцян Р.В., Особенности судебно-психологической экспертизы, «Դատահոգեբանական փորձաքննություն, տեսություն և պրակտիկա» II հանրապետ. գիտագործ. գիտաժող. նյութ. ժող., Ե., 2024, էջ 43-48:
18. Израелян Г.В., Проблемы совершенствования и регламентации антикоррупционной экспертизы проектов нормативных правовых актов в РА, Минск, "Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции" вып. 17.
19. Израелян Г.В., Определение понятия и некоторые проблемы новых регламентаций правовых основ криминалистического (экспертного) обеспечения расследования преступлений в РА, Ե., «Օրենքի պատվար» գիտամեթոդաբան. ամսագիր, N 18, 2024, էջ 131-139:
20. Мамян Т.С., Шахвердян Г.Д., Некоторые особенности судебно-психологической экспертизы способности потерпевшего оказывать сопротивление при насильственных сексуальных действиях, Узбекистон суд экспертизаси "O'zbekiston sud ekspertizasi", N 4 (15), 2024, с. 12-19.
21. Овсепян А.Н., Мхитарян К.Г., Взаимосвязь между дефектами медицинской помощи и данными причинно-следственного анализа, М., Судебно-медицинская экспертиза, т. 67, N 1, 2024, с. 62-66.
22. Овсепян А.Н., Комплексный анализ экспертных ошибок по результатам комиссионных судебно-медицинских экспертиз, мат. межд. научно-практ. конф., "Экспертные ошибки: современные проблемы возникновения, выявления и профилактики", М., РГ-Пресс, 2024, с. 159-163.
23. Хох Н.А., Восканян П.С., Петросян А.А., Судебно-экспертное исследование марихуаны: подходы к установлению принадлежности к ранее разделенным растительным массам, М., "Теория и практика судебной экспертизы в современных условия", 2024, с. 255-259.

24. Хох А.Н., Пугачевский А.В., Вершицкая И.Н., Восканян П.С., Экспертные подходы к оценке состояния живого напочвенного покрова, подвергшегося негативному антропогенному воздействию, мат. межд. научно-практ. конф., Минск, Роль и значение судебно-экспертной деятельности и судебной экспертологии в обеспечении национальной безопасности, 2024, с. 250-252.
25. Чернов Ю.Г., Агузумцян Р.В., Амбарцумян М.В., Комплексная экспертиза по юридической психологии с использованием анализа рукописных документов, мат. Вроцлавского межд. симп., Польша, 2024, с. 16-17.
26. Ghochikyan T.V., Zhamharyan A.G., Afrikyan S.G., Frangyan V.R., Galstyan A.S.. Novel Triazole-Containing "Dipeptides": Synthesis, Molecular Docking and Analgesic Activity Studies. Chembiochem, 2024, 25(9), e202300837
27. Harutyunyan A.A., Movsisyan Sh.A., Features of the Study of Intellectual Property Objects Within the Framework of Already Conducted Expertises, Харків, Актуальні питання судової експертизи і криміналістики: зб. мат-лів Міжнар. наук.-практ. конф., присвяченої пам'яті видатного вченого Владислава Федоренка, 15 жовтня 2024, pp.335-356.
28. Kirakosyan N.A., Petrosyan S.G., Sahakyan L.Y., Comparative analysis of methods for the detection and quantitative determination of ethyl alcohol in the body, Y., Proceedings of the Yerevan State University, Chemistry and Biology, 2024, 58(1), pp. 1–8.
29. Mamikonyan K.H., Harutyunyan A.H., On the issue of exempting dividends received from the participation of individuals in company capital from taxation, 2024, Kharkiv, Theory and Practice of Forensic Science and Criminalistics: Collection of Scientific Papers. NSC "Hon. Prof. M. S. Bokarius FSI", 2024. pp. 107-118.
30. Nikolyan S.H., Tsakanyan A.V., Andreasyan N.A., Martirosyan S.T., Assessment of the vodka safety and detection of falsification compared to the original ones, Saudi Arabia, «Arab Journal of Forensic Sciences and Forensic Medicine» 2024, 58(1), pp. 1–8.
31. Tadevosyan A.V., Safaryan A.A., Bagdasaryan T.S., Voskanyan P.S., "The impact of the mining industry tailings on the environment and the Ways of its reduction, The international scientific conference "Environmental protection and sustainable development" dedicated to professor victor eristavi' s memory, Works, Georgian technical university, 2024, pp. 370-381.
- Հոդվածները հրատարակվել են «Դատահոգեբանական փորձաքննություն. տեսություն և պրակտիկա» 2-րդ գիտագործնական գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ՀՊՄՀ, 2024, 243 էջ:**
32. Աղուզումցյան Ռ.Վ., Դատահոգեբանական փորձաքննության առանձնահատկությունները, էջ 43-48:
33. Գաբրիելյան Ա.Կ., Համբարձումյան Մ.Վ., Մամյան Տ.Ս., Շահվերդյան Գ.Դ., Դատահոգեբանական փորձաքննությունների առանձնահատկությունները գործնականում, էջ 86-95:
34. Համբարձումյան Մ.Վ., ՀՀ-ում զինծառայողների ինքնասպանությունների, ինքնասպանության փորձերի առնչությամբ փորձաքննությունների առանձնահատկությունների վերլուծությունը, էջ 137-147:
- Հոդվածները հրատարակվել են «Национальные и международные тенденции и перспективы развития судебной экспертизы» գիտագործնական գիտաժողովի նյութերի ժողովածուում, Նիժնի Նովգորոդ, 2024, ННГУ, 454 էջ**
35. Агузумцян Р.В., Современные проблемы профессиональной подготовки судебно-психологических экспертов, стр. 3-7.
36. Исраелян Г.В., Некоторые вопросы совершенствования регулирования общих положений проекта закона Республики Армения «О судебно-экспертной деятельности», стр. 148-151.
- Հոդվածները հրատարակվել են «Вопросы криминологии, криминалистики и судебной экспертизы», գիտագործնական գիտաժողովի նյութերի ժողովածուում, Մինսկ, 2(56) թող., 2024, էջ 191**
37. Каграманян Дж.Г., Газохроматографическая идентификация следов горючих и легко-воспламеняющихся жидкостей при производстве пожарно - технических экспертиз, с. 79-83.
38. Оганнисян Г.А., Культурный вандализм в контексте археологической экспертизы, с. 153-159.
- Հոդվածները հրատարակվել են «Դատական փորձաքննության և քրեագիտության» հայկական հանդեսում, N 11, Ե., «ԳՈՒԴ ՊՐԻՆՏ» հրատ., 2024, 189 էջ:**
39. Ավագյան Լ.Ա., Թառոյան Ս.Բ., Գործվածքների վրա արյան հետքերի վաղեմության որոշումը հատկանիշների հետազոտման փորձարարական հիմնավորմամբ, էջ 9-16:
40. Երիթելյան Բ.Ա., Համբարձումյան Մ.Վ., Արտակարգ իրավիճակների պայմաններում սոցիալական անորոշության առաջացման և դրսևորման առանձնահատկությունների վերլուծությունը, էջ 71-78:
41. Իսրայելյան Գ.Վ., Վարչատարածքային միավորի քրեաբանական փորձաքննության բնութագիրը և իրավական կարգավորման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում, էջ 61-70:

42. Մամիկոնյան Կ.Հ., Մելքոնյան Ա.Մ., Հարությունյան Ա.Հ., Հայաստանի Հանրապետության ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի հետաձգված հաշվառման մեխանիզմի կիրառման հիմնավորումը (փորձագիտական կարծիք), էջ 79-94:
43. Հակոբյան Ա.Ե., Տրանսպորտային միջոցին պատճառված վնասի չափի պարզման մեթոդական նոր մոտեցման առանձնահատկությունները ապրանքագիտական փորձաքննությունների շրջանակներում, էջ 138-145:
44. Մամիկոնյան Կ.Հ., Փիլոյան Ա.Ս., Համակարգչային ծրագրի՝ որպես ոչ նյութական ակտիվ արժեքի որոշման մեթոդաբանության հարցերը դատական ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում, էջ 95-104:
45. Մարտիրոսյան Թ.Ա., Տարբեր ժամանակներում կատարված ձեռագիր գրառումների և ստորագրությունների հետազոտման մեթոդաբանության որոշ առանձնահատկությունները, էջ 105-112:
Հոդվածները հրատարակվել են «Դատական փորձաքննության և քրեագիտության» հայկական հանդեսում, N 12, Ե., «ԳՈՒԴ ՊՐԻՆՏ» հրատ., 2024, 174 էջ:
46. Գևորգյան Ա.Ս., «Նեյրո-դեգեներատիվ» հիվանդությունների ժամանակ անձի գործարքունակության բժշկական չափորոշիչների գնահատումը առկա իրավակարգավորումների համատեքստում, էջ 47-53:
47. Խաչատրյան Մ.Վ., Էլիագյան Դ.Ս., Ղազարյան Գ.Ղ., Կանեփ տեսակի բույսի և դրանից ստացվող թմրամիջոցների համեմատական հետազոտությունը՝ մասս-սպեկտրոմետրիական և ռենտգեն-ֆլուորեսցենտային մեթոդների կիրառմամբ, էջ 109-116:
48. Հայրապետյան Լ.Ա., Սանթրոսյան Ա.Վ., Իշխանյան Յու.Ռ., Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը լեռնահարստացուցիչ ձեռնարկությունների թափոնների պահեստավորման ժամանակ, էջ 9-15:
49. Մամիկոնյան Կ.Հ., Ստեփանյան Լ.Ս., Դրամարկղային գործառնությունների փորձագիտական հետազոտության մեթոդաբանության խնդիրները, էջ 60-67:

Վ.Քոչարյանը, Դ.Դալլաքյանը պարգևատրվել են ՀՀ քննչական կոմիտեի «Համագործակցության համար» մեդալով, Ռ.Աղուզումցյանը՝ «Մովսես Խորենացու» մեդալով:

ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Հաշվետու տարում անցկացվել է 2 ընդհանուր ժողով:

Ապրիլի 3-ի ընդլայնված արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվել է ակադեմիայի գիտական կազմակերպությունների, գիտական բաժանմունքների նախաձեռնությամբ: Քննարկվել է ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ ինտեգրման հարցը, ներկայացվել է ընդհանուր դիրքորոշումը: Ժողովի որոշման նախագծում ընդհանրացվել են մամուլում, հանդիպումների, քննարկումների ժամանակ առանձին գիտնականների, գիտական կազմակերպությունների ու գիտական բաժանմունքների կարծիքներն ու առաջարկները:

Ապրիլի 23-ի տարեկան ընդհանուր ժողովը բացել և ԳԱԱ 2023թ. գիտական գործունեության արդյունքների մասին զեկուցմամբ հանդես է եկել ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ա.Սաղյանը: Ակադեմիայի 2023թ. գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցել է ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար թղթակից անդամ Ա.Իշխանյանը: Ժողովը քննարկել և հավանություն է տվել ԳԱԱ 2023թ. գործունեությանը: Տեղի է ունեցել ԳԱԱ մրցանակների հանձնման արարողություն: Ժողովում լսվել է ԳԱԱ արտասահմանյան անդամ, ՌԳԱ թղթակից անդամ, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ Ա.Կամալովի «Ժամանակակից տեխնոլոգիաները բժշկության մեջ» գիտական զեկուցումը:

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում անցկացվել է նախագահության 15 նիստ, քննարկվել է շուրջ 25 հարց:

Նախագահության որոշմամբ ստեղծվել է «Գիտություն» հիմնադրամը, հաստատվել է հիմնադրամի կանոնադրությունը:

Հաստատվել են ԳԱԱ համակարգում ներառված ՊՈԱԿ գործադիր մարմնի (տնօրենի) նոր ընտրակարգը, ԳԱԱ համակարգի կազմակերպությունների տնօրենների խորհրդի ձևավորման ու գործունեության կանոնակարգը:

Նախագահության որոշմամբ թույլատրվել է կազմակերպել «Կիսահաղորդիչների ֆիզիկա» մասնագիտությամբ ասպիրանտական ու հայցորդական ուսուցում Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, ձևավորել են համապատասխան մասնագիտական հանձնաժողովներ:

Նախագահության որոշմամբ հաստատվել են ԳԱԱ նախագահության կառուցվածքը, աշխատակազմի հաստիքացուցակն ու աշխատողների թիվը, ԳԱԱ 2024թ. արտադրությունից կտրված, հեռակա և վճարովի ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները, համալրվել է «ՀՀ ԳԱԱ զեկույցներ» հանդեսի խմբագրական կազմը:

Նախագահության նիստերում ընտրվել են Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության, Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների, Մեխանիկայի, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների, Բուսաբանության, Արևելագիտության ինստիտուտների, ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեններ, հաստատվել է կենտրոնի խորհրդի կազմը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏԱՇԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՑԱՆՑ (ASNET-AM)

Հայաստանի ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանցը (ASNET-AM) ներկայացված է համաեվրոպական գիտակրթական ցանցի GEANT միջավայրում որպես ազգային գիտակրթական ցանց: 2024թ. ASNET-AM ցանցում տարվել են ցանցային ծառայությունների, ցանցային կապուղիների որակի բարելավման, առցանց ծառայությունների անվտանգության ապահովման, ամպային ռեսուրսների օգտագործման ընդլայնման աշխատանքներ:

Ցանցի կապուղիների սպասարկում ու զարգացում: Իրականացվել է ցանցի հիմնական հանգույցների շուրջօրյա (24/7) աշխատանքի ապահովում՝ հիմնական կապուղիների համար 10 Գբիտ/վ, կազմակերպությունների համար մինչև 1 Գբիտ/վ թողունակությամբ: Կատարվել է միացում GEANT համաեվրոպական գիտակրթական ցանցին 10 Գբիտ/վ արագությամբ ուղիղ ելքով դեպի Ֆրանկֆուրտ, ինչը հնարավորություն է ստեղծել ցանցին միացված գիտական ու կրթական կազմակերպություններին ավելի արագ ու արդյունավետ համագործակցել եվրոպական գործընկերների հետ: Ցանցը նաև լրացուցիչ ապահովում և սպասարկում է երաշխավորված 2 Գբիտ/վ երկկողմանի կապուղու ակտիվ վիճակն ինչպես դեպի ինտերնետ, այնպես էլ 10 Գբիտ/վ երկկողմանի կապուղի դեպի Հայաստանի այլ գիտական ու մասնավոր ցանցեր: Թարմացվել են ցանցի բոլոր 4 հիմնական երթուղավորիչները, ինչի շնորհիվ տվյալների փոխանցման հիմնական մայրուղիների (Backbone) արագությունը կավելանա մինչև 25Գբիտ/վ:

Վստահության, ինքնության ու անվտանգության ծառայությունների զարգացում: GEANT ցանցի eduroam (educational roaming) ծառայության համար մշակվել և փորձարկվել են radius սերվերների կարգավորումների նոր հնարավորություններ: Թարմացվել է ցանցում գործող SSL հավաստագրերի կենտրոնացված տարաբաշխման ավտոմատացված համակարգը, որը գործում է ACME v2 արձանագրության կիրառմամբ և ապահովում է Wildcard SSL հավաստագրերի տրամադրում ու կանոնավոր թարմացում 32 դոմենային տիրույթների ու ենթատիրույթների համար:

Մեծածավալ հաշվարկների ու ամպային ծառայությունների ներդրում: Կատարվել են Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի (ANSCC) ASNET-AM ցանցին 1 Գբիտ/վ կապուղով ներքին ցանցի կառուցման ու միացման աշխատանքներ: Շարունակվում են IaaS (Infrastructure as a Service) ամպային ծառայության զարգացման աշխատանքները: Վիրտուալ հաշվողական ռեսուրսների ամպային միջավայր է տրամադրվել ԵՊՀ-ին, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտին, Էկոկենտրոնին, Հայ-ռուսական համալսարանին:

Առցանց իրական ժամանակի ծառայությունների ընդլայնում: Իրականացվել է ցանցում գործող DNS համակարգի թարմացում: Համակարգը ներկայում սպասարկում է 81 դոմենային տիրույթ: Կատարվել են meet.asnet.am ու edu.asnet.am հարթակի սպասարկման, արդիականացման աշխատանքներ: Նշված հարթակներում գրանցված են ավելի քան 100 կազմակերպությունների օգտագործողներ, որոնց տրամադրվում են տեսակոնֆերանսների ու հեռավար կրթության կազմակերպման հնարավորություններ: Meet.asnet.am տեսակոնֆերանս տարաբաշխված հարթակում փորձարկվել են տարբեր հանգույցների կարգավորումների սինխրոնիզացիայի մեխանիզմները: Էլեկտրոնային փոստի կառավարման համակարգում արդիականացվել են հակասփամային ու հակավիրուսային պաշտպանության արդյունավետությունը բարձրացնող մեխանիզմները: Մշակվել է հին ձևաչափից դեպի նոր ձևաչափ Էլեկտրոնային փոստի փոստարկղների տվյալների

փոխակերպման ավտոմատացված մշակման հնարավորությամբ մեխանիզմ: Վեբ հոստինգ համակարգի համար մշակվել և իրականացվել են վեբ սերվերների ու հոսթինգային համակարգի լրացուցիչ ընդլայնված պաշտպանության մեթոդներ: Ցանցում գործող վեբ հոստինգ համակարգը սպասարկում է 140 վեբ կայքերի աշխատանքը:

Առցանց իրական ժամանակի մշտադիտարկման ծառայությունների ու log ֆայլերի կառավարման ծառայությունների բարելավում: Շարունակվում են ցանցի մշտադիտարկման ծառայության զարգացման աշխատանքները: Ցանցի կայունությունն ու արագության բնութագրերն ապահովելու համար իրականացվել է լայնածավալ աշխատանք: Ցանցը ներդրել և սպասարկում է մի շարք ծառայություններ, ինչպիսին են WiFimon մշտադիտարկման ու Zabbix մշտադիտարկման համակարգի Telegram Bot-ի ծանուցման, Grafana արտապատկերային համակարգերը: Այժմ վերամշակվում են perfSONAR համակարգի կարգավորման եղանակները: Շարունակվում են NetBox համակարգի լրացման ու ընդլայնման աշխատանքները՝ ներմուծելով ցանցի այլ ենթամասեր:

Ցանցի ծառայություններից 2024թ. օգտվել են հանրապետության 4 քաղաքներում ու բնակավայրերում տեղակայված հանգույցներից օգտվող ավելի քան 5000 գիտնականներ, գիտական ու տեխնիկական աշխատողներ, ասպիրանտներ, ուսանողներ և այլ օգտագործողներ:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՍԼՊՓ հանձնաժողովը, ղեկավարվելով «Սևանա լճի մասին» օրենքի 20 և 21 հոդվածների դրույթներով և հանձնաժողովի 2024թ. աշխատանքային տարեկան ծրագրով, նիստերում քննարկել է Սևանա լճի էկոհամակարգի, բնական ռեսուրսների պահպանման, վերականգնման, վերարտադրության ու արդյունավետ օգտագործման խնդիրները:

Հանձնաժողովը հաշվետու տարում անցկացրել է 34 նիստ, քննարկվել են Սևանա լճի ու նրա ջրավազանի հետ առնչվող ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների և մի շարք ՓԲԸ ու ՍՊԸ ներկայացված ծրագրերի, նախագծերի, հաշվետվությունների տեխնիկատնտեսական հիմնադրույթների վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների, կարծիքների հետ կապված խնդիրները:

Հանձնաժողովը շարունակել է ակտիվ համագործակցությունը ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ու նրան ենթակա կառույցների, այդ թվում՝ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՏԿԵՆ ջրային կոմիտեի ու Գեղարքունիքի մարզպետարանի հետ: Հանձնաժողովը սերտորեն համագործակցել է միջազգային կազմակերպությունների հետ՝ ADWISE Consulting կազմակերպության ներկայացուցիչների հետ քննարկվել է «Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» EU4Sevan ծրագրի ՄԱԶԾ բաղադրիչի շրջանակում իրականացվող Սևանա լճի երկարաժամկետ ազգային տեսլականի սահմանման ճանապարհային քարտեզի իրականացման ընթացքը, եղել են պարբերական քննարկումներ EU4Sevan ծրագրի թիմի հետ՝ ծրագրի շրջանակում իրականացվող ու պլանավորվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության պարբերական թարմացման նպատակով և 2024թ. կատարված աշխատանքների ներկայացում ու հետագա քայլերի քննարկում:

Հանձնաժողովին փորձաքննության ներկայացված 35 ծրագրերին, նախագծերին ու առաջարկություններին տրվել են կարծիքներ, այդ թվում՝

- 16 բացասական կարծիք է ներկայացվել Սևանա լճի ջրավազանում տարբեր բնույթի հանքավայրերի բացման ու հանգստի գոտիների կառուցման, բժշկական թափոնների այրման կայանների հիմնման վերաբերյալ ներկայացված ծրագրերին ու նախագծերին,
- 8 դրական կարծիք/առաջարկություն է ներկայացվել Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման ու օգտագործման, ոռոգման նպատակով Սևանա լճից ջրառի, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի, Գեղարքունիքի մարզում երկրաբանական հետախուզական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտերի վերաբերյալ,
- հանձնաժողովը փորձագիտական եզրակացությամբ առաջարկություն է ներկայացվել Սևանա լճի ջրածածկման ենթակա տարածքների մաքրման, նոր ջրամբարների կառուցման, լճի բացասական հաշվեկշռի կարգավորման, լճում ձկան ու խեցգետնի արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակների բնութագրման վերաբերյալ,
- քննարկվել են 11 նախագծերի վերաբերյալ առաջարկություններն ու խնդիրները՝ կապված Սևանի մասին օրենքում փոփոխություններ կատարելու, լճից ջրբացթողումների, ջրակորուստների նվազեցման, Մարտունի համայնքի տարածքում Աստղաձորի ջրամբարի կառուցման, բույսերի ջրապահանջի նորմերը պահպանելու, Սևանա լճի բացասական հաշվեկշռի կարգավորման ու բնակավայրերի կոյուղաջրերի խնդիրների հետ, արվել են համապատասխան առաջարկություններ,
- հանձնաժողովը քննարկել ու հավանություն է տվել Սևանա լճում ձկան ու խեցգետնի արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակների վերաբերյալ,
- հանձնաժողովն իրականացրել է գիտարշավ դեպի Նորատուսի ավազի ու գլաքարակոպճային խառնուրդի հանքավայր՝ տեղում երկրաբանական ուսումնասիրության հնարավոր ազդեցության գնահատման համար,
- հանձնաժողովի նիստերում քննարկվել և հաստատվել են 2024թ. աշխատանքային ծրագիրն ու գործունեության հաշվետվությունը, 2025թ. աշխատանքային ծրագիրը:

Ընթացիկ տարում այցեր են եղել Սևանա լճի ջրավազան, կազմակերպվել են քննարկումներ «Սևան» ազգային պարկ ՓԲԸ մասնագետների հետ: Համատեղ քննարկումներ են կազմակերպվել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի, ՇՄՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ տնօրենի ու փորձագետների, ՇՄՆ փորձագետների հետ՝ Սևանա լճի մասին օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Հանձնաժողովը տարբեր բնույթի խնդիրներ քննարկելիս սկզբունքորեն առաջնորդվել է հետևյալ դրույթներով՝ Սևանա լճից ոռոգման ու այլ նպատակներով ջրթողումներն իրականացնել միայն լճի դրական հաշվեկշիռը պահպանելու պայմանով, ապահովել լճից ձկնատեսակների որսի քանակական ու որակական ցուցանիշները, վերահսկել ու կանխարգելել Սևանա լճի էկոլոգիական գոտիների՝ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող երևույթներն ու միջոցառումները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Համաձայնագրեր և հուշագրեր: Մարտի 14-ին Սոֆիայում (Բուլղարիա) ԳԱԱ նախագահ Ա.Սադյանը և Բուլղարիայի Հանրապետության ԳԱ նախագահ Յու.Ռևալսկին

ստորագրել են փոխըմբռնման հուշագիր:

Ապրիլի 14-ին Դուբնայում (ՌԴ) ԳԱԱ նախագահ Ա.Սադյանը և Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) տնօրեն Գ.Տրուբնիկովը կնքել են հիմնարար գիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարության և կրթության ոլորտում համագործակցության համաձայնագիր:

Ապրիլի 25-ին Աթենքում (Հունաստան) ԳԱԱ նախագահ Ա.Սադյանը և Աթենքի Ակադեմիայի նախագահ Ս.Կրիմիզիսը ստորագրել են համագործակցության հուշագիր:

Հոկտեմբերի 11-ին Երևանում ԳԱԱ փոխնախագահ Հ. Մաթևոսյանը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության «CORE» ակադեմիայի ղեկավար Ռեյմոնդ Զ.Վուն ստորագրել են համագործակցության հուշագիր:

Հոկտեմբերի 24-ին Երևանում ԳԱԱ նախագահ Ա.Սադյանը և ՌԳԱ Սանկտ Պետերբուրգի բաժանմունքի ղեկավար, Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի պոլիտեխնիկական համալսարանի ռեկտոր Ա. Ռուսկոյը կնքել են համագործակցության համաձայնագրեր ԳԱԱ ու ՌԳԱ, ԳԱԱ ու պոլիտեխնիկական համալսարանի միջև: Երկու համաձայնագրերը ներառում են ճանապարհային քարտեզներ, որոնք կամրապնդեն գիտական, տեխնոլոգիական ու գիտակրթական ոլորտներում համագործակցությունը:

ԳԱԱ պատվիրակությունների միջազգային այցեր: Առկա համագործակցությունները զարգացնելու ու նոր կապեր ձեռք բերելու նպատակով ԳԱԱ պատվիրակությունները նախագահ Ա.Սադյանի գլխավորությամբ մասնակցել են՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրման 300-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառմանը, Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (MAAH) 37-րդ նիստին, Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի 155-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումներին, ԵԱՏՄ երկրների էկոլոգիական հանձնաժողովի նիստին:

Հաշվետու տարում ԳԱԱ նախագահության աջակցությամբ «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի գիտական գործուղումների իրականացում» ծրագրով համակարգի 75 աշխատակից մեկնել է ԵՄ 10 երկիր, ԱՄՆ, Չինաստան, Ճապոնիա և այլ երկրներ, մասնակցել միջազգային գիտական միջոցառումներին: ԳԱԱ կազմակերպություններից արտասահմանյան երկրներ գործուղման է մեկնել 888 գիտնական, որոնցից գիտաժողովների է մասնակցել 433, համատեղ աշխատանքներ է կատարել 257, բանակցություններ է վարել ու քննարկումներին մասնակցել 198 գիտնական:

Պատվիրակությունների այցելություններ ԳԱԱ: Գիտության ոլորտում միջազգային համագործակցության հեռանկարների քննարկման նպատակով ԳԱԱ նախագահությունն ընդունել է Արաբական Միացյալ Էմիրությունների Դաշնային ազգային խորհրդի պաշտպանության, ներքին գործերի և արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ դոկտոր Ալի Ալ-Նուայիմիի, Վրաստանի Խորհրդարանի կրթության, գիտության և երիտասարդության հարցերով հանձնաժողովի նախագահ Գիվի Միքանաձեի, Իրանի Իսլամական Հանրապետության «Սաադի» հիմնադրամի նախագահ, պարսից լեզվի և գրականության ակադեմիայի նախագահ Ղոլամ Ալի Հադդադ Ադելի գլխավորած պատվիրակություններին: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանդունգի 1-ին բժշկական համալսարանի նախագահ պրոֆեսոր Շինչանգ Հանի գլխավորած պատվիրակության հետ հանդիպման շրջանակում պատվիրակության անդամ պրոֆեսոր Շուշան Յինը պարգևատրվել է հուշամեդալով՝ կորոնավիրուսային համավարակի ընթացքում ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտին աջակցություն ցուցաբերելու համար:

Արտասահմանյան գիտնականների դասախոսություններ, միջազգային միջոցառումներ: ԳԱԱ նախագահությունում գիտական ու գիտահանրամատչելի զեկուցումներով հանդես են եկել Լատվիայի ԳԱ ակադեմիկոս, Լատվիայի համալսարանի պրոֆեսոր Մարցիս Աուզինշը, Իտալիայի Միջուկային ֆիզիկայի ազգային ինստիտուտի գիտական գծով տնօրեն, ՌԳԱ Լեբեդևի ֆիզիկական ինստիտուտի և Ազգային հետազոտական միջուկային համալսարանի (ՄԻՓԻ) գլխավոր գիտաշխատող պրոֆեսոր Սուլթան Դաբագովը, ՍԿՈՏԼՏԵԽ-ի պրոֆեսոր Արտեմ Օհանովը, Իտալիայի Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր Ալեսանդրո Կիարուչին, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Գրեյֆսվալդի համալսարանի պրոֆեսոր Սեբաստիան Գյունտերը:

Նոյեմբերի 20-ին ԳԱԱ-ում մեկնարկել է «Սառը միաձուլման 50-ամյակը» միջազգային գիտաժողովը, որը կազմակերպվել էր ՌԴ Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ համատեղ: Գիտաժողովին մասնակցել են առաջատար գիտնականներ Բուլղարիայից, Գերմանիայից, Իսրայելից, Լեհաստանից, Ճապոնիայից, Մեծ Բրիտանիայից, Շվեդիայից, Շվեյցարիայից, Չինաստանից, Ռումինիայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից:

ԳԱԱ համակարգի կազմակերպություններում անցկացվել է 72 միջազգային միջոցառում, արտասահմանից ժամանել է 723 գիտնական, որոնցից գիտաժողովների է մասնակցել 272, համատեղ աշխատանքներ է կատարել 205, բանակցություններ է վարել ու քննարկումներին մասնակցել 246 գիտնական:

Երիտասարդական ծրագրեր: Երիտասարդների շրջանում գիտության հանրայնացման նպատակով ԳԱԱ-ում անցկացվել է «Գիտությունն այսօր» նախագիծը, որի շրջանակում ԳԱԱ գիտնականները վարել են գիտահանրամատչելի սեմինարներ արդիական թեմաներով՝ գենետիկա, սննդակարգ ու առողջություն, թմրամիջոցների բացասական ազդեցությունն օրգանիզմի վրա և այլն: ԿԳՄՍ նախարարության ու Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ սեմինարներին մասնակցել է մոտ 1000 ուսանող ու ավագ դպրոցի աշակերտ ՀՀ տարբեր մարզերից:

ԳԱԱ 80-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների ու տարեկան ժողովի շրջանակում անցկացվել է «Գիտություն» բացօթյա ցուցահանդեսը, որը մեկ հարթակում միավորել է ԳԱԱ գիտական կազմակերպությունները, խոշորագույն բուհերը, ԿԳՄՍՆ ու ԳԱԱ գործընկերներին: Ցուցահանդեսին մասնակցած կազմակերպությունների արդյունքներին, գիտական փորձերին, ցուցանմուշներին ծանոթացել է 900-ից ավել աշակերտ ու ուսանող ՀՀ տարբեր մարզերից: Ցուցահանդեսը բացել են ԳԱԱ նախագահ Ա.Սադյանը, ԿԳՄՍ նախարար Ժ.Անդրեասյանը: Պատվավոր հյուրերն էին ՀՀ նախագահ Վ.Խաչատուրյանը, ՀՀ-ում արտակարգ և լիազոր դեսպաններ, բուհերի ղեկավարներ և այլք:

ԳԱԱ ամառային գիտական դպրոցի շրջանակում ավագ դպրոցի աշակերտները մասնակցել են պեղումների, լսել դասախոսություններ, այցելել Երևանի բուսաբանական այգի, Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան, Երկրաբանական գիտությունների ինստիտուտի երկրաբանության թանգարան:

Հայաստանում առաջին անգամ տեղի է ունեցել Համազգային գիտության շաբաթը, որի համակազմակերպիչն էր ԳԱԱ-ն՝ «Գիտուժ» նախաձեռնության հետ համատեղ ու ԿԳՄՍՆ աջակցությամբ:

Գիտության համաշխարհային օրվան նվիրված միջոցառմանը մասնակցել է 700-ից ավել ավագ դպրոցի աշակերտ ու ուսանող, լսվել են հանրամատչելի դասախոսություններ, ցուցադրվել են գիտական փորձեր:

«Էրազմուս օրեր 2024»-ի շրջանակում անցկացվել է հանդիպում, լավել են «Էրազմուս+»-ին մասնակցած գիտաշխատողների հաջողության պատմություններ:

«SciTalk» գիտական հանդիպումների շարքը գիտնականների ու բժիշկ-ուսանողների միջև առողջապահական խնդիրների քննարկման հարթակ է:

ԳԱԱ կազմակերպություններում անցկացվել է 54 երիտասարդական միջոցառում:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների հետ համագործակցություն: Յուրի Հովհաննիսյանի (ՌԴ) նախաձեռնությամբ ԳԱԱ-ում անցկացվել է «Սառը միաձուլման 50-ամյակը» միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են անվանի գիտնականներ 12 երկրից:

Անահիտ Տոնապետյանը (Ֆրանսիա) Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ կատարել է տվյալների հավաքագրման ու անոտացիայի աշխատանքներ՝ արցախցի փախստականների կյանքի պատմությունների միջառարկայական ուսումնասիրություն (մարդաբանություն, լեզվաբանություն) կատարելու նպատակով:

Արամ Ռոբերտ Մինասյանն (Ավստրալիա) իր հիմնած «Արամ և Շերի Մինասյանների անվան գիտաճարտարագիտության ոլորտի ասպիրանտների» կրթաթոշակ է շնորհել Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի 1 ասպիրանտի, զեկույցով հանդես է եկել ՀՀ-ում Microwave & THz Technologies and Optoelectronics (IRPhE 2024) միջազգային գիտաժողովում:

Ֆերդինանդ Մկրտչյանը (ՌԴ) ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ու Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի հետ իրականացրել է Սևանի ջրի որակի գնահատման նոր մեթոդների մշակման հետազոտություններ:

Պողոս-Լևոն Զեքիյանը (Իտալիա), Մկրտիչ Թումանյանը (Իրան), Արմեն (Կլոդ) Մուրաֆյանը (Ֆրանսիա) այցելել են Արևելագիտության ինստիտուտ, քննարկել համատեղ ծրագրեր:

Ռայմոնդ Գևորգյանը (Ֆրանսիա) եղել է Արևելագիտության ինստիտուտում պաշտպանված գիտական ատենախոսության գիտական ղեկավարը:

Պիտեր Լանգերը (Գերմանիա) «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ համատեղ ISTC նախագծի շրջանակում իրականացրել է «Ոչ սպիտակուցային ամինաթթուների, պեպտիդների և պոլիմերների վրա հիմնված հակավիրուսային (հակ SARS-CoV) և հակաբակտերիալ միացությունների նպատակային սինթեզ և զննում» խորագրով գիտական հետազոտություն, աջակցել է 1 գիտաշխատողի եռամսյա վերապատրաստմանը Ռոստոկի համալսարանում (Գերմանիա):

Դանիել Դանիելյանը (Ֆրանսիա) համագործակցել է Երկրաբանական գիտությունների ու Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտների հետ, ներգրավվել է ԿԳՄՄՆ ԲԿԳ GREATPAL ու BAZOUM ծրագրերում, աջակցել երիտասարդ գիտնականների վերապատրաստման գործընթացին:

Սերգեյ Ղազարյանի (Մեծ Բրիտանիա) ու Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի համագործակցության արդյունքում կենտրոնում բացվել է նոր լաբորատորիա: Նա աջակցել է Լոնդոնի կայսերական քոլեջում 1 երիտասարդ գիտնականի վերապատրաստմանը, մասնակցել է 3 հայաստանյան միջոցառումների:

Վեհարի Սաքանյանը (Ֆրանսիա) շարունակել է ակտիվ համագործակցությունը «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ:

Արմեն Սերգենը (ՌԴ) եղել է ԵՊՀ 1 ասպիրանտի ընդդիմախոս:

Ալեքսանդր Խոջամիրյանը (Գերմանիա) սերտ համագործակցել է Ա.Ալիխանյանի անվ. լաբորատորիայի հետ, աջակցել աշխատակիցների վերապատրաստմանը Գերմանիայում, իրականացրել համատեղ գիտական հետազոտություններ:

Սոս Աղայանն (ԱՄՆ) ինչպես 2023թ., այնպես էլ 2024թ. ընդգրկվել է Սթենֆորդի համալսարանի աշխարհի լավագույն գիտնականների ամենամյա ցանկում (ցանկում ընդգրկված է գիտնականների 2%-ը), դասվել է 55000 հաստատությունների ակադեմիական, արդյունաբերական ու կառավարական լավագույն գիտնականների շարքին (ընդհանուր ցանկում ընդգրկված է ավելի քան 30 միլիոն գիտնական, լավագույնների շարքը կազմում է ընդամենը 0.05%):

Աբրահամ Տերյանը (ԱՄՆ) արժանացել է Հայկական հետազոտությունների ասոցիացիայի մրցանակին:

ԳԱԱ կազմակերպությունների ու արտասահմանյան անդամների միջև գործող համագործակցությունների արդյունքում տպագրվել է 10-ից ավել հոդված բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, արտասահմանում վերապատրաստվել է 15-ից ավել երիտասարդ կադր:

Ստորև բերվում է ԳԱԱ արտասահմանյան անդամների թվաքանակն ըստ գիտության ուղղությունների ու երկրների.

N	Երկիր	Մաթեմատիկական և տեխնիկական գիտություններ	Ֆիզիկա և աստղաֆիզիկա	Բնական գիտություններ	Քիմիա և Երկրի մասին գիտություններ	Հայագիտություն և հասարակական գիտություններ	Ընդամենը
1	ՌԴ	8	5	9	8	6	36
2	ԱՄՆ	9	6	6	4	2	27
3	Ֆրանսիա	1	4	2	2	6	15
4	Գերմանիա		5	2			7
5	Մեծ Բրիտանիա	1		1	1		3
6	Իտալիա					1	1
7	Շվեդիա	1	1				2
8	Ճապոնիա			1			1
9	Կանադա	1		1			2
10	Ուկրաինա	1			1		2
11	Ավստրալիա		1	1			2
12	Իրան	1					1
13	Հունաստան	1					1
14	Բելառուս				1		1
15	Հարավային Կորեա		1				1
16	Լիբանան					1	1
Ընդամենը՝		24	23	23	17	16	103

